

23698

ԳԻՏԱԿԱՆ ՍՍՐ ԺՈՂԿՈՄՄՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԳԵՏԱԿԱՆ ԶԵՌԱԳՐԱՏՈՒՆ (ՄԱՏԵՆԱԳՐԱՆ)

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
Ժ Ո Ղ Ո Վ Ա Տ Ո Ւ

№ 1

Զ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Պրոֆ. Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

«Թեպետ և եմք ամուսնացրիք և ընդ այլով յուրով անգամ նուանեալ թաղաւորութեամբ, սակայն բազում դործք արութեան գտանին գործեալ ի մերում աշխարհիս և արժանի դըրոց յիշատակի»:

«Թեպետ մենք փոքր ազգ ենք և շատ սանձանախակ թվով և շատ անգամ օտար թաղաւորութեան տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ բաշխութեան շատ դործեր կան գործված, գրելու և յիշատակելու արժանի»:

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

Անանիա Շիրակացին առաջինն է վաղմիջնադարյան հայ հասարակական կյանքում որպէս հռչակավոր մաթեմատիկոս, առաջարար, բնագետ, բազմալատասակ մանկավարժ, մեծաքանակ գիտական աշխատութեաննրի և գատազբերի հեղինակ, գիտութեան աննկուն պաշտպան ու կոանդուն ջատագով, ժողովրդական լուսավորութեան անձնավեր գործիչ: Ավելի քան կես դար տևող իր գիտական բազմակողմանի ուսումնասիրութեաննրի և մանկավարժական բեղմնավոր աշխատանքնրի երջանիկ համակցութեամբ՝ Շիրակացին Հայաստանում

ոչ միայն հիմք է դրել մաթեմատիկական ու բնական գիտութեաննրի զարգացմանը, այլև հայ ժողովրդի մեջ արթնացրել է գիտական միտք—լուսավորութեան օջախներ ստեղծելով նրա շատ վայրերում: Որքան անհերքելի է, որ Մովսէս Խորենացին հայ պատմագրութեան հայրն է, նույնքան արդարացի կլինի ասել, որ նույնն է և Շիրակացին բնական և մաթեմատիկական գիտութեաննրի բնագավառում:

Շիրակացին ապրել ու գործել է 12¹/₂ դար մեզնից առաջ:

Պատմութեան այդ աղջամուղջից սկսած՝

* Հասված Ս. Հայրապետյանի գիտերատեղեւոյց, որ կարգացվել է Մատենադարանի 1940 թվի հոկտեմբերի գիտական սեփայլում որպէս զեկուցում:

սոցիալական ու քաղաքական բազմաթիվ արհամարհումներ են տեղացել հայ ժողովրդի գլխին, բախտակից ժողովուրդներ են չքացել պատմութան բնակից, միայն Շիրակացու զարգացրած գիտական գաղափարներն ու նրա գործերի բեկորներն են, որ հասարակական ոճիրների բովից անցնելով, ժայռների հիմքը կրծող ալիքների պես՝ թեև դանդաղ, բայց համառ առաջընթացով խավարի դարավոր շնքն են կործանել և այսօր, բանականութան հաղթանակի տունին, հանդիսանում են որպես դարերի մարտերում ծվատված դրոշներ:

Անցյալի հայ ֆեոդալա-կղերական և բուրժուական պատմագիրներն ու պատմաբանները միանգամայն որոշակի նկատառումներով, ինչպես այդ կտեսնենք մեր սույն աշխատութան մեջ, ոչ միայն գիտակցորեն, աղավաղել, խեղաթյուրել են Շիրակացու գիտական աշխատություններն, այլև թագցնելով այն, — ինչպես XI դարի հայ գիտնական Գրիգոր Մազիսարոսն է ասում, — պահել են «գրվանի տակ» (ПОД СПУДОМ): — Այդ է հենց գլխավոր պատճառը, որ Շիրակացու կյանքին ու գործունեութանը վերաբերող մեզ հասած տեղեկությունները շատ աղքատիկ են, կցկտուր, խիստ գիտական գործերը՝ պատառիկներ: Եթե պատահել է, որ հայ պատմագիրներից որևէ մեկը այս կամ այն չափով խախտել է Շիրակացու նկատմամբ դարերի ընթացքում ստեղծված անարդար վերաբերմունքը, ապա նա սահմանափակվել է միայն մի քանի ազոտ հիշատակություններով, այն էլ զբլխավորապես կողմնակի դեմքերի ու գեպքերի կապակցությամբ: Իսկ թե երբ և որտեղ է ծնվել Շիրակացին, որքան է ազրել, սոցիալական ինչ միջավայրում է ձևավորվել նրա աշխարհայացքը, ինչ մասնակցություն է ունեցել նա ժամանակակից հայ հասարակական-քաղաքական կյանքում, ինչպիսի այրող հարցեր են զբաղեցրել նրա միտքը, գիտական-գրական ինչ ժառանգություն է թողել նա գալիք սերունդներին և, վերջապես, արժանի է նա արդյոք մեծարվելու թե ոչ, կամ գեթ հիշատակության — ահա Շիրակացու կյանքին ու գործունեությանը վերաբերյալ

այն ամենակական հարցերը, որոնք արժանի տեղ չեն գտել անցյալի հայ պատմագրության էջերում:

Ե՞րբ և որտեղ է ծնվել Շիրակացին, — ահա մի կարևոր հարց նրա կյանքին վերաբերող, որով քիչ են զբաղվել հայ բանասերները: Մեր ուսումնասիրած թե տպագիր և թե ձեռագիր նյութերում չկա որոշակի որևէ հիշատակություն նաև նրա բուն ծննդավայրի մասին, սակայն մոտավոր ճշտությամբ հնարավոր է այդ պարզել՝ հիմք ընդունելով նրա կյանքի ու գործունեության մասին եղած, թեև շատ աղքատիկ, տեղեկությունները: Փորձենք Հ. Ս. Ս. Ռ. ժողովմաս վիտին կից Չեռագրատանը մեր հայտնաբերած նոր տվյալների օժանդակությամբ մի հայտարարի բերել Շիրակացու բուն ծննդավայրի մասին եղած ցածրագրի տեղեկությունները:

- ա) «Անանիա վարդապետ Շիրակացի (որ և Շիրակունի կամ Շիրակունցի) համարող, առձայնեալ յօթներորդ դարու՝ ի սակս քաջավարժն լինելոյ յուսումնականութեան...»¹⁾
- բ) «Անանիա վարդապետի շիրակացւոյ կամ շիրակունւոյ կամ շիրակայնոյ համարողի յԱնի՞ քաղաքէ ի .է. — դարու...»²⁾
- գ) «Ананія Ширакскій, по прозванию хамарох (համարող), т. е. математик, уроженец города Ани, жил во второй половине VII в.»³⁾,
- դ) «Հռչակաւորն ի համարողական արուեստի և հմուտն ՚ի տոմարական գիտության Անանիա, որդի Յովհաննիսի

1) «Անանիա վարդապետ Շիրակացին (որը կոչվում էր և Շիրակունի կամ Շիրակունցի) իբրև մաթեմատիկոս (համարող) և գիտության մեջ քաջավարժ՝ հռչակվել է VII-րդ դարում».— Հ. Ալզեյսն «Բացատրութիւն շտիպուց և կշուոց նախնեաց», 1831 թ. վենետիկ, նախաբան:

2) «Նոր բառգիրք Հայկական լեզուի», 1836 թ. հատ. Ա, էջ 17.

3) Н. Эмин «Всеобщая история Вардана Великого», 1865 г., в примечаниях.

Շիրակունսյ եկաց ՚ի սկզբան. է. դարու, յաւուրս Մորկայ և Աբրուեղ Սոսրովու»¹⁾։

կ). «О жизни армянского ученого вардапета Анани, уроженца области Ширак, деятеля второй половины VII в. н. э. точных сведений нет»²⁾.

դ) «К концу VII в. относится имя математика Анани Ширакского или из Ширака, иногда называемого Анийцем. Если последнее прозвище имеет реальное основание, то это не может означать исключительно того что он был уроженец крепости Ани; он мог происходить из монастыря в Ани или из-под Ани, и это было достаточно, чтобы усвоить ему кличку Аниец»³⁾.

Շիրակացու վերաբերյալ բանասիրություններից մեջ բերված, թեև ուղիղ հակասական և երբեմն էլ շատ անորոշ, վերոհիշյալ վկայությունների բաղադատումից կարող ենք վստահորեն եզրակացնել, որ՝ ա) Անանիա Շիրակացին ապրել ու գործել է VII-րդ դարում և բ) «Շիրակացի», «Շիրակունսցի», «Շիրակունի» և «Շիրակից» արտահայտությունները հենց Անանիայի տոհմական վերադիր անունն է, տոհմի ազգանունը և ոչ թե նրա գրական պսևիդոնիմը կամ բուն ծննդավայրի անունը։ Մեր այս եզրա-

1) Ք(երոսե) Պ(ատկանյան) «Անանիայի Շիրակունսյ մնացորդ բանից», 1877., Ս. Պատերազմ, նախաբան։ «Հովհաննես Շիրակունու որդին՝ մաթեմատիկական գիտությունների մեջ հռչակավոր և տոմարական գիտության մեջ հմուտ՝ Անանիան ապրել է VII դարի սկզբում՝ Մորիկի և Սոսրով Ազերվեղի օրոք»։

2) Акад. И Орбели «Вопросы и решения Вардапета Анани Ширакани», 1912 г. Петроград стр. 9.

3) Акад. Н. Марр «Ани», 1939 г., Ереван, стр. 39.—«Շիրակացի կամ Շիրակից, երբեմն Անեցի կոչվող Անանիայի անունը վերաբերում է VII-րդ դարի վերջին։ Եթե նրա այս վերջին (Անեցի) մականունը որևէ իրական հիմք ունի, ապա այդ չի նշանակում բացառապես այն, որ նա Անի ամրացի բնակիչ է։ Նա կարող էր լինել Անի վանքից կամ նրա մերձակայքից և դա բավական էր, որպեսզի նրան Անեցի մականունը տրվեր»։

կացությունն ավելի ևս անկասկած է դառնում հենց իրեն Անանիայի վկայություն հիման վրա. նա առում է. «Ես Անանիա, որդի Յովհաննիսի Շիրակայնուսյ...»⁴⁾, որից երևում է, որ նրա հայր Հովհաննեսը ևս կրում էր Շիրակացի ազգանուն դարձած մականունը։

Ավելի ևս հակասական են Շիրակացու բուն ծննդավայրի որտեղ լինելու մասին վերոհիշյալ բանասերներից մեջ բերված տեղեկությունները։ Հայկազյան բազմաբույսում ասված է, թե Շիրակացին Անի քաղաքից էր, Մ. էմինը գտնում է, որ նա ծնվել է Անի քաղաքում, Ակադ. Հ. Օրբելին առում է թե նա Շիրակի գավառի բնակիչ (уроженец) կամ ծնունդ էր, իսկ Ակադ. Ն. Մառը՝ Անի վանքից, կամ նրա մերձակայքից։

Ինչպես տեսնում ենք, առանց որևէ մի նոր, ավելի հավաստեցուցիչ վկայության՝ այս ավյալներից ընտել հնարավոր չէ որոշակի կերպով պարզել Շիրակացու բուն ծննդավայրը։ Ասել թե Շիրակացին Շիրակի բնակիչ էր, կամ նրա որևէ ընտելավայրում ծնված, կնշակակե որոշակի ոչինչ չասել նրա բուն ծննդավայրի մասին, քանի որ Շիրակը ընդգրկում էր Վանանդի և Այրարատի միջև տարածված Ախուրյան գետի ամբողջ հովիտը։

Վերոհիշյալ մնացած մյուս վկայությունները բաժանվում են երկու խմբի. դրանցից մեկը գտնում է, որ Շիրակացին ծնվել է Անի քաղաքում, մյուսը՝ Անի վանքում, կամ նրա մերձակա բնակավայրերից մեկում։ Առաջին խմբի վկայությունները հիմնովին հակասում են հայ պատմության ստուգված և ճշգրտված փաստերին։ Ուսումնասիրելով մեր հնագույն արձանագրությունները և պատմագրական բոլոր աղբյուրները՝ Ն. Մառը եզրակացնում է, որ մինչև VII-րդ դարի երկրորդ կեսն Անին որպես քաղաք դոյություն էր ունեցել, այլ սկսած V-րդ դարից մինչև VIII-րդ դարի կեսերը՝ նա եղել է միայն որպես սոսկ ամրոց այս կամ այն հայ իշխանի տրամադրություն

4) Ք. Պ. «Անանիայի Շիրակունսյ մնացորդ բանից», էջ 20։

տակը «VIII-րդ դարի երկրորդ կեսին — ստուժ է Մառք, — ...Անու մասին՝ իբրև մայրաքաղաք կամ քաղաք՝ խոսք անգամ չի եղել»¹⁾։ Նույն կարծիքն է հայտնում Անու մասին և Ակադ. Հ. Օրբելին։ «V-րդ դ. Անին մի քանի անգամ պատմության մեջ հիշատակվում է իբրև բերդ։ Այդ ժամանակ նա գտնվում էր հայ Կամսարական հզոր իշխանների տիրապետության ներքո... դրանով առևտրական կարևոր ճանապարհներից մեկի վրա, միաժամանակ ազդական գերազանց մի վայր էր համարվում։ Կամսարականների օրով Անին բերդ էր միայն... Անին այն ժամանակ քաղաքի նշանակություն ստացավ, երբ անցավ... շինարարական ձիրքով առատորեն օժտված Բաղրատունիների ձեռքը։

Անին միանգամից չղարձավ Բաղրատունիների սեղիղենցիա։ Բաղարանից... Բաղրատունիները տեղափոխվեցին Երազգավոր կամ Շիրակավան... Սակայն ոչ Բաղարանը և ոչ Շիրակավանը չէր կարելի համեմատել Անու հետ, քանի որ առաջինների ծաղկման ժամանակ Անին միայն բերդ էր, — ամուր կռիվան և փտահեղի ազատարանի փառանգի դեպքում։

Առաջին Բաղրատունին, որ թագավոր հրատարակվեց, իշխանաց իշխան Աշոտն էր... 877 թվին... Աշոտ IV-ի ժամանակ (954թ.) ...Անին առաջին անգամ քաղաքի արտաքին տեսք ստացավ»²⁾։

Այսպիսով Ակադ. Ն. Մառի և Ակադ. Հ. Օրբելու սուսմաստիքություններից պարզ երևում է, որ Անանիա Շիրակացուց ավելի քան մի ամբողջ դար հետո է, որ Անին քաղաքի է վերածվում՝ Բաղրատունիների տիրապետության ժամանակ, իսկ մինչև VII դարի երկրորդ կեսերը նա եղել է սոսի բերդ՝ Կամսարականների պաշտպանության վայրը։ Միանգամայն պարզ է, որ Շիրակացին Անի քաղաքում չի ծնվել, քանի որ նրա օրոք Անին դեռ բերդ էր։ Այսպիսով

առաջին խմբի վկայությունները ոչ միայն զուրկ են ազդեցություններից, այլ և հակասում են աասնյակ տարիներ Անիի ուսումնասիրությունը գրադվող հեղինակավոր գիտնականների փաստական տվյալներին։

Մնում է Ն. Մառի արտահայտած այն ենթադրությունը, որ Անանիա Շիրակացին «...կարող էր լինել Անի վանքից կամ նրա մերձակայքից, և դա բավական էր, որպեսզի նրան Անեցի մականունը արվեր»։ Մառի այս կռահումը միանգամայն ճիշտ պետք է համարել, քանի որ մեր ուսումնասիրած մի շարք աղբյուրներում, մասնավորապես ձեռագրային նոր հայտնաբերված աղբյուրներում, կան շատ սրտշակի տվյալներ այդ մասին։

Սուսելով VII-րդ դարում անշարժ առժար ստեղծելու եկեղեցական ձևնարկումների մասին, Մամվիլ Անեցին ստում է, թե Անաստասն այդ մեծ աշխատանքը հանձնարարելու համար «...կոչ է առ իւր դմեծ վարդապետն Անանիա՝ յԱնէից զեղջէ...»³⁾։

Ավելին, ցայժմ չօղտագործված՝ մեր հնագույն ձեռագրերից մեկում ինքն Անանիան իր մասին գրում է՝ «ես Անանիա Շիրակացի ի զեղջէ Անէից...»⁴⁾ և այդ նույնը կրկնվում է մի շարք այլ ձեռագրերում։ Կարծում ենք, որ այս փաստերը, մանավանդ ձեռագրերում գտնված Շիրակացու ինքնավկայությունը՝ միանգամայն սրտշակի կերպով ապացուցում են, որ նրա ծննդավայրը Շիրակի գավառի Անի գյուղն է եղել։ Ամենայն հավանականությամբ Անի գյուղը գտնվել է Անի քաղաքին նախորդող համանուն բերդի պաշտպանության դոնայում, զուցե և հենց «Անի քաղաքից մի վերստ հետև թրքաբնակ Անի գյուղի»⁵⁾ տեղը։ Այսպես թե այնպես, այժմ մի բան սրտշակիորեն պարզ է, որ Անանիա Շիրակացին պետք է ծնված լինի Անի բերդի մերձակա համանուն Անի գյուղում։

1) Н. Марр «Ани». изд. 1939 г., Ереван, стр. 40.
2) Հ. Օրբելի «Անույ աւերակները», թարգ. սուսելու կնից, 1911 թ., էջ 7, 8, 9, 10, և 11։

3) Սամվիլ Անեցի «Հաւարմունք» ի գրոց պատմագրաց», 1893 թ., Վաղարշապատ, էջ 84։
4) ՀՄՍՌ Ձեռագրերի ինիտատուտ, Ձեռագիր № 4066, էջ 10բ։
5) Հ. Օրբելի «Անույ տվերակները», հայերեն թարգ մանություն, Վաղարշապատ, 1911 թ., էջ 7։

Այժմ անդրադառնանք Շիրակացու ծնընդյան ու մահվան տարեթվերի պարզաբանմանը, թեև հարցերի վերաբերյալ ես թե բանասիրության մեջ և թե ձեռագրերում, չկան որոշակի ավյալներ: Այս պատճառով մեզ մնում է մի ելք. նախ՝ յուսարանել Շիրակացու կյանքին և գործունեությունը վերաբերող եղած տեղեկությունները և ապա դրանց օգնությամբ պարզել նրա ծննդյան և մահվան տարեթվերը՝ մոտավոր ճշտությամբ:

Մենք ասացինք, թե Ազվերյանը գտնում է, որ Շիրակացին իբրև «քաջավարժ ուսումնական հոշակվել է VII-րդ դարում»: Գրեթե նույնն է ասում և Հայկազյան բանագիրքը:

Ակադիմիկոս Հ. Օրբելին և Մ. Էմինն ասում են, որ Շիրակացին ապրել ու գործել է VII-րդ դարի երկրորդ կեսում, իսկ Ն. Մառը՝ VII-րդ դարի վերջին: Որքան էլ հակասական են այս տեղեկությունները և առանձին-առանձին վերցրած չեն սալխա Շիրակացու կյանքի ու գործունեության մասին օրիկ կանխիկ պատկերացում, սակայն, ի մի համակցվելով, շրջանազծում են նրա ապրած ժամանակաշրջանը, որի մեջ պետք է որոնել նրա կյանքի ու գործունեության կոնկրետ դեպքերն ու նրանց ժամանակը: Մեր մատենագրության մեջ ու ձեռագրերում կան այս մասին մի շարք ուշադրավ տեղեկություններ, որպիսիք մինչ այժմ չեն օգտագործված և անդամ չեն հիշատակված Շիրակացիով դրադվող բանասերներին կողմից:

XII-րդ դարի մատենագիր Սամվել Անեցին գրում է.

«ԶԺԲ. աշակերտք Անանիայի Հերման, Տրդատ, Ազարիա, Եղեկիել և Կիրակոս երթնալ յԵրուսաղէմ և ի դարձին ոչ ընկալալ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա»¹⁾:

Այլևի քան պարզ է, որ Սամվել Անեցու հիշատակած «ճշմարիտ վարդապետ

¹⁾ Սամվել Անեցի «Հատարմունք ի գրոց պատմագրաց», էջ 85.— «712 թվին Անանիայի աշակերաներ՝ Հերմանը, Տրդատը, Ազարիան, Եղեկիելը և Կիրակոսը գնացին Երուսաղեմ և երբ վերադարձան, ճշմարիտ վարդապետ Անանիան նրանց չընդունեց»:

Անանիան» Շիրակացին է, քանի որ մեր պատմագրությանը ծանոթ չէ մի օրիկ այլ թեև և ոչ «ճշմարիտ վարդապետ» Անանիա VII-րդ դարի վերջին կամ VIII-րդ դարի սկզբներին՝ բացի Շիրակացուց: Կարելի է ուրեմն այդ հիման վրա վստահություն կորակացնել, որ VIII-րդ դարի առաջին քսանամյակում Շիրակացին կենդանի էր և, ինչպես հետո կտեսնենք՝ այդ տարիներն էլ հենց պետք համարել նրա կյանքի վերջին տարիները:

Մեր հին մատենագիրներից շատերը՝ ինչպես օրինակ՝ Մերետը, Ասողիկը, Հովհաննեսը, Սամվել Անեցին, Գրիգոր Գանձակեցին և ուրիշները միաբերան վկայում են, որ Անաստաս կաթուղիկոսը հանձնարարեց գիտնական վարդապետ Անանիա Շիրակացուն մշակել հայոց անշարժ տոմարը և երբ աշխատանքն արդեն ավարտված էր ու մնում էր ժողովով այն հաստատել, Անաստասը մեռավ, իսկ նրա ձեռնարկած գործը խափանեց:

Անհրաժեշտ ենք համարում հայ մատենագրության մեջ այդ մասին եղած մի շարք վկայություններից այստեղ մեջ բերել թեև և ոչ միայն երկուսը:

«Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայց կարգել անշարժ տոմար ըստ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել զքրոնիկոնն հրաշագան, յորում գտնարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստաս խորհեալ ժողովով և եպիսկոպոսոք հաստատել զքրոնիկոնն և վախճանի, կացեալ յաթոս ամս (Չ.՝²⁾):

Այս նույն հարցի մասին Կ. Գանձակեցին գրում է.

«Եւ յիս ներսէսի առ զկաթուղիկոսութիւն տէր Անաստաս ամս վեց: Սա կա-

²⁾ Ասեխաննու Տարնեցի (Ասողիկ) «Պատմութիւն տիեզերական» 1885 թ., էջ 99.— «Իսկ Անաստասը նպատակ դնելով ուրիշ ազգերի պես Հայաստանում հաստատել անշարժ տոմար, հրամայում է Անանիա Շիրակացուն մշակել սբանչելի մի ժամանակագրություն, և այդ հիման վրա նա կազմեց մեր անշարժ տոմարը: Սակայն երբ Անաստասն արդեն մտածում էր ժողովով հաստատել այդ ժամանակագրությունը, վախճանվում է, իսկ նրա հաջորդները անփութությամբ շարունակեցին առաջնորդվել առանձին կարգերով»:

չեաց առ ինքն գմեծ վարդապետն Անանիա ի Շիրակ գաւառէ, այր բանիրուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից, զի կարգեսցի անշարժ տոմար հայոց, որպես այլոց ազգաց, զոր արարեալ մեծաւ ջանիւ՝ մինչև կամէին ժողովով հաստատել՝ վախճանի Անաստաս, անփույթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առանձին կարգաւն վարին»¹⁾։

Մատենադրական այս տեղեկութիւններից միանգամայն պարզ երևում է, որ Անաստասի ժամանակ Շիրակացին ճանաչված էր իբրև «բանիրուն» գիտնական և «տոմարական արվեստին» հմուտ անձ։

Հայ մատենագիրներից շատերը, մասնավորապես հին մատենագիրները՝ միասնաբար վկայում են, որ Անաստասի մահը տեղի է ունեցել 671 թվականին։

Այսպիսով ուրեմն՝ մեզ համար պարզվում է Շիրակացու կյանքին ու գործունեութեանը վերաբերյալ մի փաստ ևս. այդ այն է, որ 671 թվին Շիրակացին արդեն գիտնականի հոչակ ուներ Հայաստանում։ Ինչպես հետո կտեսնենք այդ նույն շրջանում նա աչքի էր ընկնում և իբրև անվանի ուսուցիչ և ուներ իր հատուկ դպրոցը, որը Հայաստանի լուսավորութեան ու մանկավարժական մտքի կենտրոնն էր հանդիսանում։

Փաստերի իրական տրամաբանութիւնը մեզ բերում է այն եզրակացութեան, որ Շիրակացին այդ աշխատանքները կարող կլինէր կատարել միայն իր բարձրագույն կրթութիւնը Բյուզանդիայում ավարտելուց հետո։ Այլապես նա ի վիճակի չէր լինի այդքան հաջողութեամբ օտար ազգերի տոմարագրութիւնների ուսումնասիրութեան հիման վրա կազմել Հայաստանի համար անշարժ տոմար, քանի որ նման ուսումնասիրութիւնների համար նա պետք է ունենար մաթեմատիկական ու աստղաբաշխական հարուստ գիտելիքներ, որպիսիքն անհնարին էր ձեռք բերել այդ ժամանակի հայաստանյան պայմաններում։ Բացի այդ՝ մատենադրական վկայութիւններից երևում

է, որ Շիրակացին արդեն ճանաչված էր իբրև խոշոր գիտնական։ Ինչպես տեսնում ենք, այս մասին կասկած լինել չի կարող։

Բայց Շիրակացին երբ է գնացել Բյուզանդիա, կամ երբ է վերադարձել Հայաստան, այս հարցերի պարզաբանումը խիստ կարևոր նշանակութիւն ունի նրա կյանքին վերաբերող մյուս գեղեցիկ ճիշտ լուսարանման համար։

ՀՄՍԻ Ժողովոմտովեաին կից Պետական ձեռագրատան հնագույն ձեռագրերից մեկում մեր կողմից հայտնաբերված տեքստում ասվում է.

«Վասն որոյ եւ իմ խնդրեալ բազում աշխատութեամբ եւ ճշտիւ փոյթ ի մէջ առեալ բերի զքեզ յերկիրս Հայոց... եւ սկիզբն քանիութենէ բերման թուիս յորժամ լցեալ էր Ոկլ. ամ ի կուսական յարգանդէ աստուծուն բանի, եւ ի մետասաներորդի իմ շրջագայութեան... Եւ Անանիա Շիրակացի...»²⁾։

Այստեղ Շիրակացին գրում է, թե տասն և մեկ տարվա բացակայութեանից հետո՝ 668 թվականին վերադարձավ Հայաստան, Հարց է ծագում՝ ինչ նպատակով է նա այդքան երկար ժամանակով բացակայել Հայաստանից և այդ ժամանակաընթացքում թրտեղ էր նա և ինչո՞վ էր զբաղված։

Իր ինքնակենսագրութեան մեջ Շիրակացին հայտնում է, որ սովորելու նպատակով երբ մեկնում էր Բուզանդիա, մի որոշ ժամանակ մնաց Թեոդոսուպոլսում (Էրզրումում) Եղիազարոս անունով մի ուսուցչի մոտ, հետո ճանապարհվեց Չորրորդ Հայք, որտեղ վեց ամիս մնաց մաթեմատիկոս Քրիստոսատուրի մոտ, սակայն՝ տեսնելով, որ սա չունի մաթեմատիկական անհրաժեշտ գիտութիւն այլ «աստի անտի ծայրաքաղ», — ինչպես ինքը Շիրակացին է ասում, — ուղեվորվում է Կոստանդնուպոլիս, այստեղից էլ Տրապիզոն, որտեղ ութ տարի սովորում է

²⁾ Ձեռագիր № 4066, էջ 10 բ. — Ուստի և ես շատ ջրանաջան որոնումներ կատարելով և հոգատար պարզաբանութեամբ ճշակելով քեզ... (այսինքն համարողան արվեստ) բերի Հայոց երկիրն այն ժամանակ, երբ լրացել էր ք. ծ. 668 տարին և իմ շրջագայութեան տասն և մեկ տարին...»։

¹⁾ Կիրակոս Գանձակեցի «Պատմութիւն հայոց» 1909 թ., էջ 59-60։

մաթեմատիկական գիտությունների ուսուցչապետ Տիվրիկոսի դպրոցում: Ամենայն հավանականությամբ Շիրակացին այստեղ ավարտել է գրամատիկոսաց (միջնակարգ) և հսկաորական (բարձրագույն) դպրոցները, որոնցից յուրաքանչյուրում ուսման տևողությունը չորսական տարի էր: Մեր այս ենթադրություն համար ապացույց կարող է ծառայել հետևյալ վկայությունը:

„Занятия в грамматической школе, — пишет Г. Б. Жураковский, — продолжались года четыре, после чего молодежь или считала свое образование законченным, или вступала в риторические школы“¹):

Մի այլ անշուքյամբ նույն հեղինակը գրում է. «По окончании грамматической школы открывался путь в греческие, латинские или смешанные риторические школы». «Число лет пребывания в риторических школах охватывало обыкновенно три-четыре года и прерывалось на середине пути военной службою»²): Շիրակացին, — ինչպես ինքն է ասում, Տրապիզոնում սովորել է ութ տարի: Փաստերի այս համընկնումը իրավունք է տալիս եզրակացնելու, որ Շիրակացին սովորել է քերականաց (грамматическая школа) և հսկաորական դպրոցներում: Այդ նույնը երևում է նաև Գ. Մազիսարոսի հետևյալ վկայությունից. «և արդ՝ քանի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ... ՚ի բազմաց անփոյթ եղելոց այսպիսի գործանությունք և հանդէսք, որ ոչ երբէք ՚ի ստաղին վարելոց գրամատիկոսաց և քերթողաց հնացեալ...»³): Նույն կապակցությամբ Գ. Մազիսարոսը թվում է Շիրակացու մշակած այն աւարկաները, որոնք ավանդվում էին գրամատիկոսաց և հսկաորական դպրոցներում («ի ստաղին վարժելոց»), ասելով «... յորում ենթակայացեալ են ոչ միայն քա-

ռիցն արվեստք, այլ բոլոր էական խոլմունա... յորում մթերեալ և սողորք և ենթակայացեալ ամենայն արվեստի մակացության (disciplina) և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականության, որք են տարորոշ քանակէ և տարակացեալք, իսկ երկրաչափութեանն և աստղաբաշխութեանն, որք են ՚ի շարունակ քանակէ, և զկնի այսոցիք յարամանեալք արհեստք և մակացութիւնք մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն վարժումն հսկաորական»⁴:

Ինչպես տեսանք՝ Բյուզանդիա գնալու և վերադառնալու երկար ճանապարհորդության ժամանակ Շիրակացին եղել է մի շարք քաղաքներում զանազան տևողությամբ: Նրա ուսման և ճանապարհորդության այդ բոլոր տարիներն ի մի գումարվելով՝ կկազմեն տասնևմեկ տարի: Ուստի կարելի է ասել, որ Շիրակացին սովորել է մեկնել (668—11=)657 թվականին: Իսկ այն հարցին, թե քանի տարեկան կլինեիր նա այդ ժամանակ, հնարավոր է միայն մոտավոր հավանականությամբ պատասխանել, քանի որ առայժմ այդ մասին չեն հայտնաբերված ճշգրիտ տվյալներ: Այդ ժամանակ նա մոտավորապես կլինեիր 20-25 տարեկան հասակում, հավանորեն 25 տարեկանից ոչ պակաս: Մեր այս ենթադրությունն ավելի քան հավանական է, նկատի ունենալով որ իր կրթությունը շարունակելու հարցի շուրջն ունեցած դատողություններում և որոշումների մեջ նա ցուցաբերում է լայն շրջահայեցողություն խելահաս դատողություն, կամքի ուժ, հաղթանակի հավատ, դիմամարտի աննկուն ոգի և այլ հատկություններ, որոնք այդքան ցայտուն արտահայտություն կարող էին գտնել միայն կյանքի փորձ ունեցող, մտավոր ու ֆիզիքական կարողությունների տեր մարդու մեջ: Ահա թե ինչից ելնելով է, որ մենք կարծում ենք, թե Բյուզանդիա մեկնելիս Շիրակացին 20-25 տարեկան կլինեիր: Ուստի այս հիման վրա Շիրակացու ծննդյան դատան (թվականը) պետք է համարել (657—²⁰/₂₀=) 632—637 տարեթվերի միջև:

¹) Г. Б. Жураковский, «Очерки по истории античной педагогики», Учпедгиз 1940 г., стр. 354.

²) Там же, стр. 362.

³) Կ. Կոստանյան «Գրիգոր Մազիսարոսի թղթերը», էջ 9.

⁴) Նույնը, էջ 8.

Մեզ համար միանգամայն անբացատրելի է մնում այն հարցը, թե ինչից ելնելով է, որ Բ. Պատկանյանն իր աշխատության մեջ, առանց որևէ աղբյուր նշելու՝ գրում է.

«Անանիա, որդի Յովհաննիսի Շիրակունւոյ եկաց ի սկզբանէ. դարու, յաւուրս Մօրկա և Ապրուէզ Խոսրովու»¹:

Եթե Պատկանյանի արամադրութեան տակ լիներ որևէ ավյալ՝ կնշեր այդ: Ըստ երևույթին՝ նա իր այս ենթադրութեան համար հիմք է ընդունել Շիրակացու հետ ունեցած Տիվքիկոսի գրույցը, որտեղ վերջինս նկարագրում է իր մասնակցութեանը Հայաստանում տեղի ունեցած հույն-պարսկական պատերազմներին:

Այդ մասին Շիրակացին ասում է.

«Եւ պատմեաց նա թէ՛ որպէս եղև հմուտ հայ լեզվի և այս իմաստութեանս: Ասաց թէ՛ ես ՚ի Տրապիզոն քաղաքի մանկութեամբ կացեալ ՚ի դուռն Յովհաննու զորավարին՝ զինուորեալ ի Հայս և բազում ժամանակս կացեալ մինչ ՚ի Մօրիկ թագաւորն և ուսայ լեզու և դպրութիւն: Իսկ ի հարձակման զօրացն Պարսից ՚ի վերայ Յունաց՝ վերաւորեալ ՚ի պատերազմի՝ փախստեայ յԱնտիոք ևւ ամենայն ինչք առան յաւարի»:

«... դնացի ողջացեալ ՚ի քաղաքն Երուսաղէմ, և անտի յԱղեքսանդրիայ և անտի ՚ի Հռովմ, և կացեալ ժամանակս, դարձայ ՚ի Կոնստանդնուպօլիս, և գաի վարդապետ Աթենա իմաստասիրաց քաղաքին, այր երևելի և կացի առ նա յուսման ամս ոչ սակաւ: Եւ կատարեալ իմաստութեամբ դարձայ ՚ի տեղիս: Եւ սկսայ վարդապետել և ուսուցանել»²):

Երևի Շիրակացու մեջ բերած իր ուսուցչի այս պատմածից ելնելով է, որ Բ. Պատկանյանը ենթադրաբար նշել է Շիրակացու ծննդյան մոտավոր ժամանակաշրջ-

¹) Բ. Պատկանյան «Անանիայի Շիրակունւոյ մընացորդը բանից», էջ 2-3:

անը՝ հաշվելով ուսուցչի և աշակերտի տարիքների տարբերութեանը, և այդ հիման վրա հանգել է այն եզրակացութեան, թէ Շիրակացին պետք է ծնված լինի VII դարի սկզբներին Մօրիկ կայսեր և Խոսրով Ապրուէզ թագավորի օրոք:

Տիվքիկոսի նկարագրած պարսկահունական պատերազմների սարսափները Մօրիկի և Խոսրով Ապրուէզի գահակալութեան շրջանին չեն վերաբերում. ընդհակառակն պատմագիրների երկերում այդ շրջանը հիշվում է որպես ամենախաղաղ շրջանը:

«Для рубежа VI и VII в. в. асում է Մարք,—есть интересное для нас свидетельство на армянском языке: „Во дни греческого царя Маврикия“, т. е. с 582 по 602 г. н. э., „во всей нашей стране... царил такой мир, что впоследствии некоторые пустили поговорку“: „Что ты сидишь беззаботно, точно во дни Маврикия“²) («զոր ոմանք յառակս արկեալ ասէին թէ իբրև ի ժամանակս Մաւրկայ նստեալ ես յանհոգս»):

Անշուշտ Տիվքիկոսի նկարագրութեանները վերաբերում են Բյուզանդական կայսրը Մօրիկի ողբերգական վախճանին հաջորդող պարսկահունական ավերիչ ու երկարատև պատերազմներին (604—628 թ.թ.): Հայանի է, որ Մօրիկի ջանքերով Պարսկաստանի գահին տիրացած Խոսրով Ապրուէզը՝ լսելով իր բարերար Մօրիկի (որին նա «հայր» էր անվանում) և նրա ընտանիքի անդամների գլխատվելու լուրը՝ հզոր բանակով մտավ բյուզանդական տերութեան արևելյան երկրամասերը, գրավեց ամբողջ Միջագետքը, Ասորիքը, ավերեց Երուսաղեմը, տիրեց Եգիպտոսին, ասպատակեց Հայաստանը, Վրաստանը և հասավ Կ. Պոլսի մերձակա շրջանները:

Վաղ միջնադարյան հույն-պարսկական պատերազմների պատմութեան էջերում ամենից ավելի աչքի են ընկնում 24 տարի տևող այս պատերազմներն՝ իրենց սարսափելի ու ավերիչ բնույթով, երբ պարսկական բանակը երկար ժամանակ անար-

²) Марк, „Ann“, стр. 38.

գել կերպով ասպատակում էր ամբողջ Փոքր Ասիան¹⁾։ Ըստ երևույթին այս պատերազմների ընթացքում Մորիկի անունը, իբրև պատերազմի «պատճառ» հանդիսացող, շարունակել է հիշատակվել ժողովրդի մեջ։ Պատմական հավաստի աղբյուրներից²⁾ հայտնի է, որ բյուզանդական Մորիկ կայսրը թագավորել է 582—602 թվականներին, իսկ նրա ժամանակակից պարսկական Սոսրով Ապրուեղը՝ 591—628 թ. թ.։ Կնչանակե՝ նրանց զահակալութունը զուգահեռվել է 591-ից մինչև 602 թվականը՝ այսինքն Սոսրով Ապրուեղի զահ բարցրանալուց մինչև Մորիկի մահը։ Այդ տասնևմեկ տարիների վերջին երկու տարին է, որ հանդիսանում է թե՛ VII-րդ դարի սկիզբը (601—602) և թե՛ Մորիկի մահվան տարին (602 թ.)։

Ինչպես տեսանք, ըստ Բ. Պատկանյանի Շիրակացին պետք է ծնված լիներ 601—602 թվականներին։ Սակայն այս ենթադրությունը չի կարող համոզիչ լինել, քանի որ, ինչպես վերը տեսանք, ըստ Սամվել Անեցու վկայությամբ՝ Շիրակացին 712 թվին դեռ կենդանի էր. սա մի փաստ է, որի դեմ առարկելու ոչ մի հիմք չկա։ Եթե Ս. Անեցու վկայությունը փորձենք համաձայնեցնել Պատկանյանի ենթադրության հետ, որ իբր թե Շիրակացին ծնվել է VII-րդ դարի սկզբին, Մորիկի և Սոսրով Ապրուեղի օրոք, ապա Շիրակացին պետք է ապրած լինի 115—120 տարի, որը թեև հնարավոր է, սակայն չունի հիմնավորելու ճշգրիտ ապացույցներ։ Մի այլ ոչ պակաս ուժեղ փաստ ևս անկարելի է դարձնում Պատկանյանի այդ ենթադրությունը։ Վերը բերված ստույգ փաստերից պարզվեց, որ 657 թվին Շիրակացին մեկնել է Բյուզանդիա՝ սովորելու։ Եթե մի պահ ընդունենք Պատկանյանի ենթադրությունը Շիրակացու ծննդյան տարեթվի մասին՝ որ նա իբր թե ծնվել է 601—602 թ. թ., ուստի նա սովորելու մեկնած պիտի լինի 55—56 տարեկան հասակում, որը միանգամայն անհավանական պետք է համարել, հետևապես՝ անընդունելի։ Գուցե ասվի, թե դարմանալու ոչ չինչ չկա VII-րդ դարի վերաբերմամբ, որ 55—56 տարեկան հասակում ևս մարդիկ կարող էին գնալ սովորելու իրենց ժամանակի կուլտուրական խոշոր կենտրոններում։ Այդ ևս գուցե հնարավոր համարվեր ընդհանրապես, սակայն ինքը Շիրակացին ասում է, թե Տրապիզոնում սովորելու ժամանակ, երբ ինքը ուսման մեջ կարճ ժամանակում գերազանց նվաճումներ ունեցավ, նույն դպրոցում սովորող պալատական երիտասարդները նախանձեցին նրան։ Ավելորդ չենք համարում այդ կարևոր փաստը բերել հենց իրեն՝ Շիրակացու խոսքերով։

«Եւ վարդապետն Տրապիզոս, որ գնացի առ նա, — ասում է Շիրակացին, — սիրեաց զիս որպէս զօրդի իւր և պարապեաց յիս զամենայն խորհուրդս իւր։ Եւ ետ ինձ տէր շնորհս, և ուսայ լիով դարուեստ համարողութեան։ Մինչ զի նախանձեալ ընդ իս աշակերտակցացն, որ ի դրան արքունի»³⁾։

Իսկ թե ինչ տարիքի երիտասարդներ էին աշակերտակցում Շիրակացուն այդ դպրոցներում, դա ևս հնարավոր է պարզել։ Սոսերով վաղ միջնադարյան շրջանի գրամատիկոսաց դպրոցների մասին, Ժուրավովսկին ասում է. «... грамматические школы, куда поступали подростки-мальчики... оставались в возрасте от 12 до 16 лет»⁴⁾։

Ինչ վերաբերում է հետտորական դպրոցներին, վերը բերած նույն հեղինակի վկայությունից մենք տեսանք, որ այդ տիպի բարձրագույն համարվող դպրոցներում ընդունվում էին գրամատիկոսաց դպրոցն ավարտելուց՝ 17 տարեկան հասակում և չորս տարվա տևողությամբ ունեցող ուսումնական հաստիվում էր միայն զինվորական ծառայողները։

Իսկ թե ինչ տարիքի երիտասարդներ էին աշակերտակցում Շիրակացուն այդ դպրոցներում, դա ևս հնարավոր է պարզել։ Սոսերով վաղ միջնադարյան շրջանի գրամատիկոսաց դպրոցների մասին, Ժուրավովսկին ասում է. «... грамматические школы, куда поступали подростки-мальчики... оставались в возрасте от 12 до 16 лет»⁴⁾։

Ինչ վերաբերում է հետտորական դպրոցներին, վերը բերած նույն հեղինակի վկայությունից մենք տեսանք, որ այդ տիպի բարձրագույն համարվող դպրոցներում ընդունվում էին գրամատիկոսաց դպրոցն ավարտելուց՝ 17 տարեկան հասակում և չորս տարվա տևողությամբ ունեցող ուսումնական հաստիվում էր միայն զինվորական ծառայողները։

¹⁾ Տես Գեյցեր «Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության», հայերեն թարգմ. 1901 թ. էջ 101—108։

²⁾ Նույնը։

³⁾ Տաշյան «Ցուցակ հայերէն ձեռագրաց», 1895 թ. էջ 175։

⁴⁾ P. E. Жураковский «Очерки по истории античной педагогики», 1940 г. стр. 316։

յության պատճառով: Կան վկայություններ
ևս այն մասին, որ դպրոցական այդ տա-
րիքը հաճախ խախտվում էր, մանավանդ
բյուզանական արևելյան շրջաններից և-
կամ աշակերտների նկատմամբ: Սակայն մի
բան պարզ է, որ այդ դպրոցներում սովորող
աշակերտների տարիքն ըստ օրենքի
սահմանված էր 12-ից 21:

Շիրակացին ինքն ևս ակնարկում է այդ
մասին: Երբ նա Կոնստանդնուպոլսում մը-
տահոգված էր, թե ձրակի և սև մոտ սո-
վորի, հանդիպած ծանոթները խորհուրդ
տվին գնալ Տրապիզոն՝ Տիվքիկոս ուսուցչի
մոտ ասելով... է՞ր հանձն ասեր ճանա-
պարհի երկայնութիւն. ոչ ապաքէն Տիվ-
քիկոս վարդապետ բիւզանդացւոց հուպ է
առ մեզ ՚ի ծովեզրն Պոնտոսի ՚ի քաղաքն՝
որ կոչի Տրապիզոն: Այր լի իմաստութեամբ
և դիտակ հայերեն դպրութեան և լիզին
և երևելի թագաւորաց: Եւ ասացի ևս. ուս-
տի՞ գիտէք դուք զայս: Եւ նոքա ասն՝
բազում ընդ այն ճանապարհօրդեալ տեսա-
նէաք զհորովս եկեալ առ նա ի կողմանց-
կողմանց վասն հզաւր գիտութեան նորա:
Այլ և այժմ իսկ նաւակից եղև մեզ Փիլա-
քըր... որ բազում մանկունս ածէր առ նա
յաշակերտութիւն»²:

Այս ակնբախ փաստերը վկայում են, որ
ամենայն հավանականութեամբ Շիրակա-
ցուն աշակերտակցող դպրոցականները
(«մանկունս», որքան բառացի չհասկանանք)
անշուշտ պատանիներ ու երիտասարդներ
էին, որոնք նախանձում էին իրենց դասըն-
կեր Անանիայի արտասովոր ընդունակու-
թյուններին և գերազանց առաջադիմու-
թյանը: Բնական է, որ նման մի նախանձ
կարող կլինէր շարժել Նրանց մեջ մտավոր-
ապես իրենց հասակակից մի երիտասարդ,
թեկուզ անգամ իրենցից հինգ կամ տասը
տարով մեծ, և ոչ թե 55 — 57 տարեկան՝
ձերության շեմքին կանգնած մի անձնավո-
թյուն:

Ինչպես տեսնում ենք, Շիրակացու ծը-
նընդյան տարեթիվը թեկուզ մոտավոր հա-
վանականութեամբ պարզելու համար՝ Պատ-
կանյանի օգտագործած դեպքերը բնավ չեն

¹) Տաշյան «Յուցակ հոյերէն ձեռագրաց», էջ 175:

կարող հիմք ծառայել: Վերը բերած մեր
փաստերի հիման վրա կարծում ենք՝ կա-
րելի կլինի հավանական համարել, որ Շի-
րակացին ծնվել է 630-ական թվականնե-
րին և ընդունելի համարել, որ ուսման
մեկնելու ժամանակ (657 թ.) նա եղել է
մոտավորապես 20 — 25 տարեկան: Այս
հաշվով, ուրեմն Շիրակացին ապրած կլինի
80 — 85 տարի:

Շիրակացին իր նախնական կրթու-
թյունն ստացել է Շիրակավանի վարդապե-
տանոց կոչված վանական դպրոցում: Այդ
տիպի դպրոցների թիվը 7-րդ դարում
համուժ էր շուրջ 5-ի: Վերջ և մա-
նավանդ VII-րդ դարում մոնոֆիզիտ (մի-
արնակ) և դիաֆիզիտ (երկարնակ) դա-
վանարանական ուղղությունների միջև
ժախլված պայքարն ընդգրկել էր Բյու-
զանդական ամբողջ կայսրությունը, ինչ-
պես և Փոքր Ասիական քրիստոնյա եր-
կրները: Այդ անշությամբ Հայաստանի
եկեղեցին, ինչպես և աշխարհիկ իշխանու-
թյունը, որոնք ջերմ հետևում էին հակա-
քաղկեդոնական, հակաբյուզանդական մո-
նոֆիզիտ դավանության, ամեն կերպ աշ-
խատում էին բոլոր գծերով իրենց կապերը
կարել բյուզանդական եկեղեցու հետ, պայ-
քարելով նրա ոչ միայն դավանական, այլ
և կրթական կուլտուրական ազդեցություն-
ների դեմ²): Իսկ բյուզանդական կրթական
հիմնարկների հետ իրենց կապերը արմա-
տապես խզելու նպատակով՝ նրանք Հա-
յաստանում ձեռնարկեցին սեփական մի-
ջոցներով հոգևորական և կրթական կազ-
մեր պատրաստելուն: Հենց այդ ժա-
մանակաշրջանում Հայաստանի մի շարք
դավաճներում բացվեցին վարդապետանոց
կոչվող «միջնակարգ» դպրոցները: Եթե
բոլոր դարում արդեն հոչակ էին վայելում
Շիրակավանի, Արագածոտնի, Արշարունյաց
կամ Երասխաձորի, Սյունիաց և այլ դպրոց-
ները: Իրանց ուսման ծրագրերի մեջ մտնում
էին՝ աստվածաբանություն, հայ, հույն և
ասորի լեզուները, փիլիսոփայություն, ար-
տասանություն, քերականություն, եկեղե-
ցական երգեցողություն, նկարչություն և

²) Ամենեին ոչ հազարդել ընդ Հոռոմս՝ հնադանդեալս
բաղկեղոնական ժողովոյն... մի գիրս, մի պատկերս
և մի նշխարնս ի նոցանէ ընդունելը» (Մովսես Կ.
հրամանից):

գեղագիր գրչության արվեստը¹: Այս դրոշմը ցնցեց բոլոր աչքի էին ընկնում եկեղեցական գրականության մեջ հայտնի՝ Մաթուսաղան, Շոնը, Ստեփաննոս Սյունեցին և այլն, որոնք մատենագրության մեջ որակվում են՝ «ուսեսալ գրերթողութիւն և վարժեալ ճարտասանականան, հմտացեալ փիլիսոփայայտական ու արվեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ կացեալ վերայ բարձր ամբիոնի բարունարանին...»²):

Այս բոլոր դպրոցներն իրենց ամբողջ կուսակցությամբ կրոնական-վանական էին՝ հեռու աշխարհիկ գիտություններից և նպատակ ունեին հոգևորական ղեկավար կազմեր պատրաստելու: Ահա այն կրթական միջավայրը, որտեղ Շիրակացին ստացել է իր նախնական կրթությունը:

Միանգամայն հասկանալի է, որ Շիրակացու մեջ բորբոքված գիտական տոչորոզ ծարավը չէր կարող հագեցնել վարդապետանոցն իր կրոնական չոր ու ցամաք գաղափարներով: Նրա հոգում արդեն հասունացել էր ուժգին մի սեր, անհաղթահարելի ներքին մի տենչ՝ թափանցելու բուն գիտություն խորքերը:

Անընկճելի կարոտ էր զգում նա դեպի մաթեմատիկական ու աստղաբաշխական գիտությունները, իսկ ժամանակակից վանական դպրոցներում հնարավոր չէր հագեցնել նրա այդ պապակուն ծարավը: Ահա, ինչ է աստուծ ինքը Շիրակացին այդ մասին:

«Եւ յոյժ կարոտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչ ինչ յարմարի բան իմաստասիրութեան առանց թուոյ՝ կարծելով զսա մայր ամենայն իմաստից»³):

Ինչպես տեսնում ենք, մաթեմատիկական գիտությունների ուսումնասիրությունը Շիրակացու վեհագույն նպատակն է, նրա կարոտած ու փայտալից իդեալը:

¹) Սա. Օրբելյան (13-րդ դար) «Պատմութիւն տանըն Սիսական», Մոսկվա, 1861 թ., էջ 82, 85, 97:

²) Ք. Պատկանյան «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից», էջ 1: «Եւ զսա կարոտեցի համարողական արվեստին, մտածեցի, որ չկա որևէ բան իմաստության առանց թվի՝ կարծելով թիվը մայր ամեն իմաստության»:

Շիրակացին ոչ միայն ամենքից պահանջում էր գիտություններ սովորել այլ և զիմելով ավանդական խրատների՝ գայրագին անեծք է շանթում նրանց դեմ, ովքեր գիտություն չեն սիրում կամ նրա տարածմանն արգելք են հանդիսանում:

«...Ստացիր գիմաստութիւն և զգիտութիւն և յաւել արգելի, զտգիտութիւն խաւար կոչելով զճնաւնդն նորա: Դու զգիտութիւն մերժեցիր, մերժեցից և ես զքեզ»⁴):

Մենք ասացինք, թե Շիրակացու անհուն սերը դեպի իրական գիտությունները չէր կարող բավարարվել ժամանակակից հայկական դպրոցներում, մանավանդ մաթեմատիկական ու աստղաբաշխական գիտությունների վերաբերմամբ: Ինքը Շիրակացին հենց ցավագին սրտով շեշտում է Հայաստանում գիտությունների հետամնաց վիճակն, ասելով՝

«Եւ ի Հայս ոչ գտի մարդ, որ գիտակ էր իմաստասիրութեան և ոչ զիրք արուեստից գտի յաշխարհիս»⁵):

Փոթորկահույզ ու կարոտակեղ միտքը Շիրակացուն մղում է դեպի մարդկության վաղեմի հանճարների հայրենիքը՝ դեպի հնագույն դասական փիլիսոփայության և գիտության նվիրական օրորանը:

Վարդագույն հույսերով տոգորված՝ Շիրակացին կանգ է առնում Թեոդոսուպոլիս (Էրզրում)՝ քաղաքում, ապա մեկնում է Չորրորդ Հայք, որտեղ Քրիստոսատուր մի անվանի ուսուցչի մոտ վեց ամիս սովորելով՝ համոզվում է, որ վերջինս չունի գիտական, մաթեմատիկական անհրաժեշտ պատրաստություն, այլ ինչպես ինքն է ասում, — «աստի անտի ծայրաքաղ»: Շարունակելով իր ճանապարհը, Շիրակացին դալիս է Կոստանդնուպոլիս, որտեղից անմիջապես ուղարկվում է Տրապիզոն, որն այդ ժամանակ աչքի էր ընկնում որպես «Արևելյան Բյուզանդիայի անտեսական, ռազմական ու կուլտուրական նշանավոր կենտրոն՝ աուտրական հանգուցակետ հանդիսանալով մի

³) Նույնը:
⁴) Նույնը, էջ 1-ն:

կողմից Պարսկաստանի, Հայաստանի, Վրաստանի ու Կովկասյան, մյուս կողմից Եվրոպական երկրների միջև: Պատմագրերի վկայությամբ Տրապիզոնը վաղուց հունաշված էր իրրև «աշխարհի ամենաթանկագին մարգարիտը»¹⁾:

Այստեղ է, որ Շիրակացին ավարտել է իր ժամանակի բարձրագույն կրթությունը:

Շիրակացին այստեղ շատ սիրալիր ընդունելություն է արժանանում: Տիվքիկոսը խնդագին հրճվանք է հայանում, որ հանձին Շիրակացու վերջապես գտավ մեկին, որի միջոցով նա իր գիտությունը կտարածի Հայաստանում, որտեղ ինքն, իրրև Բյուզանդական բանակի գինգոսը՝ ապրել է երկուր ժամանակ հույն-պարսկական պատերազմների ընթացքում և հմտորեն ուսումնասիրել է հայ լեզուն և գրականությունը և կապված է Հայաստանի ու նրա կուլտուրայի հետ:

Շիրակացին մեծ եռանդով նվիրվում է իր սիրած գործին: Նրան հափշտակում է Տիվքիկոսի գրողարանում եղած մեծաքաղ ու բազմազան բովանդակությամբ գիտական գրականությունը:

«Զի կայր առ նա անշափ գրեանք,— ասում է Շիրակացին,— գաղանիք և յայտանիք, եկեղեցականք և արտաքինք, արուեստականք և պատմագիրքք, բրժբշկականք և ժամանակագիրքք: Եւ թէ մի մի անվանեցիմ, քանզի չիք ինչ գիրքք, որ առ նմա ոչ գտանէր»²⁾:

Մեծ գովասանքով է խոսում Շիրակացին և իր ուսուցչի գիտական պատրաստություն ու շնորհքի մասին:

«Եւ թարգմանութեանց այսպիսի ունէր շնորհս, որ և իրրև կամէր թարգմանել գյուեւարէն գրեալսն ի Հայ, ոչ գեղերու մնունէր որպէս գայլ թարգմանիչսն. հայերէն ընթեռնույր լեզու՝ իրրև դճայերէն գրեալսրն»³⁾:

¹⁾ Хаханов «Трапезундская хроника Михаила Панарота», 1905 г., гл. II.

²⁾ Պատկանյան «Անան. Շիր. մատյարդք բանից», էջ 1:

³⁾ Նույնը:

Տիվքիկոսի մաս Շիրակացին սովորել է ութ տարի:

Շնորհիվ իր անդուլ ու մեղվաջան աշխատանքների, նա կատարելապես մասնագիտանում է մաթեմատիկական և աստղաբաշխական գիտությունների մեջ և լրջմտորեն խորանում է փիլիսոփայական, աշխարհագրական, աստրոպոլիտական, բնագիտական և սրտամական գիտությունների մեջ:

Թողնենք Շիրակացին ինքը խոսի այդ մասին.

«Եւ ետ ինձ շնորհս, և ուսայ լիով դարուեստ համարողության: Մինչդի նախանձեալ ընդ իս աշակերտակցացն, որ ի դրան արքունի: Եւ կեցի առ նմա ամս ութ և ուսեալ հմուտ եղէ գրոց բազմաց, որք չէին թարգմանեալ ի մեր լեզուս»⁴⁾:

Ութ տարի սովորելով Տրապիզոնում՝ Շիրակացին 668թ. կրթական-լուսավորական մեծ ծրագրով վերադառնում է հայրենիք: Նա եկել էր այն հույսով, որ Հայաստանում կենսագործի իր վաղուց երազած նպատակը՝ լուսավորի հայրենիքը, մասսաների մեջ տարածի քրանաջան աշխատանքներով ձեռք բերած իր հարուստ գիտելիքները: Այս էր Շիրակացու վսեմագույն նպատակը, որի իրացմանն էր նվիրելու իր աճրողջ կյանքը: Սակայն դարձանալի չէ, ի հարկի, որ հայ եկեղեցական խավարամիտ կղերականությունն նեխված մթնոլորտում Շիրակացու պես գերիմաստ մի գիտնական իմաստասեր՝ ծանր անարզանքների և կատաղի հալածանքի ենթարկվի:

«Եւ արդ՝ ես արուստ ի Հայաստանեայց ուսայ ի նմանէ զհօր արուեստս զայս... և բերի յաշխարհս մեր, առանց ուրուք լինելով ձեռնառու, միայն ջանիւ իմ անձինս, թէպէտ և ոչ սք եղև շնորհակալ և մեծարող իմոց աշխատութեանս»⁵⁾:

Ինչպես կտեսնենք, Շիրակացին Հայաստանում ֆեոդալակերական իշխող դասակարգի կողմից ոչ միայն չըմեծարվեց, չըխրախուսվեց, այլ ընդհակառակն, թե ինքը չարաչար հալածանքների ենթարկվեց և թե նրա հիմնադրած կրթական-լուսավորական

⁴⁾ Պատկանյան, էջ 2:

⁵⁾ Նույնը, էջ 3:

մեծ գործը խորտակվեց: Ինքը Շիրակացին տալիս է ժամանակակից իշխող խավերի ամենարնորոշ բնութագիրը. «... ոչ սիրող խնամակցի և գիտութեանց, ծուլը և ձանձրացողք: Կեղծաւորք և սնամիտք, ցուցանել կերպարանս գիտութեան և կոչիլ ի մարդկանէ ռարբի»¹):

Շիրակացու հիմնադրած նոր դպրոցն, աշուշտ, միանգամայն նոր նպատակ ուներ, հետեւապես, և նոր սկզբունքներով պիտի առաջնորդվեր, ծրագրային, կրթագրաստիարակչական նոր բովանդակութեամբ, որի հետ բնական է, որ չէին կարող համակերպել ժամանակակից եկեղեցին և նրա վարդապետանոցները: Իսկ հեղինակն արագիցիտներով և հույն-հեթանոսական գիտութեաններով տաղտոլիվ մի դպրոց էր, որն անպայման կարևոր կովան պիտի հանդիսանար Շիրակացու և հայ կղերականութեան միջև առաջացած սկզբունքային պայքարում:

Առաջին իսկ պահին Հայաստանի բոլոր կողմերից Շիրակացու մոտ սովորելու եկան բազմաթիվ աշակերտներ: Հայաստանի բոլոր գավառներում տարածվեց անվանի գիտնականի և անձնվեր ուսուցչի մեծ հռչակը, նրա հիմնադրած նոր դպրոցը դարձավ լուսաավորութեան գիտական-կրթական խոշոր մի կենտրոն: Շիրակացին մեծ եռանդով ծավալեց գիտական-հետազոտական աշխատանքները մաթեմատիկական, աստղաբաշխական, մետեորոլոգիական, աշխարհագրական գիտութեաններին դժով:

«Ձի իբրև եկի ի հայս» — մտրմոքով ասում է Շիրակացին — բազումք եկին առ խյուսուճի և սուղ ինչ խելամեակ՝ ոչ մնացին կատարման արուեստիս. թողին դիս և մեկուսացան. և սկսան ուսուցանել զոր ոչն գիտէին, և ոչ էին հասու»²:

Իրանով չբավականացան Հայաստանի ապետ ու բարոյագուրդ եկեղեցականները: Նրանք ոչ միայն մեկուսացրին Շիրակացուն, այլև նրան վարկաբեկելու համար գիմեցին դողրկի միջոցներ: «Եւ տան ի վերայ իմ պարսաւանս, որք յինքենէն յերբեակը» — գրում է Շիրակացին:

Այս կապակցութեամբ մեր առաջ ծառայում է հետաքրքրական մի հարց, ինչն էր

Շիրակացու և նրան շրջապատող կղերականութեան միջև առաջացած պայքարի բուն պատճառը: Արդյոք դա սոսկ պատահական բնույթի մի տարածախնութեան էր, անձնական շահերից բխող աննշան խճրճանքներ, թե տեսակետների սկզբունքային անհաշտ մի հակամարտութեան: Փաստերի ուսումնասիրութեանը ցույց է տալիս, որ հողերական դեկավար շրջանների կողմից Շիրակացին դիտվել է իբրև քողարկած հերետիկոս, իսկ նրա գիտական աշխատութեանները՝ կախարդանք, դժբախտ հնարք: Պատմական փաստերի վերլուծութեանը մեզ բերում է այն համոզման, որ հայ կղերականութեանը միշտ էլ գաղաղած ու սանձարձակ է այն դեպքում, երբ առողջ գիտութեանը ծառայել է նրա կրոնական դոգմաների դեմ՝ որպես դիմադիր հզորութեան: Ինկվիզիտորական խոշտանգումներով նա անխնա խեղդել ու արմատախիլ է արել այն ամենը, ինչ կղել է աշխարհիկ ու ժողովրդական — թե լեզուն, թե միաբը, թե արվեստը և այլն: Եկեղեցական հալածանքներն այդ ժամանակաշրջանում մեծ ծավալ են ստանում մանավանդ համատարած բազմաթիվ աղանդների դեմ, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ տնտեսապես ճնշված, քաղաքականապես իրավադուրի աշխատավոր մասսաների սոցիալ-դասակարգային բողոքի շարժումներ՝ աղանդների քոլի տակ: Եկեղեցականների կամայականութեաններն իրենց գազաթնակեալին են հասնում մանավանդ այն ժամանակ, երբ արարական նվաճումների հետևանքով Հայաստանում արժեքից հայ ֆեոդալական աշխարհիկ իշխանութեանը իսկ մահմեդական նվաճողների դերիշխանութեան ներքո քրիստոնյա հղատակների քաղաքական — կուլտուրական կյանքում միակ անբն ու անորենը մնաց եկեղեցին:

— «Այսպիսի միջավայրում առաջացող պահանջութեանն, ասում է Ն. Մառը, — աշխարհից հեռացած, աստծուն նվիրված մարդկանց խոհերի արտահայտութեան էր հանդիսանում... այդ կարգի հեղինակների համար մեն մի աշխարհային բան հավասար էր կրոնապաշտութեան, լինելը դա օտար, թե սեփական-ժողովրդական: Մակայն հողերու»

¹) «Մնացորդք բանից», էջ 3:

կանությունն ավելի հեռու էր գնում. — ժողովրդից ծագած ամեն ինչ, դրա հետ նաև ժողովրդական գրույցները վանվում էին գրականությունից: Հոգևորականությունն աշխատում էր բոլորովին ոչնչացնել ժողովրդական աշխարհիկ գրույցները¹⁾:

Մեր հին ձեռագրերից մեկում ի միջի այլոց Մաուր երեան է բերել մի հատված, որտեղ թված են, թե ովքեր անարժան էին համարվում հաղորդություն ընդունելու. դրանք էին՝ «գրախօսք, գրատեսք, շրջողք տանէի տուն, հետաքրքիրք, գրուցարարք, առասպելախօսք» և այլն: Այս վերջին բառը Մաուր ուսուցիչն թարգմանել է «Рассказчики сказок», այսինքն՝ ժողովրդական առասպելներ կամ առակներ պատմողներ: Նվազ խնամասիրտ չէր նաև այն կատաղի պայքարը, որը եկեղեցու կողմից 7-րդ դարում մղվում էր աշխարհիկ արվեստի ու սովորությունների դեմ՝ համարելով այն ասածու և կրոնի հակառակ բարոյագուրկ կախարհանք:

7-րդ դարի առաջին կիսին մոլեռանդ եկեղեցական հեղինակ Հովհաննես Մայրազոմեցին իր «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառում գրում է.

«Եվ արդ ինչո՞վ դադարեցնենք այն ցուրացած բոցի ահեղ տոչորումը և ի՞նչպես կարողանանք աներևույթ վերքերի բուժման հնարը գտնել և կամ ի՞նչ բանով կործանենք պիղծ թատրոնների տեղերը, ահաբեր որագայթը, բազմաչար ժողովը, բոլոր ախտերի արհեստանոցը: Որովհետև այնտեղից են կույսերը պոռնկության հորդորվում, ամուսնացածները շուտից մասնավում, այն տեղից են կանայք առելի դառնում իրենց ամուսիններին, իսկ տղամարդիկ՝ կանանց արհամարհելի. այնտեղից որդիք հայրերին են թշնամանում և ծառաները՝ տերերին. այնտեղից է ծերերի անհամությունը և երիտասարդների վավաշոտությունը. այնտեղից է պառավների անամոթությունը և աղջիկների գեշությունը և այրերի լիախությունը և կանանց կատաղությունը. այնտեղից են՝ մարգաթողությունը, կնահանությունը, մանկա-

սպանությունը և այլ զրկանքներ՝ պաճուճանքի և զարդերի պատճառով. այնտեղից են սնափառությունը և պճնությունները և չար ախտերի շատ մեքենայք. այնտեղից են և զանազան պղծություններ, որ և ասելն անտեղի է...»²⁾

Կարող էինք շատ ավելի երկարացնել վկայարեությունների փաստերն այն մասին, թե աշխարհիկ մտքի, սովորությունների, նիստ ու կացի, գիտության, մի խոսքով ժողովրդական աշխարհիկ կուլտուրայի դեմ և ինչ ավելի սոսկալի հալածանքներ է մղել հնամուլ և անտոխապաշտ հայ ֆեոդալական կղերականությունը, մանավանդ, 7-րդ դարում: Սակայն բավականանանք այսօրվա:

Վերը բերած փաստերից կարելի է հանգել անժխտելի այն եղբակացության, թե 7-րդ դարում Հայաստանի սոցիալական կյանքի գասակարգային կատաղի պայքարի դաժան պայմաններում է ապրել և գործել խավարի դեմ աննկուն մարտնչող լուսամիտ Շիրակացին:

Ինչպես տեսանք, Շիրակացին կրքոտ քննադատությամբ մերկացնում է ժամանակակից կղերականների մտավոր ու բարոյական մանկությունը:

Հունական կրասիկ գիտությամբ զինված, հելլենական գրականությամբ սնված, մարգասիրական զգացմունքներով օժտված Շիրակացին մի հզոր լուսարձակ էր խավարամիտ հոգևորականության նեխված միջավայրում: Նրանց անհաշտ պայքարի առանցքը գիտության և կրոնական միստիցիզմի միջև դարավոր հակամարտությունն էր: Ահա թե ինչ է ասում Գ. Մազիսարոսը նրա մասին. — «Անանիա Շիրակացին իր երկերն ստեղծել է մեծագույն ջանքերով և տանջալից թափառումներով: Նա ուսումնասիրել է բազմաթիվ հոգնաբեղուն և խորիմաստ

2) «Տեսան Յովհաննու Մանդակունույ հայոց հայրազեաի ճառք», Վենետիկ, 1860 թ. էջ 1—17:

Այս ճառը թյուրիմացաբար վերագրել է 5-րդ դարի մասենադիր Հովհաննես Մանդակունուն, սակայն մի շարք լուրջ ուսումնասիրությունների միջոցով ապացուցված է, որ նա պատկանում է 7-րդ դարի եկեղեցական գրող Հովհաննես Մայրազոմեցուն: Տես «Շիրակաթ» 1918 թ. էջ 84—137:

1) Н. Марр „Сборник притч Вардана“, Материалы по истории средневековой армянской литературы, часть I 1899 г. стр. 240, § 266.

զրքեր: Նրա աշխատանքներում ենթակա-
յացված են ոչ միայն մաթեմատիկական և
աստղաբաշխական գիտությունները, այլ և
գիտական-փիլիսոփայական շատ հարցեր,
սակայն դրանց շարքում գերազանցված են
մաթեմատիկան, աստղաբաշխությունը և
երաժշտական արվեստը, ինչպես և աշխար-
հազրությունը: Նա շարահյուսել է արվեստ-
ների մասին և մատենագրական տեսու-
թյունը ու գրեթե հոնորարական կրթու-
թյան բոլոր գիտելիքները: Շիրակացին աշ-
խատասեր մեղվի պես ժողովել է իր մեղվա-
նոցում քաղցեացոց, հունաց և շատ ուրիշ
ազգերի բազմազան գիտությունները¹⁾:
Ուրեմն՝ եթե եկեղեցին Շիրակացուն հալա-
ծելու այլ պատճառներ անգամ չունենար,
այս ևս բավական էր, որպեսզի կրոնական
հալյուցիչացիներով բռնված, ֆանատիկ
արագիցիաներով սնված արևելյան եկեղեցու
ֆեոդալազերական իշխող դասակարգը չհան-
դուրժեր Շիրակացուն՝ նրա գիտական գա-
ղափարների համար: Դա կյանքի և մահվան
մի պայքար է, մի մենամարտ հույն-
հեթանոսական գիտություն և քրիստոնեա-
կան դաժանաբարո եկեղեցու միջև, որտեղ
նկատված դադափարների խեղդող մթնոլոր-
տում հելլենական առաջադեմ վերածնված
դադափարներով զինված մի հսկա գիտնա-
կան դասեմարտի էր բռնվել կղերական
զիշատիչ ոճմակի հետ:

Սակայն այդ հալածանքների բուն պատ-
ճառը պետք է ստանար դավանաբանական
«օրինական» բնույթ: Այդ մասին մեր հին
մատենագրությունը լռում է, եթե չհաշ-
վենք մի քանի ցան ու ցիր մշուշապատ աղ-
նարկները: Ինքը Շիրակացին ևս շատ մեծ
զգուշությամբ է խոսում իրեն հալածելու
պատճառների մասին: Իր ինքնակենսա-
գրություն մեջնա խոր ատելություն է ար-
տահայտում դեպի կղերական դասը, անվա-
նելով նրանց՝ «ծույլք և ճանձրացողք, մնա-
փառք, ցուցամոլ, կեղծավորք, տղեա»:
Դրանց մասին Շիրակացին գրում է.

«Այլ և ի վերայ իմ պարսաւանս ասէին
տգիտութիւն, որք յինքենէն էին յերիւ-

րեալք. և ևս ոչ զի ունէի չարութիւն իր-
րեմ զնոսա ոչ ումեք առ ի վարդապե-
տութիւն բանայի գրերան, որպէս արդարև
ապերախտից»²⁾:

Ի՞նչ պարսավանք ու հերյուրանքներ են
եղել ուղղված Շիրակացու դեմ, որոնց մա-
սին նա այդքան զուսպ ակնարկներ է ա-
նում: Այս հարցի պատասխանից ևս կբացվի
Շիրակացու կրած հալածանքների դադանի-
քի ամբողջ կծիկը:

Հայտնի է, որ XVII դարում հայ և բյու-
զանդական եկեղեցիների միջև վաղուց ծա-
գած դավանաբանական պայքարը ոչ միայն
սուր բնույթ ստացավ, այլ իրեն ենթար-
կելով՝ ընդդիմաց երկրի քաղաքական և կուլ-
տուրական օրինատացիան: Դավանաբանա-
կան մոնոֆիզիտ (միաբնակ) ուղղությունը
զլխավորող հայ կղերականությունն ինկվի-
զիտորական հալածանքներ ծավալեց ոչ
միայն նրանց դեմ, ովքեր այս կամ այն
ազանդին էին հարում, կամ շեղվում էին
«միաբնակ» զոգմաներից իրենց գրական
մեկնաբանություններում, այլ և նրանց բո-
լորի դեմ, որոնց մասին չնչին կասկած ան-
գամ ունեին: Այդ շրջանում մինչև անգամ
աչքի ընկնող կղերական ղեկավար գործիչ-
ներից շատերն են հալածանք կրել՝ մեղա-
դրվելով դավանաբանական վրիպումների մեջ:
Այսպես, օրինակ, Ժամանակի խոշոր հոգե-
վորականներից մեկի մասին (Մայրապոմե-
ցի) պատմագետներն ասում են. «Հրամայէ
Նոր՝ մուրցացի (բուռնցքով) տանջել զպա-
րանոց և զկղակս»³⁾: Իսկ նրա աշակերտնե-
րից մեկի մասին՝ «Ներսէս կաթ. և Թէոդո-
րոս Ռշտունին, որ զհայոց ունէր զիշխանու-
թիւն, ըմբոնեալ զնա և երկաթի հրատեալ՝
աղուևսաղբոշմ եղին ի ճակատին և այն-
պէս խայտառակեալ բացահալածական ա-
բարին ի լեռն Կովկաս»⁴⁾: Նման վայրենա-
բարո ու բիրտ կարգերում, որտեղ հոգևոր և
աշխարհիկ իշխանությունները միասնական
ուժերով արմատախիլ են անում ամեն մի
կենդանի միաք, դարմանալի չէ, որ Շիրա-

¹⁾ Տաշյան «Տուրքի հայերէն ձեռագրաց», էջ 175:

²⁾ Շողակաթ, Վաղարշապատ, 1913 թ., հ. 1
էջ 111:

³⁾ Նույնը:

⁴⁾ Կ. Կոստանյան «Երբիցոր Մագիստրոս», 1910 թ.,
էջ 5 — 6:

կացու պէս տաղանդավոր և գիտնականի հոշակ վաշելող մի անձնավորութիւն ենթարկելիք նման ծանր հարածանքների: Եվ իրոք. — Սամվել Անեցին ասում է այդ մասին. «...աշակերտք Անանիայի... երթեալ յերուսաղէմ՝ հաւանեցան երկարնականցն և ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա: Իսկ նոքա ուր հասնէին՝ զնա ասէին պատճառ հայհոյութեան...»¹⁾:

Մատենագրական այս վկայարեբութիւնից միանգամայն պարզ երեւում է, որ Շիրակացին չընդունեց Երուսաղէմից վերագարձած իր «գաղանափոխ» աշակերտներին, իսկ վերջիններս ամեն տեղ տարածում էին որ իրենց գաղանական այդ «հայհոյանքի» բուն աղբյուրն իրենց ուսուցիչն է, այնինքն Շիրակացին: Ինքը Շիրակացին ևս, թեպէտ և շատ զգուշ, մանվածապատ արատահայտութիւններով, խոսում է իր դեմ ուղղված մեղադրանքների և հարածանքների մասին՝ ասելով. «...այլ և ի վերայ իմ պարտաւնս ասէին տգիտութեան...»:

Այս երկու մեջբերումներէց՝ ա) «...զնա ասէին պատճառ հայհոյութեան» և բ) «... ի վերայ իմ պարտաւնս ասէին տգիտութեան ...» դարձվածքները միևնույն միտքն են արտահայտում: Տվյալ գեղարու հայհոյութիւն և պարտավանք բառերի իմաստը միանգամայն նույնն է միջնադարյան եկեղեցական հասկացողութեամբ: Դրանք ի միջի այլոց նշանակում են՝ «չարախոսութիւնք, մտար վարդապետութիւն»²⁾ և այլն, այսինքն «ուղղափառ» գաղանանքի վերաբերմամբ «տգիտութիւն», հերիտիկոսութիւն, գաղանադանցութիւն և այլ «աններելի հանցանքներ», որոնց դեմ եկեղեցին պատմի միջոցներէ մեջ խարութիւն չէր գնում:

Ինչպէս տեսնում ենք, Շիրակացու ինքնավկայութիւնը և Սամվել Անեցու ասածը հաստատում են, որ Շիրակացին մեղադրվել ու հարածվել է իբրև հերետիկոս, աղանդավորական, և վերջապէս, որ ամենազլխավորն

է, Հայաստանում աշխարհիկ գիտութիւնների եսանդուն շատագով ու տարածող:

Հայ ժողովուրդն ևս իր հիշողութեան մեջ պահել է սրտալից ուսուցչի և անվանի գիտնականի անմոռանալի հիշատակը, անարդանքի սյունին գամելով իշխող կարգերը, որ այդքան չարաչար հարածանքների ենթարկեցին իր սիրած բարեկամին:

«Անանիա Շիրակացին՝ զգված լինելով հայրենիքում զեկավար շրջանների կողմից իրեն ցույց տված վերաբերմունքից, — ասում է ավանդութիւնը, — հեռանում է հայրենիքից: Վենետիկի թագավորին նա սովորեցրել է քիմիա և երկաթից ոսկի ստանալու գաղանիքը: Սակայն՝ երբ թագավորը յուրացնում է այդ գաղանիքը, մտածում է սպանել Շիրակացուն, որպեսզի ուրիշները չօգտվին նրա արժեքավոր գյուտից: Բայց Շիրակացին խնդրում է իրեն չսպանել, այլ ոսկի գրամի երեսին իր նկարը քանդակել և գրանով նա բավարարված կլինի: Այդ պայմանի համաձայն ետլղղ սակեղրամի մեկ երեսին զբոշած կնկուղով պատկերը Շիրակացունն է»³⁾:

Թեև հայ մատենագիրները ջանասիրաբար քողարկել են Շիրակացու կրած հարածանքները, սակայն նրա մայր ժողովուրդն, ինչպէս տեսնում ենք, իր ավանդութիւններում պահել է եկեղեցու ոճրագործութեան այդ պատմական փաստը, ցույց տալով, որ Շիրակացին իր կյանքի բոլոր թելերով կապված է եղել աշխատավոր հայ ժողովրդի հետ և իր խելացի, բարեբար ու հանրօգուտ գործունեութեամբ խորը համակրանք և անմոռանալի սեր է վաստակել նրա լայն մասսաների մեջ, որի հետևանքով դարերի ընթացքում շարունակվող եկեղեցական խարդավանքներն անգամ սնկարող են եղել օողովրդի վաս հիշողութեանից ջնջել մեծ գիտնականի բարի հիշատակը:

Դարերի ընթացքում նույն բախտին է արժանացել և նրա թողած գիտ սկանդրական հարուստ և մեծարժեք ժառանգութիւնը: «Շիրակացու երկերը, — ասում է

¹⁾ Սամվել Անեցի «Հավարձունք ի գրոց պատմագրաց», 1893 թ. հրատ., էջ 84:

²⁾ Տե՛ս. «Նոր բողոքիչ Հայկազեան լիզուի» 1836 թ., հատ. Բ., էջ 32:

³⁾ Այլշան «Չին հափտար կամ հեթանոսական կրօնը»:

Գ. Մազիսարոսը, — պահվում էին տերունական սննդում: Մեր նախորդները՝ մթադնելով Շիրակացու գործերը, թագցնում էին այն գրվանի աակը Պետական բախտին արժանացած մարդիկ նեղութուն չեն կրում անգամ մեծարելու և ուսումնասիրելու Շիրակացու իմաստալից երկերը՝ իբրև պարզ իրենց արքունական պալատներին:

Մազիսարոսի այս վկայութիւնը մի անգամ ևս ապացուցում է, թե որքան խորն է եղել իդեոլոգիական անտազոնիզմը Շիրակացու և եկեղեցու միջև, թե ինչպիսի

անիննա պայքար է մղել եկեղեցին Շիրակացու դեմ, որ աշխարհիկ շրջաններն անգամ անուշադրության և մոռացության են մատնել Շիրակացու մեծարժեք գործերը: Միանգամայն պարզ է, որ Շիրակացին չի եղել եկեղեցու հեղախոնարհ սպասավոր, իբր ամբողջ էութեամբ նա հանգիստացել է հույն-հեթանոսական դասական հարուստ մտքի ու հելլենական գիտութեան հանճարեղ ժառանգը իբր գիտական-ստեղծագործական բազմակողմանի գործունեութեամբ հանդերձ:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՄԵՉ ՀԱՍՄԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Առ Սոսաացեալսն» 1940 թվին լույս է տեսել Մասննադարանի հրատարակութեամբ, հետևյալ բովանդակութեամբ՝ «Առ Սոսաացեալսն»
 - ա) «Երկնքի մասին»
 - բ) «Երկրի մասին»
 - գ) «Ծովի մասին»
 - դ) «Երկնային դարձերի մասին» (համառոտ նկարագրութեամբ՝ արեգակի, լուսնի, լուսարերի, հրահատի, լուսնթագի և այլն)
 - ե) «Երկնքի և երկրի միջև կատարվող շարժումների և երևույթների մասին»
 - զ) «Ծիր կաթին»-ի մասին
 - է) «Հյուսիսային աստղի մասին»
 - ը) «Լուսնի մասին»
 - թ) «Արեգակի մասին» և այլն, ընդամենը 84 գլուխ:
2. «Անանիայի խոստումն աշակերտներին» (հրատ. Աշոտ Աքրահամյանի մշակումով).
Այս աշխատութիւնը թվարանական նախնական ձևնարկ է աշակերտների համար, պարունակում է հասարակ թվերի (1.90.000.000) դումարման, հանման և բազմապատկման գործողութիւններն,

- առանց բաժանման գործողութեան:
3. «Անանիայի յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման» — 24 խնդիր: Հրատարակված է Գ. Տ. Մկրտչյանի կողմից, իսկ սուսերեն թարգմանութեամբ՝ Ակադ. Հ. Օրբելու կողմից:
4. «Գրեմ ձեզ խրախճականս» Հրատ. Աշ. Աքր. կողմից, իսկ ձեռագրերում կան և այլ խրախճականներ, որոնք չեն հրատարակված:
5. «Սակս բացահայտութեանց» (թվերի մեկնարանութեան մասին): Փիլիսոփայական աշխատութիւն է նոր-սղատոնական ուղղութեամբ:
6. «Աշխարհացույց» (աշխարհագրութիւն) վերագրված Մովսես Սորենացուն:
7. «Էվկլիդի երկրաչափութիւնը» հայերեն թարգմանութեամբ: Թեև ոմանք այս աշխատութիւնը վերագրում են Գ. Մազիսարոսին, սակայն այժմ կան հավաստի փաստեր Շիրակացունը համարելու:
8. «Ինքնակենսագրութիւն» (Որպիսութիւն կենաց), թերի Տղազրված է Ալիշանի, Պատկանյանի և Տաշյանի խմբագրութեամբ:
9. Մանր պատասիկներ:



Պրոֆ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ*

Ինչպես հայտնի է, հայերը հին դարերում ժամանակի հաշիվը կատարել են արեգակնային տիպի տոմարով: Այդ տեսակի տոմարում տարին ընդունվում է հավասար 365 օրվա և բաժանվում է 13 ամսվա՝ 12-ը 30-ական օրերից իսկ 13-րդը՝ 5 օրից: $365 = 12 \times 30 + 5$:

Եթե ընդունենք մեկ տարվա տևողությունը մոտ $365\frac{1}{4}$ օր (չհաշված պակասող րոպեները և վայրկյանները), ապա մենք կբացատրենք, որ արեգակնային տարվա տևողությունը, նման տեսակի օրացույցներում, $\frac{1}{4}$ օրով ավելի կարճ է իսկական տարվա տևողությունից և դրա պատճառով արեգակնային տարվա սկիզբը (նոր տարվա օրը—ամանորը) պետք է անընդհատ առաջ ընկնի՝ իսկականի հետ համեմատած՝ տարեկան $\frac{1}{4}$ օրով, կամ չորս տարին մեկ օրով: Աստղաբաշխ Սոզիգենը, Հուլիոս Կեսարի օրոք, այդ սխալից աղաավելու համար՝ առաջարկեց՝ չորս տարուց երեքը ընդունել հավասար 365 օրվա, իսկ չորրորդը՝ 366 և այդ եղանակով կարողացավ ամանորի առաջխաղացումը վերացնել¹):

Այդ առաջարկն ընդունվում է և դրվում թե հին և թե նոր կոչված տոմարների հաշիվների հիմքում:

Սակայն արեգակնային տոմարով օգտվող ժողովուրդները հնում, թեև գիտեին այդ, բայց և այնպես շարունակում էին հաշիվը

¹ Հռոմեական օրացույցը արեգակնային տեսակի չի եղել, բայց աստղաբաշխ Սոզիգենը՝ լինելով Եգիպտոսից՝ առաջարկում է Հ. Կեսարին ընդունել տարվա տևողությունը հավասար $365\frac{1}{4}$ օրվա:

տանել 365 օրական տարիներով, որի պատճառով նրանց օրացույցներում ամանորը 4 տարին մեկ օրով առաջ էր ընկնում: Այդպես շարունակվելով՝ նոր տարվա օրը համընկնում էր հաջորդաբար տարվա բոլոր օրերի հետ և որոշ ժամանակաշրջանից հետո նուրից վերադառնում իրեն նախկին տեղը:

Այդ վերադարձն ընդունված էր անվանել «ապոկատաստոզ»: Պարզ հաշիվները ցույց են տալիս, որ վերև հիշված ժամանակաշրջանը պետք է հավասար լիներ $4 \text{ տ.} \times 365 = 1460$ տարվա, բայց ոչ իսկական՝ $356\frac{1}{4}$ օր պարունակող տարվա: Եթե մենք հիմա չորս տարին մի անգամ մեկ օր ավելացնելով՝ հասնում ենք մեր նպատակին, ապա այն դարերում վարվում էին մի փոքր այլ կերպ. նրանք 1460 տարուց հետո ավելացնում էին մի ամբողջ տարի և այդպիսով վերականգնում ժամանակի ճիշտ հաշիվը:

Նրանց հաշվով ստացվում էր հետևյալը. $1461 \times 365 = 1460 \times 365\frac{1}{4} = 533265$ օրվա:

Այդ ժամանակաշրջանը Եգիպտոսում կոչվում էր Սոթիսի շրջան կամ տարի, իսկ հին Հայաստանում «Հայկայ շրջան»:

Այդ անվան ծագումը Եգիպտոսում կապված էր մեր երկնակամարի ամենապայծառ աստղի Սիրիուսի (Եգիպտական լեզվով Սոթիս, իսկ հայերեն՝ Շնիկ կամ Շնաստղ) անվան հետ: Այդ աստղի հելիակտիկ ծագումը, այսինքն՝ նրա առաջին անգամ


* Կարդացված Հ. Ս. Ս. Ռ. Ժողովատվության կից Չեռագրերի ինստիտուտի (Մատենադարանի) գիտական սեփական 1940 թ. 29/X նիստում:

երևալը արշարույսի ժամին, տեղի էր ունենում (մեր թվականությունից առաջ) հուլիս ամսի 19-ին և Սոթիսի շրջանի առաջին տարում համընկնում էր Նեղոս գետի հորդացման ժամանակի հետ, որպիսի հորդացումը հսկայական նշանակութուն ուներ Եգիպտոսի ամբողջ անտեսության համար:

Հայերը հնում երկար դարերի ընթացքում, գործածել և օգտվել են նման տիպի արեղակնային տոմարով: Շատ հետաքրքրական է, թե նախ, ո՞ր թուականին հայերը

հրաժարվեցին այդ տեսակի օրացույցից, երկրորդ՝ թե հայկական արեղակնային տոմարի կամ Հայկայ շրջանի ապոկատասազի տարին ո՞ր թուականին է տեղի ունեցել, երրորդ՝ աստղաբաշխորեն ո՞ր աստղի հելիակտիկ ծագման հետ է կապված եղել ապոկատասազի տարին և չորրորդ՝ հայերը երբվանից են սկսել արեղակնային տեսակի օրացույց գործածել:

Որպեսզի մեր ասածը պարզ լինի, բերենք մի փոքրիկ սխեմա.



Երբ Հայաստանում բնակչութունը վարում էր պարզ պրիմիտիվ անտեսություն (խաշնարածություն...), նրա բնիկների օրացույցն անկասկած պիտի լուսնային լիներ, սխեմայում այդ ժամանակաշրջանին համապատասխանում է OA-հատվածը: Լուսնային տիպի պարզ օրացույցից հայերը անցնում են ավելի բարեփոխված՝ արեղակնայինին, որով և օգտվում են մոտ 18 դար, սխեմայում այդ ժամանակաշրջանին համապատասխանում է AB հատվածը:

Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ հայերը քրիստոնեությունը ընդունելուց հետո շարունակում են անփոփոխ պահպանել իրենց օրացույցի տիպը և եկեղեցականները կրոնական տոները հաշվելու համար ստիպված են լինում գիմել Հուլյան տոմարի օգնությամբ: Յ.յգպիսով, սկսած III-րդ դարի վերջերից՝ հին Հայաստանում միաժամանակ գործածության մեջ են լինում տարբեր տեսակի օրացույցների սխեմա: Դրանցից մեկը, ինչպես մի քանի անգամ հիշեցինք, արեղակնայինն էր, որը և համարվում էր բաղաբացիական օրացույց իսկ մյուսը սովորական, ներկայումս գործադրվող Հուլյանը, համարվում էր կրեմական: Առաջինում ամիսներն իրար հավասար էին (բոլորը 30-օրական) բայց նոր տարվա օրը շարժական էր, իսկ մյուսում՝ ամիսները իրար անհավասար էին, բայց նոր տարվա օրը մշտական և հաստատուն տեղ ուներ:

Առաջինը՝ ամսվա օրերի հաշիվը վարում էր հերթական հաշվով՝ 1-30, իսկ երկրորդը յոթնօրյա շաբաթներով: Հայ տոմարագետների առջև դրված է եղել մի զգալարագույն խնդիր հնարել կանոններ և կազմել աղյուսակներ՝ մի տոմարով տված ամսաթիվը հեշտ կերպով մյուս տոմարի ամսաթիվին վերածելու համար և ընդհանրապես:

Երևի դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայերն ունեցել են բավական մեծ թվով տոմարագետներ, որոնցից աչքի են ընկնում իրենց աշխատություններով՝ Հովհաննես Կողբանը (XI դ.), Հովհաննես սարկավազը (XI դ.) Հակոբ Ղրիմեցին (XV դ.), Աղաբխան (XVI դ.), և ուրիշ շատերը: Մեր Մատենադարանում գտնվող ձեռագիր աշխատություններից այդ տեսակետից շատ հետաքրքրական են №№ 1999 (2019), 1973 (2027), 1978 (2038) ձեռագրերը:

Սխեմայում AB-ին զուգահեռ տարված գիծ CB-ն համապատասխանում է քրիստոնեական եկեղեցու կողմից Հուլյան տոմարի օգտագործման ժամանակաշրջանին: Դադարակալ և անտեսական հանգամանքներից ստիպված՝ հայերը հրաժարվում են իրենց քաղաքական տոմարից և վերջնականապես ընդունում, բոլոր աղյուսակներին, Հուլյան տոմարը (սխեմայում՝ B կետից սկսած): Ե՞րբ կատարվեց այդ, այսինքն՝ ո՞ր թվականին հայերը հրաժարվեցին իրենց

ինքնուրույն քաղաքացիական տոմարից: Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք մի քանի հեղինակների մոտ: Բացառություները հետևյալն է: 1317 թվականին հայկական օրացույցի ամանորը համընկնում էր հունվար ամսի 1-ի հետ և այդպիսով երկու տեսակի օրացույցների (հին հայկական և Հուլյան) նոր տարվա օրը կատարվում էր միաժամանակ: Օգտվելով այդ հանդամանքից և նկատի ունենալով երկրի քաղաքական վիճակը՝ Ազանայի ժողովում (44-րդ) որոշվում է անցնել Հուլյան տոմարին: Բայց դրա հետ միասին հայերը շարունակում են պահպանել իրենց տոմարով ընդունված դարադրուխը, քանի որ հայերին մինչև 18-ր դարը համարյա թե անձանոթ մնաց այսպես կոչված Քրիստոսի ծննդից հաշվող դարադրուխը: Քաղաքական պատճառները պարզ են XIV դարում հայկական խոշոր ինքնուրույն ֆեոդալական իշխանութիւններից գոյութուն ունեւ միմիայն Ռուբենյանների (Կիլիկիայում), որը նույնպես մոտենում էր իր վախճանին. իսկ ընակչութիւնն արդեն բազմակողմանի հարաբերութիւններ (կուլտուրական, առևտրական և այլն) էր հաստատել Արևմտյան Եվրոպայի հետ: Ահա այդ պայմաններում Ազանայի ժողովը նպատակահարմար գտավ անցնել Հուլյան տոմարին: Հետեվապես, սխեմայի վրա Ե կիսի մաս կարող ենք գնել 1317 րուականը:

Անցնենք երկրորդ հարցին՝ ապոկատաստագի թվականը որոշելուն: Ըստ մեր կատարած հաշիվների և պատմական տեղեկութիւնների ապոկատաստագի տարի Հայկայ շրջանի համար հանդիսացել է 428 թ., երբ նավասարդի մեկը եղել է օգոստոս ամսի ճիշտ 11-ին:

Եղած բազմաթիվ տվյալներից բերում ենք միմիայն մի քանիսը:

ա) Մոսկով Գնելի սպանութիւն մասին և բերելով Բուզանդի խոսքերը, թէ վաղիւն կապելոյ առաւօտուն օրն յաւսանայր կիւրակին և յայնմ աւուր սօն զիպեցաւ (ԲՁՆ, 121)՝ Օրմանեանն ասում է, որ «արդ, հայկական շարժական տոմարի հաշվով, նավասարդի

առաջին օրը կիւրակի հանդիպած է 359-ին, համապատասխանելով հռոմէական տոմարին օգոստոսի 29-ին»: Օգոստոսի 29-ից մինչև 11-ը կազմում է 17 օր և ամանորը կարող էր 17 օր առաջ ընկնել $4 \times 17 = 68$ տարվանից հետո, այսինքն՝ $359 + 68 = 427$ թվականի վերջին: Ուրիշ խոսքով՝ նավասարդի մեկը կարող էր լինել օգոստոսի 11-ին սկսած 428 թվականից:

բ) «Բագմալէտ» 1904 թ., յունիս թիվ 6, էջ 275-ում կարգում ենք, որ ըստ Դ. Փարպեցու և ըստ Սոփ. Բ. 35 Սահակ Պարթևը վախճանվել է 439 թվականի նավասարդ ամսի 30-ին, օրն հինգշաբթի, որը կհամապատասխանի 439 թ. սեպտեմբերի 8-ին, նույն հաշիվները դարձալ ցույց են տալիս, որ նավասարդի մեկը տեղի է ունեցել 428 թվականի օգոստոսի 11-ին:

գ) Հովհաննես Կոզեանը, XI դ. հայանի տոմարագետն իր «Մեկնութիւն տոմարի, 2-րդ արձրեալ Յոհաննիսի վարդապետի. որ մականուն էին Կոզեան» (Մատենադարան, ձեռագիր № 1999—2019, էջ 73) գրում է, «զի յառաջին ամի թուականին լրումն գատկին ի Մարերի Է-ններ. և յերկրորդ ամի թուականին դառնալոց եր լրումն գատկին յԱհկի իդ-ն»:

էջ. 71-ում և 74-ում նույն հեղինակը նույնպես գրում է. «գիտա, զի յառաջին ամի թուականին դարնանային հասարակածն յԱհկի ժդ-ն էր»¹: «Այլ և դայս գիտել արժան, է զի դարնանային հասարակածն որ է ի մարերի ի»...

Մյուս աղբյուրների տվյալներից մեկ հայանի է, որ նոր թվականի առաջին տարում, այսինքն՝ 552 թվականին, գատկական լուսնի լրումն պիտի լիներ ապրիլի 13-ին:

Այսպիսով, ըստ Կոզեանի տվյալների՝ 552-ին

Մարերի 7-ը համապատասխանել է ապրիլի 13-ին:

Ահկի-ի 13 » » մարտի 20-ին:

Այդ պայմաններում նավասարդի մեկը

¹ Պիտի լինի ճիշտը՝ ժդ-ն էր:

համընկնում է հուլիսի 11-ի հետ. իսկ օգոստոսի 11-ից մինչև հուլիսի 11-ը կազմում է 31 օր և ամանորը կարող էր առաջ խաղալ 31 օր՝ $4 \times 31 = 124$ տարվա ընթացքում: Հետևապես, հանելով 551-ից 124 կտանանք էլի 427, որպիսի հանգամանքը նորից դալիս է ասելու, որ նավասարդի մեկը եղել է օգոստոսի 11-ին՝ 427 թվականին հետեվող տարում, այն է 428 թվականին:

Բերենք մի այլ ապացույց ևս.

դ) Ընկրսեսի մահվան թուականը պետք է անկասկած դնել 373-ին, որովհետև 374-ին տեղի ունեցավ Պապին սպանութիւնը, շատ մը եղելութիւններ է կտքը, իսկ իբր ամսաթիվ նշանակուած է հրոտից ամիսը և հինգշաբթի օր (Սոփ. Զ, 112) և շարժական տոմարի հաշվով կհանդիպեն հրոտից 5, 12, 19 և 26 օրերը: Աւգերեան ճառքնտիր մը առնելով հրոտից 5-ին կըզնէ Ներսեսի մահը (Վրք. Գ. 393) և այս հարմարութիւնը իբր ստուգութիւն կընդունինք նշանակեալ թվականին, որ 373-ին կհամապատասխանէ յուլիս 25-ին...»¹⁾:

Ըստ այս տեղեկության՝ 373-ին հրոտից ամսվա 30-ը պիտի լինի օգոստոսի 19-ին, իսկ 20-ից սկսվել են Աւելեաց օրերը և այդ թուականին նաւասարդի մեկը կամ ամանորը հանդիպել է օգոստոսի 25-ին: Օգոստոսի 25-ից մինչև 11-ը կազմում է 14 օր և ամանորի 14 օր առաջ խաղալու համար պահանջվում է 56 տարի, բայց նկատի ունենալով՝ որ մեկ օր առաջ ընկնելու համար պահանջվում է առհասարակ չորս տարի, մենք ունենում ենք 373 թվականից մինչև ապոկատաստադի տարին 54 տարի և այդպիսով ստացվում է նորից $373 + 54 = 427$ թուականը, որին հաջորդող տարին՝ 428-ը պիտի լիներ ապոկատաստադային:

Այսպիսով մենք գալիս ենք այն հաստատուն կարծիքին, որ Հայկայ շրջանի ապոկատաստադի կամ, ինչպես հայերն ասել են, ճահանջներու նահանջ տարին» տեղի

է ունեցել 428 թուականին և այդ թուականին նավասարդի մեկը կամ ամանորը եղել է օգոստոս ամսի 11-ին:

Մենք միանգամայն սխալ ենք համարում այն հեղինակների պնդումները, որոնք ապոկատաստադային տարվա ամանորի օրը օգոստոսի 11-ին նշանակում են 432 կամ մի այլ թուականին: Հետագայում Հովհաննես սարկավարզը նույնպես աշխատել է իր անշարժ տոմարի տարեգրուի ընդունել օգոստոսի 11-ը, լավ գիտենալով, որ այդ օրը կարող է որպես ամանոր ծառայել միմիայն Հայկայ շրջանի սկզբում, բայց նրա նպատակն է եղել շնորհիվ նահանջ տարիների՝ ամբացնել այդ օրվա տեղը:

Մենք տեսնք, որ եզրպտոսում 1460 տարիների ժամանակաշրջանը կոչվում էր Սոթիսի շրջան և տվեցինք դրա բացատրութունը: Նույն ժամանակաշրջանը հին Հայաստանում կոչվում էր Հայկայ շրջան: Իրաբացատրութունը գտնելը դժվար չէ: Հին Հայաստանը սահմանակից է եղել Բաբելոնին և Քաղզկացոց երկրից նրան ըստանողը եղել են միմիայն կորդվաց լեռները, որոնք երկու ժողովուրդների հարաբերութունների համար մեծ խոչընդոտ հանդիսանալ չէին կարող: Բաբելոնում աստղաբաշխութունը և նրա անհարադատ որդի աստղագիտութունը դարգացած էին մեծ չափով դեռ սկսած XXX դարից մեր թվագրութունից առաջ: Այդ գիտութունները, ժամանակի ընթացքում, թափանցում են հին Հայոց երկրը, և հայերը (Սալգերը) դեռ շատ հնուց լավ ծանոթ էին թե աստղաբաշխության և թե աստղագիտության: Երկնակամարի շատ աստղերին կամ համաստեղութուններին տրված են տեղական հայկական անուններ: Երկնակամարի ամենագեղեցիկ համաստեղությանը, որը ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրբոնի համաստեղութուն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղութունը կոչվում էր «Հայկն»: Այդ համաստեղութունը շատ մոտ է գտնվում Մեծ Ծան համաստեղությանը, որի գլխավոր աստղը Սիրիուսը կամ Սոթիսն է: Եվ եթե առաջին հազարամյակում մեր թվարկութունից առաջ Սոթիսի հեղիակտիկ ծագումը տեղի էր ունե-

¹⁾ էջ 571:

նույն հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համաստեղության համար տեղի էր ունենում օգոստոսի 11-ին: Եվ եթե եզրագրայինները Սոթիսի հելիակտիկ ծագման և ամանորի համընկման թուականն ընդունում էին որպես Սոթիսի շրջանի սկիզբ, ապա հայերն էլ Հայկի համաստեղության հելիակտիկ ծագման և ամանորի համընկնելու թվականը համարում էին իրենց Հայկայ շրջանի ըսկզբնական տարին: Այդպիսի համընկնում և եզրագրական Սոթիսի շրջանի համար եղել է 139 թվին, իսկ Հայկականի համար 428-ին (քրիստոնեական տարեթվով): Այդ թվականները միևնույն ժամանակ հանդիսանում էին նաև «ապոկատաստագային» թվականներ: Եզրագրական և Հայկական ապոկատաստագային թվականների միջև տարբերությունը կազմում է $428 - 139 = 289$ տարի: 289 տարում եզրագրական ամանորը պիտի առաջ ընկած լիներ մոտ 72 օրով ($289 : 4 = \sim 72$) և հուլիսի 19-ի փոխարեն, 428 թուականին, կհանդիպեր մայիսի 8-ին: Այդ ամսաթվից հետ հաշվենք 3 ամիս, յուրաքանչյուրը 30 օրից, կստանանք՝

- 1) Մայիսի 8-ից մինչև հունիսի 7-ը — մեկ ամիս 2) Հունիսի 7-ից մինչև Հուլիսի 7-ը ևս մեկ ամիս 3) Հուլիսի 7-ից մինչև Օգոստոսի 6-ը — ևս մեկ ամիս

Հիմա օգոստոսի 6-ի վրա ավելացնենք 5 օր (Աւելիաց), կստանանք օգոստոսի 11 — (428) թվականի հայկական ամանորի օրը: Վերև բերված թվերը համապատասխանում են հայկական X-րդ, XI-րդ XII-րդ և Աւելիաց ամիսներին: Այդ հանգամանքը վկայում է, որ մեր եզրակացությունները միանգամայն ճիշտ են, քանի որ արևմտյան և ուրև հեղինակները նշում են հետևյալը. «Старый египетский календарь в несколько измененном виде хранится и в армянском календаре: первые три месяца египетского года точно соответствуют трем последним месяцам армянского календаря; за этими последними месяцами в армянском календаре следуют пять дополнительных дней, и таким образом для остального года армянские месяцы на-

чинаются пять дней спустя после месяцев старого египетского календаря»¹⁾.

Ինքնըստինքյան հարց է ծագում. արդյոք հայերը ինքններն են ստեղծել նման տիպի տոմար թե՛ այն ընդօրինակել են մյուս ժողովուրդներից:

Հին Հայոց երկրում նման տիպի տոմար ստեղծելու պայմանները չեն եղել: Նման տիպի տոմար կարող էր զարգանալ տնտեսական բարձր աստիճանի հասած մարդկային հասարակության մեջ, ինչպիսին էր Եգիպտոսը, և պարզ է, որ հայերը պետք է ընդօրինակած լինեն կամ անմիջապես Եգիպտոսից կամ թե՛ մի այլ ժողովուրդից, որը իր հերթին ընդօրինակել էր Եգիպտոսից: Դրա մասին կխոսենք մի քիչ հետո, երբ կորոշենք հայերի կողմից նման տիպի օրացույցն ընդունելու գարաշրջանը:

Դարաշրջանը որոշելու համար դիմենք մի քանի կողմնակի ավյալներին, քանի որ ոչ մի հին կամ նոր աղբյուրում այդ հանգամանքը հիշատակված չէ, իսկ ուղղակի ճանապարհով դժվար է որևէ դրական եզրակացության գալ: Այսպիսի մի շարք աղբյուրներ ստում են, որ 428-ին իբր թե լրանում էր երկրորդ Հայկայ շրջանը²⁾: Եթե այդ ճիշտ լիներ՝ մենք պիտի ունենայինք՝

2494 մ. թ. ա. — 1033 մ. թ. ա. — 428-ին դարադուրս — 1-ին ապոկատաստագ — 11 ապոկատաստագ կամ ուրիշ խոսքով՝ հայերն ընդունել են այդ տիպի արեգակնային օրացույցը 25 դար մեր թվագրությունից առաջ, այսինքն՝ այն ժամանակ, երբ հայերն իբր պետություն գոյություն չունեին:

Դա մի առասպելական դարադուրս է, ինչպես և Ս. Գրքի աշխարհաստեղծման դարադուրսը: 1033-ին մ. թ. ա. նույնպես ընդունվել չէր կարող, քանի որ այդ ժամանակաշրջանում հին Հայաստանի բնակիչները խաղերն էին, որոնք, ճիշտ է կուրտուրապես բավական բարձր զարգացման աստիճանի էին հասած, բայց նրանք զբաղվում էին մերձակա Բարեկոնի և Ասորեստու-

¹⁾ Россовская «Календарная даль веков», стр. 29.

²⁾ Գ. Ազանյան «Տոմար և տոնացոյց», 1896, § 5: Օրմանեան «Ազգագրատուն» 1912, էջ 303.

նի ազդեցութեան տակ. այդ ազդեցութեան շրջաններում ամենուրեք իշխում էր Բարեխոնի լուսն-արեգակնային տիպի օրացույցը. իսկ խաղերը Եգիպտոսի հետ անմիջական հարաբերութեաների մեջ լինելիչ էին կարող, քանի որ հենց նույն վերելում հիշված պետութեաները հսկայական պատնեշի նման նրանց բաժանում էին Եգիպտոսից:

Առաջագրված հարցը մնում է լուծել կողմնակի ճանապարհով: Դեռ V Ա դարի հեղինակ Անանիա Շիրակացին, իր սոմարագիտութեան աշխատութեան մեջ, գլուխ ԽԲ-ում «Զինչ է ամիսն», խոսելով՝ ժամանակը «ամիս» միավորներով չափելու սովորութեանն առաջանալու մասին, շեշտում է, որ հայկական նոր տարվա օրը միշտ համընկել է գարնանային հասարակածի օրվա կամ գարնանամուտի օրվա հետ: Դա շատ հետաքրքրական է հենց այն տեսակետից, որ ինքը հեղինակին ապրում էր VII դարում, երբ ամանորը տեղի էր ունենում արդեն հունիս ամսին:

Այդ մասին ավելի պարզ խոսում է Ալիշանը («Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց», Վենետիկ, 1895, էջ 139):

«Առաջինն նավասարդ, որ երկու կերպ տարեկույս գնելով, բնական և քաղաքական, ըստ յեանոյս՝ այժմու օգոստոս ամսոյ մեջ սկսի, ըստ առաջնոյն՝ ի մարտի հասարակածի կամ ի գարնանամուտի...»: Կան նաև այլ բազմաթիվ տեղեկութեաններ, որոնք ապացուցում են վերև բերված հանգամանքի ճշմարտութեանը: Սակայն այդ հիշատակները օգտվում էին դեռ լուսնային կամ լուսնաարեգակնային տիպի օրացույցերով, որպիսիներն մեծագույն մասի տարեկույսը, ըստ սովորութեան, սկսվում էր գարնանային գիշերահավասարի օրվանից: Բարեփոխութեան ենթարկելով իրենց օրացույցը և անցնելով արեգակնային տիպի օրացույցի գործածութեան՝ հայերը, ըստ երևույթին, չեն հրաժարվել իրենց հիմնական տարեկույսից և ընդունել են տարեկույսը համաանգլված գարնանային գիշերահավասարի օրվա հետ: Բայց, ըստ նոր ընդունված սոմարի, այդ տարեկույսը արդեն մնայուն չէր և չորս

տարին մեկ օրով առաջ պիտի ընկներ և իրականում այն առաջ խաղալով, ինչպես տեսանք, 428 թուականին համընկնում է օգոստոսի 11-ի հետ: Հիմա մենք կարող ենք դասել այսպես. մի օրև, թուականի, երբ հայերը ընդունեցին արեգակնային տիպի սոմար՝ ամանորը տեղի ունեցավ մարտի 20-ին: Առաջ խաղալով չորս տարին մեկ օր՝ այդ ամանորը 428 թուականին տեղի ունեցավ օգոստոսի 11-ին: Քանի տարում ամանորի նման առաջխաղացում կարող էր տեղի ունենալ: Հաշվենք օրերի թիվը սկսած մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-ը հետևյալ կարգով՝ մարտ(20)+փետրվար(28)+հունվար(31)+դեկտեմբեր(31)+նոյեմբեր(30)+հոկտեմբեր(31)+սեպտեմբեր(30)+օգոստոս(21) = 222 օր և հետևապես 4տ. × 222 = 888 տարի, այսինքն նման առաջխաղացման համար պահանջվում է 888 տարի: Այդ 888 տարուց՝ 428 տարին մեր թվագրութեանից է, իսկ մնացած 460-ը մինչև մեր թվագրութեանը¹: Այստեղից բխում է մեր հիմնական եղբակացութեանը, որ հին Հայոց երկրում ժամանակի հաշիվը սկսել են պահել արեգակնային սխեմայի սոմարով, սկսած 460 թվականից մեր թվագրութեանից առաջ:

Ընդունելով V դ. կեսերին մ. թ. ա. արեգակնային սխեմայի օրացույց՝ հայերը գործածել են այդ՝ համարյա թե անփոփոխ պահելով, մինչև 1317 թ. և հետևապես, մենք կարող ենք ասել, որ հայկական քաղաքացիական օրացույցը գործածութեան մեջ է մնացել՝ 460 + 1317 = 1777 տարի — մոտ 18 դար:

Մի քանի բառերով աշխատենք բացատրել թե ինչու V դարում մ. թ. ա. կարող էր տեղի ունենալ օրացույցի նման բարեփոխութեան: VII դարում մ. թ. ա. Կիրոսի և նրա որդի Կամրյուզեսի օրով կազմակերպվում է համաշխարհային երկրորդ պետութեանը (առաջինը համարվում է Ասորեստանը), որը ընդգրկում է իր սամանների մեջ ամբողջ առաջավոր Ասիան և Եգիպտոսը: Դարեհը արդեն տալիս է այդ

¹ Մի քանի տարիների տարբերութեան հարավոր է և ավելի հիշատակել մ. թ. ա. V դ. կեսին Լ. Ս.

լայնածավալ պետութեանը աշխարհի մի կազմակերպութեան, որի հետքերով Պարսից իշխանութեան ենթակա ժողովուրդների համար ստեղծվում են շվեման և փոխհարաբերութեան անհրաժեշտ պայմաններ: Այդ պայմանների շարքում պիտի գտանել բարձրորակ և լավ վիճակում պահպանվող ճանապարհները, մեծ չափով դարգացած առևտրական կապերը, այդ ժամանակ է, որ պարսկական բանակում բոլոր ժողովուրդների գործառնությունը շվեման էին իրար հետ և այլն: Նման պայմաններում կուլտուրային ապիկի բարձր աստիճանում գտնվող ժողովուրդները պետք է իրենց ազդեցությունը թողնեն կուլտուրային ապիկի հետ մնացածներին վրա: Պարսից տիրապետության ամենատաղիվոր ժողովուրդներն էին եգիպտացիներն ու բաբելոնացիները: Տոմարական խնդիրներում այդ երկու ժողովուրդների քրմութեանը մեծ նվաճումներ ունեն: Բայց եթե եգիպտացիները դարգացրել և համարյա թե գազաթնակետին էին հասցրել արեգակնային սխտեմի տոմարը, ապա բաբելոնացիները նույնն արել էին լուսնարեգակնայինի վերաբերյալ: Մակայն եգիպտական սխտեմի օրացույցը շատ պարզ կազմութեան ունեն իսկ բաբելոնացիներինը, ընդհակառակն, շատ բարդ կազմութեան (նրա պատճենն է հրեականը): Հայ քրմութեանը նույնպես հասել էր որոշ նվաճումների աստղաբաշխութեան ասպարեզում և նա, ենթարկվելով կուլտուրային ապիկի դարգացածների ազդեցությանը՝ կուրորեն չի ընդօրինակում իր ապիկի մոտ հարևան բաբելոնացիների բարդ սխտեմը, այլ դերագասում է ապիկի հեռավոր եգիպտացիների — պարզ և հարմար տոմարական սխտեմը: Հարցն այս ձևով դնելիս՝ պիտի նախ ընդունել, որ հայերը, առանց որևէ միջնորդի, ինքնուրույն կերպով են ընդօրինակել տոմարի եգիպտական սխտեմը:

Բայց կարելի է առաջադրել և մի այլ հիպոթեզ, ծանոթանալով հայերի և հարևան մի շարք ժողովուրդների տոմարների հետ (պարսկական, վրացական, ադվանական և այլն) մենք տեսնում ենք, որ նրանք էլ օգտվել են նման տիպի տոմարական սխտեմով և այս հանգամանքից կարող ենք

գալ այն եզրակացությանը, որ այդ բնօրինակումը համարյա ընդհանուր բնույթ է կրել: Իսկ այս վերջին փաստը կարելի է բացատրել միմիայն նրանով, որ, ըստ երևույթին, Ա. քեմենյան տիրապետության ժամանակ կատարված է եղել տոմարի բարեփոխություն:

Շատ հնարավոր է, որ Պարսից աշխարհակալ պետության տարրեր ստարապութեանը գործածվելիս են եղել տարրեր տեսակի տոմարական սխտեմներ, որպիսի հանգամանքը պետք է շատ ու շատ դժվարացներ փոխ-հարաբերությունները, ժամանակը հաշվելու տեսակետից: Նման դրությունից դուրս գալու մի միջոց կար միայն, այն է՝ ընդունել ամբողջ պետության համար եղած կամ գործածվող տոմարական սխտեմներից որևէ մեկը: Գերադասութեանը պիտի արվեր եգիպտականին, որովհետև նա իր կազմութեամբ շատ պարզ է և հարմար, իսկ պարսիկներն՝ ընդունելով այդ տոմարական սխտեմը՝ դրանով այն համարյա թե պարտադիր էին դարձնում բոլոր հպատակ ժողովուրդների համար, քանի որ հայերը միշտ պարսիկների հետ սերտ կապակցության մեջ էին գտնվում. նրանք սկզբում պիտի ծանոթանային այդ տոմարական սխտեմների հետ և ապա ընդօրինակելին այն:

Այսպիսի թե այնպես՝ հայերը մոտ 460 թ. մ. թ. առաջ այցնում են եգիպտական տոմարական սխտեմին և մոտ 18 դար անընդհատ գործածում այդ տոմարը:

Եգիպտական տեսակի տոմարական սխտեմի հատկանիշներից մեկն էլ այն է, որ նա ժամանակի յոթնօրյա շաբաթի միավոր չի ընդունում. նրա ամիսը բաժանվում է կամ 3 դեկադների (տասնօրյակ) կամ 6 պենտադների (հնգօրյակ): Ընդունելով տոմարական այդ սխտեմը՝ հայերը նույնպես պետք է հրաժարվելին 7-օրյա շաբաթներից և նրանց ամսվա յուրաքանչյուր օրը պետք է հատուկ անուն կրեր: Հայերի օրացույցում դեկադի կամ պենտադի հետքեր չեն հայտնաբերված: 7-օրյա շաբաթի դադարվարը հայերի մոտ նորից վերականգնվում է արդեն քրիստոնեութեան ընդունելուց հետո:

Ինչպես ասված է սկզբում, նոր տոմարական սխառեմով տարվա տեվոդությունը համարվում էր հավասար 365 օրվա, բաղկացած 13 ամսից: Թեև այդ ամիսներն անունները հանրածանոթ են, բայց և այնպես հիշեցնենք համառոտ կերպով. 1) Նավասարդ (30 օր), 2) Հոռի (30 օր), 3) Սահմի (30 օր), 4) Տրէ (30 օր), 5) Քաղոց (30 օր), 6) Արաց (30 օր), 7) Մեհեկան (30 օր), 8) Արեղ (30 օր), 9) Ահեկան կամ Ահկի (30 օր), 10) Մարերի (30 օր), 11) Մարգաց (30 օր) 12) Հրոտից կամ Հրորտից (30 օր) 13) Ավելիաց (5 օր):

Ալիշանն իր վերը հիշատակված աշխատությունում բերում է նաև ամսվա օրերի անունները: Ըստ նրա, Ավելիաց ամսվա օրերի անունները նվիրված են եղել այն դարերում հայանի հինգ մոլորակներին: Ավելիաց ամսի օրերը կոչվել են՝ 1) Լուծ, որից հետո առաջացել է Փայլածո բառը (Меркурий), 2) Եղջերու, հետագայում դասել է Արուսեակ կամ Լուսարեր (Венера), 3) Մկրաւորի, հետագայում Հրատ (Марс), 4) Արաախոյր, հետագայում Լուսնթագ (Юпитер) և 5) Փեռազնոտի, հետագայում Երևակ (Сатурн):

Ամսվա օրերի անունները հերթական կարգով

1-ին օրը	կոչվել է	Արեղ
2-րդ »	»	Հրանդ
3-րդ »	»	Արամ
4-րդ »	»	Մարդար
5-րդ »	»	Ահրանք
6-րդ »	»	Մաղղեղ
7-րդ »	»	Ասողիկ
8-րդ »	»	Միհր
9-րդ »	»	Չոպարեր
10-րդ »	»	Մուրց
11-րդ »	»	Երեղկան կամ Երազհան
12-րդ »	»	Անի
13-րդ »	»	Պարխար
14-րդ »	»	Վանաս
15-րդ »	»	Արամաղղ
16-րդ »	»	Մանի
17-րդ »	»	Ասակ
18-րդ »	»	Մասիս
19-րդ »	»	Անահիտ

20-րդ »	»	»	Արագած
21-րդ »	»	»	Գրգուռ կամ ?
22-րդ »	»	»	Կորդուիք
23-րդ »	»	»	Ծմակ
24-րդ »	»	»	Լուսնակ
25-րդ »	»	»	Սփիւս
26-րդ »	»	»	Նպաս
27-րդ »	»	»	Վահագն
28-րդ »	»	»	Սէին
29-րդ »	»	»	Վարաղ
30-րդ »	»	»	Գիշերավար

Երկար դարեր հայերի կողմից գործածված եգիպտական շարժական տոմարը պիտի համարել զոյություն ունեցած և ունեցող ամենահաջող տոմարական սխառեմներից մեկը: Նրա պլիսավոր և միակ թերությունն այն է որ, ամանորը, շարժական է: Այդ կարելի էր վերացնել շատ հեշտ կերպով, այնպես, ինչպես անում ենք մենք ներկայումս՝ ավելացնելով չորս տարվա ընթացքում մի օր և մացնելով դրանով նահանջ տարվա զազափարը: Այդպիսի առաջարկով հանդես են եկել մի քանի, տոմարական ինդիքներին լավ ծանոթ, անձնավորություններ՝ Անանիա Շիրակացին (VII), Հովհաննես Սարկավազը (XI դ.) և հետագայում Աղարիան (XVI XVII դ.):

Առաջինի մասին Ստ. Ասողիկը¹ գրում է «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեացոյ կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայ Շիրակացւոյ կարգել զքրօնիկոնն հրաշաղան, յորում գտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասոյ խորհեալ ժողովով և կախկոպոսօք հաստատել զքրօնիկոնն և վախճանի կացեալ յաթոն ամս զ»:

Շիրակացին, պատմաբանի վկայությամբ, ջանի վերայ եղեալ յաջողեցաւ բառեմեկ ըստ բոլոր ազգաց անուրես, այսինքն հաստատուն, յօրինեալ զկարգս հայկական սամարի (Յով. 118), բայց Անաստասի մահը խոչընդոտ հանդիսացավ ժողովի դամարման և տոմարը մնաց անփոփոխ:

XI դարի վերջին, երբ լրացավ էասյան առաջին ժամանակաշրջանը և դրա հետ էլ

¹ Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան «Պատմութիւն արեղերական» ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 104:

միասին Աթանաս Տարոնեցու ամբողջ 532 տարիների համար կազմված տոնական օրերի աղյուսակները (որոնք հնարավորութուն էին տալիս հուլյան տոմարով նշանակած տոնական օրերը փոխադրել և արտահայտել հայկական քաղաքացիական տոմարի ամսաթվերով) և երբ եկեղեցական աշխատողները տեսան, որ այլևս «հնար չէր նույն ցուցակէն օգտուել և գլուխը դառնալով նորէն կրկնել» և դրա հետևանքով առաջացավ «տոմարական տազնապ», հանդես եկավ Հովհաննես Սարկավազ վարդապետը և «իրօք նրա յաջողեցավ և դրագմաց փափաքելին և ոչ ձեռնհաս, դհաստատ և դանաշարժ տոմարն կարգեաց հայոց, փոխանակ շարժականին և անհաստատին»¹:

Հովհաննես Սարկավազի առաջարկած սեփորմը կարելի է բաժանել երկու մասի ա) Ամանորի օրը դարձնել անշարժ — այդ նպատակին նա հասնում է՝ մտցնելով նահանջ տարու գաղափարը՝ ընդունելով 3 տարին 365 օրից և 4-րդը՝ 366-ից: Դա միանգամայն խելացի և ցանկալի բարեփոխութուն էր: բ) Ամանորի օրը, այսինքն նախասարգի մեկը նա «տեղափոխեց» և դրեց օգոստոսի 11-ին: Զմոռանանք, որ 1084 թ., երբ տեղի էր ունենում այդ ամբողջ անցուդարձը, նախասարգի մեկը (ամանորը) համընկնում էր Հուլյան տոմարի փետրվարի 29-ի հետ և Հովհաննես Սարկավազը նախասարգի մեկը փետրվարի 29-ից տանում հասցնում է օգոստոսի 11-ին: Ահա նրա այդ երկրորդ «բարեփոխության» իմաստը և նրա իրականացումը մինչև օրս մնում են անհասկանալի: Ճիշտ է որ, ըստ ոմանց կարծիքի — «արար զմիաբանութիւն ամենայն ազգաց տոմարին ընդ Հայոց (Կիր. 64), բայց և այնպես միանգամայն իրավացի է Մ. Օրմանյանը, երբ ասում է. «բայց չենք գիտեր, թե ինչ ձևով նախասարգի մեկը փետրվար 29-էն մինչև օգոստոս 11 տարին, ինչ որ հիմն էր Հայկա շրջան կոչված 1460 տարիներու դրության» (Ազգապատում, §900): Հովհաննես Սարկավազի առաջարկները պաշտոնապես ընդունված չեն եղել

քանի որ ոչ մի ժողովի քննության դրված չեն եղել, այլ միայն կարծիք կա, որ եկեղեցական կյանքում նրանք կիրառութուն են գտել՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կարգադրության համաձայն: «Շարժականը շատ առիթներու մէջ գործածուած կրգտնվի իբր քաղաքական տոմար, անշարժն ալ կյիշվի, ավելի եկեղեցական կիրառության մեջ»: Մենք կարող ենք ընդունել, որ Սարկավազից հետո հայկական, եգիպտական տեսակի շարժական տոմարը, որպես քաղաքացիական տոմար, մնացել է դարձյալ անփափախ. նրա փոփոխված ձևով օգտվել են միայն կրոնական կյանքում:

Չնայած այն հանգամանքին, որ Ադանայի 1317 թվի ժողովից հետո, հայերը պաշտոնապես հրաժարված են լինում հայկական հիմնական տոմարից, բայց և այնպես XVII դարի սկզբին հայկական գաղութներից մեկում՝ Նոր Զուղայում, փորձ է կատարվում վերակենդանացնել այդ տոմարը, այնպես կոչված Ազարիայի տոմար անվան տակ: Ազարիայի առաջարկները նույնպես կարելի է բաժանել երկու խմբի. ա) շարժական տոմարն անշարժ դարձնելու համար էլի մտցվում է նահանջ տարու գաղափարը (չորս տարուց՝ մեկը) բայց մի փոքր այլ ձևով: Ազարիան՝ թողնելով անփոփոխ Ավելաց ամսվա օրերի թիվը (5 օր) և ընդունելով առաջին 11 ամիսների տեվոդությունը հաստատուն՝ 30 օրից, միայն փոփոխական է դարձնում 12-րդ նիրհան ամիսը, որը սովորական տարիներում ունենում է 30 օր, իսկ նահանջ տարում 31 օր: բ) Ազարիան փոխում է նաև ամիսների անունները՝ տալով նրանց, ըստ իմ կարծիքի, ավելի հաջող անուններ և նույնպես ամանորի օրը նորից փորձում է օգոստոսի 11-ից վերադարձնել զարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը: Սակայն «Ազարիայի տոմարը» նույնպես մատնվում է անհաջողության, որովհետև այդ օրացույց հնարողները չեն հասկացել, որ տոմարական խնդիրները և նրանց փոփոխությունները չեն կատարվում երկրի և նրա քաղաքական ու անտեսական կյանքից անկախ, այդ պատճառով էլ չի կարելի ամեն մի գյուղում ու

¹ Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 64:

բաղադրում կամ դադարեցրած ինքնուրույն տոմարական սխառում հնարել ու գործածել: 1793 թ. հրատարակված և գործածության դրված ֆրանսիական սևօրայի օրացույցը շատ նմանություններ ունի հին հայկական օրացույցային սխառումի հետ. նա էլ բաղկացած էր 12 ամսից, յուրաքանչյուրը 30 օրից և լրացուցիչ՝ 5 օրից, որոնք կոչվում էին «սանկյուլտիզներ»: Տարվա սկիզբը (տարեդուրս) սեպտեմբերի 22-ը՝ թագավորին իրավագրկող դեկրետի ստորագրման օրը և աշնանային գիշերահավասարի օր էր: Նահանջ տարու տեղը նշանակված չէր. աստղարաշխները՝ ելնելով իրենց դիտումներից՝ հայտարարում էին նահանջ տարին, որը կարող էր լինել 4 կամ 5 տարին մեկ անգամ: Ամիսները բաժանված էին 3-ական դեկադներ:

Ավարտելով մեր դեկուրյան հիմնական խնդիրները, մի քանի խոսքով կանգ առնենք հայկական դարադրված ընդունման թվականի վրա: Ինչպես հայտնի է 353 թվականից սկսեցին օգտագործել Անդրեասեան 200-ամյա աղյուսակները, որոնք ավարտվեցին 552 թվականին, ինչը տարվա ընթացքում «բոլոր տոները սկսան շիթթի»¹, մինչև որ էասի հավաքած տոմարագեաների ժողովը կարողացավ, հայտնաբերելով 532 ամյակը կարգի բերել բոլոր տեսակի տոմարական հաշիվները: Շարունակելու համար խոսքը տանք Մ. Օրմանյանին. «Արդ, 561-ին կաթողիկոս էր Հովհաննես Գաբրիելանը, 564-ին սկսան Սուրեն Մարգարանի հարստահարությունները, 571-ին սկսավ Վարդանի շարժումը, 572-ին եղավ կաթողիկոսի փախուստը: Հետևաբար պատմության համաձայն է ըսել, թե մինչև որ Գաբրիելան պետք եղած տեղեկությունները ստանար, տոմարական խնդիրներով զբաղելու առիթ չկրցավ գտնել, և դատելի տոները շարունակեցին առժամյա կերպով առանց հաստատուն ցուցակի: Մովսես եղավ, որ հայրապետության բարձրանալին ետքը, իրեն հատուկ նպատակ կազմեց դատական տոնի կամ տոնական տոմարի գոր-

ծը միանգամ ընդմիշտ կարգադրել, և Հայոց եկեղեցին համար. հաստատուն կանոնը մը ունենալ, առանց պետք ունենալու շարունակ օտարներու կարոտանալ... (Յով. 85): Կասեան շրջանը կազմված էր արդեն, բախկան էր դայն Հայ եկեղեցին հարմարցնել, տարեկան տոներն ալ ըստ այնմ կարգադրել, բայց պետք էր որ հոռոմեական ամիսներով կազմված ցուցակը հայկական ամիսներու վերածվեր, միանգամայն հոռոմեական նահանջավոր տարիներու հաշիվները փոխանցվէին Հայոց շարժական տոմարին նահանջ չունեցող տարիներուն վրա, համաձայն Հայկա շրջանին հաշիվներու...»

Զմտոսնանք, որ Մովսեսը ընտրվել էր կաթողիկոս 574 թվականին և միանգամից 532 տարվան վերաբերվող աղյուսակները, որոնք պատրաստված էին հոռոմեական՝ Հուլյան տոմարի թվականներով ու ամսաթվերով փոխադրել հայկական տոմարի թվականներին և ամսաթվերին շատ ու շատ դժվար գործ էր. դա պահանջում էր մեկ-երկու տարվա աշխատանք: Գործը վերաբերվում էր կրոնական տոներին ժամկեաների որոշման, որպիսի աշխատանքները պահանջում էին շատ մեծ ճշտություն որովհետև տոնը ժամանակին չկատարելն այդ դարում համարվում էր ամենամեծ հանցանքը:

Հետևապես ինչքան էլ աշխատել և ցանկանար Մովսես Ս-րդը՝ 574 թվականին պատրաստի աղյուսակներ ունենալ չէր կարող, որպեսզի ժողով հրավիրեր՝ նրանք հաստատել տուրու համար: Այդ պատճառով պետք է սխալ համարել այն հեղինակների կարծիքը, որոնք այդ ժողովը նշանակում են 574 թվականին:

«Ըստ այսմ ի հրամանէ մեծին Մովսեսի՝ բերքողք և գիսունք առաւեսիս» (Յով. 85) գումարվեցան Դվնոյ հայրապետանոցը, զոր կըրնանք իբր Դվնայ Գ ժողով ընդունել և 584 թուականին նշանակել: Հայոց դիտուններուն դիտավորն էր Աթանաս Տարոնեցի, Գլակայ Ս. Կարապետի մայրավանքի առաջնորդը, որ էր տեղեակ տոմարի ամենայն ազգաց (Սամ. 8) և առաջնորդեց բոլոր հաշվողական գործողությանց: Ժողովի

¹ Գառմ. Հայոց Կիրակոսի Գանձակեցոյ, Քրիստ. 1909, Ղուկասյան մատ. էջ 42:

կողմն նախադասվեցաւ հասի ցուցակը¹... Հետևապես հասյան ցուցակը կամ նրա մեծ ինդիկատորը պաշտոնապես ընդունվել է 584 թուականին, Դվինի ժողովում: Այդ ժողովը նմանապես որոշեց հասյան շրջանի ծայրը կապել Անդրեասյան շրջանի վերջին ծայրի հետ և այդ թվականը համարել կամ ընդունել որպես հայկական տոմարի դարադրուխ՝ սկսած 552 թվականից: Մի շարք պատմաբաններ շատ իրավացի կերպով Հայոց քիւ կամ Հայոց բուականք սկսում են 553 թվականից (Ստ. Ասողիկ, Սամ. Ան. և այլն), բայց և այնպես հանրաձայնութ և ընդունված է հաշվել 552-ից: Հետևապես՝ Հուլյան տոմարի դարադրուխց հայկականին անցնելու դեպքում պետք է նրանից դուրս գալ 551: Օրինակ 1941 թվ. ըստ Հուլյան տոմարի համապատասխանում է 1941—551=1390 թվականը Հայկական տոմարով:

Կրոնական տոները կարգավորելու համար Անդրեաս Բյուզանդացին կազմեց 200 տարվա մի աղյուսակ, որը ընդունվեց բոլոր քրիստոնեություն ընդունած ժողովուրդների համար և գործածության մեջ դրվեց 353 թվականից: Հետևապես, այդ աղյուսակները գործածության համար պիտանի պիտի լինէին մինչև 552 թ. ներառելով:

Երբ աղյուսակները վերջացան 553 թվականի սկզբին «ի ժամանակս թագաւորութեան ամբարըշտին Յուստինիանոսի կղևրումն Մ ամեակի արգայն Անդրիասա և սկսան շփոթիլ լրմունք զատկաց և զիրք արուեստական տուժարաց» (Մատենադարան, ձեռագիր № 1973):

584 թվականին Դվինի Գ. ժողովը որոշեց կրոնական տոների հարցերում զեկալարվել հասի հորինած 532-ամյակի ժամանակաշրջանով, բայց հասյան և Անդրեասյան ժամանակաշրջանների ծայրերը փակցնել իրար այնպես, որ հասյանը կազմի Անդրիասի ժամանաշրջանի անմիջական շարունակությունը, այսինքն նրա (հասյանի) առաջին տարին համարվի 553-րդ թվականը նրանք համատեղեցին հասի առաջին տարին Անդրեասյան ժամանակաշրջանի

վերջին տարու, այսինքն 552-րդ թվականի հետ:

Եվ քանի որ հասյան ժամանակաշրջանի առաջին տարին պայմանավորվեցին համարել որպես հայկական դարադրուխի սկիզբ, հետևապես հայկական դարադրուխի առաջին տարի հանգիստացավ 552-րդ թվականը: Դրա հետևանքով միշտ ընդունված է որևէ մի փաստ հայկական թվականով արտահայտելիս՝ Հուլյան տարեթվից հանել 551 և ընդհակառակն: Սակայն մի քանի պատմագրեր (Ստ. Ասողիկ, Սամ. Անեցի և ուր.) մեղ անհայտ հանգամանքներից ելնելով, ընդունում են հայկական դարադրուխի առաջին տարին 553-րդ թվականը և այդ պատմագրերից օգտվելիս՝ պետք է հանել կամ ավելացնել 551-ի փոխարեն 552:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ամփոփելով զեկուցման մեջ բերված ավյախները և տեղեկությունները մենք գալիս ենք այն կարակացության.

1) որ Հայերը հին և միջին դարերում պահպանել են իրենց հնագույն, արեգակնային ախար տոմարը՝ առանց համարյա թե որևէ փոփոխության մինչև XIX դարի առաջին քառորդը:

2) քրիստոնեության մուտք գործելուց հետո Հայաստանում չեն հարմարեցրել իրենց տոմարը քրիստ. եկեղեցու պահանջներին, այլ՝ թողնելով այն անփոփոխ, գործածել են որպես քաղաքացիական կյանքի տոմար, իսկ կրոնական պահանջների համար ընդունել են և գործածել սովորական Հուլյան տոմարը:

3) իրենց քաղաքացիական տոմարից հայերը հրաժարվել են 1317 թվականին (Աղանայի 44-րդ ժողովում,) երբ Ռուբինյանների հայկական վերջին ֆեոդալական իշխանությունն արդեն մտանում էր իր վախճանին:

4) բազմաթիվ պատմական ավյախները բերում են մեղ այն կարակացության, որ հայկական արեգակնային տոմարի, այսպես կոչված, ապոկատաստազը կայացել է 428 թվականի օգոստոսի 11-ին և որ այդ կապված է կղև Օրինի համաստեղության հեկիակ-

¹ Օրմանյան, Ազգապատում 1, 571—572:

տիկ ծագման, այն համաստեղության, որը նվիրված է եղել հայոց ազգի առասպելական նահապետ Հայկ դյուցազնի անվանը:

5) նման տիպի տոմար, ըստ մեր հետազոտությունների, հայերը սկսել են դործածել V դարի կեսից մեր թվականությունից առաջ.

6) այդպիսով, հայերը ղեկավարվել են շարժական տոմարով մոտ 18 դար.

7) հայկական դարադրուխն ընդունելու թուականը պիտի համարել 584 թ., իսկ դարադրի առաջին տարին 553-րդը՝ 552-ի փոխարեն: Այդ ավելի ճիշտ կլիներ սակայն ելնելով որոշ հանգամանքներից, ընդունված է եղել 552-րդը: Բայց և այնպես մի քանի պատճառների ժամանակագրական տվյալների ստուգման ժամանակ անհրաժեշտ է վերևում բերված հանգամանքը աչքի առաջ ունենար, քանի որ նրանք դարադրուխ համարում են 553 թվականը (Ստեփան Ասողիկ, Կիրակոս Գանձակեցի և մյուսներ):

РЕЗЮМЕ

Подведя итог нашему докладу о некоторых вопросах армянского календаря, мы приходим к следующим положениям:

1) что армяне сохранили, почти без всяких изменений, свой древнейший календарь солнечного типа в течение древних и средних веков.

2) после принятия христианства, армяне не приспособили его к требованиям церкви, а оставив его без изменения, превратили его в гражданский календарь; для нужд церкви т. е. вычисления и обозначения дней религиозных праздников ввели календарь юлианский, который в гражданской жиз-

ни применения не имел, хотя и был знаком народу.

3) от своего гражданского календаря армяне отказались в 1317 г. (на 44-ом соборе, в Адане) в эпоху, когда последнее самостоятельное армянское феодальное княжество Рубенидов находилось на краю гибели и вся Армения была разделена между разными завоевателями.

4) многочисленные исторические данные приводят нас к выводу, что т. н. апокатасатаз армянского календаря, типа солнечного, приходился на 11-ое августа в 428 г. н. э. и что он был связан с первым утренним восходом созвездия Ориона, которое в древней Армении было посвящено легендарному основателю армянского государства — Айку и носило название „созвездие Айка“, а сам календарь „цикл Айка“.

5) по нашим вычислениям календарь подобного типа был принят армянами в пол. V века до н. э.

6) таким образом, календарем подобного типа, армяне руководствовались в течение времени с середины V в. до н. э. до 1317 г. н. э. т. е. около 1800 лет.

7) точнее всего будет принять год официального введения армянской эры 584 г. н. э., а его первым годом считать 553-ый вместо 552-го, хотя, по неизвестным соображениям в свое время был принят 552-ой год и по традиции принято считать с 552-го. Однако при проверке хронологических дат некоторых историков (Ст. Асогик, Киракос Гандзакечи и др.) это обстоятельство необходимо иметь ввиду т. к. они дают даты, считая первым 553-ый год.

Ի. ԱՔՈՒԼԱՉԵ (Փիլոսոփական գիտությունների քեկնածու, ստալինյան բուսական):

ՔԱՐԹԼԻՍ ՑԻՈՎՐԵԲԱՅԻ ԿԱՄ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ:*)

«Քարթլիա Ցխովրերայի» հայերեն խրատագրությունը, որ «Վրաց Պատմություն» վերնագիրն է կրում, մինչև հիմա ութ ձևազրույց է հայտնի: Սրանցից մեկը, որն աղագ. Մ. Բրոսեի թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել 1851 թ., պահպանվում է Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտում, մյուսը՝ Վենետիկի Մխիթարյանների գրադարանում, երրորդը՝ Փարիզի ազգային Մատենադարանում, իսկ մնացած հինգ օրինակները Հայկ. Ս.Ս.Ռ.Մ Մատենադարանի (Երևանում) սեփականությունն են կազմում:

«Քարթլիա Ցխովրերայի», այսինքն՝ Վրաց Պատմության հայկական ձևազրույցից հրատարակված է միայն Վենետիկի Մխիթարյանների ձևազրույցը: Այս հրատարակությունը կատարված է 1674 թ. զրչություն ունեցող մի ձևազրույցի արտագրության հիման վրա, որը մի ժամանակ պատկանում էր կարինի առաջնորդ Կարապետ Բագրատունուն, բայց հետագայում տեղ գտավ Էջմիածնի ձևազրույցի հավաքածուի մեջ (№ 3070): Փարիզի ազգային Մատենադարանի ձևազրույցը, այդ հիմնարկության հայկական ու վրացական ձևազրույցի ցուցակագրող Mac-ler-ի տված տեղեկության համաձայն, որից և Վենետիկի ձևազրույցն է գալիս:


Ո՛չ միայն Վենետիկի և Փարիզի օրինակները, այլ և այն հայերեն ձևազրույցը, որից Բրոսեի կատարել է իր ֆրանսերեն թարգ-

մանությունը, աղագ. Ն. Մառի տված տեղեկության համաձայն, Կարապետ Բագրատունու սեփական ձևազրույցն է արտագրված, Այսպիսով, վերոհիշյալ չորս ձևազրույցն արտագրված են իրարից: Սրանց մեջ ամենահինը Կարապետ Բագրատունու օրինակն է, որը, ինչպես նշել ենք, այսօր գտնվում է Հայաստանի Մատենադարանում (№ 3070): Մնացած չորս օրինակներից, որոնք նույնպես պատկանում են Մատենադարանին, վաղուց հայտնի է № 1902, որն ըստ գրությունից, ամենահին օրինակն է: Աղագ. Մ. Բրոսեի որոշմամբ այս ձևազրույցը գրված է 1279—1311 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում¹⁾: Մնացած երեքից՝ երկուսն անցյալ դարի օրինակներ են. մեկը, ինչպես մեր համեմատությունից պարզվեց, նույնպես Կարապետ Բագրատունու ձևազրույցն է արտագրված 1840 թ., վրացերեն ուսուսերեն իմացող Արիստակես Երզնկյանցի ձևազրույցով, Թբիլիսիում, իսկ մյուսը՝ № 3052 հայտնի հայազեա պրոֆ. Բ. Պատկանյանն է պատրաստել, ըստ երևութին, տաղադրելու համար: Վերջին, ութերորդ, օրինակը № 5501, որ 1683 թ. է գրված ինչպես պարզվեց Մատենադարանի մյուս ձևազրույցի հետ արված համեմատությունից, ամենամատիկ հարաբերության մեջ է հնագույն ձևազրույցի (№ 1902) հետ: Ինչպես տեսնում ենք, բոլոր

¹⁾ M. Brosset, Rapports sur un voyage archéologique etc., III rap., p. 62, SPB, 1849.

² Ձեկուցում կարգացված Հայկական ՍՍՌ Ժողովրդավարական կից Ձևազրույցի ուսումնասիրության ինստիտուտի (Մատենադարանի) զիտական սեփայի 1940 թ., 39-X նիստում:

վերոհիշյալ ձեռագրերը, բացի Բ. Պատկանյանի ձեռագրից, գալիս են վերջ ի վերջու երկու ձեռագրից:



Ինչպիսի անհնություն կա սրանց միջև: Մասնագետների կարծիքով գոյություն ունեցող և մեզ հասած բոլոր ձեռագրերն առաջացած պետք է լինեն ամենահին օրինակից (№ 1902-А): Այդ կարծիքը նրանք հիմնավորում են այն բանով, որ ամենահին օրինակի վերջին թերթն ընդհատվում է այնպիսի բառով («նստուց»), որով վերջանում են նաև հետագա ժամանակների բոլոր ձեռագրերը: Ակադ. Ն. Մառը նկատել է այն հանգամանքը, որ հիշյալ ձեռագրի վերջին թերթը կտրված է և այդ կտրված թերթից տողերի սկզբի տառերի միայն մի մասն է երևում: Նրա կարծիքով այս թերթի վրա գեղեցիկ պատկերված «Քարթլիս Յխովրերայի» թարգմանության մի փոքրիկ մասն ու արտագրողի կամ ստացողի հիշատակարանը:¹ Անշուշտ մյուս օրինակներն այն ժամանակ պիտի արտագրված լինեն, երբ ձեռագրից պահպանել է վերջին թերթը, և ինչպես ակադ. Ն. Մառն է կարծում, հենց այս է պատճառը, որ հայերեն ընդգրկի բոլոր օրինակները վերջանում են նույն ընդհատված «նստուց» բառով: Այսպիսով, ուրեմն, գոյություն ունեցող բոլոր օրինակների համար գտնված է սկզբնաղբյուրը, այսինքն՝ 1279-1311 թվ. միջև գրված «Քարթլիս Յխովրերայի» ամենահին հայերեն ձեռագիրը (№ 1902):

¹ Н. Марр, Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей (Зак. вост. отд. РАО I. V стр. 211-241. СПб. 1891 (այս հոդվածը թարգմանված հայերեն, ա. «Հանդես Ամսօրյա» 18, էջ ...)).

Ակադ. Ն. Մառի հիշյալ դիտարկումները, որի համաձայն «Քարթլիս Յխովրերայի» հայերեն տեքստն ընդհատված «նստուց» բառից հետո շատ չպիտի շարունակվեր, այլ քիչ հետո պիտի վերջանար, ինձ ճիշտ է թվում: «Քարթլիս Յխովրերայի» հայերեն տեքստը պիտի վերջանար Դավիթ Շինողի պատմությունում, այսինքն՝ վերջին տողերը պիտի պատմեին Դավիթի մահվան և նրա ժառանգի դաս բարձրանալու մասին: Այս դեպքը նկարագրելու համար ինչպես երևում է, բավական էին առաջին խիտ տողերը. թե ինչու, այդ կետանկնք հետո: Ինչ վերաբերում է ակադ. Ն. Մառի արտահայտած կարծիքին, որի համաձայն «Քարթլիս Յխովրերայի» հայկական տեքստից հետո գեղեցիկ պատկերված «Քարթլիս Յխովրերայի» հայերեն տեքստից հետո գեղեցիկ պատկերված «Քարթլիս Յխովրերայի» հիշատակարանը, այդ կարծիքը կարող է ճիշտ լինել, բայց այս երևույթի կապակցությունը պետք է նշել նաև այն, որ կտրված թերթի առաջին էջի վրա մնացած տառերը գրված են տեքստից տարբերվող թանաքով և, որ հետաքրքրական է, այդ էջի տողերի քանակը չի համընկնում տեքստի էջերի տողերի քանակի հետ: Ուստի կարելի է եզրակացնել, որ կտրված թերթի առաջին էջի վրա, «Քարթլիս Յխովրերայի» վերջից հետո, կարող էր գեղեցիկ պատկերված լինել հիշատակարան, որը կարող էր գրված լինել ոչ թե արտագրող զբղի, այլ ուրիշ անձնավորության կողմից: Այսպես թե այնպես, պարզ է որ 1. բոլոր օրինակները վերջանում են այն ընդհատված բառով, որով վերջանում է ամենահին ձեռագիրը (А) 2. խմբագրական տարբերություններ օրինակների մեջ չեն նշմարվում 3. ամենահին ձեռագրին ավելի շատ (А) հետևում է С օրինակը որը կարող է արտագրված լինել հենց նրանից (А). բայց իր հերթին տուրք է տալիս իր ժամանակի ուղղագրությանը: 4. В օրինակին էլ, որին հետևում են մնացած ձեռագրերը, ինչպես երևում է, А-ձեռագրից է արտագրված. С օրինակի նման նա էլ բնորոշվում է ուղղագրական տարբերություններով, բայց զլխավոր գանազանությունն այն է, որ նա (В); տեղ-տեղ պակաս բառեր ու խոսքեր, ունի: Հիշյալ ABC օրինակների հետ միասին՝ վրաց

Պատմութեան տեքստը հրատարակելու համար կարելի է օգտագործել նաև Երզնկյանցի ձեռքով արտագրված (1) օրինակը:

Ձեռագրերի հիշատակարաններից ուշագրավ են հետևյալները: Ա ձեռագրի մեջ մի տեղ կարդում ենք՝

«Պատմութիւն Ասորիացի և զիրքս Եւազրեայ, վերջին՝ Պատմութիւն Արացեաց յիշատակ է Յովհաննու Կարճաւանցեոյ, որ փառաւ կայր. վերստին նորոգեցի և կազմել ետու սիրելւոյն իմոյ Շմաւոն վարդապետի Լօռեցեոյ, ի թվիս ՌՃԺԳ...»

Ուրեմն այս ձեռագիրը մի ժամանակ քրքրված է եղել և 1664 թ. կազմել են տվել: Հետագայում այս ձեռագիրը պատկանել է Վարդան Բաղիշեցուն:

«Չստացող գրոյս, որ կոչի Ասորիաց պատմագիր և սուրբ հօրն անապատականացն Եւազրի բանք և խրատք բազում, որ և Վարդան վարդապետս Բաղիշեցի ստացայ ի հալալ արդեանց իմոց և ետու յիշատակ ի դուռն սուր էջմիածնի ի փրկութիւն հոգւոյ իմոյ: Որք ընթեանուք և օգտիք ի սուրբ գրոցս յիշեցէք ի Քրիստոս զԲաղիշեցի Վարդան վարդապետն և զճնորդն իւր, ամէն: Ի թվին ՌՃԼԹ:»

Այսպես, ուրեմն 1664 թ. կազմված մեր ձեռագիրը 1690 թ. էջմիածնին է նվիրում գրքի ստացող Վարդան Բաղիշեցին:

Ե ձեռագրի հիշատակարաններից մեկը արտագրող Գալիթ ձնճղկի կողմից պատմում է, որ այս ձեռագիրը Վարդան Բաղիշեցու համար է եղել գրված 1669 թ.: Ինչպես քիչ առաջ բերված փաստերից երևաց, Բաղիշեցին ունեցել է մի ժամանակ և Ա ձեռագիրը, որից կարելի է այն շատ հավանական ենթադրությունն անել, թե այդ Ա ձեռագրից պիտի արտագրված լինեն այն երկերը, որոնք մտնում են Ե-ի մեջ: Իբրև ապացույց այդ բանի՝ կարելի է ցույց տալ այն հիշատակարանը, որը նույնութեամբ կրկնված է և Ե ձեռագրի մեջ՝ Ասորի երկու Պատմութիւններից հետո:

Ը ձեռագիրն ևս, ինչպես արտագրող Միքայել երեցն է վկայում իր հիշատակարանների մեջ, գրվել է 1685 թ. Վարդան Բաղիշեցու հիշատակին:

«Գրեցաւ... յիշատակ հարգելի և բանութուն ըարունապետ Վարդանի և Գրիգոր վարդապետի...»:

Վերոհիշյալ վկայություններից պարզվում է, որ մինչև Ը ձեռագրի արտագրությունը Բաղիշեցու դպրոցում Վրաց պատմութիւնը պարունակող երկու ձեռագիր օրինակ կար (A և B). ուրեմն որից է արտագրված Ը ձեռագիրը: Համեմատութիւնից պարզվում է, որ նա առաջ է եկել A ձեռագրից: Ինչպես B ձեռագրի, նույնպես և Ը ձեռագրի արտագրողը սուրբ է տվել իր ժամանակի ուղղագրութեանը, բայց բնագրի մյուս հատկութիւններն այստեղ ավելի ճշտորեն են պահված, քան B ձեռագրի մեջ: Բաց թողված բառերն ու խոսքերն այստեղ ավելի քիչ են, քան թե Ե-ում:

Այսպես ուրեմն, XVII դարի այս երկու ձեռագրերը, իրարից անկախ, Ա-ից են գալիս, իսկ ավելի ուշ ժամանակի ձեռագրերը՝ Ե-ից: Այս վերջինից արտագրված օրինակի համաձայն է Վրաց Պատմութիւնը՝ հրատարակված Վենետիկում 1884 թ. հետևյալ խորագրով՝ «Համառոտ Պատմութիւն Արաց, ընծայեալ Չուանշէրի պատմիչի»:

Մեզ հասած բոլոր ձեռագրերը, ինչպես նշել ենք, իրենց վերջում ունեն թերութիւն, որը սակայն մեծ չպետք է եղած լինի՝

Բացի սրանից՝ թերութիւն կա նաև գրքի մեջ: Արդեն հրատարակելն էլ է նկատել, որ Վախտանգ Գորգասալից հետո պատմված նյութի մեջ մի տեղ ոտայուն կա Փարսման II-ի թագավորութիւնը և Եվլաթի կաթողիկոսութիւնը հիշատակելուց հետո անհասկանալի թռիչք է կատարվում և սկսվում է կյուրապաղատներից մեկի պատմութիւնը, որի իշխանութեան ժամանակ վախճանվում է Սամուէլ կաթողիկոսը և նրա տեղն է գրավում Բարթողիմէոսը: Այդ կյուրապաղատը Ստեփանոսն է: Համեմատելով հայերենի այս տեղը վրացերեն տեքստի հետ՝ պարզվում է, որ սրանից առաջ բաց է թողնված Փարսման II-ի որդու՝ Բակուրի ու նրա ժառանգորդ Գուրամ կյուրապաղատի պատմութիւնը, իսկ հայրապետների շարքում չեն երևում Մակար և Միմեոն կաթողիկոսները: Ինչպես երևում է, այս թերութիւնը թարգմանչի գործ չէ, այլ ար-

տազրոզի: Որ սկզբնագիրը և մեզ շնասած հնագույն օրինակները հիշյալ կեանքը պետք է պարունակեն, այդ կարող ենք հաստատել լրիվ օրինակից վերցրած քաղվածքներով: Մխիթար Այրիվանեցին, ինչպես հայտնի է, ունի վրաց իշխանների ու թագավորների և մյուս կողմից՝ վրաց հայրապետների ցանկ, որը, ինչպես դիտել են, կազմված է Վրաց Պատմության հայերեն խմբագրության հիման վրա: Վերոհիշյալ վրաց թողնված անձնավորություններն այդ ցանկում կան, ուրեմն Մխիթարի ժամանակ ու նրա ձեռքի տակ եղել է Վրաց Պատմության այնպիսի օրինակ, որը սկզբնագրի լրիվ ընդօրինակությունն էր ներկայացնում:

Հրատարակված «Քարթլիս Յխովրեբա» կամ «Վրաց Պատմություն» գրքի վերնագիրը վերցված է երևում հենց Պատմության մի հիշատակարանից, որ կցված է ինչպես վրացերենում, այնպես էլ հայերենում, Քարթլիս Յխովրեբայի մեջ մտած Արչիլ թագավորի վկայարանությանը:

«Եւ գտաւ Պատմութիւնս համառաւաւ ի ժամանակս շփոթմանն և եղաւ ի գիրքս որ Քարթլիս Յխաւրեպա, որ է Պատմութիւն Քարթլայ. և եզիտ զսաջուանքեր, գրեալ մինչև ցՎախթանգ թագավոր, և մինչև ցայս վայր ինքն յավել Ջուանքեր, և զգալոյն՝ յանձնեաց տեսողացն և պատահելոյն ի ժամանակին»:

Այս հիշատակարանից չի երևում, որ ամբողջ Քարթլիս Յխովրեբայի հեղինակը Ջուանքերն է կրել, ընդհակառակը, նրան միայն մի մասն է վերադրվում: Հիշատակարանի մեջ մասնանշած «Պատմութիւն համառաւաւ»-ը ոչ թե Քարթլիս Յխովրեբային, այսինքն՝ Վրաց Պատմությանն է վերաբերում, այլ Արչիլի վկայարանության գրքին և այդ պատճառով էլ չի կարելի արդարացնել հրատարակիչ Ա.թ. Թիրոյանին այն բանի համար, որ նա հրատարակած գրքին տվել է վերոհիշյալ վերնագիրը:

Ա.թ. Թիրոյանի խմբագրությամբ լույս տեսած «Վրաց Պատմության» տեքստը բավական մեծ սրահասություններ ունի: Առաջինն այն է, որ տեքստը հաջող օրինակից չի գալիս: Ինչպես տեսել ենք, Կ. Բաղրա-

տունու օրինակը՝ ամենահին օրինակի հետ համեմատած՝ սրահաս բառեր ու խոսքեր ունի: Այս բոլորն ինքն ըստ ինքեան կրկնված են և Թիրոյանի հրատարակության մեջ, բացի դրանից, ընդօրինակողի անուշադրության հետևանքով՝ հրատարակությունից դուրս է ընկել մի ամբողջ թերթ:

Չնայած այս թերություններին՝ հիշյալ հրատարակությունը, Մ. Բրոսսեի հրատարակած ֆրանսերեն թարգմանության հետ միասին¹⁾, մեծ դեր է խաղացել: Ակադ. Մ. Բրոսսեի աշխատություններից հետո վերջնականապես խախտվեց այն դիտնականների կարծիքը, որոնք գտնում էին, որ Քարթլիս Յխովրեբան կազմված է XVIII դարի սկզբին, Վախտանգ VI-ի ու նրա հանձնաժողովի կողմից, թեպետ՝ գիտնականներից ոմանք այժմ, Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը հրատարակվելուց հետո, դրությունն այնպես են ներկայացնում, իբր թե Վախտանգ VI-ը Քարթլիս Յխովրեբան կազմելու ժամանակ օգտագործել է այդ հայերեն խմբագրությունը:

Վրաց Պատմության հայերեն խմբագրության հրատարակումից հետո վրացերեն ու հայերեն խմբագրությունների հարաբերությունների շուրջը կզած աշխատանքը բավական աշխուժացավ: Առաջինը, որ զբաղվեց այդ հարցով, պրոֆ. Բ. Պատկանյանն էր: Նա իր աշխատության մեջ՝ «Ванские надписи и значение их для истории персидской Азии: о древне - грузинской хронике» զանազան պատմադրական կարգի հարցեր լուսարանեց, որոնցից մի քանիսը հիմա էլ ընդունելի են: Նա համեմատության ենթարկեց միմիայն Քարթլիս Յխովրեբայի սկիզբը, որ ինչպես հիմա արդեն պարզված է, Լեոնտի Մրովելու երկն է՝ «Վրաց թագավորների և նախահայրերի պատմությունը»: Պատկանյանի դատավճիռը «Քարթլիս Յխովրեբայի» մասին զրական չէր: Նրա գլխավոր սխալն այն է, ու նա Քարթլիս Յխովրեբային նայում էր իբրև մի ամբողջական երկի և ոչ թե զանազան երկերից

¹⁾ M. Brosset, Chronique Arménienne; additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie SPB, 1851.

կաղմված ժողովածուի վրա, և այսպիսով ամբողջութեան մասին դատում էր միայն մի մասի վերլուծմամբ:

Վրաց գիտական աշխարհից հիշյալ հարցով զբաղվողներից պիտի հիշատակել պատմաբան պրոֆ. Յուստինե Աբուլաձեին¹⁾, ու ակադ. Ի. Չավախիշվիլուն²⁾: Մասնագետներն առանց բացառութեան հաստատում են, որ Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը թարգմանված է վրացերենից: Հայերեն խմբագրության ամենահին օրինակը վերագրում են XIII դարին: Համեմատելով այս խմբագրությունը Քարթլիս Յխովրեբայի վրացերեն խմբագրության հետ, որի ամենահին օրինակներն ուշ ժամանակների արագրություններ են, երևում է, որ հայերենը բավական համառոտ է: Այս երևույթը պատճառ դարձավ, որ հետազոտողներից ոմանք ենթադրեն, թե սկզբում վրացերենում ևս հայերենի նման խմբագրություն է եղել:

Այս կարծիքն են հայտնել վերոհիշյալ գիտնականներից Ք. Ժորգանիան և Յ. Աբուլաձեն: Սակայն ակադ. Ի. Չավախիշվիլին Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրությունը համարում է վրացերենից համառոտված թարգմանություն: Ինչ վերաբերվում է թարգմանության ժամանակին, ակադ. Չավախիշվիլին, հավանակ Ք. Ժորգանիայի, Յ. Աբուլաձեի և ուրիշների, որոնք այս թարգմանությունը XII դարին են վերագրում, Բրոսեի և այլ գիտնականների նման կարծում է, որ թարգմանությունը XII դարի զործ պիտի լինի:

Պրոֆ. Յ. Աբուլաձեն փորձեց նույնիսկ հայերենի հրատարակված տեքստի ազատագրումներն ուղղել, սակայն այս փորձը, ինչպես հիմա է պարզվում, հաջող չէ: Հիմա մենք ի դեմս ամենահին ձևագրի, ունենք Քարթլիս Յխովրեբայի համեմատաբար լավ օրինակ, որի հետ համեմատելով պրոֆ.

Աբուլաձեի ուղղված տեղերը՝ տեսնում ենք, որ այդ ուղղումները մեծ մասամբ հիշատակում են:

«Քարթլիս Յխովրեբայի» վրացերեն տեքստի այն տեղերը, որոնց մեջ կան տեղեկություններ հայերի և Հայաստանի մասին, վերջին ժամանակներս թարգմանված են հայերեն պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի կողմից³⁾: Նա իր թարգմանած հատվածների կողքին գետնից նույնպես այդ հատվածների համապատասխան տեղերը Քարթլիս Յխովրեբայի հին հայերեն թարգմանությունից: Հին հայերեն թարգմանությունը, ինչպես ինքը՝ Մելիքսեթ-բեկն է ասում, բերված է իր թարգմանության կողքին, «որպեսզի գրանով, մեկ կողմից, դյուրութուն աված լինի ընթերցողին՝ կարևոր համեմատություններ կատարելու համար, և մյուս կողմից՝ ցույց տա, թե XII դարի հայերեն թարգմանությունը որքան է շեղվում բնագրից և, ուրեմն, որքան հավատ կարելի է ընծայել վերջինիս՝ այս կամ այն խնդիրներ լուծելիս...»: Շեղումներ ցույց տալու ժամանակ պրոֆ. Լ. Մ-բեկը երևի չի համաձայնում որոշ տեղերում հին թարգմանչի հետ ու տեղ-տեղ տարբեր, սակայն անճիշտ կերպով է տալիս թարգմանությունը, որ և կապացուցվի ստորև:

Այս է գլխավորապես այն հիմնական աշխատանքը, որ կատարված է մինչև օրս Քարթլիս Յխովրեբայի հայերեն ու վրացերեն խմբագրությունների շուրջը:

Այժմ անցնենք մեր դիտողություններին.

«Քարթլիս Յխովրեբայի» խմբագրությունը, կամ Վրաց Պատմությունը, վրացերենից է թարգմանված: Այս հաստատվում է ոչ միայն տառադարձության ժամանակ տեղ գտած նման տառերի շփոթմամբ, այլ որոշ nonsens-ներով, որոնք միայն վրացերենից կարող էին առաջացած լինել: Թարգմանությունը տեղ-տեղ համընկնում է վրացերենի հետ, տեղ-տեղ հեռա-

¹⁾ Յուստ. Աբուլաձե, «Վրաց մատյանի հին հայերեն թարգմանություն» (վրացերեն), տ. «Մագդաուրի» ամսագրի, 1901:

²⁾ Իվ. Չավախիշվիլի, «Հին վրացերեն պատմական գրականություն» (վրացերեն), I հրատ., 1916:

³⁾ Պրոֆ. դ-ր Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Լ, Երևան, 1934:

նում է բնագրից, կան նաև բաց թողնված կամ ավելացված որոշ տեղեր: Ավելացված են այնպիսի մոմենտներ, որոնք չեն կարող վրացերենում եղած լինել: Ինչպես երևում է, թարգմանիչը որոշ նկատառումով է պահանջնում և ավելացնում այս կամ այն մոմենտը:

Քարթլիս Ցխովրերայի հայերեն ընտրովի թարգմանությունը սկզբնական մասում ավելի քիչ է համառոտված (Լեոնտի Մրովելու և Ջուանշիրի երկերում): Այս մասից բաց չի թողնված որևէ մի ուշագրավ երևույթ:

Բազմաթիվ մոմենտներ, որոնք կամ շատ են սղմված, կամ հաճախ բաց են թողնված, մեծ մասամբ վերաբերում են «Քարթլիս Ցխովրերայում» տեղ դրած ուրիշ երկերի, առանձնապես «Քարթլի մատյանին» ու «Իավիթ Շինողի պատճությունը»: Այս մասերից, այսինքն՝ վերջին երկու երկից, հայերեն խմբագրության մեջ չեն երևում, ինչպես արդեն ուրիշներն էլ են նկատել, ոչ միայն ժամանակագրական բնույթ կրող տեղեկությունները, այլ և շատ այնպիսի դեպքեր, որոնք Վրաստանի ներքին կյանքին են վերաբերում և ոչ մի կապ չունեն դրսի աշխարհի հետ: Հենց այնպիսի տպավորություն ենք ստանում, երբ մանրամասնորեն ծանոթանում ենք այս երկերի վրացերեն ու հայերեն տեքստի հետ: Այն հանգամանքը, որ այս հուշարձանները համեմատաբար մեծ չափով են համառոտված, իմ կարծիքով, ոչ թե այն բանով է բացատրվում, որ հայերենի նման ինչ-որ համառոտ խմբագրություն պիտի գոյություն ունենար վրացերենում, այլ նրանով, որ հայ թարգմանիչը այս դեպքում ուրույն տեսակետով է առաջնորդվել: Ծանկանալով տալ հայ ընթերցողին Վրաց պատմություն գիրքը՝ թարգմանիչն աշխատում է Քարթլիս Ցխովրերայի մեջ զետեղված գրքերի բովանդակությունը հարմարեցնել սպառողական միջավայրին:

Քարթլիս Ցխովրերայի մեջ ամփոփված երկերում պատմված դեպքերը նա հայ ընթերցողին տալիս է ոչ թե ամբողջությամբ և մանրամասնորեն, այլ ընտրելով միայն գլխավորն ու համառոտելով: Վերցնում է

այնպիսի դեպքեր, որոնք որևէ կերպ կամ հայոց պատմության եղելություններին հետ են կապված, կամ հիշեցնում են այնպիսիները: Բաց չի թողնում այնպիսի տեղեր, որտեղ այսպես թե այնպես հայ է մասնակցում: Եվ եթե որևէ մի ստվեր է ընկած նման դեպքերում հայ գործչի վրա, հայ թարգմանիչն աշխատում է որևէ կերպ մեղմացնել այն, կամ բոլորովին հանել կամ թե, լավագույն դեպքում, այնպես փոխել, որ ընդունելի լինի հայ ընթերցողին:

Այս բոլորից հետո մեղ թվում է, որ Վրաց Պատմությունը ոչ թե հասարակ թարգմանություն է, այլ մի համառոտություն է, որ կատարված է որոշ աշխարհահայացք ունեցող անձնավորություն ձևով, որոշ նպատակով:

Ո՞վ պիտի լինի թարգմանիչը և ի՞նչ աշխարհայացքի տեր: «Քարթլիս Ցխովրերայի» կամ Վրաց Պատմության թարգմանիչն անշուշտ հայ է: Այս է վկայում թեկուզ այն, որ նունեի մասին վրացերենում ասված է, որ նա «մայրն և ավագանն է մեր», իսկ հայերենում՝ դրա տեղը կարգում ենք «մայրն Վրաց»: Հայ թարգմանիչը, ինչպես պարզվում է, միաբնակ է, և այս շատ պարզ երևում է այն հավելվածներից, որ թարգմանիչն է կատարել: Օրինակ՝ երբ թարգմանիչը Վասիլ կայսեր կողմից Բագրատ արքայորդուն պատանդ տանելու դեպքն է վերցնում, ակամա հիշում է այն եղելությունը, որ նույն Վասիլ կայսրը շուր օրհնելու համար կանչեց հայ կաթողիկոս Պետրոսին, «կոչեցեալ առ ինքն դմեծն կաթողիկոս Հայոց զՊետրոս... և ետևս կայսրն մեծ սքանչելիս ի վերայ ջրոյն, և գովեաց զհավատս Հայոց»: Նույնն է հաստատում և այն նկարագրությունը, որ կատարում է թարգմանիչը վրացական-հայկական եկեղեցական բանավեճի առթիվ, ներկայացնելով այն վրացերեն տեքստին միանգամայն հակառակ:

«Քարթլիս Ցխովրերայի» հայ թարգմանիչը մտցնելով դեպքեր, որոնք չկան վրաց բնագրում, ցույց է տալիս, որ ինքը քաջ ծանոթ է հայերեն պատմական գրականության հետ: Այսպես, օր. երբ Ջուանշիրի երկից վերցնում է Ներքոթի մասին պատ-

մածը, ավելացնում է, որ Պարսից ճեղք, որ նա ինքն է ներբովթ, որ կռաւնոսն կոչի՝ ազատեալ է...»։ Բեյլի ու ներբովթի նույնությունը, ինչպես պարզվում է, վերցված է Մովսես Խորենացուց, որտեղ (I, գր. 7) ասված է՝ «Բայց ես ասեմ զկրոնոսոզ անուն զԲեյլ, ներբովթ լեալ»։ Բայցի Խորենացուց՝ թարգմանիչը ծանոթ է Սերևոսի Պատմության հետևա՝ Մահմետի երևալու պատմությունը նույնպես հայկական աղբյուրներից է վերցված։ Ի միջի ալյոց, նրա պատմածն այս տեսակետից շատ նման է Սամվել Անեցու ու Մխիթար Անեցու պատմածներին։ Պետրոս կաթողիկոսի սքանչելագործության մասին եղած հատվածն էլ (որը թարգմանիչն իր թարգմանություն մեջ է մացնում) հայկական աղբյուրից է բղխում, և փոխ է առնված «Կողեոնի Տեսլեան» հեղինակից¹) և այլն և այլն։

Այսպիսով «Քարթլիս Յխովրեբայի» հայերեն համառոտության թարգմանիչ = խրատագիրը հայ է, միաբնակ իր դավանություն և բավական լավ ծանոթ ինչպես հին, նույնպես էլ ժամանակակից հայկական պատմության հետ։

Ե՞րբ է կատարված վրաց պատմության թարգմանությունը։

Թարգմանությունն ընդհատված է 1125թ. դեպքով, այս իսկ թիվը պետք է համարել թարգմանության terminus à quo-ն։ Ճիշտ է, հայերեն թարգմանությունն անսովոր կերպով «նստուց» բառով է ընդհատվում, բայց այս բառից հետո տեքստը չպետք է շարունակվեր, ընդամենը մի քանի տող պիտի լիներ, որովհետև «Դավիթ Շինողի պատմությունը» բնագրի՝ այսինքն՝ «Քարթլիս Յխովրեբայի» վերջին երկն էր, ինչպես այս հաստատել է ահագ. Ի. Ջավախիշվիլին։

Ինչ վերաբերում է terminus ad quem-ին, մասնագետները մեծ մասամբ իբրև այդպիսին ընդունում են XIII դարը։ Իմ կարծիքով, այս երկրորդ սահմանագիծը հեռու է տարված։ Արդեն պատմաբան Թ.

ժորդանիան Քարթլիս Յխովրեբայի հայերեն խմբագրություն ֆրանսերեն թարգմանության մեջ նկատել է մի տեղ, որից, նաև մեր կարծիքով, երևում է, որ թարգմանիչը Դավիթ Շինողի ժամանակակից է, ամենաշատը՝ կրտսեր ժամանակակից։ Երբ թարգմանիչը, իբրև հավելված, Սարկավագի և Դավիթ արքայի մտերիմ հարաբերության մասին է խոսում, գրում է. «Եւ տեսաք արդեսմբ կատարեալ դրան սաղմոսին (որով Սարկավագն էր դիմում արքային) ի վերայ թագավորին, և յոլովք ի բանից անտի վայելին նմա»։ և հետո թարգմանիչը թվում է այն փորձանքները, որոնցից անվասա մնաց Դավիթ արքան և որոնց մասին խոսում է նաև բնագիրը։

Դավիթ շինողի պատմության գրելու ժամանակը ահագ. Ի. Ջավախիշվիլին համարում է 1123—1126 թ. որ և ընդունում են ուրիշները։ Պարզ է, որ Քարթլիս Յխովրեբայի մեջ այս պատմությունը մտած պիտի լինի այդ ժամանակից հետո։ Հայ թարգմանիչը արդեն ձեռքի տակ է ունեցել այնպիսի ձեռագիր, որի մեջ գետեղված է եղել հիշյալ պատմությունը։ Թարգմանիչը Դավիթ արքայի վերջին օրերին ահանատես է եղել, ուրեմն և իբրև կրտսեր ժամանակակից, նա Քարթլիս Յխովրեբայի մեջ գետեղված Դավիթ արքայի պատմությունը կարող էր թարգմանել XII դարի միայն երկրորդ կիսում։

Վրաց Պատմության հայերեն խմբագրությունը, չնայած այն հանդամանքին որ նա՝ իր աղբյուրի հետ համեմատած՝ համառոտ է, կարող է որոշ գաղափար տալ այդ աղբյուրի, այսինքն՝ «Քարթլիս Յխովրեբայի» առաջին վրացերեն խմբագրության կաղմության մասին, որից հին ձեռագրերը մեզ չեն հասել։ Թոսելով հայերեն, խմբագրության համառոտ լինելու մասին, նկատի պիտի ունենանք այն, որ նրա համառոտությունը ոչ թե նրա մեջ տեղ գտած երկերի թվի նվազեցում է նշանակում, այլ այդ երկերի բովանդակության սղում։

Երբ «Քարթլիս Յխովրեբայի» հայերեն խմբագրության համեմատ ուսումնասիրում ենք այս հուշարձանի վրացերեն հին օրինակները (XV—XVII դ. դ.), նախ և առաջ ուշադրություն է գրավում այն, որ XII

¹ Н. Я. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерие (из сборника «Восточные записки», СПб., 1895).

դարի վրացերեն Քարթլիս Յխովրեբան րադկացած է հղել հետևյալ երկերից. 1) Լեոնտի Մրովելու Վրաց թագավորների և նախահայրերի պատմությունը. 2) Ջուանչիրի՝ Վախտանգ Գորգասալի պատմությունը. 3) Արշիլի վկայաբանությունը. 4) Քարթլի մատյանը և 5) Դավիթ արքայի պատմությունը:

Երկրորդ աչքի ընկնող երևույթը, ինչպես դեռ Թ. Ժորդանիան է նկատել, այն է, որ հայերեն «Վրաց Պատմության» մեջ նունեի վարքը պատմված է առաջին դեմքով, այն ժամանակ երբ Քարթլիս Յխովրեբայի մեղ հասած վրացերեն հին ձևագրերի մեջ նույն պատմությունը ներկայացված է երրորդ դեմքով: Թ. Ժորդանիան կարծում էր, որ հայերեն թարգմանության մեջ հիշյալ վարքը նունեի այսպես կոչված, «նոր վարիանտից» է գալիս, և ոչ թե երկրորդից: Այն ժամանակ «նոր վարիանտ» կոչվում էր X դ. ձևագրի՝ «Շատրերգի ժողովածուի» մեջ գետնից վարքի վարքը, իսկ երկրորդ՝ Լեոնտի Մրովելու ձևագրով կազմված վարքը: Բայց նունեի վարքի վրացերեն տեքստերի ուսումնասիրությունը՝ Վրաց Պատմության հայերեն խմբագրության մեջ գտնվող վարքի առընչությամբ՝ պատմաբան ժորդանիայի արտահայտած կարծիքը չի արդարացնում: Նունեի վարքի հայերեն թարգմանությունը մոտիկ հարաբերություն ունի Քարթլիս Յխովրեբայի մեջ տեղ գրված Լեոնտի Մրովելու կողմից կազմված վարքի հետ, և

այն հանդամանքը, որ թարգմանության մեջ վարքը պատմվում է առաջին դեմքով, իսկ վրացերենում (մեղ հասած Ք. Յ.-ի հին ձևագրերում) երրորդ դեմքով, ըստ իս՝ այն է նշանակում, որ Քարթլիս Յխովրեբայի XII դարի վրացերեն խմբագրության մեջ ևս Լեոնտի Մրովելու ձևագրով կազմված նունեի վարքը նույնպես առաջին դեմքով է հղել շարագրված և հետագայում միայն խմբագրիչների կողմից դարձվել է երրորդ դեմքով:

«Քարթլիս Յխովրեբայի» հայերեն հին թարգմանությունը վրացերեն բնագրի համար, բացի վերոհիշյալ կողմերից, ունի մի նշանակութային ևս: Այդ արդեն լեքսիկային է վերաբերում: Քարթլիս Յխովրեբայի վրացերեն տեքստի մեջ պատահում են այնպիսի բառեր, որոնց գործածությունը հազվագյուտ է հին վրացական տեքստերում: Այս տեսակի բառերի խմաստը ճշտորեն սահմանելու համար անգնահատելի օժանդակություն է ցույց տալիս մեղ հայերեն հին թարգմանությունը: Պիտի ասել, որ թարգմանիչը, չնայած այն սակավաթիվ nonsens-ներին, որոնք տեղ են գտել նրա թարգմանության մեջ, գլխավորապես բնագիր օրինակի շնորհիվ (երևի ձևագրերը լավ չէր կարդացվում), լավ է տիրապետում վրացերեն լեզվին: Նույն իսկ բոլոր հազվագյուտ բառերը, որոնք կան Քարթլիս Յխովրեբայի տեքստում, թարգմանիչը ճշտությամբ է հասկացել: Այդպիսիքն են՝

კნისობა («կնիսորա»), որը թարգմանված է «զբաւսանք» բառով:	
უძლები («ուձլերի»), »	» «յղի» »
ჩუვლუვი («չուզլուզի»), »	» «երկաթակուռ մահակով».
ხანდავი («խանդակի»), »	» «խոր փոս» բառով
ხობტავი («խոտակի»), »	» «գանձ, ստացված ք, տուրք կամ խաշն» բառերով:
სეფე («սեփև»), »	» «արքունիք» բառով
კილიკი («կիլիկի»), »	» «մահիճ» »
არძანვი («արձանիզ»), »	» «արժեկ» » և այլն:

Իմ կարծիքով, սխալվում է, պրոֆ. Լ. Մեյքսեթրեկը, երբ իր թարգմանած հատվածների մեջ վերոհիշյալ բառերից մի քանիսը և այլ բառեր, որոնք հաճախ են գոր-

ծածված հին վրացերենում, այնպես չի թարգմանում, ինչպես հին թարգմանիչը, այլ տալիս է ուրիշ անհաջող և անճիշտ բառերով: Երևի, նա նպատակ է ունեցել ցույց տալ հին թարգմանչի «շեղումների»

մի կողմը: Բայց ճշմարտությունը պահանջում է ասել, որ հին թարգմանիչը ավելի լավ է հասկացել ընդհանրապես բնագիրը և մասնավորապես այժմ մեզ համար դժվար ըմբռնելի տեղերը, քան թե նոր թարգմանիչը: Իրենք փաստերին:

Կոմպոզիցիոն («ուձիքի») պրոֆ. Լ. Մ.-Բ.-ը թարգմանում է «տկար» բառով, երբ այն նշանակում է՝ «յղի» (հին թարգմանիչը հենց այս բառով է թարգմանել):

Վերսեպ («արձանգի») նոր թարգմանիչը թարգմանում է «երիցություն» բառով, երբ նա նշանակում է «արժանիք = արժեք» (հին թարգմանիչը այս բառն էլ լավ է հասկացել, դնելով դրա փոխարեն՝ «արժեք» բառը):

Բյուձա («եղորա») բառը, որը նշանակում է «պատերազմի», շփոթելով նոր վրացերենի նշանակության հետ, նոր թարգմանիչը թարգմանում է իրրե Վարդի կանչի: Երբեք Վարդի կանչի:

Նուրջլո («սուփելի») բառը, որ հին վրացերենում, նշանակում է «աշխարհ» իսկ նորում՝ «գյուղ», նույնպես մի տեղ Մ.-Բ.-ը թարգմանել է «գյուղ» բառով («Ձուլ-ճոլա թոճոճոտա Նուրջլոնստա») = «գլխից գյուղապետներին»?!)

Երոնտաձո («էրիսթավի») «խշխան» բառով է թարգմանված, մինչդեռ այն նշանակում է՝ «դորագլուխ»:

Յանճա («գանցդա»), որ նշանակում է «տեմնի», թարգմանված է «հարձուփորձի ենթարկել» դարձվածքով, դարձյալ շրփոթելով նոր վրացերենի հետ:

Յեյո («ախուժա») բայ, որ նշանակում է «ընդունել կամ վերցնել» և այն էլ ոչ թե մեկը, այլ շատ, պրոֆ. Լ. Մ.-ը թարգմանում է «բաժանվել» բառով, որ նույնպես սխալ է և այն:

«Վրաց պատմության» մեջ, ինչպես ըստ պատելի է, կան այնպիսի բառեր, որոնք սովորական չեն հին հայերենում: Այս տեսակետից մեր հուշարձանը ուսումնասիրության առարկայ դարձավ պրոֆ. Զ. Աճառյանի կողմից, որն իր «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ (II հատ. Վենետիկ 1913—1922)» գրքում առանձին գլուխ է նվիրում «Վրաց պատմության»-ը հետևյալ վերնագրով. «Հայերեն նոր բառեր

Ջուանչիրի Վրաց պատմության մեջ» (գլ. ԻԴ):

Հիշյալ հոդվածի մեջ ստուգարանված են միայն հետևյալ 4 բառերը՝ պասանիկ, սեմփոր, սրահանգ ու փրոտիտոսիկ: Պասանիկ ու սրահանգ բառերի մասին տված բացատրությունները ճիշտ են, բայց կասկած է հարուցում միայն «սեմփոր» և «փրոտիտոսիկ» բառերի մեկնաբանությունը: «Սեմփոր», որ Վենետիկի հրատարակության մեջ «սեմփոր» ձևով է ներկայացված («և կղև ի նոսա ախա սեմփորի») պրոֆ. Աճառյանի կարծիքով հունարենից է վերցված, ուր *συνεργή* (կամ *συνεργά*) նշանակում է reunion, rencontre des maladies: Վրացերեն բնագրի հետ համեմատելով՝ այս բառի համարժեքն է «ՆՆՆձա Զյուլոնսա», որ նշանակում է՝ «ախա փորի»: Այստեղից երևում է, որ «սեմփոր» (ամենահին ձևագրի մեջ «սենփոր») բարդ բառ է, բաղկացած երկու բառերից՝ մեկը «սեն» ու մյուսը՝ «փոր», որով արտահայտված է վրացերենի «նցնի» (կամ «նցնձա») Զյուլոնսա՝ միայն այնպես, որ առաջին բառը թարգմանված չէ:

«Փրոտիտոսիկ» բառը պրոֆ. Զ. Աճառյանը հունարեն *προσθητος*-ի հետ է կապում, որը հայերենում պիտի տար «փրուրիտոսիկ» ձևը, բայց «Լ» և «Ր» տառերի միացմամբ առաջացած է երևում «փրոտիտոսիկ», որ և մեկնողի առաջարկությանը պիտի ուղղվի: Կարող է այս բառի ստուգարանությունը ճիշտ լինել, բայց սրա սրբալից ձևը ոչ թե հայերենի հիման վրա է ըստացված, այլ սրա փոփոխության պատճառը վրացերենում պիտի փնտռել, որովհետև հիշյալ ձևով այս բառը վրացերեն բնագրից է անցել հայերեն թարգմանության մեջ: Վրացերենում համապատասխան տեղում ունենք «Ծրուճատոնկամ, Ծրուճատոն», բառը, որ հայերեն թարգմանության մեջ «փրոտիտոսիկ» ձևով է ներկայացված:

Վերջացնելով մեր դիտողությունները «Քարթլիս Յխովրեբայի» հայերեն թարգմանության մասին՝ մեզ մնում է միայն ամփոփել մեր վերևում ասածները:

«Քարթլիս Յխովրեբայի» այսինքն Վրաց պատմության մեջ հասած հայկական

ձեռագրերից միայն 4 օրինակներ կան, որոնք անհրաժեշտ են վերահիշյալ Պատմութեան հայկական բնագիրը վերականգնելու համար:

2. Ամենահին ձեռագիրը, որ գրված է համարվում XIII դարի վերջին, լիովին չի պահպանում սկզբնագիրը:

3. «Քարթլիս Յխովրերայի» հին հայերեն խմբագրութեանը թարգմանված է վերացերենից: Թարգմանութեանը համառոտ է, ունի և հավելվածներ, թե՛ մեկը, թե՛ մըշտուր կատարված են որոշ նկատառումներով:

4. Թարգմանիչը հայ է, դավանանքով միաբնակ, և Դավիթ Շինողի կրտսեր ժամանակակից: Թարգմանութեանը կատար-

ված պիտի լինի XII դարի երկրորդ կեսում:

5. Քարթլիս Յխովրերայի հայերեն թարգմանութեանը օժանդակում է մեզ որոշ գաղափար կազմելու Քարթլիս Յխովրերայի մեր ձեռքը չհասած հին վրացերեն առաջին խմբագրութեան կազմութեան մասին:

6. Քարթլիս Յխովրերայի հայերեն հին թարգմանութեանը օժանդակում է մեզ ճշգրիտ սահմանելու վրացերեն տեքստի՝ հընում հաղվագյուտ գործածութեան ունեցող բառերի իմաստը: Իր հերթին՝ վրացերեն տեքստի օգնութեամբ՝ հայերեն թարգմանութեան մեջ վերականգնվում են որոշ բառերի ճիշտ ձևերն ու իսկական իմաստը:

ԱՇ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ
(Պատմական գիտ. քեկնածու)

ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

(Թ Ե Զ Ե Ր)

1. Հեթանոսական հայկական գրականության, ավելի ճիշտ՝ նախամեսրոպյան հայկական գրականության հարցը—հայ ժողովրդի պատմության կարևոր և ակտուալ հարցերից մեկն է: Դա, ըստ էության, հեթանոսական շրջանի հայկական գրավոր կուլտուրայի գոյություն-չգոյություն և 5-րդ դարի մի շարք հայ մատենագրերի ու թարգմանությունների հարադատության-անհարադատության հարցն է: Եթե նախամեսրոպյան շրջանում չի եղել հայերեն գրականություն, ապա ուրեմն՝ հեթանոսական Հայաստանում չի եղել և հայկական գրավոր կուլտուրա: Այն բանասերների կարծիքը, որ հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել բանահյուսություն, իսկ բանահյուսությունը՝ գրականություն է, չի կարելի ընդունել: Այն, ինչ դեռ գրի չի առնված, նա գրականություն համարվել չի կարող:

Նախամեսրոպյան հայ գրականության հարցի լուսաբանումը կարևոր է և այն տեսակետից, որ հայ մատենագրության կուրս կազմելու կապակցությամբ հայագիտության առաջնահարգ հարցերից մեկն է պարզել Մաշտոցի տեղն ու դերը հայ գրի ու գրականության պատմության մեջ: Սակայն այդ հարցը հնարավոր է պարզել այն ժամանակ, երբ կպարզաբանվի նախամեսրոպյան հայ գրի ու գրականության առեղծվածը: Վերջինիս ճիշտ լուծումից է կախված նաև Մեսրոպի դերի ճիշտ գնահատականն ընդհանրապես հայ գրականության պատմության մեջ:

2. Նախամեսրոպյան հայ գրականության հարցում հայ ժողովրդի պատմությանը և գրականությանը վերաբերող մի շարք աշ-

խատություններում դերիչխող է հանդիսացել հետևյալ տրագիցիոն տեսակետը.— հայերը, ինչպես և նրա հարևան վրացի և աղվան ժողովուրդները, մինչև 5-րդ դարը չեն ունեցել իրենց սեփական գիրն ու գրականությունը: Մինչև այդ շրջանը գրել են հունարեն, ասորերեն կամ պահլավ-պարսկերեն: 5-րդ դարի առաջին տասնամյակում Մաշտոցը հայոց Վառժապուհ թագավորի հովանությամբ և Սահակ Պարթևի օգնությամբ ձեռնամուխ է եղել հայերեն գրի ստեղծմանը և իրականացրել է այն: Այնուհետև Մաշտոցն անցել է Վրաստան—վրաց գիրն է ստեղծել, անցել է Աղվանից աշխարհը—աղվանից գիրն է ստեղծել և այսպես սկիզբ դրել Անդրկովկասի ժողովուրդների գրին ու գրականությանը:

3. Մեսրոպյան գրերից առաջ հայերեն նշանագիր գոյություն ունենալու մասին մենք հիշատակություն ունենք դեռ ևս Շիրակացու¹⁾, իսկ հետագայում նաև Ասողիկի մոտ: Սակայն առաջին հայ հեղինակը, որ դուրս է եկել տրագիցիոն տեսակետի դեմ—13-րդ դարի պատմիչ Վարդան Մեծն է: Նա, հակառակ իր ժամանակ ընդհանրություն գտած վերև հիշված տեսակետի, պնդում է, որ հայերը նախաքրիստոնեական շրջանում ունեցել են իրենց սեփական գիրն ու գրականությունը: Նա թվում է մինչև անգամ հստակ գործածված գրերի թիվը, որոնք պահվելիս են եղել Դանիելի մոտ:

«...գալբութիւն հայերէն քսան և երկու գիր առ Դանիելի Ասորւոյ գտեալ ի հին

¹⁾ Հմմտ. «Անանուն ժամանակագրութիւն, խրմբագր. յօրինեալ յէ դարու», Վենետիկ 1904, էջ 57:

ժամանակաց, որ փասն ոչ պարզելոյ զընդար-
ձակութիւն լեզուիս՝ անհոգացեալ եղև յա-
ռաջնոցն...»¹⁾ Որպես փաստական ապացոյց
նա հիշում է Լևոն թագաւորի ժամանակ Կիլի-
կիայում գանձած հեթանոս հայ թագաւոր-
ների գրամների փաստը. «Եւ զի լեալ է հայե-
րէն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամանակս
Լևոնի արքայի, զի գտաւ գրամ ի Կիլիկիայ,
հայերէն գրով գրոշմեալ զանուն Կապաշտ
թագաւորացն Հայկազանց»²⁾:

Տրադիցիոն տեսակետի դեմ է արտա-
հայտվել առաջին անգամ բանասեր Ղ.
Ինճիճյանը: Նա, բազմաթիվ մեջբերում-
ներ անելով սկզբնաղբյուրներից հօգուտ
Նախամեսրոպյան հայ գրի ու գրակա-
նության գոյության, համոզված պնդում
է, որ Դանիելի մոտ եղած գրերը—հին
հայկական գրերն էին և նրանք էին, որ
Մեսրոպի այբուբենի հիմքը կազմեցին.
«Եւ այսպէս, ըստ մերոց նախայիշեալ
պատմագրաց—ամփոփում է նա իր բերած
պատմական փաստերը—հայկական գիրք
էին, որք գտան առ Դանիէլի, և Դանիէլեան
նշանագիրք էին, զորս լրացոյց Մեսրոպ»³⁾:

Նախամեսրոպյան հայ գրերի գոյության
հարցը վճռականորեն դրել է Մ. Էմինը:
Նա գտնում է, որ Դանիելյան գրերը Հա-
յաստանում գործածական գրեր էին և նը-
րանց դուրս մղեցին հունարեն, ղենդերեն և
ասորերեն գրերը՝ զուտ քաղաքական նը-
պատակով⁴⁾:

Պրոֆ. Բ. Պատկանեանը Մաշտոցին
համարում է հայկական այբուբենի ոչ թե
ստեղծողը, այլ կատարելագործողը. «...
ճիշտ է այն կարծիքը-գրում է նա,—որի
համեմատ Մեսրոպը ոչ թե գտավ հայոց
այբուբենը, այլ արդեն եղած, բայց ընդ-
հանուրից շօղտագործված Դանիելյան հայ-
կական այբուբենը կատարելագործեց»⁵⁾:

Նման վճռական եզրակացութունների
են հանգել նաև Եվրոպացի մի շարք հայագետ

գիտնականներ (Հյուբշմանը, Պետերմանը,
ակագ. Բրոսսեն և ուրիշները): Այսպես, Պե-
տերմանը նախամեսրոպյան նշանագրերի մա-
սին հետևյալն է գրում. «Հայոց տառերի
գյուտը վերագրում են Մեսրոպին, սակայն
ուսումնասիրությունները ցույց են տալիս,
որ նա ոչ թե ամբողջ այբուբենն է գրել
կամ կազմել, այլ մի հին, վաղուց մոռաց-
ված այբուբենն է վերականգնել, կատարելա-
գործել և տարածել ամբողջ երկրում»:

Ակադեմիկ Բրոսսեն լիովին հավատում
է մատենագրական այն տեղեկությանը,
թե Մաշտոցն օգտագործել է 22 տառ
Դանիելից և պնդում է, որ «Հայոց հին
այբուբենը բաղկացած էր 22 տառից, որի
վրա Մեսրոպը ավելացրեց 14 տառ, այդ-
պիսով կազմեց նոր այբուբենը ըստ հու-
նական շարահարության»⁶⁾:

Նախամեսրոպյան գրի գոյության օգտին
են արտահայտվել Լևոն և Գարագաշյանը:
Վերջինս իր «Քննական պատմութիւն Հայոց»
աշխատության մեջ գրում է. «...չէ ճիշտ
այն, որ ընդհանրապես կկարծուի, թէ Հայք
յառաջ քան զՄեսրոպ չունէին նշանագիր,
ուստի էին անմասն դպրութենէ»⁷⁾:

Նախամեսրոպյան գրի հարցը համոզված
դրել է Ի. Հարությունյանն իր «Հայոց
գիրը» աշխատության մեջ, որը 1888 թ.
արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցա-
նակաբաշխության ամբողջ մրցանակին:
Նա պնդում է, որ հայերն ունեին բնիկ
հայ գիր և այդ գիրը «ամուր կերպով շղ-
թայված էր կապաշտության հետ»: Հույն
և ասորի կրոնավորները՝ գալով Հայաստան,
հալածեցին այն՝ ներմուծելով հունական
և ասորական գիրը: Բայց օտար քարոզիչ-
ները չբավականանալով սրանով՝ սկսեցին
ջնջել նաև հայերեն լեզուն: Հայերը տես-
նելով իրենց կորստարեք վիճակը՝ մտածե-
ցին դուրս գալ այս գրությունից և հնա-
րեցին այն գիրը, որի հեղինակն է համար-
վում Մաշտոցը⁸⁾:

Եվ, վերջապես, հոգուտ նախամեսրոպ-
յան հայ գրականության գոյության է

1) Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական,
էջ 50:
2) Նույնը, էջ 50:
3) Ղ. Ինճիճյան, Հնախոսություն, III հատոր,
էջ 76:
4) М. Эмин, Исследования, Москва 1896 г.
стр. 207, 211, 221.
5) Проф. Патканов, История Каганкатваци,
Примечания, стр. 346.

6) Brosset, Deux Historiens Armeniens Kirakos de
Ganzac, 13-րդ ծանոթագրություն:
7) Ա. Մ. Գարագաշյան, Քնն. պատմ. Հայոց, դ, էջ 39.
8) Ի. Հարությունեան, Հայոց գիրը, Թբիլիսի 1892,
էջ 153-157:

արտահայտվել հայագիտության մեջ մեծ հեղինակություն վայելող գիտնականներից մեկը — ակադեմիկ. Ն. Յ. Մառը: Նա իր նշանավոր «Արմ» տշխատության առաջաբանում հետևյալն է գրում. «Ողջ կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել գեղեսուստրաբարեկական քաղաքակրթության էպոխայում: Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ունեւր մեր թվագրությունից գեղեսուս մի քանի դար առաջ»¹):

4. Նախամեսրոպյան հայկական գրականության ուսումնասիրության հարցում, նրա գոյության գեւ արտահայտվող ուսումնասիրողներին մոտ, նկատվում է պատմական փաստերի մեկնաբանման հետևյալ շփոթն ու սխալ մոտեցումը:

ա) Հարցի որոշումն ոչ թե գիտական մի շարք իրացիայինաներով ամբողջությամբ առած, այլ պատմիչների հաղորդած տեղեկություններով: Այդ ուսումնասիրողները երկրորդական արժեք են տալիս լեզվական, պալեոգրաֆիկ և աղբյուրագիտական այլ գիացիայինաների տվյալներին, որոնք վերջին հաշվով օգնում են հիմնական հարցը լուծելուն:

բ) Անքննադատ մոտեցում գեւլի հայերեն սկզբնաղբյուրները. — եթե կորյունի կամ Ղաղարի տաղաիր տեքստում այսպես է ասված, ուրեմն պատմական իրողությունն այլ կերպ լինել չի կարող: Նրանք մոռանում են, որ հեթանոսական կուլտուրան աշխատել են շուռ տված երեսով ներկայացնել հենց իրենք, հնագույն քրիստոնյա պատմիչները, որոնց թվում և հայ պատմիչները: Նրանք ճիշտ չեն հասկանում պատմիչների տեղեկնցը, որոնք ամեն կերպ աշխատում են ցույց տալ, որ Հայաստանի հեթանոսական շրջանը գուռ բարբարոսական մի շրջան է:

գ) Շփոթել են իրար հետ հայկական գիր ու հայկական գրականություն հասկա-

ցողությունները՝ հարցի հիմնական առանցքը դարձնելով Դանիելյան գրերը: Հարցի նման գրվածքն ընդհանրապես ճիշտ չէ, որովհետև մի ժողովուրդ կարող է զարգացած գրականություն ստեղծել անկախ նրանից, թե այդ ժողովուրդը գիր ունի թե ոչ: Փաստ է, որ Արևելքում մի շարք ժողովուրդներ ստեղծեցին իրենց գիրն ու գրականությունն արարեբենով: Ինչ վերաբերվում է Դանիելյան գրի գոյություն ունենալ-չունենալու հարցին, ապա նրա գրական կամ բացասական լուծումը չի կարող հայկական հեթանոսական գրականության գոյության հարցի որոշիչը լինել, որովհետև հայկական գրականությունը կարող էր գրվել և զարգանալ նաև այլ նշանագրերով:

5. Նպատակ չունենալով հայ գրի ու գրականության հարցում սկզբնաղբյուրներում նկատվող անախրոնիզմների վրա կանգ առնել, բայց ցույց տալու համար՝ թե ուրքան անհրաժեշտ է նրանց ուշադիր օգտագործումը, մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել միայն մի փաստի վրա — հայկական գրերի ատաղձի վրա:

Սկզբնաղբյուրները գրերի «գյուտը» ներկայացնում են այն ձևով, որ իբր նրանում մասնակցություն են ունեցել չորս ձևոք. ա) Դանիելը, որն իր մոտ եղած գրերն ուղարկել է Վաւաշապուհին, որով և երկուտարի աշակերտներ են սովորեցրել, բ) Մաշտոցը, որը հիմնական ստեղծողն է հանդիսացել, գ) Հռովանոսը, որը ձևավորել է գրերը Մամոսատում և դ) հրաշքը, որի մասին պատմում է Խորենացին. «Եւ տեսանէ (Մեսրոպ) ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աշաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն...» (Խոր. Պատմ. էջ 327):

Մի կողմ թողնելով աստվածային թաթի օգնությամբ գրվելու առասպելը, հայկական նշանագրերի պալեոգրաֆիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ թե երեք անձնավորություն գրել ու լրացրել են հայերեն այբուբենը, այլ մեկն ուղղակի գրել է իր առջև հունարեն այբուբենը, հայ-

¹ Н. Я. Марр, Арм, 1934, стр. 5.

Ն. Յ. Մառի այս կարծիքը սմանք հասկանում են այն ձևով, որ իբր այստեղ խոսքը «էծագրեր»-ին է վերաբերում (!): Այդպիսի սնդոււմը, մեր կարծիքով, սուսերեն տեքստը ճիշտ չհասկանալու պատճառով է: Այստեղ խոսքը՝ շատ պարզ «մայրենի լեզվի» մասին է: Ի միջի այլոց, նույն կարծիքը Մառը հայտնել է նաև իր Գրաբարի քերականության առաջաբանում:

կական տառերը ձևի նրա վրա՝ և աստ- | կազմել է հայկական այբուբենը: Ահա հա-
րերենից վերցնելով լրացուցիչ երեք տառ, | մեծատական աղյուսակը:—

Հունարեն 5-րդ դարի
տառերն՝ այբուբենական
կարգով

Հայերեն
հնագույն
երկաթագիրը

Α	Alpha	Ա	այբ (կարել է ներքևից)
Β	Beta	Բ	բեն (կարել է աջի վերևից փոքրիկ գիծ)
Γ	Gamma	Գ	գիմ (կլոր օղ է ավելացրել)
Δ	Delta	Դ	դա (հետևել է «Գ»-ի օրինակին)
Ε	Epsilon	Ե	եչ (խոր ընկած մասը բաց է արել)
Ζ	Zeta	Զ	զա (վերևից միացրել է գծիկով)
Η(Ἡ)	Eta	Է	է (վերցրել է տառի առաջին կեսը)
Η(Ἠ)	—	Ը	ըթ (վերցրել է «է»-ի կեսը)
Θ	Theta	Թ	թա (զրեթե նույնությամբ)
Θ	—	Ժ	ժե («թ»-ի երկրորդ թևն է վերցրել)
Ι	Jota	Ի	ինի (ավելացրել է փոքրիկ ելուն)
<div style="display: flex; align-items: center;"> <div style="font-size: 2em; margin-right: 5px;">}</div> <div style="font-size: 2em; margin-right: 5px;">Λ</div> <div style="font-size: 2em; margin-right: 5px;">Σ</div> <div style="font-size: 2em; margin-right: 5px;">Ϛ</div> </div>	ստուսսսսս ստուսսսսս	Լ	լյուն (ասորական «լ»-ն շուռ է ավել)
		Խ	խե (ասորական «խ» օտար վրա է դրել)
		Ծ	ծա (զրեթե նույնությամբ)
Κ(Κ)	Kappa	Կ	կեն (վերցրել է մի մասը ձախից և աջից, թեք ձևով)
Κ(Ϛ)	—	Ը	հո (2-րդ կեսն է վերցրել)
Κ(ϛ)	—	Ղ	ձա (2-ի վերի կողմը ձևել է ձախ)
Λ	Lambda	Լ	լաստ (պոչ է կպցրել)
Λ	—	Ը	ճե (ներքևից միացրել է)
Μ	Mi	Մ	մեն (առաջին գիծը վերջինի մի մասը կարել է)
Μ	—	Յ	յի (նստեցրել է)
Ν	Ni	Ն	նու (նստեցրել է)
Ξ	Ksi	Ճ	չա (զրեթե նույնությամբ)
Ο	Omicron	Օ	օ (ներքևից կարել է)
Ο	—	Չ	չա (ներքևից թեք գիծ է ավելացրել)
Π	Pi	Պ	պե (զրեթե նույնությամբ)
Ρ	(90-ր նշանգիր) Rho	Ջ	ջե (ներքևից թեք գծով է միացրել)
Ρ	Rho	Ռ	ռա (կրկնակի ր + լր)
Σ	sigme	Ս	սե (նստեցրել է)
Υ	(90-ր նշանը)	Վ	վե (քիչ փոփոխությամբ)
Υ	Tau	Տ	տյուն (վերևի ձախ ելունը ջնջել է)
Ρ		Ր	րե (քիչ փոփոխությամբ)
Ω		Յ	ցո (նստեցրել է)
Υ	Upsilon	Ի	վյուն (քիչ փոփոխությունով)
Φ	Phi	Փ	փիւր (քիչ փոփոխությունով)
Χ	Chi	Ք	քե (քիչ փոփոխությունով)

Համեմատութեանից պարզ երեւում է, որ հայերեն այբուբենը ձևած է հունարենի վրա: Ըստ որում, հունարենի վրա հայերեն տառերը ձևող հեղինակն ամուր սկզբունք է ունեցել ոչ մի տառ չվերցնել նույնութեամբ: Չի խախտել նա հունարենի այբուբենական կարգը: Միայն այն նոր տառերը, որոնք մտցվում են հայերեն լեզվի առանձնահատկութեան հիման վրա՝ դրել է ընդօրինակած տառի մոտ:

Բոլորովին անհիմն է այն աղբյուրագետների կարծիքը, որոնք ժխտում են հայերեն այբուբենի հունարենի հիման վրա ձևած լինելու փաստը:

Պոլիգրաֆիկ այս փոքրիկ աղացույցը բավական է ասելու համար, որ չի կարելի տառացի հասկանալ պատմիչների տեղեկութեանները: Անհրաժեշտ է ավելի լայն մտանալ խնդրին և քննել այն:

6. Հայկական մատենագրութեան և հայկական գրերի հետ սերտ կապված հարց է «Նշանագիր իմաստնոց»-ի հարցը: Հայկական պատմագիտական բովանդակութեան ունեցող ձեռագրերում, հատկապես բառարանային և քերականական բովանդակութեան ունեցող ձեռագրերում, ինչպես հայտնի է, հաճախ պատահում են սղաղբութեան ամբողջ ցուցակներ, որոնք խնամքով կաղմած ու շարադրված են ըստ հայկական այբուբենի: Նրանք կոչվում են սովորաբար «Նշանագիր իմաստնոց»:

Այսպիսի նշանագրեր են պարունակում ՀՅՍԽ Մատենադարանի մի շարք ձեռագրեր՝ № 342 (373), թերթ 105բ, № 2618, թերթ 253ա—255բ, № 750, էջ 128, № 487, թերթ 166բ, № 123, թերթ 432, № 266, թերթ 93ա, № 2331, թերթ 78բ, 2381, թերթ 85ա և այլն¹:

«Նշանագիր իմաստնոց»-ի նշանագրերի հիմնական մասը գաղափարագրեր են (հիերոգլիֆներ): Այդ գաղափարագրերի մի մասը համապատասխանում են իրենց նկարին: Այդ նշանագրերից կարելի է բերել մի քանի օրինակներ:—

	աթոռ		սիրտ
	լուսին		բանական
	միջնորդ		գարուն
	կղզի		բուրաստան
	թագավոր		արուստ
	խաչ		անավոր
	հրեշտակ		աշտանակ
	կշեռք		արծաթասեր
	աղբյուր		ձմեռ
	աստիճան		ձուկ
	լեզու		ճակատ
	կեղեցի		ճանապարհ
	տապանակ		մատանի
	տես		մարդ
	փառասեր		մեղր
	քաղաք		հափշտակիչ
	վիշապ		հեթանոս
	սպասաւոր		կուսպաշտ
	սեղան		կեղծավոր
	սահման		երաժշտութ.
	կոնք		զինի
	նշխար		զավազան
	շուշան		
	պատվանդան		
	պտուղ		
	սեր		

¹ «Նշանագիր իմաստնոց»-ի որոշ ցուցակներ արդեն հրատարակված են Եգյանի և Ուրբեղյանի կողմից (տես Signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens; Congrès intern. des Orientalistes, 1873, էջ 456, Մրուսնձտեան թորոս աղբարի առաջին հատորում (աղ. 1879, էջ 337—340): Համեմատաբար, լիակատար հրատ. Տրդատ Վ. Պալյանը «Նշանագիրը հայոց» վերնագրով, Վիեննա 1898 թ., էջ 13—18., Իսահակ Վ. Սրապյանը «Հանդէս Ամսօրեայ»-ում (1902 թ., էջ 201—202), Ֆրեյտերից Մուրաթը «Հանդէս ամսօրեայ»-ում (1903, էջ 144—146, 333—339): Ամենից լրիվ ցուցակը հրատարակել է պրոֆ. Ն. Աճառյանը «Հանդէս ամսօրեայ»-ում:

✱ ասող

Ⓢ առափուս

}} ապստամբ

«Նշանագիր իմաստնոց»-ում կան այն-
պիսի նշանագրեր, որոնք փաստորեն հայե-
րեն ավյալ բառի համառոտագրություն-
ներն են հանդիսանում: Այդ բառերի մեծ
մասը համառոտվում է բառի որոշ տառե-
րում:

Ղ շրտ—աշակերտ

Ճ աք—տոաջք

Կ աքլ—տոաքել

ԿԻ եկի—եկեղեցի

Ժ ժգ—ժառանգ

Ճ ճ—ճառագայթ

Ս մմ—միուսանդամ

Ք քք—Քերովրե

Օ օձ—օձ

Օ օհ—օրհնել

Տ հյ—հայրապետ

Բանասիրության մեջ այն կարծիքն է
զերիշխել, որ «Նշանագիր իմաստնոց»-ի
հնությունը XIV դարից առաջ է:

ՀՍՍՌ Պետ. Մատերագրարանի մի ունի-
կում ձեռագիր (№ 2317), որը պահել է
«Նշանագիր իմաստնոցը», հիմք է տալիս
հակառակ ենթադրություն անելու: Պարզ-
վում է, որ «Նշանագիր իմաստնոց»-ը շատ
հնուց է գալիս: Մեր վերև հիշված ձե-
ռագիրն ընդօրինակված է 1357 թ. Խրիմի
Սուրխաթ քաղաքում: Նա ունի հետևյալ հի-
շատակարանը.

«...Աստանաւը յանդ ելեալ կատարեցաւ
տառս այս իմաստադատում, որ կոչի քերա-

կան. արարեալ և մեկնեալ զսա մեծ վար-
դապետին Հայոց Վարդանայ Կիզիկեցոյ՝
ի խնդրոյ բարեպաշտ թագաւորին Հեթմոյ:
Նաև խրատք Գէորգեայ վարդապետի և ան-
հաս գրչին Առիստակիսի մեծ հետորի ի
թուխ Հայոց ՊՁ, ձեռամբ Ստեփաննոսի
մեղապարտի և յետին գրչի, ի խնդրոյ
սրբամաքուր և ընթերցասէր քահանային
Կարապետին ի վայելումն անձին իւրոյ և
յիշատակ հոգւոյ իւրոյ: Վասն զի սա է քա-
նոն և զազափար ամենայն արհեստից, ևս
տառակել որք փութան ձեռնարկել արհեստ
գրչութեան: Զի որպէս անհնար է թռչնոց
ի լուծ լծել և ակաւս պատառել, և կամ եզանց
յաւդս վերանալ, նոյնպէս տառնց աշխատե-
լոյ ի սմա՝ ոչ օք կարէ հասու լինել ար-
ուեստին մեծի գրչութեան. և որ յանդնգնի
համարձակել՝ ոչ կարէ գրել զճշմարտան,
այլ եղծանէ զարուեստն, և ազաւազէ
զգրիչն ըստ անիմաստ խոհակերի, այսինքն
մաագործի, որ ոչ գիտէ զորոշումն յաւդուա-
ծին, այլ անհմտաբար հանէ զանդամ այն
միտս ի միւս անդամն, և զմիւսոյն ի միւս
և այլն:

Բայց են ոմանք, որ ծաղր առնեն զգիրս
դաս, որպէս և է մեր ազգիս հպարտութիւն
և բրտավզութիւն: Զի որպէս մարդարիտ ի
քիթս խողի և մանեակ ոտի ի պարանոց
իշոյ, այնպէս և սա ի ձեռն անիմաստ և
անմիտ առնն: Այլ որ արբի ի սիրոյ
սորին, նա միայն գիտէ զճաշակ քաղցրու-
թեան դորա: Բայց գրեցաւ սա յաշխարհիս
Հոնաց և ի երկիր Խրիմի ի հոյակապ և
հոշակաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ,
ընդ հովանեաւ սուրբ աստուածածնին, ի հայ-
րապետութեանն Հայոց տեառն Մխիթարայ,
և եպիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի
աւրհնեալ քահանայապետի ամենայն հիւ-
սիսական կողմանց...»:

Չեռագիրն ունի հետևյալ բովանդա-
կությունը:—

- 1ա—4բ «Մեկնութիւն բառից քերականին»:
- 5ա—5բ Վարդանի քերականության գլխա-
ցանկը:
- 6ա—70ա «Յաղագս մեկնութեան քերակա-
նին, զոր արարեալ է մեծ Վար-
դանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց
Հեթմոյ»:

70ա—71բ «Յառողանութիւնսն պատանիկս,
որ դախի»:

72ա—73բ «Մովսէսի թորենացոյ բան ի-
մաստութեան»:

73ա—75բ «Նշանագիր»:

77ա— միջև վերջ—«Վերլուծութիւնք բացե-
րևապէս բազմազան բանից և բառից
յոքնախումբ շարագրութեամբ արա-
բեալ զսա Արիստակէս գրչի ի խընդ-
րոյ բազմաց յարուեստս գրչութեան»:

Այս ձեռագրի «Նշանագիր իմաստնոցն»
ունի 319 նշանագիր: Նշանագրերը դասա-
վորված են անվանական կարգով: Ուշագրու-
թյան արժանի է, որ «Նշանագիր իմաստ-
նոց»-ի այս տեքստը շարագրված է թորե-
նացու «Բան իմաստութեան»-ից հետո,
որի տեքստը պարունակում է ընթերցանու-
թյան հին ձևեր, «այլ»-ը «այդ» ձևով, «մի-
ջոց եղև երկոցունց ոչ ըստ բնութեան, այլ
ըստ պատահման», «ոչ կատարել իմաստու-
թյամբ, այլ տրամախոհ որոշութեամբ,
«այդ սա է լույս...» և այլն): «Նշանագիր
իմաստնոց»-ի այս տեքստի Մովսէսին վե-
րագրվող քերականության օրգանական մաս
լինելու մասին դժվար է պնդել, բայց մի-
բան անկասկած է, որ Մտեփանոս գրչի «Նը-
շանագր»-ի այսպիսի կապակցութեամբ հան-
դես գալը, անկասկած, վկայում է նրա հնու-
թյան մասին:

Մեզ թվում է, որ «Նշանագիր իմաստ-
նոց»-ը հին հայկական գիր համարելը գի-
տական փաստերով չի հիմնավորվում, բայց
որպես սղագրութուն՝ այնքան հին է,
որքան հին է ինքը հայկական գրչու-
թյունը: Չէր կարող պատահել, որ Հոս-
մում և Բյուզանդիոնում կրթութեան ստա-
յած հայ աշակերտները նրանց օրինակով
չստեղծեին հայերեն սեփական սղագրու-
թյուն, մանավանդ եթե ի նկատի ունե-
նանք, որ հայ մատենագրերը ծանոթ են
սղագրութեան հետ: Այսպես, Փափստոս
Բյուզանդը՝ խոսելով Ներսեսի՝ Վաղես
կայսրին արած հանդիմանութեան մասին,
գրում է. «Եւ գրէին զայս սեմիարք նոսա-
րացի արքային, որք կայինն առաջի թա-
ղավորին» (Փաւստոս, Գ, Ե): Մեմփարք նո-
սարացը, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Ն.

Աճառյանը, դա στυλιεζα εν μικροῖς-ըն ste-
nographie (սղագրութեանն է):

7. Հայաստանի նախարանիկները, խալ-
դերը, ունեցել են իննց սեփական սեղագիր
գրութեանը, որոնցից մեզ հասել են բազ-
մաթիվ նմուշներ: Նորագույն ուսումնասի-
րութեանները ցույց են տալիս, որ հայերը
նչ թե եկվոր ժողովուրդ են, ինչպես նախ
է այդ հարցին լեզվաբանութեան հնդեվ-
րոպական դպրոցը, այլ տեղացիներ—կղբայ-
րակից ժողովուրդ վրացիներին աղվան-
ներին և կովկասյան մյուս ժողովուրդ-
ներին: Անդրկովկասի ժողովուրդները
հանդիսանում են խալդական կուլտուրայի և
գրականության օրինական ժառանգները:
Եթե ճիշտ է հարցի այսպիսի դրվածքը, եթե
Հայաստանի նախարանիկները գոյութեան
են ունեցել VI-VI-րդ դարերում նախ քան
մեր թվագրութեանը, ապա հայ ժողովուրդը
էթնիկապես կազմակերպվելուց հետո, զար-
գացման նոր և բարձր աստիճանում չէր
կարող չյուրացնել նախնիքների կուլտու-
րան և չզարգացնել այն: Նրանք, պարզ է,
չէին կորուստ մոս սու դար գրական-սեղագ-
րածական մի քափուր օրջան ապրել:

Նախամեսոպոլիտան շրջանում հայերեն
գրականութեան շրջանուղ ուսումնասիրող-
ներն աշխատում են անտեսել հայկական և
խալդական կուլտուրայի միջև գոյութեան
ունեցող սերտ կապը: Նրանք կրկնում են
նախկին տրագիցիոն տեսակետը՝ հայերի
գրսից եկած լինելու մասին և լուծյամբ
են անցնում խալդական կուլտուրայի՝ հա-
յերի կողմից յուրացվելու փաստի վրա-
յով:

8. 5-րդ դարից մեզ հասել է հայերեն
լեզվով օրիգինալ թարգմանական և մեկնու-
ղական հարուստ գրականութեան, որն իր
բերականական մեակված ձևերով, հարուստ
լեզվական և սեմանտիկայով գրա-
կանուրյան պատմության սկզբնական օրջանի
երկեր չեն կարող լինել: Այսպիսի երկեր
չի կարելի համարել նչ կորյունը և եզնիկը,
որոնք գրաբար լեզվի մաքրութեան տե-
սակետից բոլոր լեզվաբանների հիացմունքն
են շարժում, նչ աստվածաշնչի թարգմա-
նութեանը, որն իր ճշտութեան տեսակետից,
մյուս բոլոր թարգմանութեաններին շարժում

ամենալավագույններից մեկն է համարվում, և ոչ էլ 5-րդ դարի որևէ օրիգինալ կամ թարգմանական երկ: 5-րդ դարի երկերն իրենց ոճով և քերականական մշակված ձևով հերով ախճան են տարբերվում մյուս դարերում գրված երկերից, որ հնարավոր է իսկույն ճանաչել նրանց:

Եթե հայկական գրականության սկիզբը 5-րդ դարն է, ապա հնարավոր է՞ր՝

ա) որ 5-րդ դարի դանազան հայ հեղինակների աշխատությունները և թարգմանությունները միատեսակ քերականական մշակված ձև ունենային.

բ) որ տարբեր գավառների մարդիկ զրբին միևնույն բարբառով.

գ) որ թարգմանությունների ժամանակ հարկադրված չլինեին բնագրի լեզվից մեծ թվով տերմիններ փոխ առնել.

դ) որ թարգմաններն այդպիսի ճշտություններ.

և ե) որ օրիգինալ աշխատություններն սկսվեին այդպիսի բարձր թեմատիկայով:

Նախամեսոպոտամյան շրջանի հայ գրականությունը ժխտողները՝ խնդրի դժվարությունից զուրս գալու համար առաջ են քաշում իրենց «բանավոր գրականության» տեսությունը: Հայ ժողովուրդը, ասում են նրանք, ունեցել է իր բանավոր գրականությունը, որը նախապատրաստել է նման բարձր գրականության ծնունդը: Մեր կարծիքով՝ նախ, ճիշտ չէ «բանավոր գրականություն» հասկացողությունը, որովհետև մի բան, որ գրի առնված չէ, նա դեռ ևս գրականություն չէ, այլ բանահյուսություն. և ապա՝ այդպիսի բանահյուսություն իրենց գրականության պատմության արշալույսին ունեցել են զրեթե բոլոր ժողովուրդները: Այդ երևույթը սպեցիֆիկ չէ հայ ժողովրդի համար: Բոլոր ժողովուրդների գրականությունն սկսվում է զարգացման ցածր աստիճանից և ապա հետզհետե ընթանում դեպի վեր, ավելի բարձր: Հայ ժողովրդի մոտ ևս տեղի է ունեցել այս զարգացումը և 5-րդ դարից մեզ հասած նման զարգացած գրականության առկայությունը ենթադրում է իրեն նախորդող գրականության գոյությունը միայն:

9. Նախամեսոպոտամյան հայկական գրականությունը հարցի համար կարևոր նշանակություն ունի մեհենական կուլտուրայի հարցը: Մեհյանները մեզ մոտ բացի կրոնական կենտրոններ լինելուց հանդիսացել են արդյոք նաև կուլտուրայի և գրականության օջախներ: Ուսումնասիրողներից ոմանք, պետք է ասել, այս հարցի կողքովն են անցնում: Բայց սա կարևոր հարց է անցյալի կուլտուրան հասկանալու համար:

Հին Հայաստանի մեհենական կուլտուրայի գոյությունը մասին գրական և համոզեցուցիչ տեղեկություններ է հաղորդում մեզ թորենացին: Նա պատմում է Բարդաժան անունով մի պատմագրի մասին, որը Անտոնիոս վերջինի օրով (2-րդ դարում) գալիս է Հայաստանում քրիստոնեություն տարածելու, բայց այդ նրան չի հաջողվում. ճանապարհին նա մտնում է Գարանաղյաց գավառի Անի ամրոցը, որը հայ թագավորների Պանթեոնն էր, թարգմանում այնտեղ եղած մեհենական և թագավորական պատմության վերաբերող մի աշխատություն ասորերեն և իր հետ տանում: Հետագայում այդ աշխատությունն ասորերենից թարգմանվում է հունարեն և հունարենից օգտվում է թորենացին: Թորենացին այդ մասին գրում է. «Զրուցե՛ մեզ զայս Բարդաժան, որ յնդեսիայ: Գանդի նա յառուրս Անտոնինոսի վերջնոյ երևեցաւ պատմագրոգ... եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեան, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի յոյն բան: Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց... Յայսմ պատմութիւնէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութիւնէն Արտաւազդայ մինչև յարձանն Թոսրովու» (Թորենացի, էջ 201-202):

10. Ազաթանգեղոսի հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել ոչ միայն մեհենական գրականություն, այլ

և պաշտօնի է Տիր անուով մի աստված: Նրա մեհյանը գտնվելիս է կղել Վաղարշապատի մոտերքում, մոտավորապես, Զվարթնոցի տեղը: Այդ մեհյանի քանդումը՝ Տրդատի կողմից, Աղաթանգեղոսը նկարագրում է հետևյալ ձևով. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանգերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբազինսն Անահատական գիցն, և որ յՆրազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ գիտեալ ի ճանապարհի երազացոյց երազահան սաշատան Տրի դից, դարի գիտութեան բնաց, անուանեալ Իբւան գրչի Որմզդի, ուսնան նորաբարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին» (Աղաթանգեղոս, էջ 404): Մի ժողովուրդ, որ ունեցել է դպրութեան և արվեստի աստված, նա ունեցել է, անկասկած, և դպրութեան:

Նախամեսրոպյան հայերեն գրականութեանը չընդունող գիտնականները Ուրմզդի տալիս են իրանական ծագում և հայտարարում, որ դա իրանական աստված է:

Մեր կարծիքով, դա հարցի ճիշտ դրվածք չէ, որովհետև նախ՝ հարցական է՝ թե ո՞վ ումից է փոխ առել. քայց մի բոլոր ենթադրենք, որ դա անկասկած է, այնտեղից է փոխ առված. փոխ անողները դրա կարիքն ունեցել են: Բոլորովին երկրորդական հարց է թե դրանն ո՞վ է ստեղծել, եթե ավյալ վայրում հողագործութեամբ չգրադվին, նրանք դրանն էլ չէին բանեցնի: Եթե Հայաստանում դպրութեան շունենային՝ այդ աստծու կարիքն էլ չէին դրա, նրան դրսից չէին բերի:

Ի միջի այլոց, Որմզդի այդ դրիչ աստվածը զուցե և համապատասխան է ժողովրդի հիշողության մեջ պահված «Գրողին»։ — «Գրողն—ասում են—տանի քեզ», «Գրողն իր գափտարից քո անունը ջնջի», «Գրողը քո անունը չիքերի գափտարում դրի» և այլն: Ըստ երևույթին, Գրող աստրածու վրա նայվել է, որպես ծնվողներին ցուցակագրող և մահացողներին կըք անող աստրածու:

11. Հայաստանի մեհյաններում ժամապաշտութեան էին կատարում մեծ թվով քրմեր: Այս քրմերը տեղացիներ էին և,

անկասկած, խոսում էին հայերեն և ծիսակատարութեան էին կատարում հայերեն լեզվով: Նրանք պիտի որ ծիսակատարութեան մատյաններ ունենային և չէին կարող ամեն ինչ անգիր ձևով խմանալ:

12. Ուշագրութեան արժանի է, որ Կարակալա կայսեր (III դար) ժամանակակից Փիլիստրատոս անունով մի հույն հեղինակ իր «Վարք Ապոլլինիայ» աշխատութեան մեջ խոսելով Պամփյուլիայում բռնված հովազի մասին, վկայում է հայերեն գրութեան դպրութեան մասին: Անհրաժեշտ ենք համարում այդ հատվածը մեջ բերել՝ վերցնելով իս. Հարությունյանի թարգմանութեանից. «Ինչ որ մեր Տավրոսի մասին խոսում են — և որ երկար ժամանակ ոչ ոք չէր հաւատում — թե նա Հայաստանի սահմաններից էլ անցնում է, հաստատում են այն հովազները, որ ինչպես գիտեմ, բռնվում են համեմունքով առատ Պամփյուլիայում, որովհետև տեղ այս կենդանիները օրում են անուշ բուրմունք՝ ուստի դուրս են գալիս Հայաստանից և դիմում են այն կողմերը, որտեղից քամին բերում է այդ անուշ հոտը: Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի սակյա մանյակի վրա գրված էր նայերեն տառերով (ἐπέγραπτο Ἀρμενίος) հետևյալը. «Արշակ թագավոր Նյուսեայ աստծոյն» ... Արշակն այն ժամանակ հայոց թագավորն էր, և յուր բռնած հովազը, այդ կենդանու մեծութեան պատճառով նվերել էր Իրոնիսիոսին...» (Տես Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատութեանը, էջ 652 ձմ. C. L. Kayser, հատ. I, էջ 44):

Նախամեսրոպյան հայերեն գրութեանը ժխտող գիտնականները Փիլիստրատոսի այս տեղեկութեանը վրա կասկածում են, որովհետև նրանց կարծիքով «Արշակ անունով հայ թագավոր չի կղել» (!), իսկ մակագրութեանը, հավանական է, պահպանել են կղել: Այսպես, պրոֆ. Ն. Աճառյանը հետևյալն է գրում. «Արշակ՝ եթե իրօք պատմութիւնը ճշմարիտ է, ավելի պարթև թագավորի մ'անունն ըլլալու է, և այն մակագրութիւնն ալ տեղի պահպանելն քան թէ հայերէն» (Ն. Աճառյան, Հայոց գրերը: Տես «Հանդէս տնտեսի» 1911 թ., էջ 235):

Նման բացատրութիւն տվող գիտնականների պատճառաբանութիւնը, մեր կարծիքով, հիմնավոր չէ, որովհետեւ նախ՝ հիմք չունենք կասկածելու այս տեղեկութեան ճշտութեան վրա, և, ապա՝ ենթադրենք Փիլիստրատոսը շփոթել է և պահլավերենը հայերեն է կարծել, բայց այդ ավելի է հաստատում նրա ժամանակ հայերեն գրի դոյութիւնը: Նրա ժամանակ, ուրեմն, հայերեն գիրն ու գրականութիւնն այնքան պիտի հանրածանոթ փաստ եղած լիներ, որ պահլավերենն էլ շփոթելին հայերենի հետ:

13. Աղեքսանդր Մամեայ կայսեր ժամանակակից մի հուշն հեղինակ, Հիպոլիտ անունով, Մամեայի թագավորութեան 13-րդ տարում (մեր թվագր. 234-ին) գրել է մի ժամանակագրութիւն, ուր թվում է իր ժամանակի այն ժողովուրդներին, որոնք ունեն գայրութիւն: Գայրութիւն ունեցող ժողովուրդների շարքում, ի միջի այլոց, նա հիշում է նաև հայերին: Նա թվում է գայրութիւն ունեցող հետևյալ ժողովուրդներին՝ երբայցիներին, լատինացիներին (որոնց գիրը հռոմայցիներն են գործ ածում), սպանացիներին, հույներին, միդացիներին և հայերին: («Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματα εἰσιν: Ἰβήρες, Λατίνοι, ἄλλοι χρωῖται οἱ Ῥωμαῖοι, Σπάνιοι, Ἕλληγες, Μηδοί, Ἀρμένιοι»): Հիպոլիտի աշխատութեան մեջ եղած այս տեղեկութիւնը, այդ գրքի Հայաստանում չգտնելու պատճառով, մենք վերցրել ենք պրոֆ. Շանիճեյի և դոց. Արուստեյի „Новооткрытый алфавит кавказских албанцев“ (Hippolytus Werke 4 Bd. Die Chronik). աշխատութեանից: Հիպոլիտից, իր ժամանակագրութեան մեջ՝ օգտվել է Շիրակացին, ավելացնելով այս ժողովուրդների անունների վրա նաև աղվաններին. «Ի սոցանէ, (այսինքն իր թված ժողովուրդներից Ա.Ա.) որք գլխեն գայրութիւն՝ երբայցիք, լատինացիք, որով և հռոմք վարին, սպանացիք, յոյնք, մարք, Հայք, աղուանիք» (տես «Անանուն ժամանակագրութիւն VII դարու»):

Հիպոլիտի ժամանակագրութեան վավերականութեան մասին կասկած լինել չի կարող: Գտնված է հեղինակի կիսանդրին, որի վրա գրված նրա աշխատութիւնների ցու-

ցակաւմ հիշված է նաև «Ժամանակագրութիւն»-ը: Կասկած չի կարող լինել նաև «Ժամանակագրութեան» թվականի վերաբերյալ—նա գրված է 234-ին (մեր թվագրութեան): Եթե 3-րդ դարի հեղինակը մեղայտաբար տեղեկութիւն է տալիս հայկական գրի դոյութեան մասին, ապա ինչ հիմք ունենք մենք կասկածելու դրա վրա:

14. 7-րդ դարի հայ մատենագիր Թեոդորոս Քոթենավորը՝ Մայրազոմեցու դեմ գրած իր մի ճառում մեղադրում է նրան, որ նա և նրա հետևողները թշնամաբար են տրամադրված դեպի ավետարանի առաջին կամ հնագույն թարգմանութիւնը, որը կատարված է Լուսավորչի ձեռքով. «Արդ կա՞նք բանիցն յուզեալ՝ դարձեալ վիճարանին: Երանի և առաքելալ ավետարանական խոսքն պատմութիւնք անկարգն ի միմեանց գտան. յորոց զմին բնութեալ զովեցաւք, և զմիւսն հերքեալ արտաբնացաւք ի սրբում կոչարանէ: Քանզի բազմեղբայրն Գրիգոր առաքելաբարող նահատակն Քրիստոսի գամեմայն ավետարանական պիտաութիւնսն հառաքելաց՝ զոր ինչ յաղագս ասածոյ բանի տնօրինական կիրառութիւն պիտաւէր...» Ճառ «Երանելոյն Թէոդորոսի ընդդեմ Մայրազոմեացոյն» տես «Յովհ. Իմաստասիրի Աւանդույն...» (Տր. 3) Մատենագրութեանք»-ին կից 1833 թ. Վենետիկում հրատարակված ճառերը, էջ 154):

Կարող է կասկածել լինել Լուսավորչի ձեռքով կատարված թարգմանութեան փաստը, բայց որ Թէոդորոսի այս տեղեկութիւնը հիմք է տալիս կասկել V դարից առաջ կատարված ավետարանի հնագույն թարգմանութիւն, որը և վերագրվել է Լուսավորչին, — դրա մասին չի կարելի կասկածել:

15. 4-րդ դարից հայերեն մեղ հատել են երեք հեղինակների պատմութիւնները — Ագաթանգեղոսի, Փափասոսի և Զենոբ Գլակի: Իրանցից առաջինը, Ագաթանգեղոսը, իրեն համարում է Տրդատի քարտուղար, Փափասոսը՝ Ներսես կաթողիկոսի ժամանակակից հեղինակ է, իսկ Զենոբ Գլակը իրեն համարում է Լուսավորչին ժամանակակից մարդ և մասնակից հեթանոսութեան դեմ մղվող կռիվներին: Այդ հեղինակների աշ-

խառնութիւնները, հատկապէս Ազաթանգեղոսի և Ջենոր Գլակի աշխատութիւնները, ինչպէս պարզված է, խմբագրված են ուշ դարերում: Լուրջ ուսումնասիրողներից, սակայն, ոչ ոք չի համարել Ազաթանգեղոսի և Փափսաոսի աշխատութիւնները կեղծիք, — այդպիսի կասկած եղել է միայն Ջենոր Գլակի նկատմամբ: Փափսաոսին և Ազաթանգեղոսին՝ որպէս իրենց առաջ գոյութիւն ունեցող մատենագրեր, հիշում է Ղազար Փարպեցին: Բանասիրութեան մեջ չի հաստատվում նաև Ազաթանգեղոսի կամ Փափսաոսի հունարենից թարգմանված լինելը: Ազաթանգեղոս Մանը ցույց է տվել, որ հունարենն է թարգմանված հայերենից: Եթե IV դարում գրվել են այդպիսի լուրջ պատմական երկեր, ուրեմն եղել է և գրութիւն:

Նախամետրոպոլիտան հայ գրականութիւնը ժխտողներն աշխատում են շեշտ դնել այդ երկերի խմբագրված լինելու փաստի վրա: Բայց դա հարցի էութիւնը չի փոխում — մեզ հասածը խմբագրված է, բայց նախնականը գոյութիւն ունե՞ր, նրանք 4-րդ դարի հեղինակներ են, այդ է էականը:

16. Ղազար Փարպեցին՝ դատապարտելով եկեղեցիներում ասորերեն պաշտամունք կատարելը՝ Մետրոպոլիտանի ստեղծումից առաջ, խոսում է հայերեն գրի գոյութիւն ունենալու մասին. «...մանավանդ թէ զան ճեանագիրք հայերէն լեզուայս, (ընդգծումը մերն է) որ հնար է ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս արանց և կանանց առ հասարակ» (Ղազար Փարպեցի, էջ 14):

17. Նախամետրոպոլիտան հայ գրին ու գրականութեանը վիճակված չէր խաղաղ ճանապարհ ընթանալ: Նրա զարգացման համար ստեղծվում են աննպաստ քաղաքական պայմաններ: — Երբ որոշ հայ թագավորներ վասսալական կախվածութեան մեջ են ընկնում Հռոմից, հելլենական կուլտուրան սկսում է առանց արգելքի մուտք գործել հայ թագավորների արքունիքը և հայկական գիրն ու գրականութիւնն աշխատում է դուրս մղել այնտեղից: Հայ թագավորներից ոմանք հունարեն են կտրում իրենց դրամները (տես Sammlung Petrovicz, Arsaciden-Münzen, Wien S. 1904, 183-191, Tafel xxv): Հայ որոշ թագավորներ հունարեն են գրում իրենց

արձանագրութիւնները (Տրդատի հունարեն արձանագրութիւնը Բաշ-Աբարանում, Արմավիրի արձանագրութիւնը Սելևկյան շրջանից, Սերետոսի տեղեկութիւնը «...դրոշմեալ ի վերայ վիմի դամս և դաւուրս հինգ թագավորացն Հայոց և Պարթևաց յունարէն գպրութեամբ...» և այլն), բայց հայկական տեղական գիրն ու գրականութիւնը շարունակում է զարգանալ ժողովրդի մոտ և մեհյաններում:

Նախամետրոպոլիտան հայկական գրի ու գրականութեան գոյութիւնը ժխտողները՝ հայ որոշ թագավորների հունարենով գրված դրամներն ու արձանագրութիւնները փաստ դարձրած՝ պնդում են հայերեն գրի ու գրականութեան բացակայութիւնը: — Ինչ՞ուտում են նրանք, մեզ հասել են խալդական արձանագրութիւնները, իսկ հեթանոսական հայկական գրից ու գրականութիւնից մի օղ անգամ չի մնացել: Մենք ուզում ենք հարց տալ նրանց — ինչ՞ու մեզ չի հասել ավելի ուշ շրջանի V-VIII դ. թվական ունեցող հայերեն ոչ մի ձեռագիր, ինչ՞ու մեզ չի հասել ազվանական գրականութիւնից ոչ մի տող, որի սկիզբը V դարից է: Ամբողջ քաղաքներ են կորել պատմութեան մեջ և այժմ աշխատում են գտնել նրանց տեղերը, հարուստ կուլտուրայով ժողովուրդներ են դուրս եկել պատմութեան բեմից՝ առանց նյութական կուլտուրայի հետք թողնելու. ինչ իրավունք ունինք մենք այդքան խստապահանջ գտնվելու մեղանից 1500 տարի առաջ գործ ածվող գրութեան նկատմամբ: Բացի այս, նրանք մոռանում են, որ հայ թագավորների դրամները հունարեն են կտրվել, որովհետև նրանք շրջանառութեան մեջ էին գրվում Հայաստանից դուրս ևս: Իսկ մեհյանների վիճակը գրութիւնները մեծ մասամբ մեհյանների վրա պիտի լինեին, իսկ կանգուն մեհյանները մեզ չեն հասել:

18. Նախնական հայկական գրականութեանը սպանիչ հարված հասցրեց քրիստոնեութիւնը: Անհրաժեշտ է նշել, որ քրիստոնեութիւնը Հայաստանում տարածվեց ոչ թե խաղաղ ճանապարհով, այլ սրով և հրով: Տրդատը, ըստ պատմիչների հաղորդած տեղեկութիւնների, իր զորքի գլուխն անցած քանդում, ավերում էր հեթանոսական մեհ-

ժանները և նրանց տեղը քրիստոնեական վանքեր ու եկեղեցիներ շինում: Քանզում, ոչնչացնում էին ոչ միայն մեհյանները, այլ և նրանց ստեղծած ողջ կուլտուրան:

Քանզարար այս աշխատանքին հետևեց ասորական և հունական քրիստոնյա քարոզիչների մուտքը Հայաստան, որոնք իրենց հետ բերում էին ոչ միայն քրիստոնեությունը, այլ և իրենց լիզուն ու գրությունը:

Հեթանոսության դեմ կատաղի հալածանք սկսվեց հատկապես քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո:

Քրիստոնեության Հայաստանում տարածվելուն և ուժեղանալուն զուգընթաց, սկսեց ուժեղանալ հունական և ասորական ազդեցությունը: Այդ ազդեցությունը ժամանակի ընթացքում այնքան ուժեղացավ, որ սկսեց սպառնալ տեղական, ազգային կուլտուրայի գոյությունը: Այս ազդեցություն դեմ կռվելու

համար էր, որ անհրաժեշտ եղավ առաջ քաշել նորից սեփական զիր ունենալու հարցը և հնարավոր դարձավ անցյալի հարուստ գրականության վերականգնումը նոր տեսանկյունով: Այդ գործն իր ուսերի վրա վերցրեց Մաշտոցը: Մաշտոցի մեծությունը, մեր կարծիքով, ոչ թե նրանում է, որ նա հունարեն այբուբենի վրա ձևեց հայերեն նշանադրերը, այլ որ նա անցյալի գրականության հարուստ փորձի վրա հիմք դրեց մեր ներկա գրականությանը՝ կռվելով տեղական կուլտուրայի գոյությունն սպառնացող հունական և ասորական ազդեցությունների դեմ:

Համարձակ կարելի է սխդել, որ Հայաստանում, 5-րդ դարից շատ առաջ, գոյություն է ունեցել հայերեն գրականություն: Այդ գրականությունը մեհյանների ավերակների տակ թաղվեց:—Նա քրիստոնեության առաջին մեծ գոհերից մեկն է:

ՄԱՏԵՄԱԳՐԱԳԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ТУМАНЯН Т. Г.

О ТАБЛИЦЕ ПОЛИГОНАЛЬНЫХ ЧИСЕЛ А. ШИРАКАЦИ

Анания Ширакаци (или А. Ширакский) жил в VII в. нашей эры. Деятели древней Армении часто назывались по имени той области или местности, в которой они родились и жили. А. Ширакаци родился в области Ширак. Не удовлетворившись теми весьма скудными сведениями, которые дала ему церковная школа, А. Ширакаци жаждет получить глубокое образование, познать науку и особенности математику, которая по его мнению, является матерью всех наук¹⁾. Не найдя в Армении подготовленного учителя и необходимых математических произведений, А. Ширакаци отправляется в Византию и после долгих поисков находит в Трапезунде высоко-образованного учителя в лице греческого ученого Тюхика. По свидетельству А. Ширакаци Тюхик учился в Афинах, много путешествовал и имел все без исключения сочинения по истории, философии, математике, искусству и медицине.

В течение 8-ми лет А. Ширакаци учился у Тюхика. Благодаря своим способностям, громадной энергии и настойчивости, он достиг своей цели и полу-

чил глубокие знания в области математики. В 668 году²⁾ А. Ширакаци возвратился на родину в Армению и открыл там свою школу. В своей автобиографии²⁾ он пишет:

«И я, ничтожный из Армении, изучил у него это могучее искусство, достойное царей и перенес его в нашу страну».

Из работ древних армянских авторов известно, что А. Ширакаци написал много ценных трудов по математике, астрономии, философии, грамматике и риторике, но подлинные рукописи его не дошли до нас, а сохранились большей частью лишь отрывки его произведений в рукописных сборниках позднейших переписчиков, притом с искажениями и пробелами в некоторых из них. Все же и по имеющимся произведениям можем заключить, что А. Ширакаци был выдающимся, всесторонним ученым своего времени, носителем и проводником в Армении богатейшей эллинской культуры. Его высказывания порою шли в раз-

1) Проф. Патканян К.—«Из оставшихся произведений А. Ширакаци», С. Петербург, 1877 г., стр. 3 (на армянском языке).

2) Рукопись № 4066 (1283 года) стр. 10 (6). Ереван, Государственное Хранилище древних рукописей (Матенадаран) при Совпаркоме Армянской ССР.

3) Проф. Патканян К.—«Из оставшихся произведений А. Ширакаци», С. Петербург, 1877., стр. 8 (на армянском языке).

рез с господствовавшими в то время религиозными догмами, вследствие чего церковники игнорировали его труды и подвергали преследованиям автора. В историю Армении А. Ширакаци вошел, главным образом, как крупный математик древнего времени.

Из трудов А. Ширакаци математического характера изданы на армянском языке «Меры и весы», «Вопросы и решения», «Учебник арифметики» и «Задачи-развлечения».

Не опубликованы еще в Советском Союзе отрывок перевода А. Ширакаци «Начал» Евклида¹⁾ и таблица полигональных чисел²⁾.

Академик И. А. Орбели в 1918 г. перевел на русский язык и издал «Вопросы и решения» с историко-географическими пояснениями.

Есть полное основание полагать, что указанными произведениями не исчерпывается список математических трудов А. Ширакаци ибо среди десятков тысяч древних рукописей, разбросанных в ряде библиотек (в Ереване, Венеции, Вене, Иерусалиме и др.) многие рукописи еще недостаточно изучены и в особенности те, которые содержат математический материал. Так, например, лишь в 1939 г. в Государственном Хранилище древних рукописей при Совнарком Армянской ССР (Матенадаран) был выявлен «Учебник арифметики» А. Ширакаци³⁾.

Вопрос о том, на каком уровне вообще находилась математика в древней Армении до А. Ширакаци и какова математическая значимость каждого из его произведений, не имел до сих пор освещения в печати и должен быть предметом специального исследования на основе изучения рукописей, содержащих математические работы и отдель-

¹⁾ Рукопись № 4166 (XIII века) стр. 208 (а)—209 (а), Ереван, древних рукописей Армянской ССР.

²⁾ Рукопись № 1770 (1589.) стр. 386 (а) Ереван, Гос. Хран. др. рукоп. (Матенадаран)

³⁾ «Учебник арифметики» опубликован научным сотрудником Матенадарана Абрамяном А. в XI томе (за 1939 г.) «Научных трудов Ереванского Госуниверситета».

ные материалы. Интересуясь этим вопросом, я имел возможность изучать в рукописях математические труды А. Ширакаци.

Предметом настоящей статьи является его таблица полигональных чисел. Прежде чем перейти к рассмотрению этой таблицы, нелишне вкратце остановиться на способе числового обозначения у древних армян.

В древней Армении, как и в Греции в качестве числовых знаков употребляли буквы алфавита. Для отличия числовых букв от обыкновенных над последними проводили горизонтальную черточку или же до и после буквенного обозначения числа ставили точку. Числа писались аддитивным методом, слева направо, начиная с большего. Число 10000 называлось «бюр»-ом. Знак, поставленный сверху буквы с правой стороны указывал, что число, обозначенное буквой нужно увеличить в 10000 раз, то есть взять соответствующее число «бюр»-ов. Этот знак впервые ввел в употребление А. Ширакаци и таким образом значительно облегчил обозначение крупных чисел. Иногда число «бюр»-ов отделялось от единиц следующих низших порядков двумя акцентами, поставленными сверху буквы с правой стороны⁴⁾.

Ниже приводится таблица, содержащая буквы армянского алфавита с указанием их числовых значений.

	1	2	3	4	5	6	7	8	9
Единицы . . .	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
Десятки . . .	ժ	Խ	՛	Խ	Ծ	Կ	Ղ	Ճ	Մ
Сотни	ճ	Ծ	Յ	Ծ	Շ	Ո	Չ	Պ	Ղ
Тысячи . . .	Ր	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ	Ք

⁴⁾ Рукопись № 699 (XIII в.), стр. 195 (а), Ереван, Государственное Хранилище древних рукописей при Совнарком Армянской ССР.

Каждая буква таблицы содержит столько единиц указанного слева разряда, сколько показывает соответствующая цифра верхнего ряда; последняя буква алфавита обозначает 9000.

Например:

$\overline{U}r\eta$ или $\cdot ur\eta$ означает 2023

$\overset{\wedge}{\overset{\wedge}{\eta}}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}$ или $\overset{\wedge}{\overset{\wedge}{\eta}}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}$ означает 46701

В ряде рукописей сотни, тысячи, десятки тысяч и т. д. пишутся при помощи букв, служащих для обозначения единиц низшего порядка. Например:

$\overline{qa} = 4000$ вместо \overline{m} ; $\cdot p\eta\eta\delta = 8600$ вместо $\cdot \overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}$; $\cdot \overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta} = 203602$ вместо $\overset{\wedge}{\overset{\wedge}{\eta}}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}$, то есть пишется 203000 посредством трех букв (200, 3, 1000) вместо одной буквы с помощью знака «бюр»-а и буквы, означающей прямо 3000, а 600 обозначается двумя буквами — 6 и 100 — вместо одной буквы, означающей 600.

В древней Армении не имели никаких знаков для обозначения арифметических действий¹⁾. Два слагаемых и сумма писались рядом без всяких знаков, так же и в действии умножения. При вычитании сначала писалось вычитаемое, а затем рядом писались уменьшаемые и разность.

В древних армянских рукописях встречаются лишь дроби с числителем, равным единице. Такие дроби обозначались посредством знаменателя с приставкой к нему сверху с левой стороны знака, похожего на знак «бюр»-а. Нередко над знаменателем с левой стороны ставилась вертикальная черточка. Дробь $\frac{1}{2}$ обозначалась через 0 или с.²⁾

Например:

$$\overset{\wedge}{\eta} = \frac{1}{6}; \overset{\wedge}{\overset{\wedge}{\eta}} = \frac{1}{48}; \overline{r\eta}c = 23\frac{1}{2}; \overline{\overset{\wedge}{\eta}}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta} = 10\frac{1}{3}\frac{1}{5}\frac{1}{10} \left(= 10\frac{19}{30} \right) \text{ или } \overline{\overset{\wedge}{\eta}}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta}\overset{\wedge}{\eta} = 10\frac{1}{3}\frac{1}{5}\frac{1}{10}$$

¹⁾ Рукопись № 1770 (1589 г.) стр. 387 (а)—391 (б) и другие рукописи, Ереван Гос. Хран. древних рукописей (Матенадаран).

²⁾ Для дроби $\frac{1}{2}$ греки имели знак, похожий на L, на с, а также на S (см. Г. Фаццари „Краткая история математики“, стр. 26, Москва 1923 г.

Таблица полигональных чисел А. Ширакаци взята из рукописи № 1770, стр. 386 (а), находящейся в Госхранилище древних рукописей при СНК Арм. ССР.

В конце стр. 385 (б) рукописи имеется заголовок: «Обращение Анании к ученикам и глава первая». В этом обращении А. Ширакаци кратко и выразительно сообщает своим ученикам о том, что он хочет преподать им числительное искусство и начнет сперва с наиболее легкого, именно со сложения чисел. Этим обращением заканчивается стр. 385 (б).

На стр. 386 (а) приводится без указания автора таблица полигональных чисел. Таблица не сопровождается никакими пояснениями.

На стр. 386 (б) помещен материал, к математике совершенно не относящийся.

Страницы 387 (а)—391 (б) посвящены операциям сложения, вычитания и умножения целых чисел без указания автора.

На стр. 392 (а) имеется запись: «Об угольных числах священника Ованеса» и далее следует краткое сообщение об этих числах.³⁾

На стр. 392 (б)—393 (а) приводится таблица полигональных чисел Ованеса до 14-ти угольных включительно. Далее, на следующих страницах излагается не математический материал.

Сопоставление текстов в этой и других рукописях дает полное основание считать, что 3 действия над целыми числами («учебник арифметики») и таблица чисел стр. 386 (а) принадлежат Анании Ширакаци.

Таблица А. Ширакаци воспроизводится здесь в том виде, в каком она дана в рукописи. Заголовки колонок переведены с древне-армянского на русский язык. Числа таблицы обозначены в рукописи тем способом, о котором сказано выше.

Таблица А. Ширакаци довольно обширная и включает в себе все основные классы чисел, которые являлись предметом изучения в древней Греции.

³⁾ Ованес—известный армянский математик XII века.

Прямо- угольные	Треуголь- ные	Линиен- четырех- угольные	Четырех- угольные	Линиен- пятиуголь- ные	Пятиуголь- ные	Линиен- шести- угольные	Шести- угольные	Линиен- семьюголь- ные	Семь- угольные	Четырех- угольные	Сумма четных	Нечетные	Кубы	Особые кубы	Угловые	Угловени- е	Учет- верные
1	1	1	1	1	1	1	1	1	1	2	2	1	8	9	1	1	1
2	3	4	4	5	5	6	6	6	7	4	6	3	16	18	3	2	4
3	6	7	9	12	12	15	15	11	18	6	12	5	24	27	9	4	16
4	10	10	16	22	22	28	28	16	34	8	20	7	32	36	27	8	64
5	15	13	25	35	35	45	45	21	55	10	30	9	40	45	81	16	256
6	21	16	36	51	51	66	66	26	81	12	42	11	48	54	243	32	1024
7	28	19	49	70	70	91	91	31	112	14	56	13	56	63	727	64	4096
8	36	22	64	92	92	120	120	36	148	16	72	15	64	72	2187	128	
9	45	25	81	117	117	153	153	41	186	18	90	17	72	81	6561	256	
10	55	28	100	145	145	190	190	45	232	20	110	19	80	90		512	
11	66	31	121	176	176	231	231	51	283	22	132	21	88	99			
12	78	34	144	210	210	276	276	56	339	24	156	23	96	108			
13	91	37	169	247	247	325	325	61	400	26	182	25	104	117			
14	105	40	196	287	287	378	378	66	466	28	210	27	112	126			
15	120	43	225	330	330	435	435	71	537	30	240	29	120	135			
16	136	46	256	376	376	496	496	76	613	32	272	31	128	144			
17	153	49	289	425	425	561	561	81	694	34	306	33	136	153			
18	171	52	324	477	477	630	630	86	780	36	342	35	144	153			
19	190	55	361	532	532	703	703	91	871	38	384	35	144	153			

Естественно, что А. Ширакаци, получивший основательное математическое образование в Византии, пропитанный греческой культурой, занимался вопросами арифметики и преподавал ее в своей школе («перенес магическое искусство в свою страну»). Надо полагать, что к таблице был приложен объяснительный текст, но до нас не дошел.

Главную часть таблицы составляют полигональные числа, которым в древней Греции еще со времени Пифагора, уделяли большое внимание. О полигональных числах весьма подробно писал в своем сочинении «Введение в арифметику» Никомах Гераский (из города Геразы в Аравии), живший около 100 г. нашей эры. Никомах первый составил арифметическое учение, как самостоятельный предмет без геометрических представлений. Его «Введение в арифметику» пользовалось огромной популярностью и являлось классическим сочинением для изучения арифметики в течение столетий¹⁾. Таблица А. Ширакаци дает основание думать, что сочинение Никомаха было также хорошо известно и в Армении.

В первом столбике таблицы содержится натуральный ряд чисел от 1 до 19 включительно под названием прямоугольные. Этот термин не встречается в дошедших до нас сочинениях древних математиков, писавших о полигональных числах (Никомах, Диофант). Эти «прямоугольные» числа служат «коренными» числами (как называли их древние авторы), для образования треугольных чисел, помещенных в таблице А. Ширакаци во втором столбике, вслед за прямоугольными. Как известно, всякое треугольное число получается в результате суммирования соответствующего количества чисел натурального ряда, начиная от 1.

Поэтому, применяя формулу суммы членов арифметической прогрессии к натуральному ряду чисел

$$1, 2, 3, 4, 5, 6, 7 \dots$$

будем иметь для k -го треугольного числа:

$$a_k = \frac{(k+1)}{2} \dots (1)$$

Полагая в формуле (1) k равным последовательно числам

$$1, 2, 3, 4, 5, 6, 7, \dots,$$

получим соответствующие треугольные числа:

$$1, 3, 6, 10, 15, 21, 28 \dots$$

Не останавливаясь далее подробно на изложении способа образования четырехугольных, пятиугольных и вообще полигональных (многоугольных) чисел и на их геометрической интерпретации²⁾, скажем, что для получения k -го n -угольного числа необходимо взять сумму K членов арифметической прогрессии, у которой первый член равен 1, а разность равна $n-2$, то есть

$$a_k = \frac{[2+(n-2)(k-1)]}{2} \dots (2)$$

где: $K=1, 2, 3, 4, 5, 6, 7, \dots$

$$n=3, 4, 5, 6, 7, 8, 9, \dots$$

При $n=3$ из формулы (2) получим (1).

При $n=4$ получим

$a_k = k^2$ — выражение k -го четырехугольного числа.

При $n=5$ получим

$a_k = \frac{k(3k-1)}{2}$ — выражение k -го пятиугольного числа

и т. д.

Производя соответствующие подстановки, мы можем получить все полигональные числа, помещенные в таблице А. Ширакаци.

²⁾ Ниже приводится наглядное изображение полигональных чисел по G. Wertheim-y «Die arithmetik und die Schrift über Polygonalzahlen des Diophantus von Alexandria», Leipzig 1890.

¹⁾ М. Е. Ващенко-Захарченко, «История математики» том I, Киев, 1883 г., стр. 122—126.

В таблице имеются столбики с заголовками: лишние четырехугольные, лишние пятиугольные и т. д... Эти „лишние полигональные числа“ представляют арифметические прогрессии, начинающиеся с 1 и с разностью 2, 3, 4, 5... Из этих вспомогательных рядов образуются соответствующие полигональные числа. Каждый такой ряд называется также рядом гномоннов, так как каждое, вновь прибавляемое к полигональному числу гномонное число, превращает его в следующее высшее. Повидимому, автор таблицы, не желая вводить греческого термина и в то же время не имея точного армянского, назвал для краткости обозначения в таблице эти гномонные числа лишними полигональными (по армянски „*տնկարդ*“ значит лишний). Этим названием А. Ширакаци имел в виду отличить гномонные числа от полигональных. В этих же целях, повидимому, числа натурального ряда, то-есть гномонные числа для получения треугольных чисел, автор называет в отличие от последних прямоугольными, не вкладывая в данном случае в это понятие геометрического содержания.

С методической стороны для ясного представления способа образования полигональных чисел, является естественным и правильным помещением в таблице арифметических прогрессий.

После полигональных чисел в таблице стоят числа четные, суммы четных и нечетные числа. Четным и нечетным числам в древнее время придавали большое значение и они нашли себе место в таблице.

Не менее важное значение придавали и так называемым гетеромекным числам (*ἑτερομήκης*), то есть числам, находящимся в столбике под заголовком суммы четных. Никомах во „Введении в арифметику“ подробно останавливается на этих числах¹⁾.

¹⁾ Nicomachus of Gerasa, Introduction to Arithmetic, Book II, chapter XVII, XVIII, XX, New York, 1926.

В своей таблице А. Ширакаци называет их *Զույգ զարդ*, то-есть суммы четных, что вполне соответствует характеру образования этих чисел. Действительно, сложив два первых четных числа, получим 2-ое гетеромекное число 6, сложив 3 первых четных числа, получим третье гетеромекное число 12 и т. д.. Гетеромекные числа можно образовать другим способом, а именно, перемножив попарно последовательные числа натурального ряда:

$$1.2=2; 2.3=6; 3.4=12; 4.5=20; 5.6=30 \text{ и т. д.}$$

Следовательно общее выражение гетеромекных чисел есть $m(m+1)$.

После нечетных чисел в таблице следуют „кубы“. В тексте рукописи числа столбика названы по армянски „*քանիւյք*“ то есть кубы. Однако, эти числа кроме 8 и 64 не являются кубами целых чисел. Очевидно, автор имел ввиду определенные числа из общего класса телесных чисел и название взятых им чисел впоследствии искажено переписчиком рукописи. Можно также допустить, что автор таблицы хотел показать числа кратные куба 2-х, общее выражение которых 2^3m .

Рядом с этими числами А. Ширакаци поместил числа вида 3^2m под названием „особые кубы“ (по армянски *տնկարդ քանիւյք*). Если учесть, что греческая арифметика была известна А. Ширакаци, то станет ясным, что подразумевал автор под „особыми кубами“. Числа вида a^2m , к которому относятся рассматриваемые числа, по определению Никомаха представляют промежуточные кубические фигуры между кубами и „кубическими фигурами, у которых измерения повсюду не равны друг другу“ то есть „клиньями“²⁾.

Эти промежуточные фигуры Никомах называет кирпичами и балками, которые

²⁾ Там же, Book II, chapter XVI, 253—254.

автор таблицы, повидимому, имел в виду под „особыми кубами“.


Последние три столбика таблицы представляют геометрические прогрессии, начинающиеся с 1, со знаменателями, равными соответственно 3, 2 и 4. Эти ряды чисел показывают, что в древней Армении имели понятие о геометрической прогрессии. Однако, нет пока данных о том, как далеко простирались сведения о прогрессии и в какой мере пользовались ею.

В заключение следует отметить, что


таблица А. Ширакаци охватывает разнообразные виды чисел, составлена отчетливо и, повидимому, служила ценным наглядным пособием при преподавании арифметики. Автор таблицы, как видно, не стремился слепо перенести греческие термины на армянскую почву, а старался в армянском языке находить соответствующие названия.

Таблица А. Ширакаци свидетельствует о том, что арифметические знания в Армении в VII веке стояли на высоком уровне.


НАГЛЯДНОЕ ИЗОБРАЖЕНИЕ ПОЛИГОНАЛЬНЫХ ЧИСЕЛ




Треугольные числа



Четыреугольные числа



Пятиугольные числа



Шестиугольные числа

Հ. ԱՐԲԱՆՅԱՆ

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

18-րդ դարի ութսունական թվականներին էջմիածնում կառուցվում է տպարան և թղթի գործարան:

Դեռևս 1771 թ. ավարտվում և գործի է դրվում տպարանը՝ կոչված լինելով բավարարելու և կենդեցական գրականության կարիքը, որ գլուխ էր հայ հոգևորականությունը՝ կաթողիկոսական և բողոքականութեան զեմ մղած իր դավանաբանական պայքարում:

1. ԹՂԹԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Տպարանի աշխատելուց կարճ ժամանակ անցած, պարզվում է որ նա կանգնած է աշխատանքը դադարեցնելու վտանգի առաջ, թղթի բացակայության պատճառով: Այդ շրջանում թե տպագրության և թե գրելու համար թուղթը ստացվում էր Եվրոպայից՝ Տաճկաստանի վրայով: Հաղորդակցության ճանապարհների անկանոնության, անապահովության և հաղորդակցության միջոցների հետամնացության պայմաններում՝ թղթի հայթայթումը կապված էր մեծ դժվարությունների հետ:

Թղթի՝ Եվրոպայից ստացվելու մասին մենք ունենք որոշակի վկայություններ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հիշատակարանում, ուր քարտուղարի կողմից գրանցված են նրա նամակների համառոտ բովանդակությունները, մենք կարդում ենք.

ա) «Եւ զթուղթ Զաբարիա վարդապետին¹⁾ յղեաց առ սա²⁾ յգել ի Պօլիս: Եւ պատուէր՝ զի ԲՃ (200) օգմայ թուղթ, կամ որքան և գտցէ առեալ յղեացէ: Նաև գրեացէ եղբորն իւրոյ՝ Խօջա Նազարէթին, զի նա ևս ԲՃ (200) կամ ԳՃ (300) օգմայ թուղթ առեալ յղեացէ վասն տպագրատան» (1774 թ. մարտի 22-ի նամակից, «Դիվան Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 297):

բ) Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ Ղուկաս վարդապետը «յառաջագոյն խոստացեալ սրբազան վեհին, թե ի Ֆռանկաց թուղթ եմ բերելոց. որոյ ազագաւ և սրբազան վեհն գրեաց նմա, զի գալն իւր եթէ թուղթն ևկեալ իցէ ի Ֆռանկաստանու, բերցէ ընդ իւր. իսկ թէ չիցէ ևկեալ, առացէ Աստուածատուր աղային, որ նա հետոյ յղեացէ» (1775 թ. հունիսի 3-ի նամակից, «Դիվ. Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 428):

Կան և բազմաթիվ այլ վկայություններ, որոնցով հաստատվում է ոչ միայն թղթի Եվրոպայից ստացվելը, այլ և նրա մեծ կարիքը, թղթի գործարանի կառուցման անհրաժեշտությունը: Իր 1775 թ. փետրվարի 13-ի նամակում՝ ուղղված Մարտիկեանց մահաեսի Փիլիպոսին, Սիմեոն Երևանցին գրում է. «զի վասն թղթոց կարի պակասութիւն ունէաք, զոր ըստ բաւականին առ ձեռն բերել ոչ կարէաք. և մանաւանդ՝

1) Պոլսի Հայոց պատրիարքը
2) Կարնեցի Փիլիպոս Մարտիկեանց, որն այդ ժամանակ գտնվում էր Աբաբեկում:

անեցեալն ևս, ըստ մեծի մասին անօգուտ և անտպալաշիւ լինէր» (Նույն տեղ, էջ 332):

2. ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Ելնելով թղթի ձեռք բերման վերոհիշյալ դժվարություններից՝ Սիմեոնը՝ ձեռնարկում է թղթի դործարան հիմնելու աշխատանքներին: Դեռևս 1772 թվին, Պոլսում գտնվող Մադրասեցի Չաքիկենց Գրիգորից խնդրում է՝ թղթաշեն վարպետներ ուղարկել Էջմիածին: Երկու տարի անցնելուց հետո վարպետներ ձեռք բերելու հույսը կըտրած, Հնդկաստանի հայոց նվիրակ Փիլիպպոս վարդապետին խնդրում է՝ թարգմանել տալ և իրեն ուղարկել «ղթաշինության խրատարն», որով դուրս է կարելի լինի տեղում գործարան հիմնել, առանց օտարների օգնության. «հա նույն հիշատակարանից մի կտոր բայլ և յանցեալ ամին ղթաշինութեան խրատն թարգմանեցուցեալ էր նա և յղեալ առ սրբազան վեհն, յորմէ ոչինչ իմացեալ եղև, զի թարգմանութիւնն և գրեալն կարի խառնափնդոր էին, վասն որոյ պատուիրեալ նմա զի տէր Աւետիան վերակացու կարգեալ ի վերա թարգմանութեանն, ղթաշինության խրատն հայերեն բառիւ և պարզ ոճիւ վերստին լաւ թարգմանի թարգմանել տացէ և առ ինք յղեսցէ, և եթէ այսու ևս ոչ լինիցի նաբ, այնուհետև դայլ իմն հնարս հոգացցէ. զի թերևս ղթաշինութեան կերպն ի ձեռն բերցուք» (Նույն տեղ էջ 308):

Երեք տարվա նամակագրություններից ու բանակցություններից հետո՝ վերջապես հաջողվում է նույն Չաքիկյանի միջոցով Փարիզից հրավիրել Ֆրանսիացի թղթաշեն երկու վարպետներ՝ (Մուսիո Բեյսօն և Մուսիո Դեսիոն), որոնք՝ Պոլսում պայմանագիր կնքելով նույն Չաքիկյանի հետ, մեկնում են Էջմիածին և, տեղ հասնելով, 1775 թ. մարտից սկսում են գործարանի կառուցումը:

Չաքիկյանին, Պոլսի պատրիարքին և այլոց Սիմեոն կաթողիկոսի կողմից ուղարկված նամակներից պարզվում է, որ Ֆրանկ վարպետները և նամանավանդ նրանց

թարգման Ստեփանն ամեն կերպ աշխատում են ձգձգել գործը, դրամ կորզել և թղթաշինության արհեստը Էջմիածնականներից գաղտնի պահել: Պոլսի պատրիարք Չաքարիա վարդապետին դրած նամակում Սիմեոն Երևանցին հայտնում է. «Նւ թարջիման (թարգման) Ստեփանն... ամենևին ոչ պիտոյանար մեզ զի միշտ արբեցության և որկրամոլորության հետևէր: Եւ մանավանդ աղթարմա գոլով՝ ոչ կամէր, զի ղթաշինության արհեստն ի ս. Աթոռջս հաստատեսցի, քանզի՝ ի մէջ խոսակցութեան գրանս թղթաշինացն խայինութեամբ թիւր մեկնէր մեզ, զոր նշանօք իմանայաք մեք» (Դիվ. Հայոց. պատմ. գիրք Ը. էջ 364): Ինչ վերաբերում է վարպետներին, նրանք այլ և այլ պատրվակներ են հնարում, ինչպես թղթի վատորակ լինելու, այնպես էլ իրենց կողմից աշակերտներ պատրաստելու պարտավորությունը չկատարելու համար. բայց թերացման հիմնական պատճառն այն էր, որ նրանք թղթաշինության արհեստը տարածելու իրավունք չեն ունեցել և այդ գործին ձեռնարկել են գաղտնի կերպով: Նույն Չաքարիա վարդապետին ուղղված՝ Սիմեոնի նամակում, որը վերաբերում է վարպետներից փոքրի՝ Մուսիո Դեսիոնի Ֆրանսիա վերադարձնելուն, կարդում ենք. «Նա և պատուէր, զի օր մի յառաջ հանցէ զնայ անտի (Պոլսից), որ շատ չմնացէ անդ և ի Ֆրանկսզի նաւ մի դիցե, այլ որբիշ ազգի նաւով յղեսցէ. իսկ եթէ որբիշ ազգի նաւ ի պատրաստի չգտանիցի ի Զմիւսին յղեսցէ անտի շուտով, զի նա անդ յայլ նաւ մտեալ երթիցէ յորիշ երկիր՝ և անտի իւր քաղաքն, որպես և իւր աղերսանքն էր. քանզի ասէին թէ՛ զմեզ ուղարկողքն թղթաշինութեան անուամբ չյղեսցին, այլ որբիշ պատճառաւ՝ և այլ անուամբ, ի ծածուկ պահելով թղթաշինութեան անունն առ երկիւղի: Արդ թէ իմացեն ասէ՛ թէ ևս այսու անուամբ եմ եկեալ աստ, զչարիս հասուցանեն ինձ և մեր ուղարկողացն» (Նույն տեղ, էջ 529):

1776 թ. հունվարի 4-ին արտադրվում է առաջին թուղթը, սակայն, վատորակ վարպետների սիմուլացիան պատճելու համար՝ Սիմեոնը սպառնում է գործի զցել

Ֆալսիֆիկան և նույնիսկ «ճվիցաք, ասէ, զկղակս նոցին»։ Վարպետները խոստանում են նոր մաղ շինել՝ որից հետո լավ թուղթ կարտադրեն. և «սկսան նոր մաղ կաղմել զի այնու զլան հանցին. հանցին և այնու, այն ևս չնմանեցաւ Ֆռանկատանու թղթոյն»։ (Նույն տեղ, էջ 582)։

Ֆրանսիացի վարպետները էջմիածնում մնալու անօգտավետութիւնը վերջնականապէս իմացվելուց հետո, նրանք վճռովում են այնտեղից, ստանալով իրենց հասանելիք երեք տարվա աշխատավարձը։

Նախքան վերոհիշյալ վարպետները էջմիածին կհասնեն Սիմեոն կաթուղիկոսը վարպետներ էր խնդրել նաև Պարսկաստանից։ 1775 թ. հունիսի 28-ին ժամանել էին նաև Պարսկաստանից պահանջված պարսիկ վարպետները, որոնք եռանդով ու բարեխղճօրեն կատարելով իրենց աշխատանքը, կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կառուցել էին մի նոր դործարան, այլ և պատրաստել էին աշակերտներ (Նիկողայոս և Մարգար) և արտադրել լավորակ թուղթ։

Սխալվում է Գյուլտ քահանա Աղանյանը, երբ գրում է, թէ «Սիմեոնը բերել տվեց այնտեղից (Պարսկաստանից) վարպետներ, բայց նոքա չկարողացան թուղթ շինել» (Իրվան Հայոց պատմ. գիրք գ. էջ 349)։ Հենց նույն Սիմեոն կաթուղիկոսը, Չաքիկյանցին ուղղված 1776 թ. գեկտեմբերի³⁾ 6-ի նամակում՝ գանդատվելով թղթաշեն ֆռանկ վարպետներից՝ գրել է. «Վերջապես այն էր շար միտքն սոցա (ֆռանկ վարպետների)։ զի այս արհեստս աստ մի յառաջացի. այլ քան զիւրեանց զիտեցեալն լաւ հաստատելոց է աստուծով, որպէս տիպն. լիւր միամիտ... մինչև դոքա ետացան ի գախ աստ, մեք կարծէաք թէ՛ այլ ոչ գան, ուստի ի Բեարիս խանէն զթղթաշենս խընդրեցաք։ Յետոյ հանկարծ եկին Ֆռանկքն, և նոքա ևս եկին, ուստի՝ այլ չկարողացաք ջուղապ առնէլ, այլ նոցա ևս շինել ետուք զգործարան, որք միարանութեամբ շինեալ յաւարտս հասուցին, զթուղթ հանին, և զաշակերտս ուսուցին և դարձան... (որպէս ասացաւ այս յապրելի 16), որոց թէ տարե-

1) Իրվանում սխալմամբ՝ նոյեմբերի։

կան վարձ՝ և թէ քեարխանի շինութեան և իւրեանց խարճ ընդամեն եղև ԱճԺ (110) թուամն։ Տես գտածկաց միամտութիւնն և զնոցին չարամտութիւնն, որք միշտ ծաղր առնէին նոցա. իսկ նոքա զիւրեանց յարաջացուցին որքան կարէին և Ֆռանկքն այսպէս նենգութիւնս արարին» (նույն տեղ էջ 586—587)։

Բացի այս, նաև մի շարք վկայութիւններ կան թղթագործարանի ծախսերի մատչանում²⁾, որոնցից մեկի մեջ բերումը ավելորդ չենք համարում «Ի սոյն ամի (1775 թ.), ի մարտի 22-էն, մինչև ցգեկտեմբերի 11. թէ Ֆռանկաց և թէ տաճկաց թղթատանն վերա այս ինչ խարճ գնաց, որ ահա ի ներքոյ գրի կարդաւ»։ Եւ այնուհետև թվարկվում են ծախսերը։

Պարզ է, որ էջմիածնում միաժամանակ հիմնարկվել է թղթի ոչ թե մեկ, այլ երկու դործարան, մեկը Ֆրանսիացի և մյուսը պարսիկ վարպետների ձեռքով. սրանցից մեծը, որ հավանաբար Ֆրանսիացի վարպետներն էին կառուցել 20 դաղ երկարութիւն և 9 դաղ լայնութիւն ուներ և կառուցված եր Չաքիկենց Գրիգոր աղայի ծախքով. պարսիկ վարպետների կառուցած արհեստանոցի տարածութիւն մասին տեղեկութիւններ չկան։

Պատվավոր կերպով ավարտելով իրենց գործը՝ 1776 թվի ապրիլի 16-ին մեկնում են պարսիկ վարպետները։ Նույն թվի հոկ-

2) Այս մատչանը սեփականութիւնն է ՀՍՍԹ ժողկոմսովետին կից Պետական Չեռագրատան. (Արխիվի բաժին, Կաթուղ. դիվան, թղթապանակ 7, № 3) կաշեպատ է, փափուկ կաղմով. 21,3 × 15, 5 սմ. մեծութիւնը. բաղկացած է 104 թերթից։ 2—12 թերթերի վրա գրված է թղթագործարանների 1775—1781թթ. ծախսերը. կից 7 պատուակի։ 23ա—26ա, 32ա—32բ և 36ա—46բ էջերում ժամանակավոր օդազորման համար միարանների և վարժատան սաներին հանձնված. այլ և այլ անձանց նվեր ուղարկված և վաճառված գրքերի ցուցակները (1781—1789թթ.) կից 4 պատուակի և մեկ ցուցակ կազմատան գործիքների։ 1ա. էջում էջմիածնի միարաններին և այլոց արված սանամանների ցուցակը (1416—1817 թ.)։ Կից ցուցակ՝ Թոխաթի նվիրակ Սիմեոն և պիտկոպոսի կաթուղիկոսին նվիրված իրերի։

42ա—46բ՝ 1816—1818 թվականների այլ և այլ եկեղեցիների ու վանքերի ուղարկված եկեղեցական անոթների և զգեստների ցուցակը՝ կից 2 պատուակի։ Մնացած էջերը ժաբուր են։

տեմբերի 28-ին աշխատանքից հեռացվում է Ֆրանսիացի փոքր թղթաշենը և ապա նույններին՝ մեծը:

Այնուհետև գործարանի ղեկավարութունը անցնում է առաջին հայ թղթագործ վարպետ Նիկողայոսին, որը սովորել էր պարսիկ թղթագործների մոտ և ճարտարներն յուրացրել Ֆրանսիացի վարպետների հմտութունը: Մրա մասին 1777 թ. ծախսերի մատյանում արձանագրված է «յապրելի 21. օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն բաշխիչ կառու երկու հազար զխան»: Մյուս աշակերտի՝ Մարգարի մասին հետագայում գրանցումներ չկան:

3. ԿԱՌՈՒՅՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Թղթաշինության երկու գործարանի կառուցման և կահավորման վրա ծախսված է մոտ 18000 զուռուշ՝ չհաշված վարպետների, բանվորների և ալյոց սննդի վրա կատարված ծախսերը: Այս դուժարը հսկայական մի գումար է, եթե նկատի ունենանք իր ժամանակի արժեքը: Ավելորդ չենք համարում համեմատության համար բերել նույն թղթագործարանի ելքի մատյանի հետևյալ գրանցումները «Գոմեշ մի առի սրում կառու 15 հազար զխան. (=22 զուռուշ 20 փարա)՝, կամ Դաւիթ վարդապետն և թարջիման Ստեփանն զձխանքն իւրանց զողանալ կառուն ի յԱլիքուշակ գեօղն, որոց երեսն պարզ լինի. գինն է 90 զուռուշ», և կամ «Աշշի Դաւուստին մէկ բոլոր տարվա տօնլուդն կառու ի լրանալ տարւոյն... 24 զուռուշ»:

Թղթաշինության գործարանի կառուցման և գործիքավորման համար աշխատել են. —

- ա) Քարհատներ 1235 մարդ օր, օրական՝ 20-25 փարայով.
- բ) Թառատներ 279 մարդ օր, օրական՝ 12-15 փարայով.
- գ) Դարբիններին արված է 1232 զուռուշ, օրավարձը՝ 25 փարայով.
- դ) Մշակներ 4217 մարդ օր, օրական՝ 6 փարայով.

և) Որանագիր բանվորներ (քրահան) 318 մարդ օր, օրական ստացել են 15 փարա, և այլն:

4. ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱՆԾ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Թղթագործարանի ծախսերի մատյանից երևում է, որ նրա գործիքները պատրաստվել են փայտից, քարից և զանազան մետաղներից:

ՓԱՅՏՅԱ ԳՈՐԾԻՔՆԵՐ. — Ամենից առաջ արժանի է ուշադրության փայտյա «մանկեանան» կամ մամլիչը. այս մամլիչը նման է եղել մինչև վերջին ժամանակներս Հայաստանի ձիթհանքերում օգտագործվող սեղմիչներին. նրա բաղկացուցիչ մասերն են ա) 12-15 մետր երկարությամբ հասա գերաններ, որոնց թիվը կարող է լինել երկու կամ չորս բ) «արջ», գ) «սողոսիկ» (բուրդու), դ) «կախքար»:

Մանկյանան կամ մամլիչը կառուցված է հետևյալ ձևով. — գերանների մի ծայրը գեանից քառորդ մետր բարձրության վրա, տեղավորվում է պատի մեջ հատուկ պատրաստված անցքում, որը վերին կողմից բևեռված է մինչև 50 տոնն ծանրության քարերով, գերանների մյուս ծայրին ամրացվում է (վերին կողմից) «արջ» կոչվող կոճղը, որը մեջտեղում ունի մոտ երեք դեցիմետր արամագծով անցք առ և ակոսներով. այս անցքի մեջ տեղավորվում է նույն արամագծի, դարձյալ առ և ակոսներով «սողոսիկը» (մոտ 5—6 մետր երկարությամբ դերան). սողոսիկի ներքին ծայրում ամրացված է մինչև մեկ տոնն ծանրության «կախքարը», որը ձևով նման է աղացի քարին:

Մանկյանան գործի զցելու համար պողոսիկը կախքարի հետ միասին պտտեցվում է ձախ և «արջի» օժանդակությամբ գերանները բարձրացնում են վերև. գերանների տակ՝ նրանց հիմքին մոտիկ, տեղավորվում է մամլիչը նյութը և ապա սողոսիկն աջ պտտեցնելով, գերանները լիցեցվում են մինչև այն աստիճան, որ նրանք հենվեն մամլիչի նյութին. այնուհետև պողոսիկը կախքարի հետ միասին բարձրանում և կախվում է օդի մեջ և իր ամբողջ

1) Մանթ. 40 փարան հավասար է մեկ զուռուշի:

ծանրությամբ գերաններին ներքև ձգելով՝ մամլում է նրանց տակ տեղավորված նյութը:

Գերանները բարձրացնելիս, որպեսզի պտտվող պողոսիկն իր ներքին ծայրով գետին չխրվի, նրա տակ, գետնի մեջ տեղավորված լայն, հարթ քարի վրա դրվում է վերևից զոգավոր չուգունի սկավառակ: Սկավառակի փոսիկի մեջ տեղավորվում է պողոսիկի ներքին ծայրը, երբ վերջինս հասնում է նրան:

Այս տիպի սեղմիչի օգտագործման փաստը հաստատվում է մատյանում կատարված հետևյալ գրանցումով. «Պատատ Գրիգորին 12 աւուր վարձն կտու 12 ապասի (=3 դուռուշ 24 փարա) որ մեկ արջ՝ և մեկ պողոսիկ փորեաց»:

Ենթադրում ենք, որ այս մանկյանան օգտագործված է թուղթ մամլելու համար:

Թղթի բաղադրությունը ձեռնելու և մանրացնելու համար պատրաստվել են փայտյա սանդեր. այդ մասին կա հետևյալ գրանցումը. «բամբակաձորն ի ներքոյ սանտացու փայտին վախճանեալ Աշտարակցի Այվազի տղայի փեսային ողորմութիւն կտու երեք թուամանի»:

Քարից պատրաստվել են ավազաններ և նավեր, որոնցով հեղուկ թղթանյութը հոսել է մի տեղից մյուսը. թղթանյութը մանրելու համար պատրաստվել է նաև հատուկ ջրաղաց:

Պղնձից պատրաստել են դանազան մեծ ու փոքր ամաններ, ծորակներ, խառնիչներ և այլն:

Երկաթի օգտագործման մասին մատյանում կա միայն մեկ գրանցում. «բամբակաձորոյ դարբնոցն վասն հինգ երկաթեայ տախտակաշինութեան տուեալ էին երեք թուաման» (հավանաբար այս տախտակները օգտագործել են թղթի մամլելու ժամանակ): Սակայն մի քանի գրանցումներից պարզվում է, որ այլ և այլ վայրերից ահագին քանակությամբ երկաթ է գնված կամ այլ և այլ վայրերից հրավիրված երկաթագործներին մեծ գումարներ են վճարել. թե՛նչ գործիքներ են պատրաստել այդ վարպետները, չկա և ոչ մի նշում: Ահա այդ

գրանցումները. «Սամախոռ երկաթ առի ի Ղարսայ 109 թիլանի¹⁾ (=785 կ. գ.) և մեկ հոխայ²⁾. գինն կտու 285 դուռուշ 37 փարա. ի բամբակաձորոյ 200 լիտրն³⁾, մեկ լիտրն երեք ապասիով, գին կտու 12 թուաման». կամ «Յոյն դարբնին չորս ամսէն վարձն կտու եօթն թուաման երկու հազար (դիան). իւր աշակերտ Պողոսին երկու թուաման. իւր աշակերտ Սուղավերտուն մեկ թուաման երեք հազար (դիան) և Բերօին մեկ թուաման... մեր գիւղացի դարբնացն 42 աւուր վարձն կտու վեց հազար (դիան) երեք ապասի» և այլն:

Լավ թուղթ ստանալու համար վճարական նշանակություն են ունեցել մաղերը՝ որպիսիք պատրաստել են պարբերաբար, յուրաքանչյուր անգամ 2-8 մաղ:

Մի շարք մանր գործիքներ, գլխավորապես այլ և այլ չափումների համար դնվել են ֆրանսիացի վարպետից, այդ մասին կա հետևյալ գրանցումը. «Թղթաշեն Մուսիօ Բեյսոնէն մանր գործիս առաք չափուց այսինքն՝ փարկեալ, կանգուն և զայլ նմանիս որոց գին կտուք քսան և հինգ դուռուշ»:

Հետաքրքիր է նույն մատյանի հետևյալ գրանցումը. «Չարխն յորժամ գլուխ բերին և պտտեցաւ ջրով յուլիսի 2-ին, օրն շաբաթ, բաշխիշ կտու գործավարացն»: Այս գրանցումից պարզվում է, որ թղթի արտագործյան պրոցեսում օգտագործված է ջրի շարժիչ ուժը:

5. ՀՈՒՄՈՒՅԹ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՆ

Թղթաշինության համար որպես հիմնական հումանյութ օգտագործվել են մի քանի տեսակ նյութեր: Մրանցից առաջնակարգ տեղ է գրավել քաթանի փայլասը, քաթանի ձևաք բերման համար Սիմեոն կաթողիկոսը գիմել է ոչ միայն Բայազետ, կարս կարին, այլ նաև Աստրախան՝ Ռուսաստանի նվիրակ Հովսեփ Սրղության վարդապետին, որպեսզի սա Ռուսաստանի այլ և ալ

1) Ծանրության չափ է, մոտ 7,2 կ. գ.
2) Ծանրության չափ է, մոտ 1,2 կ. գ.
3) Ծանրության չափ է, մոտ 1,8 կ. գ.

քաղաքներում փախուս հավաքել տա և ուղարկի էջմիածին:

Քաթանի հավաքման գործի մասին Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում կարդում ենք.—

«Գրեաց (Հովսեփ վարդապետին) և գորպեսութիւնս թղթատանն և երեք թապաղա յղեաց ի տնսանել: Եւ վասն հին քեթանի գրեաց զպատուէր՝ զի թէ հնար է, և կարէ, զհին քեթան տացէ ժողովել և աստ յղել (1776 թվի հոկտ. 27-ի նամակից, էջ 512):

«Եւ պատուէր (Կարսեցի պարոն Գեորգին)՝ զի վասն թղթաշինութեան նիւթոյն հին քեթան ևս հողացեալ յղեսցէ» (1775 թ. մայիսի 22-ի նամակից, էջ 403): «Եւ վասն յղեալ հին քեթանին մեղադրութիւն գրեաց սմա (Կարինի առաջնորդ Հարություն վարդապետին) զի սորա առեալ հեսապովն թղթի մեկ դաստայն երկու դուռուշից աւելի նստեր ի մեր վերայ... Թուղթ ևս մեղադրութեան առ ս. Աթուռոյս գործակալ տեր Մանուելն (Կարին) գրեաց, զի յառաջագոյն գրեաց սմա և առաջնորդին, եթէ անպետ քեթան գտանիցի որոց հօխայն երկու և երեք փարայով տացէն, առեք. իսկ նոքա հիսուն երեք փարայով էին առեալ հօխայն... նոցա տուեալ զինն հեսապ արարաք, որ թող զխարճն և զջաֆայն ի մեկ հօխայնն երեք դաստա թուղթ ելաներ և դաստան կես դուռուշ նստեր (1775 թ. հուլիսին, նույն տեղ էջ 464):

Թղթատան ծախսերի մատյանում արձանագրված է «Փալաս քսան թիւանի՝ ի Բայազիդու յղեաց թերղի Կիւրեղն քիրայն կտու երեք դուռուշ. իսկ 27 թիւանի ի յԵրզրումու յղաց, քիրայն կտու չորս դուռուշ»: Վերջին երկու գրանցումները հետաքրքիր են նաև թղթի մոտավոր արժեքը և փոխադրությունների վարձաչափը պարզելու տեսակետից:

Բացի քաթանից գործածվել է նաև բամբակ, կանեփ և կտավհատի ցողուն, այս նյութերի վերաբերյալ թղթագործարանի ծախսերի մատյանում կան հետևյալ գրանցումները.

«Նոր աշակերտ Նիկողայոսին և Մարգարին բաշխիշ կտու չորս հազար դիան,

որ նոր բամբակէ թուղթ իւրանց ձեռօքն հանեալ բերին ընծայ սրբազանին»: «Կանաչ կտաւահատ առաք ի յԱլիքոչակ, վասն թուղթ շինելոյ. զին կտու հազար դիան». կամ «կտաւահատի ցողոն հանող հիսուն և չորս մշակացն վարձ կտու հիսուն և չորս շահի»: «Կանեփ առի 36 լիտր, որոց շահին 36 դուռուշ, կանեփի հունտ 17 լիտր, զինն 10 դուռուշ... ի Բայազիդու մինչև ցասա, թե սոցա և թէ Գալուստ վարդապետի կանեփին քիրա կտու տասն և հինգ հազար դիան»:

Որպես օժանդակ նյութ օգտագործվել է՝ ա) կալաքար, բ) թորթոն կամ բրոր, գ) բորակ, մշակվող նյութերի մաքրման, սպիտակացման և մածուցիկ դարձնելու համար, դ) գեոկաաշ կամ պղնձարջասպ, ե) շիպ, զ) սոսինձ, է) նշաշտայ:

Վերահիշյալ բոլոր նյութերը, բացի սոսինձից ներմուծվել են Տանկաստանից: Իսկ սոսինձը պատրաստելու մասին ծախսերի մատյանում կա հետևյալ գրանցումը. «Թութխալ կփել կտուք ձեռամբ ձորագիւղացի ուստա Աղիբեգին և իւր կղբայր Պեարոսին ի տասն կաշուց արջառաց, որք ութն օր աշխատեցան. իրր վարձ կտու 15 դուռուշ, որ չորացաւ կշուեցաք եղև կօթն հօխա և կէս». կամ «թութխալ կփել կտու ի պատառոտեալ կաշուց ութն հօխա, վարձն կտու 2 դուռուշ 31 փարա»:

6. ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԹՂԹԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՌԵՍԼԻԶԱՑԻԱՆ

Գործարանի արտադրական կարողության մասին ուղղակի վկայություններ չբերված. այդ իսկ պատճառով, որոշակի ասել, թե այսինչ ժամանակում, այսինքն մի օրում, շաբաթում, կամ ամսում որքան թուղթ է արտադրվել, չենք կարող. հայտնի չէ նաև արտադրական պրոցեսի տեղում: Սակայն ծախսերի մատյանում գտնվող գրանցումներից հնարավոր է վերահիշյալ հարցերի մասին մոտավոր դադափար կազմել. ահա այդ գրանցումները. «Ի յօգոստոսի 18. կտու 25 թիւանի փալաս և՛ հինգ թիւանի կանեփ, չորս հօխա թութխալ, երկու հօխա կէս շիպ և

հիսուն դրամ¹⁾ կէօկտաշ, որ եղև երեսուն և մէկ թիւանի 200 դրամ (=224 կ. գր.). իստցանէ դուրս եկն 16 թիւանի չորս հոխայ 350 դրամ (=120 կ. գր.) թուղթ, որ էր 13 օգմայ պիտանի և 15 դաստայ վտիտ, գործավորացն բաշխիշ կտու. ի դեկտեմբերի 20, օրն հինգշաբթի՝ «Յապրիլի 21 (1777 թ.) օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն, բաշխիշ կտու որ նոր թուղթն հանէին ի յուլիսի 15. 3 դուրուշ՝ Այս քաղվածքից ելնելով, արտադրութեան պրոցեսի տեղութեան և գործարանի արտադրական կարողութեան մասին եզրակացութեաններ հանելը դուր մասնագիտական հարց է, ուստի այն հանձնում ենք մասնագետների ուղարկութեանը. նկատենք սակայն, որ բաշխիշ տալու ժամանակը կարող էր հետ մնալ թղթի արտադրութեան պրոցեսի ավարտումից:

Արտադրված թուղթը օգտագործվել է գլխավորապես տեղական կարիքների համար. դուրս մասամբ բախարսել է այլ վանքերի և թեմական առաջնորդների կարիքները. ինչ վերաբերվում է արտահանմանը գեպի հարեվան երկրներ՝ այդ մասին ճշտիվ տեղեկութեաններ չկան: Սակայն կամեկ փաստ, որը ենթադրել է տալիս, թե արտահանման հնարավորութեան այնուամենայնիվ եղել է. 1776 թ. նոյեմբերի 6-ին Գրիգոր Չաքիկյանցին գրած նամակում Սիմեոն կաթողիկոսը հայտնում է, թե նրա կողմից ուղարկված մուրհակների հինգ տեսակ բլանկներից չորսական օրինակ ուղարկում է՝ և եթե պահանջ կա թող հայտնի, որ շատ տպեն և ուղարկեն՝ Մադրասում ծախելու համար. ենթադրում ենք, որ այդ բլանկները տպվելու էին Էջմիածնի թղթի վրա. այլապես ինչ շահ այդ գործից: Բացի այս՝ թղթի առանձին օրինակներ ուղարկված են վրաց Հերակլ արքային, Կ. Պոլսի և Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդներին և այլոց: Տեղում թուղթը մեծ մասամբ գործադրվել է տպարանում. Էջմիածնի թղթի վրա տպվել են մի շարք աշխատութեաններ, որոնցից հայտնի է Սի-

մեոն կաթողիկոսի «Պարտավճար» աշխատութեանը, որից Պետական Ձեռագրատանը (Մատենադարանում) կա հինգ օրինակ (հին տպագրեր № 102):

Արտադրվող թուղթն օգտագործվել է նաև գրագրութեանների համար. այժմ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) արխիվում պահվում են բազմաթիվ վավերագրեր, գրված նույն թղթի վրա:

Որակի տեսակետից թուղթը բավական կոշտ, դուրսով բաց-հարդազույն, գորշ կամ ոչ շատ սպիտակ. թուղթը ունի ջրանկար դրոշմ, որը իրենից ներկայացնում է մեկ կողմում «Սուրբ Էջմիածին» բառերի փակագիրը, որից ներքև «Ս. Կ.» Սիմեոն կաթողիկոս բառերի սկզբնատառերը, մյուս էջում՝ դարձյալ փակագրով «Թուրն ՌՄԻՇ» (1776) և Գրիգոր Միքայելյանի (Սոջաջանյան, Չաքիկյան) անվան և ազգանվան սկզբնատառերը: «Գ. Մ.» Ինչպես վերը նշեցինք այս Չաքիկյանի ծախսով է կառուցվել և տպարանը և թղթի գործարանը, որի անունը հավերժացնելու համար Սիմեոն կաթողիկոսը ոչ միայն արձանագրութեաններ փորագրեց տպարանի և թղթագործարանի ճակատներին, այլ նաև նրա անունը հիշատակել է ինչպես արտադրվող թղթի վրա, այնպես էլ տպագրվող գրքերի առաջին էջերում:

Սիմեոն Երևանցու կողմից կառուցված թղթի գործարանը ըստ երևույթին շատ կարճ կյանք ունեցավ. (ընդամենը 5—6 տարի): Նրա մահվանից հետո գործարանը դադարեց գործելուց (գործարանի ծախսերի մատյանում 1781 թվից հետո գրանցումներ այլևս չկան, իսկ դա ապացույց է գործարանի խափանման): 18-րդ դարի վերջին և 19-ի սկզբի քաղաքական անցուղարձերի՝ աղա Մամատ խանի արշավանքների և այնուհետև Ռուս-Պարսկական պատերազմի հետևանքով գործարանն ընդմիշտ ավերվեց և ավարի տրվեցին նրա մետաղյա գործիքները:

* * *

Դուրս սրանով մեր հոգվածն ավարտել ենք, եթե մեր առջև չձառանար անխուսափելի մի հարց. այդ այն է, թե նախքան Սիմեոն Երևանցու կողմից կառուցված գոր-

¹⁾ Ծանրութեան շափ է. մոտ 3 դրամ:

ծարանը և նրանից հետո՝ Հայաստանում աշխատիսին գոյութուն ունեցել է, թէ ոչ:

Անկախ այն բանից, որ մեր ձեռքի տակ դեռ ևս փաստեր չկան, պիտի ենթադրել, որ անցյալում նույնպես, թղթի մըշակման արհեստանոցներ գոյութուն ունեցել են: Թղթի վրա դրված Հայկական հին ձեռագրերի այն հսկայական քանակութիւնը, որն ունենք այժմ, խոսում է հոգուտ այս ենթադրութեան:

Թղթի վրա եղած ձեռագրերից ամենահինը որ գտնվում է Մատենադարանում, դա 10-րդ դարի (971) մի պատմական ժամանակագրական ժողովածու է, դրված 358 թերթի վրա, միջին մկրտայան գրչութեամբ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) ձեռագիր № 2679 (102): Թուղթը՝ ինչպես նաև ձեռագրերի մեծ մասի թղթերը, չունեն իրենց վրա ոչ մի դրոշմ, որից կարելի լիներ պարզել թէ որտեղ է այն արտադրվել:

Ինչ վերաբերում է հետագային (այսինքր՝ Սիմեոնի կառուցած գործարանից հետո ընկած ժամանակին), կարող ենք ասել, որ Հայաստանում այլևս թղթի գործարան չի հիմնվել Սակայն արվել է մի փորձ՝ աշխատիսին հիմնադրելու: Այդ փորձը, որ կատարվել է Սահակ ծաղկարար եպիսկոպոսի կողմից՝ իր տեսակի մեջ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում. ահա մի քանի տեղեկութիւններ այդ մասին:

1837 թ. ծաղկարար Սահակ եպիսկոպոսը խնդրագրեր է ուղղում էջմիածնի սինոդին, նոր թղթագործարան, նկարչական ներկերի, կաղնարարական ու այլ անհրաժեշտ նյութերի (պատաշ, նիշաշտա, ժանգառ, լաջվարդ, դրմզի և այլն) արհեստանոց կազմակերպելու համար, (տես ՀՍՄՏ ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատան արխիվային բաժին, Սինոդի անտեսական մասի 1837 թ. նո 9 գործը): Սահակի առաջին խնդրագրի առթիվ Սինոդը իր նույն թվի մարտի 1-ի նիստում որոշում է. «հրամանագրել Սահակայ եպիսկոպոսի, զի նա առ այժմ թողեալ դմեքենայն իւր (թղթաշինութեան) յայանեսցէ Սիւնհոդոսիս, թէ առաջին անգամ որքան դրամք հարկաւո-

րին նմայ՝ առ ի յառաջ ամել դերիս խոտացեալ ի նմանէ նիւթս պատաշի, նաշիշտի և ժանգառի. և այնքան դրամով որքան կարող է պատրաստել դայնպիսիս, զի Սիւնհոդոսս կարացէ յիւրում ժամանակի տրնօրինել ըստ այսմ մասին դարժանն» (Նույն տեղ. թերթ 2):

Այսպիսով թղթագործարանի կառուցման խնդիրը մերժվում է:

Երկրորդ և երրորդ խնդրագրերի քնննութիւնից հետո, որ տեղի է ունենում սինոդի 1837 հուլիսի 16-ի նիստում, որոշվում է լուսարար Բարսեղ եպիսկոպոսին հանձնարարել անհրաժեշտ նյութերը և համապատասխան քանակութեամբ դրամը արամադրել ծաղկարարին և ապա նրան հանձնարարել Ալիքուչակցի Զաքարիային, որը Սահակին տանելու է պղնձանանքը՝ նկարչական ներկերի արտադրութեան համար անհրաժեշտ հանքը որոնելու:

Ութն ամիս անցնելուց հետո, 1838 թ. մարտի 11-ին, Սինոդը նույն խնդրի մասին որոշում է. քանի որ մինչ այդ Սահակ եպիսկոպոսը և լուսարար Բարսեղը գործի հետագա ընթացքի մասին տեղեկութիւններ չեն տվել «որք քուցի իսպառ ոչ մատուցեն Սիւնհոդոսիս ի պատճառս անկատար թողելոյ Սահակայ եպիսկոպոսին զայն առաջարկութիւն իւր, ըստ ինչ-ինչ անակնունելի դիպուածոյ, զգործն՝ որ ի Սիւնհոդոսիս աստ ի մասինս այսմիկ, աւարտեալ համարել յիւրում ժամանակի տալ ի դիւանն վասն պահպանութեան» (Նույն տեղ թերթ 18):

Հետագա մի օրագրից (1838 թ. ապրիլի 22) պարզվում է, որ ներկեր պատրաստելու համար Սինոդի պահանջմամբ պղնձաքար է ուղարկվել Ելիսավետոպոլից՝ Հարութիւն վարդապետի կողմից և հանձնվել է Սահակ եպիսկոպոսին, որն օգտագործելով այն, պատրաստի նյութը հանձնել է տպարանի վերատեսչին:

Ստանալով ծաղկարարի վերջին հայտարարութիւնը՝ Սինոդը բավարարվում է միայն նրանով, որ ծախսված գումարի դիւմաց որոշ արդյունք ստացվել է և չի մըտահոգվել գործը հետագայում առաջ տանելու և զարգացնելու համար:

Մահակ ծաղկարարի ծաղկած կոնդակներին բազմաթիվ օրինակներ մինչև այժմ էլ պահվում են Մատենադարանի արխիվում, որոնց վառ գույները կարող են շարժել ամեն մի նկարչի նախանձը:

Այլերոգ չենք համարում, հավելվածի կարգով ստորև գետեղել ծաղկարարի խրնդրագրերն ու հայտարարությունը, ուղղված Սինոդին, որոնք գտնվում են Սինոդի Տընտեսական մասի 1837 թ. վերոհիշյալ № 9 գործում, թերթ՝ 1, 5, 10, 11, 22:

Այդ խնդրագրերը ցույց են տալիս դեպի թղթի գործարանը և ձեռնարկությունները էջմիածնի ղեկավարության կողմից ունեցած անտարբերությունը, և ծաղկարարի Իսահակ երևանցու կողմից գործադրվող ջանքերի անպատասխան մնալը:

Հրապարակվող փաստաթղթերը հետաքրքիր են նաև այն տեսակետից, Վոր մատնանշում են թղթի պատրաստման համար 19-րդ դարու առաջին կեսում գործադրվող նյութերի, ինչպես նաև երևանին մոտ գտնվող պղնձի մազանները և այլ քարահանքերի մասին:

I

Սրբազան սիւննոգոսի լուսավորչեան աթոռոյ Կաթողիկէ էջմիածնի, ի ծաղկարարի Իսահակ եպիսկոպոսէ Մահտեսի տէր Գրիգորեան երևանցւոյ.

Խ Ե Ղ Ի Բ

...Ո՛վ սրբազան Հարք. ձեզ քաջ յայտնի են աշխատանք իմ, և դանազան ծառայութիւնք, որ ի մանկութենէս սրբոյ Աթոռոյս և աւուրց յաւուրս յաւելորդութիւնք իմոյս պատշաճեալ գործոց շնորհիւն աստուծոյ: Ըստ իմս կարեաց, որպէս գյօրինելն զնորանշան թուղթս, զպատաշ ասացեալ սպիտակ աղն՝ վասն լուսացման գրեանց տպարանի, զնշտայն՝ պիտանացուն կազմարարի, զսոսինձն՝ վասն կցանի կոնդակաց, զգալամի ժանգառն՝ վասն ծաղկարարութեան, նմանապէս զղրմզն և զաջիվար-

զըն. և շնորհիվ սուրբ հոգոյն Աստուծոյ տակաւին գոն յիս այլ և գաղտնի պիտանացու գիտելիք արհեստին իմոյ և օգտաւէտ ոմանց, զորս չեմ եղեալ յայտնի ի գործ. իհարկէ, պարագայք սորին գրամով բերին ի ձեռս. զի ինքեանք են ծանրագին յոյժ և նիւթք իւրեանց դիւրագին:

Ապաքէն եթէ նորին բարձր սրբազնասուրբ օծութիւն և ձերդ սրբազնութիւն բարեհաճեացին առ այսօսիկ հրամայեցէ՛ք իմում նուաստութեան, յաղագս նորոգ յօրինելոյ դիւրին ձեով զգործարանս թուղթահանութեան. զի պլան այսր գործարանի ունիմ պատրաստի ի ձեռս. քանզի դաւելորդ հատեալսն ի մամլոյ՝ որք իբր անպիտան արտաքս ընկենուն կազմարարք, կամ փակեթք բարեազրաց և կամ անպիտան բարեազիրք և տուժարք, որ յոմանց ի հուր արկանեն, յոմանց արտաքնոցն թափին և յոմանց տուեալ լինին վաճառանոցըն, արդ շնորհիւն Աստուծոյ կարող եմ զայնոսիկ միանգամայն պիտոյացուցանել և յարգել շինելով զնոսա պիտանի թուղթըս և մուխավայս (խաւաքարտ, կարդոն), վասն զանազան գրեանց տպարանի: Ահա ծաներո՛ւք և տեսէ՛ք. սակայն յայտնեացի եզրակացութիւն խնդրոյս ձերում բարձր սրբազնութեան. զի եթէ բարեհաճես՛իք ի հարկէ ծախսն սոցա պարտի ի գանձարանէ սրբոյ Աթոռոյս լինել:

Այլև խնդրեմ այնպէս ստորագրեալ հրամայեալիք իմումս նուաստութեան, որ ոչ հիւսն կամ վարպետք և կամ միաբանք զանազան խօսակցութեամբ ասիցեն թէ՛ մեք քան զնա լաւագոյնս կարող եմք յօրինել. ապա թէ ոչ յայնժամ թուլասրտեալ փոխանակ հետեւելոյ յետս նահանջիմ և լինիմ այսին կատականաց և նշաւակ բազմաց ըստ տերունեան առածին թէ՛ այրս այս կամեցաւ աշտարակ շինել և այն. քանզի որպէս օգուտ գործարանիս փառք են և պարծանք սրբոյ Աթոռոյս և ձերդ սրբազնութեան, ի հարկէ և նմանապէս և ամօթանք: Ահա ընտրեցեք զբարին յամանս բարիս, զխոտանն ի բաց ընկեցեք. ծաներո՛ւք և տեսէ՛ք և վայելին ձեր աստու-

ծով զօգուտ գործառնութեանս, յուսամ յԱստուած զուարճասցիք մեծով շնորհակալութեամբ և բերկրեսցիք անպատուժ խնդութեամբ ի հոգի և ի մարմին ընդ քրքիստոսապսակ պառական գլխով մերով, որում ընդ ձեօք տացէ տէր Աստուած կեանս և խաղաղականս յաշոգութեամբ և բարեբախտութեամբ ի ցնծութիւն մեր և ի պարծանս Հայկազեան սեռիս:

Մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հնազանդ ծաղկարար Իսահակ նուաստ եպիսկոպոս Մահաէսի տէր Գրիգորեան Երևանցի:

№ 8
1837 փետրվարի 12
ի Սենեակն իմ

II

Սրբազան Սիւնհոգոսի գերագահ Մայր Աթոռոյ կաթողիկէ էջմիածնի. ի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ Մահտեսի տէր Գրիգորեան Երևանցւոյ:

Ամենախոնարհ խնդիր:

1837 ներկայ թուոջս ի 12 փետրվարի 8 համարաւ խնդրամատոյց եղէ գրաւորութեամբ սրբազան Սիւնհոգոսիդ վասն հրբամայիւոյ իմում նուաստութեան յօրինել նոր ինորոյ գործարանս թղթահանութեան դիւրին ձևով. ըստ որում պլան սոյն գործարանիս ունիմ պատրաստի ի ձեռս, նրմանապէս զպատաշ ասացեալ սպիտակ աղն զնշշտայն և զայլ հարկաւօր պիտանացութիւնս, ի նուաստութենէս յօրինեալս. որպէս օգտաւետութիւնք սոցա ցուցանէն ի նախկին գրութիւնէս, զի նիւթք սոցա են դիւրազին, բայց ինքեանք ծանրագին:

Քանզի՞ մինչև ցայսօր կամ անբավական ի խնդրագրոյս և սպասու Ձերում հրամանի, ահա ժամանակն է արդէն զնելոյ ի գործ և սկսելոյ զպլան սոյն գործարանիս. կամ միւս դեղորայքն՝ որ առաւել ևս են հարկաւօրք (ճաներուք և տեսք.) որոց ժամանակն յօրինելոյ, այս 3 ամիսն է, որոց մինն էանց. եթէ 2 ամիսն ևս անցանի, որ ջերմային աւուրքն են, սոքա այլ ոչ ևս յառաջ գան և տարին բոլոր՝ զուր անցանի, ի վերա մեր. թէ պատաշն թէ նշշտայն, սոնպէս միւս դեղորայքն են:

Վասնորոյ խնդրեմ խոնարհարար եթէ կամք Ձեր բարեհաճին մերում խնդրոյ՝ չյամեցուցանել ևս յայս նուագ իրրև զառաջինն պատասխան սոյն գրոյս:

Այլ և խնդրեմ խոնարհարար զՁեռն Վասն կապուտակ և կանաչադույն քարանցն լաջիվարդի, որ ասի բազաշխի, որ գտանն սոքա ի պղնձահանքին Երևանայ. թէև այժմ ոչ բանի մատենն նորայ, սակայն գիտեմ հաւաստեալ, որոց ջուհարն կուտակեալ կան ի հին ժամանակէ մերձ առ մատենն պղնձահանքի, որոյ օգուտն տեսեալ եմք՝ ևս ծառայ Ձեր, յաւուրս լուսահոգի Հայրապետին Եփրեմայ բազմաւ աշխատութեամբ իմով՝ շահեցի սրբազան Տեառն իմոյ և շահեցա ի նորին սուրբ օծութենէն. վասն որոյ՝ ասեմ մին լաւ բնագէտ կտրիչ թուանկչի, հանդերձ ամենայն պարագաիւք, և քանի մի թուման վասն ծախուց նորին, տուք ինձ և առ աղա Մատթէոսն Մէլիք Աբրահամեանն Մէլիք Աղամալեանց, գրեցէք որ ինքն ևս՝ իւր սպասաւօրքն զա ընդ իս ի մատենն իւրեանց՝ յաղագս ցույց տալոյ զտեղիս մատենին—գնամ որոնէմ ի մեջ կուտակացն այնք ջնէրին պղնձոյ—Տեսէք յայնժամ ողորմութեամբն Աստուծոյ թէ քանի՞ օգտաւետ բանս բերալ ընծայեմ Ձերում սրբութեանն, օգուտ և պարծանք Սրբոյ Աթոռոյս և մեզ և այլն:

Ծաներուք և տեսեք.

Հաւատացէք Աստուած կենդանին, քանի որ տեսանում եմ զկոտորական թղթոց ցիր և ցան թափեալ աստ և անդ, այնպէս եմ համարում թէ իմ շորերն են հանեալ թափեալ աստ և անդ. հրամայեցէք ինձ ևս ըստ նմանութեան պարոն Յովսէփ Տուլայոյլին, որ նա իւր մտացածին բանքն՝ օգուտ տէրութեան և Ձեր ևս ցուցանէ, և վասն այնր՝ ընկալնու նա բազում շնորհակալութիւն հանդերձ պարգևօք:

Եթէ մինն ոչ կորուսանեմք վասն տասին, տասն ի միասին որ գտանեմք. 1817 ամին մինչ լաւն յօրինեցի լաջիվարդ, գրեցի այս բանն ի վերա նորա. Չառն դատրի՞ զարկեար բիւլը. որ նորին սուրբ օծութիւնն ուրախացեալ ի վերա այսք բանին, շնորհեաց ինձ ոսկեայ տուփ մի մինալու և 5 կալտուզ ոսկի, վասն որոյ՝ ետու պղնձա-

հանքի վերակացու Ղազար անուն ուսնին, ծառայի հանգուցեալ Մէլիք Սահակի, մին թուաման, մին չախու՛ և մին ծաղկեաց փեշկիր, որ մինչ կտու նմա նշան այնք քարին երևր զանազան տեսակ քարինս ի պղնձոյ մատանիցն, և ես բազում տքնութեամբ ի գլուխ հասուցի լաւն, որոյ դրամն հինգ սիալով, 10 դրամ կտու թեքիրտաղու Առաքել եպիսկոպոսին, որ 100 դրամ խնդրեաց յինէն, 10 կտու վասն ոչ պակասելոյ մերն. և շատ փոշման եմ, որ ոչ կտու նմա հարիւրի կէսն ինչ և իցէ՛ վասն բազումն գտանելոյ կորուսի այն ժամանակին դմինն, որ գտի բազումն. դեռ կա՛ կորուսանում եմ վասն զանազան բանիցն հնարս գտանելոյ, և յուսամ թէ գտանէմ. որպէս վասն Արմզին, թէ որ չափ եմ կորուսեալ, ինձ է յայանի և գտի վասն բազմաց զմեծագին մատանին, որ վայելեալ օրհնեմ գտուողն ամենայն բարութեանց և զանգին կեանս նոցին, որ կամեցան զիս վարձատրել. եթէ օգնէք ինձ այժմ, և Ձեզ ևս օրհնեմ ընդ տուօղին բարութեանցն ամենից: Եմ և մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հնազանդ ծառայ Ձեր և սրբոյ Գահոյս՝

Ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս Մահտեսի տէր Գրիգորեան Երևանցի

Համար 60:
1837 յունիսի 23
ի Սբ. Էջմիածին:

Վասն թղթահանութեան, նոր տեսակ չարխ մի թեթև ձևով թէ կամիք, շնորհեցէք հրաման ըստ նմանութեան Ղահրայի կամ նման չղրիսի շինել տամ և բանեցնող նորին պատրաստի ունիմ քեալաշ Յակօն, որ ձեռամբ պատելով բանի դինկն: Ըստ պատմութեան աղա Յակօր Շահան Զրպետեանին որ ասաց ցիս, մինչ էի ի քաղաքի անդ ի Տփլիս՝ թէ Փարէժ քաղաքումն ոչ գոյ մուրացիկ բնաւ. ամենայն ոք թէ կոյր, թէ կաղ թէ անդամալոյժ և այլ այնպիսիք են ընդ իշխանութեամբ և գործեն իւրաքանչիւրն զանազան գործս վարձով, թէ այր և թէ կին, որոյ տպեալ գրքէն ունիմ օրինակեալ այժմ պատրաստի վասն տեսութեան հարկաւոր անձանց յաղագս դործ դնելոյ մերս աշխարհի կոյրքն, կաղքն և այլքն վասն փա-

ռաց տեսան պարծանք աշխարհի և տերութեան, և վասն ոչ տալոյ ձանձրութիւն ժողովրդոցն, որ դոնէ ի դուռ մուրացկան լինելով, ամաչեն ինքեանք և ամաչեցուցանէն նոցա որ ոչ կամին տալ ողորմութիւն. և նոքա արանջալով շրջեն աստ և անդ. եթէ այնպիսեացն այսպէս ծառայութեան մէջ կացուցանել լինի, մեծ ողորթիւն է համարելոյ, որ ոչ շրջեն և ոչ տիրասէրքն մնաս տան այնպիսեացն. Այսքանս Ձերդ սրբազանութեան բաւեսցի վասն օգտի և պարծանացն սրբոյ Գահոյս:

Խ.Մ.Մ. Իս. Ե

3

Սրբազան Սիւննոգոսի լուսավորչեան Աթոռոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի. ի Ծաղկազարդ Իսահակայ եպիսկոպոսէ Մահտեսի Տէր Գրիգորեան Երևանցոյ

Ամենախոնարհ խնդիր,

Յաղագս բազմահրաշ օգտաւետութեանցն ասեմ, զոր խնդրամատոյց եղէ երկիցս անգամ. — Առեք հինգը լիտր Ղալատաշի վասն պատաշին. կամ երեք լիտր լաւն, որ ձանաչէ Բօյաղչին:

Հինգ լիտր լաւ սպիտակահատ ցորեան ջրովի և ոչ դէմի. վասն նշտային: Երեք կտոր կարմիր պղինձ. վասն դալամի ժանկառին, որ ամէն մին կտորն մի ձեռաց չափ լայնութիւն ունենայ, նոյն չափովն երկայնութիւն լիցի. թանձրութիւնն՝ մուխաւայի նման լինի. և վասն սորա երեք չարեք թունդ քացախ. և մին լայնաբերան բղուղ վասն քացախին. թէ լայնաբերան շիշայ լինէր երեք հատ առաւել ևս լաւ էր. յաղագս յօրինելոյ զժանկան:

Մէկ իստիլ ձկան սոսինձ սպիտակն, որ ասէն պալիս թութխալի. վասն կոնդակաց կցանին:

Սոցա որն աստ գտանի տուք ինձ, և որն ոչ գտանի, Երևանու բերել տուէք:

Յաղագս կապոյտ և կանաչ քարանցն ասեմ, որ ելանէ ի հանքս պղնձոյ՝ որոց օգուտն զեր ի վերոյ է թէ սրբոյ Աթոռոյս և թէ՛ վասն բազմաց, որոց փորձս գիտեմ շնորհիւն աստուծոյ լաւացուցանելոյ և պիտոցուցանելոյ:

Վասն այսր քարանց՝ հանձնեցէք զիս պարոն Զաքարին, որ բնակի ի յԱլիքուչակնա գիտելով զտեղիսն հանքաց, խոստանա տանել զիս անդ՝ յաղագս որոնելոյ, որ ըստ պատմութեանս գովէ նա զտեղիս կուտակալ ջուհարիցն պղնձոյ գոյն զգոյն քարանցն որք են անդ:

Վասն այսր տուք ինձ ի գանձարանէն երեք թուաման մանր փող դնամ որոնեմ, ըստ յաջողելոյն աստուծոյ որքան կարողանամ ձեռք բերեմ, թէ մնասցէ դրամն՝ տամ Ձեզ, թէ պակասի տուք ինձ. և ի գնալս հրամայեցէք տալ ինձ հանդարտ երբևար մի լավ երիշով և պաշար և՛ թէ կամիք. ապա թէ ոչ այն եղիցի ի կամս Ձեր. գիտելով Ձեր այս քանս վասն օգտի և պարձանաց սրբոյ գահւոյս և արժանընտիր գահակալի Մայրութեան սորին և Ձեր, ողջ լիբուք հանապազօր վասն մեր:

Մնամ յամենայն սրտէ ջանադիր ծառայ սրբոյ գահւոյս խոնարհ ծաղկազարդ եպիսկոպոս Իսահակ Մահտեսի Տէր Գրիգորեան Երևանցի:

Համար 65,
1837. յուլիսի 14.
Ի սենեակն մեր:

4

Ի լուսավորչական Հայոց Սիւնհոգոսն էջմաձնի ի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ:

Յայտարարութիւն:

Ըստ հրամանի անդամոյն Սիւնհոգոսի բարձր սրբազան աւագ լուսարարի Աթոռոյս Բարսղի արքեպիսկոպոսի յաղագս շինելոյ զպատաշ և նիշեստէի զոր և արարեալ մեր հանձնեցաք վերատեսչի տպարանի Աթոռոյս մասնաւոր Յովհաննէս վարդապետի որք են երկու լիտր պաաաշ և չորս խտիլ ինն մըխալ. նիշեստէն երեք լիտր և կիս չայրէք. և զծախան այսոցիկ ընկալեալ եմ ի վերոյ յիշեալ բարձր սրբազնութենէ՝ անդամոյդ ի Բարսղէ արք եպիսկոպոսէ, հինգ լիտր քալայքար, իւրաքանչիւր լիտրն երեք արասով առնէ երեք հազար դիան վեց մշակ՝ իւրաքանչիւրն տասն շահիով նոյնպէս առնէ հազար դիան և չորս կազ տոսլրակացու կըտաւ, կազն մի մի ապասով, ութն հարիւր դիան, զորս ստացեալ եմ ի բարձր սրբազնութենէն վերոյ յիշեալ. և ահա ընդ սմին ներկայացուցանեմ զթուղթ ստացական վերատեսչին տպարանի մասնաւոր Յովհաննէս վարդապետին առ որ խնդրեմ տնօրինութիւն Սիւնհոգոսիդ:

Ի 16 օգոստոսի 1839:
Սուրբ էջմիածնի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս

Պրոֆ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

ԶԵՆՈՒԳՐԱԿԱՆ ՀԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Աստղաբաշխական բովանդակութիւն ունեցող ձեռագրերում մենք հաճախ հանդիպում ենք այնպիսի հատվածների, որոնք նվիրված են արեգակի տեսանելի շարժմանը և դրանից առաջացող տարվա շորս եղանակներին: Հեղինակները տալիս են տարվա եղանակների վերաբերյալ լրիվ տեղեկութիւններ. երբ է սկսվում տարվա այս կամ այն եղանակը, երբ է վերջանում, քանի՞ օր է տևում և այլն: Միաժամանակ նրանք մանրամասն կերպով կանգ են առնում նաև ցերեկվա և գիշերվա տեվոդութիւն փոփոխման վրա և նշում են այդ՝ յուրաքանչյուր ամսվա համար: Սակայն այս հարցը նրանք շոշափում են ոչ միայն Հայաստանի պայմանների համար: Այդ տեսակետից մենք ունենք երկու շատ հետաքրքրական հատվածներ:

1) Հեղինակներից մեկը «յադագս. Չորս յեղանակաց տարվա» գլխում, գաղափար տալով տարրեր աշխարհագրական գոտիների (այրեցեալ, բարեխառն) մասին, բարեխառն գոտուց դեպի հուսիս ընկած երկրների մասին արտահայտվում է լայնապես՝ «Եւ որ յայս է-եանս¹⁾ յայն կուտէ ի կողմանս հիւսիսոյ, ի սաստիկ ցրտոյն, և ի սառնամանեացն. անբնակ ի մարդկանէ և ըշտեմարան և տեղի է ցըրտոյն և սառն օդոց և հողմոց»:

¹⁾ է-եանս — այստեղ պիտի հասկանալ բարեխառն գոտի:

Այս փոքր հատվածից պարզ երևում է, որ հին դարերում ևս աստղաբաշխները ընդունել են, որ բարեխառն գոտուց դեպի հյուսիս ընկած երկրները հանդիսանում են «ցրտոյն և սառն օդոց և հողմոց ըշտեմարան»: Բարեխառն գոտուց հյուսիս ընկած երկրամասերը հանդիսանում են Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը և այն, որ ներկայումս ընդանուր բառով անվանում ենք «Арктика»: Ըստ ժամանակակից տեսութիւնների՝ Արկտիկան իրօք հանդիսանում է ինչպես ընդունված է անվանել «погреб холода» կամ «кладовая погоды»:

2) Է՛լ ավելի հետաքրքրական է մի այլ քաղվածք, որը մենք տալիս ենք Հովհաննես Երզնկացու աշխատութիւնից:

«Իսկ առ մասին՝ եւթնաբաժին հիւսիսական տիւր և գիշերքըն փոփոխին՝ ժամուրք քըսան երբեմըն տիւրն՝ այսչափ աճյալ երկարանան իսկ գիշերոյն՝ ժամք մինչ՝ ի չորսըն նուազանան ևւ որ ՚ի յայն՝ կոյս աշխարհին՝ հիւսիսական այն անբնակ ՚ի մարդկանէ՝ և ցըրտական ի յեղանակ՝ գարնանային և ամառան ամիսըս վեց՝ միշտ ի տեղի՝ անդ տիւ մընան: Զի ի խոյէն՝ մինչ ի կըշիւ ընդ կերպ աշնան արեգականն՝ է բարձրութի հիւսիսական

Ոչ գոյ տեղի ընդդիմակաց՝ գեր ամբարձման առնել ընդդեմ՝ շուք և ծածկոյթ ըստուերական ևւ ի յաւուրս աշնանային և ձըմերան միշտ անդ գիշեր՝ ամիսըս վեց

երկարանան Ձի առ հարաւ ցածանալով՝ արեգականն ոչ ժամանէ անդ առ նս լուսոյն ծագման»:

(Ձեռագիր № 7046, էջ 313):

Թեև Հովհաննես Երզնկացու այս աշխատությունը՝ «նորին դարձեալ յաղագս երկնի» վերնագրով՝ տպագրված է կղել 1792 թ. Ն. Նախիջևանում (Մատենադարան, գրադարան, № 331 էջ 36) բայց և այնպես ուշադրություն չի դարձվել այս կարևոր հատվածի վրա:

Այս հատվածում հեղինակը խոսում է մի շատ հետաքրքիր երևույթի մասին, այն է՝ բարեխառն գոտու հյուսիսային երկրում գարնան և ամռան ամիսներին ցերեկվա տևողությունը կարող է հասնել մինչև քսան ժամի, իսկ գիշերվանը՝ միմիայն չորս ժամի և ընդհակառակն: Բացի դրանից, ավելի դարմանալին այն է, որ հեղինակը ամենահուսովոր հյուսիսի մասին, որը, նրա կարծիքով «անքնակ է ի մարդկանէ և ցրտական», և որը, ըստ մեր ժամանակակից հասկացողության հանդիսանում է արկտիկան, որտեղ տարվա ընթացքում լինում է միմիայն մի գիշեր՝ սկսած սեպտեմբերի 22-ից մինչև մարտի 21-ը (աշնանային գիշերահավասարից մինչև գարնանային գիշերահավասարը) և մի ցերեկ սկսած մարտի 21-ից մինչև սեպտեմբերի 22-ը (գարնանային գիշերահավասարից մինչև աշնանայինը)—տալիս է շատ ճշգրիտ պատկեր. «զի եղանակ գարնանային և ամառան ամիսըս վեց միշտ ի տեղի անդ տիւ միան» և «եւ յաւուրս աշնանային և ձըմերան. միշտ անդ գիշեր ամիսըս վեց երկարանան»:

Չբավականալով դրանով՝ հեղինակը տալիս է նաև հարցի աստղաբաշխական հիմնավորումը. «զի ի խոյնն մինչ ի կըշիւ ընդ կերպ աշնան արեգականն՝ է բարձրութի հիւսիսական»:

Հին դարերում արեգակը մարտին մտնում էր Թոյի կենդանակերպը, որը և համարվում էր գարնան սկիզբ, իսկ երբ արեգակը սեպտեմբերին մտնում էր Կշիոի կենդանակերպը, այդ համարվում էր աշնան սկիզբ¹⁾:

¹⁾ Ներկայումս, շնորհիվ պրեցեսիայի երևույթի գարնան սկիզբ համարվում է արդեն, երբ արեգակը գտնվում է Ձկների կենդանակերպում:

Պետք է գիտենալ, որ առհասարակ գիշերահավասարի օրերին՝ արեգակը, հատելով երկնային հասարակածի զիծը, երկնային մեկ կիսագնդից անցնում է մյուսը. գարնանային գիշերահավասարի օրը՝ հարավայինից դեպի հյուսիս, իսկ աշնանայինին՝ հյուսիսայինից դեպի հարավ: Այս փոքր բացատրությունը հնարավորություն է տալիս պարզ պատկերացնելու հեղինակի արտահայտությունը: Մտնելով Թոյի համաստեղությունը գարնանային գիշերահավասարի օրը՝ արեգակը հարավային կիսագնդից տեսանելի շարժումով անցնում է հյուսիսայինը և իրոք նրա «բարձրութի հյուսիսական» է մնում, մինչև որ նա նորից, աշնանային գիշերահավասարի օրը, մտնելով Կշիոի կենդանակերպը, կտրում է երկնային հասարակածը և հյուսիսային կիսագնդից անցնում է հարավայինը: Հեղինակն այդ բանը նկարագրում է այսպես «զի առ հարաւ ցածանալով արեգականն ոչ ժամանէ անդ առ նս լուսոյն ծագման»:

Եվ իրապես, հյուսիսային մերձբևեռային տեղամասերում, աշնանային գիշերահավասարի օրվա արեգակնային մայրամուտից հետո արևը այդ տեղերում չի գիտվում մինչև գարնային գիշերահավասարի օրը:

Նման ճշգրիտ և պարզ պատկերացում բարեխառն գոտու հյուսիսային երկրների վերաբերյալ XIII-րդ դարի հեղինակ Հովհաննես Երզնկացին կարող էր ունենալ լավ ծանոթ լինելով առեվտրականների ճանապարհորդություններին, որոնք հասնում էին մինչև Ուրալյան լեռնաշղթայի երկրամասերը: Բայց և այնպես մեզ համար կարևորն այն է, որ Հովհաննես Երզնկացին կարողացել է ըմբռնել ոչ միայն այդ երկրներում տիրող պայմանները, այլ նաև տվել է ավելի հյուսիս ընկած Արկտիկական և բևեռային երկրամասերում տիրող պայմանների ճշգրիտ և իրական պատկերն ու նրա գիտական բացատրությունը, թեև սրա մասին նա ճանապարհորդական նկարագրություններից ոչինչ վերցնել չէր կարող:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊԹԱՆ

ՄՈՆՂՈՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻ ԳՐԱՎՄԱՆ ՏԱՐԵԹՎԻ ՃՇՏՈՒՄԸ

Հայ բանասիրութեան մէջ, մեր պատմիչների հաղորդած տեղեկութիւնները սխալ հասկանալու հետեանքով, Անիի Մոնղոլների կողմից գրավելու ժամանակը ճիշտ չի թվագրված:

Անիի գրավման տարեթիւնը այդ սխալը պատճառ է Չամչյանից, որը միանգամայն կամայական մոտեցում է ունեցել մեր միշտ պատմագիրների կողմից տված տեղեկութիւններին և Անի քաղաքի գրավման տարեթիւնը նշանակել է 1239-ը:

Չամչյանը գրում է. «Իսկ մեծ իշխանն Չարմաղան առեալ ընդ իւր զիշխանսն հայոց զԱւագ և Վահրամ խաղաքադմութեամբ զորաց ի վերայ քաղաքի Անույ, և մինչև հասեալ էր անդր առաքեաց զեսպանսն առ վերակացուս քաղաքին զալ ի հնազանդութիւն իւր, եւ տալ զքաղաքն»:

Նոքա ետուն պատասխանի և ասեն. այս քաղաք շահն-շահին է, որդւո Չաքարեայ, առանց նորա հրամանի ոչ կարեմք առլուն տալ զսա, և ոչ ևս մտանել ընդ իշխանութեամբ օտարի: Եւ ի դառնալ անդրեն զեսպանսն ուսմիկք քաղաքին հարձակեալ ի վերա նոցա առ ճանապարհս սպանին զնոսա: Չայն իբրև լուաւ և եկեալ պաշարեաց զքաղաքն. և պատերազմե ընդ նմա սաստկութեամբ յոյժ. և մտեալ ի քաղաքն, կողոպտեցին զամենայն ինչս և զզարդս տանց և կրպակաց. և մերկացուցին զամենայն զեկեղեցիս և եղծեալ ապականեցին զքաղաքն» (Չամչեան, Պատմութիւն հայոց 2-րդ մաս, էջ 213):

Չամչյանը իր «Պատմութիւն հայոց» աշխատութեան Մոնղոլների արշավանքների մասը կազմելիս, ինչպես ինքն է նշում օրագործել է Կ. Գանձակեցու, Վարդան մեծի, Մաղաքիա Աբեղայի, Ս. Օրբելյանի և Ս. Անեցու աշխատութիւնները:

Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Չամչյանը բոլորովին էլ ճիշտ չի պարզել պատմագիրների հաղորդած տեղեկութիւնները: Հիշատակված աղբյուրներից և ոչ մեկում կոնկրետ չի նշված Մոնղոլների կողմից 1239 թիւի Անիի գրավման մասին: Վերոհիշյալ պատմիչները իրենց աշխատութիւններում նկարագրելով Գանձակի, Լոռու, Կայեանի, Անու և ամբողջ Հայաստանի նվաճումը մոնղոլական առանձին զորավարների կողմից, բոլոր դեպքերում հիշատակում են, որ այդ վայրերի գրավումները կատարվել է ընդհանրապես 1236 թիւին, իսկ Չամչյանը, հետագայում նրան հետևելով նաև ուրիշները, բավական երկար էքսկուրսիաներ կատարելուց հետո, Անի քաղաքի գրավման թիւնը առանձնացնում են այդ վայրերի գրավման տարեթիւնից, հասցնում այն մինչև 1239 թիւնը: Հայկական սկզբնաղբյուրներն ուշադրութեամբ դիտողը կընկատի, որ Չամչյանը ոչ մի հիմք չի ունեցել 1239 թիւնը նշանակելիս. բոլոր աղբյուրներն էլ խոսում են այդ տարեթիւնից առաջ կատարված գրավումների մասին: Այսպես օրինակ Վարդան Պատմիչի վկայութեամբ Մոնղոլական զորավարներից Չաղատան ստանում

է Լոռի քաղաքն ու իր շրջակայքն, իսկ Չարմաղանն Անին ու Ղարսի շրջանը: Վարդանի տեղեկության համաձայն Չարմաղանի և Չաղատայի կողմից Գանձակի, ինչպես հետագայում և Վրաստանի, Լոռու, Կայեանի և Անիի գրավման տարին հիշատակվում է 1235 (684+551), որից հետո նույն գորավարների գորարանակները շարժվում են դեպի Հայաստանի տերիտորիան, այսինքն և Անի:

«Յաւելեալ յինքն անհուն բազմութիւնքն՝ առաջնորդ ունենալով զՉարմաղանն կոչեցեալ զորապետ, զայ ի Գանձակ շահաստան ի 684 թւին պաշարէ զնա աւուրս մինչև վառնու և կտորէ սնողորմաբար բացի մատաղ տղայոց և ի կանանց, յորս յաճեին: Ապա շարունակում է «Եւ յայսմանէ յոժառեալ մտանն ի թագաւորութիւն վրաց և բաժանեն զան ու Անի տեղիս գաւառցն և դրերդս, Ամուրս մեծամեծ իշխանցն, զորս նուինս կոչէին. որք երթեալք յւերաքանչիւր զղղեակս գաւառացն, զոր վիճակեալ էին և վաղվաղակի մտանեալ լինէին ի ձեռս նոցա ի պատուհաս մեղաց մերոց անչափից: Չաղատան նոինն է առ զյօռէ քաղաք եւ որք՝ յայն ի կողմանէ գաւառք. Դուղուդայ նուինն զԿայեան ամբազույն բերդ, ուստի Անին զԱւագ տէրն երկրին. և մեծն Չարմաղանն զԱնի և զԿարս և զմերձաւորս իւրեանցս» (Վարդան «Պատմութիւն Տրեղերական» էջ 185—190):

Վարդան մեծի պատմածից շատ պարզ երևում է Մոնղոլական հրոսակախմբերի շարժման ուղղութիւնը Գանձակից մինչև Անի, Գանձակ, ապա (Վրաստան), որից հետո Չաղատան մտնում է Լոռի Դուղուտա, նուինն Կանն, իսկ Չարմաղանն Անի ու Կարս: Ծիշտ է Վարդանը կոնկրետ չի նշում Անիի գրավման տարին, նա միայն ասում է որ գրաւեց «Եւ մեծն Չարմաղանն զԱնի և Կարս և զմերձաւորս իւրեանցս» բայց այս հիշատակութիւնից առաջ նա նշում է Չարմաղանի 684 թ. Գանձակ գալու մտին և առանց որևէ թվականի նշելով Մոնղոլական գորավարներին հասցնում մինչև Անի: Եթե Անիի գրավման տարին եղած լիներ Գանձակի գրավումից 4 տարի հետո, ինչպես այդ ենթադրել է Չամչյանը, ապա չէր

կարող Վարդանի նման պատմիչը անտարբերութեամբ անցնել տարեթվային այդքան մեծ տարբերության փաստի կողքով, որովհետև նա Անիի գրավումից հետո կատարված դեպքերը տալիս է ամենայն մանրամասնութեամբ թվերով: Այսպես օրինակ՝ «Արդ վեց հարիւր իննսուն և մի թուին Հայոց Բաշու նուինն իոխեաց զիշխանութիւնն Չարմաղանից և էառ զԿարսոյ—քաղաք» (Վարդ. էջ 193): Բերածից, երկվում է, որ Վարդանը, մի քանի տարիների տարբերության դեպքում, անուշաղիք չէր լինի և անպայման կառանձնացներ Անիի դեպքը: Նա իր ժամանակագրական կարգը, շարադրել է այն սիտեմով, ինչ սիտեմով, որ իրեն սովորեցրել և իր պատմութիւնն է շարադրել նրա մեծ ուսուցիչ Վանական վարդապետը:

Այսպիսով, եթե հավատանք Վարդան մեծի հազորդած ժամանակագրական կարգին, իսկ չհավատալու ոչ մի հիմք չունենք, ապա կարող ենք համարձակորեն ասել որ Անիի գրավումը պետք է, որ կատարված լինի 1239 թվից առաջ: Վարդանն այդ թիվը ուղղակի չէր կարող նշել, որովհետև Անի քաղաքի գրավումը եղել է Գանձակի գրավումից մեկ տարի հետո, նույն Անդրկովկասի մյուս վայրերի (Լոռի, Կայեն) գրավման հետ: Անիի 1239 թվից առաջ 1236 թվի գրավման օգտին է խոսում նաև Մտեփաննոս Օրբելյանը: Նա իր «Պատմութիւն Նահանգին Սիսական» աշխատութեան մեջ—«Վասն մեծի նախարարութեանն Օրբելեանց եթէ ուստի էին...» գլխում—մանրամասն նկարագրելով Մոնղոլների արշավանքները՝ դեպի Ռուսաստան, Բուլղարիա, Հնդկաստան, Պարսկաստան և այլ երկրներ՝ տալիս է դեպքերի ամբողջական մի թվական, որը և մենք կարող ենք համարձակորեն Անիի գրավման տարեթիվը համարել—

«Առին և զԱւրպատական, զԱռան և զՀայաստան, զՎերս և զՀոռոմս. մինչ ի յԱնկիւրիա և ի Գագրա և ի Չմիւռնիա եփեսացւոց, և զԿիլիկիա և ի Գագրա և ի Չմիւռնիա եփեսացւոց, և զԿիլիկիա մինչև ի ծովն Ովկիանու (Միջերկրական) և ի ծովն Պոնտուի ի Տրապիզոն քաղաք... և առին զաշխարհս ի 685 (685+551) թուականին»:

(Ստեփանոս Օրբելյան) Պատմութիւն նահանգին Սիսական էջ 402):

«Զառան և զհայս և առին զաշխարհս» ի 685 թվականին—, տողերը միանգամայն պարզ ցույց են տալիս, որ Հայաստանի Հայոց ամբողջ աշխարհի, գրավումը Մոնղոլների կողմից կատարվել է 685 թվականին, այսինքն 1236 թվին: Կասկածից դուրս է, որ Հայաստանի տերիտորիայից դուրս չէր կարող մնալ այնպիսի մի նշանավոր քաղաք, ինչպիսին որ հայոց նշանաւոր ժայռաքաղաք Անին էր:

Ի միջի այլոց գրեթե նույնն ասված է նաև Սամվել Անեցու տպագիր տեքստում: Սակայն այդ տեղեկութունը Սամվել Անեցունը չէ, այլ նրա շարունակողինը: Այդ երևում է մեր Մատենադարանում գտնված Անեցու ժամանակագրության 1176 թվին ընդօրինակած մի գրչադրից, ուր Անեցու տեքստը հասցված է մինչև ՈՂԲ թվականը (տես № 5613 գրչագիրը):

Վարդան մեծի հաղորդած տեղեկությունից պարզվում է, որ Անիի գրավումը մինչև 1239 թվը չի հասնում, իսկ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունից երևում է, որ ինչպես ամբողջ Հայաստանը, ներառյալ նաև Անին, գրավված էր արդեն 1236 թվին:

Ինպքերին ժամանակակից Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ նկարագրելով թաթարական արշավանքները, որպես զեպքերի ակնատես ամենայն մանրամասնությամբ կանգ առնելով նրանց կողմից կատարած ավերածությունների, անգթությունների, և այլ վայրագությունների վրա, պատմում է դառնացած այն ժասին, թե ինչպես Մոնղոլական հրոսակախմբերը հողին հավասարեցրին հայկական զեղեցիկ քաղաքները, հոյակապ պալատներն ու ամրոցները, անառիկ բերդերը՝ քարուքանդ անելով խաղաղ գյուղերը «ոչ ոքի չլնայեցին, անգթաբար մորթեցին այրեցին ու ավերեցին», արտասուքը աչքերին ողբում է իր ժողովրդի ցավերն ու տառապանքները ցավից ու ահից կծկված պատմիչը:

Նա որպես ակնատես մանրամասն արձանագրում է իր տեսածներն ու լսածները,

սակայն Գանձակեցու աշխատությունն ունի մի թերություն միայն, որ նա չի տալիս զեպքերի կոնկրետ թվականները:

Մոնղոլական արշավանքներն Անդրկովկասում կոնկրետ պատկերացնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում Կիրակոս Գանձակեցու պատմածը բերել որոշ կրճատումներով միայն:

«Զորավարն զնգին հեթանոսաց, որում անունն էր Զադատայ, լուաւ վասն ամբութեան քաղաքին Լուէոյ և յօլովութեան դանձուցն, որ ի նմա էր Տուն իշխանին Շահնշահի և զանձք նորա, առեալ ընդ իւր զընտիր սպառազէսս յօլով մեքենայիւք և ամենայն պատրաստությամբ չոգավ անդ. և նստեալ շուրջ զնովաւ պաշարեաց զնա... Եկեալ թշնամեացն, փորեցին ներքոյ պարսպին և փլեցին զնա, և ինքեանք շուրջ նստեալ սլահէին, զի մի ոք փախիցէ: Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսնե թէ առավ քաղաքն, սկսան մղել ի վախից, և ի ձոր անդր ընտին, և զայն տեսեալ թշնամեացն սկսան և նոցա մտանիլ ի քաղաքն, և կոտորել յանինայ զարս և զկանայս և զմանկունս... Իսկ իշխանն մեծ որդին Իւանէի, զոր Ավագըն կոչէին, իբրև կտեսնայն քաղմութիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամբացաւ և նա ի բերդ ամուր, որ կոչի կայնան... Առեալ զօրս քաղումս եկն պաշարեաց շուրջ զքերդաւն... և առեալ զնա և զմանայն զօրն՝ չոգավ ի վերայ քաղաքին Անույ:

Քաղաքս այս Անի լցեալ էր բազմությամբ մարդկան և անասնաց, և պարսպեալ ամրագոյն պարսպօք. և եկեղեցի բազում կայր, ի նմա, մինչ ի կարգ խօսից երգման այսպէս երգնուին. Անույ հազար և մի եկեղեցին. և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք: Վասն որոյ յղիութիւնն՝ յամբարտաւանութիւն ի կորուստ, որպես սովոր է առնել յիսկզբանց և այսր:

Առաքեաց Զարմաղանն զեսպանս առնոսա գալ նմա ի հնազանդութիւն, և որք գլխաւորքն էին՝ ի քաղաքին ոչ իշխեցին պատասխանի առնել պաղգամին առանց հարցնելոյ զիշխանն Շահնշայ. քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն:

Իսկ ամբոխ քաղաքին և ոսմիկքն սպա-

նին զպատգամաւորսն. և զայն տեսեալ զօրքն աշխարհաց, ի բարկութիւն զրդեցան. և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց, կանգնեցին փրկիլուանս բաղում արուեստագիտութեամբ, և մարտուցեալ ընդ քաղաքին զորեղապէ՛ս առին զնա:

Այլ և ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղան առ թշնամին, զապրուստ անձանց շահելով. և նոցա կոչեալ արտաքս ի քաղաքէն բազմութիւն, խոստացան ոչինչ առնել նոցա չար. և իբրև ելին արտաքս առ նոցա ամենայն բազմութիւնն, բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր ի վերայ եղեալ կոտորեցին առհասարակ անողորմաբար, սակաւ կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստաւորս, զոր վարեցին ի գերութիւն: Եւ ապա մտեալ ի քաղաքն առին զինչսն և զստրացուածս նոցա և կողոպտեցին զամենայն եկեղեցիս, և աւերեալ քանդեցին զամենայն քաղաքն, եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա» (էջ 239-246):

Լոռի-Կայեն-Անի—ահա այն ուղղութիւնը, որը նշված է Գանձակեցու կողմից ճիշտ այն ձեւով, որպիսին ունեն բոլոր նախորդ և հետագա շրջանի պատմիչները: Անիի գրավման դեպքը չի առանձնացված մյուս վայրերի գրավման դեպքերից:

Այսպիսով պատմիչների հաղորդած տեղեկութիւններից պարզ երևում է, որ Անին Հայաստանի մյուս շրջանների հետ միասին գրավված էր 1236 թվին»:

Ներկայումս մեր ձեռքի տակ ունենք ՀՍՍՌ Պետական Մատենադարանի նոր հայտնաբերված ձեռագիր ժամանակագրութիւն Անանուն հեղինակի, որը պարզ հայանում է որ Անին Մոնղոլների կողմից գրավվել է 1236 թվին: Այդ գրչագիրը գտնվում է 8100 համարի տակ: Բովանդակութեամբ ընդօրինակված է 1784 թվին Միքայել և Կարապետ գրիչների կողմից: Ունի հիշատակարաններ 149բ, 153բ, 198 և 194բ, 137ա և 157բ էջերում—չափն է 21. 15, կաշեկազմ, և ձեռք է բերվել Մատենադարանի կողմից 1939-40 թվին: Ժամանակագիրը կարևոր տեղեկութիւններ է տալիս Հայաստանում կատարված մի շարք կառուցումների մասին (Հոփսիմի կառուցումը Կոմիտասի կողմից,

Անիի կաթողիկէի կառուցումը և այլն), տարբեր ժամանակներում եղած արշավանքների (Արարներ, Սելջուկներ և Մոնղոլներ) մասին, արժեքավոր տեղեկութիւններ Դեմետրիի Գորգու և Թամարայի թագավորութիւն շրջանի վերաբերյալ և այլն:

Ամենայն հավանականութեամբ, այս Անանուն ժամանակագրութիւնը մի փոքրիկ հատված է մեզ համար անհայտ մի հեղինակի ամբողջական աշխատութիւն: Թեև ժամանակագրութիւնը զգալի մասը, ինչպես պարզվում է համեմատութիւնից արտագրութիւն է Կիրակոս Գանձակեցու և Ս. Անեցու աշխատութիւնների առանձին գլուխների, այնուամենայնիվ նա իր մեջ պարունակում է Մոնղոլական շրջանի վերաբերյալ բավական ինքնուրույն արժեքավոր նյութեր, որը մեզ հնարավորութիւն է տալիս պարզելու այդ շրջանին վերաբերվող մի շարք հարցեր:

Ներկա ձեռագրերում մեզ հետաքրքում է Մոնղոլների կողմից Անիի գրավման տարեթիվը՝ որովհետև մեր նպատակն է ներկա գտնված անանուն ժամանակագրութիւն հաղորդած տեղեկութիւն հիման վրայ ցույց տալ որ մինչև օրս սխալ է մեկնաբանվել, ավելի շուտ հասկացվել, Ս. Օրբելյանի, Կ. Գանձակեցու, Վարդան մեծի, ինչպես և ուրիշների տված տեղեկութիւնները Անիի գրավման մասին:

Պետական Մատենադարանի 8100 համար ձեռագրի 245ա էջում ասված է ՈԶԵ (685+551=1236) թվին անառիկ բերդն, որ կոչի Կայեն, և Լոռի քաղաքն և յԱնի մայրաքաղաքն հայոց, զաւտոբ և անառ բերդօրեայք և քարայք անժուտ Մայրիք ի միում ամ առանձն ¹⁾ (ընդգծումն իմն է Վ.Հ.), և կոտորեցան անհամար և անթիվ արք և կանայք և մանկունք. և ով կարէ պատմել զնեղութիւնս և զտառապանս զոր էհաս մեզ յանողորմ ազգէն նետողաց՝ որպես ասաց սուրբ Հայրապետն Ներսես՝ տեսեալ հողոյ ակամբ ի ժամանակին իւր և ասէ. քակեսցին հայք ի հիմանց յազգեն նետողաց, զատարկացի՛մ ճանապարհք բազմազնաց առ ի զգոյշ մարդկանս: Եթե

¹⁾ Բնագրում ասված է արան:

ուշագրությամբ դիտելու լինենք ժամանակագրության այն տողերն ուր ասված է «ՈԶԵ ԹՎԻՆ , անառիկ բերդն, որ կոչի կայեան, և Լոռէ քաղաքն, և յԱնի մայրաքաղաքն հայոց... ի միում ամ ասան» ասլամեզ համար միանգամայն պարզ կդառնա, որ այդ բոլոր վայրերի գրավումը եղել է մեկ ասարվա ընթացքում միաժամանակ և այդ տարին ՈԶԵ ԹՎԻՆ աշխնքն՝ 685+551, որը հավասար կլինի 1236-ի:

Այսպիսի որոշակի ցուցում Անիի գրավման թվի մասին չունեն ոչ Կ. Գանձակեցին ու Ս. Օրբելյանը և ոչ էլ Վարդան մեծն ու Ս. Անեցին:

Վերոհիշյալ պատմիչների մոտ մենք հանդիպում ենք այդ վայրերի գրավումների նկարագրությանը գրեթե նույն հաջորդականությանը: Նրանք բոլորով էլ տեղյակ են Լոռու, կայենի և Անիի գրավումներին և նրանցից ոչ մեկը այդ վայրերը չի շփոթում մի ուրիշ վայրի հետ, նրանք են այնպես, ինչպես որ տալիս է այդ Անա-

նուն ժամանակագիրը: Միաժամանակ նրանց բոլորի վկայություններից երևում է, որ այդ վայրերի գրավումները եղել է մեկ տարում, որ «փոթորկվող մրրիկի նման» Հայաստանի վրա արշավող մոնղոլական հրոսակախմբերի լուրջ դիմադրություն կակմակերպելու համար Հայաստանը ոչ մի սեռ ուժ չուներ և նրա քաղաքների ու բերդերի բնակչության կողմից կազմակերպված ամեն մի դիմադրության փորձ անմիջապես ջարդվում էին իրար հետևից գրոհող Մոնղոլական հեծյալ բանակների կողմից:

Պատմիչների վկայությունից, ի տարբերությունների կանանուն հեղինակից, միայն մի բան է պակասում, դա ՈԶԵ-ն է, որը չի նշած որպես Անիի գրավման տարեթիվ:

Մեզ թվում է, կոմենտարիաները ավելորդ են, եզրակացությունը ներկա անանուն ժամանակագրությունից հետո պարզ է: Անին Մոնղոլների կողմից գրավվել է 1236 թվին:

Վ. ԱՅԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՄԵՐՁԱԿԱՑՔԻ ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ.

Հայկական և Անատոլիական լեռները կովկասյան լեռնաշղթայի հետ միասին հանդիսանում են Եվրոպա-Ասիական կամ այսպես կոչված Միջերկրական ծովի (Средиземноморский) երիտասարդ արագոնիկ ակտիվ շերտի այն հանգույցը, որը այդ շերտի արևմտյան Ալպյան գոտին միացնում է Միջին Ասիայի և Հիմալայան լեռների արևելյան գոտիին:

Ըստ Մոնտեսսյու դե Բալլորի (Bernard Montessus de Ballore 1851—1923) հաշվումների՝ աշխարհի բոլոր երկրաշարժների 53,5 տոկոսը կենտրոնացած է նշված շերտում և 41,08 տոկոսը խաղաղ օվկիանոսյան կամ այսպես կոչված հնդկա-ճապոնամայայան շերտում:

Գտնվելով Եվրոպա-Ասիական գոտու ամենաակտիվ երկրաշարժային հանգույցներից մեկում, Հայաստանը և ընդհանրապես Փոքր Ասիան ու Անդրկովկասը դարեր շարունակ բազմիցս ենթարկվել են երկրաշարժների անեղ ցնցումների, որոնք երկրին պատճառել են մեծ ավերածություններ ու աղետներ:

Բազմաթիվ անգամներ ավերակների կույտի են վերածվել Հայաստանի, Անդրկովկասի ու փոքր Ասիայի խոշորագույն քաղաքները, որոնց թվում Երզնկան, Դվինը, Անին, Դարալագյազը, Շամախին, Թավրիզը, Երևանը, Վանը և այլն:

Երկրաշարժների ավերածությունները իրենց արտահայտությունն են գտել ժա-

մանակի հայ պատմիչների աշխատություններում, ժամանակագրություններում և գրիչների հիշատակարաններում, որոնք՝ իր ժամանակին չկարողանալով այլ բացատրություն տալ հանկարծակի վրա հասնող այդ սարսափելի աղետներին՝ համարում էին այն՝ որպես պատիժ՝ իրենց «ծովացյալ մեղքերի համար»:

1840 թվի Արարատյան կատաստրոֆիկ երկրաշարժը իր վրա բեվեռեց մի շարք գիտնականների ուշադրությունը:

Գերմանացի ճանապարհորդ Մորից Վադները մի քանի օր Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ անց է կացնում Արարատ լեռան լանջին, որտեղ կործանվել էր Ակոուի մեծ ու հարուստ գյուղը իր բոլոր բնակիչներով, և ուսումնասիրում է երկրաշարժի պատճառները:

Այդ երկրաշարժը գրավում է նաև գիտնական Աբելխին, որը սկսում է ուսումնասիրել կովկասի և Հայաստանի երկրաբանական շերտավորումը, նրանց տեկտոնիկ դժերը, միաժամանակ հավաքում է երկրաշարժների վերաբերվող փաստեր, նյութեր՝ ոչ միայն կովկասի, այլ և հարևան Փոքր Ասիայի, Պարսկաստանի նկատմամբ՝ աշխատելով պարզել նրանց կապն ու փոխազդեցությունը:

19-րդ դարը հանդիսացավ ընդհանրապես սեյսմոլոգիական գիտությունների՝ խորնոլոգիական, աշխարհագրական, շրջանային և պատմական հատալոգների զարգացման դարաշրջան:

Պերրեյը (Alexis Perrey 1807—1882) Ծրանսիայում, Մալլեն (Mallet 1810—1881) և ապա սեյսմոլոգիայի ակնառու զեմք Միլնը (John Milne 1850—1913), Անգլիայում, Ռոսսին (Rossi, Michele Stephano, 1834—1898) և Մերկալլին (Mercalli 1850—1913) Իտալիայում, Օմորին (Fusakichi Omori, 1868—1923) Յապոնիայում, Գալիցիանը Ռուսաստանում, Ֆուկեն, Մոնտեսույու զե Բալլորը, Էդուարդ Զյուսսը և ուրիշները բնագիտական այլ գիտությունների բարձունքին հասցրին սեյսմոլոգիական գիտությունը։ Իրանցից Պերրեյն առանձին ուշադրություն էր դարձնում երկրաշարժներին վերաբերվող փաստերի հավաքմանն ու ուսումնասիրությունը։

Ռուսաստանում համեմատաբար ավելի ուշ է սկսվում պատշաճ բարձրություն վրա դրվել այդ աշխատանքը։ Սակայն մի շարք կատատորոֆիկ երկրաշարժներ Ռուսաստանի հարավային լայնածավալ սեյսմիկ տերիտորիայում՝ 1840 թվի Արարատյան երկրաշարժը, 1869 և 1872 թվի Շամախիի և 1869 թ. Իրկուտսկի երկրաշարժները, 1887 թ. Վերնիի երկրաշարժը, առիթ են տալիս երկրաշարժի խնդիրների լուրջ ուսումնասիրություն հասն Ռուսաստանում։ Այդ ուսումնասիրությունները սկզբում արտահայտվում են Աբիխի, Օբլովի, Մուշկետովի և այլոց առանձին աշխատություններով։ Իսկ 1893 թվին լույս է տեսնում Ռուսաստանի լայնածավալ տերիտորիայի և մասամբ նրա մերձակա շրջանների երկրաշարժների պատմական կատալոգը. Ա. Օբլովի և Ի. Մուշկետովի աշխատություններով (А. Орлов и И. Мушкетов „Каталог землетрясений Российской империи): Կատալոգը կազմվել է Մուշկետովի և հատկապես Օբլովի 20 տարվա համառ ջանքերով և ընդգրկում է 6-րդ դարից (նախ. քան մեր թվակ.) մինչև 1887 թիվը երկրաշարժների մոտ 2500 դեպք։

Այդտեղ գրի են առնված նաև Անդրկովկասի ու Փոքր Ասիայի Հատկապես 19-րդ դարու երկրաշարժների շատ արժեքավոր փաստեր։

Սակայն մինչև 19-րդ դարը քիչ դեպքեր են նշված և հղածները թերի են ու առան-

ձին դեպքերում անճշտություններ են պարունակում թե՛ ըստ ժամանակի և թե՛ ըստ բովանդակության։

Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև երկրաշարժներին վերաբերվող պատմական փաստերը, դեռեղված լինելով Հայկական, Վրացական, Պարսկական գրականության մեջ և մեծ մասամբ ձեռագիր գրականություն ժամանակագրություններին, հիշատակարանների մեջ, մատչելի չէին Մուշկետովին և Օբլովին՝ թե՛ լեզվի և թե՛ այն պատճառով, որ այդպիսի գրականությունը գտնվում էր առանձին վանքերում, մասնավոր անձանց մոտ և այլն։

1902 թվ. Թիֆլիսում հրատարակվեց Հայաստանի և Փոքր Ասիայի երկրաշարժների անցյալին նվիրված գրեթե 1-ին խորհրդագրական աշխատությունը հայերեն լեզվով Կարապետ Կոստանյանի աշխատությունը «Շարժի տարեգրություն Հայոց մեջ» վերնագրով, որը պարունակում է մինչև 19-րդ դարին վերաբերվող բավական փաստեր։

Հայաստանի երկրաշարժների պատմական անցյալով զբաղվել են մինչև Կ. Կոստանյանը նաև այլ հայ գրական գործիչներ, ինչպես օրինակ Ալիշանը, Դուկաս Ինժինյանը, որոնցից հատկապես վերջինս նշում է երկրաշարժների մոտ 16 դեպք երկնկայում և մի շարք դեպքեր Արարատյան գավառում ու Հայաստանի այլ մասերում։

Սակայն այդ բոլորը թերի են և երբեմն կարևոր փաստերը լուսաբանված են ոչ անհրաժեշտ չափով։ Հետագայում Անդրկովկասի երկրաշարժների ուսումնասիրությունը զբաղվում է Պրոֆ. Բյուսը, որը 1930 թվին իր «Очерк сейсмичности ЗСФСР» աշխատության մեջ բերում է Անդրկովկասի խոշոր երկրաշարժներին մի խորհրդագրա, 854 թվ. մինչև 1929 թիվը, որը սակայն մինչև 19-րդ դարը պարունակում է ընդամենը 17 դեպք։ Վերջին հարյուր տարում Անդրկովկասում տեղի ունեցող երկրաշարժները մշակվել և հրատարակություն են տրվել նաև Պրոֆ. Բյուսի մի շարք այլ աշխատություններում, բայց և այնպես Հայաստանի երկրաշարժներին վերաբերվող շատ փաստեր մնում են դեռևս չուսումնասիրված։

Սոցիալիստական շինարարության հա-
րաճուն վերելքը, հիդրոէլեկտրակայանների, գործա-
րանների, բնակարանների և այլ շինություն-
ների հսկայական թափը Հայկական Սո-
վետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա-
յում առաջ քաշեցին այդ կառուցումները
սեյսմիկ ուժերի դեմ ապահովելու խնդիրը,
որի անհրաժեշտությունը ակնբախ է Հա-
յաստանի երկրաշարժային ակտիվ պայ-
մաններում:

Դեռևս թարմ են բոլորիս հիշողության
մեջ 1926 թվի Լենինականի, 1931 թվի Զան-
գեղուրի և 1937 թվի Երևանի երկրաշարժ-
ները, որոնք քիչ վնաս չպատճառեցին մեր
սոցիալիստական հայրենիքին:

Երկրաշարժների ակտիվությունը առիթ
է տալիս 1931 թվին կազմակերպելու Հա-
յաստանում 1-ին սեյսմիկ կայանը — «Երևանի
սեյսմիկ կայանը», իսկ 1940 թվի 2-րդ կի-
սից Հայկական ՄՍՌ Ժողկոմսովետի որոշ-
մամբ Դիտությունների Ակադեմիայի Հայ-
կական Ֆիլիալին կից կազմակերպվեց Ան-
տիսեյսմիկ շինարարության բյուրո:

Հայաստանի բոլոր շրջաններում սեյսմա-
կայուն շինարարության խնդիրների ճիշտ
լուծման համար գործը պետք էր սկսել
հիմքից, նախ ճշտել երկրաշարժային գոյու-
թյուն ունեցող ռայոնացումը, որի համար
բացի երկրաբանական և գեոֆիզիկական
ինստրումենտալ արդյունքներից, անհրա-
ժեշտ էին նաև ավելի շատ փաստեր անց-
յալի երկրաշարժների վերաբերյալ, փաս-
տեր, որոնց որոշ սխառեմի վերածելով և
երկրաբանական-գեոֆիզիկական արդյուն-
քների հետ զուգադրման, բաղդատման
միջոցով հնարավոր լինի ավելի ճշտորեն
դրսևվորելու Հայաստանի յուրաքանչյուր
շրջանի սեյսմիկ ուժերի հնարավոր ինտեն-
սիվությունը: Ձեռնարկելով այդ աշխատան-
քին՝ մեզ հաջողվեց Հայկ. ՄՍՌ Ժողկոմսո-
վետին կից Պետական Ձեռագրատանը (Մա-
տենադարանում) ձեռք բերել բավական
կարևոր նյութեր Հայաստանի և ընդհանրա-
պես Անդրկովկասի և Փոքր Ասիայի երկ-
րաշարժների վերաբերյալ, նյութեր որոնց
մեջ կան նաև այնպիսիները, որոնք չեն
հրատարակված երբևիցե և որոնք կարևոր
արժեք են ներկայացնում երկրաշարժների

ինտենսիվության, տեղի և ուղղության
որոշման համար:

Այսպիսի փաստեր կան սկսած 2—3 դա-
րուց, մեր թվականությունից առաջ՝ մինչև
մեր օրերը:

Շատ պատմագիրներ, ժամանակագիր-
ներ ու գրիչներ չեն կարողացել ան-
տարբեր մնալ բնության այդ անեղ ար-
հավիրքի՝ երկրաշարժի նկատմամբ, երբ
այդ արհավիրքը զուգադիպել է իր ժամա-
նակին, որին անձամբ ականատես է եղել և
շատ հաճախ կորցրել է իր մերձավորներին
ու հարազատներին:

Ղուլողլի Երզնկացին, Երզնկայի կործա-
նիչ երկրաշարժներից մեկի ժամանակ, կորց-
նելով իր ծնողին ու երեխային, մի ամբողջ
բանաստեղծություն է նվիրում երկրաշար-
ժին, որի մեջ ողբում է և իր կորուստը
այսպես՝

«Ծո Ղուլողլի Երզնկացի.

Բեզի եղեր խել մի զիան.

Դու ես եղեր խեղճ ու գերի.

Հողն ես դրել մայրն ու տղան»:

Եվ որովհետև Հայ Ժողովրդի պատմիչ-
ներն ու ժամանակագիրները, գրիչները
եղել են Անդրկովկասի, և Փոքր Ասիայի
գրեթե բոլոր տեղերում ուստի և տալիս են
երկրաշարժի բավական առատ փաստեր,
որոնք դետեղված են հարյուրավոր տպա-
գիր ու ձեռագիր աշխատություններում,
որոնցով հարուստ է Մատենադարանը:

Այն ժամանակ երբ Օրլովի և Մուշկետովի
«կատալոգում» մինչև 7-րդ դարը (մեր թվագ-
րության) Անդրկովկասի և փոքր Ասիայի
վերաբերյալ պարունակվում է երկրաշարժի
միայն մի դեպք — իսկ Կարապետ Կոստան-
յանի «Շարժի տարեգրության» մեջ չկա
նշված և ոչ մի դեպք, Մատենադարանի
ձեռագիր և տպագիր գրականությունից
պարզվել է մինչև այժմ 17 փաստ, որոնք
վկայում են այդ հնագույն շրջանի երկրա-
շարժների մասին: Մինչև 19-րդ դարը Օ. և Մ.
կատալոգը պարունակում է նշված տեղի
վերաբերյալ մոտ 50 դեպք, Կարապետ Կոս-
տանյանի տարեգրությունը՝ մոտ 40 դեպք:

խակ մեզ հաջողվեց Մատենադարանի գրականությունից հիշատակել 100-ից ավելի գեղարքեր:

Օրինակ՝ ձեռագրերից մեկում, Էջմիածնի մի եպիսկոպոս՝ Ղրիմում գտնվող իր մերձավորներին ուղղած նամակում մանրամասն նկարագրում է 1840 թվի Արարատի կատարոֆիկ երկրաշարժը, որի մեջ ի միջի այլոց նշում է նաև մի այսպիսի փաստ. երբ երկրաշարժի ցնցումից գուրս են փախչում, տեսնում են թե ինչպես եկեղեցու խաչը եկեղեցու և զանգակատան հետ միասին տատանվում են դեպի արևելք և արևմուտք և եկեղեցու զանգակները ինքնահար դողանջում են միջին ձայնով՝ կարծես ահագանգելով վերահաս վտանգի մասին: Սա մի կարևոր փաստ է, որով որոշվում է նշված երկրաշարժի ուղղությունը և բավական ճշտությամբ նաև նրա ինտենսիվությունը էջմիածնում:

Օրինակ՝ 1) 586 թվի երկրաշարժը Երկրորդ Հայքում. այդ երկրաշարժից կործանվել է Արփսոս քաղաքը, 2) 453, 1088, 1261 թվ. երկրաշարժները Վրաստանում, 3) 454—460 թվ. կատարոֆիկ երկնաշարժները Կոստանդնուպոլսում, Կիզիկոնում և Թրակիայի այլ քաղաքներում, 4) 906 թվ. երկրաշարժը Դարալագյազում, 5) 1169, 1374, 1433, 1463, 1583, 1667 թվերի երկրաշարժները Երզնկայում, 6) 1282 թվ. երկրաշարժը Արճիշում, Խլաթում, 7) 1581 թվ. երկրաշարժը Վարազում և այլն, որոնք չկան հիշատակված երկրաշարժների կատարողներում և չափազանց կարևոր արժեք են ներկայացնում երկրաշարժների ուսումնասիրության տեսակետից:

Մատենադարանի ավյախները պարզում են, որ բացի մինչև այժմ դիտության մեջ չարձանագրված վերոհիշյալ և այլ բազմաթիվ երկրաշարժներից՝ կան նաև հետաքրքիր լրացուցիչ ընտելագրող տեղեկություններ մինչև այժմ քիչ լուսաբանված մի շարք երկրաշարժների մասին ինչպես օրինակ՝

- 1) 1648 թվի Վանի երկրաշարժը.
- 2) 1679 թվի Երևանի երկրաշարժը.
- 3) 1779 թվի Թավրիզի երկրաշարժը և այլն:

Վերոհիշյալ հարուստ նյութերը ներկա-

յունա ուսումնասիրության ևն ենթարկվում ՄՍԽ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի անտիսեյսմիկ շինարարության բյուրոյի կողմից և մանրամասն ու սխտեմատիկ մշակված կերպով կապագրվեն հատուկ աշխատության մեջ: Այժմ, իբրև նմուշ, տպագրում ենք մի միայն ստորև բերվող գրիչ Գրիգոր Երևանցու հիշատակությունը. Երևանի 1679 թվի երկրաշարժի մասին.—

«Եւ ի յավուր եպիսկոպոսութեան սորա կղև աստուածասատ բարկութիւն ի գաւառս Արարատեան՝ ի թուարերութեան հայոց՝ ՌՃԻԸ (1679) յունիսամսոյ. Ի, յաւուրն չորեքշաբթի, մինչ ոչ էր հասարակեալ օրն՝ Հնչեաց երկիբ և գղրղեցաւ արարածք. Դողմանի լեալ երկիբ բոլոր. շարժեաց յօդախառն սաստագոյն մինչ զի տեսողաց անյոյս մնացել ի կենաց կենցաղոյս. զվերջին աւուրս մտածելով, եթէ լրումն երկրի իցէ աւուրս այս, որ և թուէր թէ ոչինչ գոյր պակաս յայնմանէ: Բայց ի ինաման աստուծոյ դարձյալ հաստատեաց ի կայանս իւր ամենայն շրջակայ արարածք. վասնզի երկիբ մեծարձակ պատասեցաւ. վէճք հատեալ ծրենս ծրենս լեալ թաւալեալ ի ծորակս և ի հովիտս լցուեցան. զլուսին և զարեգակն մթացեալ զիշերեցան ի փոշոյ հողոցս շուրք համօրին արիւնագունեալ խառնակեցան. աղբերակունք ի սահմանեալ ընթացիցն մոլորեցան. տունք աստուծոյ հաստատաշէնք՝ եւ արքայակազմ եկեղեցիք ի հմէ տապալեալ քակտեցան. պողոտայք յուրվազնացք քարակուտս լեալ խափանեցան ի յըթնացից մարդկանց շէնք և շինուածք հնոց և նորոց խաղառ կործանեցան ի հիմանց: Եւ մարդք անթիւք և անհամարք ի ներքոյ տան մեռան: Եւ ոմանք որք ունէին զտարս՝ եւ երկուց և երից աւուրց հանէին ի տակէ հողից հանդերձիւք իւրեանց առանց քահանայի և կարգի կատարման ամփոփէին ի հողս. եւ որք ոչ ունէին ոք սրտացաւ եթէ հանէր, գեռ կայ յայնմ տեղուջ ուր հանգուցեալ է: Միթէ միւս անգամ նորոգօղն Քրիստոս նորոգեսցէ յաւուր զայսոյս իւրոյ: Ով կարէ պատ-

մեղ գաղէտ և զկսկիծն զոր տեսաք աչօք մերովք: Զբժիշկն ամենից բժշկկեսցէ զվիրավորեալսն ամենայն: Ի յաւազ լեաոն Մասիսէ մինչև ի բլուրն Շամիրամա իսպառ քակեաց, և և մեծ աւերումն եղև. բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց, լուսավորչաշէն բարձրագումրեթն էջմիածին միայն մնաց հանդերձ Գայիանաւ և և Հոսիփսիմէիւն ի պարձանս ազգիս մերոյ, իսկ զձորակն Այրեփանից առաւել եղև աւերումն և քակտումն. վասնզի է ամենայն շինուածք ի մեջ խոր ձորին և շուրջ բոլորաւն վէժք ահադին. եւ յորժամ շարժեաց շուրջանակի՝ թաւալեցան ամենայն դիմաց՝ և լցան վանքն ամենայն մինչ զի ոչ երեւիւր նշմարաւք շինութեան. բայց միայն կուտոցս քարի էր որք տեսողացն զարհուրեալ գողային, ըռահք և ճանապարհք ամենայն խափանեցան, և թի կամէին կերակուրս հոգեպահս տանիլ, յուսով և թեկամբ բարձեալ արսիթերս գնային, վասն զի կարի դժուարացեալ էր, և ամենայն կահիք պակասեալ՝ ոչ գոյր տեղի աղօթից, և ոչ տեղի ընակութեանց

մարդկան. բայց քարակառկա միայն, և ոչ մնաց քար ի վերայ քարի, ոչ ի եկեղեցիսն և ոչ ի յայլ շինուածս որպիս ասէ տէրն. մի մնացէ քար ի վերա քարի որ ոչ քակտեսցի. և զայս կատարեցաւ լիապէս յայսմ ժամանակի. և մնաց անսպառ և ամայի զի ոչ գոյր հնար. և ոչ եթէ որ ըղձայր գնալ երկրապագութեան՝ ոչ կարէր և հաւատաւոր երկիրպագողքն ևս արգելեալ մնային տոշորեալ սրտիւ և յաւուրս շարժման Ստեփաննոս Բարունին էր մայրաքաղաքն Երևան. ի յանապատն սուրբ և հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտիւն. յայնմ ժամու շարժեաց և քակտեցաւ եկեղեցին. էառ գտակս զեպիսկոպոսն զՍտեփաննոս և զքաջ հոետորն և անտի փոխեցաւ առ Քրիստոս:»

Ձեռագիր նո 1512, հիշատակարան
Գրիչ՝ Գրիգոր Երևանցի.

Մատենադարանում երկրաշարժի վերաբերյալ հղած անսպառ փաստերը պետք է օգտագործվեն մեր անտիսեյսմիկ շինարարութեան բյուրոյի պրակտիկ աշխատանքների ընթացքում:

S b r u s b r

ԱՇԽԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քիմ. գիտ. թեկնածու.

ԴԵՂԱԳՐԵՐ.

Հայկական հին ձևազիր աշխատությունների մեջ հանդիպող քիմիական դեղազրերը քիչ ուսումնասիրված բնագավառն են հանդիսանում: Այդ դեղազրերը մեծ նշանակություն ունեն ոչ միայն կուլտուրայի պատմության տեսակետից, այլ և առանձին դեղազրերում կարող են գործնական օժանդակություն ցույց տալ ժամանակակից քիմիայի, ներկագիտության և այլ բնագավառների պրակտիկ աշխատանքներում:

Մինչև այժմ չի հրատարակված մեր Մատենադարանում պահվող անցյալ ժառանգության այդ հակայական փորձը, որը նոր միայն ի մի է հավաքվում և հրատարակվում: Այդ տեսակետից անկասկած՝ հետաքրքրություն են ներկայացնում առանձին սեպեպաները, որը մենք կարևոր ենք համարում իբրև նմուշներ հրատարակել ի ուշադրության մեր մասնագետներին¹⁾:

Քիմիային վերաբերվող որոշ նյութերի մենք հանդիպում ենք դեռևս մարդկության պատմական սկզբնական շրջանի հուշարձաններում: Հայաստանը ինչպես և իրեն շրջապատող հին կուլտուրական երկրները, բազմապիսի և շատ հարուստ կուլտուրայի հուշարձաններ է տվել, որտեղ փոքր տեղ չեն գրավում քիմիային վերաբերող նյութերը: Կան հեղինակներ, որոնց կարծիքով որոշ համաձուլվածքներ, ինչպես բրոնզը, որը

չափազանց տարածված էր հին աշխարհում առաջին անգամ արտահանվել է Հայաստանից (Ակադ. Հ. Օրբելի), նույնը կարելի է ասել նաև որոշ ներկերի վերաբերյալ: Ուսումնասիրելով հին և նոր միջնադարյան հայկական ձևազրերը, մենք հանդիպում ենք քիմիայի բազմազան ճիւղերին վերաբերող փաստական տվյալների:

Քիմիայի որոշ ճյուղերը այնքան ևն զարգացել և կատարելագործվել Հայաստանում, որ անգամ դերազանցել են հարևան կուլտուրական երկրներին. այս առանձնապես կարելի է շեշտել ներկերի պատրաստման, ֆիկսացման և գործադրման ասպարիզում: Բացի ներկեր և ձուլվածքներ պատրաստելուց՝ Հայաստանում զուգընթաց զարգացել են նաև այլ քիմիական ճիւղեր: Ուսումնասիրվել և կիրառվել են դանադան ադսորբցող հատկություններ ունեցող նյութեր, որոնցով առանձնապես հարուստ է կղել Հայաստանը. —

Մշակվել են՝ 1) յուղերի և մոմ մաքրելու ձևերը. 2) մրգերից և ծաղիկներից էսենցիաներ և էթերային իւղեր պատրաստելը, 3) կղմինար, 4) ջնարակ, 5) մածիկ, 6) լաքեր, 7) բուսական, կենդանական և հանքային ներկեր, 8) դանադան դիմացկուն թանաքներ, 9) պանիրներ և իւղեր պատրաստելու ձևեր. 10) մարգարիտ խոշորացնելու ձևեր, 11) առանձնահատուկ և խոշոր տեղ են գրավում ձևազրերի մեջ յադրոքիմիան՝ բժշկական դեղատոմսերը:

Կյանքի և մահվան գաղտնիքների լուծ-

¹⁾ Մատենադարանի հրատարակությանը արդեն լույս է տեսել ներկագիտական ու թանաքագիտական 100 դեղատոմսերի ժողովածու: Տես Ա. Հարությունյան «Ներկերի և թանաքների հիմնական մեթոդները» 1941 թ., Երևան:

ման խնդիրները շատ հին ժամանակներից դրադեցրել են մարդկության միտքը. ինչպես մյուս երկրների այնպես էլ Հայաստանի վարպետները որոշ տուրք են տվել այդ որոնումներին և մեզ մոտ ևս որոշ ժամանակաշրջանի ավթիմիկոսները կամ քիմիական գրադվել են անմահական ջուր, իքսիտ, սուրբ ջուր, փիլիսոփայական քար և այլ նման նյութեր որոնելով:

Այս որոնումներն իրենց հիմնական նպատակին հասան, բայց քիմիայի զանազան ճյուղերի զարգացման և ուսումնասիրման ասպարիզում մեծ դեր կատարեցին: Նրանց հաջողվեց արհեստական ոսկի և արծաթ ստանալ հասարակ մետաղներից, սակայն հայտնաբերվեցին բազմաթիվ համաձուլվածքներ պատրաստելու եղանակներ: Մենք ստորև բերում ենք մի քանի դեղափորձերի նմուշներ մետաղագործության վերաբերյալ:

- 1) Ձեռ. № 3204, էջ 8, դուռ ոսկոյ, 19-րդ դ. Առ ի դրմ արճիճ ի սնդիկ հալէ դարճիճն և ձգէ ի վրա դըրնաիկն հան և աղա և խառնէ ի հեան ժ դրմ ըստկած ծծում և աղա ի միատեղ. ապա առ մոխիր և շինէ փոս մոխրով և ած զվերոյ յիշեալ դեղըունքն ի կճիճ և շաղախէ քս կալսվա և դիւր ի մոխրով փոսն և վառէ ի վերան կրակ զիշեր մի, որ լինի տամ՝ աթալն թաղիտ հան և լից ի աթալն՝ և արա թաղսիտ՝ է անգամ և ամեն հեա աւելցոյ զծծում արմ մի. Յեա է անգամ թաղսիտ՝ լինելոյն առ ի յեա. ապա ի դրմ ոսկի ի դրմ դան դուզաոսի՝ սղկէ ի միատեղ և լից ի աթալն և արա թաղսիտ է անգամ, յետոյ հալ երազ ոսկին և վերայ յիշեալ ճօհարին խմցու մինչև կապի և լինի ի քսիտ նա ներկի մեկն ճ. (☼):
- 2) Ձեռ. № 3204, էջ 8 XVI դ., գրիչ Հակոբ Մահտեսի:

Գուռ Ը-նի

«Առ ծ. դրմ մարեխի՝ խառտուք զխառուքն պինտ լուա աղով է. ը անգամ և առ լ դրմ. մարմարա և ժ դրմ ձուոց կիր նույնպես և մաւմառն լինի և կացուցեալ խառնեա զկիր մարմրին և զկիր ձուոց կեղեկին հեա երկաթին խառտուքն և աղա առ ծ. դրմ. զօհրա՝ և այն ժամանակ հալի զօհրան կերցո զիւրէն սակաւ սակաւ զվերոյ յիշեալ խառնուրդն և յորժամ վճարի խառնուրդն նա ձգէ ի վրա իէ. դրմ արծաթ դարճեալ արճիճ տուր խաղեր կլանէ հէ. դրմ լավ արծաթ»:

Այստեղ կարելի է ենթադրել, որ այդ համաձուլվածքների պատրաստումը ունեցել

է երկու նպատակ, նախ՝ փոքր քանակությամբ ոսկի և արծաթ խառնելով ավելի հասարակ մետաղներից, ստանալ մեծ քանակությամբ արտաքինով ազնիվ մետաղներ և երկրորդ՝ ավելի փափուկ և շուտ մաշվող մաքուր ոսկին և արծաթը պահպանելու համար խառնել են նրանց ուրիշ մետաղների հետ՝ ավելի ամուր և դիմացկուն դարձնելու համար: Մենք գիտենք, թե ինչ խոշոր նշանակութիւն ունի այժմյան մետալուրգիայում համաձուլվածքների մեջ մասնակցող նյութերի թե որակական և թե քանակական կազմությունը:

Արծաթի գործածությունն առանձնապէս տարածված է հղել մեզ մոտ, որովհետև ինչպես հայտնի է՝ Հայաստանը հնագույն ժամանակներից ինքը արտահանել է արծաթ (Ստրաբոն) և երկրորդ՝ մեզ հասել են շատ հին ժամանակներից մնացած, գեղարվեստորեն մշակված արծաթեա իրեղեններ:

Հայտնի է, որ պղինձը վաղուց ի վեր գործածվել է Հայաստանում թե աղառ և թե համաձուլվածքների ձևով. նրա մշակման, մաքրման և պահպանման միջոցների նկարագրությունները մեծ տեղ են բռնել մեր ձեռագրերում:

Բերենք մի օրինակ՝

- 3) Ձեռ. № 3204-ից. էջ 46բ. «Վասն պղինձ սրբելոյ»

«Առ զպղինձն ու թաց ի քացախն և թաթխէ ի աղն և շանթեցոյ և ձգէ ի գոզն և այլ թասայ և շանթեցոյ և ձգէ ի կալեքարին ջուրն քանի որ անհաս լաւ լինի»:

Բավականին հետաքրքիր և յուրատեսակ մեթոդների ենք հանդիպում կաթնատնտեսության ասպարեզում. իբրև օրինակ՝ կարելի է բերել երկու նկարագրություն սեր և յուղ պատրաստելու՝

- 4) Ձեռ. № 6680, էջ 162, 18-րդ դար

«Կաթն ամենն սար շինես այսպես արէ ընճիւրին փայտին կաթն կամ տերեկին կաթն կթէ ա. շուշա թաղայ վախան. կէս հոխայ կաթն դիր օճաղին. որ տաքանալ է. գ. կաթ ինճերեն կաթնէն կաթացուր կաթին մէջն ամինն. սերէ ելնիլ այն կաթնը»

- 5) Ձեռ. № 6680 «կաթն եզ շինես ամենն».

«Առ ա հոխայ խամ եղն դիր ա. մեծ ամանի միջում. բ. հոխայ կաթն որ տաքացրած չես խամէ ամէ եղին վերայ ճըմրողէ թող ա—ա. սարէ ցուրտ ջուր ամէ վերան քամէ ջուրն. ամենն եղէ կնիլ»:

Հին միջնադարյան ձեռագրերի մեջ մենք հանդիպել ենք մագաղաթ պատրաստելու շատ պարզ նկարագրած եղանակ, որը և բերում ենք ստորև՝

6) Ձեռ. № 1849, էջ 156ր, 1440 ր.
«Պատմ. մագաղաթի»

«Առ դայս մորթերս առ մորթի ուլի, թե տան թե վայրի, զվայրի ոչխարին, զծիոյ քուռկին, զլապլգտիւն զգերանին, զորթուն: Առ զկիրն լաւ մաղէ ու զջուրն ի վերայ ամ. ապ թէ նօսը լինի մորթն՝ նա դու. նաւար արա թէ թանձր նա թանձր արա՝ Յորժամ որ հասնի նա զմաղն առ եւ լուա սուրբ ու նար կիր ամ յորժամ հաստանայ հանց որ մըձդես նա նաւարանայ, առ լուայ եւ ի շարէ պնդէ շուանով. առ քերիչն եւ քերէ զմսի դեհն մինչ որ միս հասանէ եւ լաւ երես լինի առ զջուրն և զիր յարեզակն որ շորանայ ապա զմաղի դեհն շոր քերէ: Նշա մագաղաթի ձուի սպիտակուց եւ ըսպիտակ կտօար դ. օր շուր... զկտաւատն նա քան ըզմեղեր ծոր դառնա նշայէ զմսի և քերչով քերէ:»

Մագաղաթ պատրաստելու գործում մեր հին վարպետները հասել են այնպիսի կատարելության որ նրանց պատրաստած նուրբ մագաղաթը դժվար է տարբերել լավ օրակի թղթից, իսկ ամբողջյամբ, իհարկե, դերագանցում է:

Վերջապես ձեռագրերում շատ կարևոր տեղ են զբաղում բուսական և հանքային ներկերի պատրաստման եղանակները. այսպես օր.

7) Ձեռ. № 6285, էջ 28 XVIII դ.
Ուրիս կեռպ

«Հերիկին ծաղիկները ըստըկելէն ու ձեծելէն էտե ի քիչ մը պողպղի շուրն դնելէն ետե ինչպես որ վերը զբուցեցի, դիւ վրան քիչ մը փոշեացեալ կենդանի կիր, ինչպէս կզրուի աղը աղցանի մը վրայ և ունի ան ի յատկութիւն զզուրը փոխելոյ և դաւելոյ. Յետոյ պիտոյ է քամել դհիւթն, զոր ծողովես խեցամորթի կճեպներու մեջ:»

Ձեռագրում նկարագրած եղանակով մենք մեր լաբարատորիայում կապույտ շուշանից ստացանք շատ գեղեցիկ կանաչ ներկ, որը կարելի է գործադրել թէ նկարչության և թէ տեքստիլ արդյունաբերության մեջ: Մեր փորձերի ընթացքում մեզ հաջողվեց ստանալ ոչ միայն կանաչ ներկ, որի մասին պրում է հեղինակը, այլ այդ ծաղիկի պիգմենտը կարելի է գործածել կենդանական և բուսական հյուսվածքներ (հիստոլոգիկեսկե սրեզյ) ներկելու համար. բացի այդ՝ մեզ հաջողվեց պատրաստել այդ պիգմենտից

ինդիկատոր, որը կարելի է կիրառել քիմիական լաբորատորիաներում^{9,10}

Ստորև տալիս ենք մի նկարագրություն հանքային ներկերի մաքրման վերաբերյալ՝

8) Ձեռ. № 6285, էջ 28.

Կենարարիսի գսելոյ կեռպ.

«Լաւ: զկինարարիսն առաջուց փոշի եղած փոքր փուր քարին վրայ աղի ջրով ցրթով ու չորցուր զանի շուք տեղը: Թե որ կուզես իր մթութիւնը հանել ու աւելի պայծառ գոյն տալ իրեն ցրթին կամ ջրով թիւն մէջը քիչ մը քրքում¹¹ դիր ու սա հեղուկով լուսէ զքու կենարարիսը:»

Այս ձևը նույնպես փորձել ենք մեր լաբորատորիայում և ստացել ենք շատ գունազեղ կարմիր ներկ¹²:

Թե որքան բազմազան են եղել մեր պահպանված ձեռագրերի մեջ քիմիային վերաբերող նկարագրությունները և նյութերը ցույց են տալիս այս մի քանի նշումները: Ձեռագրերում եղած քիմիական նյութերի նկարագրությունը հանդիսանում է մեր հնագույն կուլտուրայի այն մոռացված մասը, որը կարող է լուրջ և մանրամասն ուսումնասիրության: Այդ ուսումնասիրությունը կարող է մեր սոցիալիստական արդյունաբերությանը տալ շատ հետաքրքիր նյութեր, թե տեսական և թե գործնական նշանակություն ունցող:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. սամս — տաքացնել
2. արալն — ամանի տեսակ է
3. քաղսիս էրա — մաքրիչ
4. զան դապուսի — կիպրոսի աղ երկաթնային
5. ☉ — արծաթ
6. ☼ — ոսկի
7. մառեխ — երկաթ
8. զօհրա — պղինձ
9. «Восстановление растительных красок по древне-армянским рукописям, Арутюнян А. Х. Ереван, Труды ВЗВИ. 1936 г.
10. «Пигмент ириса как индикатор и краситель», Арутюнян А. Х., Сборник научных трудов мед. ин-та в Ереване, 1940 г. вып 1.
11. քրքում — զաֆրան
12. «Получение красителей по древне-армянским рукописям», Арутюнян А. Х. Изд. ВЗВИ, 1938 г.

ԱՇ. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ԴԻ ԱՌԱՔԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբան.

16-18-րդ դարի միջև ընկած ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության համեմատաբար քիչ լուսարանված ժամանակաշրջաններից մեկն է: Պատմական այս շրջանին վերաբերող քիչ ուսումնասիրություններ ունենք: Այս բացը մասամբ պիտի բացատրել նրանով, որ քիչ են, ավելի ճիշտ՝ քիչ են հրատարակված այս ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուրները: Մինչև այժմ մենք հրատարակի վրա ունենք փաստորեն այդ շրջանին վերաբերող հայկական պատմիչներից՝ Զաքարիա սարկավազ, Առաքել Դավրիժեցի, Պատմություն Դավիթ բեկի, Աբրահամ Կրետացի, Զաքարիա Ազուլեցի, Աբրահամ Երևանցի և այլ մի քանի մանր պատմությունները: Ինչ չեն հավաքված ու չեն հրատարակված այդ շրջանին վերաբերող հայկական ձեռագրերի պատմական հիշատակարանները և պատմական բովանդակություն ունեցող փոքրիկ ժամանակագրությունները: Չեն հրատարակված նույնպես Մոսկվայի արխիվներում, հատկապես ԴԱՓԿՅ-ում (Государственный архив феодално-крепостнической эпохи) եղած հայկական ֆոնդի արժեքավոր փաստաթղթերը: Իսկ այս փաստաթղթերը մեզ համար արժեքավոր են ոչ միայն այն տեսակետից, որ լրացնում և ամբողջացնում են պատմիչների տեղեկությունները, այլ և այն պատճառով, որ նրանք վստահելի նյութեր են՝ գրված պատմական իրադարձությունների ականատես ժամանակակից անձնավորությունների կողմից:

Զհրատարակված ժամանակագրություն-

ների շարքին է պատկանում Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, վորը գտնվում է ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1786 ձեռագրում: Թեև ժամանակագրության վերնագրում և տեքստում չկա Մարտիրոսի անունը, սակայն մենք կարծում ենք, որ ժամանակագրությունը նրանը պիտի լինի, որովհետև նախ՝ ժամանակագրությունը պարունակող ձեռագրի գրիչը նա է և ապա՝ ժամանակագրության վերջին թվականը համընկնում է ձեռագրի գրչության ժամանակի հետ: Դժվարանում ենք կասկածել, որ Մարտիրոս դի Առաքելը, որը գրել է ամբողջ ձեռագիրը, օգտված լինի նույն տարում կազմած մի այլ հեղինակի ժամանակագրությունից:

Ժամանակագրությունը ընդհանուր վերնագիրը չունի: Տեքստի առաջին էջի վրա նշանակված է «Կարգ և թիւ թագաւորաց Պարսից» վերնագիրը, որը սակայն ամբողջ աշխատության վերնագիր չէ, այլ՝ առաջին գլխի Այս վերնագրի ներքո Մարտիրոսը տալիս է ոչ թե պարսիկ շահերի չոր ուցամաք ժամանակագրությունը, այլ պատմական այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել այս կամ այն շահի օրով Իրանում և Անդրկովկասում: Մյուս գլուխներում ժամանակագիրը արժեքավոր տեղեկություններ է տալիս աղվանների արշավանքի և Պետրոս Մեծի Իերբենդ, Բաղու և այլ քաղաքները վերցնելու մասին: Շարադրված նյութերը սխառնատիպաչափ ենթարկելու նպատակով՝ ժամանակագիրը նրանց վերնագրերը տալիս է լուսանցքի վերին մասում («Առումն թագա-

ւորութեան Պարսից ի յԱղվանէն», «Առումն աշխարհաց Պարսից, Օսմանցոց և Ռուսաց», «Մարտ օսմանցոց ընդ Աղվանս և ընդ Պարսից»:

Մարտիրոս դի Առաքելի անձնավորութեան մասին, բժբախտարար, շատ քիչ տեղեկութիւններ ունենք: Գիտենք միայն, որ նա 18-րդ դարի առաջին քառորդի խոշոր առեւտրականներից է: Այսպես՝ ձեռագրի թերթ 79բ ոտանավոր հիշատակագրութիւնից երեւում է, որ նա առեւտրական նպատակով գնացել է Շիրազ և այնտեղ հանդիպել Մաթեւոս Զուղայեցուն:

«Ի Սպահան յորժամ ելեալ, Շիրազ քաղաք Պարսից հասեալ, Մաթէոսի իմ հանդիպեալ, որդի Յովհանու Զուղա լեալ, Աստ, Շիրազ, իմ վասն այն նստեալ, ի Հնդկաց նաւն նկատեալ, Բուզ միասին պանդոկի լեալ, որ Երկգրանի անուանեալ, Տեառն թիւն ՌՃԹ լեալ, և մայրսի վեցտասան լեալ, Իսկ իմ տեսեալ սորա իղձ լեալ, և աստուրբ գիրս սէր ունեցեալ, Բոպէ աւուրն ոչ դադարեալ, սէրն հաւատոյ հարցաքննեալ, Ուստի յորժամ դայս սէր տեսեալ, աղօթմատոյց զայս նըւերեալ, Սիրով անմտաց զիս խնդրեալ, զաղօթս իւր յիշել աղաչեալ, Ի վայելումն իւր ընծայեալ, ամէն եղիցի ասացեալ»:
(№ 1786, 70 բ)

Նույն ձեռագրում թողած իր մի այլ հիշատակարանից իմանում ենք, որ նա 1722 թվին ճանապարհորդել է դեպի Բանդարբազի. «Թիֆլիս փրկչին 1722 և հայոց ՌՃՀԱ և Ազարիայի ձէ, նոյնիմբեր նոր սոմարի ԻԳ և հինն՝ ԺԲ...», որ լուսինն էր ժէլրացեալ, ի Զ ժամուն, որ ետ մտանելոյն արևուկէս ժամ էր անցեալ, աւուր Բ շաբաթու, ի յարեմուտս երեկցաւ աստղ մի հրագոյն սրակերպ, երկարութիւն սրաչափ մի, սակաւ սակաւ փոքրացաւ՝ մինչև ի քսան հայր մեր, ի ողջոյն Մարիամ ասելոյ ժամն՝ աներևութացաւ: Այս տեսի ի մէջ ծովու, յորժամ ի Բանդարի սուրբաթէն և Մուրայուց նաւէաք ի Բանդարբազի. որ մերձ եղաք ի Բանդարբազի

իբրև 33 միլ, որ և գրեցի ապիրատ Մարտիրոս դի Առաքել» (Ձեռագիր №1786,77 բ)

Այս նույն հիշատակարանի շարունանակութիւնից իմանում ենք նաև, որ Մարտիրոսը 1723 թվին եղել է Լիվոնոսում:

«Պատմեմ ես ձեզ եղբարք իւր իմն դարչելի մահմեդականացն: Յորժամ ի թիվս փրկչին 1723, անսղալ սեպտեմբերի Ա, հասանք նաւով ողորմութեամբ Բրիտանոսի անվնաս ի քաղաքն Լիվոնսա և մտաք ի Սանջաթ նպարէթն, օթևանեցաք ի միասին ասն միոյ, ասկաւ յունոյ, որոյ անուն էր Յովանի, որ էր գերեցեալ ի բարբարոս Տրապուլուսացն և մնացեալ ի գերութեան ամս ժ: Պատմեաց մեզ թէ ի Տրապուլ և Թունուզ և Զղայիր և ամենայն կողմն բարբարոսաց մահմետականքն, ամենայն խառնակ ինչ ուտեն՝ զշուն, զգայլ, շաղալ և աղուէս և ամենայն այսպիսի ինչ ուտեն. որ ասէր թէ՛ ես անդ գինի վաճառէի. մեկ մէյխանաչի բազում անգամ հանդիպեցաւ և ասէր, որ այսպիսի զազրալի ինչ յորս առեալ և փուռն խորովեալ բերեալ են ի մեյխանան և կերեալ Ասէր ևս՝ թէ մեծամեծքն յորժամ երկն շունն, եօթանասուն ինչ խառնին հետն՝ մեկ դարաֆիլ, դարչին, ջովղ, հիլ, ֆիֆլ, տաքդեղ, զֆրան, աղ, սոխ, սխտոր, բրինձ, գարի, ցորեն և այլ այսպիսիք մինչև 2 ինչ, զի ասեն թէ՛ դեղ է, կու ասէր ևս թէ՛ մին տղայ մինչ ի 20 շուն էր զողացել և կերել, վասն այս ի փողոցի և ի շուկայն ամենակին շուն չի երևի, ամենայն տուն կու պահեն պահապանօք, զի մի զողացին. այսպիսի ինչ առումն այս գարչելիքս և ի քրիստոնեից խորշին վասն խողենոյ» (№ 1786, թ. 77բ):

Ահա այն ամենն, ինչ հայտնի է մեզ Մարտիրոս դի Առաքելի անձնավորութեան մասին:

Մարտիրոսի ժամանակագրութիւնը պարունակող ձեռագիրը գրված է 1722-23 թվերին: Իր բովանդակութեամբ նա պատմական նյութերի ժողովածու է: Գրված է զանազան վայրերում, միասյուն, նոսր գրով:

Մարտիրոս դի Առաքելի տարերգութեան լեզուն հակիրճ է: Զկան ավելորդարանութիւններ: Նկարագրած փաստերի մեծ

մասին նա ծանոթ է մտախիտից: Ի տարբերութիւն միջնադարյան կրօնական մյուս ժամանակագիրներէն՝ նա խուս է տալիս եկեղեցական պատմութիւնը տարբերութեան առանցք դարձնելուց: Մարտիրոսն իր ժամանակի գիտուն անձնավորութիւն-

ներից է: Իմացել է նաև ֆրանսերէն ու վրացերէն:

Մարտիրոսի տարբերութեան տեքստը տալիս ենք զրեթև առանց փոփոխութեան՝ կատարելով շատ քիչ կետագրութեան ուղղումներ:

ԿԱՐԳ ԵՎ ԹԻՒ ԹԱԳԱՎՈՐԱՑ ՊԱՐՍԻՑ¹⁾

Ի թուարբերութեանս հայոց ՊԽԶ [1397 թ.] յորժամ Լանկթամուրն ել երկրէ իւրմէ և եկն երկիրս Ատրպատականի՝ զՎան, զԵրևան և զՆախշուան աւերեաց՝ էր տէր Արտաւելոյ շեխ ոմն՝ անուն Սէֆի: Սորա որդի լեալ շեխ Հայդար անուն, որ առեալ է իւր կնութիւն գքոյր Յեազուր թագաւորին, որ էր տէր Թաւրեղոյ: Եւ էր սայ, այս Յեազուրս, թոռն Ջհանշահ թագաւորին: Եւ այս շեխ Հայդարէս և Եազուր թագաւորին քերէն ծնանի որդի և անուանի Իսմայէլ: Այս շեխ Հայդարս և կինն իւր խորհին զեղօվ սպանանել զՅեազուր թագաւորն՝ զի ինքեանք առցեն զթագաւորութիւնն: Եւ սիրոյ պատճառօք կոչեն զՅեազուր թագաւորն ի ճաշ և տան ուտել նմա զզեղեալ կերակուրն: Եւ յիս զգարոյն՝ թէ զեղեալ է կերակուրն և տայ նոցա ևս բռնութեամբ ուտել: Եւ մեռան երեքեանս՝ Յեազուր թագաւորն, շեխ Հէյդարն և կին նորայ: Եւ մանուկն Իսմայէլ փախստական տարան յԱխթամար կղզի և անդ սրնանի: Եւ յորժամ հասանէ յարբուսըս հասակի՝ բերեն զնա ազգականքն իւր և ասեն թէ՛ սայ է ժառանգն կրկոցունց կողմանցն, քանզի սա է ժառանգն:

1. Եան Իսմայէլս նստի թագաւոր Թարվէղ ի թուին հայոց ԶԾ [1501 թ.]: Գնաց յԱսոգահան, պատերազմեցաւ ընդ Ալվանդին և փախոյց զնա: Եւ ինքն էառ զթախտն և նստաւ: Եւ ի թվին ԶՀԵ [1526 թ.] մեռաւ, որ թագաւորեալ ամս ԻԵ [25]:

2. Եան Թահմազ, որդի շահ Իսմայէլին նըստաւ թախտ թվ. ԶՀԵ [1526 թ.] և թվ. ԶՂՕ²⁾ [1541 թ.] զնաց էառ Երեւան, Գանջա, Եամախի: Գնաց ևս ի Վրաց տուն և բազում աւերութիւն արար: Իարձեալ ի սոյն թվ. թագաւորն Հնդկաց Հուժայուն նեղացեալ ի թշնամեաց, եկն առ շահն և առեալ ի սմա-

նէ զօրս իբրև ԻՏ [20000] և տարեալ յաշխարհն իւր պատերազմեցաւ և կոտորեաց զթշնամիսն իւր: Եւ փախոյց: Եւ զերկիրն իւր զբաւեաց: Եւ այլ բազում քաջութիւն արար շահ Թահմազս: Որ զնաց մինչ ի Վան, Երզնկան, և զԱրզրում աւերութիւն դարձոյց: Մեռաւ թվ. ՌՕԻԲ [1573 թ.]՝ թագաւորեալ սորայ ամս ԽԷ [48]. և այլք ասեն թէ՛ ՄԱ [51]:

[45ա] 3. Եան Իսմայէլ նստալ թախտ թվ. ՌԻԳ [1574 թ.], որ թագաւորեալ սորայ ամս Բ[2] և մեռաւ ի թվ. ՌՕԻԴ-ին [1575 թ.]: Եւ (դարձեալ ի սոյն թվիս, ասեն թէ՛ կղբայր սորայ, Թահմազ անուն թախտ նստուցին և յետոյ ի մէջ բաղանեացն խեղդեցին այս շահ Թահմազիս: Եւ յիս սորայ կղբայր սորայ՝ սուլթան Հայդարն սպանին: Եւ ապա զնացեալ մեծամեծքն զպատիկ շահ Իսմայէլն բերդէն դուրս բերին, թախտ նստուցին: Որ և յետոյ սպանին: Եւ սայ ևս էր կղբայր սոցայ: Որ և յետոյ Ամիրհամզա միրզէն ևս, կղբայր սոցայ, սպանին: Որ այս ամենայն եղև կրկու ամում):²⁾

4. Եան Թուրաչբանդա, որ էր որդի շահ Թամազին և կղբայր շահ Իսմայէլին այլ և կղբայր այս չորեցունս, նստաւ թախտ թվ. ՌՕԻԷ [1578 թ.]: Եւ էր սայ շեխ, և պակասեալ ի լուսոյ: Որ էր կարգեալ ի հօրէն իշխան յերկիրն Խորասանայ: Այլ էր սայ յոյժ անարի և վատթար ի զօրմս թագաւորութեան: Ի սորայ ժամանակս առին օսմանցիք՝ զԹալրիդ, զԵրևան, Գանջայ, Եամախի: Եւ այլք ասեն թէ՛ վերոյ ասացեալ Ամիր Համզէն սորա որդի էր, որ սպանին կարմրազուխքն տիրատեաց Ղալբաշքն,

²⁾ Հայկական թվերի հետ միասին գործ է անված զերոսն:

³⁾ Փակագիծը զբոված է հեղինակի կողմից, ըստ երևութին, այդ հատվածը որպէս անցնեալուր հասված դուրս հանելու նպատակով:

¹⁾ Գլուխներէ վերնագրերը զբոված են էջերի վերեւում:

որ իսկոյն թախծեալ սրտիւ եկեալ առ միւս որդին իւր Աբազն, որ կարգեալ էր զնայ իշխան երկիրն Սօրասանայ: Եւ կացեալ ամս ինչ, մեռաւ՝ թագաւորեալ ամս Գ [3] անարիս այս:

5. Շահ Աբազ, որդի շահ Սուլթանազային թախտ նստաւ ի Մաշադ թվ. ՌՕԻԹ. [1580]: Սալ յոյժ խոհեմ ի գործս թագաւորեան և յաղթող ի պատերազմի: Էառ ի ձեռաց Օսմանցոց՝ զԹաւրիզ, զԵրևան, զԳանջայ, Շամախի և հասեալ ի Վան: [45բ] Եւ զԲասեն աւերեաց: Եւ անտի զամենայն ազգս Հայոց քշեաց՝ սկսեալ անտի մինչ Երևան: Եւ անտի բերեալ առ Երասխ գետոյն, որ էր թվ. ՌԾԴ [1605թ.], մուտ տարոյն: Ընդ նմին և զիւղաքաղաքն Ջուղայ քշեաց և տարաւ յԱսպահան բանակեցոյց և ի գաւառս նորայ սրբուեաց: Այս է մեծ սուրդունն: Որ և յեա Բ[2] ամի եղև սով սաստիկ մինչև Գ[3] ամ, այնպէս որ, մարդիկ զմեռեալս և զկենդանիս սպանանեալ ուտէին, որ է սարսելի ի լսելն: Եւ թվ. ՌԿՕԲ [1613թ.] զնաց ի Վրաց տուն և զբազումս զերեցոյց և բերեալ ի Պարսկաստան բնակեցոյց: Եւ թվ. ՌՀԱ. [1622] զնաց ի Ղանդահար և էառ պատերազմաւ զբերդն: Եւ զՀարաթ էառ ևս: Ի սոյն թվ. զնաց Իմամղուլի խանն էառ զՀուրմուզ: Եւ այլ բազում արիութիւն արարեալ, բայց յոյժ նեղեաց զազգս հայոց և երկիրս հայոց ջիր և ցան արար: Եւ անբնակ արար Հայաստուն: Եւ ոչընչացոյց զերկիրն, որ մեռաւ ի թվ. ՌՕՀԸ, [1629թ.] թագաւորեալ ամս ԽԹ [49]:

6) Շահ Սէֆի, թոռն Շահաբազին, նստաւ թախտ թվ ՌՕՀԸ [1629թ.]: Ի սորայ աւուրս և ի սոյն թւին Մովսէս կաթողիկոս նստաւ յաթոռ Էջմիածին: Եւ զնաց առ շահն և Ջ հարիւր [600]¹⁾ թուման մուղաղայն Էջմիածնայ վերացոյց: Որ ևս Գ[3] ամսաց տէր Փլիսոս կաթողիկոս նստաւ: Եւ զնաց առ շահն, ինդրեաց յաջն սուրբ Լուսավորչին: Եւ երբ Էջմիածին: Եւ սուլթան Մուրադն թվ. ՌՕՁԷ [1638թ.] զնաց Բաղդատ էառ: Եւ զԵրևանն ետուն շահին: Եւ այնմհետէ եղև հաշտութիւն ի մէջ երկոցունցս: Մեռեալ թվիս ՌՕՂԱ [1642] թագաւորեալ ամս ԺԳ [13]:

¹ Կարելի է և կարգաւ շրջհարիւր՝ ձեռով:

7. Շահ Աբազ երկրորդն որդի շահ Սէֆուն նըստաւ թվ. ՌՕՂԱ [1642թ.], մայիսի ԻԶ [26]: Սալ առի թէ քրիստոնէայտէր էր: Եւ ի տիս մանկութեան նստաւ: Եւ ասեն թէ էր յոյժ ուղղադատ: [46 ա] Եւ ի թվ. ՌՕՂԷ [1648թ.] զնաց ի Ղանդահար և էառ զնայ պատերազմաւ ի ձեռաց Հնդկաց: Եւ կոտորեաց զամենայն զօրականսն, որ ի բերդին էին: Եւ ի թվ. ՌՃԱ [1652թ.] կոտորեաց շահ Իջնան թագաւորն Հրնդկաց առաքեաց որդի իւր շահգատայ Օվրանդիբն ԷձՌ [700,000] մարդով և Ասդուլա խանն Սարգար կարգեաց ի վերայ Ղանդահարայ, որք եկեալք ասպատակեցին զբերդն և Բ[2] կէս ամիս նստան: ԻՌ [20,000] մարդ սփահի ջարվեցան, թող զօրդի բազարի մարդն և բեռնակիրսն: Ապալ յեա դարձան զնացին: Եւ դարձեալ ի թվ. ՌՃԲ [1653թ.] միւս անգամ շահ Իջնանն առաքեաց մեծ զօրդին իւր Դարաշուքուրն այլ ևս ԷձՌ [500,000] մարդով, որք եկեալք Գ[3] ամիս նստան շուրջ զՂանդահարովս: ԼՌ [30,000] մարդ ջարդեցաւ սփահի, թող զօրդի բազարի և բեռնակիր և զայլ ծառայս: Եւ ոչ կարացին առնուլ, դարձան յետս երկիրն իւրեանց ի Հրնդստան: Եւ այլ բազում արիութիւնս ցուցեալ այս երկրորդ Շահաբազս, մեռաւ ի թվ. ՌՃԺԵ [1666]՝ թագաւորեալ ամս ԻԴ [24]:

8) Շահ Սուլէյման, որդի շահ Աբազ երկրորդին, յառաջ քան զայս ասեն թէ, յետ մեռնելոյն Շահաբազ երկրորդին, ասեն թէ՛ էր եղբայր այս Սուլէյմանիս Սէֆի աւուամբ՝ Գ[3] ամիս թագաւորեաց, բայց երկբայութիւն երկի, զճշմարիտն ոչ երկի, այլ սալ ասեն թէ յառաջն անունն Սէֆի էր, որ միշտ հիւանդանայր, վասն այս պատճառի անունն փոխեալ Սուլէյման: Բայց այլք ասեն թէ՛ յառաջին անուն Իսմայէլ էր և յետոյ Սուլէյման փոխեցին: Արդ՝ եթէ այսպէս և եթէ այնպէս, այս Սուլէյմանս թագաւորեաց յետ հօրն իւրոյ երկրորդ Շահաբազի և թախտ նստաւ ի թվ. ՌՃԺԵ [1666թ.]: Ի սորա աւուրս խաղաղութիւն էր Պարսս, որ ոչ գոյր պատերազմ

ոչ ի օսմանցոց կողմանէ և ոչ ալ կուսէ, ալ խաղաղութեամբ կայր: Մեռաւ ի թվ. ՌՃՆԳ-ին [1694թ.], որ թագաւորեալ ամս ԻԸ [28]:

[46 բ] 9) Շահ Սուլթան Հուսէյն, որդի շահ Սուլթանին, նըստաւ թախթ թվ. ՌՃՆԳ [1694 թ.] յուլիս ԻԷ [27] յաւուր ուրբաթի և Ազարիայի թվ. ՀԹ [79], Ղամար Թ [9] ի յԱսպահան, որ և թագաւորեալ ամս ԻԸ [28], ամիսս Գ[3], աւուրս Ե [5]¹⁾: Ի սորա աւուրս՝ բազում պատերազմունք ի Սորասան՝ մինչ զի ազգքն, որ կոչին բլուջ և աղվան, եկեալք աւերէին ի քաղաքն Քրման և Բաշան և ալ բազում տեղիս, որ աւար առնելով մինչ ի Սպահան և գային: Մինչ Ի (20) օր անձար մնացեալ կոչին թագաւորն Վրաց, որոյ անունն էր Գորգին խան, որ սայ գընաց Քրման ի թվ. ՌՃՆԵ [1696 թ.] և պատերազմեցաւ ընդ բլոջին: Եւ կոտորեաց ի սուր սուսերի գամենեսիան և գմնացեալսն փախտականս արար: Եւ նստաւ անդ մինչև ցԸ [8] ամ: Եւ յետ այնորիկ առաքեցին զնայ ի Ղանդահար և բազում արիութիւն և քաջութիւն արարեալ, անխնահ կոտորէր գամենայն բլոջս և զաղվանս: Եւ կեցեալ անդ ամս Գ[4]: Եւ յետոյ զոմն, Միրզայիզ անուամբ, ազգաւ Աղվան, որ էր իւզբաշի յառէջ և յետոյ սուլթան եղև ի կողմանէ պարսից: Սայ յարուցեալ ի միում գիշերի գաղտ իւրով մարդկանօք արամբք, որ մերձ Գորգին խանին բնակեալ էր չորս հազար արամբք, իբր բարեկամ և ցաւակից ցուցանէր զինքն, ի մեջ գիշերի (թվ. Հայոց ՌՃԿԸ [1719 թ.], ապրիլ ամսոյ,²⁾ էսպան գՊորգին խանն և բերդն Ղանդահարայ էառ զինքն և գրաւեաց, քանզի զօրքն Գորգին խանին ելեալք էին և պատերազմէին ընդ բլոջին և ոչ էին անդ Ղանդահար: Եւ յետ սորայ Բ[2] անգամ պարսից զօրք առաքեցին ի Ղանդահար, ամենեքեան կոտորեալք յետս դարձան: Եւ յետոյ եկեալք այլազգ աղուանք առին զքաղաքն Հէրաթ և աւարի հարին գամենայն երկիրն Սորասանայ, որոյ նեղեալ

թագաւորն պա(ր)սից զնաց ի քաղաքն Ղազրին և Թէհրան նստաւ մինչի Գ[2] ամ³⁾: Թերևս խորհիլ մարթացի ինչ վասն Հէրաթայ կամ Ղանդահարայ և ոչ կարաց: Որ յետ Գ[3] ամաց դարձաւ ի յԱսպահան թվ. ՌՃՀՂ [1721 թ.] մայիսի 11 Ա, թվ. Ազարիայի Ճգ, շաբաթ Բ, եկն յԱսպահան (թվ. ՌՃՀՅ (=1721) մայիս Ա, թվ. Ազարիայի ՃԶ շաբաթ Բ եկն յԱսպահան)⁴⁾ և նստեալ վարանեալ խորհի և ոչ ձեռնահաս լինի իրողութեանս՝ ի սոյն թվ. ՌՃՀՅ, [1721 թ.] յորժամ շահն էր Թէհրան քաղաքի բնակեալ զօրօքն, սորա էնթիմաղօվէն, որ է վաղիրն, որ էր անունն Յաթայալի խան, ազգաւ լազգի, Շամխալի տոհմէ, ապստամբեալ գաղտնի խորհէր սպանանել զշահն: Որմէ իմացեալ շահին զնենգութիւնն նորա, իսկոյն Բ[2] աչացն խաւարեցոյց և գամենայն՝ ինչս նորա և գտունն գրաւեաց: Եւ արդ այժմ, յորժամ է թվակաւս մեր ՌՃՀՅ, 1721 թ.] ապրիլ ԺԵ[15] և թվ. Ազարիայի ՃԶ[106] գամս ԻԶ [26], օրն շաբաթ, որ է նոր կիրակէի շաբաթ աւրն, շաբժ եղև Թարիզ, մինչև ի Լ[30] Ժամն այնպէս անազին երեւեալ և տատանեալ, մինչ ի ՃՆՌ[140,000] մարդ մեռեալ: Եւ բազում տեղ երկիր պատանեալ և բազում տունս մարդկամբք պլեալ, որ է սարսելի յիշխն: Դարձեալ ի սոյն թվին և օգոստոսի ամսոյն Կովկաս լեռնային բնակեալ լազգիքն եկեալք առին զքաղաքն Շամախի և ամենայն պարսիկքն սուր սուսերի մաշեցին: Եւ ամենայն մերձակայ գաւառս՝ Իթէ Շաքի, Շիրվան և Ղաբալա աւարի առեալ, քանդեալ քայքայեցին, որ է այժմ այսպէս:

Առումն քաղաւորութեան պարսից ի յաղվանէն⁵⁾: Ի սոյն թվ. 1170 [1721թ.]⁶⁾ և որդի

1) Փակագծի մեջ առած նախադասութիւնը գրված է ձեռագրի լուսանցքում այլ թանագրով:
2) Գրված է լուսանցքում այլ թանագրով:

3) «Գ»-ի առջևից ինչ որ տառ գրված և չնշված է:
4) Փակագծի նախադասութիւնն այլ թանագրով գրված է լուսանցքում:
5) «Ի սոյն թվ. ՌՃՀՅ-ից կրճ. մինչև ընդ արդ...»
6) Ձեռագրի հետևյալ երեսի վերևից գրված է «Առումն թագաւորութեան պարսից յաղվանէն»: Այնքան, որքան աղվանների արշավանքի պատմութիւնը սկսվում է այստեղից, ուստի և մենք նպատակահարմար համարեցինք այդ վերնագիրը զնիլ այստեղ, առնելով նա փակագրածի մեջ:
7) Մի բոս Յաղեկ է գրված:

նոյն Աղվան Միրվէզին, որոյ անունն էր Միր Մահմուդ, որ զբաւեալ նստէր Ղանդահար, եկն բազում զօրօք երկիրն Քրմանայ և էառ զքաղաքն պատերազմաւ: Եւ նստաւ անդ աւուրս 10[40]: Եւ աւարի առեալ զքաղաքն ամենայն բնակչօք իւրով և գեղօրէիք, սուր սուսերի մաշեաց: Եւ զմնացեալսն աւար արարեալ, գերեալ զամենայն ուստերս և դատերս խաղացոյց տարաւ երկիրն Ղանդահարայ՝ անդ բնակեցոյց զամենայն գերեալսն: Իսկ ի յետակայ ամին, որ էր թվ. հայոց ՌՃՀԱ, [1722 թ.] յունվար ամսոյ, ել աստուծասաստ բարկութիւնն ի վերայ պարսից, որ սքանչելարար պատուհասեցան ամենայն բնակիչք Պարսկաստանայ՝ հանդերձ այն թագաւորաւն իւրեանց: Քանզի ել ի Ղանդահարայ Միր Մահմուդն այն, որ էր որդի այն Միրվէզի-զին ժԲՌ [120,000] աղվան հեծելօք եկն ի վերայ Իսպահանայ: Եւ մին(չ)գեռ եհաս մերձ Իսպահանայ, Գուլնարաթ կոչեցալ տեղին, որ է Բ[2] կամ Գ[3] ասպարէզ¹⁾, աղաջ մինչ Իսպահան: Ելին Իսպահանայ զօրքն պարսից շահ Սուլթան Հուսէյնին իբր ՀՌ [70,000] արամբք հեծելովք ճակատեցան մինչ ի կէս ժամս: Որ և յաղթեալ Միր Մահմուդն զօրացն պարսից անխնահ կոտորեաց: Եւ մնացեալ զօրքն պարսից փախեան քաղաքն Իսպահան: Եւ յետ երկու աւուրց եկեալ Միր Մահմուդն ժԲՌ [12,000] աղվան զօրքն իւրովք մերձ ի Զուղայ թաղի Յահրարադ կոչեցեալ այդին: Եւ անդ նստաւ: Եւ պատեալ պաշարեաց զքաղաքն: Իսկ հայք, որք կային ի Զուղայ, կէսն փախեան յԱսպահան, և կէսն մնաց անդ Զուղայ, որ և եկեալ աղվանքն Զուղայ, շարչարելով և հարկանելով օր ըստ օրէ առին զամենայն ինչս և բստացուածս հայոց: Որ և գերեցին բազում աղջկունս հայոց անդ: Յորժամ եկն Միր Մահմուդ և պաշարեաց քաղաքն՝ էր թվ. ՌՃՀԱ [1722], մարտ Ա: Եւ նստաւ ամիսս 7[7]: Եւ եղև սով մեծ քաղաքին, որ ի վճարել կերակրոց կերին ձի, էշ, և այլ այսպիսիս անսուրբ կենդանեաց: Որ և յիշելն և գրիլն է բան սարսափելի,

¹⁾ Գրված է «Ա. աղաջ» և ջնջված:

քանզի կերան և զիակունս մեռելոց մինչ ի սախ թէ՛ բազում մայրք զորդի իւրեանց սպանին և կերան ի սովու: Իսկ յետ 7[7] ամսոց, անճարակ եղեալ շահն Սուլթան Հուսէյն, ել ի պալատէն իւրմէ Գ[3] ձիաւորօք և գնաց առ օսս Միր Մահմուդին և ասաց. «Որովհետև աստուծոյ կամքն այսպես է, եկ նիստ ի թախտ, եթէ կամիս կասովարել դու»: Եւ եղ ի գլուխն Մահմուդին զջղայն իւր: Եւ միւս աւուրն ել անախ Միր Մահմուդն և եկեալ եմուտ ի Սպահան քաղաք, գնաց ի պալատն արքունի և նստաւ թախտ: Եւ շահ Սուլթան Հուսէյնն եղ ի կալանս: Եւ ետ Գ[3] ամսոյ կոտորեալ զամենայն շահագողէքն և զամենայն նախարարս պարսից և բազումս ի մեծամեծաց և ժօլայից՝ մինչ որ սախ թէ, եթէ ի սովոյ որ բազումք և թէ ի սրոյ վեց ճՌ(վեց հարիւր հազար) անձինք մեռան ի Սպահան: Իսկ յորժամ պաշարեալ էր քաղաքն Իսպահան Միր Մահմուդն, որդի շահիս, որ էր թահմազ շահագողէն, փախստեամբ գնաց Ղաղվին, նստաւ անդ քանի ամիսս, որ և հասին զօրքն աղվանից և անախ ևս փախստեամբ եհաս ի Թաւրէզ²⁾: Եւ Օքա ետ անուամբ թագաւորութիւնն իւրոյ Մահմուդն: Եւ էառ շուրջանակի քաղաքսն մինչ ի Քահան և Շիրազ: Եւ եղև թագաւոր՝ անուամբն՝ հոկտեմբեր ժԲ [12] թվ. ՌՃՀԱ [1722 թ.], յորժամ էառ Իսպահան քաղաքն և նստաւ:

Առումն ածխօրնն Պարսից, օսմանցսց և ուսուց³⁾: Ի սոյն ամի կլին օսմանցիք բազում պատրաստութեամբ ամենայն կողմամբ պարսիկ երկրաւ: Բայց այսմ ամի ուսն եկեալ զօրօք և էառ երկիրն կազու զթարխու և Անդրիու բերդն: Եւ անախ մեծ կոտորումն եղև երկուց՝ կողմանցն: Եւ անախ եկեալ զօրքն ՝ ուսուց ի վերայ բերդին Դարբանդու գուռն արկաթի, որում կային պարսիկք: Եւ կամաւ ետուն զբերդն և զքաղաքն: Այլ և առին բթաքու և մերձակա(յ) գաւառս: Եւ ի սոյն ամի ելեան [48 ա] զօրքն ուսուց և խաղաղութեամբ մտին եր-

²⁾ «Իսկ յորժամ պաշարեալ էր» բառերից մինչև այստեղ զրգած է լուսանցքում:
³⁾ Վերնագիրը զրգած է 48ա երեսի վերևում, մենք բերում ենք հատվածի սկիզբը:

կիրն Գիւրնայ՝ զՏաշա, Լահիջան, Գասկար
 և այլ ամենայն քաղաքս Գիւրնայ, զի Ի-
 նիուղուլու մինչ ի Աստրաբադ և այլ քա-
 ղաքս Մազանդարանու և ամենայն մերձա-
 կայ քաղաքս Կասքից ծովու կամաւ ետուն:
 Եւ մտին ուսքն և նստան և տիրեցին
 խաղաղութեամբ: Իսկ հետեյալ ամին, որ էր
 թվ. ՌՃՀԲ [1723 թ.], Վախտանգն, որ էր
 եղբոր որդի Գորգին խանին, անցելումդ
 յիշեցեալն և տէրն Թիֆլիզոյ և Վրաց աշ-
 խարհին, պատրաստութիւն անէր զօրաց
 պահպանութիւն երկրին իւրոյ՝ վասն զո-
 րացն օսմանցոց, որք բանակեալ էին ի
 Ղարս: Ի սոյն աւուրս Մահմուդ Ղուլի խան
 ոմն, որ էր բիճ որդի Թամրազ խանի,
 թոռն Հերակլին, Կախեթոյ Վրացսանն. սա
 ի կողմանէ շահադայ Թահմաղին ել զօրոք
 Երևանայ և շրջակայ քաղաքացն, այլ և
 նոյն Կախեթու վրացօքն ի վերայ Վախ-
 տանգին պատերազմէր: Եւ յոչ զլրտանել
 յաջողութիւնս, ել և գնաց առ լեռնաբնակ
 լաղզիսն և ետնոցա բազում սոճիկս, առեալ
 ընդ իւր զօրս նոցա և յանկարծօրէն հնաս
 բան(ա)կն Վախտանաղին և փախստա-
 կան արար և կմուտ ի քաղաքն Թիֆլիզ՝
 աւար առնելով, ետ զամենայն ինչս նոցա
 լաղզիացն: Եւ տիրեալ նստաւ: Իսկոյն լու-
 եալ զօրացն օսմանցոց, որ ի Ղարս նստէին,
 Ե[5] փաշայ ելեալ դէպի Թիֆլիզ: Եւ Մահ-
 մեդ դուլի խանն առեալ զբանալիսն բեր-
 դին, ել ընդ առաջ, ետ օսմանցոց: Եւ եկեալ
 օսմանցոցն նըստան ի բերդին և տիրեցին
 զքաղաքն: Ի սոյն թուին ել Հասան փաշայն
 Բաղդադու զօրօք բազմօք և գնաց էառ
 Քրմանշահ, որ և անդ վախճանեցաւ մա-
 հուամբ: Իսկ հետեյալ ամին, որ էր թվ.
 ՌՃՀԳ [1724 թ.], որդի Հասան փաշայիս,
 Ահմեդ փաշայ, սարսափէր, այլ Ե[5] Փա-
 շայօք, ել և գնաց բազում զօրօք ի վերայ
 Համադանու և սաշարեաց զքաղաքն իբրև
 ամիսս: Քանզի ժողովեալ էին ի մեջ քա-
 ղաքին իբրև Ռ[1000] գիւղից և զաւառաց
 անհամար անձինս: Եւ սասաիկ պատերազ-
 մաւ էառ զքաղաքն յամսեանն օդոստոսի:
 [48 բ] Եւ սրոյ ճարակ տուեալ անձինս իբ-
 բով երեք ճՌ [300,000], Եւ գերեցան
 ամենայն գաւառօքն տղայս և աղջիւրնս և

կանայս իբրև երկու ճՌ [200,000]: Առին և
 ամենայն շուրջանակի քաղաքս ամենայն
 գավառօք մինչ ի Հաւիդայ և միւս կողմն
 մինչ ի Չանգան և Սուլթանիայ և մինչև ի
 Իսպահան՝ իբրև Դ[4] աւուր ճանապարհ:
 Բայց աւանդ աղէտալի դրչիս և արեան ար-
 տասուախառն մելանիս, քանզի որ Համա-
 դան բնակեալք էին, երեք հարիւր տուն
 հայք, թնդ գեղորէիցն շուրջանակի, այն-
 սէս կոտորեցան և գերեցան, մինչ ի հազիւ
 թէ Լ(30) տուն գտանի այժմ: Որ երեք ճ
 (300) անձինք ի մէջ եկեղեցոյն էին կօտո-
 բար: Արդ՝ ի սոյն թվ. ևս զօրքն օսմանցոց
 ելին ի վերայ Երևանայ: Եւ պատերազմե-
 ցին յոյժ սաստիկ, ապա կամաւ ետուն
 զբերդն: Եւ մինչդեռ գային զօրքն պարսից
 ի վերայ Երևանայ, մտին զօրքն օսմանցոց
 ի շրջակա(յ) գավառս նորա և ողորմելի
 աղէս հայոց բազումս կոտորելով, գերեցին
 բազում անձինս յոյժ: Առին և Նախչվան
 ամենայն Գողթնայ տամբ և Նօրս, Մարա-
 դայ մինչ ի Գանջայ՝ ամենայն գաւառօք:
 Եւ անճարակ ազգս Հայոց Մեծայց՝ եթէ ի
 Շամխու և Շրվանայ երկիրն, եթէ Գանջայ
 և գաւառսն մինչ ի Թիֆլիզ և Երևանայ մինչ
 ի Արդաւէլ և Թարվէզ և Նօրս, Մարադայ,
 որ եթէ ի լաղզիացն, եթէ ապստամբ և ե-
 թէ այս օսմանցոց այնպէս տապալեցան,
 մինչ զի մեծ մասն հայոց սրոյ ճարակ եղէն
 և գերեցան, որպէս այժմ տեսանեմք: Ի
 սոյն թվ. Արդուլայ փաշայն, որ նստէր ի
 Վան, ել սարսափէր Է[7] փաշայիւք ի վե-
 րայ Թաւրիզոյ: Էսա զամենայն գաւառսն, և
 զքաղաքն ոչ կարաց առնուլ, ձմերեաց անդ:
 Եւ ի հետակայ ամին, որ էր թվ. ՌՃՀԴ
 [1725 թ.] յուլիս ամսին պատեր(ա)զմեցաւ
 և բազում մարտիւ էառ զքաղաքն Թարվէզ:
 Եւ զոր ինչ հանդիպեցաւ Համադանայ,
 այսպէս և Թարվիզոյ ևս և ողորմելի և տա-
 ոապեալ ազգիս հայոց, որք անդ բնակէին:
 Եւ այսպէս աստուծասասա բարկութիւնն
 ել ի վերայ ազգին պարսից և պատուհա-
 սեաց այրելով ընդ նմա և զազգս հայոց:

Մարս օսմանցոց բնդ աղվառն և բնդ
 պարսից¹⁾: Ի սոյն թվ. և մայիս ամսին առին

¹⁾ 49բ երեսի վերև զբիճ մայս վերնագիրը
 տեքստի համապատասխան տեղում մենք ենք դրել

օսմանցիքն դժանջայ և ի սոյն թվ. առին [49ա] զԱրդաւէլ ամենայն դաւառօքն: Ի սոյն թիվս Միր Մահմուդն, որ Իսպահան ի խելեացն ցնդեալ այսահարութեամբ մեռանի: Զօրեղբօր որդի նորա, Աշրաֆ սուլթան, ապրիլ Գ[3] նստաւ ի տեղի Մահմուդին Իսպահան թախտ և յետ Օքայ անուռն իւր: Եւ ի թվ. ՌՁԻՁ [1726 թ.] սեպտեմբեր ամսին Հայոց ՌՃՀԵ վերոյ Ահմադ փաշայն Բաղդադայ ել սարէսքէր Ը փաշայիւք իբր ՃՌ [100,000] մարդօք ի վերայ Աշրաֆ սուլթանին: Եւ հասեալ մինչ ի Ասպահանայ, մերձ Գուրիէյքան, պատերազմեցաւ ընդ աղվանաց: Եւ պարտեաւ: Որ և կոտորեցան օսմանցիք իբր ՌՌ [40,000]: Եւ մնացեալքն ցիր և ցան փախստական դարձան: Ընդ որս և Ահմադ փաշայն, փոքր արամբք փախստական դարձաւ ամօթալի ի Բաղդադ: Եւ Աշրաֆ սուլթանն բազում քաջութեամբ և աւարօք օսմանցոցն դարձաւ Իսպահան: Դարձեալ ի յետալա ամին, որ էր թվ. փրկչին ՌՁԻԿ [1727 թ.] և հայոց ՌՃՀԶ, մայիս ամսոյն, ել հրաման թագաւորէն օսմանցոց ի վերայ Ահմադ փաշային՝ ելանել ի վերայ Աղվանին: Որ և եկեալ բազում փաշայիւք և իբր ՌՃՌ (900,000) արամբք մերձ Իսպահանայ իբ-

րեւ ի [7] աւուր ճանապարհ բանակեցաւ: Էջ և Աշրաֆ սուլթանն Իսպահանայ զօրօք իւրօք և բանակեցաւ մերձ օսմանցոց՝ իբրև աւուր միոյ ճանապարհ: Եւ բազում պատգամաբերք ելևեկութեամբ արարին հաշտութիւն ընդ միմիանս: Դարձան օսմանցիք ի Բաղդադ և աղուանն Իսպահան: Իսկ ի թվ. 1729 և հայոց ՌՃՀԸ, թուրքման ոմն պարսիկ, անուն Նազար խան, որ անուանեցաւ Թահմազ դուլի խան, արի և քաջ պատերազմող, ել Մաշադ քաղքէն բազում զօրօք ի վերայ աղվան Աշրաֆ սուլթանին: Գ[3] անգամ պատերազմացաւ, երեք անգամ ևս պատերազմեալն պարտեցաւ Աշրաֆ սուլթանն և փախաւ: Ի ճանապարհին կալան զնա զօրավարքն իւր աղվանք, տարան ի Ղանդահար: Եւ անդ դիտատեաց զնայ երկրորդ որդին Միր Վէլին, որոյ անուն էր¹⁾ Եւ Թահմազ դուլի խանն բերեալ Մաշադայ շահ Թահմազն, որդի շահ սուլթան Հուսէյնին եւ թախտ նստոյց Իսպահան [49բ] ի նոյնմբեր ամսին: Ի սոյն ամի ել Թահմազ դուլի խանն զօրօք բազմօք և էառ Համադան, Քրմանշայ, Հաւիզայ, Ղուշտար և ի յայն կոյս երկրայս Պարսից ի ձեռաց Օսմանցոց:

¹⁾ Անվան տեղը մոտեցել է շրջված:

ՔՅՈՒՉՈՒՔ ԱՐՈՒԹԻՆ

ՊԱՏՄՈՒՅՑՈՒՆ ՔԱՅՄԱԶ ՂՈՒԼՈՒ

ԳՂՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Հազար հարյուր քառասուն ութը թվին (=1735), ախոռապետությունից բարձրացած Մուստաֆա փաշայի և ղեսպան Ավաիլ Զեքի խանի հետ մեկնեցինք ղեպի Իրան:

Ութը ամսում հասանք Իրան: Այն ժամանակ Իրանի շահը Թահմազ Դուլին էր: Սպահան հասանք, բայց Թահմազ Դուլին այնտեղ չէր, գնացիլ և Ղանտահարը պաշարել էր:

Ավաիլ Զեքի խանը սուրհանդակ ուղարկեց Ղանտահար Թահմազ Դուլիի մոտ թե՛ մեր տեր շահը ինչ կը հրամայե, արդյոք ղեսպան փաշային (Մուստաֆա փաշային) Զեզ մոտ Ղանտահար առաջնորդե՞նք:

Թահմազ Դուլին պատասխանում է Ավաիլ Զեքի խանին՝ «Հանգրվան-հանգրվան հյուրասիրելով, պատվելով Ղանտահար առաջնորդեցիք»:

Թահմազ Դուլին հարցրել էր նաև Ավաիլ Զեքի խանին թե՛ «ղեսպան փաշան նախքան ղեսպանության ուղարկվելը Մուլթանի մոտ ինչ պաշտոնի էր»: Ավաիլ Զեքի խանը պատասխանել էր. «Գլխավոր ախոռապետն էր»:

Մի քանի օրից հետո Սպահանից մեկնեցինք ղեպի Ղանտահար:

Առաջինը հասանք Պեմ, որն Սպահանից 7 հանգրվանի ճանապարհ է:

Պեմից գնացինք Եզդ, որը Պեմից 10 հանգրվանի ճանապարհ է:

Եզդից մեկնելով՝ հասանք Քիրման, 10 հանգրվան էլ այս ճանապարհն է:

Եզդի և Քիրմանի մեջտեղն է գտնվում «Ավազի ծով» կոչվածը (անապատը), որի ավազը ժամացույցի ավազի նման սպիտակ և մանր է: Այս «Ավազի ծով»-ում ընկած էին մի քանի գյուղեր:

Օտարական-ճամբորդը այս գյուղերից անցնելիս, եթե մի գյուղից մյուս գյուղն է նայում, կարծում է ձյուն է եկել, այնպես սպիտակին է տալիս:

Ճանապարհի երկարությամբ յուրաքանչյուր 1¹/₂—2 ժամ հեռավորության վրա կան ուղեհիշներ (միլ), որոնք աշտարակի նման շինություններ են:

Ճամբորդը պետք է գնա այս ուղեհիշների ուղղությամբ, եթե աջ կամ ձախ թեքվեց՝ ճամբան կկորցնի, որովհետև 1-2 միլարեի բարձրությամբ անդունդներ կան՝ որոնց սակայն քամին այնպես է լեցրել ավազով, որ խկի էլ հայտնի չեն: Եթե ձիու ոտքը մանի այս անդունդներից մեկի մեջ, դուրս գալն անհնարին է. քանի ձին չարչարվի՝ ոտքը այնքան կըխրվի ավազի մեջ: Ահա թե ինչու են այս աշտարակները շինել, որպեսզի ճամբորդը աջ կամ ձախ չթեքվի:

Այս «Ավազի ծով»-ից անցնող ճամբորդների և նրանց անասունների համար հատուկ դիմակներ են շինել, որը ծածկում է մինչև ականջները: Աչքի տեղերը «վարաք» կոչված ապակենման մի նյութից է շինված, որը պատրաստվում է ավազից:

Դիմակը Դիարպեքերի կարմիր կտորի

նման է: Այս գիմակից թե քեզ, թե ձիուդ համար պարտավոր ես գներ: «Ավագի ծով»-ի երկու կողմումն էլ՝ թե կող-ում թե Քիրմանում ծախում են:

Գիմակը՝ լինի մարդու կամ անասունի համար, այնպես է պատրաստված, որ թե քթի և թե բերնի համար լավ հարմարություն ունի և երբեք նեղություն չի առաջա-թահմազ Ղուլիի բանակը այս «Ավագի ծով»-ից ացնելիս, իրենց պատմելով՝ խիստ քամի է բարձրացել և 1000 քսակի¹⁾ արժողությամբ անասուն կորել է: Բոլորին չեն էլ փնտռել, վախենալով, որ անդունդների մեջ հանկարծ իրենք կարող են կորչել:

Չմոռանանք նշելու, որ եթե ճամբորդը մինչև գիշերը չի կարողացել մի գյուղ հասնել, պետք է հենց ճանապարհի մեջտեղ էլ գիշերի (հակառակ դեքում կարող է շփոթվել) սրովհետև այն սարը, որ երեկոյան աջ կողմը էիր տեսնում, առավոտյան տեսնում ես քամին տարել կիտել է ձախ կողմը: Ինչքան վատ (անհուսալի) կլինեի մարդու դրությունը, եթե հիշյալ աշտարակները չլինեին, սրովհետև քամին ամբողջ ավազը վերցնում և որտեղ որ մի լանջ կա, նրա առաջ կիտում է կղզու նման:

Այսքանը «Ավագի ծով»-ի համար բա-վական է:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Քիրմանից մեկնեցինք դեպի Սիստան, որը 10 հանգրվանի ճանապարհ է: Բայց Սիս-տան չհասած 3-4 հանգրվանի վրա մի ամբողջ երևաց: Գնացինք դեպի այն և այն-տեղ տեսանք Չալ Օզլի Ռոստամի սե-րունդը, որին պատկանում է խանությունը: Թահմազ-Ղուլին այստեղից անցնելիս էլ իր կողմից հաստատում է նրա խանու-թյունը:

Այստեղ երեք օր մնացինք: Շատ պա-տիվ ու հարգանք ցույց տվեց: Ինքը (խանը) շատ լուրջ մի տղամարդ է՝ երկայնա-հասակ, ոսկրոտ, սև ունքերով, սև աչքերով: Այս տեսակ կազմվածքով և հասակով մարդիկ (ուրում էլինդե) Ռու-

¹⁾ Մի քսակը 500 դրուշ է = 500 կր—մոտ 43 ուլբի,

մելիում¹⁾ շատ կան, սակայն նրա աչքերի նման աչքեր չէի տեսել: Նրանք կովի աչքերից երեք անգամ ավելի մեծ էին: Խոսքս չափազանցություն չհասկանաք, ընդ-հակառակը ավելի շուտ համեմատությունս ավելի փոքր վերցրի: Մանավանդ մի տղա ունեի 3 տարեկան, բայց 12 տարեկանի չափ էր. այս երեխայի աչքերը հոր աչքերից ավելի մեծ էին երևում, բայց այս երևույթը երեխայի տարիքի հատկու-թյուն եմ համարում:

Ինչպես ասացի, երեք օր այստեղ հյուրասիրվելուց հետո մեր ճանապարհը շարունակեցինք դեպի Սիստան:

Ճանապարհը այս կողմերում ամբողջ անապատ է: Պարսկերեն՝ «Կյորկի դիյազան», թուրքերեն կարծեմ «կուլե գիյազան» է ասվում:

Սիստանից մեկնեցինք դեպի Ղան-տահար, 10 հանգրվանի ճանապարհ էլ այս է: Վերջապես հասանք Ղանտահար:

Թահմազ-Ղուլին մեծ հարգ ու պատիվ ցույց տվեց: Մեզ հետ էին Իրանի գլխավոր հրամանատար Աբտուլլահ էֆենդին և Մոսկով Սալի էֆենդին, որոնց ևս մեծ հարգ ու պատիվ տրվեց:

Իր տեղում տեսլ էինք, որ դեսպան Մուստաֆա փաշան նախապես Սուլթանի ախոռապետն էր: Թահմազ Ղուլին նրան փորձելու համար իր ունեցած ամենավատ բնավորության ձիուն ուզում է հեծցնել: Մի օր հրավիրում է իր մոտ և ասում. «Փաշա մի ձի ունեմ, բոլորովին չեմ հավա-նում, բերեմ հեծի և քո կարծիքը տուր»: Ձին բերում են. թեև երկու կողմից երկու-մարդ սանձը բռնել էին, դարձյալ ետևի ոտների վրա էր բարձրանում, եկողին կծում, հետևն ացնողին քայիով խփում, մոտ գնացողին առջևի ոտքերով հարվածում. այսպիսի վատ բնավորությամբ մի անա-սուն էր:

Մուստաֆա փաշան հասկացավ Թահմազ Ղուլու նպատակը. Աստված մեծազոր անի, Օսմանյան կառավարությունը, ձախողու-թյուն չի ցույց տա, նրա թշնամին թող բարեկամ դառնա: Պետության շահի

¹⁾ Հարավային Բուլղարիան կոչվում էր «Ռուսմելի»:

պաշտպան (դեսպան) լինելով հանդերձ, լավ էլ ձի հեծնող է եղել: Աստված խնայի, ինքն էլ բարձրահասակ, աննկատելի կամաց-կամաց մոտեցավ: Չին ծառս չեղավ: 2-3 քայլ էր մնացել, ձեռքերեց, մի ոտայուն գործեց և իսկույն ոտքը դրեց աստվանդակին, նստեց: Չին էլ զարմացավ, թե ինչ պատահեց: Այն ցատկատուն ձիուն կատու զարձրեց և իջավ: Թանձաղ Ղուլին և իր մեծամեծները, բոլորն ակնդետ նայում էին թե՛ տեսնենք դեսպան փաշան ինչպես պլտի հեծնի այս ձիուն: Չարմանքով հետևում էին նրա բոլոր շարժումներին և երբ փաշան հաջողութեամբ իջավ ձիուց, բոլորն էլ հիացմունքով ասում էին: «Այսպես էլ ձի հեծնող լինի»: Ինքը Թանձաղ Ղուլին ասաց. «Փաշա Աստված խնայի քեզ, Սուլթանի հացը հալալ լինի քեզ: Այս տեսարանը մենք մեր աչքով տեսանք և մենք էլ հպարտացանք, փառք Աստծո, որ Թանձաղ Ղուլի մտածածին պես չեղավ:

Մի քանի օրից հետո մեծապատիվ Մուստաֆա փաշան իր գործերն ավարտելով՝ կրկնակի սրբավայր Ռուսի¹⁾ ճանապարհը բռնեց: Մենք մնացինք Թանձաղ Ղուլի մոտ: Մեզ նվազածուները մեջ տեղ տվեցին: Թե քանի հողուց բաղկացած էր նվազախումբը իր տեղում կը հիշատակենք:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Այստեղ, նախ և տուաջ ձեզ պատմեմ այն մասին, թե Թանձաղ Ղուլին ինչպիսի նենգութեամբ Ղանտահարը գրավեց:

Մինչև մեր Ղանտահար հասնելը, Թանձաղ Ղուլին գրավել էր Բեյլը և նրա շահին գերի էր բռնել, բայց այս մասին նորին մեծութուն Մուստաֆա փաշային ոչինչ չէր հայտնել:

Գեսպան Մուստաֆա փաշան մեկնելուց հետո, մի օր, այս գերի շահին իր ներկայութեան կանչեց (ես ինքս ներկա էի և տեսա), երիտասարդ մի մարդ էր, վայելուչ դեմքով, կարճ հասակով, կարմիր երեսով, հեան էլ մեծամեծները:

¹⁾ Ակնարկում է Պոլսո

Թանձաղ Ղուլին ասաց. «Լսիր, դուք ամոթ-ամաչել չունիք, որ ձեզ ենթակամի կամ երկու քաղաք ունենալով ձեզ թագավոր անվանում և հպարտանում եք: Բեյլի շահը պատասխանեց.

— Ո՛վ շահ, մեզ ուզրեկ անվանել են նրա համար, որ մեզնից յուրաքանչյուր ցեղ, իրարից անկախ, մի երկու քաղաքի վրա խշտում է: Հենց ուզրեկի հատկանիշն էլ այս է»: Թանձաղ Ղուլին ծիծաղեց և ասաց. «Լավ, լավ թագավոր ասածդ [ձեզ պես չլինիր] այն Հնդու թագավորը՝ թագավոր է. Ռուսի¹⁾ թագավորը՝ թագավոր է, Իրանի թագավորը՝ թագավոր է. ինչու եմ ասում. նրա համար, որ այս թագավորները շատ երկրներ ունեն և եթե թշնամին հարձակվելով մի քանի քաղաքներ գրավի, այնքան էլ մեծ ցավ չէ: Նահանգները շատ, քաղաքները շատ: Հիմա [հասկացած թե ում են ասում թագավոր], ձեր արածը ամոթ է, ամոթ—ասաց, անպատվեց ու հեռացրեց իր առաջից:

Թեև Ղանտահարի գրավումը պլտի պատմելի, բայց վերոգրյալը միտքս ընկավ [և որպես հետաքրքիր դեպք] պարտք համարեցի մեջբերում անել:

Ղանտահար ասածդ [դիրքը] մի մեծ լեռ է երկար նստվածքով, շատ բարձր և լերկ (ողորկ), ուղղահայաց ժայռերով այս լեռան կեսը դուրս թողած, մյուս կեսը բերդ են շինել, իսկ բերդի պարիսպը [այնքան ընդարձակ, որ] վաթսուն հազար մարդ հազիվ կարող է պաշարել: Եթե դրսից բերդի վերևը նայելու լինես, զլխարկդ (ներքև) վար կընկնի: Եթե մեջը ուռմբ քցես [բերդի մյուս թաղերում] երեխաները իրենց խաղը կշարունակեն՝ այնքան որ հողերնին չէ [սպանով են]: Ահա այսպես մեծ և բարձր մի բերդ է:

Ժամանակին Չուվրութ անունով մի շահ է լինում, այս շահը, մեղա ասածո, ինքնիրեն աստված հայտարարելու հավակնութուն է ունենում: Բոլոր անգին քաղաքը ծակել տալով, իր մորուքի ամեն մի մազից [մի հաս] կախել է տալիս, այնքան որ հարուստ է լինում. Չուվրութ—Չմրութա շահ անունն էլ այս իրողութունից է մնացել:

¹⁾ Պոլսո

Ղանտահարում դժոգք ու գրախտ է շինել տալիս:

Ղանտահարցիների պատմելով՝ հենց այս Ձոււթութ շահն է շինել տվել Ղանտահարը:

Ահա այսպես Ղանտահարը մի անմատչելի տեղ է, բայց Պարսկական շահերի տիրապետութեան ժամանակ Ղանտահարը՝ Ուլահուշից մինչև Պիլեքեր, վրացական խաներին է հատկացվում. նույնիսկ Մուրվիյիզի ժամանակ էլ մի վրացի խանի ձեռքին է լինում:

Հիմա պիտի հարց տաք թե՛ «քանի որ Մուրվիյիզի ժամանակ էլ վրաց խանի ձեռքն է լինում, ապա Մուրվիյիզը թնց է խլում նրա ձեռքից: Ահա թե ինչպես է խլում:

Մուրվիյիզի ժամանակվա վրացի բեկը մի ուսող-խմող մարդ է լինում, գնում է Ղանտահարի դյուղերը, մի երկու օր ուտել-խմել, քեֆ անելուց հետո, գիշեր ժամանակ, շահերով դալիս մտնում է Ղանտահար: Սրա քեֆ անելու մշտական ձևը այս է լինում:

Ղանտահարի նահանգի այն ժամանակվա աղղեցիկ բեկերից մեկն էլ Մուրվիյիզն է լինում: Սա տղվաններից շատերին իր կողմն է գրավում, խորհրդակցում են և որոշում այսպես՝ «վրացի խանը վերջերը, շահերով քեֆից վերադառնալիս հարձակվենք, սրի անցնենք ու Ղանտահարին տեր կանգնենք»: այս որոշումը միաբանութեամբ կատարել, բեկի մարդկանց բոլորին էլ կոտորել և վերջապես Ղանտահարին տիրել են:

Այս լուրը հասել է շահին, շահը զորք է ուղարկել Ղանտահար, բայց զորքի մի քանորդը չի մնացել, այնպես չոր ու ցամաք, ամայի, յետ ընկած, անապատներիով ճանապարհներ, ուր կլիման վատ, ջուր չկա. ահա այսպիսի ճանապարհից անցնելով Ղանտահար հասած զորքին հասկանալի է ինչ է վիճակվում: Աղվանը շատվոր, իրա երկրում, իրենց աներից դուրս են գալիս կռվում, եկող զորքին կոտորում: Ի՞նչ մի առանձին դժվարութեան կա այսպիսի կռվում Աղվանի համար: Տարիներ շարունակ շահը զորք է ուղարկում, իսկ աղվանները կոտորում են: Շահը տեսնում է ճար չկա, Ղանտահարը գրավելուց հույսը կտրում և հրաժարվում է:

Այնուհետև Մուրվիյիզը հետզհետե գորանում, Ղանտահարում խան է դառնում. վերջն էլ Շահի վրա է արշավում: Ահա այս է Մուրվիյիզի ուժեղացման պատճառը:

Գանք մեր հին պատմութեան թե թահմաղ Ղուլին ինչպես գրավեց այս երկիրը (Ղանտահարը):

Թահմաղ Ղուլին այս լեռան չորս բուրբը, մեկ թնդանոթի հեռավորութեան վրա փոսեր է փորել տալիս և այդ փոսերի մեջ, տեղ-տեղ, իրարից կես գնդակի հեռավորութեամբ աշտարակներ շինել տալիս և սրանց յուրաքանչուրի մեջ 5—10 մարդ տեղավորում: Ահա այսպես շրջապատել էր Ղանտահարը:

Մեր պատմութեան ժամանակ Ղանտահարի խանը Հյուսեյին խանն էր, Մուրվիյիզի տղան:

Թահմաղ Ղուլին, բերդից [պարսպից] դուրս գտնվող լեռան մեջտեղ ամենաբարձր մի կետում թնդանոթի դիրք պատրաստել տվեց և հազար ու մի շարչարանքով թնդանոթը հանել տվեց այդ դիրքը: Այդ դիրքի տեղի ընտրութեան մասին հետևյալ բացատրութեանը տվին՝ «Երբ Մուստաֆա փաշան այստեղ էր, Թահմաղ Ղուլին նրան տարել է այդ լեռան վրա, որտեղից Մուստաֆա փաշան դիտել է Ղանտահարը և տեսել է, որ այստեղից շուտ կանսվի այս բերդը, որովհետև միայն այստեղից կարելի է բերդը [պարսպը] ուժակոծել, ուրիշ տեղից Ղանտահարը գրավել հնարավոր չէ»: Ահա այսպես ասին, մենք չենք լսել, բայց կարող է ասած լինի, որովհետև Մուստաֆա փաշայի զնալուց հետո է, որ Թահմաղ Ղուլին սկսեց շինել տալ հիշյալ թնդանոթի դիրքը, սրանով էլ եղբակացբինք, որ ասվածը ճիշտ է, Մուստաֆա փաշայի ցուցումով է թնդանոթները այնտեղ հանել: Բացի դրանից մի ուրիշ անգամ Ղանտահարը այս տեղից է գրավվել: Այստեղ մի բուրջ կա որը «Դադա բուրջի» է կոչվում: Առաջին գրավման ժամանակ էլ ահա այս բուրջի կողմից են մտել:

Այս անգամ էլ նույն այս կողմից ըսկըսան թնդանոթի հարվածներով բերդի [պարսպի] պատը քանդել: Քանդեցին և զինվորները որոշեցին հետևյալ օրը հարձակու-

մով ներս մտնել: Բայց լույսը բացվելուն, տեսան բերդի [պարսպի] քանդված մասը շինվել է պաշարվածների կողմից:

Միառժամանակ, այսպես՝ պարսիկները ցերեկը քանդելով, Ղանտահարցիք գիշերը քանդվածքը շինելով՝ ճար չգտան ներս մըտնելու:

Թահմազ Ղուլին իր զորքին տրեխներ պատրաստել տվեց և (պատվիրեց) հրամայեց՝ «վաղը բերդում [պարսպում] թնդանութի հարվածներից անցք բացվելուն պես, անմիջապես հարձակվեք և ներս խուժեք, մի անգամ ներս մտնելուց հետո հեշտ է գրավել»:

Թահմազ Ղուլիի զորքը այս ծրագրով պատրաստվեց և սկսեց բերդը [պարսպը] ուժակոծել: Մի կողմը քանդեցին և հարձակվեցին, բայց արվանները նախապես ներսից պատրաստվել են՝ պարսպների վրա քարեր են շարել: Պարսից զորքը երբ բարձրանում էր այդ ձիգ լեռան կեսին, ադվանները պարսպից քարերը հանետում էին, և որովհետև բարձրացած լանջը հող չէր որ քարը թաղվեր, այլ լերկ ժայռ, քարը նետվելուն՝ երկու երեք մարդ սպանում և գլորվելով ընկնելիս՝ հինգ-վեց մարդ էլ վիրավորում էր: Այսպես թէ այնպես, այդ օրը մինչև երեկո սպանվածներ և վիրավորներ տալով չկարողացան բերդը գրավել:

Թահմազ Ղուլին մտածեց նենդությամբ գրավել Ղանտահարը:

Պատգամավորներ ուղարկեց Հուսեյին խանին, թե՛ թող գա ինձ տեսնելու, ես նրան շատ պատիվ-հարգանք կտամ: Ոչ մի փասս չեմ տալու ոչ Հուսեյին խանին և ոչ էլ նրա մարդկանց: Գրություն (բազամ) կտամ, կերդվեմ, որովհետև երկու մուսուլման իրար ջարդեն վայել չէ: [Երկրորդ] լսել եմ նաև, որ ձեր պատրաստությունն ու պաշարը շատ են, երեք չորս տարի կարող եք դիմանալ, բայց եթե կարծում եք, որ այդպես ներսը փակված մնալով ես կը թողեմ և կը հեռանամ, կը սխալվեք: Տասը

տարի կապանեմ այստեղ և մինչև չնվաճեմ չեմ հեռանա:

Պատգամավորները գնացին Հյուսեյին խանի մոտ:

ԴԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Պատգամավորները գնացին Ղանտահար, հայտնեցին Թահմազ Ղուլու առաջարկները: Ղանտահարցիք հավաքվելով առաջարկները քննում, երկու կարծիքի են բաժանվում: Մի մասը ընդունելի է գտնում առաջարկությունը, մյուս մասը՝ անընդունելի և վատ հետևանքներով լի: Բայց վերջապես ընդունում են պայմանով, «որ Թահմազ Ղուլին գրություն (բազամ) գրի և իր կնիքով կնքի, որ մեզ ոչ մի փասս չի տալու, միայն այս պայմանի կատարումով կզանք Թահմազ Ղուլիի մոտ» — ասացին Ղանտահարցիք պատգամավորներին:

Թահմազ Ղուլին պատգամավորներից լսելով Ղանտահարցիների պահանջը՝ ասաց. «շատ լավ թող գրություն գրվի. գրեցին, ստորագրեց, կնքեց և այսպիսով վստահացրեց Հյուսեյին խանին, որ իր կողմից ոչ մի փասս չի հասցնելու ոչ անձամբ իրեն՝ Հյուսեյին խանին, ոչ նրա խաներին, ոչ բեկերին և ոչ էլ բերդում գտնվողներից որևէ մեկին:

Ղանտահարցիք կարդացին և հավանություն տալով հանձնվեցին, եկան Թահմազ Ղուլիի մոտ (խաքը փայլինա):

Հետևյալ օրը, Թահմազ Ղուլին Հյուսեյին խանին (ղաֆտան) հաղցրեց, գովեց նրան — ասելով... ապրիս, ապրիս խան, գոհություն աստուծո (բերեքեթիլլահ) [խելոք վարմունքիդ համար]: Պատվեց և խալաթներ հազցուց Հյուսեյին խանի հազարապետներին, առաջարկեց քսան զուբուշ²⁾ ասականով իրա մոտ ծառայության մտնել: Նրանք էլ խորին շնորհակալություն հայտնելով ավելացրին... «տեր իմ հողով-մարմնով քո ծառաներն ենք»:

Ահա այսպես Ղանտահարը հանձնվեց: Մի քանի օրից հետո Թահմազ Ղուլին իր մոտ կանչելով Հյուսեյին խանին, հայտնեց՝ մեր շահը [իր կողմից բանտարկված

¹⁾ Բնագրում գրված է պատվիրեց (թեքրիհ):

²⁾ Հարյուր զուբուշը՝ մի տաճկական սակի է

Թահմազ շահը] մի գրությամբ հետևյալ հրամանն է ուղարկել՝ «Լսել եմ, որ Մուրվիյի թղթի տղա Հյուսեյին խանը Ղանտահարը ձեզ հանձնել և ինքն էլ ձեզ մոտ է եկել, արդյոք ինչպիսի մարդ է, ցանկանում եմ նրան տեսնել»։ Թահմազ Ղուլին ավերացրեց՝ մեր շահի ցանկությունը կատարելու համար քեզ նրա մոտ եմ ուղարկելու։

Հյուսեյին խանը հարցրեց Թահմազ Ղուլիից — Տեր իմ, արդյոք շահը մեզ չի փնասելու։ Թահմազ Ղուլին պատասխանեց, «բարբոթին մի վախեցիր քեզ ոչինչ փնաս չի անի»։ և մի քանի հայրուր գործով Հյուսեյին խանին ուղարկեց Սեպրիվար քաղաք՝ շահ Թահմազի մոտ։

Հյուսեյին խանին ուղարկելուց հետո, Թահմազ Ղուլին, հատուկ գրությամբ սուրհանդակ ուղարկեց շահ Թահմազին, ուր նրան գրում էր՝ «Ձեզ մոտ եմ ուղարկում Մուրվիյի թղթի տղա Հյուսեյինին, որի հայրը ավերել է քո երկիրը և սպանել քո հորն ու եղբարներին։ Ուղարկում եմ նրա համար, որ դու էլ քո հոր և եղբայրների վրեժը նրանից առնես»։

Շահ Թահմազը ստանալով Թահմազ Ղուլիի նամակը, կարդաց և ասաց, «Ինչ եմ անում Մուրվիյի թղթի տղա Հյուսեյինին, ինքն է ինձ բանտարկել, երկիրս սուր, տեր ու տիրական դառել, մի գունդ անաստվածներին ինձ վրա պահակ կարգել, նեղություն են տալիս, խոսքս չեն լսում, բանտում եմ, ինքն էլ Մուրվիյի թղթի պես անտիրտ-անգութի (զալիմ-զալիմ) մեկն է։ Մուրվիյի թղթի տղան է ուղարկում ինձ, իբր թե մի հազվագյուտ նվեր է ուղարկում։ Եթե իմ բարին ցանկանում է, ինձ բանտից թող ազատի, շահությունը իրան լինի, ինձ մի կտոր տեղ հատկացնի, որպեսզի գնամ իմ ընտանիքով, երեխաներով մի կտոր չոր հաց ուտեմ, աստծուն աղոթեմ և այս անաստվածների երեսը չտեսնեմ»։ Այսպիսի [բովանդակությամբ] պատասխան գրեց ուղարկեց Թահմազ Ղուլիին։

Թահմազ Ղուլիի ուղարկած սուրհանդակը դեռ Թահմազ Ղուլիին չէր հասել [չէր վե-

րադարձել], Հյուսեյին խանը Թահմազ շահի մոտ հասավ, Շահը հարցրեց և իմացավ, որ Թահմազ Ղուլիի ուղարկած մարդն է և առանց խոսելու, առանց մի բառ ասելու՝ դուրս վճռեց Հյուսեյին խանին իր մոտից։ Պահն էլ առանց մի խոսք ասելու դուրս եկավ։

Հյուսեյին խանին Թահմազ շահի մոտ ուղարկելիս, Թահմազ Ղուլին նախապես պատվիրել էր իր մարդկանց, որ եթե շահ Թահմազը չսպանի Հյուսեյինին, մի քանի ժամվա ժանապարհ հեռացնելով քաղաքից, (Սապրիվարից) իրանք սպանեն։ և սպանեցին։

Դառնա՛նք Ղանտահարի առնվելուն։

Թահմազ Ղուլին տասնը ութը ամիս պաշարելուց և նենգությամբ քաղաքը գրավելուց հետո, Ղանտահարի դիմացի դաշտում նոր Ղանտահար շինեց, հին քաղաքի բերդը, պարիսպը, տները քանդեց այնպես ավերակ դարձրեց, այնպես լերան լանջը մերկացրեց, որ կարժես այստեղ շինություն չի եղել։

Քաղաքի գույքն ու կայքը գրավեց, իսկ ժողովուրդը տեղափոխեց նոր քաղաք, տմեն մեկին հող հատկացրեց։ Նոր քաղաքի կարգ ու կանոնը հաստատելուց հետո իր զորքը քաշեց Հինդու վրա։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ԹԱՀՄԱԶ ՂՈՒԼԻ ԴԵՊԻ ՀԻՆԴ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պատմեցինք, Թահմազ Ղուլին Ղանտահարը գրավելուց, նոր Ղանտահարի կարգ կանոնը հաստատելուց հետո, դեպի Հինդու ճանապարհվեց։

Առաջինը՝ զորքը քաշեց Քելաթ անտառով երկրի [քաղաքի] վրա։

Եթե Քերքյուք քաղաքը տեսել եք, այս Քելաթ քաղաքի դիրքը ճիշտ նրա նման է, շինված՝ մի լերան գագաթին, կամ Քերքյուքն ես տեսել կամ Քելաթը։ Տասը հազար աղվան ընակիչ ունի։

Թահմազ Ղուլիի դեմ պատերազմեց,

դնդակը¹⁾ սպառվեց, սկսեցին սրով կռվել, սրերը կտոր կտոր եղան, հրացանների կոթերով սկսեցին կռվել, հրացանի կոթերն ալ ջարդվեցին, սկսեցին քարերով կռվել, ոչ ոք կռվից չխուսափեց, մինչև բոլորը ուժասպառ ընկան, և այս տասը հազար աղվանից ոչ ոք չփախավ և ոչ ոք գերի չընկավ, բոլորը կոտորվեցին, բայց զըզըլ-բաշները (պարսիկները) շատ զոհ տվեցին: Թանձաղ Ղուլին Քելաթի բերդը քանդեց, այնպես հասկացեք, որ հողի հետ հավասարեցրեց: Կոտորվող տասը հազար աղվան զորքից մեկի զանգը չափեցի երկու թզաչափ եր:

Թանձաղ Ղուլին այս տեղից առաջացավ դեպի Մանձուտի Ղաղնի: Սրանք չընդդիմացան և անմիջապես հանձնվեցին: Թանձաղ Ղուլին այցելեց Մանձուղ Ղաղնիի դամբարանն ու այստեղից ել առաջանալով հասավ Քապուլ և պաշարեց:

Քապուլում ոչ ոք թանձաղ Ղուլիին չընդառաջեց, 7—8 օր անցավ, ձայն ձուռն չկա: Թանձաղ Ղուլին կասկածեց, չլինի քապուլցիները մի խորամանկութուն են մտածում իրան դեմ, նրանք ներսն են, իսկ ինքը դուրսը:

Քապուլի առաջը այգիներ են՝ շատ խիտ ծառերով, հովասուն, այնպես քեֆի (զվարթացուցիչ) տեղեր, որ այս ծառերից քաղաքը բոլորովին անտեսանելի է:

Թանձաղ Ղուլին սկսեց ծառերը կտրել տալ: Այգիներն ու ծառերը կտրել տալուց հետո բանակատեղից բերդի [պարսպի] մի մասը երևաց: Մի քանի տներ կային բերդի ճանապարհին, վառեցին՝ քար ու քանդ արին: Ներսից լուր եկավ, որ հեռեկալ առավոտ կռիվ են տալու, չորս հայրուր միլիթանիներ [խլամության աղանդավոր?] քանը հինգահան դահեկանի սրամարտիկ են գրվել: Թանձաղ Ղուլին ևս պատրաստվեց:

Հեռեկալ օրը բերդի [պարսպի] դռները բացվեցին, միլիթանիները հաշիշով օշարակը խմած՝ վահանը ձեռներին, մերկ սրերով, հետխոտն դուրս եկան: Թանձաղ Ղուլիի զորքը ձիավոր, նրանք հետխոտն:

Թանձաղ Ղուլին ևս փախչելու հրաման արձակեց: Զորքը ևս նահանջեց: Այս չորս հարյուր միլիթանիները հետաադնեցին թանձաղ Ղուլիի զորքերին, որոնք նահանջեցին այնքան, որ այս հիմար հարբածներին դուրս քաշեցին ծառերի, այգիների սահմանից, հասցրին մինչև հարթավայր: Թանձաղ Ղուլին հարձակման հրաման տվեց: Նահանջողները միլիթանիներին շրջապատեցին—բռնեցին, հավաքեցին: Նույնիսկ իմ աշակերտներիցս մեկը, որ դիտելու էր գնացել, երկու հողի վերցնելով մեր վրանը բերեց, խոսեցինք և քաղաքի մասին էլ տեղեկութուններ վերցրինք:

Վերջի վերջո, առանց մեկի քիթն արնոտելու, քաղաքը հանձնվեց Թանձաղ Ղուլիին՝ քաղաքագլխի միջոցով, խանը չկար, փախել էր: Թանձաղ Ղուլիի հարցին թի՛ «ո՛ւր է այս քաղաքի խանը»՝ քապուլցիք պատասխանեցին. «Տեր իմ, Ջալալաբաթ փախավ»:

Թանձաղ Ղուլին յոթն հոգուց բաղկացած պատգամավորութուն ուղարկեց Ջալալաբաթ՝ Քապուլի խանին, որ զա հանձնվի, բայց նա պատգամավորներից վեցը սպանեց՝ յոթերորդի քիթն ու ախանջները կտրելով՝ ևս ուղարկեց:

Թանձաղ Ղուլին սրանեղած բանակը քաշեց Ջալալապատի վրա, բայց խանին այստեղ չգտավ: Բարկանալով՝ քաղաքի մինչև կատուներն ու շները սրի քաշեց և քաղաքն էլ հրկիզեց, մոխիր դարձուց այնպես, որ կարծես ոչ մի շինութուն չի եղել այստեղ: Անցնող-դարձողները որեէ մի բանից չէին կարող եզրակացնել, որ այստեղ Ջալալապատ քաղաքն է եղել:

Բայց ձեզ զարմանալի մի բան պատմեմ: Քապուլ քաղաքում տասնը վեց հաաթնդանոթ կար, որոնց կանկ-թեմուրն էր ձուլել տվել. տասնը վեցն էլ այնպես գեղեցիկ, այնպես համաչափ, այնպես բարեձև՝ կարծեք նոր էին ձուլվել. մենք ամեն օր դիտելու էինք դ՛ուռմ, ամեն մեկի երկարութունը տասնը հինգ-տասնը վեց արշին [10—11 մետր], բոլորի վրա ուռմի՛ լնդվով փորագրութուններ կային: Քապուլցիք շատ են

¹⁾ Այդ դարում փողից լնգվող հրացաններ էին կաղարե գնդակով:

²⁾ Լատիներեն կամ հունարեն:

աշխատել այս թնդանոթներից մեկը բեր-
դի գլուխը հանել թահմազ Ղուլիի գին՝ որ-
ներին ահաբեկելու²⁾, բայց չեն կարողացել:
Թահմազ Ղուլին ուղեց այս թնդանոթները
Պարսկաստան տանել, բայց նա էլ չկարո-
ղացավ և որովհետև ավելի ևս առաջ պի-
տի գնար, քաղաւցիները մոտ այս թնդա-
նոթները թողնել չուզեց, վախենալով, որ
իր հետևից կարող է խփեն, ուստի, ճարա-
հատյալ կտոր կտոր արեց այդ գարմանալի
թնդանոթները և փոքր թնդանոթներ ձու-
լիլ տվեց:

Ջալալապատ քաղաքը (ինչպես վերև
պատմել էինք) հողի հավասարեցնելուց հե-
տո, Թահմազ Ղուլին դորքը շարժեց դեպի
Խայբեր կիրճը: Այս կիրճի մի ծայրից-մյու-
սը քսանը չորս ժամ է քաշում: Կիրճի
մյուս ծայրում՝ Փեշավար քաղաքի նասըր
խանը իր դորքով դիրք բռնել, սպասում էր:

Թահմազ Ղուլին կիրճի այս կողմում
մտածում էր, թե արդյոք թնց կարող է
անցնել, տեղ կա, որ հազիվ մի ձի կարող
է անցնել, տեղ կա՞ տասը ձի: [Այդ միջոցին՝
մի լրտես եկավ, և հայտնեց Թահմազ Ղուլիին
թե՛ «Շահն, ձեզ անցնելու մի ճանապարհ
կա, բայց դժվարանցանելի է, միայն ուքով
մարդը [հետևակը] կարող է գնալ, ձիով ան-
կարելի է»: Թահմազ Ղուլին հետաքրքրվեց,
թե ուր է տանում այդ ճանապարհը: Լրտե-
սը թե՛ նասըր խանի դիրք բռնած կետից
մեկ և կես-երկու ժամ ավելի ներս:

Թահմազ Ղուլին արեխներ կարել տվեց,
ցորենը բովել տվեց, ձիերն ալ քաշելով՝
դորքի մի մասը հեռն առավ ու լրտեսի
ցույց տված ճանապարհով առաջացավ:

Առավոտյան դեռ լույսը բացվելուն եր-
կու ժամ մնացած՝ դուրս եկան մի հարթա-
վար, որ նասըր խանի կիրճի ծայրում
բռնած դիրքից մեկ-երկու ժամով էլ դեպի
ներս էր:

Իսկ նասըր խանը, կիրճի ծայրում, հան-
գիստ քնի մեջ էր: Կարծելով, թե Թահմազ
Ղուլիի համար այդ անմատչելի ճանապար-
հով [լրտեսի ցույց տվածով] անցնելն ան-
կարելի է, նասըր խանի դորքն առք փա-
սոք հանվել, հանգիստ քնել էր:

Թահմազ Ղուլին իր հեռ տարած գոր-
քին պատվիրեց, որ թե՛ հիմի հերոսներ,
օրն այս օր է, եթե ընկճվեցինք, ոչ մեկս
ողջ չի մնա: Աղոթեցին և հեծան ձիերը:

Կիրճի ծայրում նասըր խանը դեռ քնի
մեջ էր:

Թահմազ Ղուլին վրա տվեց և նասըր
խանին էլ վերավորեց. երեք բլուր մար-
դու գանգ հավաքել տվեց: Կիրճը բանալով
լուր ուղարկեց, որ բանակն անցնի: Ես,
ձեր ծառա Թամբուրի փոքրիկ (քյուչուք)
Աբութինն էլ այդ բանակի հեռն էի: Հա-
սանք կիրճի մեջ տեղը, քնեցինք. ինչպես
վերև հիշել էի, կիրճի մեկ ծայրից մյուսը
քսանը չորս ժամվա ճանապարհ է, մի օրում
չէինք կարող անցնել: Հետևյալ օրը երե-
կոյան դեմ դուրս եկանք կիրճից, տեսանք
Չարդել, կոտորել, երեք բլուր գանգ են հա-
վաքել:

Երեք օր հետո Թահմազ Ղուլին դիվան
կազմեց և իր ներկայության կանչելով նա-
սըր խանին՝ ասաց. «Թահմազ Ղուլին կիրճը
լավ բացավ, խան»:

Սանը պատասխանեց. «Ձե՛ շահ, արիու-
թյամբ չբացիր, այլ խարդախությամբ»:

Թահմազ Ղուլին ասաց. «Ճիշտ ասացիր
խան, բայց այս այնպիսի մի կիրճ է, որ
միայն մի անգամ մեծ մարդարէ Ալին
(հազրեթի Ալի) հաղթահարել է: Բայց
տղամարդության իննը մասը խարդա-
խություն է, միայն մեկը արիություն,
առանց խարդախության քաջություն չի
լինի» — ավելացրեց Թահմազ Ղուլին:

Ինչպես վերև հիշեցինք՝ նասըր խանը
վերավորվել էր: Թահմազ Ղուլին վերաբու-
բերել տվեց, հարգանք-պատիվ ցույց տվեց,
մուշտակ հազցուց և նորից Փեշավար քա-
ղաքի խան կարգեց:

Մեծ քաղաք եր Փեշավարը և Թահմազ
Ղուլին բավական ժամանակ մնաց: [Այդ
միջոցին] Աթակ գետակին մարդիկ հատ-
կացրեց, ջիսերներ (լաստ) կապել տվեց:

Աթակ գետակը անցանք, այնտեղից մի
քանի քաղաքներ էլ մտանք, բայց անուն-
ները մոռացել եմ:

Ջեյհուն կոչվող մեծ գետը հասանք, որը
անցնում է (Քիշմիրէ աքար) Քիշմիրի կող-
քով, լայնքը Պոլսո Բախչե-Գարուից մինչև

²⁾ Բնագրում խրանեցնելու (խրքիւթմեք):

Առաջին [սակեղջուր] կլինելու Դեռ մենք Քիշմիլից մի քանի օրվա հեռավորութիւն ունեցինք, Քահմազ Առլին (Թոմբարներ) նստելու, (Նիսերներ) շինել տվեց և մենք Ջեյհուն գետը այնպես անցանք:

Ջեյհուն գետը անցնելուց հետո Լահոր հասանք: Այս Լահորի խանի մի արարքը պատմեմ, բայց դարմանալի մի վարմունք է: Դեռ մեր առաջապահը Լահոր չհասած, — իսկ մեր առաջապահը ով էր գիտէք, Հաճը խանն էր, — Լահորի Բահատուր խանը քաղաքի և գյուղերի իր ցեղակիցներին լուր է ուղարկում, թե՛ թշնամին գալիս է, արեք քաղաք մտեք որպեսզի չվնասվենք: Այս հրամանին ոմանք ենթարկվել զնացել են, ոմանք չեն գնացել. մինչ այդ Հաճը խանը համոզում է չգնացողներին, որոնք դիմադրում են, բայց Հաճը խանը մի քանիսին կոտորում է:

Այս միջոցին մի լրտես է գալիս Քահմազ Առլի մոտ և ասում. «Իմացած եղիր Շահն, սրան Բահատուր խան են ասում, յոթանասուն-ութանասուն հազար ձիավորով է դուրս գալիս, սա Հինդու մեջ հուշակ ունի»:

Քահմազ Առլին պատասխանում է. «Աստված որոքմած է, աստված կամ մեզ կտա (հաջողութիւնը), կամ նրան»:

Ամբողջ բանակով Լահորի դեմ գնացինք, վրանները խփեցինք նստեցինք: Նրանք էլ բերդի դռները փակել ներսը նստել են:

Երեք օր սպասեցինք: Չորրորդ օրը Բահատուր խանը մի քանի պատգամավոր ուղարկեց, որոնք հայտնում են, թե, — Բահատուր խանը ցանկանում է Շահի [Քահմազ Առլի] հետ տեսակցել. Քահմազ Առլին պատրաստակամութիւն է հայտնում:

Հաջորդ օրը Բահատուր խանը 80 հազար ձիավորով դուրս եկավ [բերդից], ասացին Բահատուր խանը՝ գալիս է. Քահմազ Առլին թե՛ թող գա, արգելք չկա:

Բախչէ Գափուից Սամաթիա հեռավորութիւն վրա (մոտ երկու-երեք կիլոմետր) դորքը թողեց, իսկ ինքը Բահատուր խանը երեք ձիավորով առաջացավ դեպի Քահմազ Առլին. մի գնդակի հեռավորութիւն վրա ձիուց իջավ, այդ երեք ձիավորներին էլ այնտեղ թողեց և ինքը գեանիվեր բարե տալով հասավ Քահմազ Առլին: Քահմազ

Առլին նրան ընդունեց՝ «հրամեցեք» ասելով, իսկ Բահատուր խանը նրան պատասխանեց «Շահն» բացականչութիւնով:

Տեսակութիւն միջոցին Քահմազ Առլին Բահատուր խանին հարց է տալիս. «Յան, քո մասին ինձ հայտնեցին, թե քաջ աղամարդ է, կովող և զորքն էլ շատ, հապա ինչ՞ու չկովեցիր»:

Բահատուր խանը պատասխանում է. «Ճիշտ ևս ասում, Շահն, միայն պատերազմ չանելուս պատճառը հետևյալն է՝ Մենք երեք եղբայր էինք, մեր հայրն էլ խան էր, շատ գիտուն և բանիմաց մարդ, մենք երեք եղբայրներս էլ երիտասարդ էինք: Հայրս ամեն օր և ամեն ժամ մեզ խրատում և ասում էր. «Իրանի կողմից մի տղամարդ պիտի երևան գա, տղաներս, ևս կմեռնեմ, դուք ողջ կմնաք, եթե այդ տղամարդը ձեր ժամանակ երևան գա, նրան չդիմադրեք, կվնասվեք, եթե հարգեք, նա էլ ձեզ կհարդի ու կը պատվէ»: Հայրս միշտ խոսում էր այս մասին: Հիմա մեր շահը որ երևան եկավ, ևս մտածեցի, արդյոք հորս խրատին հետևեմ թե ոչ: Վերջի վերջո ևս եզրակացրի՝ «Հոր խոսքը լսելը լավ է. հոր խրատին հետևողը վնասով դուրս չի եկել»: Ահա թե ինչու չպատերազմեցի, Շահն»:

Քահմազ Առլին «մաշալլահ» բացականչութիւնով գովեց Բահատուր խանին և ավելացրեց. «Աստված լուսավորե ձեր հոր հողին, շատ իմաստուն և բանիմաց մարդ է եղել, ճիշտ որ ձեր հոր գուշակած տղամարդը ևս եմ»:

Քահմազ Առլին խալաթ է հագցնում Բահատուր խանին և ասում է. «Քեզանից ոչ նստել եմ ուզում, ոչ էլ քո ունեցվածքից մի քանի կարիք ունեմ. ևս ավելի առաջ պիտի գնամ, դու միայն պաշար հասցուր ինձ»:

«Ելիսիս վրա Շահն» — պատասխանում է Բահատուր խանը:

Ահա այս է Բահատուր խանի վարմունքի մասին լսածս, ճիշտ է թե ոչ, համենայն դեպս շատ լավ արեց, առանց մի կաթիլ այրուն թափելու ապահովութիւն ստացավ և քաղաքի խանութիւնն ալ էլի իրան տրվեց:

Քահմազ Առլին մուսուլմանի կանչել տվեց

իր զորքի մեջ՝ «Վայ այն մարդուն, որ Լահոր քաղաքը գնալուն մի կողմիցի վնաս կամ թալանչուծություն կանի: Ով ուզում է բանակից կարող է քաղաք գնալ՝ առևտուր անել, իսկ քաղաքից էլ ով ուզում է կարող է բանակ դալ՝ և առևտուր անել»:

Ես, նվաստ (Փաղիբ), փոքրիկ Արուսիկնս, բանակի շուկայում ման գալիս, հանկարծ սրբերի ձայն, խառնաշփոթություն փրթավ, տեսա Լահորի մարդկանց սուր են քաշում: Թահմազ Ղուլին հրամայում է կարգապահություն պետին՝ բոլորին բռնել բերել, նա էլ մոտ չորս հայրուր հողի բռնում բերում է Թահմազ Ղուլիի առաջը:

Թահմազ Ղուլին հրամայում է տանել բոլորին էլ գլխատել. իսկ երբ կարգապահություն պետը հայտնում է, թե՝ «Շահն, մեղավոր անմեղ բոլորին բռնել բերել եմ» — Թահմազ Ղուլին ավելացում է, «տար մեղավորին սպանիր, անմեղին բաց թող»: Կարգապահություն պետը տանում մեղավորին սպանում, անմեղին բաց է թողնում և բանակի մեջ կարգը հաստատվում է:

ՔՎՈՒՆՆ ՎԵՑՆԻՈՐԴ

Լահորից հետո Թահմազ Ղուլին ավելի առաջացավ դեպի Ճիհանապատ:

Լրտեսը տեղեկացրեց, որ.— Շահն, Մեհեմետ շահն իր ամբողջ զորքով Ճիհանապատից դուրս եկավ դիմադրելու:

Թահմազ Ղուլին հասավ Սերի հինա: Մի քանի քաղաքներ էլ մտանք, բայց անունները խրթին լինելուն մտքումս չեն մնացել:

Սերիհինան անցանք և Թահմազ Ղուլին մտեցավ Մեհեմետ շահին: Մեհեմետ շահը Ճիհանապատից 6—7 հանգրվանի ճանապարհ առաջ էր եկել, զիրքեր բռնել, թնդանոթները տեղավորել, խրամներ փորել, բերդեր ու աշտարակներ շինել ավել:

Թահմազ Ղուլին իր ամբողջ բանակով հեռվից շրջապատույտ կատարելով՝ Մեհեմետ շահի հետև անցավ: Օրինակ. ասենք թե Ճիհանապատը էտիրնեն լինի և Մեհեմետ շահն իր բանակով դիրք է բռնել Ստամբուլում, իսկ Թահմազ Ղուլին գալիս է Իզմիթի վրայով, պետք էր սպասել, որ Սկյուտար կհասնի և այստեղ տեղի կունենա պատերազմը: Բայց այդպես չեղավ. Թահմազ Ղուլին

լին իր բանակը առաջնորդեց «կղզի»-ների վրայով դեպի Քյուչուք չեքմեհն և այստեղ դիրք բռնեց:

Դիրքերը այնպես էին դասավորվել, որ Թահմազ Ղուլին ավելի մոտ էր Ճիհանապատին և կարծես Թահմազ Ղուլին լիներ Ճիհանապատից թշնամու դեմ կռվելու դուրս եկողը, իսկ Մեհեմետ շահը օտար, հեռու տեղից եկած և հարձակվող: Այսպես ուրեմն Թահմազ Ղուլին Ճիհանապատի (մայրաքաղաքի) և նրա թագավոր Մեհեմետ շահի բանակատեղի արանքում դիրք էր բռնել, այնպես որ Մեհեմետ շահը իր մայրաքաղաքից հեռու էր մնացել:

Կարող եք հարց տալ թե՝ հապա մնց այդպես շուրջանց կատարեց, ասեմ. «այդ երկիրն իմ բերած օրինակի նման մի կողմը ծով և մի կողմը ցամաք չէ. լայն ու ընդարձակ մի հարթավայր է, որտեղ կրկինքը կարծես մի պնակի կափարիչը լինի այնպես հավասար ծածկած է երևում: Թահմազ Ղուլին ուղիղ թշնամու վրա չգնաց այլ կողքանց անցավ նրա թիկունքը. թե մենք, թե նրանք իրար տեսնում էինք»:

Պետք էր սպասել, որ Մեհեմետ շահը պիտի դիմադրեր, պիտի թույլ չտար իր թիկունքն անցնել, բայց տեղից անգամ չըշարժվեց: Երևի Մեհեմետ շահը մտածեց՝ Թահմազ Ղուլիի զորքերը թող տեղավորվեն, հետո դրանց երկու կրակի մեջ առնելով, (միաժամանակ հարձակում իր զիրքերից և իր մայրաքաղաք Ճիհանապատից) կոչընչացնեմ: Այդպես էլ սկսեց, միայն թե Թահմազ Ղուլին այդ մասին էլ մտածել էր:

Թե՝ Ճիհանապատից հարձակվողներին մասամբ ոչնչացնում, մասամբ փախցնում էր՝ և թե Մեհեմետ շահի հետ կռվում:

Անշուշտ հետաքրքիր է Թահմազ Ղուլիի բանակի քանակի մասին մի երկու խոսք ասելը: Այսպես, նրա սոճիկ ստացող մասը՝ երեսունը հինգ հազար էր, իսկ ամբողջ բանակում՝ երեք հարյուր հազար մարդ կար: Բանակից դուրս գալ հնարավոր չէր, մինչև որ Թահմազ Ղուլիից համապատասխան թույլատվություն չլիներ: Իսկ փախչել, նորից հնարավոր չէր. անա թե ինչու, առաջուց գնում են շարքաշները, իսկ բանակի երկու, երեք կամ չորս ժամ ետևից

«քշողներ»-ն էին գալիս: Նույն բանն էր և աջ և ձախ կողմերում: Եթե այդ մարդկանց ձեռքն ընկար, անպայման պիտի բերեն Քահմազ Ղուլիի մոտ, իսկ նրա վճիռը իհարկե պարզ էր:

Մի հետաքրքիր երևույթ՝ ամբողջ բանակում հիսուսն հազար կանայք կային. է՛, հիմա պիտի հարց տաք, թե բանակում ի՞նչ կարիք կա հիսուսն հազար կնոջ. այսպես՝ որը պոռնիկ է սիրել իր երկրում և հետը բերել, մի ուրիշը իր կինը, երբորդը՝ որպես սպասուհի, վերջապես կային մարդիկ, որ երկու-երեք կին ունեին:

Քահմազ Ղուլին երբ զինվորի կարիք ունենար, դիմում էր հետևյալ խորամանկութեան՝ այդ հիսուսն հազար կանանց տը դամարդու հազուստ էր հազցնում, զինում և ձիերի վրա նստեցրած նոսր շարքերով իր բանակի հետևի մասում պահում, խաբելու թշնամուն թե՛ դեռևս ահագին զինվոր ունի պահեստում:

Արևը մայր մտնելուն չորս ժամ էր մնում, երբ Մեհեմետ շահի հետ պատերազմն ըսկըսեց: Մինչև իրիկվա մթնաշաղը տեղի ունեցած այս պատերազմը սոսկալի էր, այնքան որ Քահմազ Ղուլիի քիթն ու բերանը հողոտված էին: Թշնամին տեղի չեք տալիս, լավ էր զիմադրում, մի բան, որին Քահմազ Ղուլին չէր սպասում:

Մեհեմետ շահի զինվորները պատերազմի փորձ չուներին. մինչդեռ Քահմազ Ղուլին և իր զինվորները, պարզ է, այսքան ժամանակ Օսմանցիների, Ռուսների և այլ թշնամիների դեմ մղված կռիվներում կռիվել էին: Այո՛ բոլորը նկատի առնելով, խակապես զարմանալի և ահուսալի էր Հրնդկացիների այսպիսի ուժեղ զիմադրութեանը: Ապրին (աֆերիմ) հնդկացիները:

Իրիկվա մութն իջել էր: Հնդկացիների գորահրամանատարին (որի անունը Սաատեթ խան էր) գերի էին բռներ Երկու կողմերն էլ ևս քաշվեցին: Սաատեթ խանին բերին բանակատեղի:

Հետևյալ առավոտ արշալույսին Քահմազ Ղուլին հրամայում է իր մոտ բերել Սաատեթ խանին: Հարցնում է նրան հրնդկացիների զինվորների, ռազմամթերքի և այլ բաների մասին: Սաատեթ խանը պա-

տասխանում է. «զինվոր էլ շատ ունենք, ռազմամթերք էլ, պարեն էլ. ամեն բան էլ ունենք»:

Քահմազ Ղուլին համոզվում է, որ եթե մի անգամ էլ սրանց հետ պատերազմի բռնվի, իր պարտութեանը անխուսափելի է, որովհետև մտածում է. «քանի որ այս հնդկացիները դեռևս պատերազմի փորձ չուներին, արյան հոտին վարժված չլինելով, նիհար ու կանացի բնավորութեան տեր՝ չորս ժամ որ սուսերամարտի զիմադրեցին, հապա եթե մի քանի օր պատերազմել սովորեն իմ նմուշը չեն թողնի»:

Ու սկսում է խորամանկութեան մտածել:

Դիմելով Սաատեթ խանին՝ Քահմազ Ղուլին ասում է. «Մեհեմետ շահը իմ եղբայրս է, ես եկել եմ նրա հետ տեսութեան, հյուր չի՞ ընդունի»: Սաատեթ խանը չի պատասխանում: Քահմազ Ղուլին ավելացնում է. «Գրիք Մեհեմետ շահ եղբորս, որ ես նրա հետ տեսութեան եմ եկել, բարեկամութեան եմ եկել և ոչ թե թշնամութեան. վերջապես ինչպես կուզես գրիր, միայն թե էլ կռիվ անել չտաս»:

Սաատեթ խանն էլ իր շահին ինչ է գրում-չի գրում, նամակն ուղարկում է: Մեհեմետ շահը այս նամակը ստանալով՝ կարդում և պատասխանում է. «Քահմազ Ղուլին մտավորապես երկու հարյուր հազար մարդ ունի. աշխարհում ձրտեղ տեսնվել է այսպիսի հյուր»:

Քահմազ Ղուլին նորից իր մոտ է կանչում Սաատեթ խանին և ասում. «տե՛ս, խան, այս գործը դու հաջողացրիր, լավ, թե ոչ ինքզինքդ մեռած համարիր. ես այստեղ ես դառնալու չեմ եկել. մեռնելու եմ եկել (—ես կը մեռնեմ, բայց չեմ դառնա)»:

Սաատեթ խանն ինչ անի, հոգին անուշ է, ինչ գրում է չի գրում իր շահին և ահա Մեհեմետ շահից պատասխան է գալիս, թե՛ «վաղը պալու եմ»: Այսպիսի գրական պատասխանը բացատրվում է նրանով, որ Մեհեմետ շահը շատ սիրելիս է լինում Սաատեթ խանին, հավատացած է լինում, որ նա անընդունակ է ստելու, մանավանդ, որ Սաատեթ խանը տոհմիկ և գործունյա, հնդկական ահագին նահանգներ նրան վրա-

տահված, հնդկացիների մեջ հաճախ պատահած կռիվներում դեկավար, և ամեն մի դործ հաջողութեամբ լուծող (երեսը սպիտակ հանող): Ահա Սաատեթ խանին այսպիսի հավատ ընծայված լինելուն, վստահում և «վաղը գալու իմ» պատասխանը ուղարկում է:

Մեհեմետ շահի վեզիրը՝ (նախարարապետ) Քամերտի խան, կարգապահութեան պետը, ամբողջ նախարարները, մեծամեծները, գիտունները, մեծ ու փոքր բոլորը ասել են. «Տեր իմ, ինչ բանի պակասութուն ունեք, որ վաղը գնալու մասին ձեր կամքն եք հայտնում: Փառք աստուծո ամեն բան ունենք, թե դինվոր, թե քաղմածիք, թե պարեն, թե թնդանոթ. մեր գանձարանն էլ լիքն է: Եթե գինվորի պակաս եք պահում, հրամայեցեք թող գինվոր հավաքվի: Եթե ուրիշ թշնամիներ էլ ունեք, լուր ուղարկեցեք մեր հարևաններին բարեկամութեամբ աջապիսի օրվա համար է. չէ՞ որ մենք նրանց կողքին միշտ էլ կռվել ենք, թող հիմա էլ նրանք գան մեզ օգնեն. օտար երկրներից հայտնված այս թշնամուն դուրս մղենք, ազատենք մեր գավառները և նորից մեր բարեկամութեամբ բարեկամութեան կլինի (կամրապնդվի): Ահա այսպիսի բովանդակութեամբ գրեցեք մեր բարեկամ հարևաններին: Այսպիսի միջոցներով, առաջ աստված, այդ թահմազ Դուլի կոչեցեալի բուրդը կը գզենք և դուրս կը վճատենք:

Այս խորհուրդների վրա Մեհեմետ շահը նորից նամակ է գրում թահմազ Դուլիին թե. «Իս քո ոտին չեմ գալու, պատերազմ ունեմ, պատրաստ եղիր [մահվան]»:

Թահմազ Դուլին նորից է կանչում Սաատեթ խանին և ասում «վաղը, նախքան պատերազմ սկսելը քեզ կզլխատեմ ու նոր միայն պատերազմ կգնամ» և խիստ նեղանալով, հանդիմանում ու դուրս է վընջատում:

Սաատեթ խանը համոզվում է, որ պիտի սպանվի, ինչ անում է չի անում Մեհեմետ շահի սիրտը շահում ու բերել է տալիս թահմազ Դուլիի մոտ:

ԳՎՈՒՆ ԵՌԹԵՐՈՐԳ

Երբոր Մեհեմետ շահի գալուստի մասին թահմազ Դուլին լուր է ստանում, կարգադրում է հատուկ բնակարան պատրաստել և ինքն էլ ծուկը ծուկի վրա, մեջքով կրթնած՝ նստում:

Մեհեմետ շահը գալիս է ասացին. մենք էլ ցանկացանք տեսնել, թե ինչով է գալու. ձիով, թե հեախոտն, բայց նա գալիս էր ոչ ձիով, ոչ հեախոտն, և ոչ էլ թահալը բեկանով¹⁾:

Նստած գահը՝ ազնվականների կամ թե մեծամեծների (Պոլսո) երկտեղանի մակույկների նման մի բան էր: Քամակի կողմում փղոսկրանման ճյուղեր քաշված, կամ փղոսկրե թևակալների (տրաբեղ) նման, շինված տախտակից և վերև նկարագրվածի պես շուրջը շորս մատ լայնքով նուրբ փղոսկրյա թևակալներով պատրաստված, ինքն էլ մեջք բաղմած, ծանր-ծանր, վեց մարդ²⁾ կտակից և վեց մարդ առաջից, սպիտակներ հագած գալիս էին ուսերի վրա բարձրացրած. կարծես դազաղ տանելիս լինեին: Ինքն էլ վրան նստած նարգիլե էր քաշում, որի սարքը ներքևում բռնած պահում էր մի հետևող:

Ահա այսպես մոտեցավ Մեհեմետ շահը: Իջավ և հինգ-ասար քայլ քայլելուց հետո՝ «Եմ շահ» դոչեց:

Թահմազ Դուլին ցատկեց ելավ իր սենյակից մոտեցավ ու, փաթաթվեցին, համբուրվեցին և ձեռք-ձեռքի տված թահմազ Դուլին առաջնորդեց իր սենյակը:

Մկան գրույց: Ճաշի ժամանակ եղավ՝ ճաշեցին: Լավ ժամանց ունեցան: Հետո Մեհեմետ շահը թե՛

— Բանակատեղիս պետք է վերադառնամ:

— Հատուկ ձեզ համար սենյակ եմ պատրաստել տվել, — ասում է թահմազ Դուլին:

— Չե, բանակատեղիս չգնամ, չի լինի, — ավելացնում է Մեհեմետ շահը:

Թահմազ Դուլին թող տվեց: Մեհեմետ շահը իր բանակատեղին գնաց և հետևյալ

1) Թահալը բեկանը՝ փղերի վրա շարքված գահ է:
2) Բնագրում գրված է՝ «աթըն ատըմ արաղնտան» որը գրչի սխալ է. պետք է լինի՝ «ալթը ատամ արաղնտան» Մ. Թ.

օրը լուր է ուղարկում թե՛ «պատերազմ ունեմ»: Ըստ երևույթին նրա վեղիբն ու մեծամեծները չեն համաձայնվել:

Քահմազ Առլին նորից կանչել տալով Սաատեթ խանին՝ ասում է. «Երեկ շահը մեզ մոտ էր, եթե մեր սրտում կեղծիք կամ վրեժխնդրութիւն լիներ, մենք երեկ կը գործադրեինք: Մենք նրան ասացինք, որ բարեկամութեան ենք եկել, էնպես էլի, տեսութեան ենք եկել. դրիւր Մեհեմետ շահին— թող գա մի երկու խոսք էլ խոսեմ ու թողնեմ հեռանամ»:

Սաատեթ խանն ինչ է գրում- չի գրում, նորից բերել է տալիս Մեհեմետ Շահին:

Այս անգամ, որ եկավ էլ չթողեց նրան Քահմազ Առլին:

«Եղբայր, — ասում է Քահմազ Առլին, — վեց-յոթն օր ինձ մոտ ժամանակ անցկացնենք. բանակիդ հրաման տուր, որ ամեն մարդ թող իր տեղը գնա. մենք ձեզ հետ այստեղ մի քանի օր ուրախութիւն անենք, հետո ես իմ նահանգը (երկիրը) կը գնամ, դու էլ կվերադառնաս և բարեկամութիւնը կմնա բարեկամութիւն». այսպես համոզում ու հավատացնում է նրան:

Մեհեմետ շահը համոզվում և յուրայիններին նամակ է գրում՝ գովելով Քահմազ Առլին, հրամայում է իր բանակին, որ ցրվին: Այնպես էլ անում են: Ամեն մարդ իր տունն է գնում. ուղմամթերք և ամեն բան քաշում տանում են: Այսպես ուրեմն, Մեհեմետ շահի բանակը ետ քաշվում, գնում է, իսկ ինքը մնում Քահմազ Առլի մոտ մի քանի հայրուր մարդով:

Վեց-եօթն օր հետո Քահմազ Առլին ասում է Մեհեմետ շահին. «Եղբայր քանի, որ մինչև այստեղ եկել եմ, առանց ձիհանապատը տեսնելու. վերադառնալը սազական է ...»:

Մեհեմետ շահն ինչ անի — ճարահատ պատասխանում է. «հրամայեք միասին գնանք, եղբայր»:

Քահմազ Առլին թե. «մի վախենաք շահ, ես ամեն տեսակ մթերքից էլ առատութեամբ ունեմ, այսպես որ քաղաքից ոչինչ չեմ ուզի»:

Վեց-եօթն օրից հետո ճանապարհ ընկան

դեպի ձիհանապատ, ձիերը, պահելով կողք կողքի հավասար գծի վրա¹⁾:

Երրորդ իջևանում Քահմազ Առլին ասում է Մեհեմետ շահին. «Նամակ դրիւր, որ մեզ համար տեղ պատրաստեն: Մեհեմետ շահն էլ նամակ է գրում ձիհանապատ, որ իր պալատի մի մասը հատկացնեն հյուրին՝ Քահմազ Առլին, որը մի քանի օր իրեն հյուր պիտի լինի և այլն: Եւ ուրիշ ինչ է գրում- չի գրում յուրայինները հրամանը կատարում են, պալատում տեղ պատրաստում:

Չորրորդ օրը Քահմազ Առլին ասում է. «այսպես... բացահայտ քաղաք մտնել չի լինի, դու պատգարակիդ մեջ մտիւր, չորս կողմը ծածկիր և այդպես գիշերով մտնենք ձիհանապատ. որովհետև եթե այսպես մտնենք, ժողովուրդը երես կառնէ [կշփանա] և հետո քեզ այնքան էլ չի հնազանդիր»:

Մեհեմետ շահն էլ միամիտ մարդ (և ոչ միայն Մեհեմետ շահն, այլ ըստը Հնդկաստանցիք միամիտ են) Քահմազ Առլի ասածին հավատում և այդպես էլ անում է. գիշերով մտան ձիհանապատ: Մենք էլ միասին էինք:

Քահմազ Առլին քաղաք մտնելուն պես Մեհեմետ շահին բանտարկեց և ամբողջ վաճառականների ապրանքը գրավեց:

Քիչ հետո Սաատեթ խանին կանչում է իր ներկայութեան և նեղանալով ասում.

«Ով ստորին, դավաճան պաշտոնյա, դու Մեհեմետ շահի հացը կերար, պատմուճանը հագար և նրա շնորհիվ այնքան փառքեր վայելեցիր: Ով թաղափորադավաճան, դու քո տիրոջ թշնամութիւն կատարեցիր. ինչ կը լինէր, որ դու ինձ չհնազանդելիր ու ես էլ քեզ սպանէի: Տղամարդ մարդը իր տիրոջ համար պետք է մեռնի, որպեսզի տերն էլ նրան օրհնենքով հիշի: Հիմա քեզ պիտի սպանեմ և ունեցած ամբողջ հարստութիւնդ ալ պիտի գրավեմ և երեք զավակներդ թշվառութեան մեջ պիտի մնան: Կորիւր աչքիցս ու էլ շուքդ էլ չտեսնեմ» — ասում է բարկութեամբ Քահմազ Առլին:

Այս խոսքերից Սաատեթ խանը խղճահարվում և անձնասպան է լինում: Նրա

¹⁾ Հավասար աստիճանի նշան:

ունեցվածքը գրավում-բերում են: Սասանեթ խանը ապրելիս է կղել Տեքքյանում: Ասում են՝ ինքն էլ ընկել Իրանցի՝ Նիշապուրցի էր: Թե Տեքքյանում, թե Պենկելաում տուն-տեղ է ունեցել:

Մի քանի օրից հետո Մեհեմետ շահի պալատի առջևի հրապարակի վրա Թահմազ Դուլի բանակի բազարը սարքված էր: Երկու շաբաթ վրաններ և նրանց միջի ուղիղ տարածութունը մի լայն ու կանոնավոր փողոցի տպավորութուն էր թողնում: Հազար ճեղատրճի (250 գրամ = [90 տրամ] զնդակ նետող պատրուգով հրացան ունեցող) հատկացված էր այս բազարի պահպանության:

«Էճնաս» կոչված մի խումբ մարդիկ որոնք քաղաքացի չեն, քաղաքում ոչ տուն ունեն, ոչ էլ ունեցվածք. այդ նահանգից էլ չեն. վերջապես էճնաս ասինք յա, ինչ երկարացնեմ, չորս-հինգ հայրուր անվարտիներ, խորհրդակցութուն են արել թե՛ մեզանից շատերը հինգ տարի, շատերը տասը տարի այս քաղաքում քարշ ենք գալիս. հիմի որ Թահմազ Դուլին այս քաղաքը գրավեց, եկեք հարձակվենք բանակի բազարի վրա, Թահմազ Դուլին պիտի նեղանա և քաղաքը ջարդել տա և ահա մենք այս առիթից օգտվելով մի քիչ բան-ման կը թալանենք և մեր երկիրը կզնանք, եթէ ոչ, այստեղ այսպես մնալով տարիներով պիտի փանք-կորչենք. — կը լինի-չի լինի, այս էճնասները մտածում են [որոշում են]. մեկ էլ երեկոյան էզանի (արևը մայր մանելու ժամանակի աղոթք) ժամանակ մի հարձակում են գործում բանակի բազարի վրա: Թահմազ Դուլին անմիջապես խմանում և կարգադրում է, որ ևս հազար ճեղատրճի թող հսկեն և եթե մինչև առավոտ վաղ չանցան ևս գիտեմ իմ անելիքը: Սա էլ ասենք, որ Թահմազ Դուլին չէին հայանել հարձակվողների էճնասներ լինելու մասին այլ իմացրել էին թե քաղաքացիք ուղում են բանակը ճնշել ու թալանել:

Հարձակվող էճնասները մինչև առավոտ չեն հեռանում:

Առավոտյան աղոթքի ժամին Թահմազ Դուլին դուրս եկավ Մեհեմետ շահի պալատից, կանգ առավ բանակի բազարի մոտ և

ցատկոտ հայացքով դիտելով քաղաքը հրամայեց՝

— Կրակ տվեք քաղաքը և թալանեցեք:

Ձինվորը տարածվեց քաղաքում. կրակ տվին-թալանեցին: Եւ կնիկ, երեխա աղջիկ-մողջիկ, բոլորին գերի վերցրին:

Մի քանի օր անց քաղաքացիներից՝ խելքը դլխին, ընտանիքի տեր, բարեգործ վաճառականներ, մարդավարի մարդկանց զովակներ, մոտ հայրուր հողի հավաքվել են խորդակցելու, մեկն ասել է. «Այ մարդիկ, հիմա Թահմազ Դուլին կարծում է, թե այս գեղքերը մենք՝ քաղաքացիներս ենք առաջ բերել». մի քանիսն էլ, թե. «Այ մարդ, եթե փորձենք նրա մոտ գնալ, բարկացկոտ մարդ է, մեզ բոլորիս կմորթէ». ուրիշներն էլ սրանց առարկել են, թե «մորթելու է թող մորթի. մեր նամուսը, մեր կին ու երեխաները, մեր ունեցած չունեցածը գնալուց հետո, ինչ կարիք կա մեր ապրելուն»: Այսպես իրար համոզել, միաբանել և եկել են Թահմազ Դուլի մոտ:

Թահմազ Դուլին սրանց տեսնելով ասում է. «Այ հիմար դուխներ, թե որ քաջ էիք, ինչ՞ու ժամանակին քաղաքից դուրս չկովեցիք»:

Քաղաքացիները պատասխանում են՝ «Տեր իմ, նրանք [հարձակվողները] բոլորը էճնասներ են, լոթի մարդիկ, մենք ձեզ դեմ կովելու չենք ելել, և վերե բացատրվածին պես տեղակացում են Թահմազ Դուլին»:

Թահմազ Դուլին մտածեց, որ խկապես բանակի բազարին հարձակվելը քաղաքացիների դործ չի կարող լինել, լաց եղավ և ասաց՝

— Իսկապես այս խնդրում ևս թերի եմ մտածել և մոռնեալիկ կանչել տվեց. «վայ նրան, ով երեք օրվա ընթացքում իր վերցրած գերիները չվերադարձնի. երեք օրից հետո ում մոտ որ գերի գանեմ նրան կը գլխատեմ»:

Ես Թահմազի կրտսեր (փոքր) Արուսիկնս (այս պատմութունը գրողը), երեք օրից հետո բանակի բազարում ներկա եղա: Երեկոյան դեմ ուղեցի պալատի գոնից ներս մանել և հանդիպեցի կանանց, երեխանե-

րի, աղջիկների, որոնց վրա միայն մեկ-մեկ վարտիկ, դուրս էին դալիս լաց ու կոծով, դլխներին ձեծելով: Մոտավորապես հազար հոգի կը լինեին: Ես այնտեղ, դռների արանքում սառած [ապշած] մնացի: Արարիչ աստուծո այս դարմանքի բանն էլ այստեղ տեսա:

Այս բոլորից հետո, Քահմաղ Ղուլին Մեհեմետ շահի հետ միասին այդ պայտաթի մի հրապարակում հանդես սարքեց. և որպեսզի բոլորը տեսնեն, դիտեն, փոփած գորգերի վրա նստած, ճաշեցին: Քահմաղ Ղուլին կանչել ավեց ինչքան երգիչներ, նվագողներ, ծաղրածուներ, կատակախոսներ, հաճոյախոսներ և զուռնաճիներ, թմբկահարներ կան, բոլորին, մի տեղ հավաքել ավեց և հրամայեց որ ամեն մեկը իր շնորհքը ցույց տա:

Այս հանդեսը որ շեպ իւլ անքեր է կոչվում, պարսից շահերը կազմակերպելիս են եղել ընդհանրապես Պայրոմի տոներին և դարձնանամուտին:

Այս «շեպ իւլ անքեր» կոչվածը այնպիսի մի ուրախութիւն է, որ ոչ ոք իրար չի հասկանում, ոչ ոք իրար ձայն չի լսում, խառնափնդոր մի աղմուկ: Ահա այսպիսիսի մի խառնիխուռն բան է, ուր այդ գիշեր մենք էլ սաղ էինք նվագում: Հիմի դուք կասեք, թե՛ «Բա որ իրար չէիք հասկանում, ոնց էիք նվագում».— Այ մարդ դու էլ, այդ աղմուկի մեջ սաղ կարող ես նվագել. ավելին՝ մենք մեր երգած եղանակը չէինք հասկանում, ուր մնաց կողքի ընկերոջդ եղանակը հասկանաս: Այնքան որ մզրապը (զարկան) զարկում էինք, հա դարկում, իրրե թե բան էինք նվագում, դատարկ բան: Մինչդեռ անվերջ դիտում էինք Քահմաղ Ղուլի խնձույքը, տեսնում էինք նրանց (Մեհեմետ շահի հետ) խոսակցութիւնը, բայց թե ինչ էին խոսում, ի հարկե չէինք լսում: Միայն թե մի պահ տեսանք, որ Քահմաղ Ղուլին Մեհեմետ շահի գլխի ցցունքը առավ և իր կողքը՝ գեանի վրա դրավ: Մի որոշ ժամանակ անց՝ Քահմաղ Ղուլին գեանից վերցրեց Մեհեմետ շահի ցցունքը և անցրեց նրա գլխին: Մենք սաղ նվագելիս այս բոլորը տեսանք. իսկապես մեր աչքերից էլ արտասուքներ դուրս

եկան: Հետո նաև այն տեսանք, որ երկուսն էլ սաքի ելան, ձեռքերնին բարձրացրին, աղոթեցին ու համբուրվեցին:

Հետևյալ օրը, այնքան միայն լսեցինք, որ Քահմաղ Ղուլին Մեհեմետ շահի աղջիկը իրա աղին է առել: Ես չեմ տեսել, լսողաց կա, ինչու որ հարսանիք բան չեղավ, որ մենք էլ իմանայինք: Ոմանք ասում էին Մեհեմետ շահի աղջիկն է, ոմանք թէ՛. ուրիշի աղջիկն է: Է՛ն այդ էլ պակաս մնա, թող չիմանանք:

Այս հանդեսից հետո, երեք-չորս օր էլ մնացինք Ճինանապատում, հետո դուրս եկանք: Ճինանապատում և շրջակայքում ընդամենը մնացինք իննսուն օր:

Երբ ճանապարհ ընկանք, Մեհեմետ շահը Քահմաղ Ղուլիին ողջերթի եկավ երկու-երեք հանգրվան և այնտեղ իրար մաղթանքներ հայտնելով, մենք՝ այս կողմ, Մեհեմետ շահն էլ ետ դարձավ դեպի Ճինանապատ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԳ

Մեհեմետ շահից բաժանվելուց հետո Քահմաղ Ղուլին ուղղութիւն բռնեց դեպի Սինդ: Սինդը մեր թեքված տեղից այնքան հեռու է, որքան երգրումը Ստամպուլից: Թե որտեղից թեքվեցինք դեպի Սինդ, դժվարանում եմ ճիշտ ասել, որովհետև անունները խրթին էին և մտքումս չեն մնացել: Այնքանը միայն գիտեմ, որ Լահորն անցել էինք. մանավանդ որ Լահորի [Բահ] ասր խանը Քահմաղ Ղուլիին նվերներ մատուցեց:

Քահմաղ Ղուլին մի քանի օր Լահորում մնաց. Բահաաուր խանին ինչ որ պատվերներ տալուց հետո նոր միայն ճանապարհ ընկավ: Այս մեջբերումն արի նրա համար, որ դեպի Սինդ մեր թեքված տեղի՝ Լահորից այս կողմ լինելը հաստատեմ:

Քահմաղ Ղուլին նախքան Ճինանապատ դնալը՝ պատվիրակ էր ուղարկել Սինդի խանին, որ անպայման իր մոտ գալ իսկ Սինդի խանը պատասխանել էր. «Բո Քահմաղ Ղուլին ինչացու է, որ ես նրա սաքը պիտի գամ եղեր. այ քեզ բան, դու էլ քո տերն էլ գալաթ եք արել (խալթ եք կերել՝ հանցավոր սխալութիւն): Այսպես հանդիմանել ու ճամբու էր դրել Քահմաղ Ղուլի

պատգամավորին: Պատգամավորն էլ ինչ որ լսել էր Սինդի խանից, եկել նույնությամբ հաղորդել էր Քահնազ Դուլին, ինչպես նաև խանի հետևյալ խոսքերը.—

«Թող մի անգամ Հինդը նվաճի, նոր ինձ հրամայի»:

Քահնազ Դուլին նեղացել էր:

Եվ ահա Քահնազ Դուլին Հինդը նվաճելուց վերադարձին՝ նորից լուր ուղարկեց: Սինդու խանը նորից չեկավ և Քահնազ Դուլին քաշեց բանակը Սինդու վրա:

Ինչպես վերև ասացինք հեռավորությունը Ստամբուլից միշտ էրզրում էր, բայց ճանապարհը շատ վատ, դժվարանցանելի անտառապատ և տեղ-տեղ շատ շոգ:

Քահնազ Դուլին դեռ Սինդ չհասած, Սինդի խանը համոզվում է, որ Քահնազ Դուլին պիտի գա հասնի, որովհետև տեսնում է, որ Քահնազ Դուլին այս ճանապարհին լավ տեղյակի պես, առանց վարանելու, բայց և դանդաղ առաջանում է:

Որ դրանում համոզվում է Սինդի խանը, իր քաղաքացիներին կանչում և ասում է. «Դուք ասում էիք և մենք բոլորս էլ կարծում էինք, որ Քահնազ Դուլին մեր ճանապարհներում պիտի մոլորվի ու ինքն էլ իր բանակն էլ պիտի կործանվեն և նրա ամբողջ ունեցվածքը մեզ պիտի մնա. բայց իրողությունը մեր կարծածին ճիշտ հակառակը դուրս եկավ: Հիմա պետք է շտապ գործի ձեռնարկենք»:

Իսկապես, որ այս Սինդի ճանապարհները այնպիսի դժվարանցանելի և դանավեժ տեղեր են, որ այժի ուրիշը հազիվ կարող են անցնել: Էլ թող անտառի միջով անցնող ճանապարհների մասին խոսելը: Ծիշտն ասած ես շատ էի հա ընկնում և տառաձիգ սպանեն, միայն թե այս ճանապարհներից ազատվեմ: Բայց ժամանակն այնպես էր, որ դայն ու գառը միասին էին ման գալիս: Ըվ եր ամաչում մարդ սպանելուց:

Հիմա գանք մեր բուն պատմությանը:

Սինդի քաղաքացիները պատասխանում են խանին, թե լինչ անենք տեղ իմ, էլի հրամանը ձերն է. դուք կարող եք մի ճար անել: Թանը պատասխանում է՝ ձեր տները կը վառեք, ինչքան սպրանք որ ձեզ հետ կարող եք տանել կը տանեք, մնացածը կը թաղեք:

Բուլորն էլ նրա խորհուրդին հետևում են մանավանդ, որ խանը խոստանում է Քահնազ Դուլիի գնալուց հետո իր ծախսով շինել տալ և մլատները հատուցել: Քաղաքը վառում են ու փախչում. սեր փախչում. վառված քաղաքից վեց-եթե հանգրվան հեռու՝ իրենց ամառվա քաղաքը, որտեղ ամեն մեկը իր ամառանոցը կամ տունն ունի:

Սինդ քաղաքը շատ շոգ է լինում, այնպես որ հուլիս ամսում եթե խմոր շաղվես ու լավաշի պես բանալով արևին դնես, քիչ կը մնա որ եփի: Սինդցիները, որ շոգին վարժ են, իրանք անգամ չեն կարողանում գլխանալ և տարվա չորս եղանակներից մեկն այդ ամառանոցում են անցկացնում:

Սինդ քաղաքում հորեր փորեցինք: Սառը կենսատու ջուր դուրս եկավ, բայց պետք է հորի գլուխը կենալ և խմել. իսկ եթե հինգ բոպե անցավ, այնպես տաքանում է որ: Ես մի սավանն ունեի. մերկանում, այդ սավանը ջրում թրջում, առանց քամելու փաթաթում դլխիս. միշտ նարկիլիս կրակը վառեմ, սավանը չոփ-չոր, հարեթի նման էր լինում: Նորից էի ջրի մեջ թաթախում սավանս և վրաս տոնում, նարկիլիս կրակը մարած էր լինում, մինչև վառէի, սավանս նորից չորանում էր: Այսպես էր բոլորիս կյանքը: Ինչ երկարացնեմ, երկու քեֆը մի անգամից չէի կարողանում վայելել՝ մինչև նարկիլիս էի վառում, սավանս էր չորանում, մինչև սավանս էի թրջում, նարկիլիս էր մարում: Վերջապես ճիշտ որ երկու քեֆը միատեղ չկարողացա վայելել: Հիմի դու պատկերացուր, թե ինչպիսի երկիր է եղել այս տեղը:

Երբ Քահնազ Դուլին տեսավ, որ տեղացիները վառել ու փախել են, մի մարդ գլուխով և հարցրեց նրանից, թե քանի օր է փախել են, նա էլ պատասխանեց, թե վեց օր է: Այս լսելուն պես, վստահ իր քաղաքի վրա ձիերին, մի բոպե էլ կանգ չառավ դիմումը վերցրեց և շտապ առաջ խաղաց հետապնդելու: Փախչողները առավոտ հասնում են, Քահնազ Դուլին երեկոյան արդեն նրանց պաշարում է: Այնտեղ, ծովեզերքում մեծ բերդ է եղել:

Մենք բանակի հետ էինք մնացել: Ծառ չերկարացնենք, դրավեց, խանին իր դա-

վակներով բերեց. մենք խանին տեսանք,
բայց անունը չեմ հիշում: Շրթներում օղեր,
ձեռքներին թեփերից վեր ապարանջան էին:
Ինքն էլ բնիկ աղվան է եղել: Թեև Հնդկա-
կան թագավորի երկիրն է եղել Սինդը, բայց
այս խանը նրան ենթարկվելիս չի եղել:

Թահմազ Ղուլին ստիպեց Սինդը խա-
նին որպեսզի վերջինս խոստովանի, թե իր
ունեցիվածքը, կարողութունը ուր է թաղց-
րել: Սինդի խանը խոստովանեց, որ հողի
տակ է թաղել: Մարդիկ հատկացվեցին, հողի
տակից հանեցին և արծաթեղենը և ոսկեղենը,
որոնք քաղաքի հրդեհի ազդեցութեան տակ
սևացել էին: Թահմազ Ղուլին ավելի իր ու-
կերչապետին որ սպիտակացնի (փայլեցնի):
Հետո խանի երեք որդիներին պատանդ
վերցնելով, նորից Սինդի վրա խան կար-
գեց: Սինդ քաղաքի կարգու կանոնի մասին
կարգադրութուններ անելով, գեպի Իրան
վերադարձի ճամբան բռնեց այն ճանապար-
հով, որով գնացել էինք. այսինքն Լահորից
մի քանի հանգրվան դեմը, մեր թեքված
կետով:

Թահմազ Ղուլին իր մուրազին Իրան էր
վերադառնում:

ԴԼՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Այստեղ ես ուզում եմ պատմել Թահմազ
Ղուլիի վերաբերմունքից մի դեպք, որ մո-
ռացել էի:

Դեռ Սինդ չգնացած, Ճիհանապատից
գուրս գալուց ամիջապես հետո՝ 5—6 օր մունն
տիկ կանչել ավելի, որ «ովքեր Ճիհանապատի
դեպքերից հետո քովերնին բան-ման (թալա-
նած) ունեն թող բերեն իրեն տան...»: Աստու
անունով հավատացնում եմ ձեզ, որ ոչ ոքի
վեճը չեղավ: Թահմազ Ղուլին էլ ձայն-ձուռն
չհանեց: Դու մի ասի, մարդը (Թահմազ Ղու-
լին) իր գործն իմանում է: Երբ որ Ճեյհուն
գետին հասանք, շուրջկալ կազմեց և նույ-
նիսկ կանանց շրջազգեստների տակերը կին
խուզարկուհիների միջոցով խուզարկել ավելի
և ում մոտ, որ բան գտավ, սպանել ավելի:

Ձինվորներից շատերն իրենց ունեցածը
գեան էին գցում: Այս մասին հայտնում են
Թահմազ Ղուլին թե՛ զինվորները Ճիհա-
նապատում թալանած իրերը գեան են
գցում:

Թահմազ Ղուլին պատասխանում է...
«Թող գցեն, միայն թե իրենց մոտ չլինի.
զինվորը հարուստ չը պիտի լինի»: Այսպի-
սով շատ ապրանք թափեցին Ճեյհուն
գետը:

Մեկի ձեռքում կար մի վենետիկյան
տուփ՝ լիքը մարգարիաներով, որի ամեն մի
հատիկը սիսեռից մեծ էր: Տուփը բաց արեց
և այնպես ցրվելով նետեց գետը. ինչու որ
Թահմազ Ղուլին շատ նախանձ էր. այնքան
նախանձ, որ ոչ ոքի հարստանալը չէր ցան-
կանում: Ինչքան նվազածուներ կայինք ոչ
մեկերնիս թույլ չէր տալիս, որ մեկի վրա-
նում սազ նվագեինք:

Հնդկաստանից վերադառնալիս լսել էինք,
որ Ճիհանապատի գանձարանից երեք գահ
է վերցրել. մեկը փերուզից (երկնագույն
գոհար), երկրորդը եշիմ-ից (օձակուձ—տե-
սակ մը մարմար), իսկ երրորդը գոհարա-
գարդ, որը կոչվում էր Թավուզի թախա
(սիրամարզի գահ): Այսպես լսել էինք, բայց
մենք չէինք տեսել:

Ճանապարհին այն էինք տեսնում, որ
Ճիհանապատից վերցրած բազմաթիվ վար-
պետները, ուր որ մի քանի օրով կանգ
էինք առնում այդ Ճիհանապատցի վար-
պետները, կնիկ մարդկանց նման կերկեֆ¹⁾
էին սարքում ու աշխատում: Ինչ էին գոր-
ծում: Թահմազ Ղուլին մարգարտագարդ մի
վրան էր դործել տալիս, որի մարգարտի
ամենափոքր հատիկը Եալվայի սիսեռի հա-
տիկի չափ էր:

Ուր որ կանգ էինք առնում, այս վրա-
նը գործվում էր:

Թահմազ Ղուլին արշավանքի գնալիս
որոշ տեղերում, սազմականորեն կարևոր
կետերում պահակներ էր թողնում, որ չլինի
իրա թիկունքից ճանապարհը կտրեն: Նույ-
նիսկ Լահորի Բահատուր խանի սահմաննե-
րում պահակներ դրավ. թեև Բահատուր խանը
իր ուրբով եկել էր Թահմազ Ղուլին հպա-
տակութուն հայտնելու, բայց չէր զինա-
թափվել:

Պոսքս, ուրեմն, այն մասին է, թե Թահ-
մազ Ղուլին թիկունքում թողած իր բոլոր
մարտիկներին հավաքելով՝ գալիս էր:

¹⁾ Վրան բաց սեղանի նման գործիք, որի վրա
ամբացնում են բանվելիք կտորը:

Եկանք—հասանք մինչև Ղանտահար:

Այստեղ լուր տարածվեց որ թահմազ Ղուլին թավուզի թախտը Ղանտահարում պիտի սարքավորէ, բայց չարեց: Ասին Ֆերահում պիտի սարքավորե, այնտեղ էլ չարեց, հասանք Հերաթ. այստեղ բերդից դուրս սարքավորեց և բանակում գտնվող բոլոր մարդիկ գնացին դիտելու: Մենք էլ գնացինք: Տեսանք թավուզի թախտը սարքել են, նրա կողքն էլ մարդարտաշար վերանը:

Թավուզի թախտը միակտոր գոհարներից, թանկագին քարերով զարդարված հինգ հոգի նստելու տեղ ունեցող գահ էր: Գահի վերքը լուսնաձև, նման էր կախովի խաղողի որթատունկի:

Ամբողջ գահի մեջն ու գուրսը շինված էր միակտոր գոհարներից: Վերևի լուսնաձևով վրան գոհարներից մի սիրամարգ էր շինվել և սիրամարգի փետուրների վրա ինչքան որ գույներ կան, բոլոր գույներն էլ գտել ու համապատասխան ձևով դասավորել էին:

Եվ որովհետև գահի վերևի լուսնի վրա սիրամարգ էին տեղավորել, այդ իսկ պատճառով այդ գահը կոչվում է թավուզի (սիրամարգի) թախտ:

Այս գահի բոլոր ձողերն ու մասերը մասնատվում և պետք եղած ժամանակ միացնելով, հատուկ կառուցվածքով պնդացվում են: Այնպես որ ցանկացած բոսիկն կարելի է մասնատել և սնդուկների մեջ տեղավորել: Ահա այսպիսի հմուտթյամբ շինված էր:

Իսկ կողքի մարդարտաշար վրանի վրա մարդարիտներով առլիֆեր (. . . .) և ֆենկըյարիներ (. . . .) են բանել: Վրանը երկու սյունանի էր և այդ սյուները գոհարներով զարդարված էին. մեկը սպիտակ մյուսը դեղին արծաթաթիկերով: Վրանի մի ցիցը սակի, մյուսը արծաթ: Ահա այսպիսի վրան էր շինել ավել թահմազ Ղուլին:

Թահմազ Ղուլին յոթանասուն հազար կով, եղ, գոմեշ քչեց Հնդկաստանից գեպի Պարսկաստան: Ծանապարհին թեև երեսուն հազարը փչացավ, բայց քառասուն հազարը Իրան հասավ: Այսպես համաչափ, գեղեցիկ, պոյով ու վիքը, աչքերը ծարիր քաշած,

կնճիթները¹⁾ միչև գետին: Հնդկաստանում այնքան շատ և այնքան տաատ են, որ թահմազ Ղուլին յոթանասուն հազարը թեև քչեց բերեց, բայց էլի կեսից ավելին այնտեղ մնաց:

Այս Հերաթ քաղաքում էլ մեկ ծառայությունից ազատեց: Մեկ համար գրություն ավեց և մենք ճանապարհ ընկանք գեպի Պոլիս:

Հերաթից Սորասան եկանք և այստեղ տանը երեք օր կանգ առանք: Սորասանը մի մզկիթ (Իսլամների աղոթատեղի) ունի, որ կոչվում է Իմամ Բիգա: Այս մզկիթի կտուրը կապարի փոխարեն սակով է ծածկված: Իսկ ներսի առաստաղը՝ դեղին կրակարանի²⁾ թիթիղի նման սակով պատած: Քառակուսի քարերով շինված գույնզգույն մինարեթի գաղաթի նշանը (ալիմ) սակուց է:

Այնպես պատմեցին թե՛ երբ թահմազ Ղուլին շահ է դառնում, այդ մզկիթի սակե ծածկը հանել է տալիս և փող կարում ասելով. «Եթե ոտքս տյուզ կոխեց (եթե շահ դառնալս հաջողվեց), ոչ միայն սակյա թիթեղով կը ծածկեմ, այլ և դեմն ու գեմը մի հատ էլ գեպիլ (մատուռ?) կը կառուցեմ»:

Նպատակին հասել և կառուցել է:

Ես Սորասանում այդ գեպիլն էլ տեսա, սրա ծածկն էլ սակի էր: Այդպես ասին, մենք էլ հավատացինք. խո փորձաքարին³⁾ ենթարկելու հնարավորություն չունեինք:

Սորասանի մարդիկը⁴⁾ ընավորությամբ մոլեռանդ են: Վերջապես ամեն բան ընդգիծությամբ լայնանում է տեղ են (հալածումը տարածում է):

Քանի որ խորասանցիների մասին մոլեռանդ են ասացինք, նրանցից մի բան պատմեմ ձեզ:

Սորասանում, հնուց ընտանիքավոր հայեր չեն եղել: Թահմազ Ղուլին շահ դառնալու ժամանակ նպատակ է դրել Սորասանում մի հայու թաղ հիմնել Սպահանի մոտի Ջուղայի նման: Ամեն գյուղից և քաղա-

¹⁾ Ըստ երևույթին խոսքը՝ բիզոնների մասին է:

²⁾ Արևելքի հյուրասենյակներում 80 սանտիմ բարձրությամբ դեղին փայլուն կրակարաններ գործ էին ածում:

³⁾ Սակու որակը որսող բար:

⁴⁾ Ըստ երևույթին խոսքը միայն հայերի մասին է:

քից ընտանիքավոր հայեր է պահանջել, որպեսզի նրանց տեղափոխի Սորասան:

Թե՛ քաղաքացիներ, թե՛ գյուղացիներ միարանելով, իրենց շրջակայքում ինչքան հովարտա (լոթի) հարբեցող, ծուլ, ծուռ, աւերք-հառած չափող, մեծի-պզտիկի հարզը չիմացող և այլ այս տեսակ մարդկանց ցուցակը կազմում ու թահմազ Ղուլին ներկայացնում են: Թահմազ Ղուլին էլ սրանց բոլորին տանում է Սորասան:

Թահմազ Ղուլին Սորասան բերած այս հայերին տալիս է անատեղ, ցանքսի տեղ, այգու տեղ, լծասարք, սերմացու, եկեղեցու տեղ և հազար թուժան էլ փող՝ եկեղեցին շինել տալու: Իսկ այս հայերը ամբողջ օրով հարբած ման գալով, մի քանի տարում ուտում վերջացնում են այդ հազար թուժանը:

Այն Սորասանցին (պարսիկը), որ մի ժամանակ քրիստոնյայի (— քաֆուր) փեշը եթե իր փեշին դաչեր, իր փեշը կը կարեր այդ նույն Սորասանցիներին հիմի այս հայերը բռնում ձեռում, հայհոյում են նրանց ու նրանց կրոնին: Մի ժամանակ Իմամ Բիգամիդի զանից անցնող հային մեղսեցիկս են եղել: Հիմա հայերը հարբած քշում-մըտնում են մղկիթի մեջ, հրում, հրմշտում գուրս են վճնդում (պարսիկներին) և թահմազ Ղուլի սարսափից ոչ մի Սորասանցի ոչ մի ձայն չի հանում, մի ճկույթով էլ չեն գարկում: Ահավասիկ մեր ազգի մեջ ինչ տեսակ «չեղեղներ» ունենք, բայց և այնպես մաղթենք, որ մեր ազգից նման «բարեգործ», «խմաստուն» մարդիկ անպակաս լինեն. ինչու որ՝ խոսք կա, թե՛ կրթութիւնը ուժից սովորեցիր:

— Անկիրթից, — պատասխանում են:

Եկեղեցի շինելու համար թահմազ Ղուլի նվիրած հազար թուժանը մսխող այս «չեղեղներին» էլ տեսանք Սորասանում: Իմ տեսածս (եկեղեցին) չորս պատ էր, վրան բաց:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Հիմի ես ձեզ պիտի պատմեմ թե թահմազ Ղուլին ոնց է շահ դառնում:

Նվազածուների վրանը բանակատեղից

Սկսւտարի և Պեշիկթաշի հեռավորութեան չափ (մոտ 2 կիլոմետր) հեռու էր: Բանակատեղիի կենտրոնում Շահի վրանն էր, որի երեք կողմում իրեն մերձավորների վրաններն էին, իսկ առաջը՝ ընդարձակ հրապարակ ձիարշավի դաշտի նման:

Շահի վրանը կենտրոնում իր բարձրութեամբ նմանվում էր «տիքիլի թաշ»-ին¹⁾ Միշտ այսպէս էր: — Իրանից մինչև Սայրերի կիրճը այսպես էր, իսկ Սայրերից դենը բոլորս միատեղ էինք:

Մեր՝ նվազածուների վրանը շահի և իր ավագանու վրանների մոտն էր դրվում: Իրա համար էլ ինչ անցնում-դառնում էր շահի մոտ, բոլորը տեսնում, դիտում էինք. ինչպես տեսել էինք Մեհմեհա շահի դաշն ու գնալը:

Սոսքս այն մասին է, թե նախքան Սայրեր հասնելը մեր՝ նվազածուներին վրանը բանակատեղից հեռու էր: Վտանգավոր կանգառներում թահմազ Ղուլի հորեղբոր տղան, որ խան էր և ուներ հազար մարդ, իր այդ հազար հոգով, թահմազ Ղուլի կարգադրութեամբ շրջանակաձև պահակութիւն էր կազմակերպում: Հորեղբոր տղան ասում էր «ես օսմանցիներին շատ եմ սիրում» — և իր ժամանակը գրեթե մեր վրանում էր անցկացնում: Նվազախմբի պետի մոտ չէր գընում, այլ միշտ մեզ մոտ էր. տարիքով էլ թահմազ Ղուլից կամ մի տարով մեծ կամ մի տարով փոքր կլիներ:

Մենք պատմել տվինք թահմազ Ղուլի հորեղբոր տղին, թե ինչպես թահմազ Ղուլին շահ դարձավ: Եւ ահա նրանից ինչպես լըսել ենք, այնպես էլ պատմում ենք:

Թահմազ Ղուլին բնիկ Քելաթցի էր, ինքն էլ քուրդ: Եթե ուզում ես իմանալ, թե որտեղի քուրդ է, — Տիարբեքիբի: Հիմի պիտի ասես, թե ինչ առնչութիւն Տիարբեքիբի քուրդը իրանցի լինի ու Քելաթցի, Քելաթ որ Սորասանից հինգ հանգրվանով ճանապարհ էլ դեպի խորն է: Ասեմ. — Շահ Աբրասը Բաղտատից հարձակվում է [օսմանցիների վրա] և մինչև Պուլից նորին մեծութիւն Սուլթան Մուրաաը պատրաստվում է, առդին շահ Աբրասը Իիարբեքիբի շրջա-

¹⁾ Պուլում հին հուշարձաններից՝ կոթող:

կա գյուղերը զարկում—քշում է դեպի Քելաթ:

Ահա այս Քելաթ քշված քրդերի սերնդից է Քահմազ Ղուլին:

Սկզբում երկրագործ է եղել, մի խնդրագիր տալու գործ է պատահում և նա Քելաթից երկու տարով հեռանում, լինում է Սպահանում:

Սպահանում խնդրագիրը ձեռիցը առնում են, տարած նվերներն էլ առնում, պատվում ու աստուծն, սոսուն՝ ասելով դատարիկ խոստումներով քնեցնում, ճամբում են: Խընդրագրին պատասխան չեն տալիս: Խնդիրքը հետապնդելիս, մի օր առանց նվերի է գնում, ձեռում վաճառում են: Այսպես երկու տարի իր խնդրագրի համար գնում-գալիս է ու արդյունքի չի հասնում:

Շահ դառնալուց հետո այս խնդրագրի պատմութունը պատմում է իր զինակիցներին ու ծաղրածուներին. նրանք էլ ամիսը մի քանի անգամ իր ներկայութեամբ այս «խնդրագրի» դեպքը կրկնում են [որպես ներկայացում]:

Ինքը Քահմազ Ղուլին ասում էր. «Ահա վասիկ նրանց, այդ հիմարների [նախորդ շահերի] օրով, նրանց բանն ու գործը այսպես էր»:

Երկու տարի խնդրագրի համար ապարդյուն գնալ-գալուց հետո Քահմազ Ղուլին դառնում է սրտնեղ և այդ ժամանակ նա սկսում է Խորասանի շրջակայքում գողութուն անել, ճանապարհ կտրել, մարդկանց կողոպտել, մենակ անցքեր [կրճեր] փակել և ճամբա չի տալիս մարդկանց:

Լուրը հասնում է Խորասանի խանին թե քո սահմաններում այսպիսի մի ճանապարհ կտրող, մարդ սպանող, թալանող է երևան եկել: Խորասանի խանն էլ մի տասնապետ է ուղարկում, որը մի կերպ սրան բռնում բերում է խանի մոտ: Խանը սրան հարց է տալիս.

Ի՞նչ ես ճանապարհներում մարդ սպանող, թալանողը:

Քահմազ Ղուլին չի ժխտում, չի ուրանում:

— Այո խանս, ճիշտ է, ես եմ, — ասում է: Խանը թե. — Բա հիմար գլուխ, դու չես իմանում, որ այստեղ խան կա. դու ճիլ ես որ հանդգնում ես այսպիսի բաների:

Քահմազ Ղուլին պապանձվում է: Խանը հրամայում է տանել և գլխատել:

Քահմազ Ղուլին աղաչում է. «աման խանրս, ինձ գլխատել մի տուր, իմ պիղծ արյունս թափել տալու պատճառ մի լինի, ես մինչև անջարհի վերջը քեզ ծառա, քեզ զինվոր կը լինեմ»:

Այսպես աղաչում պաղատում է:

Խանի մոտ նստած բեգերն էլ միջամտում, խնդրում և ասում են. «Այսպիսի մարդու արյունը թափել մի տուր. մի կռիվ լինելիս առաջ քշի, թող գնա մեռնի. տրանքում դու կաղատվես արյան պարտքից»:

Այս միջամտութունների վրա՝ ի պատիվ հյուրերի՝ խանն էլ բաշխում է նրա կյանքը և մի տասնապետ կանչելով՝ նրան հանձնում—որպես զինվոր:

Խորասանի շրջակա գյուղերի և հարևան Ուզբեկական գյուղերի միջև սովորութուն է եղել—իրար վրա հարձակվել, զարնել ու թալանել: Ուզբեկները նորից են հարձակվում: Այս մասին լուր է գալիս խանին, խանն էլ կարգադրում է այն տասնապետին, որի տասնյակի մեջ է լինում Քահմազ Ղուլին: Գնում են կռվում և այդ կռվում Քահմազ Ղուլին քաջութուն է ցույց տալիս:

Ուզբեկները լինում են չորս-հինգ հոգի. իսկ սրանք տասը հոգով հույս են տալիս ու ուզբեկներին ցրում:

Խորասան վերադարձին, տասնապետը զեկուցում է խանին—«Տէր իմ,—ասում է նա,—էն գողը չկա, որի կյանքը բաշխեցիք, կռվում բավական քաջութուն ցույց տվեց: Խանն էլ գոհ արամադրութեամբ Քահմազ Ղուլին տասնապետի աստիճանին է բարձրացնում:

Մերթ ընդ մերթ գյուղերի վրա կատարվող ուզբեկական հարձակումների դեմ Խորասանի խանը Քահմազ Ղուլի—տասնապետին է ուղարկում: Մա էլ գնում ու հաջողութեամբ է դառնում:

Խորասանի խանը Քահմազ Ղուլին տասնապետութունից բարձրացնում է հիսնապետի աստիճանին և ուր և ինչ գործի որ ուղարկում է՝ Քահմազ Ղուլին հաջողութեամբ է վերադառնում:

Խանը նրան բարձրացնում է հարյուրապետ աստիճանին: Հարյուրապետութունից

հաղարապետութեան և որովհետև չափազանց գործունայ է լինում, մի օր էլ նրան բարձրացնում է սենեկապետութեան (խանի պալատի պարեա)։

Մի օր խանը իր առանձնատանը գիւրք կարդալիս, երբ դրսից էլ ոչ մի մարդ չի լինում, թահմազ Դուլին ոտնամանները հանում մտնում խանի մոտ ու փաթաթվում է խանի ոտներին։ Խանը զարմացած հարց է տալիս, թե բանն ինչուիս է։ Թահմազ Դուլին պատասխանում է. «Աստուծո հրամանով քո աղջիկն ևմ ուզում»։ Խանը էլ չի մերժում ու ասում է տվի։

Թահմազ Դուլին դառնում է խանի փեսա։ Որոշ ժամանակ անցնելուց հետո Մյուրվեյիզը Դանտահարից հարձակվում ու Ֆերահը գրավում է։ Ավելի առաջանալով գրավում է Հերաթը։ Հերաթից էլ առաջանալով գալիս է Խորասանի վրա։ Բայց Խորասանում նրանք ոչինչ անել չեն կարողանում, որովհետև աներ ու փեսա Խորասանի զորքի գլուխն անցած փախցնում են Մյուրվեյիզին։

Մյուրվեյիզը լուր է ուղարկում Խորասանի խանին և ասում. «Այժմ ես գնում եմ Սպահանի վրա, գնամ գրավեմ և դուք այդ ժամանակ ինքներդ ինձ կը խնդրեք, կը հանձնվեք»։

Խորասանի խանը իր փեսա թահմազ Դուլիի հետ միասին հուպ են տալիս Մյուրվեյիզին ու պատասխանում են. «Ինչ որ ձեռքիցդ կգա ես չթողնեմ»։ Եվ Մյուրվեյիզը քաշում-գնում է իր զորքը դեպի Սպահան։

Հասնում և գրավում է Սպահանը։ Բըռնում է շահ Հյուսեյնին, որի երեսուն չորս տղաներից քսանյոթին սրի է քաշում իրենց հոր՝ շահ Հյուսեյնի աչքի առաջ, հետո շահ Հուսեյնին էլ է սպանում։

Բայց այս բոլորը ոչ թե Մյուրվեյիզը, այլ նրա վեզիր՝ Միր Մահմուտն է անում, քանի որ Մյուրվեյիզը Սպահան մտնելուց անմիջապես հետո մեռնում է, և Միր Մահմուտը՝ ինքնիրեն շահ հայտարարելով՝ բըռնում է շահ Հուսեյնին և այդ սպանութիւնները կատարում։

Հետո Միր Մահմուտը ուսերից մինչև դաստակները (կաթված?) է ստանում։

Միր Մահմուտի վեզիր էջրեֆը, տեսնելով,

որ Միր Մահմուտը արդեն անհույս է, զբլուխը կտրել է տալիս և ինքն իրեն հայտարարում է շահ էջրեֆ։

Այդ սպանութեան միջոցին, շահ Հուսեյնի հավատարիմ լալաները, նրա մնացած եոթը երեխաներին մի հնարքով փախցնում են։ Ոմանց տանում այլ երկրներ, ոմանց պահում շրջաններում [Սպահան]։

Հետագայում Աղվանը [շահ էջրեֆը] օսմանցու հետ կռիվ է անում, ջարդում, ջարդվում։ Ինչ երկարացնեմ, այս դեպքերը մեզ հարկավոր չեն, մեզ հարկավորը թահմազ Դուլիի շահ դառնալու պատմութիւնն է. ուրեմն անցնենք մեր պատմութեան։

Երբ Սպահանում աղվաններն էին, Խորասանի խանը իր փեսա թահմազ Դուլիի հետ Խորասանի զորքի գլուխն անցած, քաղաք առ քաղաք կռիվ տալով, և աղվան գինւվորներին ցրիվ տալով՝ առաջանում, հասնում է Սպահան։ Սպահանից էլ փախցնում Աղվաններին և շահ Հուսեյնի թահմազ անունով մի տղային դանում են։

Շահազունին պահել էին Սպահանում։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԸՄԵՆԵՐՐՈՐԴ

Շահ Հուսեյնի տղին թահմազին շահ են կարգում շահ թահմազ անունով և նրան հավատարմութիւն ուխտում։

Հաղիվ տասներեքուկես կամ տասներ չորս տարեկան մի աղնիվ, անարատ, վեզր երկար, աչք ու հոնքերը սև մի ծաղիկ էր։

Հաղիվ թե այսքան վաշելու է մեկը նրստած լինի գահում։ Մենք նրան չենք տեսել, բայց Սպահանում մեզ ցույց տվին նրա նկարը և այնպիսին է, ոնց վերևը պատկերացրի։

Թահմազ Դուլիի աներ՝ Խորասանի խանը վեզիր է լինում շահ թահմազի մոտ, և այս առիթով իր փեսա թահմազ Դուլիին խանութիան տիտղոս է շնորհել տալիս։

Երբ Մյուրվեյիզը [աղվանները] գրաված է եղել Սպահանը, ինչքան գանձ ու հարստութիւն է եղել Սպահանում, բոլորը քաշել տարել է Դանտահար։

Մյուրվեյիզի ոսկերչապետի հետ տեսնվեցի Սպահանում։ Սա Չուղաեցի մի ծերունի հայ էր, արհեստով ոսկերիչ։ Շատ էինք տեսնվում ու խոսում։ Նա իր պատմութիւնը լալով էր պատմում։

«Երեսուն պատման շահի քարով գոհարեցինը ձեռքերովս տեղափոխեցի: Թե ազամանդը և թե հակինթը, լալն ու գմբուխարը ինքս սակիների վրայից հանեցի, վերցրի մի պարկի մեջ և իմ ձեռքերով կշեցի երեսուն պատման շահտաշիով գոհարեցինը: Թե հարց տաս շահտաշին ինչքան է. — ամեն մի պատմանը չորս ու կես օխա է [ուրեմն 1^օ օխա = 1,280 կգ 1 պատման = 5,770 կգ.: 5,770 × 30 = 173 չարյուք յսթանասուն երեք կելոպրամ գոհարեցին]:

Ինչպես տեսնում էք Մյուրվեյիզը ինչ կար-կշար կողոպտել տարել էր: Հիմի տեսնենք, թե թահմազ Ղուլիի աները առանց փողի ինչ պիտի անե, շատ էլ վեղիբ կղափ:

Ի միջի այլոց շատ լուրջ մարդ է լինում այս վեղիբը, միևնույն ժամանակ խոստումնապահ և քաջ: Նրա ուժը ցույց տալու համար պատմում են, որ գորդի կամ կարպետի ծաղիկները եթե ուզենա հանել, երկու մատով մի անդամից այնպես հարվածում էր ու ծակում, որ կարծես մկրատով կտրված լինի: Ահա այսպիսի ուժի տեր է եղել թահմազ Ղուլիի աներ, Թորասանի խան, այժմյան վեղիբը:

Վեղիբը որոշ ժամանակ մտածում է փող ճարելու մասին: Առանց փողի գործ չի լինի: Վերջապես ոտճիկ պետք է տալ: Բացի դրանից Օսմանցու հետ խռով, Մոսկովի հետ խռով, առանց փողի ոչինչ չի կարող անել: Մտածում է, որ Հնդկաստանի շահի հետ բարեկամ է, դիմում է շահ թահմազին թե. — Շահ, այսպես առանց փողի չի լինի. մի քանի նահանգներ Օսմանցին է դրավել. մի քանիսն ել Մոսկովցին, առանց փողի գործ չենք կարող անել:

Շահ թահմազը պատասխանում է՝

— Ես ինչ չիտեմ, ես թերահաս և խամ մարդ եմ, դու զիտես:

Թահմազ Ղուլիի աները ասում է՝

— Այ շահ, արի դու ինձ որպես դեսպան Հնդկաստան ուղարկիր, գնամ մուրհակով մի քիչ փող վերցնեմ, որպեսզի զինվորների ոտճիկը տանք թշնամու ձեռքն անցած նահանգները ազատենք: Հետո աստված մեզ կրթ որ տվեց, մենք էլ այն ժամանակ մեր պարտքը Հնդկաստանի շահին կտանք:

Շահ թահմազը հարցնում է՝

— Լավ, համաձայն եմ, բայց դու որ գնաս վեղիբությունը մի պիտի կատարի: Վեղիբը պատասխանում է՝

— Թահմազ Ղուլիին վեղիբ կարգենք, իմ փեսաս է:

Շահը կանչում է թահմազ Ղուլիին և խոսքը նրան ուղղելով ասում՝

— Թահմազ Ղուլի, քեզ վեղիբ կարգեցի:

— Ես այդպես ի միջի այլոց վեղիբ չեմ լինի, պատասխանում է թահմազ Ղուլին: — Ինչո՞ւ:

— Տուր ինձ թագավորական հրամանագիր այն մասին, որ իմ գործիս ոչ ոք չպետք է միջամտի, և ես պետք է ղեկավարեմ այնպես, ինչպես ինքս եմ հասկանում:

— Լավ, — ասում է շահ թահմազը և տալիս է նրան պահանջած թագավորական հրամանագիրը: Բացի դրանից, իր գլխից մի վարսակալ հանելով, գնում է թահմազ Ղուլիի գլխին՝ ասելով. «Թող սրանից հետո քեզ անվանեն «Թահմազ Ղուլի»: Եվ նաև տալիս է մի այնպիսի թագավորական հրամանագիր՝ որով ինքը, շահը պարտավորվում է. «Եթե ես անգամ քո համաձայնությամբ չչարժվեմ, ինչ նախատիքքով ուզում ես՝ ինձ էլ նախատիր»:

Թահմազ Ղուլին լինում է վեղիբ:

Աներոջ ճամբորդական պատրաստությունները հողալով՝ նրան ճամբա է գնում.

Աները վեց-եոթն օրվա ճամբա է գնում չի գնում, թահմազ Ղուլին նրա հետևից մարդ է ուղարկում և մի հնարքով աներոջ գլուխը բերել տալիս:

Բոլոր խաները, բեգերը տեսնելով, որ իր խան աներոջ գլուխը կարել տվեց սկըսում են սարսափել այս մարդուց:

[Եվ իսկապես] թահմազ Ղուլին սկսում է ինքնավստահ, համարձակ խաներին և բեկերին կամաց-կամաց, մեկիկ-մեկիկ, ամեն մեկին մի պատրվակ կայցնելով՝ սպանել տալ: Ուստի նկատի է ունենում, սպանում է: Վերջապես հին խաներից, բեգերից մարդ չի թողնում. մեկիկ-մեկիկ, մեկ-մեկ պատճառով սպանում է: Եվ եթե անկյուններում հատ ու կտոր մնում են, էլ նրանց կարևորություն չէր տալիս, էլ չէր վախենում:

եւ այսպիսով պարսկական պետութիւնը վերցնում է իր արի մեջ:

Օսմանցու հետ կռիվ տալիս, ջարդում-ջարդվում. Մոսկովցու հետ Գիլանում, կռիվ տալիս ջարդում-ջարդվում, վերջապես չեղարացնենք:

Բայց պիտի հարց տաք, թե ինչն էր կառավարում երկիրը: Ո՞րտեղից էր տալիս զինվորի ոտճիկը:

Բոլոր վաճառականներին և հարուստներին թալանում է, ժողովրդի ապրանքն ու կայքը զրավում: Որ իմանում է, թե մեկը հողար քսակ փող ունի, անմիջապես կանչել տալիս, քսակով փողը առնում և՛ միջից մի հարյուր դուռուշ վերադարձնելով՝ ասում «Գնա, դու էլ սրանով յոլա դնա»: Ահա այսպիսով զորքի ոտճիկը տալիս էր:

Երբ թանձաղ շահի հետ թանձաղ Ղուլին օսմանցիները դեմ կռիվ է գալիս, մի լուր է հասնում թանձաղ Ղուլիին, թե՛ «ինչ ես կեցել, աղվանը քայլում է Խորասանի վրա մեծաքանակ զորքով»: Թանձաղ Ղուլին էլ շահ թանձաղին ասում է, — զգուշացիր, մինչև իմ գալը օսմանցու հետ կըռնի մի տուր, դնամ աղվանները ցրիվ տամ, վերադառնամ ու միասին կռիվ կտանք [անպայման] հետը լինեմ:

— Որ օսմանցին հարձակվի, ես պիտի կանգնեմ. — հարց է տալիս շահ թանձաղը:

— Օսմանցին ինքը մեր վրա չի հարձակվիր մինչև մենք նրա վրա չի հարձակվենք, — պատասխանում է թանձաղ Ղուլին:

— Լավ, մինչև քո գալը ես Օսմանցու հետ կռիվ չեմ անի. — ասում է շահ թանձաղը, — և միամտացնում թանձաղ Ղուլիին:

Թանձաղ Ղուլին գնում է Խորասանը աղվաններից ապատելու, իսկ շահ թանձաղը [հակառակ իր խոստումին] քշում է Օսմանացու վրա: Օսմանացին շահ թանձաղին այնպես է կռթում, որ իսթական թագավորական խայտառակութուն (շահ սողկունու): Ծահ թանձաղը ձիով փախչելիս ձիուց ընկնում է և չի կարողանում վեր կենալ. մի օսմանցի [զինվոր] ուղում է նրան խփել բայց Բաղդատի վալի Ահմեդ փաշան հանդիմանում է նրան, ասելով. «ձեռքդ քաշիր խող, նա շահ է, դու իրա-

վունք [աստիճան] չունես նրան ձեռք վերցնելու, գնդակ արձակելու»:

Վերջում պարսիկները մեծ դժվարութամբ ձի են հասցնում և աղատում շահին:

Այս դեպքը պատմեցին պարսիկները, երբ ես Սպահանում էի: Նրանք էլ բավականին վնասվել ու տուժել են այս խուճապի ժամանակ:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԸՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ

Այս միջոցին թանձաղ Ղուլին Խորասանում ցրում է աղվաններին և վերադառնալով՝ տեմնում է, որ շատ խայտառակ կերպով են պարավել: Մտում ռի է պահում շահ թանձաղի դեմ և սկսում է նենդութուն մտածել: Գիշեր-ցերեկ մտածում է, թե որչոք մնաց անի, որ սրան (շահ թանձաղին) մեջակցից վերացնի:

Այսպես մտածելիս՝ մի միտք է հղանում, մի խորամանկութուն, և ինքն իրեն խոսում է. «Թանձաղ Ղուլի հիմա դու սրան խմիչքի վարժեցրիր. մի օր սրան մի լավ խմացրու և բոլոր մեծամեծներին, խաներին, բեգերին հավաքիր ու մի կերպ մի բան ձեակերպիր»:

[Հարմար] ժամանակը որ հասնում է, ինչ անում-չի անում, Իրանի իշխանութան բոլոր նահանգներում, գավառներում ինչքան գործի ընդունակ, ձեռներեց, աղկեցիկ մարդիկ որ կան, բոլորին մի հանդամանքով պահանջում և պարապօրացնում է այսինչ ամսի, այսինչ օրը Սպահանում ներկա լինել: Այս հրամանագիրը սուրհանդակով ամենքին հասցնում է, այնպես, որ որոշված ժամկետին բոլորը Սպահանում ներկա են լինում:

Մինչ սուրհանդակը մարդկանց կանչելու էր շտապում, այստեղ թանձաղ Ղուլին ասում է շահ թանձաղին. — Ծանո, քեզ հետ հինդ-տասն օր ուղում եմ քեֆ աննք, այնպես, որ սեղանը մեջակցից իսկի չըհավաքենք, ոչ մի խնդրազրի չնայենք, եկող խնդրատուններին էլ վճռենք: Հինդ-տասն օր մենք մեզ քեֆի տանք, ամբողջ օրով խմենք և հարբած մնանք, սա էլ մի գործ է:

Ծահ թանձաղը հավատում է և խաբվում, նրա համար, որ թանձաղ Ղուլին իր մեծ աղին ամուսնացրել էր շահ թանձաղի քրոջ

հետ. ուրեմն և խնամիրներ էին, նրան թը-
վում էր, որ կասկածելն ավելորդ է, կամ
թե իսկի էլ չի կասկածում, որ տակը մի
նենգություն կարող է լինել:

Այսպես, ուրեմն, որևէ նենգություն
չսպասելով թահմազ Ղուլիից, շահ թահմազը
խարվում, համաձայնվում է թահմազ Ղու-
լիի նենգավոր առաջարկին:

Մինչ սուրհանդակները հրամանագրեր
են բաժանում, այդ օրերում սրանք սկսում
են քեֆը: Շահ թահմազը սկսում է կոնծեր
Հինգ բաժակի տեղ տասն է խմում, տասի
տեղը տասնհինգը, իսկ թահմազ Ղուլին հա-
տալիս է բաժակը հա խմեցնում: Ինքը թահ-
մազ Ղուլին էլ է խմում [բայց] շահին աչք
բանալ չի տալիս:

Այս այսպես շարունակվում է մինչև այն
ժամանակ, երբ պետության ամեն կողմից
կանչված մարդիկ՝ մեծամեծներ, խաներ
հավաքվում են Սպահանի «Սեյտապատ»
կոչված հայտնի տեղը: Այս Սեյտապատը
ձեզ պատկերացնելու համար՝ ասեմ օրինակ՝
Պոլսո «Քյաղըրա խանեն»: Այնպես զրոսան-
քի տեղ է, հովալի և կանաչազարդ: Ես էլ
գնացի ման եկա, աչքերովս տեսա այս
զրոսավայրը—կանաչ թավշանման, հրաշալի
հրապարակով, գեղեցիկ և նրբակերտ մի
քյոշկ ունի. ահա այս քյոշկում էլ նրանք
խմելիս են լինում, երբ այս Սեյտապա-
տի հրապարակում հավաքվել են նահանգ-
ներից, գավառներից կանչված ավազա-
նիրներ, խաներ, բեգեր իմաստուններ—բո-
լորն էլ պետական փորձառությամբ մար-
դիկ, անտեղյակ թահմազ Ղուլիի նպա-
հարցանել զպատճառ նշանին:

էջ 35-36

5) ՇԾԵ-ի թուին ՇԾԵ փլաւ սուրբ
Սոփի ի քաղաքն Ուրհայ և երևեցաւ աստղն
զիսաւոր:

էջ 74

6) Ի թուին ՇԾԷ եղև նշան սոսկալի ՚ի
յաշխարհն հայոց ՚ի դաւան Վասպուրա-

7) В 1211 (году Господня) появилась
копьеобразная звезда.

Стр. 65.

8) В 1261 (году Господня) виднелась
копьеобразная звезда в течение четы-
рех месяцев.

Стр. 68

СМБАТ СПАРАПЕТ

Москва 1856 г.

1) В 440 году... в этом году появи-
лась комета на небе.

Стр. 24

2) Опять в дни (правления) Василия
в 452 году появилась звезда в виде
пламени и было землетрясение во всех
странах.

Стр. 26.

3) В 489 году появилась комета
вечером на западной стороне и двига-
лась попятно дошла на юге до мно-
жества звезд (нужно понимать созвез-
дие Плеяд, которое другие называют
Бойл (группа)) и луна была посреди
них, и больше не показалась (комета).

Стр. 36.

4) В 485-ом году затмилось солнце
и день стал, как ночь: люди пришли в
ужас от страшного знаменья. Тогда же
царь армянский Ованес и католикос
Тер-Петрос послали людей к армян-
скому монаху Ованесу Козерну спро-
сить о причине знаменья¹).

Стр. 35—36

5) 553 [1104]. В году 553-ем по армян-
скому летоисчислению разрушилась
[церковь] св. Софии в городе Урае
[Urhay] и стала видна комета.

Стр. 74.

6) В году 557-ом [1108] по армянскому
летоисчислению в стране Армянской

կանի. զի հուր ցոլաց երկնից և անկաւ ի ծովն վասպուրականի մեծ որոտմամբ և սասկեցան ամենայն ձկունք ծովուն...

7) Ի թուին ՈՒՆ խաւարեցաւ արեգակն. և եղև արևն զիշեր. և երևեցան սասեղք:

էջ 91

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԴԱԽԻԺԵՑԻՈՅ:

1895 (դ. աղ.)

1) Թուին ՌԻԼԷ. ազևար աստղն երաւ և երևեցաւ:

էջ 631

2) Թուին ՌԻԼԷ. դարձեալ ի սոյն թուին ի մայիս ամսոյ խաւարեցաւ արեգակն:

էջ 632

3) Թուին ՌԻԼԷ. ի Նաւասարդի ամսին՝ շող թրածև երևեցաւ յարեկից դէմ յարեժուաւ և զկնի շողոյն յարեկից աստղ մի երևեցաւ միշտ ընթանայր ի հիւսիս:

էջ 637

ՆՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒ

4) Թուին ՌԻԿԹ Սուլթան Օսմանն գնաց ի պատերազմ ի վերայ Լեհին և ոչ կարաց անուր Դարձեալ ի սոյն թուին թագաւորն Օսման ի վերայ Լեհին էր, ի կողմն հիւսիսոյ երկինքն վառեցաւ կէս զիշերին որպէս թէ արեգակն ի յամպն վազէ ի ծաղկալ ժամուն այրի, նոյնպէս եղև Եւ յորժամ թագաւորն դարձաւ ի պատերազմէն և գնաց ի Սաանբօլ՝ իւր դուին չարացան թէ մեզ այսպէս թագաւոր ոչ է ի պիտոյ. դարկին սպանին ի թագաւորն:

էջ 638

над областью Васпуракан было ужасное виденье: пламя (огонь) потекло из неба и упало в море Васпураканское [озеро Ван] с большим грохотом; и погибли всякого рода рыбы в море.

7) В 625-ом году затмилось солнце и день стал как ночь. и видны были звезды²⁾.

Стр. 91

¹⁾ Повидимому комета Галлея, если принять, что комета 1066 г. была ею.

²⁾ Об этом затмении см. выше у Ластиверци с примечаниями Орманяна.

ИСТОРИЯ МОНАХА АРАКЕЛА
ДАВРИЖСКОГО

1895 (3-е изд.)

1) В 1025 году появилась и стала видна комета.

Стр. 631

2) В 1047 году опять в этом году в месяце мае затмилось солнце.

Стр. 632

3) В 1068 году в месяце Навасарде (Navasard) виднелся луч на подобие сабли в востока на запад; позади луча появилась звезда которая все время двигалась на север.

Стр. 637

ТОГО ЖЕ ИСТОРИКА

4) В 1069 году султан Осман пошел войной на Польшу, но не смог взять ее (т. е. победить). Опять в том же году царь Осман напал на Польшу, тогда же на северной стороне в полночь зажглось небо так, как в момент восхода на солнце набегаёт облако и воспламеняется так и было тогда и когда царь вернулся с той войны и пошел в Стамбул—его рабы (т. е. придворные) возмутились дескать нам не нужен подобный царь и убили (своего) царя.

Стр. 638

5) Թուին ՌՃԳ դարձեալ ի սոյն թուին յՕդոստոսի ամսոյ Բ յաւուր Զորեքշարթի. աւուրք լուսնի լ. և արեգակն յԱսիւծ կենդանակերպն էր. կէս աւուրն անցեր էր ք ժամ մասն արեգականն խաւարեցաւ և ասանդք երկնից երևեցան՝ որպէս ի գիշերին: էջ 646

ՆՈՒՅՆ ՊԱՏՄԱԳՐԻ

6) Թուին ՌՃԺԳ յամսեան դեկտեմբերի, յետ անցանելոյ մէջ գիշերին, ի խոր առաւօտուն, երևեցաւ վարսաւոր աստղ մի յերկինս ի մեջ յարեւելից և հարաւոյ, և դվարսն իւր դեպ յարեմուտս ունէր ձգեալ և յելանելն իւրում, որ աւուր՝ շուտ ելանէր, և այնպէս շուտ ելանելով գնաց մինչև յերեկոյ, և յորժամ էանց գմէջ գիշերոյն դարձոյց դվարսն իւր և ձգեաց դէպ յարեւելս, և այնպէս գնալով եհաս մինչև յերեկոյան լոյսն և ապա անհայտ եղև: Այլ ի սոյն թուին և յամսեանն ապրիլի դարձեալ երևեցաւ աստղ մի դիտաւոր ընդ արեւը ի կողմն հիւսիսոյ՝ առաւօտու պահուն, դվարսն իւր ունէր ձգեալ ի կողմն արեւմտեան և յելանելն իւրում որ աւուր ուշ ելանէր, և այնպէս գնալով եհաս մինչև ի լոյս առաւօտուն, և անյայտ եղև: էջ 649-650

ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱԻԱԳԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ:

Ի Վաղարշապատ 1870.

Գլուխ 12

Վասն իջանելոյ լուսոյ յերկնից

Զայս պատմութիւնս պարտ էր աստղ գրել ի թուին ՌՁԴ (1080-1090?) բայց ի մտացմանէ աստ գրեցաւ: Քանզի մինչ մանուկ էի ևս ի տան մերում ի Քանաքեռ, և յաւուր Խաչկերպցին գնացաք ընդ հօր իմում յայգի մեր, որ մերձ է ի գիւղն Վարմիրբերդ կոչեցեալ՝ առ ափն Հուրաստան գե-

5) В 1103 году опять затмилось солнце 2-го числа августа месяца в среду когда был 30-ый день луны и солнце находилось в зодиаке Льва; в 3 часа затмилась часть солнца и появились звезды на небе, как (это бывает) ночью. Стр. 646

ТОГО ЖЕ ИСТОРИКА

6) В 1114 году в декабре месяце после полуночи ранним утром появилась волосатая звезда (комета) на небе посредине востока и юга и [она] отбрасывала хвост свой (букв. свои волосы) на запад. При своем восходе она со дня на день восходила все раньше и и так восходя все раньше и раньше проходила до вечера (т. е. стала восходить днем); после полуночи она повернула свой хвост и отбросила на восток и так продолжая она продержалась до вечерней зари и затем исчезла. Другой случай: в этом же году, в апреле месяце снова была видна комета на востоке, в сторону северную (т. е. к северу от востока) в утренние часы и отбрасывала хвост в сторону западную, и появляясь со дня на день позже и позже и так продолжалось (пока восход ее совпал) с утренним светом (т. е. зарей) и она перестала быть видимой.

Стр. 649-650

ИСТОРИЧЕСКАЯ ЛЕТОПИСЬ САРКАВАКА ЗАКАРИЯ

Вагаршапат 1870 г.

Глава 36.

Относительно падения света с неба.

Эту историю (событие) нужно было [мне] написать раньше, в 1080-90 годах, но по забывчивости пишется здесь. Когда я был ребенком в нашем доме в Канакере, в день Воздвижения Креста пошли с отцом моим в сад, который лежит вблизи села называемом Кармир-

տոյն՝ ի ներքոյ կամրճին: Եւ ի մտանել արեգականն, հայրն իմ աղօթէր յերեկոյան ժամն չեւ եւ էր մթացեալ, այլ լոյս աւուրն դեռ եւ կայր, յանկարծակի պատահեալ կապուտակ եթերն յարեկից կողմն, և էջ լոյս սաստիկ և ահագին, լայն և երկայն, և էջ մինչև մերձենեալ յերկրի, և լուսաւորեաց ճառագայթ նորա դարեկերս պայծառ առաւել քան զարեգակն. և սկիզբն լուսոյն ճախր առնոյր՝ որպէս անիւ երթայր դեպ ի հիւսիս՝ հանդարտութեամբ և մեղմով, և ճառագայթեալ լոյսն կարմիր և սպիտակ, և առաջի լուսոյն որպէս թե աստըղ ի չափ արուսեակին ընթանայր բացադոյն թզաչափ մի, և հայրն իմ թողեալ զժամ աղօթիցն՝ սկսեալ լալով երգել զշարական ԳԿ Լոյսդ որ ընդ լուսով Աստուածութեան. Զ շարական աւարտեալ՝ մինչև երեկոյ լոյսն, և ապա հեռացաւ և եղև աներևույթ: Եւ լուսաք՝ թե մինչև յԱխալցիէ տեսեալ են զաստուածային և հրաշափառ լոյսն¹:

էջ 63. Հատ. II

¹) Այստեղ մենք գործ ունենք բոլորի սքանչելի նկարագրութեան հետ

ՉԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱԻԱԳԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ԾԳ

Վաս նշանացն երկնից:

Յառաջ քան զշարժն եղև նշան ինչ յերկինս. զի տեսին ի գիշերի միում յօդս որպէս թե նիզակարունս՝ և երկայն և լայն՝ ի հարաւոյ և ի հիւսիս, և երկոքին ծայրքն բարակ որպէս դեղադիր, և սակաւ սակաւ դարձոյց գտառնս իւր յարեկս և յարեկուտս. և այնպէս կացեալ յաւուրս Ի և անյայտ եղև Յետ այսորիկ երևեցաւ աստղ մի ի Միջերկրեայս՝ սաստիկ մեծ քան զայլ աստեղս, զեղին գունով, ունելով զհերս երկայն և լայն՝ սպիտակ որպէս ձիւն, ձգեալ զէպ յարեկուտս, և փայլէր

берд на берегу реки Урастан, ниже моста. Во время захода солнца, отец мой совершал вечернюю молитву, не было еще темно и дневной свет пока продолжался; неожиданно разорвался синий эфир на восточной стороне неба и снисходил большой и сильный свет; он был широкий и длинный и спускался до сближения с землей; и осветил его луч вселенную светом более ярким, чем солнечный. Начальная часть света вертелась (букв. парила) подобно колесу двигаясь на север спокойно и мирно и испускала свет красный и белый и впереди света, на расстоянии локтя, неслась как будто я звезда размером с Венеру. Отец мой оставив молитву стал с плачем петь 43-ий шаракан (церковное песнопение) „О ты свет, что со светом Божиим“..., Пока он спел 6 шараканов свет виднелся, но потом он (свет) удалился и стал невидимым. И мы слышали, что до Ахалцха видели тот божественный и чудесный свет¹).

Стр. 63, часть II.

¹) Тут мы видим великолепное описание болида.

Прим. пер.

ТОГО ЖЕ ЛЕТОПИСЦА

Глава 53.

Про небесные приметы (знаменоя).

Перед землетрясением показалось какое то знамение на небесах: в одну ночь видели в воздухе что то в роде древка у копьа—длиноеи широкое (растянувшись) с юга на север; и два конца (его были) тонки, как у пики. И стало постепенно поворачивать хвосты (букв. дл. волосы) свои на восток и на запад. Так продержалась оно двадцать дней и исчезла. После этого в Средиземной (стране) показалась звезда очень большая чем другие звезды, желтоватого цвета, с

հերքն՝ որպես թէ կայծա թափել յերկիր՝
և ահարկու տեսողացն. և կացեալ այնպէս
ամիս մի, և լինէր երկօրեայ երևիւր մին-
չև ցառաւօտ, երբեմն ի մէջ գիշերի, և
երբեմն յառաւօտին և երբէք ոչ շարժէր
ի տեղւոջն. և ապա եղև անյայտ Յետ
այսօրիկ երևեցաւ յարևելս աստղ մի կար-
միր որպէս որդան, և ունէր երկս գէսս,
մին սպիտակ, մին աստղագոյն և մին
խարտեաշ՝ բարբազունդ, ինքն բարձր, և
գէսքն կախեալ գէսս ի երկիր, ինքն կայր
անշարժ, գէսքն շարժէին երբէմն երբէմն.
և կացեալ աւուրս վեց, և յետ վեց աւուրց
գէսքն ցրուեցան, և ինքն երևիւր ի բազում
աւուրս. և կորեալ անհետ:

Էջ 108. Հատ. 11

ԶԱԲԱՐԻԱ ԱԳՈՒՎԵՑԻ

Երևան 1938 թ.

1654 թ. օգոստոսի Բ-ու մն լիլաւ յետին
ժամուն, օրն չորեքշաբթի, խաւարեցաւ
արեգակն, Յինն նոր ծնունդ. այնպէս
խաւարեցաւ, որ աստղն երևեցաւ:

Էջ 43

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

(1664 թ.) դեկտեմբերի դ-ումն ես Զա-
քարիա այս գիշեր Շարուր տեսայ, որ
գիսաւոր աստղ երևեցաւ, որ է դոյրուզու
աստղ: Աչ թէ միայն ես տեսայ, բովանդակ
երկիր տեսան. այնպես շտաովիղ մնաց
մինչև ի օր երևեցան, քիչ-քիչ վարթա-
րաւ ելաւ:

Էջ 62

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

(1666 թ.) Յունիս իր-ու մն Ագուլիս, օրն
ուրբաթ, որ ես Զաքարիայ նշան այս
տեսայ. դ ժամուն որ արեգակն արևին
արնին ըսանդն փոխեցաւ, քիչ մի մնաց,
մթնեցաւ, որպէս թէ խաւարումն: Զուր

длинными, широкими, и как снег, воло-
сами, которые были отброшены на
запад. И волосы сияли, как бы искры
падали на землю: и страшно стало ви-
девшим ее. Так продержалась один
месяц; и сделалась двухдневной (?), ста-
ла видна до утра, иногда (виднелась)
среди ночи, а другой раз утром и нико-
гда не двигалась с места, но потом ис-
чезла. После этого показалась звезда на
востоке, красноватого (цвета), как ко-
шениль; имела она три хвоста, один
белый, другой звездоцветный, и тре-
тий светлорусый-шарообразный, сама
(стояла) высоко, а хвосты висели в
сторону земли. Она была неподвиж-
ная, а хвосты порою двигались. Про-
держалась (она) шесть дней и после
шести дней хвосты рассеялись, но сама
виднелась еще много дней, но исчезла
бесследно.

Стр. 108, ч. I

ЗАКАРИЯ АГУЛЕЦИ

Ереван 1938 г.

В 1654 г, второго августа в послед-
ний час дня среды затмилось солнце;
было новолуние; затмение было такое,
что виднелась звезда.

Стр. 43.

ТОГО ЖЕ АВТОРА

(1664 г.) шестого декабря я Зака-
рия в эту ночь в Шаруре увидел,
что появилась комета, которая была
близ звезды Khoygukhlu. Видел не толь-
ко я, но вся земля; в таком виде
радиус (подр. хвост) виднелась 40
дней пока помаленьку не исчезла.

Стр. 62

ТОГО ЖЕ АВТОРА

(1666 г.) Двадцать второе июня, Агу-
лис, день пятница, когда я, Закария,
видел этот знак: в шесть часов солнце
изменило свой цвет, немного погода
стало темно, как во время затмения.

ածեցի աման, տեսա, որ արեղական Գ
յիսեն բռնված, մին յիսեն բաց: Այնպէս
մինչև կէս սհաթ մնաց, ապա քիչ-քիչ
բացվեցաւ: Այսօր ☽-ինն մին էր:

էջ 67

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Թվին Ռէժէ (1668 թ.) փետրվարի
իգ-ումն Ագուլիս օր արեմտեան կողմն գի-
սաւոր աստղ երևեցաւ, որ առաջի իրի-
գուն մէր կու մտանէր. իւր չարութիւն շատ
էր: Աստուած փրկէ փորցանաց:

էջ 74

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Թվին Ռժի (1671 թ.) սեփտեմբերի
ը-ումն Ագուլիս, օրն ուրբաթ, ☽-ին ժե-ումն
☽-ինն խաւարեցաւ առաջին իրիգուն, որ
բռնելն մինջի բացվել ու պարզելն ք սհաթ
անցաւ, շատ խաւարակալաւ:

էջ. 104.

Налив воду в сосуд и увидел, что три
части солнца закрыты, а одна откры-
та. Так продолжалось пол часа после
чего помаленьку открылась (подр. солнеч-
ная поверхность). Сегодня было первое
число лунного месяца.

Стр. 67.

ТОГО ЖЕ АВТОРА

В 1668 году, февраля 26-го на за-
падной стороне Агулиса стала видна
комета, которая в первую ночь зашла;
ее зло было большое. Спаси бог от
испытаний.

Стр. 74

ТОГО ЖЕ АВТОРА

В 1671 году, сентября девятого. Агу-
лис, день пятница, в 15-ое число лунного
месяца затмилась луна в начале ночи
(подр. вечером) так, что от начала
затмения до конца и прояснения (подр.
полное завершение явления) прошло
три часа; было очень продолжитель-
ное затмение.

Стр. 104

СВОДНАЯ ТАБЛИЦА

	А в т о р	Затем. солнца	Комета	Новая звезда	Мет. и болид	Полярные сияния	Ослабление света солн.	Дата	Страница
1	Архив армянс. истории	—	1	—	—	—	—	1665	131
2	„ „ „	—	1	—	—	—	—	1618	131
3	История В. Гевонда	—	1	—	—	—	—	685	131
4	Стефан Асохгик	1	—	—	—	—	—	966	132
5	„ „	—	1	—	—	—	—	974	132
6	„ „	—	1	—	—	—	—	989	133
7	Орманян	1	—	—	—	—	—	1033	132
8	Ластивертин	1	—	—	—	—	—	1033	133
9	У р а е ц и	—	1	—	—	—	—	997	133
10	„ „	—	1	—	—	—	—	1003	134
14	„ „	1	—	—	—	1	—	1022	134
15	„ „	1	—	—	—	—	—	1035	134
16	„ „	—	1	—	—	—	—	1040	135
17	„ „	—	1	—	—	—	—	1066	135
18	„ „	—	1	—	—	—	—	1070	135
19	„ „	—	1	—	—	—	—	1097	136
20	„ „	—	—	—	—	1	—	1097	136
21	„ „	—	—	—	—	1	—	1098	137
22	„ „	—	1	—	—	—	—	1003	137
23	„ „	—	1	—	—	—	—	1105	137
24	Свящ. Сам. Анеци	—	—	—	—	—	1	15	138
25	„ „ „	1	—	—	—	—	—	560	138
26	„ „ „	1	—	—	—	—	1	616	138
27	„ „ „	—	—	—	—	—	—	715	138
28	„ „ „	—	—	—	—	—	—	762	139
29	„ „ „	1	—	—	—	—	—	969	139
30	„ „ „	—	1	1	1	—	—	974	139
31	„ „ „	—	1	1	—	—	—	1018	139
32	„ „ „	1	—	—	—	—	—	1061	139
33	„ „ „	—	1	—	—	—	—	1068	139
34	„ „ „	—	1	—	—	—	—	1105	139
35	„ „ „	1	—	—	—	—	—	1132	139
36	„ „ „	—	1	—	—	—	—	1265	139
37	„ „ „	—	1	—	—	—	—	1285	139
38	„ „ „	1	—	—	—	—	—	812	139

	А в т о р	Затем. солнца	Комета	Новая звезда	Мет. и болид	Полярные сияния	Ослабление света солн.	Дата	Страница
39	Свяш. Сам. Анеци	1	—	—	—	—	—	857	139
40	" " "	—	1	—	—	—	—	1114	139
41	" " "	—	—	1	—	—	—	969	140
42	" " "	1	—	—	—	—	—	969	140
43	" " "	—	1	—	—	—	—	1007	140
44	" " "	—	1	—	—	—	—	1018	140
45	" " "	—	1	—	—	—	—	1068	140
46	" " "	1	—	—	—	—	—	1132	140
47	" " "	—	1	—	—	—	—	1265	140
48	" " "	1	—	—	—	—	—	1337	140
49	" " "	1	—	—	—	—	—	1418	141
50	" " "	1	—	—	—	—	—	1039	141
51	Кир. Гандзакци	—	—	—	—	—	1	VI в.	141
52	" "	1	—	—	—	—	—	618	141
53	" "	—	1	—	—	—	—	714	141
54	Мхит. Айриванци	1	—	—	—	—	—	571	142
55	" "	—	1	—	—	—	—	641	142
56	" "	—	—	1	1	—	—	737	142
57	" "	1	—	—	—	—	—	1031	142
58	" "	—	1	—	—	—	—	1094	142
59	" "	—	1	—	—	—	—	1141	142
60	" "	—	1	—	—	—	—	1211	143
61	" "	—	1	—	—	—	—	1261	143
62	Смбат спаранет	—	1	—	—	—	—	440	143
63	" "	—	1	—	—	—	—	452	143
64	" "	—	1	—	—	—	—	489	143
65	" "	1	—	—	—	—	—	485	143
66	" "	1	—	—	—	—	—	625	143
67	" "	—	1	—	—	—	—	1104	144
68	" "	—	—	—	1	—	—	1108	144
69	Аракел Даврижци	—	1	—	—	—	—	1025	144
70	" "	1	—	—	—	—	—	1047	144
71	" "	—	1	—	—	—	—	1068	144
72	" "	—	—	—	—	1	—	1069	144
73	" "	1	—	—	—	—	—	1103	145
74	" "	—	1	—	—	—	—	1114	145
75	" "	—	—	—	—	—	—	—	—
76	Зак. саркаваг	—	—	—	—	—	—	1080-90	145
77	Закария Саркаваг	—	1	—	—	—	—	XI в.	146
78	Закария Акулеци	1	—	—	—	—	—	1654	147
79	" "	—	1	—	—	—	—	1664	147
80	" "	1	—	—	—	—	—	1666	147
81	" "	—	1	—	—	—	—	1668	148
82	" "	1*	—	—	—	—	—	1671	148

* Единственный отмеченный случай затемнения луны.

„ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ“

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Վանական մականվամբ հայտնի Հովհաննես վարդապետը ծնվել է XII դարի 70-ական թվերին Տավուշ գավառում:

XIII դարի առաջին տարիներում նա՝ որպես Մխիթար Գոշի աշակերտ շրջում է նրա հետ և անգամ զրի անցկացնում Զաքարիա սպասալարի կողմից հրավիրված դավանաբանական ժողովի հանգամանքները:

Աշակերտելով ժամանակի ամենախոշոր գիտնականներից մեկին, նա երկտասարդական հասակից ճանաչվում է որպես հեղինակավոր ու գիտնական վարդապետ. «համբաւ իմաստութեան սորա [Վանականի] տարածեցաւ ընդ աշխարհս. և գային առ նա յամենայն կողմանց, և ուսանէին ի նմանէ զվարս սրբիկեշտութեան և սրբութեան, և զգիտութիւն աստուածեղէն զբոց, և լուսաւորեալք զնային յիւրաքանչիւր տեղիս լոյս լինել աշխարհաց» գրում է մի ժամանակակից: Եվ իրոք, համաձայն նրա աշակերտների՝ Կիրակոսի և Վարդանի վկայությունների նրա շուրջն էին խմբվել բազմաթիվ ուսումնասիր աշակերտներ: Վանականը շարունակում էր իր անդուլ ուսուցչական գործունեությունը անգամ մոնղոլական աշխարհավեր արշավանքների ժամանակ՝ պատասպարվելով Տավուշ բերդի մոտ գտնվող մի քարայրում:

Մոնղոլները՝ պաշարելով քարայրը՝ ստիպում են Վանականին և քարայրում պա-

տասպարված նրա աշակերտներին ու գյուղացիներին անձնատուր լինել Բալորին գերելուց, մեծ զրկանքների ենթարկելուց հետո՝ Մոնղոլները վաճառում են Վանականին Գադ բերդի քրիստոնյաներին 50 դահեկանով: Այնուհետև, հաստատվելով իր կառուցած Խորանաշատ վանքում, Վանականը շարունակում է իր մանկավարժական ու գիտական գործունեությունը մինչև մահ: Մահանում է նա 1251 թվի մարտի 18-ին:

Վանական վարդապետը թողել է զրական հարուստ ժառանգություն. սակայն նրա գործերից ամենաարժեքավորները ցարդ կորած են: Կորած է նրա պատմությունը, որը համաձայն Կիրակոսի ու Վարդանի վկայության՝ Մոնղոլների և Հայաստանում կատարած նրանց արշավանքների համար մեծ արժեք ունեցող աղբյուր է եղել Կորել է նաև Զաքարիա սպասալարի հրավիրված դավանաբանական ժողովի դեպքերի նրա նկարագրությունը, որը նույնպես արժեքավոր աղբյուր է եղել հայ հոգևորականության լուսավորչական և քաղկեդոնական թևերի պայքարն ուսումնասիրելու համար:

Պահպանվել են և հասել մեզ Վանականի «Համեմատութիւն հնոյ և նորոյ կտակարանաց»՝ «Մեկնութիւն գրոյն Յովբայ», «Ուրախացիր պսակ կուսից շարականի տեսութիւն», «Խրատ դաւանութեան», «Պատճառ առաջաւորաց պահոց» և մեզ հետաքրքրող «Յաղագս տարեմախն» աշխատությունները:

«Յաղագս տարեմտին», աշխատությունը մեղ հասած գործերի մեջ լավագույն տեղերից մեկն է գրավում և ցայտուն կերպով ցույց է տալիս մեր բանասիրության միայն նեղ շրջաններին հայտնի Վանական վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողությունները:

Աշխատությունը ծանոթ է եղել միայն սահմանափակ թվով մասնագետներին. որոշ մեջբերումներ է անում այնպիսի Գ. Ալիշանն իր «Հին հավատք» ուսումնասիրության մեջ¹⁾, որից և օգտվում է պրոֆ. Աբեղյանը²⁾: Ավելի լայն կերպով այն օգտագործվել է Պրոֆ. Գ. Խալաթյանցի կողմից, որն իր «Арм. эпос в ист. Моисея Хоренского» աշխատության մեջ հրատարակել է Արտավազդի առասպելին վերաբերվող հատվածն ամբողջությամբ: Այսպիսով «Յաղագս տարեմտին» աշխատությունը գեուս չի գրավել մեր բանասիրության լայն շրջանների ուշադրությունը և իր հիմնական մասով մնացել է անօգտագործելի:

Աշխատության մեջ շոշափված են տարեմտի, տարվա, ամիսների, արեղակի, լուսնի, մոլորակների և մի շարք ժողովուրդների տոմարների վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր հարցեր, և տրված են այդ հարցերին գիտական բացատրություններ, որոնք՝ շարահյուսված լինելով բազմաթիվ փաստերի հետ, աշխատությունը դարձնում են տիեզերեգիտության և աստղաբաշխության պատմությամբ հետաքրքրվող մասնագետների համար կարևոր սկզբնաղբյուր:

Այսպես օրինակ, չափազանց հետաքրքիր է սպաղբիղ տեքստում (էջ 159) բերված այն տեղեկությունը, ըստ որի վրաց և աղվանից տարեմուտը սկսվում է հայոց տարեմտից 4 օր հետո (ուրեմն օգոստոսի 15-ին): Հետաքրքիր է նույն էջում բերված այն առասպելը, ըստ որի բացատրվում է տարբեր ժողովուրդների տարեմտի տարբեր օրերով սկսվելը:

Հայ լեզվաբանության պատմության համար չափազանց կարևոր նշանակություն

ունի (էջ 158) այն միտքը, ըստ որի իրերի և երևույթների անունները արվել են համապատասխան նրանց բովանդակության:

Այս սկզբունքը հայ մատենագրության մեջ գործադրված է շատ հնուց. գեուս Մովսես Խորենացին իր պատմության մեջ բազմաթիվ տեղանուններ և տոհմանուններ բացատրում է այս սկզբունքով, սակայն սկզբունքը, որպես լեզվաբանական մի գրույթ առաջին անգամ արտահայտված է այստեղ: Նույն ոգով և բացատրված են հեղինակի կողից հայկական ամիսների անունները:

Վանականի կողմից ճիշտ կերպով են բացատրված արեղակի խավարումը, լուսնի շարժման առանձնահատկությունները և այլն և այլն:

«Յաղագս տարեմտին» աշխատությունը շարադրված է ոչ թե ժամանակի գիտական նեղ շրջանների, այլ լայն հասարակության համար. ճառի ձևով շարադրված աշխատությունը կարդացվել է եկեղեցիներում տարեմտի օրը (օգոստոսի 11-ին) բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ: Լայն հասարակության համար շոշափելի գիտական խնդիրներ, որոնք անմիջապես չէին առնչվում սովորական եկեղեցական քարոզների հետ՝ նոր և հեղինակի համար վտանգավոր քայլ էր, ուստի իզուր չէ, որ նա՝ պաշտոնական եկեղեցու հնարավոր հալածանքներից ու բամբասանքներից իրեն զերծ պահելու նպատակով, ճառի սկզբում հայտնում է, որ ոմանք կարող են տարակուսել և հարց տալ, թե «այսօրիկ հաւատոյ կամ վարուց աւզուտ զինչ» և պատասխանում է՝ «բազում ինչ ամենայն իրաւք, վասն զի աշխարհս ծով է, որպէս ասէ Մարգարէն, ժամանակն չափ կամ կամուրջ կամ ճանապարհ ի ծովու և այս երևելի մարդիկս ի ճանապարհի կենցաղոյս նշան բուռն հարկանելոյ, զի մի որպէս կոչր անցանիցեմք ընդ կենցաղս» (տես՝ էջ 161):

Այսպիսով ժամանակի խոշոր մատենագիր և ուսուցիչ Վանականի նպատակն է եղել ծանոթացնել լայն հասարակությանը աստղաբաշխության և տոմարի մասին եղած գիտության հետ. այդ նպատակով նա աշխատությունը կազմել է դյուրըմբռնելի լեզ-

1) Գ. Ալիշան «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց», Վենետիկ, էջ 178 և 211:

2) Տես Մ. Աբեղյան «Հայ ժողովրդական առասպելները»:

վով. որոշ խնդիրներ ավելի հասկանալի դարձնելու համար կատարել է գեղեցիկ ու պատկերավոր համեմատութիւններ և այլն: Օրինակ, ինչքան հասկանալի ու պատկերավոր են նրա հետեյալ տողերը՝ «արեգակն բոլոր շրջի, որպէս աղաւթիք, որպէս անիւ, իսկ լուսինն, ի թռիչս, որպէս թռչուն, որպէս նետ»: նմանապէս տողեր շատ կարելի է գտնել աշխատութեան մեջ:

«Յաղագս տարեմտին» աշխատութեան ամենահետաքրքիր մասից մեկն Արտավազի առասպելն է, որը շնորհիվ պրոֆ. Գ. Յալաթեանցի վաղուց ի վեր հայտնի է դարձել բանասիրութեանը¹⁾, սակայն, դժբախտաբար, չի օգտագործված առասպելի խորը ուսումնասիրման համար:

Հարևանցիորեն տեսնենք, թե ինչ նոր գծեր է իր մեջ պարունակում առասպելի վանականի կողմից շարադրված պատումը՝

ա) Արտավազի շղթաները լիզող շներն այս պատումում կոչվում են «յարալէզներ»: Մեր մատենագրութեան մեջ արալիզ բառի գրութեան երեք ձևեր կան. բայտ որում յուրաքանչուր հեղինակ ըստ իր գրութեան էլ հասկացել է այս բառը:

Փափստոս Բյուզանդը գրել է «տրէզ» և հասկացել է որպէս «առնող և լիզող», Եղնիկն ու Անանունը գրել են «արալէզ» Արային լիզող, իսկ մեր հեղինակը գերվելով «յար լիզուն» [զկապանս Արտաւազդայ] և «Արալէզ» բառերի նմանահնչունութեամբ յարալէզ է անվանում Արտավազի շներին²⁾ և հասկանում է բառը, որպէս «յար լիզող»: Այսպիսով Արտավազի առասպելի պատումներից միայն այս պատումում Արտավազի շները կոչվում են «յարալէզներ»:

բ) Այնուհետև վանականը հայտնում է, որ արալիզներից մեկը սպիտակ է, մյուսը՝ սև: Այս տեղեկութունը տալիս են նաև «յայսմաւուրքներում» եղած պատումները, որոնց հիմքը, հավանաբար, վանականի պատումն է հանդիսացել:

գ) Եվ վերջապէս վանականը հաղորդում է, որ Արտավազի շղթաները նավասարդի մեկին (տարեմտին) բարակում են այնքան, որ եթե դարբինները կռանք չգարկեն դատարկ սալին, և նույնատիպ գործողութուն չկատարեն մյուս արհեստավորները, ապա Արտավազը կ'կտրի շղթաները դուրս կգա աշխարհ:

Նավասարդի մեկը վանականի ժամանակ համապատասխանում էր օգոստոսի 11-ին, սակայն հին հայկական տոմարով նա ընկնում էր դարնանամտին, երբ վերածնվում էր բնութիւնը:

Այս տեղեկութունները կռահել են տալիս, որ Արտավազի առասպելում պահպանվել են հեռավոր հիշողութիւններ մի մեծնող ու հարութիւն ամնող աստվածութեան մասին, որ բերում է դարուն, վերակենդանացնում է բնութիւնը, ուստի և կրում է իր վրա պողպեթութեան, աճման, կյանքի ֆունկցիաները: Հավանաբար ուշ աշնանը բուսականութեան մահացման հետ մեկտեղ Արտավազին բռնում են դեվերը (Եզնիկ) կամ քաջքերը (Յորենացի) և կամ, նորագոյն պատումներում, չաստվածները (բոլոր դեպքերում էլ՝ չար ողի) և շղթայում ձյունապատ Մասիսի վրա:

Մասիս (Արարատ) սարը հայ ժողովրդական հավատալիքներով, որոնք պահպանվել են մինչև XIX դարը և հարևանցիներն նշվել Մ. Թադիագյանի կողմից³⁾, համարվել է «մութն աշխարհ», որտեղ իշխում են չար ողիներ և որտեղ հավանաբար տեղափոխվում էին մարդիկ իրենց մահվանից հետո:

Մասիսում քաջքերի կողմից շղթայված Արտավազին մեռակ չեն թողնում իր շները՝ սև և սպիտակ արալիզները, որոնց գույները կարող են ցերեկվա և գիշերվա, դարնան և ձմռան, կյանքի և մահու հակադիր ուժերի առասպելական պատկերացումները լինել. նրանք լիզում են Արտավազի շղթաները (գուցէ հնում լիզել են դին) մինչև դարնանամտին նորից դուրս է եկել Արտավազը, վերածնել աշխարհը, պարգևել

¹⁾Տես՝ проф. Г. Халатянц «Арм. эпос в ист. арм. Монсея Хоренского», 1896. Москва часть II стр. 73.

²⁾ Արալիզները պատկերացվում էին շան կերպարանքով, այդ առթիվ Եզնիկը գրում է «...և դաւլէզն, ի շանէ ելիալ տանն»:

³⁾ Տես՝ Մ. Թադիագյան «Ճանապարհորդութիւնս Կարկաթա», 1847 թ.

կյանք բուսականություն՝ նորից մեռնելու և նորից ծնվելու համար:

Իհարկե, մեզ հասած պատումները հնարավորություն չեն տալիս անվերապահորեն հայտարարելու, որ Արտավազը նման Արային¹⁾ հնադույն ժամանակներում պաշտվել է հայերի կողմից, որպես դարնան, բնության և պտղաբերության աստվածություն, սակայն վերոհիշյալ փաստերն անկասկածելիորեն ցույց են տալիս, որ Արտավազը առասպելի մեզ հասած պատումներից ոչ մեկն սկզբնական չէ, և որ առասպելի որոշ մոմենտները հիշեցնում են փոքր ասիական ժողովուրդների մեջ շատ տարածված մի հնադույն աստվածության (Թամուզ՝ բարելացրինների, Դիոնիսիոս՝ հույների մոտ և այլն):

Առասպելի այս պատումը հետաքրքիր է նաև մի այլ կողմից. ըստ բոլոր պատումների Արտաշեսի թագման ժամանակ շատ-շատերը չցանկանալով ապրել իրենց սիրելի թագավորի մահվանից հետո ինքնասպանություն են գործում ու թաղվում նրա հետ: Դժվար չէ կղրակացնել, որ այս հեռավոր հիշողություն է բարձրաստիճան մարդկանց թագման ժամանակ մարդկային զոհեր կատարելու (այդպիսի թաղումներ Հայաստանում հայտնաբերել է Ն. Լալայանը. տես «Պամբարանների պեղումները Հայաստանում»): Վանականի պատումում այդ մասը շարադրված է այնպես, որ հաստատում է վերոհիշյալ կղրակացությունը: Նա գրում է Արտաշեսի մահվան ժամանակ «ժառանգը և աղախնայքն սպանին զինքեանս ի վերայ նորա». իսկ ըստ Գ ձևագրի՝ «և ծառայս և աղախնայս սպանէին ի վերայ նորա...» Այսպիսով, մի գեղքում ինքնասպանություն գործողները ստրուկներ ու սարկուհիներ են, իսկ մյուս գեղքում նրանք ոչ թէ ինքնասպանություն են գործում, այլ սպանվում են այլոց կողմից:

Վանականը, աշխատությունը գրելու ժամանակ, այլ աղբյուրների հետ միասին ձեռքի տակ է ունեցել և լայնորեն օգտագործել է Անանիա Շիրակացու «Տիեզերա-

գիտություն և Տոմար» աշխատությունը, որ լույս տեսավ Հայկ. ՍՍՌ Ժողովրդավարական կից Պետական ձեռագրատան (Մատենադարանի) հրատարակությամբ 1940 թվին:

Ակնհայտ դարձնելու համար Շիրակացու աշխատության օգտագործումը Վանականի՝ կողմից բերենք օրինակներ՝

Յաղագս տարեմտին:

ա) «...և դարձյալ դարեզակն տեսեալ կէտէն ի կէտն բոլոր ընթացեալ, ասացին «տարաւ զիմ ժամանակս»...» էջ՝ 158:

բ) «Տեսեալ զնա [զլուսին] մարդիկ յընծախլ և ի մաշիլ. ասացին «իմ ես աւրինակ ծնընդյան և մահու» էջ՝ 162:

Տիեզերագիտություն և Տոմար:

ա) «Տեսնելով դարեզակն շրջանէ ՚ի շրջան հասեալ, իմացաւ զպակասումն աւուրցն և ասէ տարաւ...»

էջ՝ 74

բ) «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ՝ իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին «է մեզ պատկեր»...» էջ՝ 75

Անանիա Շիրակացուց է վերցված նաև հայկական ամիսների անունները Հայկի որդիների և դստերի անվանց հետ կապելու առասպելը և այլն (համեմատիր՝ «Տիեզերագիտություն և Տոմար» ԽԻ զլուսի, էջ՝ 75—77, Կ զլուսի, էջ՝ 94—«Յաղագս տարեմտին» էջ՝ 160, 162 և այլն):

«Յաղագս տարեմտին» աշխատությունը լայնորեն օգտագործվել է վանականի աշակերտների և այլ մատենագրերի կողմից, ուստի այն կարող է պարզել նաև աղբյուրագիտական որոշ խնդիրներ: Հատկապես այն օգտագործել են իրենց աշխատություններում Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին¹⁾

* * *

Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» աշխատության տեքստը կազմելու ժամանակ օգտագործել ենք երեք ձեռագրեր:

1) Տե՛ս Կիրակոս Գանձակեցի «Պատմություն Հայոց» Թբիլիսի 1909 էջ՝ 43—44 և 200—201. Վարդան «Պատմություն Տիեզերական», Մոսկվա 1861, էջ՝ 12, 16:

1) Տե՛ս проф. Гр. Капанцян «Хетские боги у армян» Ереван 1940 г. стр. 25—27

Որպես հիմք ընդունել ենք Մատենադարանի թիվ 5561 (872) ձեռագիրը (Ա. ձեռագիր). բովանդակութուն՝ Տոնապատճառ. մեկ հետաքրքրող աշխատութունը «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէն ասացեալ» վերնագրով, բռնում է ձեռագրի 271ա—276բ էջերը:

Ա. Ձեռագրի համառոտ նկարագրութիւնը

Թերթ. 385, մեծ. 25×17. նյութ՝ թուղթ, վիճակ՝ փաստված, գրութուն՝ միասյուն, գիր՝ բոլորգրին անցնող միջին մետրոպլան, գրիչ՝ Գրիգոր, ժամանակ՝ ԺԲ—ԺԳ դար:

Հիշատակութիւններ. էջ՝ 154ա «Զմեղուցեալս գրիչս՝ Գրիգորէս աղաչեմ յիշել որպէս զայր աղքատ և յամենայն բարեաց թափուր»:

էջ՝ 175բ «մի՛ ջակեր (?) եղբայր, վասն այն մանր գրեցի և յոյժ աշխատեցա, զի աչքս խոց էր անբժշկելի վասն իմ մեղացն. զհոգույս կուրութիւնս հայտնեաց աստուած ի մարմնոյս տեսութիւնս, զի եղեց նշաւակ ամենեցուն: Զգերապայժառ վարդապետն Գրիգոր մականունն Բջնեցի կոչեցեալ՝ գեղապաճույճ և բազմահոշակ, որ զաւրինակս շնորհեաց, յաղաթս մաղթեմ յիշել»:

Ա ձեռագրի թերութիւնները շտկել ենք թիվ. 4139 ձեռագրով (Բ. ձեռագիր): «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէն» աշխատութունը գտնվում է Բ. ձեռագրի 66բ—72բ էջերում:

Բ. Ձեռագրի համառոտ նկարագրութիւնը

Բովանդակութուն՝ Տոնապատճառ. Թերթ՝ 517. մեծ. 26 × 17,8. վիճակ՝ փաստված, գրութուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգրին անցնող միջին մետրոպլան, գրիչ՝ Տիրացու. ժամանակ՝ ՉԺԶ (1267). տեղ՝ Հաղպատ: Ունի ընդարձակ և շատ հետաքրքիր հիշատակարան Վարդան Արևելցու կյանքի և Տոնապատճառ կոչվող ժողովածուների ծագման պատմութիւնն ուսումնասիրողի համար, ուստի որոշ կրճատումներով՝ բերում ենք հիշատակարանը, էջ՝ 516բ—517ա

«Փառք սուրբ երրորդութեան ...»

Ի դձք փափազանաց սիրոյն որ առ

աստուած¹⁾ ... արդարոց, անգրադապէս ներմտածի ի տէ և ի գիշերի, յորոց մի գորով ի լրացելոց (?) հոգւոյն երջանիկ հայրն մեր և հասարակաց՝ Վարդան վարդապետն. յառաջին հեղինակացն ի մերուս բացափայլեալ ժամանակի, յամենեցունց ոչիս արեգակնածագ փայլմամբն շողիք լուսաւորեալս, ըստ բացման աչաց և ազանջաց ներքին մարդոյն՝ արանց միանգամայն և կանանց, մեծաց և փոքունց, եկեղեցականաց և աշխարհականաց, և ամենայն չափու հասակի, նաև աւտար ազգեաց ևս: Եւ այսպէս երկար ժամանակ ի ծերութեան հասեալս պայման բարի քաղաքաւարութեամբ կեցեալ ըստ կամացն աստուծոյ՝ ի զարդ եկեղեցւոյ և ի պարծանս ուղափառ հաւատացելոց՝ փոխեցաւ ի հանգիստն արդարոց. յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի առաջի աստուծոյ: Վասնորոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւոյ և նորին մանկանց վերածնելոց ի Քրիստոս, և բազում ինչ թիւրեալ ի սուրբ գրոց ուղեաց ի մեկնչաց սրբոց: Նաև զսաղմոսն գլխովին և զերկարութիւնն յայլ և յայլ մեկնչաց ի մի վայր ժողովել, կարճ և համառաւ բանիւ սեփականել դիւրահաս ընթերցողաց: Որպես և զայս բուրաստանս ամենալիւր ծաղկոցացս, պատճառս տաւնից տէրունականաց և հարցմունք սուրբ բանասիրաց՝ առաքելական և մարգարէական և աւետարանական (?), հաւաքեալք ի սուրբ արանց, որ ամբարեալ կան ի սմա, որով և ես իսկ յամենայնի անարժանս և անպիտանս, որ Տիրացու անւանեցալս ի նորին աշակերտացն, որ և ի սա աշխատեցայ և ըստ կարի իմ ջանացալս, զտէրսէնական տաւնից պատճառն որ ի սն գծագրեցաք: Վասնորոյ մաղթեմ զսա ժառանգողացդ, յընթերցողացդ և յաւատողացս. և յաւրինակառ[ո]ւացդ ... հռչակաւոր սուրբ ուխտիս ի յաստուած ... Հաղբատ, թուականութեանս (?) հայոց ՉԺԶ (1267). ... տէրունական սուրբ և աստուած

1) Ձեռագրի մաշված և ցեցակեր լինելու հետև-վանքով, որոշ տեղեր մնում են անընթեռնելի. այդ տեղերը մենք նշանակում ենք բազմակետերով, իսկ մեր կողմից կրճատված մասերը 3 կետով:

ծընկալ նշանիս աստուածածնիս և այլ սրբոցս: Յաթոռակալութեանս տէր Յովհաննիսի մեծի հոետորի և սուրբ վերադիտողի, ի մէջ համազումար եղբայրութեանս: Եկեալ մեր ի Վանանդ դաւառէ՝ ի կարս քաղաքէ՝ պանդխտանալ աստ և բազում ինչ աշխատիլ: Վասնորոյ կրկին մաղթանաւք, երեսամած աղաչանաւք հայցեմք, որ ... հանդիպիք այսմ հոգեշահ խրախմանութեանս, զի խնդրէ՝ք ի Քրիստոսէ սղալեալ հանցանացն մեր թողութիւն ... և այլն»

Տեքստը կազմելու ժամանակ ձեռքի տակ ունեցել ենք նաև թիվ. 4669 (1187) ձեռագիրը (Գ. ձեռագիր), որը գրված է 1675 թվին Գրիգոր երեցի կողմից Պեղիամայում: Ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, մեզ հետաքրքրող աշխատությունը (որը գտնվում է ձեռագրի 22ա—29ա էջերում) ինչպես և մյուս նյութերը գրված են բազմաթիվ տառասխալներով ու կրճատումներով, որոնք երբեմն անհասկանալի են դարձնում որոշ պարբերություններ՝

օրինակ, ձեռագրում «անունս տիրանց զնէին» փխ «անուն ըստ իրաց»

«տարուզին ժամանակս» փխ «տարաւ զիմ»
 «աննշանքն են» փխ «այն նշանք են»
 և այլն և այլն:

Չափազանց շատ են նաև ուղղագրական սխալները՝ «աւ»-երը մեծաւ մասամբ փոխարինված են օ-երով, ուստի շատ զեղբերում գրված է՝ «անուանեցօ» (անուանեցաւ), «օուր» (աւուր): «Գ»-ի և «Տ»-ի փոխարեն հաճախ գրված է «Թ» (ընթանեաց, քաղթեութիւն, կարմոս). «Գ»-ի փոխարեն «Բ» (սուբ, թարբման, աւաբ) և այլն:

Վերոհիշեալ նկատառումներով, տարբերակների մեջ մենք նշեցինք Գ. ձեռագրի միայն այն տարբերությունները, որոնք կարող են այլ իմաստ տալ տեքստին:

Արտավազդի առասպելի հատվածի տարբերակներում նշել ենք նաև Գ. Սալաթյանցի կողմից հրատարակված*) հատվածի և մեր տեքստի միջև եղող կարևոր տարբերությունները՝ X—սղայմանական նշանի տակ:

*) Տե՛ս՝ Գ. Халатянц, «Арм. эпос в ист. Монсея Хоренского», Москва 1896, часть II. Материалы стр. 74.

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՍՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ

Աստուծով իմաստնացեալն Սողովմոն՝ ի գիրս իւրական զեկուցանէ մեզ յաղագս աստուծոյ ա-
 5 բարչութեանն՝ անճառ և անհաս աստուածաբանութեամբ, այսպէս ասելով՝ «աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի հաստատեաց զաշխարհս խորհրդով, հանճարով
 10 իւրով զանդունդս պատառեաց. և ամպք հոսեցին զանձրե»¹: Յաղագս որոյ ի քննութիւն կամիմք մտանել տարերց և տարերաց, ժամուց 271բ

և մասանց, և կարաւտիմք աստուածին ձեռացն և իմաստութեանն որդւոյ և հանճարոյ հոգոյն: Իմաս-
 5 տութեան խորհրդով հաստատել զտարտամ գնացս բանից մերոց և անդընդական գթութամբքն բանալ մեզ զխորհուրդ աւուրս, և զւարթաբար անձրեովք չնուլ զձարաւի և
 10 զպասքեալ միտս մեր առ ի կարաւզ գոլ սպասաւորութեան անարկու և պատկառելի հարց և եղբարց ևս առաւել բազմաժողով ատենիս, զի յոյժ գծուարին է յաղագս աստու-

- 1. X. Բան վասն տարէմտին
- 1. Բ. Աօացեալ շիբ
- 2. Բ. Սաղամոն
- 6. Ա. աստուածաբանութեան
- 8. Գ. զհիմունս
- 11. Բ. ամբք
- 13. Ա. տարերաց շիբ

- 2. Գ. կարաւա կմք
- 2. Բ. աստուածական
- 4. Ա. հոգոյն շիբ
- 9. Բ. անձրեաւք
- 10. Բ. գմիտս
- 11. Բ. սպասատարութիւն

ծոյ խաւսել, զի անհասական է մարդկային մտաց, թէպէտ մտացի ոք իցէ. այլ այնքան կարէ ոք հասու լինել, որքան տան մեզ ծա-
 5 նաւթութիւն սուրբ գիրք: Յերիս անձինս որոշեալ և ի մի կատարեալ՝ ըստ աստուածութեանն, ըստ տէրութեանն, ըստ արարչութեանն, ըստ նախախնամութեանն, ըստ
 10 բնութեանն, ըստ ներգործութեանն, ըստ կամացն, ըստ թագաւորութեանն, ըստ իշխանութեանն, ըստ պատուոյն, ըստ փառացն, ամենայն ինչ մի բաց յանձանցն երեք
 15 և մի, մի և երեք: Իսկ մարդկութիւնն որդւոյ ոչ յաւելւած և ոչ պակասութիւն, այլ մնաց նոյն որդի՝ որպէս է՝ բն յաթոռն հայրական. անձառ միութեամբ աստուած
 20 և մարդ կաւարեալ, որով աստուծոյ տամք զամենայն զբարձրագոյնսն և զխոնարհագոյնսն, զի իցէ փրկութիւն մեր յաստուծոյ և ոչ ի մարդոյ: Արդ՝ սուրբ երրորդ
 25 դութեամբն ամենեքեանքն ի լինելութիւն եկին, որպէս աստուածախաւս մարգարէն ասէ «ի սկզբանէ արար աստուած զերկին և զերկիր» այսինքն՝ ի սկսանելոյ
 30 եղև, ոչ էր. և ապա արար, զի մի ասիցեն հակառակորդքն. թէ կայր կամ ինքնին եղև, և, կամ այլ ոք գն արարիչ, յայտ արար թէ չէր և արար աստուած. բայց որ ի
 35 սկսանելոյ լեալ իցէ, դարձեալ կա-

2. Բ. մարդկայինս
 6. Ա. որոշել
 10. Ա. ըստ բնութեանն շիբ
 14. Բ. բաց ի
 16. Բ. որդոյն
 17. Ա. պակասումն
 23. Ա. Բ. փրկութիւնն
 26—27. Բ. աստուածախաւսն ասէ
 28—29. Զ. Զ. «զերկինս և զերկիր» ուղղեցինք համաձայն ծննդոց զբքի Ա զլիս առաջին պարբերութեան
 29. Բ. թէ ի սկսանելոյ
 31. Ա. ասացին
 32. Ա. կամ ինքն եղէ

տարումն ունի: Մովսէս յառաջ զերկինս ասաց արար աստուած և ապա զերկիր, իսկ Դաւիթ՝ «զուտէ՛ր ի սկզբանէ զերկիր հաստա-
 5 տեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են»²: Նա զվերին երկինն ասէ, որ յառաջնումն աւուրն եղև և Դաւիթ զհաստատութիւնդ, որ յերկրորդումն աւուրն եղև: Զի հրե-
 10 դին երկինն շուրջ գալ ասի և ոչ այլայլել, և երկին՝ այլայլել, և ոչ շուրջ գալ, որով ցուցանի թէ նախախնամութեամբն աստուծոյ ամենայն ինչ կն հաստատուն, և
 15 դարձեալ անցանի, թէպէտ և յանգութիւն ոչ անկանի այլ դադարի, և յայլ կերպարանս փոխի նորոգմամբ ի գալստեան տեառն, և նորոյ երկին, և նորոյ երկիր, զոր
 20 եսն առնեմ, կալ առաջի իմ. զի ամենայն որ ինչ ի պէտս մեր եղեալ է՝ անցանելով է, որպէս և չորիս յեղանակս. զի առաջին բուսուցանէ, երկրորդն հա-
 25 սուցանէ, և երրորդն ի կատարածէ | և չորրորդն որպէս յըշտե- 27 28ա մարանս ժողովէ: Զնոյն և ի մեզ է տեսանել՝ ըստ տղայութեան, մանկութեան, և երիտասարդու-
 30 թեան և ծերութեան, որպէս և արեգակն ելանելովն և բարձրանալովն և մտանելովն զնոյն տայ ապացոյց: Արդ զամենայն արար աստուած ի վեց աւուր, թէպէտ
 35 կարող էր ի վայրկեան ժամու առնել՝ ո՛չ արար, այլ զամենայն

1. Բ. կատարած
 5. Բ. ձեռաց քոց շիբ
 7. Բ. յառաջում
 9. Բ. յերկրորդում
 10. Բ. երկինքն
 15. Բ. անցանէ
 16. Ա. անգանի
 17. Բ. կերպարան
 19. Բ. և նորոյ երկիր շիբ
 21. Ա. որ վիս ամենայն որ ինչ
 25. Բ. ի կատարումն
 34. Ա. աւր
 5. Ա. վայրկեան

աւուր կատարած ուրիշ եղ, որ
 իմանին, թէ արարածք են, և չլի-
 նին գամագիւտ չար աղանդքն.
 5 զի երկու երեք է և երեք երկու
 և մին վեց, որով արարածք եղեալ
 պահին. նոյնպէս և եւթն, որ է
 հանդիսաւ աստուծոյ, զի նա ի ներ-
 քոյ տասնեկին անձին է և անձը-
 10 նունդ. վասն այնորիկ պատենն եր-
 բանցիք զեւթն, զվեցն գործեալ և
 յեւթն հանգուցեալ, որպէս վասն
 աստուծոյ գրեալ է. և ւայսպէս ի
 շարաթս և յաւուրս. և ի տարիս՝
 15 վեց գործել և յեւթն հանգիստ և
 թողութիւն: Զի բազում, տաւնք
 էին Հրէիցն ըստ մարմնոյ ծնունդք
 և կալք և կութք, և շինւածոց նա-
 ւակատիս, և այլս բազումս, իսկ
 20 հոգևորն շարաթն, որ խաղաղոյն
 առ նոսա պատի, ամսամուտ և
 ամսազուխ, տարեմուտ և շարա-
 թամուտ և այլք յոլովք: Այլ Մով-
 սէս երիս տաւնս ի տարոջն կատա-
 25 բել հրամանաց զգլխաւորագոյնսն՝
 զելիցն յնգիպտոսէ և զտաղաւտ-
 բահարացն և զքաւութեանն: Իսկ
 տաւն ելիցն առաւել մեծագոյն էր
 առ նոսա, էր որ վասն ինքեանց
 30 աղատութեան և պատուոյ, և էր որ
 վասն խորհրդոյ նորոյս: Որպէս և
 ասէր աստուած՝ ամիսս այս եղիցի
 ձեզ սկիզբն ամսոց և աւրս՝ աւուրց
 և տարիս՝ տարոյ. նոքա զայն
 35 պատուէին. և զտաղաւարահարացն,
 վասն քառասնամեայ յանապատին
 տաղաւարաւքն ընակելոյ հարցն

1. Ա. որիշ եղ
 3. Բ. գամագիւտ
 6. Բ. և մին վեց շիք
 11. Բ. զեւթներորդն
 15. Բ. գործել և յեւթան հանգչել
 18. Բ. կուտք
 27. Ա. զքաւութիւնն
 33. Բ. սկիզբն աւուրց
 34. Բ. սկիզբն տարոյ
 35. Բ. մեծարէին փիւ պատուէին
 37—1. Բ. ընակեցան հարք նոցա յոր պարծէին

նոցա, յորս պարծէին. և զտարե-
 կանացն, զոր ասէ մարգարէն «փնդ
 հարէք ի գլուխս ամսոց, յաւուր
 նշանաւորի տարեկանաց մերոց»³:
 5 Երբ զայր տարին և ՚ի կատար
 ելանէր զինքեանս ընծայեցուցա-
 նէին, և զմիմեանս թագաւորաց
 և իշխանաց մեծամեծաց ընծայք
 տաին. նաև սիրելեաց և ազգակա-
 10 նաց՝ շնորհաւորելով զառաջիկայն
 և զանցեալն գոհանաին, թէ խա-
 զաղութեամբ անցաք ընդ տարիս՝
 ներքնաւք և արտաքնաւք: Զնոյն
 և մեք կատարեմք ընծակելով մի-
 15 մեանց և այլոց, ընտանեաց և աւ-
 տարաց⁴, թէ հոգեկան ինչ և թէ
 մարմնական: Առնէ ինչ և հեթա-
 նոսն՝ թանձրագույն և մարմնական,
 որպէս այն, որ զհացն բոլորավզեր
 20 առնել սովոր են, որպէս թէ բոլոր
 տարիս, անցեալն և որ առաջ ի 272բ
 կայ, շահաւոր և խաղաղութեամբ
 եղև և լինի, զի ի ժամանակիս սո-
 վորաբար վարիմք զայս սակաւ
 25 պատճառս աճեցուցեալ, թէ առ նո-
 սա և թէ առ այլ ազգ անդուստ
 սկսեալ:
 Իսկ թէ զինչ է տարի: Առաջին
 մարդիկն, ասեն, իմաստունք էին,
 30 անուն ըստ իրացն դնէին: Տարի,
 զի յինքեան տանի զաւր, զշարաթ,
 զամիս, զչորս յեղանակս. և և զար-
 ձեալ զարեգակն տեսեալ կիտէն ՚ի
 կէտն բոլոր ընթացեալ, ասացին՝
 35 «տարաւ զիմ ժամանակս»: Իսկ
 եզիպտացիքն տարի ըստ լուսնին
 առնեն, զերեսուն աւրն: Այլ և զայս
 զխտել արժան է, զի զիր անւանց

6. Ա. ընծակեցանէին
 8. Բ. ընծայք
 14. Բ. ընծակելով
 15—16. Գ. աւաճաց փիւ աւտարաց
 16. Բ. ինչ իցէ
 20. Բ. որպէս թէ տարինակաւ
 22. Բ. շնորհաւոր փիւ շահաւոր
 24. Ա. սակաւ շիք
 26. Ա. անդունդ
 34. Ա. բոլորն

'ի նախնոյն Ազամայ է կենդանեաց, իսկ թիւ կենդանակերպիցդ և մոլորակացդ՝ յԱզաւրոսէ թագաւորէ, որ թագաւորեաց առաջին 5 յորդոց անտի Սեթայ և ի սմանէ անւանեցաւ քաղզէութիւնն: Եւ գիւտ գրոյ յԵնովքա, թէպէտ և այլք յԵնովսա ասեն զիր և մոլորակացդ գիւտ, այլ Ենովք արար նշանա-

10 զիրս կարճատունս և բազմատարս, և այնու եթող զկեանս վարուց առաջնոցն և զմարգարէութիւնն իւր, զոր գտեալ Արփաքսադ յետ ջրոյն. առաջին քաղզէացիք իմաստասի-

15 բեցին զիր և թագաւորութիւն կալեալ, և ապա որդի նորա Կայնան բազմացոյց զՔաղզէացւոցն մոլորութիւն՝ բախտ և ճակատագիր ասելով ըստ աստեղացդ և մոլորա-

20 կացդ շրջագայութեան. և որդիք նորա իբրև աստուած համարեցան զնա և երկրպագեցին նմա, և կանգնեցին նմա պատկեր ի կենդանութեան իւրում. և այս եղև սկիզբն

25 պատկերապաշտութեան: Երկրորդ՝ Արգիացիք, երրորդ՝ Եգիպտացիք, չորրորդ՝ Եբրահեցիք, հինգերորդ՝ Փիւնիկեցիք, ապա աստուատ արար Կաղմոս՝ զիր Յունաց, վասն

30 որոյ առ Սողոն, ասէ ոմն երիկեան զոյ զՅոնս: Նոյնպէս զանազան է մուտ տարեմտից և անուն ամսոցդ, զի Եբրահեցւոց և Մակեդոնացւոց տարեմուտն ի միասին է, միով

35 աւուրբ զկնի զարնան հասարակածին, իսկ Հա[յ]ոց ընդմիջել ամա-

3. Բ. յԱզաւրոսէ
 5. Ա. անդի
 6. Բ. քաղզէութիւն
 7. Բ. թէպէտ սմանք
 8. Ա. մոլորակացտ
 9. Ա. Ենոք
 10. Գ. կարճատունս
 12. Բ. առաջնոց և զմարգարէութիւն
 21. Բ. դաստուած
 22. Ա. երկրպագին
 22—23. Ա. կանկնեցին
 30. Բ. իբրիկեան
 31. Բ. նոյնպէս և

բանն է. և ութ ազգաց՝ Եգիպտա[ցւոց], Եթովպ[ացւոց], Աթենա[ցւոց], Բիւթեն[ացւոց], Կասպադ[ովկացւոց], Վրաց և Աղուանից՝ 5 չորս աւրով զկնի Հա[յ]ոցն է, իսկ Յունացն և Ասորոցն, ընդ միջել աշնան յեղանակին է. և Հոռոմոցն յետ մտանելոյ ձմերան, և որպէս ուսաք յիմաստնոց ի բաժանել լիզ-

10 ուաց և զնախ յիւրաքանչիւր տեղիս ՀԲ [72] տանուտերացն, ըստ հեռաւորութեան և մաւտաւորութեան աշխարհաց, և ժամանելոյն ի նոսա՝ զաւրն զայն տարեմուտ

15 կարգեցին | և ուսուցին որդոց 273ա իւրեանց պատել զաւրն զայն արաւք ընչից: Իսկ անուն ամսոցդ՝ են որ ի նախնեացն յանւանէ, և են որ յեղանակացդ և են որ ի

20 դիցն. քանզի Եբրահեցիք և Մակեդոնացիք զաւել աւուրքն զնկն սկիզբն տարոյն, և ասեն՝ աւր առաջին և երկրորդ և երրորդ և չորրորդ և հինգերորդ և վեցերորդ

25 մուտն նիսան ամսոյ, որ թարգմանի կաղմութիւն՝ զի ի հողոյ կաղմեաց զԱզամ: Զնոյն և յայտ առնէ աւրն, զի ուրբաթ ասի, որ է կաղմութիւն. ասի և բաւթ այսինքն

30 սուգ և արտմութիւն, վասն ելանելոյն ի դրախտէն և լսելոյն, թէ շող էիր և՛ ի հող դարձցիս՝: Իսկ Իար որ է Նոյ՝ այր արգար, Սիւան, Սեմ, Թամուզն, Թարաաբի, Ար-

35 բաամ. և այս հաստատ եղեալ է հրամանաւ աստուծոյ ի մարգա-

4. Ա. Աղուանից
 7. Բ. իսկ Հոռոմացոցն
 8. Բ. ձմերանն է
 9. Ա. իմաստնոցն և ի բաժանել
 16. Ա. պատել զաւրն զայն շիբ
 17. Բ. արովք
 17. Ա. իս փիս իսկ
 18. Բ. յանունն է
 19. Ա. յեղանակացտ
 22. Բ. զլուխ տարո
 26. Ա. հող
 31. Ա. ի շիբ
 33. Ա. Նոյ այր. Բ. Նոյ այր, ուղղեցինք՝ Նոյ՝ այր

րէիցն: Իսկ Հա[յ]ոցս է ի վերայ
 որդոց Հայկին, ըստ տասն ծնրն-
 դոցն. հինգ արու՝ Նաւասարդն,
 Հոռի, Սահմի, երեք դուստր՝ Մարի
 5 և այլն, և երկու ի վերայ եղանա-
 կացդ. զի Նաւասարդին նոր ասի
 այսինքն սկիզբն տարոյ և դար-
 ձեալ թէ արդէն աւելոյ եղանակ ի
 վերա[յ]մկանացն Ովկիանու: Եւ
 10 Հոռի, զի հորեն երկրագործք և
 մշակք պցորենն և զգլինին յըշտե-
 մարանս ժողովելով. զի յինն Հոռի
 մուտ է աշնան և ունի կենդանա-
 կերպս երիս՝ կշիռ, կարիճ, աղեղն:
 15 Տիւն ժամս երկոտասան, նոյնպէս
 և զիշերն: Իսկ Սահմի, զի գնա հա-
 րաւաինն և գա հիւսիսաինն, և
 դարձեալ իմաստուն արք սահմա-
 նեն դտունս իւրեանց առ ի գալ
 20 ձմերան: Եւ Տրէ, զի կրէ զիշերն
 յաւրէն, զժամն և զմասունքն: Իսկ
 Քաղոցն, զի արձակի խոյն ի հաւտն
 ըստ հանճարեղ արանց, այլ և քա-
 ղի ժամն և մասունքն, զի Քաղոցի
 25 տասն ձմեռնամուտ է և ունի երեք
 կենդանակերպ՝ այծիզջիւր, ջրհոս,
 ձուկն. տիւն ժամս ինն, զիշերն
 հնդեատասան: Եւ Արանց ի յունել
 ձեան զլերինս և զըլուրս, ասեն՝
 30 արանց է այս ձանապարհ և ոչ
 կանանց. արի մարդոց է աւրս և ոչ
 թուլից և վատաց: Մեհեկի զի

2. Ա. Հայկինն
 4. Բ. Հոռ, Սահմ
 5. Ա. և Բ. ձեռագրերում «եղանակացդ» բառից հե-
 տո՝ լուսանցքում կա հետևյալ հավելումը «Մար-
 դաց և Հրտից, որ է ստուգապէս ամենայնդ ՚ի
 վերայ եղանակացդ»: Այս հավելումը մտել է զ
 ձեռագրի տեքստի մեջ:
 7—9. Բ. և դարձեալ ... Ովկիանու Նիվ
 11. Բ. պցորեան և զգլինի
 12—16. Բ. զի յինն ... և զիշերն Նիվ
 18. Բ. իմաստունք
 20. Բ. ի ձմերանոյն
 20—21. Ա. զի ասնու զիշեր յաւրէն ի ժամն և զմա-
 սունքն, որպէս կրելով յինքն
 23—28. Բ. ըստ հանճարեղ արանց ... զիշերն հնդե-
 տասան Նիվ
 31. Ա. մարդ է
 32. 22 Մահեկի

տունկք և բոյսք, որպէս դմեռեալ
 լինին՝ եղեմնապատ և ձիւնաթաղ.
 Մեհեկի այսինքն ամի: Արեղ, որ-
 պէս թէ յառնեն բոյսք և բանջարք
 5 աստուածաին հրամանաւն. արի
 ասէ հիւսիս և եկ հարաւ, որ է
 դարնան ամիս, զի երկոտասան
 մուտ է, ունի և երեք կենդանա-
 կերպ՝ խոյ, ցուլ, եկաւոր. տիւն
 10 ժամս երկոտասան, նոյնպէս և զի-
 շերն: Իսկ Ահկի, այսինքն աս ան-
 կանի ի յառնել գետոց և ի թու-
 լանալ ձեան. աս է, ասեն, մարդոյ
 ամենայն ուրէք, զի գետահարոյցք
 15 է: Մարերի, որպէս թէ թաւանան
 մայրիք տերևովք և ոստ | աւք և 273բ
 լինին մայր թռչնոց և դազանաց:
 Իսկ Մարգացն, որ է ժամանակ ա-
 ձելոյ զմարդ, որ ի դաշտս և ի հո-
 20 վիտս իցեն, յայգեստանս և ի բու-
 րաստանս. յորժամ արեղակն առ
 շամբն և կամ յետ շանն իցէ, զի
 ի ԹԳ. ունի երեք կենդանակերպ՝
 խեցգետին, առիւծ, կոյս. զիշերն
 25 ժամս ինն և տիւ հնդեատասան: Եւ
 Հրտից՝ ըստ զրութեան է, զի հուր
 է ստիցն որ այրէ ներքուստ ի վեր
 ջերմութիւն արեղական: Եւ ի զի-
 րըս սրբոց մարգարէից այլոց ազ-
 30 դաց անւանք ոչ յիշի, բայց ի
 Հա[յ]ոց՝ Անդրէաս և Զաքարիա:
 Իսկ Աղուան ամիս նաւասարդու:

2. Բ. կան փիլ լինին
 3. Ա. մահ
 6. Ա. հիւսիւսի
 7—11. Բ. զի երկոտասան ... և զիշերն Նիվ
 13. Ա. աս է Նիվ
 14. Ա. ամենայն մարդոյ
 15. Ա. թէ Նիվ
 16. Բ. տերևաւք
 19. Ա. աղածելո
 20. Ա. յայգեստանի
 22. Բ. և առ շանն
 23. Բ. զի ի ԹԳ ... և տիւ ԹԾ
 24. Ա. խեցգետին
 26. Բ. հրտիցն
 26. Բ. զրութեան
 29. Ա. սուրբս
 29—30. Ա. այլոց անւանք ոչ յիշի ազգաց
 31. Ա. Անդէաս. Բ. Անդէաս

որ է նաւասարդցի, այսինքն ի
 թողացն է յուստերաց կամ ի դըս-
 տերաց: Իսկ Վրացն, ախածիւր, որ
 ստուգարանի այսպէս, ախաց, ա-
 5 խացի, թէ մեծ պատրոնացի: Սե-
 թիեիլի, որ է Սոնեթացի, բայց սո-
 քա և յոյնք ինքեանց ամսամտաւք
 ոչ վարին, այլ ծառաարար գհեա
 երթան այլոց:

10 Իսկ Յունացն ի վերայ գիցն ան-
 ւանցն է. Դիոս, այս ի Դիոնեսիո-
 սէ, զոր որթոց և այլոց այլանդա-
 կութեանց արարիչ ասեն: Ապելիոս,
 այս Ապոլոն է, Պերիտոս, այս պան
 15 է Նոխազոան:

Իսկ Հոռոմոցն ի վերայ նախ-
 նեացն է. Յունւարի, այս Յովան է
 նախնին իւրեանց: Բայց ասեն ո-
 մանք, թէ յաւուրս Մանասէի՝ Նու-
 20 մաս Պաւ[պ]իոս⁸ երկու ամիս յա-
 լել ի տարին Հոռոմոց, զի յառաջ
 քան զնա տասն էր, եւ յաւել նա
 զ[Յ]ունւարն և զՓետրւարն: Իսկ
 Մարտն և Ապրիլն իմաստասիրաց
 25 անւանք են, եւ Աւգոստոսն՝ թա-
 գաւորի: Բայց այսոցիկ հաւատոյ
 կամ վարուց աւգուտ զի՛նչ, ասիցէ
 ոք. բազում ինչ ամենայն իրաւք,
 վասն զի աշխարհս ծով է, որպէս
 30 ասէ մարգարէն, ժամանակն չափ
 կամ կամուրջ կամ նաւ կամ ճանա-
 պարն ի ծովու, և այս երևելի մար-
 դիկս ի ճանապարհի կենցաղոյս

1. Բ. նաւասարդեցի
 5. Բ. ախեցի
 5. Ա. պատրոնաց
 6. Բ. Սոնեթեցի
 8. Ա. ծառաբար
 13. Ա. Ապելիոս
 16. Բ. Հոռոմեցոցն
 17. Բ. է չի
 20. Ա. Պաւլիոս
 21. Բ. Հոռոմեցոց
 24. Ա. Ապրիլիկն
 25. Ա. աւգոստոս
 26. Ա. այսոցիկ չի
 31. Ա. նաւ ճանապարհ
 32. զի վիս և
 33. Բ. ի ճանապարհին

նշան բուռն հարկանելոյ, զի մի
 որպէս կոյրք անցանիցեմք ընդ
 կենցաղս, այլ թէ որ յիշեն բարիք
 են՝ ի նոյն նախանձն յորդորիմք,
 5 և եթէ չարք՝ զգոյշանայցեմք, վասն
 զի աւր և տիւ և գիշեր վասն այն
 եղեն, զի մարդիկ իմաստասիրեա-
 ցեն, ըստ մարգարէին՝ «աւր՝ աւուր
 րդիսէ դբան. և գիշեր՝ գիշերի ցու-
 10 ցանէ զգիտութիւն»⁹: Եւ վասն ա-
 րեգական և լուսնի և աստեղաց
 ասաց աստուած՝ «եղիցին ՚ի նշանս,
 և ի ժամանակս, և յաւուրս, և ի
 տարիս», վասնզի որչափ դարեգակն
 15 գեր ի վերոյ գազաթան ունիմք
 գնալով՝ աւր կոչեմք զնա, զի աւրն
 պատկեր է ամսոյն և ամիսն տա-
 րոյն, զի տարին ՅԿԵ (355) աւր է.
 և յամիսն նոյնքան ժամանակք¹⁰
 20 են և յաւրն այնչափ մասն.¹¹ Իսկ
 մասն արեգական մի շուրջ գալն է.
 նոյնպէս և լուսնին, մասն՝ նորա
 շուրջն է. քանզի արեգակն բոլոր
 շրջի՝ որպէս աղաւթիք, որպէս ա-
 25 նիւ, իսկ լուսինն ՚ի թուրս որպէս
 թռչուն, որպէս նեա: Արեգակն
 մեծակն ասի կամ աւրնջեան աստղ՝
 կամ լուսոյ ակն. չափ մեծութեան
 նորա քան զցամաք երկիր: Լուսինն
 30 նւաղ լոյս, իգաղոյն լոյս, մթաղոյն
 լոյս:

Եւ զի մաւտ յաշխարհս է, և որ-
 պէս հաեւի որ ծովու հանդէպ է՝
 մղտագոյն երևի, և որ ցամաքի՝
 մաքրագոյն. թէպէտ ոմանք ասեն
 մրուր լուսոյ, այլ զլոյս գիտեմք

3. Բ. յիշինն
 4. Բ. նոցա վիս նոյն
 5. Ա. իսկ վիս վասն զի
 6—7. Ա. վասն այն եղեն չի
 9. Բ. բիս
 9. Ա. րդիսէ դբան չի
 10. Ա. զգիտութիւն չի
 11. Բ. և աստեղաց չի
 12—14. Ձ. Ձ. «եղիցին յաւուրս և ի ժամանակս և ի
 տարիս և ի նշանս», ուղղեցինք համաձայն ծննդոց
 դրքի ա գլխի 14 պարբերութեան:
 14. Ա. զի չափ դարեգակն
 19. Ա. ժամք են

պարզ էութիւնս: Լուսինն անաւթն է. որպէս անուէն յայտ առնէ, թէ լոյս ունի, և ի հնանալն պատի զթիկամբն և ի նորանալն ի միւս 5 կողմն պատի և ի ներքս մտանէ. և տեսեալ զնա մարդիկ յընծաիլ և ի մաշիլ ասացին, իմ ես աւրինակ ծնընդեան և մահու: Իսկ անմուար աստեղքն ի վերայ աւղոյդ որպէս 10 բեռեալ են. նովաւ շարժին և շրջին: Իսկ մուրակքն շրջագայք են և գործաւորք և տանուտէրք: Եւ խաւարումն արեգական, որ բնութեամբ լինի ի նորանալ լուսին, 15 զի ընդդէմ անցանէ, իսկ որ ոչ այսպէս՝ այն նշանք են նոր իրաց, որ ի ժամանակին լինելոց իցէ: Իսկ խաւարումն լուսնի այսպէս լինի՝ Արաւսեակն առաջի արեգա- 20 կան երթայ և փայլածուն զկնի և լուսինն ի մէջ նոցա. թէ այն երկու մուրակքն յարեգական մատին՝ լուսինն խաւարի. եւ թէ քան զայս աւելի է՝ նշանք են: Եւ ասեն 25 ամպեր Ռաստ և Զանապ անուն, թէ նոքա խաւարեցուցանեն զարեգակն և զլուսին¹²: Եւ չափ բարձրութեան երկնից, որչափ յարեկից յարեկուտս՝ այնչափ մի և կէս, 30 ըստ կամարի գմբեթաձև ձգեալ: Իսկ տարի արեգական, ՚ի գարնան զուգաւորութենէն ի նոյնն է. և լուսին յաւազ լրմանէն ի նոյնն, վասն զի թաւալի արեգակն յելիցն

ի մուտս Յ [360] անգամ վասն զի թաւալմամբ զնա արեգակն ի հասարակաւրէն և Յ [360] անգամ ի զիշերի ընդ երկրաւ մինչև ցծա- 5 դումն իւր. և անաի յառաջ մի մի թաւալ յաւել. իսկ զիջականս մի մի թաւալ պակաս է: Զվեց ամիսն ի տընջեան թաւալումնս յաւելու և զվեց՝ ի զիշերի: Եւ առ մի 10 մի թաւալումն Շ [500] ասպարէս լինի յառաջ խաղացումն, զի այնքան է մեծութիւն նորս: Իսկ Յ [360] թաւալումն լինի ճՁՌ [180,000] ասպարէս և ՆԾ [450] թաւալումն 15 ՄԻԵՌ [225,000], վասն որոյ երկրաչափք ճՁՌ [180,000] ասպարէս ասացին զերկրի լայնութիւն և զերկայնութիւն: Ասպարէսն ըստ աւգաշափութեան է քայլս ճէ [107], 20 և զքայն Զ [6] ոտն, և ոտն ժՁ [16] մատն, և մղոնն է [7] ասպարէս: Եւ ըստ Պարսից ասպարէսն ճԻԳ [123] քայլ է, և զեանաշափութեամբ՝ մղոնն Ռ [1000] քայլ, և 25 խրասախն Գ [3] մղոն: Իսկ ըստ լուսնի տարին ՅԾԳ [354] աւր է, ըստ երկոտասան լրմանց իւրոց | և ամ- 274բ սոց, վասն զի սա ուսոյց զերեսուն աւրն կոչել ամիս, որ ասէ իմ ես: Իսկ հինգ աւրն շարահար է ի նոր տարին կամ ի նոր ամիսն: Իսկ լուսնի աւրն ԻԳ [23] ժամք են և երկու մասն, վասն զի երկու մասն աւելի ընթանայ քան զարեգակն յամենայն աւուրս: Եւ ժամն լուսնի հինգ մասն են և այս՝ սակս խո-

1. Ա. Լուսնին
 3. Ա. զհնանալն
 6. Բ. յընծաիլ
 8. Բ. անմուարքն ի վերայ
 10. Ա. բեռ են
 11. Ա. մուրականքն
 11. Բ. մուրակքս շրջագայք որպէս գործաւորք և տանուտեարք
 15. Ա. անցանի
 18. Ա. այսպէս ոչ
 24. Ա. քայց վիս եւ
 25. ՁՁ. զՌաստ
 32. Բ. զուգաւորութենէ
 33. Բ. ի նոյն

1—3. Ա. Յն անգամ հասարակորէն չիք
 3. Ա. ՅԿն անգամ
 7. Ա. և անդի մի թաւալ
 14. Բ. ամա և ալյուր՝ «ասպարէզ»
 15. Ա. մի ո փիս ՄԻԵՌ
 23. Բ. ճԽԳ քայլ է
 25. Ա. խրասախն
 26. Ա. լուսնին
 26. Ա. Աւր է չիք
 30. Բ. է աւրն շարարի է
 31. Ա. ի տարին
 32. Ա. լուսնին
 36. Ա. յայս

նարհութեան իւրոյ, զի շատ միջոցաւ հեռի է յարեգականէ, վասն զի նա զկամարաւն սլատելով յերեսուն մասն կատարէ զժամն և սա
 5 սակա ուղեգնացութեան հինգ մասն, և հնգեակ վեցեակ լինէ, ըստ այս չափ մասին մերձ է լուսինն յերկիր քան զարեգակն: Եւ գնայ լուսինն, ոչ թաւալմամբ, այլ սողելով, և
 10 մասն լուսնի անձնաչափ տեղափոխութեամբ իւր, և այն երկու մասունք լուսնի ժողովին յամսեանն և լինին Կ [60], որ են հնգամասնեան երկոտասան ժամք, իսկ եր-
 15 կու ամիսն ճի [120] մասն, որ լինի հնգամասնեայ ժամք ԻԴ [24], որ է աւր մի, և լինի երկոտասան ամիսն Զ [6] աւր: Այս մասունք են և կեամանականք և վերածականք
 20 և դոյն զասի վեցեակ, սակա աւարտմանդ ի վեց աւր. սա լինի յարակայ հեաագայ ամին. վեց աւրս այս և հինգ աւելիքն, սոքա կոչին հնգեակ և վեցեակ, և սոքաւք
 25 պարտ է գամնել զքանիս լուսնին, և յանցեալ ամէն գան ի մի և լինին երկոտասան աւր, որ կոչի վերադիր կամ յարակայ: Բայց ոչ կարէ վերադիրն զքանիս լուսնին
 30 ցուցանել, վասն զի երկամասնութեան հինգ աւրն կորընչի և ոչ կարէ բերել զթիւսն կատարեալս: Իսկ որ վասն արեգական շարաթանալոյ տսեն ՚ի ԻԸ [28] ամի

2. Բ. հեռի շիվ
 3. Բ. կամարովն
 4. Ա. կատարելով
 6. Զ. Զ. և էգ Զ եկ լինէ (?)
 10. Ա. անձաչափ
 13. Ա. լինի
 13. Բ. և ամասնեա
 16. Ա. է ամսեան
 19. Բ. և կեսք մասնականք
 19. Ա. վերածակքն
 21. Ա. սայ լին
 30. Բ. երկամասնութիւն
 31. Ա. և աւուրն կոչի
 31—32. Բ. ոչ բերէ
 34. Ա. ի շիվ

ժողովեալ մասունքն եւթն աւր լինի, և շարաթանալ ասի նոյնպէս և լուսին ժթ [19] ամի ժողովին և լինին եւթն և շարաթ: Եւ այսո-
 5 քիկ յերկար ժամու պետք են առ ի քննութիւն, զոր անդրէն թողի է:

Իսկ աւր և տիւ Մովսէս անւանեաց՝ առաջին և երկրորդ և եր-
 10 րորդ, և զմինն, առանձինն՝ շարաթ և Հեթանոսք Կռաւնոս. և այլ մի ըստ միոջէքն և զեւթն՝ Ափրոդիտեայ: Եւ ի հաւատալ մեծին Կոստանդիանոսի, սուրբն Սեղբեարոս
 15 առեալ զանուն շարաթուն եղ ի վերայ իւրաքանչիւրոցն, ասաց՝ միաշարաթ, երկշարաթ. այլաւքն հանդերձ: Եւ վասն լրմանցդ այսպէս տսեն, թէ ի թագաւորու-
 20 թեանն Անատինոսի՝ Արիսիզէս Աթենացի, արար լրումն Հոռոմոց ՚ի Դ [4] աղբիլի. և ի Սեկրեայ թագաւորութեանն Եզիպ[տացւոց] և Եթէոպ[ացւոց] արար Ղևոնդ՝
 25 հայրն Որոզինի: Եւ յաւուրս Աղեքսանդրի՝ Մամեայ որդւոյ՝ Որոզինէ արար լրումն տասն ամի Արաք[ացւոց] և Մակեդոն[ացւոց]:

Եւ ի թագաւորութեանն Գալլիոսի, Անատոլիս եպիսկոպոս արար Յուն | աց և Ասորոց: Իսկ ի թա- 275ա
 զաւորութեանն Կոստանդիանոսի՝ Եւսերի Կեսարու [հայրապետն] արար լրումն Բիւթ[ան]ացւոց և
 35 Կապոզ[ովկացւոց]: Եւ յաւուրս որդոյ նորա, Անդրէաս¹³ եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի, միաքանութիւն արար ութն ազգաց ԼԵԲ-

3—4. Գ. լուսինն ի ժթ ամին և աւուրքն շարաթ
 13. Ա. Ափրոդիտէ
 15. Ա. շարաթուն շիվ
 17. Բ. և այլաւքն
 18. Ա. լրմանցս
 20. Ա. Արիսիզէս
 22. Ա. գիցն աղբիլի
 22. Ա. Սեկրա
 25. Բ. Որոզինէս
 36. Ա. Անդրէ եղբայր Մանգնոսի

մանց իննեւտասներեկաց և կարգեաց զերկերիւրեակն: Ի նոյն ժամանակս եղաւ և յայլոց ոմանց իննսուն և հնգեակն: Իսկ ի թագա-

5 ւորութեանն Յուստիանոսի ամբարշտի, որ գտեառնընդառաջնի [տաւնն] փեպրւարի յերկուսն փոխեաց երկերիւրեակն Անդր[ե]այ լցաւ և պիտոյ էր գլուխ ՇԹԺ

10 [519]-եակ կանոնին: Եւ ինն ամ խափան եկաց տուժար և տաւն: Ապա էաս իմաստասէր Աղեքսանդրացի¹⁴ ժողովեաց առ ինքն երեսուն այր իւր նմանի, և յառաջ

15 վարե[ա]լ զարվեստն Անդրէասայ, արարին ՇԼԲ [532] ամաց լրումն ի նոյն դառնալով, վասն այն անտարակուսելի է բոլորն այն: Բայց զԻրիոն¹⁵ իմաստասէրն ի դրան

20 թագաւորին ոչ կոչեցին, սուտ և հերձուածող գոլով, և յորժամ իմաստասէրն յունաց՝ Ելոզս անուն, երբ զաւրինակն և քննել Իրիոն դժասունս հնգեակի և վեցեակի, որ

25 ոչ երբեք լեալ էր, զի հինգ հընգեակն և վեց վեցեակն, որպէս յառաջն ասացաւ մասունք են մին՝ արեգական և մին՝ լուսնին, այլ նա հակառակ ասաց, արար զապ-

30 րիէլ հնգետասան ՚ի վեշտասան և զվեց ի հինգ. արդ այն ԺԶ [16]-ն չբերէ ինչ սխալ, այլ այն վեցն եղեալ ի վեց և ի հինգ տարումն

1. Ա. և կարգեաց շիբ
 3. Ա. մասանց փիս ոմանց
 4. Ա. ԼԵ-ակն
 6. Ա. ընդ աջն
 7. Ա. փեպրւարի
 11. Բ. տուժարն
 12. Ա. յԱղեքսանդր
 13. Ա. առ ինքն շիբ
 14. Բ. այր շիբ
 15. Ա. Անդրա
 16. Բ. արարին շիբ
 19. Ա. զԻրոն
 24. Բ. մասունս
 25. Բ. լեալ է
 27. Բ. յառաջ
 30—31. Ա. Բ. ԺԵ. ԺԶ. և Զ. Զ. ն Կ
 32. Բ. սղալ

կիւրակէ ածէ մեզ որպէս և է. իսկ այն է նոցա շաբաթ, ըստ Իրիոնի առնելոյն: Եւ նոքա ընդ Հրեայոն զատիկ առնեն և ի սուրբ ժողովոյն

5 նզովքն անկանին, զի գրեալ է նոցա կանոնս, թէ ընդ խաչահանունն եղիցին: Իսկ մեք ի միւս կիւրակէն տամք և զերծանիմք, քանզի յետ ութ ամի իմաստասիր-

10 րացն ապա երևեցաւ եղծումն իրացն և Հայք յԱղդէէ Գամբացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն և յայն ժամ ընդ պարսից իշխանութեամբ գոլով՝ Հանկան

15 յեղծումն նոցա. եւ էր այն ՚ի տասն թւականին Հա[յ]ոց: Եւ որպէս ոչ ընկալան Հայք զչար աղանդն Քաղկեդոնի, նոյնպէս և ոչ զայս, թէպէտ յետ երեսուն ամի թագաւո-

20 րեաց Զենոն և գրեաց ամենայն ուրէք, որ անւանի հինատիկոն, որ թարգմանի միաբանութիւն ուղղափառութեան. և նզովեցին զժողովն Քաղկեդոնի: Այսու սահմանաւ վա-

25 րեցաւ Անաստաս և զսուրբ աստուածն խաչեցաւ[ն] հաստատեաց: Բայց զկնի ամենեցուն, վերոյ ասացեալն Յուստիանոս արար ժող | ուլ. 275բ

ի Կոստանդինուպաւլիս, զոր հինգերորդ ժողով կոչեն, և եղծեաց զամենայն կարգս և զկրաւնս, ընդ իւր միաբանե[ա]լ զամենայն ազգս բարբարոսաց հիւսիսային, մինչև ՚ի վերս: Արար լրմունք Անանիայ

35 և զկնի աէլ Մովսէս¹⁶, և յայսմ ամենայնի ընդ մեզ էին վերք

1. Բ. կիւրակէ
 2. Ա. այն է
 5. Ա. անգանին
 11. Բ. յԱղդէ
 13. Ա. զուղղորդն. Բ. զուղղորդն
 17—18. Ա. կեղբոնի փիս Քաղկեդոնի
 21. Ա. ուր անւանի
 26. Ա. խաչեցար
 27. Բ. վեր
 33. Ա. հիւսային, Բ. հիւսաւսինն
 33. Բ. բարբարոսաց ազգս
 34. Ա. ցվերս
 36. Ա. վերք

ՃԺԴ[114] ամ: Եւ յորժամ մերքս
բաժանեցան և դառնարս շրջեցին՝
յԱրաց յերեսունն էր յայտնու-
թիւնն. վասն այն ասին՝ կալ թիւ
5 մի յԱրաց ամսոյ: Եւ շրջելոյ պատ-
ճառ ասին ոմանք, թէ ընդ պար-
սից իշխանութեամբ էին, իշխանքն
կամեցան թէ ընդ նոսա յար լիցի,
որ երկու անգամ տարեմուտն ոչ
10 պիտի առնել: Բայց Հայք աւելի
քան զԱսորիք և զՀրեայք՝ չեն
լեալ ընդ Պարսաւք, զի Պարսից
տաւնն և ամիսն ի միասին շարժի
և մեր տաւնքս անշարժ են: Եւ
15 այլք ասին, թէ վասն աշխատելոյ
մանկանց ի յուսումն, զի դիւրաւ
դառնելին՝ դիւրով արհամարհելի
է: Եւ ոմանք թէ կամեցան ամե-
նայնիւ բաժանել զմեզ ի Յունաց,
20 զի մի խառնեցուք ընդ նոսա տաւ-
նիւք կամ ամսաւք կամ տարեմ-
տիւք: Այլ մեք աստուծոյ շնոր-
հաւքն՝ դտերունական և զգլխաւոր
տաւնան սեփական ի գրոց ունիմք.
25 Եւ այս ինչ միաս նոցա կամ մեզ.
տաւն որ յաւուրս վարդավառին՝
բարեկենդան առնել, կամ որ յի-
նունքն աշունն: Բայց այս է պատ-
ճառն, որ երբ կամեցան առնել
30 հաճառաւ և սեփական, և մինչ-
դեռ էին ի ջանս մեռաւ կաթողի-
կոսն և յիս նորա արուեստաւորն¹⁷,
և այլ ոչ եղև ումէք փոյթ: Իսկ ի
ժամանակս Եսքելլոսի Աթինաց-
35 ւոյ¹⁸ առ որով եղաւ ազոնն¹⁹, որ
է մրցութիւն, Առքիազն կոչե-

3. Ա. յարանց
5—6. Ա. և պատճառ շրջելոյն
10. Բ. չպիտի
13. Բ. շարժիլ
15. Ա. թէ վասն Նիւ
17. Ա. դիւր
18—19. Ա. ամենակին
20. Ա. տաւնեցուք ի խառնեցուք
21. Ա. կամ ամսաւք Նիւ
25. Ա. սոցա
27. Ա. բարեկենդան, Բ. բարեկենդանին
35. Ա. ազոն
36. Ա. մրցութեան

ցեալ, որով Հելլենացիքն վարեն
զժամանակս իւրեանց. և հնարե-
ցաւ զայս ի Փոտինոսէ, հրամանաւ
Հերակլեայ, առ ի խաղաղել զխիստ
5 պատերազմն՝ «Կացէք, ասէ, մինչև
ի տարին ուրախութեան և ապա
ցուցցէ իւրաքանչիւր ոք զուժ իւր
և զարուեստ, և պսակեցի»: Բայց
Եւսերի առ Յովաթամաւ արքայիւ
10 ասէ այլոց բանիւ: Բայց առնեն
զագոնն ի հինգ ամին, յորժամ
չորքն լնու և հինգն սկսանի. և
այս է նահանջն, որով տուժարա-
կան արուեստն յառաջանայ ի ժո-
15 դովումն: Այլ մեզ տարի և տարե-
կան, որպէս թէ փրկութիւն և փրկ-
կանք Քրիստոս է. և տարեմուտն՝
ծննդեամբ մուտնորա յաշխարհս,
և չորս յեղանակ, չորեք նիւթեայ
20 բնութիւնս, կուսական յղութիւնն,
որպէս ձմեռն, և ծնունդն որպէս²⁷⁶ա
գարունն. ամառն նշանքն, աշուն
կամաւոր անշնչանալն ի խաչին,
աւել աւուրք հինգ զգաութիւնքս:
25 Եւթ աւր շարաթու՝ ձայնին և թն
գործարանքն, երկոտասան ամիսք՝
տիրական անդամքն ՅԿԵ[365] աւր՝
Յ[300] յաւդուածքն. տիւ՝ աստուա-
ծութեան լոյսն. զիշեր՝ մարդկու-
30 թեանն եղեալ որպէս ծածկոյթ: Ընդ
տիւ և ընդ զիշեր աւր մի՝ բանն
մարմնովն մի Քրիստոս: Արեղակն՝
աւետարանն: Կուսին՝ աւրէնքն,
արաւսեակն՝ Յովանէս, զիշերա-
35 վար՝ Պաւղոս, կենդանակերպք՝ եր-
կոտասան առաքեալքն, և թն մո-

3. Ա. ի Փոտինոսի հրամանէ Բ. ի Փիտիոսի հրա-
մանէ, ուղղեցինք «ի Փոտինոսէ, հրամանաւ»
14. Բ. արուեստ
16. Ա. փրկական ի ի փրկանք
18. Բ. մուտն
22. Բ. աշունն
23. Ա. անշնչանալ
26. Բ. գործարանք
26. Ա. ամիսքն
27. Գ. ՅԿԵ յողիւուածքն
29—30. Ա. մարդկութիւնն որպէս ծածկոյթ եղեալ
31—32. Ա. բան մարմնով միաքս ի ի մի Քրիստոս
36. Բ. առաքեալք

լորակքն՝ Ստեփանոսեանքն, ան-
 մորար աստեղքն՝ մարգարէքն, եր-
 կինքն՝ երկնաւորն, երկիր՝ երկ-
 րաւորն, հուր՝ հայրն, հողմն՝ հողին,
 5 գրախտ՝ եկեղեցի, կենաց փայտ՝
 խաչն, աղբիւր՝ Տիգրիս վտակն,
 սլտուղ՝ մարմինն և այլք այսպի-
 սիք:

Թէ պարծի հռոմացին, թէ յուն-
 10 ւարի վեցն ծնաւ Քրիստոս, ոչ ինչ
 նւագ այն, զի ի նաւասարդի Ին
 [25] զծնաւդն իւր փոխեաց յաս-
 տեացս, թէ բարերախտիկ կայր,
 զի ի գրեալն զմարդիկ, ծնաւ
 15 ազատարարն ի ծառաութենէ, ա-
 ռաւել զուարճացի Արգար, զի
 գրեալ դաւանեաց զնա աստուած
 և որդի աստուածոյ:

Քննել արժան է և դայս, թէ
 20 զիմորդ եկեղեցիք հայաստանեայցս,
 ի մուտն նաւասարդի տառն կա-
 տարեն Յովանու Ասեն թէ, թա-
 գաւորն Հա[յ]ոց Արտաշէս բարե-
 միտ երեւալ յազգի անդ իւրում,
 25 շինութիւն և խաղաղութիւն աշ-
 խարհի ամենայն ուրէք յաճախ
 յաւելեալ և սիրելի ամենեցուն և
 հոչակաւոր լիալ: Որդի մի էր նորա՝
 Արտաւազդ անուն՝ բախած ի ման-
 30 կութենէ, զոր Շիղարն կոչեն: Եւ
 հաւրն զխտելով զի ոչ էր բաւական
 վարել զթագաւորութիւնն՝ ոչ ետ
 նմա: Իսկ յորժամ վախճանեցաւ և
 որդի յար ինքեան ոչ մնաց՝ սուգ
 35 ծանր եղև աշխարհի, այնքան՝ զի
 բազում զէնս խորտակեալ ի վերայ

2—3. Ա. Բ. երկինք
 3. Բ. ապալ երկրաւորն
 4. Ա. հայր
 6. Ա. Բ. Տիգրին, ուղղեցինք Գ. ձեռագրով
 14. Ա. գրելն
 16. Ա. զւարճացի
 21—22. Ա. — Բ. կատարէ
 24. Ա.—Բ. երևել
 26—27. Ա. յաւելել հաճախ
 29. Ա. Արտաւազ
 36. X շէնս

զերեղմանին և երիվարս յուրա-
 այլ և ծառայքն և աղախնայքն
 սպանին զինքեանս ի վերայ նորա:
 Եւ դայն տեսեալ Արտաւազայ
 5 տրամեցաւ յոյժ և ասէ «Որքան
 կենդանի էր՝ զթագաւորութիւնն
 ինձ ոչ ետ, և արդ ի մեռանելն՝
 աւերեաց զերկիր. աւէր երկրի
 զիմորդ թագաւորեցից»: Եւ ապա
 10 հեծեալ յերիվար, զբաւսանաց ա-
 դագաւ, գնալ ի կողմն կամրջին
 Միամաւրի, և անդ հարեալ յայտոյն
 շարէ՝ ընկեցեալ ի կամրջէն՝ ջրա-
 սոյղ եղեալ անյայտ լինէր: Իսկ
 15 մերձ | աղայքն համբաւ այսպիսի 276ր
 վերացուցին. Աստուածքն դայրա-
 ցեալ վասն զհայրն բամբասելոյն՝
 յափշտակեցին զնա ի լեռն Մասիս
 և երկաթի կապանաւք կայ ի բան-
 20 զի, և երկու շունք՝ սև և սպիտակ՝
 յար լեզուն զկապանս նորա. այս
 է յարալէզն՝ առասպելն որ ասեն:
 Յայս յաւելուած արարին քուրմքն
 ժամանակի և ասացին, թէ երկաթի
 25 կապանքն ի տարեմտին ի մազն
 եկած լինի, և թէ կարի, արտաքս
 ելանէ և աւերէ զաշխարհս: Ապա
 աւրէնք գրեցին յազգս Հա[յ]ոց,
 ամենայն ար[ո]ւեստաւոր մի ան-

2. Բ. ծառայք և աղախնայք
 2—3. Գ. և ծառայս և աղախնայս սպանելին ի վե-
 րայ նորա ինքեանք
 4. Բ. եւ շիւ
 5. Բ. աւէր
 7. 22. ի մեռանելս
 8. X երկրիս
 10. Բ. յերիվարսյ
 12. Ա. յայտուն
 12. X. Մեծամօջի
 13. Բ. ընկեցեալ
 17. Բ. բամբասելոյ
 18. Ա. լեռն
 19. Ա. կապաւք
 22. Բ. յարալէզ
 22. Ա. առասպելն շիւ
 23—24. Բ. քուրմք ժամանակին
 25. Բ. ի շիւ
 25—26. Ա. ի մազ ընկած
 27. X. և աւերէ շիւ
 28. Բ. գրին փխ գրեցին

զամ բախել զարուեստն ի մուան
 նաւասարդի, յաւելուած կապա-
 նացն Արտաւազդայ: Գարբին ըզ-
 սալն հարկանէ կռանաւ՝ զատարկ,
 5 ալսպէս հանդերձագործն, նոյնպէս
 և ալքն: Չայն խափանելոյ ազա-
 դաւ, սուրբ Լուսաւորիչն Գրիգոր
 բիոս կարգեաց հաստատուն յայսմ
 աւուր տաւն մարգարէին և Մկրտ-
 10 չին Յովանու:

Արդ որովհետև հասաք յաւրս
 յայս շնորհիւ աստուծոյ խաղաղու-
 թեամբ և տաւնել արժանաւորք
 եղաք զնոյն ինքն՝ որոյ տաւնեմքս
 15 և որոց ալսաւր յիշատակ է, յիշե-
 լով զսուրբ կոյսն և զսուրբն Ստե-
 փաննոս նախավկայն, առաքելովք
 և մարգարէիւք և մարտիրոսաւք և
 նահատակաւք, վկաիւք և խոստո-
 20 վանողաւք, և որ մերն է Լուսաւո-
 րիչ բազմաշարչար նահատակն Գրի-
 գորբիոս, բարէխաւս և միջնորդ
 կալցուք առ նորա գործ սուրբ եր-
 րորդութիւնն, զաւրս զայս շնոր-
 25 հաւոր առնել, և խաղաղական կե-
 նաւք անցուցանել հանուրց հա-
 ւատացելոց՝ եկեղեցականաց և աշ-
 խարհականաց, թագաւորաց և իշ-
 խանաց, ազատաց և ռամկաց, տե-
 30 բանց և ծառայից, տիկնանց և
 աղախնաց, հարստից և աղքատաց:
 Նորարարն աստուած նոր արասցէ
 զսոսա զամենեսեանն ներքոյ և

- 5. Ա. հանդերձագործն
- 7—8. Ա. Գրիգոր Լուսաւորիչն
- 9. Բ. տաւնել
- 10. Ա. Յովանու Նի
- 12. Զ. Զ. շնորհելով, ուղղեցենք՝ շնորհիւ
- 14. Ա. եղեաք
- 14. Ա. տաւնեմք
- 16—17. Բ. և Ստեփաննոս
- 19. Բ. վկաւք
- 26. Բ. անցուցանել Նի
- 26—27. Բ. Հայաստանեացս ինչ հաւատացելոց
- 32. Բ. աստուածն
- 33. Ա. զսոսա Նի
- 33. Բ. զամենեսեան

արտաքոյ, նոր և շահեկան և աճե-
 ցուն տարի և ժամանակ ածելով
 յամերամս ժամանակաց: Նոր արե-
 դակ և լուսին և աստեղք, նոր ծա-
 5 դեալ թագաւորն փառաց, նոր ո-
 դորմութեամբ երևեալ աստեղա-
 խուան սրբովք. և կացցէ ի միջի՝
 ձերուժ և նոր արասցէ հոգւով և
 մարմնով՝ պատկառելի զլիաւս և
 10 կատարեալ անդամոցդ. նոր ամ՝
 երկոտասան ամսաւք երկոտասան
 անդամոցդ շնորհի, և նոյն ինքն
 տարեկանն մեր Յիսուս Քրիստոս՝
 հարբ և հոգով՝ նոր տարի և նոր
 15 աւուրք բերցէ ձեզ Յկե[365], նոյն-
 քան ոսկերացն և երակաց: Նոյն-
 պէս՝ նոր ժամք և մասունք տւրն-
 ջեան և զիշերի, նոր աւրհնութիւն
 հանդիցէ ի մասունս ոսկերաց ձե-
 20 րոց, նոր խնդութիւն զգեցեալք
 երկնաւորք և երկրաւորք նոր
 բերկրանաւք ասացեն՝ եղիցի, եղի-
 ցի: Այլ և զսերմանս բարեպաշտու-
 թեան անսխալ աճին լայնութեամբ
 25 և ընդարձակութեամբ, եւ զարմատս
 հաւատոյ անվթար, զծաղիկ յուսոյ
 անթաւամ, և զպտուղ հատուց-
 մանն տոնմականաւք ձեզ՝ սպա-
 սաւորելոցդ և մեզ՝ սպասաւորացս,
 30 շնորհաւք բարոյն, հոգեկանաւք և
 մարմնականաւք, զաւրանալ հանա-
 պաղ ՝ ի փառս տւողին ամենայն
 բարեաց, որում փառք յաւիտեանս
 յաւիտենից, ամէն:

- 4. Բ. աստեղք Նի
- 8. Բ. սգով
- 13. Բ. տարեկանն չի
- 14. Ա. հոգովք
- 15. Բ. աւր և աւուրքք
- 18. Բ. աւրհնութեամբ
- 20. Ա. սգեցեալ
- 21. Ա. երկնաւք և երկրաւք
- 24. Ա. անդալ
- 26. Բ. յուսոյն
- 27—28. Ա. հատուցման
- 29. Բ. սպասաւորացդ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քառասնի վերցված է հին կատկարանից. Առակք Սողոմոնի գլ. Գ. 19:
2. Թուղթ առ կերթայեցիս. գլ. Ա. 10:
3. Գիրք Սաղմոսաց Դաւթի. 2. 4:
4. Այս հատվածը Գ ձեռագիրը հաղորդում է մի քիչ այլ ձևով, որն ավելի լավ է անընչվում բովանդակության հետ. Այնտեղ գրված է՝ «զնոյն և մեր առնեմք՝ ընծակելով միմեանց և այլոց, ընթանեաց և աւաճաց. թէ հողեկան ինչ իցէ, թէ՛ մարմնական»¹⁾: Եթէ աչքի առաջ ունենանք նաև վերևի պարբերութիւնը ուր խոսվում է հրեաների կողմից իրենց իշխաններին ու թագավորներին, տարեմահին նվեր տալու սովորութեան մասին, ապա պարզ կլինի, որ հայերը նույնպէս, նոր տարվա օրը նվերներ էին մատուցում իշխաններին («աւաճաց»):
5. Կազմու Միլեթացի—հնում համարվում էր հունական արձակի և պատմութեան նախահայրը, ապրել է VI դարում ն. մ. է. նրան վերագրել են առասպելական որոշ դժեր:
6. Գիրք ծննդոց. գլ. Գ. 19:
7. Վանականը ծանոթ է կղել Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն և Տոմար» աշխատութեան մեջ կղած հայկական միտքների անվանց մասին կղած առասպելին, բայց չի բավարարվել այդ բացատրութեամբ: Նրա բացատրութեանները համար, որպէս հիմք, ընդունված է Սարկիզի վարդապետի կողմից 1084 թվին կարգավորված սոմարը. որը քիչ անց «Յայտատուութեան» ներքին ձեռնարկով ավելի լայն տարածում գտավ:
Ընդունելով սարկիզի ազդիւր տոմարը, ըստ որի նավասարդի մեկը համապատասխանում է Հուլյան տոմարի օգոստոսի 11-ին, վանականը՝ անկախ իր լեզվաբանական դրույթի սխալ կամ ճիշտ լինելուց, պիտի հանդեր բանազրուիկ կարակացութեաններին, որովհետև նավասարդի մեկը ի սկզբանե համընկնում էր ոչ թէ օգոստոսի 11-ին, այլ՝ դարնանամահին:

¹⁾ Գ ձեռագրում գ-ի և ա-ի փոխարեն թ. կամ գ-ի փոխարեն ք. գործածելը սովորական և բազմաթիվ անգամ կրկնվող սխալներից է

օր.՝ քաղթելութիւն	սուք
կաթմոս	թարթման և այլն:
շիթար	

8. Նույն Պամպիրս—Հոսեական 7 թագաւորներից երկրորդը: Հունական և հոսեական պատմագրերը որտեղ անվան հետ են կապում որոշ իրավական և կրոնական պետությունների անցկացումը: Սրան են վերագրում նաև տոմարի կարգավորումը: Նա հոսեական տարվա վրա, որն ունի 10 ամիս և 304 օր, ավելացրեց 2 ամիս: Այդպիսով, հոսեակացոց տարին զարձակ լըիվ լուսնային տարի՝ 355 օր:
9. Գիրք սաղմոսաց Դաւթի ԺԼ 19:
10. «Հայկազյան բառգրքի» հեղինակներին և պրոֆ. Հ. Աճառյանին (տես «Արմատական բառարան») հայտնի են «ժամանակ» բառի՝ տարի, դարաշրջան, հասակ, օրհաս, կեանք, տարվա եղանակ, հարմար առիթ նշանակութեանները: Բայց «Տարին ՅԿԵ օր է. և յամիսն նոյնքան ժամանակը են» հատվածին վերոհիշյալ նշանակութեաններին և ոչ մեկը չի հարմարվում: Ակներև է, որ ժամանակ բառը բացի վերոհիշյալներից, ունեցել է նաև երկու ժամկա տեղագրութեան նշանակութեան:
11. Մասն բառը հայտնի է վայրկյանի և վրացերեն լեզվում՝ 15 վայրկյանի նշանակութեամբ (տես՝ Հ. Աճառյան «Արմատական բառարան»): Այստեղ «ժաման» բառը գործածված է շորս բողե տեղագրութեան նշանակութեամբ:
12. Ռուս և զանազ ամպերի մասին տեղեկութեան կա նաև Վարդան Արևելցու պատմութեան և սաղմոսների մեկնութեան մեջ: Մի դեպքում նրանք հանդես են գալիս, որպէս փոթորիկ—վիշապի գլուխ և պոչ չոր դամեհայն երկիրս բարեկալ է»: մյուս դեպքում նրանք պատկերացվում են որպէս ամպեր՝ «Թանձր ամպըն կոչեցեալ օտոս և կամ դանապ» և պատճառ են հանդիսանում արևի և լուսնի խավարման:
Արևի և լուսնի խավարման այս բացատրութեանը սերտ առնչութեան մեջ է հայ ժողովրդի հավատալիքների հետ: Անգամ XIX դարում Վանի շրջանում հավատում էին, որ «Մատանաները (=Վիշապը) կժողովին կրքիմն և կուղեն

* Տես՝ Վարդանի «Պատմութիւն Տիեզերական» Մոսկվա 1861, էջ, 180—պիտի լինի ոչ թէ «օտոս և կամ դանապ» այլ «օտոս և դանապ», զի հակառակ դեպքում «թանձր ամպըն» հոգնակի չէր գրված լինի:

հակառ կայնել արեւուն, որպէս զի անոր լոյս երեսը շահանան մարդիկ»^{*}։

Ռատս և դանապ ամպերի մասին. Վանահանի հաղորդածը, անշուշտ հետաքրքիր է ժողովրդի հավատալիքների և աշխարհայացքի լուսաբանման համար։

13. Անդրևաս Բյուզանդացի. Երկերիւրեակ կոչված շրջանի կազմողը, որը գործածութիւն մեջ մտաւ 353 թվին և որով սկսեց առաջնարդիւն կկեղեցին՝ կկեղեցական տոների կատարման գործում. Երկերիւրեակը վերջացաւ 552 թվին։
14. Էսա Աղեքսանդրացի. 552 թվին Անդրեասյան շրջանի սպառման շնորհիւ, ինչպես մեր հեղինակն է գրում՝ «ինն ամ խափան կկաց տումար և տուն»։ Կկեղեցական տոների համար մի հաստատուն ցուցակ ստեղծելու գործը ստանձնեց Էսա Աղեքսանդրացին։ Նա 561 թվին, Աղեքսանդրիւսում հրովիւրեց 36 գիտնականների ժողով, որտեղ և կազմվեց հինգհարյուրակը. կամ Էսայան շրջանը։
15. Իրիոն Բյուզանդացի. Սրա գլխավորութիւնը Բյուզանդական կկեղեցին քննարկեց Էսայան հինգհարյուրակ շրջանը և սրոշ փոփոխութիւններով ընդունեց այն։

16. Մովսես Եղվարդեցի կաթողիկոսը, 584 թվին Դվինում հրովիւրում է կկեղեցական ժողով, որտեղ՝ քաղաքական և դավանաբանական նկատառումներով ընդունեցին Էսայան (և ոչ՝ Իրիոնյան) շրջանը, հարմարեցնելով այն հայկական շարժական տոմարի պահանջներին։ Անանիայի անվան հիշատակութիւնն այստեղ՝ թիւրքիմացութիւն արդյունք է։

17. Այս հատվածում հեղինակն ակնարկում է Անատոս Աղոռեցի կաթողիկոսին, (661—697) որը 665 թվին հանձնարարում է Անանիա Շիրակացուն հայկական շարժական տոմարը դարձնել անշարժ։ Ըստ Հովհաննէս կաթողիկոսի վկայութիւն՝ Անանիան «չան ի վերայ կկեսարյա ճողեցաւ բարեձևել ըստ բոլոր ազգաց սլամանի, անշուշտ՝ այսինքն հաստատուն յօրինել զկարգ հայկական տոմարի»։ Սակայն կաթողիկոսի, ապա և Շիրակացու (արվեստավորի) մանկավարժ խափանվեց տոմարական այդ կարևոր բարեփոխութիւնը։

18. Էսիլլոս Արեւացի (ծնվել է Էլիվսինում—525—456) հունական արագեղիայի հայրը։ Նրա արագեղիաները ստեղծվել են և անմիջականորեն կապված են՝ Դեմետրայի և Դիոնիսի պաշտամունքի հետ կապված կրոնական տոների հետ։

19. Ազոն—Հունաստանում կրոնական և քաղաքական տոների հետ կապված և պարբերաբար կրկնվող խաղեր և մրցութիւններ։

* Գ. Սրուանձտեան «Գրոց ու Բրոց» Կ. Պոլիս, 1874 թ. էջ 109։

Ա. Մ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Գ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԻՆ ՏԱՂԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական հին ձևազրերից — որպես նվիրական ժառանգություն — մեզ հասել է օրբստօրե աճող մի այնպիսի քանակություն, որը հնարավորություն է ընձեռում մեզ՝ դադարաբար կազմելու այն պատկանելի ամբողջության մասին, որի մի մասնիկն է ինքը:

Ահա այդ ձևազրերումն է, որ ի շարս բազմատեսակ, այնքան մեծարժեք գանձերի, հասել են մեզ նաև մեծ քանակությամբ դեղեցիկ նմուշներ այն տաղերից, որոնք հորինված են միջնադարյան մեր քաղցրաբարբառ տաղերգուների կողմից:

Որպես երփներանգ մարզաբիաններ այդ տաղերը շռայլորեն շաղ են տրված մեր հոգնարեղուն գրիչների ձեռքով բազմաթիվ ձևազրերի մեջ: Գրիչներ, որոնք «գառն ու դժար» պայմաններում, «սուղ ու խիստ» ժամանակներում վար չեն դրել իրենց կղեգնյա գրիչները և արտագրել են դարեր շարունակ, անորատունջ սիրով, ընդօրինակել են մեկը մյուսից և թողել իրենց հաշորդներին, որ վերջիններիս իրենց գրասեր պապերի թողած անդուգական նվերներն ստանալով, «ողորմի» ասեն նրանց հոգու համար...

Ինչպիսի սոսկալի լուծություն իջած կլի-

ներ մեր անցյալի պատմության վրա, եթե չլինեյին մեր ստեղծագործող ժողովրդի վաստակներն ամփոփող այդ խունացած, սակայն հավերժորեն նոր ձևազրերը:

Որքան էլ որ խնամքով, զգուշորեն և պատասխանատվության մեծ զգացումով են կատարվել այդ ձևազրերի ընդօրինակության և պահպանման աշխատանքները, դարձյալ քիչ չեն եղել այնպիսի հանգամանքները, որոնք տեղիք են տվել մի շարք աղավաղումների, փոփոխությունների և հետագայում առաջացրել են (մինչև հիմա չլուծված) մեծ շփոթություններ:

Այդ թերությունները բղխում են գանազան պատճառներից, որոնց վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել, մատնանշելով որոշ շահույթներ, որ պետք է կատարել առանձին բանաստեղծությունների նկատմամբ:

ա) Ընթրուքյուն. — Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ բոլոր ձևազրերը (չնչին բացառություններով) գրված են եղել որոշ մարդկանց հատուկ պատվերներով, պարզ է, որ այնտեղ գետեղվող նյութերը պիտի կամա թե ակամա համապատասխանեն պատվիրատուի՝ գաղափարախոսության պահանջներին: Այստեղից դժվար չէ պատկերացնել, որ բոլոր հեղի-

նակները կամ միևնույն հեղինակի բոլոր գործերը չէին արժանանա այդ ժողովածուներում տեղ գտնելու բախտին և, հետևապես, պիտի աստիճանաբար անհետանային: Թե ինչպիսի աստիճանաբար է արված

եղել միևնույն հեղինակի տարբեր տաղերին, կարելի է տեսնել հետևյալ աղյուսակից, որը կազմված է մեր Մատենադարանի բիրտագրաֆիկ աշխատանքների նախնական տվյալների հիման վրա.

№	Տ ա ղ ե ր դ ու լ		Տ ա ղ Ը		
	Անունը և մականունը	Ժամանակը՝ կյանքի և ստեղծ.	Սկզբի տողը կամ վերնագիրը	Բովանդակութ.	Վարիանտ. քանակը
1	Հովհաննես Երզնկացի	13—14 դ.	«Յամենայն մեղաց ի դատ ասէ դու կացիր»	Հոգևորական խրատներ	10
			Տաղ աստվածածնի»	Կրոնական	15
			«Այս ինչ կրակ էր այրեց»»	Սիրահարական	2
2	Հովհաննես Թլուրանցի	14 դ.	«Քիմսէ պէնի պիլմէզ իղի...»»	Կրոնական (աստվածածնին նվիրված)	7
			«Ես Յովհաննես նուսատ ոգի...»»	Կրոնական	17
			«Աստուած անսկիզբ և անսահման»»	Ինութ. մասին	1
			«Բու ևս գարնանային վարդ ու բուրաստան»»	Սիրահարական	3
			«Աստուած գրթած և մարդասէր...»»	Ճգնաժ. մասին (կրոնական)	8
			«Յանկարծակի մէկ մի տեսայ...»»	Սիրահարական	1
3	Մկրտիչ Նաղաշ	15 դ.	«Անձն իմ, արի աղօթէ դէմ արարողին»	Կրոնահոգևոր. խրատներ	8
			«Բլբուն ի վարդն ասաց խիտ անողորմ ես...»»	Սիրահարական	3
			«Ղարիպին կեանքն է լալի ողբերգական»»	Պանդխտութեան մասին	18

Կարծում ենք, որ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե որքան մեծ դեր է խաղացել ընտրութեան վերահիշյալ սխառնված մեր անցյալի ժառանգութեան ընդօրինակումների և պահպանութեան գործում: Հակառակ դեպքում՝ ոչ մի կերպ չէր կարելի հաշտվել, ասենք հենց, Հովհ. Թլուրանցու «Քիմսէ պէնի պիլմէզ իղի...» սկզբնատողն ունեցող Մարիամ աստվածածնի մասին թուրքերեն լեզվով (հայատառ) գրած տաղի վարիանտների յոթնասպասիկ դերազանցութեան հետ՝ նույն հեղինակի «Աստված անսկիզբ և անսահման...» սկզբ-

նատողն ունեցող, բնութեան մասին գրած, սքանչելի տաղի նկատմամբ էլ չենք խոսում «Ես Յովհաննես նուսատ ոգի...» տողով սկսվող աստուածային արարչութեան—կրոնական պատմութեան վերաբերյալ գրված նույն հեղինակի ամենամեծ ծավալն ունեցող ստեղծագործութեան մասին, ուր գերազանցութեամբ յոթի փոխարեն հասնում է տասն և յոթի:

Ինչ վերաբերում է Մկրտիչ Նաղաշի պանդխտութեան մասին գրած տաղի վարիանտների առատութեամբ աչքի ընկնող բացառութեանը (18 հատ) դա ինքնըստին-

քյան հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք առնում այդ տաղի հետևյալ հատկանշական կողմերը:

Առաջին, այդ տաղը ամենամեծ ժողովրդականութուն վայելող տաղերից մեկն է եղել յուր արծարծած խնդիրներով և գեղարվեստական ժշակամամբ:

Երկրորդ, այդ տաղը կրոնի ու եկեղեցու շահերի դեմ ուղղված չի եղել այնպես, ինչպես, ասենք, Ֆրիկի «Գանդաս»-ը կամ Հ. Թլիլուրանցու այն տաղը, ուր հեղինակն իր սիրունու մասին ասում է.

«Քարոզս ու շարականս չուսուենս դու ևս...»

Այս հանգամանքն օգնում է մեզ (որոշ շափով) բացատրելու, թե ինչու մի շարք հեղինակներից մեկ հասել են միայն մի քանի հատ ու կտոր տաղեր (Մսքին Քերովբե 2 տաղ, Արամեևուացի 2 տաղ և այլն): Այդ տաղերն իրենց բանաստեղծական օրի-

գինալությամբ մեզ թույլ չեն տալիս կարծելու, որ նրանց հեղինակներն այդքան քիչ են ստեղծագործել: Իսկ թե՛ քանի անուններ են թողված լուսթյան մեջ— դժվար է ասել:

բ) Աղավաղումներ. — Ընդօրինակումների ժամանակ միշտ չէ, որ գործն ընթացել է բարենպաստ պայմաններում: Մի կողմից, ընդօրինակության համար օգտագործվող ձեռագրերի հնանալու պատճառով նրանց դժվար ընթեանելի դառնալու հանգամանքը, մյուս կողմից՝ որոշ գրիչների անվարժությունը (թե կարգալու և թե գրելու տեսակետից) պայմանավորում էին աղավաղումների այն կատեգորիան, էթե միայն կարելի է այդպես ասել, որն առաջանում էր օրեկափորեն, առանց որևէ դիտավորության: Որպես օրինակ կարելի է նշել Հովհ. Թլիլուրանցու տաղերի մեջ հետևյալ աղավաղումները:

Ըստ հին և ստույգ վարիանտների (Մատենադարանում գտնվող ձեռագրերի հիման վրա)

Ըստ աղագրված օրինակների (Կ. Կոստանյանի, Մկրչյանի և այլոց հրատարակություններում)

«Լոյս երեսացդ է քո փափամ» . . .
«Քաղաք Թուխան ու Չինմաչին» . . .
«Չիշխեմ զնել զիս պիղծ գործոյ» . . .
«Է վիզ շողկոսաւ, է այտեր կակաւ» . . .
«Պազ մի երեսէդ կամէ զՅգնկան» . . .

«Լոյս երեսացդ է խիտ փափուկ
«Քաղաք Թուխան ու Չինմաչին»
«Չիշխեմ նղ է՞ր զիս պիղծ գործոյ»
«Է վիզ շողկոսակ և այտեր կանանն»
«Պազ մի երեսէդ կամէ զՅոսասան»

Օրինակները բազմաթիվ են: Բավարարվենք այսքանով:

Այդ է պատճառը, որ այսօր ոչ միայն համեմատաբար ավելի հին, այլ և նոր (հետագա շրջանների) տաղերգուների մոտ ստեղծվել են այնպիսի նախադասություններ, որոնցից ոչինչ հասկանալ չի կարելի, առանց հավանական ենթադրությունների և հին վարիանտների օգնությանը դիմելու, ճիշտ այնպես ինչպես վերոհիշյալ օրինակներում «կանանչ այտերը» կամ «փափուկ լույսը»:

Կա նաև աղավաղումների մեկ ուրիշ ավելի վատ տեսակը, երբ գործի է դրվում արդեն դիտավորությունը, եթե մեր տաղեր-

գուները կյանքի և աշխարհի մասին, հակառակ հոգևորականության քարոզների, իրենց ունեցած հստակ պատկերացումներն արտահայտում էին գողտրիկ տաղերով, ապա ինչ-որ մարդիկ սկսում էին զբաղվել այդպիսի տաղերի խեղաթյուրումներով: Օրինակ՝ Ներսէս Մոկացու «Վիճաբանութիւն երկնի և երկրի» տաղը, ուր երկրի և հողի հաղթանակի առաջ խոնարհվում է պարտված երկինքը: Մակայն Մատենադարանի № 7682 ձեռագրում գտնվող վարիանտի համաձայն հակառակն է ստացվում:

«Գեախնն ընդ երկինքն ասաց.
Մեղայ քեզ, եղբայր իմ, մեղայ,

Նա քեզ խորաթայ արի,
Դու ես մեծ քան զիս գովելի...»

Այն ինչ իսկական վարիանտի մեջ հեղինակն ասում է.

«Ահա ցածրացաւ երկինքն
Ու զգլուխ եղիւր զեանի...»

Բերենք ուրիշ օրինակ:

Հովհաննէս Թլիզուրանցուն (ամենայն հավանականութեամբ) պատկանող սիրտ տաղերից մեկում, ըստ 1556 թվին գրված ձեռագրի՝ ասված է՝ «Քարոզս ու շարականս՝ լուսումնս դու ես» այն ինչ հետագա ժամանակներում արտագրված ձեռագրերում այդ տաղին փոխարինում է.

«Քեզ ինչ պատճառ դնեմ երբ աննման
ես...»

Իրեն չարգարացնող տաղը:

Աղավաղումներ են ստացվել նաև այն պատճառով, որ գրիչների կամ պատվիրատուների կողմից առանձին ուշադրութուն չի դարձվել տաղերի համար մեծ նշանակութուն ունեցող այնպիսի մոմենտների վրա, ինչպիսիք են, ասենք, վերնագրերը՝ առանձին ծանոթութունները և այլն: Օրինակ, շատ զեպքերում տաղի հեղինակն իր անունը գրում է միայն վերնագրում, իսկ հետագայում, արտագրութունների ժամանակ, վերնագիրը կամ բոլորովին անտես է առնվում կամ սեղմվում, որով և հեղինակի անունը կորչում է:

Այդպիսի տաղերից կարելի է որպես օրինակ հիշատակել.

1) Արիկ Կոստանդի —

«Ազամ նստել դունն դրախտին,
Հայր և սգայր ողորմագին...»

տողերով սկսվող տաղը.

2) Հովհ. Ծործորեցու — «Յրատք հոգեփորք»-ը:

3) Գր. Աղթամարցու — «Մեր տէրն է բազմեր...» բառերով սկսվող տաղը:

4) Գրիգ. Նարեկացու մեկ մեղեդին և այլն:

Դրանցից առաջինը Միանսարյանը հրատարակել է որպես անհայտ հեղինակի գործ, իսկ Կ. Կոստանյանը առաջ քաշելով «Ազա-

րիա» անունն ստեղծելու համար անհրաժեշտ սկզբնատուները՝ 4-րդ, 8-րդ, 14-րդ, 18-րդ, 30-րդ, 33-րդ, 37-րդ և 53-րդ տողերից, վերագրել է այն Աղաբխային: Սուքչկա, որ այդպես վարվելով՝ միշտ էլ կարելի է խնդիրը «լուծված» համարել բոլոր անունիմ տաղերի նկատմամբ՝ վերագրելով այն ցանկացած հեղինակին: Այդ տաղը Մատենադարանի № 3596 ձեռագրում (գրված 15—16-րդ դարերում) պարզորեն կրում է Արիկ Կոստանդի անունը հիշատակող վերնագիր:

Երկրորդ տաղի վերնագիրը՝ փոփոխութեան ենթարկվելով՝ այդ տաղը գրվում է Հ. Երզնկացու սեփականութունը լինելուց և համարվում է Հ. Թլիզուրանցունը:

Երրորդ տաղի սկզբնատուներն են.

«Մեր տէրն է բազմեր ի բարձր աթոռին
Աջոփն յօրինէր է զպաակեր քոյին...»

Այս տաղը՝ չունենալով հեղինակի անվան հիշատակում, մինչև հիմա մնացել է որպես անհայտ հեղինակի գործ: Սակայն մեր Մատենադարանում գտնվող ձեռագրերից մեկում (№ 7707) եղած այդ տաղի մի վարիանտը այդ տաղի բախտը կապում է Գր. Աղթամարցու անվան հետ:

Մեր նշած վարիանտի վերնագիրն է «Տաղ ուրախութեան Աղթամարցոյ», իսկ վերջին տունը ունի հետևյալ տողերը.

«Ձուր լից դու սրտիդ, ով Աղթամարցի,
Որ ի լարելոյ շուտով խալլաի...»

Այն ինչ՝ այդ տաղի տպագիր վարիանտն իրականութեան ազավաղում է ցույց տալիս նախ՝ վերնագրով՝ «վասն սիրոյ և ուրախութեան» և երկրորդ՝ համապատասխան նախավերջին տողերով՝

«Ձուր լից տուր սրտիս, որ թեզմ
անցանի,

Որ ի լափելուն շուտով խալլաի...»

Զմոռանանք նշել, որ տպագրութեան հանձնված վարիանտն ընդօրինակված է 1617 թվականին արտագրված ձեռագրից, իսկ մեր նշած վարիանտը գտնվում է 1611—1614 թվերին արտագրված ձեռագրում: Զնայած Պալյանի «Հայ Աշուղներ»-ում

այդ տաղը զետեղված է Աղթամարցու անվան տակ, բայց այդ օրինակն էլ զուրկ է «ով Աղթամարցի» կարևոր նշումից: Այդ նույն պատճառով է, որ Տէվկանցի «Հայերգ»-ում նարեկացու «Սէր յառաւօտէ, Սէր յառաւօտէ...» գողտրիկ մեղեդին վերագրված է ոմն «Մկրտիչ» անվամբ հեղինակի, այն ինչ № 8188 ձեռագրում պարզորեն կրում է «Մեղեդի նարեկացի» վերնագիրը:

Այդպիսի աղավաղումների թվին կարելի է ավելացնել նաև տաղերի կրճատումը՝ ինչ-ինչ պատճառներով: Այս դեպքում երբեմն դուրս են մնում հեղինակի անունը կամ ժամանակի ու տեղի մասին եղած կարևոր տեղեկությունները: Երբեմն էլ անհասկանալի է դառնում տողերի սկզբնատառերով արտահայտված բառերի միտքը, (որն այնքան գործածական է մեր տաղերգուներից շատերի համար):

Օրինակ՝ «Վայրի հաւուկ մի բռնած ու բերած դրած ի նեղ զնդան...» տողով սկսվող գեղեցիկ տաղը մինչև հիմա հայտնի է որպես անհայտ հեղինակի գործ: Այդ մասին նույնիսկ մի բանասեր (Տեա՛ Ղևոնդ ՎՅոնիանյան «Միջնադարեան աղագային տաղաչափութիւն», էջ 42) ասում է. այդ և նման տաղերը «այն պատճառաւ անանուն մնացած են, որովհետև քերթողն ինքնին կամաւ ուզած չէ իւր անունն յայտնել...»: Սակայն Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 5668/979) այդ տաղն ավելի ընդարձակ է քան տպագրութեան արժանացած իր վարիանտներից որևէ մեկը և վերջին տողերից մեկում ունի նշված հեղինակի մականունը:

«Եկայք եղբայրք և լացեք զերգոզս
բանիս,
զԱրտամետացիս...
Ամօթալի երեսաւք շքլի յաշխարհի
Ողորմ այս գերիս,
Քանզի չուենեմ ես փնտուր նման
երամիս...» * և այլն:

* Այդ տաղը լրիվ տես հաջորդ էջերում: Արտամետացու անվամբ մեկ այլ բանաստեղծություն տպված է, Պալյանի «Հայ աշուղներ»-ում:

Չնայած, որ այս կարգի աղավաղումների օրինակները շատ են, բայց բավարարվենք միայն նշվածով:

Աղավաղումների թվին է պատկանում նաև գրիչների կողմից զանազան անհրաժեշտ ծանոթութունների անտեսումը: Միթե տաղերգուներից շատերը իրենց տաղերի մասին չեն թողել կից գրված տողեր, թե երբ են գրել, որտեղ, ինչ առիթով և այլն (խոսքս բոլորի մասին չէ). անշուշտ թողել են, սակայն դրանցից շատերը հետագայում մոռացութեան են մատնվել: Հետո՛ ընդօրինակումների ժամանակ հաճախ այնպիսի հոչակված անունները, ինչպիսիսներից են Հովհ. Պլուզ կամ Հով. Թլկուբանցի և այլն, հենց իրենց շատ ծանոթ լինելու պատճառով, ընդօրինակութեան մեջ հաճախ զրկվել են մականվան կամ անվան պահպանումից, որի պատճառով այսօր իրար հետ են շփոթվում մի շարք Հովհաննեսներ, Վարդաններ և այլն:

Էլ չենք խոսում իրենց՝ գրիչների կողմից սխտեմի վերածված ծանոթութուններ գրելու այնքան անհրաժեշտ հանգամանքը անտես առնելու մասին. ճիշտ է կան նաև այդպիսի, սակայն սակավաթիվ, գրիչներ. օրինակ.

Պղնձէ քաղաքի պատմութեան մեկ վարիանտը (տես № 6622 ձեռագիրը) գրչի կողմից ունի հետևյալ կարևոր ծանոթութունը:

«Ով եղբայր, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս, յայն ժամ զիմաստուն կաթողիկոսն զՏէր Գրիգորիսն յիշեցէք... զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ և ԽԳ ողբ յիւրմէն ասեալ ի սայ, թող զայն, որ երկու վանկն և զմէկն ինքն է արարեր*) ի բնական ողբերն. զի պակաս էր...»: Ապա այդ հիշատակութունը փոխվում է գրչի կողմից տաղի, ուր ի միջի այլոց խոսվում է գլխաւորութեան ժամանակի և պայմանների մասին.

«... Ի դառն և ի նեղ ժամանակին,
Որ զօրացեալ է այլազգին,
Քանզի խրոխտայ մեր թշնամին՝
Ըզմեղ կլանել յորովայնին...»

*) Խոսքը Գր. Աղթամարցու մասին է:

Շուն Մուստաֆայն՝ ժառանգ չարին,
Սիրտ և լեզուն սատանային,
Յորմէ կրկին տուգանեցին...» և այլն:

դ) Անվանափոխումներ և բանագրութիւններ.— Օգտվելով տաղերի ձևագիր վիճակում տարածվելու հանգամանքից՝ հեազհետե կլասիկ տաղերգուների թողած ազդեցութիւնը հաջորդ սերնդի մեծ մասամբ անճարակ ներկայացուցիչների մոտ փոխարինվում է բանագրութեամբ (ինչպես նրկատված է արդեն) և «խե Յովհաննէս Թլկուրանցին» գրչի մի հարվածով դառնում է «Ազնիւ Միքիլ Նախշիվանցի»:

Բերենք օրինակներ.

Մինչև հիմա հայտնի է, որ թուշուների մասին գրված տաղը պատկանում է սնն Յովհաննէս Եպիսկոպոսի, որովհետև այդ տաղը հենց սկզբի տողերից հայտարարում է.

«Տէր Յովհաննէս հոգևով տկար
Եպիսկոպոս յերկիր օտար,
Կամիմ գովել զհաւքերն հաւասար
Ուրախութեան մարդկան համար...»:

(Տես Մկրչյանի հրատարակած ժողովածվում էջ 199—201, կամ Կ. Կոստանյանի՝ «Նոր ժողովածու» Ա. պրակ էջ 42):

Բայց Մատենադարանում գտնվող № 738 ձեռագրում և № 3595 ձեռագրի 69 ա թերթից մինչև 79 ք թերթը կա 89 տնից բաղկացած (4 անգամ մեծ քան վերոհիշյալը) նույն տաղի ավելի ընդարձակ օրինակը, որն սկսվում է այսպես.

«Ես կիրակոս հոգով տկար,
Եպիսկոպոս յերկիր աւտար,
Կամեմ գովել զհաւք հաւասար
Ուրախութիւն մարդկան համար»:

Ապա այսուրեւնական կարգով սկսվում է խոսվել զանազան թուշուների մասին սկսած արծվից, արծալից, արոսից, աղավնուց... և վերջացրած, «քրթակնիկ հաւուկ մի կայր»-ով:

Համեմատութիւնից պարզվում է, որ Տէր Յովհաննէսի տաղը կիրակոսի տաղի

զանազան տների խառնիխուռն դասավորութեան մի հատվածն է:

Բազմաթիվ են նման փաստերը, սակայն այդ մասին վերջակետ դնելուց առաջ հիշատակենք ևս մի անուն:

Երվանդ Շահազիզը Մատենադարանին է նվիրել մի ձեռագիր հետևյալ մակագրութեամբ. «Այս տաղարանը գտնելով քաղաքիս (մագիստրատի ատենապետ) հանդուցյալ Մկրտիչ Մոռոզյանի գրքերի մէջ... նուիրեցի... Մատենադարանին...»

Ճիշտ է, ինչպես այդ, նույնպես և ուրիշ ձեռագրերում կան «Միքիլ» Մոռոզյանի գրած մի քանի անարժեք ստանավորները, բայց այդ «տաղերգուն» այդքանով չի բավարարվել և ձեռքն ընկած տաղերի մեծ մասի մեջ հեղինակների անվան փոխարեն մտցրել է իր անունը, օրինակ.

«Վասն խաղողի» տաղի
«Քո անունդ է Տիրատուր
Եւ իմ անունս՝ Աստուածատուր...»

տողերի փոխարեն գուք կկարդաք՝

«Այ քո անունդ խաղողիկիդ,
Իմ անունս ազնիւ Միքիլ...»

Կամ «Խե Յովհաննէս Թլկուրանցի» տողի փոխարեն Հ. Թլկուրանցու հայտնի տաղերից մեկի մեջ գուք կկարդաք.

«Ազնիւ Միքիլ Նախշիվանցի...» և այլն:

Եթե որոշ մարդկանց կողմից կատարված այդպիսի չարաշահումները առանձին դժգարութիւններ չեն ստեղծում՝ աղավաղված տաղերն իրենց հեղինակների անվամբ ճանաչելու, ապա այդպես չի կարելի ասել ավելի հին ժամանակներում կատարված աղավաղումների առաջացրած շփոթութիւնների մասին:

Երբեմն էլ գրիչներն իրենք, չբավարարվելով պրոպագանդիկ տողերով հիշատակարան թողնելուց ու միևնույն ժամանակ գուրկ լինելով ստանավորով արտահայտվելու ընդունակութիւնից, դիմում են տաղի

որոշ տաղերի վերափոխման, աշխատելով «երկրորդական» անուններէ փոխարեն գե-տեղեկ իրենց անունները:

Իսկական

«Աստուածատուր մեծոփեցի
Յինէն խնդրեաց՝ ես գրեցի,
Դուք ասացիք սրտով իլի
Ինձ և նորա Տէր ողորմի:

Թուական Հայոց ինն հարիւր
Եօթանասուն և երկուք այլ իւր
Հազարացիք օրինօք թիւը
Զազգս խանձեն որպէս զհօւր»:

Ով գիտե, թե ինչպիսի թյուրիմացու-թյունների տեղիք կատար այդ վերափոխու-մը, եթե այդ տաղի իսկականին հարադատ այնքան շատ օրինակներ պահված չլինեին մեր ձեռագրերում:

Նշելով տաղերի ընդօրինակումների հետ կապված և այլ պատճառներով բացատրվող մի շարք կարևոր հանդամանքներ և նրանց շնորհիվ տաղերի կրած փոփոխություններն

Օրինակ Գր. Աղթամարցու տաղերից մեկի հետևյալ երկու տները գրիչների կող-մից վերափոխված են այսպես.

Վերափոխվածը

«Յոհան երեց Զուգայեցի
Եւ ևս որգի տէր Մեսրոպի,
Դուք ասացիք սրտով իլի
Ինձ և իմ հօրն տէր ողորմի:

Թուական Հայոց տասն հարիւր
Եօթանասուն. Գ. են այլ ուր
Պարսիկ ազգն էն օրինօք թիւը
Զազգս խանձեն որպէս զհօւր»:

ու աղավաղումները, կարծում ենք, որ արդեն պարզ է դառնում՝ մանրակրկիտ ուսում-նասիրությամբ և համառ հետևողականու-թյամբ տարվող այն աշխատանքի անհե-տաձգելի անհրաժեշտությունը, որի շնորհիվ հետզհետե պիտի որոշվին մեր միջնադարյան բազմաթիվ տաղերի իսկականին հարադատ օրինակները և հատկացվին իրենց իսկական հեղինակներին:

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Հ. Թ Լ Կ Ո Ւ Բ Ա Ն Ց Ի

Տ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն Ն *

Աստուած անսկիզբն և անսահման,
Անտանելի և անթարգման
Զգարունն արար հանց պատուական,
Նման դրախտին եղեմական:

Ծառք և դրախտք կանաչեցան,
Մրգապայծառ զարդարեցան,
Աղբերակունք յորդորեցան,
Ծովք ու գետերք ի գնացք եղան:

Դաշտունք ամէն ծաղիօք լցան,
Որի հոտոյն մարդիկ ցնծան,
Սիրոյարնին կու ճոխանան,
Ի վերա թելին հային ՚ւ երթան:

Կողեռ տղայքն կու խայտան,
Զխաղլու տեղանքն ի շուրջ կուգան,
Զորքոտանիք որ՝ արգելան
Ի գոմերուն զարկին շ՛ ելան:

Աղջկունք զվարսըն կուզեղեն,
Ճեմեն, քայլեն և հետ խաղան,
Ծիծուունք եկին և բուն դրին,
Սաղմոս ասեն գտունն ի լըման:

Յովանայհաւն ու ըտեղնայն,
Ղուճրին ունին յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, գանձ և տաղեր,
Մեղեդի և շատ շարական:

Արագիլն ու սագն ու բատն
Ու շինարօրն ուրախանան,
Բլբուլքն եկին փափակելով,
Ի վարդենիսըն թափլեցան:

Եռաց երկիր և կակղացաւ,
Բիւր ի բուրուց ծաղիկ բուսաւ,
Շուշան, կանանչ մուրտն և մարպն
Եւ մանուշակն ի մի դարձան:

* Զեռազրում՝ անխորազիր:

Գնացին վարդին երկիր պագին,
Զտեղան ունէին իւրենացն ալամ,
Նայ նարզըղի հոտըն բուրեաց,
Խաժխաժըն թագ պաճուճեցաւ*:

Նաւնոֆարն՝ ի ջրէն ի դուրս,
Դեղին կարմիր երևեցաւ,
Համասփիւռն՝ ի մեջ ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան:

Եւ բժշկէ չարուկ բորտան
Եւ երևի յօր Համբարձման,
Ըզգայականք և բուսականք
Եւ ամենայն որդիկ մարդկան,

Ի մի բերան ամենեքեան,
Աւրհնեն անեղ բանն էական:
Կակղացան ծառայ ոստանքն,
Մէկ հետ մէկի միրզն հասան:

Թութն յառաջեաց քան զհալէն,
Կեռան յաղեղն այլ յերևման,
Մըշմիշն ի ծառն ելև դեղին,
Դ՛ի այտ խնձորնիդ կարմրացան:

Զտանձն ի մրգունքն խոտեցին,
Բայց երբ միտնի կեր անսասան,
Ընգուղ ունօպն ու կաստանայն
Նուշն ու ֆնդուղն քաղցրացան:

Նուռն էլ երաց հազար ակոռայն,
Ամբաւն ի ծառն կախուեցաւ,
Մերկիւիլն գեղնեցաւ,
Խոխն ի կապէն թուլցաւ ընկաւ:

Զնարինջ, զթրինջ, զլիմօնըն [տես],
Որ զարդմորդու բարքն բանան,
Այս հեծելներ որ գնաց,
Դեռ դայ խաղողն զովական:

* Այս և հաջորդ մի քանի աներում զգացվում է որոշ տողերի պակաս և աների վերակազմում:

Ձի սայ եհան զսեղ ի դրախտէն,
Յորժամ եկեր ըզնայ Ադամ.
Ձփակեալ դուռն դրախտին
Կրկին խաղողն եբաց մարդկան:

Ով արբէ զդայ սրբութեամբ,
Ոչ ճաշակէ զմահ յաւիտեան,
Նա ի յիս բընակեսցէ
Եւ ես ի նմա անդրաւական:

Հուսկ երեկ աւուրք աշնան,
Որ է անցումն ամէն սերման,
Դաշտ ի բուսոց դատարկանան,
Ծաղկունք անցնին՝ ւ այլ չերևան:

Ծառք ի ստոյգ դատարկանան,
Տերեաթափ յոստոց եղան,
Հաւերն երամ կապէն ու լան,
Թէ այլ ո՞վ լինի գարնան արժան:

Թէ շատ ուտեն, թէ շատ խմեն,
Նայ ցանկանան աւուր գարնան,
Աշուն նման է ձերութեան,
Ծերք մեռանեն, անցնեն, գնան:

Պարտ է մեզ սպասել անանցն,
Որ յաւիտեան է անվաղձան.
Ուր հանապաղ օրն է գարնան,
Փառք ու պատիւ է անխափան:

Ով զերախտիքս զայս չիշէ
Եւ փառս տայ աստուածութեան,
Ես զիւրաք ասեմ նմայ,
Կամ սատանայ անբարտաւան:

Ով զայս պարզերս մեղ երևա,
Դարձեալ խնդրէ [այն թէ] փոխան,
Եղբայրասէր, աղօթասէր,
Սուրբ և խոնարհ և զղջական:

Թէ զայս պահես՝ նայ աստէն քեզ,
Անդենըն քեզ այլ սեփական,
Եւ թէ անդարձ մեաս մեղօք
Մատնիս հրոյն գեհննական:

Սեւ Յովանէս Թուրկօրանցի,
Լցեալ մեղօք թշուառական,
Խնդրէ ի ձէնջ սրտի մտօք,
Հողոյն ասել տէր ողորմայն:

Մանարուբյուն.— Այս տաղն ընդօրինակ-
ված է Հայկ. ՍՍՏ Ժողկոմսովետին կից Պե-
տական Ձեռագրատան № 3498 ձեռագրում
գտնվող վարիանտից: Ձեռագիրը գրված է
1624 թվին:

Առաջին անգամ այդ տաղի մեկ թերթի
և ազավաղված վարիանտը տպագրվել է
հայերեն անդրանիկ տպագիր տաղարանում,
որտեղ այս վարիանտի ունեցած 26 տան
փոխարեն կա միայն 18 տուն: Պակասող 8
տաների շարքումն է նաև վերջին տունը.
պարզ է, որ առանց դրան չէր կարելի
իմանալ հեղինակի մասին, ուստի և տպա-
գրել են որպես անհայտ հեղինակի գործ:
Ճիշտ է, նախորդում է Թլիզրանցու տա-
ղաշարքը, բայց չի մտնում նրա մեջ:

Տպագրված այդ վարիանտի և անտիպ
(մեր ձեռագրերում առ այժմ հայտնի՝ միակ
մոտավորապես լրիվ թվացող) վարիանտի
համեմատությունից պարզվեց, որ տպագիր
վարիանտի հետևյալ տունը

«Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցըն վերնատան,
Ասէ առեք արբեք սիրով,
Սա է արիւն իմ փրկական» —

ամբողջովին բացակայում է ձեռագիր վա-
րիանտի մեջ: Բացի այդ, տպագիր վա-
րիանտում ոչ միայն աներթի հաջորդակա-
նությունն է խախտված, այլ և տողերի
եվ որովհետև միանգամայն դժվար է ծա-
նոթությունների միջոցով տալ համեմատա-
կան տարբերությունների իսկական պատ-
կերը, ուստի նպատակահարմար ենք գտնում
տպագրել այդ 2 վարիանտն էլ միասին, մա-
նավանդ, որ տպագիրն ավելի հին է, քան
տաղի որևէ ձեռագիր օրինակը: Որևէ ենք
ասում, որովհետև Տաշեանի «Տուցակ...»-ում
կա հիշատակում այդ տաղի մասին*, սակայն
առանց հեղինակի անվան նշումի: Բացի
այդ, Մատենադարանի № 1990 ձեռագրում
կա հատված այդ տաղից, որը տպագիր
օրինակի էլ ավելի համառոտն է:

Հով. Թլիզրանցու տաղերի շարքում՝

* Տես նաև Պատրյանի հոդվածը «Բաղմու-
վելու»-ում 1905 թ.:

այս տաղը առանձնահատուկ նշանակու-
թյուն ունի թե՛ որպես ծաղիկների, թըռ-
չունների, մրգերի գովասանության սաղ-
մերը կրող տաղ (Ն. Շնորհալու հանելուկ-
ներից հետո), գրված Դավիթ Սալաձորցու
և Կիրակոս (Թէ՛ Հովհաննես) եպիսկոպոսի
համապատասխան տաղերից առաջ, և թե
որպես մի այնպիսի տաղի, որտեղ բանաս-
տեղծը պտուղները գովելիս, սկսած թթից

(վաղ գարուն) և վերջացրած խաղողով (ուշ
աշուն), վերջինիս մասին, որպես իրական
կյանքի ու աշխարհիկ վայելքների պայծառ
սիմվոլի, հակառակ կրոնի «հանդերձյալ
կյանք»-ի մասին արած քարոզների, բա-
ցականչում է.

«...Զփակեալ դուռն դրախտին
Կրկին խաղողն երաց մարդկան...»:

Տ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն Ն¹

Աստուած² անըսկիզբն և անսահման,
Անտանելի և անթարքման,
Զգարուն արար հանց պատուական,
Նրման դրախտին եղեմական:

Ծառք³ և դրախտք կանաչեցան⁴,
Մրգապատուով⁵ դարդարեցան,
Աղբերակունքն⁶ որդորեցան⁷,
Ծով և գետերք ի գնաց եղան⁸:

Զորքոտանիք առողացան⁹,
Ի դոմ երամ դարկին՝ ւ ելան,
Կողեա¹⁰ տըղայքըն կու խաղան,
Խաղլով գտեղիքն շուրջ կուգան¹¹,

Միրոյաէնրին կու ձոխանան¹²,
Զերայ թեւին հային՝ ւ երթան,
Աղչկունքն զվարսըն¹³ կու գեղեն,
Ճեմին քայլին՝ ւ ի հեա ցնծան¹⁴:

Հաւերա ամէն ուրախացան,
և ի իւրեաց դադարքն եկան¹⁵,
Ծիծառնքն եկին և բուն դըրին¹⁶,
Սաղմոս ասցին գտուն ի լման¹⁷:

Ոհանահաւն ու ըորդնան¹⁸,
Ղուժրին ունի յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, գանձեր ու տաղ
Մեղեղիք ու շատ շարական:

Արագիլն ու սազն ու բաթն
և շրնօրաւրն¹⁹ ուրախացան,
Պլպուլնին փափաքանաւք²⁰
Ի վարդենին թաւալեցան:

Շուշան կանաչ, մուրտ ու մարախն
Ու մանուշակըն մէկ դարձան,

Գնացին վարդին երկրպագին,
Զեղտն²¹ ունէին իւրեանց յալամ²²:

Այն նարկիզին հոտըն բուրեաց,
Խաշխաշըն թաք պանուճեցան,
Նաւնաւֆարնի ջըրէն ի դուրս
Դեղին կանաչ երևեցան:

Համասփիւռն ի մէջ²³ ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան,
Եռաց երկիր և կակղեցան²⁴
Բիւրք ի բիւրոց ծաղկունք բուսան:

Դաշտերա²⁵ ամէն ծաղկօք լցան,
Որի հոտուն²⁶ մարդիք ցնծան,
Կակղացան ծառոց ոստիւքն²⁷,
Մէկ հեա մէկի մրգունք²⁸ հասան:

*) Թութն առաջեաց քան ըղհալւան,
Կեռասն աղեղ էր ի նման,
Միշմիշն ի ծառն դեղնեցան,
Խընձորնի կարմրեցան:

*) Մըրգունքն ըզտանձըն խոտեցին,
Մինչ հասանէ կայր անսասան,
Ընկուզն յունապն ու կաստանան,
Նուշն ու ֆընդուխըն քաղցրացան:

*) Նուռն այլ երաց դհազար աղաւն,
Ապրաւն ի ծառն կախուեցան,
Սերկեիլն դեղնեցաւ,
Դեղձն ի ծառին թուլցաւ անկաւ:

Նարինջ թուրինջ լեմոնըն գայ,
և դարդմորդուն բառքըն բանայ,
Թէ այդ հեծել տէր որ անցաւ,
Կուգայ խաղողըն գովական:

- * Զի սայ եհան դմեղ 'ի դրախտէն,
Յորժամ եկեր ըզսա Ադամ,
Փակեցաւ դուռն զրախտին
Կրկին խաղողն երաց մարդկան.
- * Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցն վերնատան,

Ասէ՛ առէք, արբէք սիրով,
Սա է արիւն իմ փրկական:

- * Ի սգայական և բուսական
և աստուծոյ որդիք մարդկան,
Ամենեքեան ի մի բերան
Աւրհնեն զանեղ բանն էական:

Ծանոթ.— Այս վարիանտն արտագրված է հայերեն անդրանիկ տպագիր տաղարանից: № 1990 ձեռագրում գտնվող այդ տաղի մեկ ուրիշ վարիանտի հետ կատարված համեմատութիւնից գտանք հետևյալ տարբերութիւնները:

- 1 Տաղ դարնան ազնիւ. 2 չիք Աստուած. 3 դաշաք. 4 կանաչացան. 5 մրգայգատուօվ. 6 Յաղբերակունք. 7 յորդորեցան. 8 էղան. 9 ոռոգեցան. 10 գողեր. 11 խաղալօվ դաշտերն ի շուր կուգան. 12 Սիրոյ տէրերըն կու ճօճան. 13 զվարսեր. 14 Ջէմին քայլեն և հետ երթան. 15 և իւրեանց զաղարջըն էկան. 16 եղան. 17 Սաղմոս ասեն տունն ի լման. 18 Ահայ-

նահուն է ըսըշնան. 19 շոֆորն. 20 բուլբուլնին փափականօք. 21 գտեղն. 22 ալամ. 23 Համասփիւրն ի մէնջ. 24 կակղացան. 25 դաշտերք. 26 հոտոյն 27 ստոււնք. 28 մրկունք:

* Այս նշանն ունեցող բոլոր աները բացակայում են ձեռագրի մեջ: ± 24-րդ ծանոթութիւնը կրող տողից կարելի է հղբակացնել, որ բանաստեղծութեան աները խառնված և տեղափոխված են և ծաղիկների մասին եղած գովասանքները դասավորված են «բիւրք ի բիւրոց ծաղիւնք բուսան» տողից առաջ:

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԱՐՏԱՄԵՏԱՑԻ

Տ Ա Ղ Վ Ա Ս Ն Ղ Ա Ր Ի Պ Ո Ւ Յ Ե Ա Ն

Վայրի հաւուկ մի բանած ու բերած զբաժնիս ի նեղ զնդանս,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ:
 Սրտաբեկեալ եմ, միջակոտոր,
 Ճար չունիմ, զի՞նչ լինեմ գերիս:

Եթե գրչուհն ու դուժբին է բերած ինձ երգասաց գուսան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հազար գունդգուն փետուր է բերած ինձ խալաթ կուտան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս որ չեմ յիմ երամ]:
 Եթե զշաքարն է մաղած ու բերած ինձ կերակուր կուտան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հազար թախթի հուքմըն տան ու հարիւր հազարի տէր առնեն,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]*:
 Եթե հազար ինձ ծառայ բերեն, անհամար հեծել ձիաւոր,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե դարբաս է շինած սոկով, դարդարած անգին մարգարտով,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հնար ու ճարակ լինէր ինձ՝ ելնել ի նեղ զնդանիս,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե լիներ, որ թոչի, բարձրանայի, տեսնի զիմ երամս,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Խաղալով խառնելով ու կարկաչելով իջանեմ յերամս յորժամ,
 Ուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ խառնիմ յերամ:
 Զարթնիմ ի քնոյ գերթ տղայ, որ մաւր դրկին ի քուն
 Եւ աւրհնեմ զաստուած, որ հասուց զիս յիմ երամ:
 Եկայք եղբարք և լացեք զերգողըս բանիս—զԱրտամետացիս,
 Հազար եղուկ և աւաղ ասացեք զեղկելիս,
 Ի մէջ արհնայնի, իմ տէր, ողորմեալ, աստուած ողորմեալ,
 Յուս կենաց բաշխող, Քրիստոս, քեզ մեղայ:
 Ամաւթալից երեսաւք շրջի յաշխարհի ողորմ այս գերիս,
 Քանզի չունեմ ես փետուր նման երամիս, զի՞նչ առնեմ գերիս:
 Ի՞մ տէր, ողորմեալ, աստուած, ողորմեալ,
 Յոյս կենաց բաշխող Քրիստոս, քեզ մեղայ:

Ծանօթ.— Արտագրված է Մատենադարանի № 5668 (979) ձեռագրից: Կրկնվող
 տողի քառակուսի փակագծերում գտնվող մասերը ավելացված են մեր
 օգտագործած և Ղևոնդ Վ. Հովնանյանի ապագրած համեմատական թերթի
 տեքստի հիման վրա:

* Տպագրում հաջորդ տողն է «Եթե հազար ինձ մըճիս գուզին,
 քաղցր երգով զիս զվարճացնեն
 Զուրախանայր...» և այլն:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՏԻՊ ԵՐԳԵՐԻՑ

Ա.

«Հուշրէս լիքն է անդին լալով... ասում է ինքը՝ անգուգական Սայաթ-Նովան: Եվ հիրավի, որքան էլ որ դեպքերն ու ժամանակը անողորմաբար են վարվել նրա մարգարտաշառ «հուշրա»-ի հետ, դարձյալ վերջինիցս մեզ հասած լալ ու մարջանների թիվը հետզհետե ավելանում է*:

Հայկական ՍՍՌ ժողովուրդներին կից Պետական Չեռագրատան (Մատենադարան) № 3751 ձեռագրում (Գ. Հախվերդյանի արխիվից) գտնվող բազմաթիվ հայ աշուղների և բանաստեղծների ստեղծագործութիւնների (տպագրությամբ հայտնի և անհայտ) շարքում են գտնվում նաև Սայաթ-Նովայի մի քանի երգերը, որոնցից մեկը, «Սահաթ-Նով» խորագրի տակ, մինչև հիմա դեռ տպագրված չէ:

Այդ երգը կազմված է համարակալված հինգ տներից, որոնցից առաջինը, երկրորդը և չորրորդը բաղկացած են 5-ական, իսկ երրորդն ու հինգերորդը 6-ական տողերից (ընդամենը 27 տող):

Թերթի ճակատին «Սահաթ-Նով» բառերից քիչ հետո, սուսերեն տառերով գրված է «Ашуг Банга». այդպիսի մակագրութիւններ կան նաև նույն ժողովածվում գտնվող այլ մի քանի թերթերի վրա: Բացի այդ, 5-րդ տան 2-րդ տողի վերջին «բոհար» բառի տակ դարձյալ սուսական տառերով գրված է «ВЕНЕКА» (թէ՛ «ВЕКЕНА») անհասկանալի բառը (հավանաբար ВЕСНА):

Ընդօրինակութիւնը պարզ է և ընթեռնելի, սակայն պետք է նշել, որ սլարոնահում է մի շարք հավանական աղավաղումներ, օրինակ.

1) Հակառակ Սայաթ-Նովայի մյուս տա-

ղերում գործածված նյութ բառը «ճ» տառով գրելու ձևին («Նուխկ* բլրուլին ըսպանեց...»): այս տեղ գրված է «ջ» տառով («բունիլ է վարդի շուղիք»):

2) Նույնպես է վարված նաև նիտ (պարանոց) բառի նկատմամբ («Ջիտուին ոսկէ ամբարշա»), այնինչ Սայաթ-Նովայի մյուս տաղերում այդ բառը գործ է ածված «ճ» տառով («...ճիտդ դցած չտեսնէ...», «կամքով ու ճիտ անելով...» և այլն):

3) Ռանգ (գույն) բառը գրված է «ա»-ով («առանգ-առանգ»), այնինչ Սայաթ-Նովայի երգերում այդ բառը գուրկ է «ա»-տառի հավելումից.

(«Ռանգդ ռանգներուն ծածկում է...»
«Թահրըդ ռանգէ-ռանգ իս անում...»
«Ռանգըդ է գուրգաղի նման...» և այլն):

4) «Նաղուղ» կամ հաղութ բառի փոխարին գրված է «Նաղուղ».

5) «Բահար» բառի փոխարին գրված է «Բոհար».

6) «Թշերըդ» բառի փոխարին գրված է «Թշերեդ»:

7) «Հալա» (դեռ ևս) բառի փոխարին գրված է «հալ» (դրութիւն), որի պատճառով էլ այդ տողում (ինչպես նաև 3-րդ, 4-րդ, 9-րդ, 22-րդ, 24-րդ, 26-րդ և 27-րդ) նկատվում է տաղաչափական կանոնների խախտում.

8) Լրիվ հասկանալի չէ 2-րդ տան առաջին տողը («Սալվի բոյ համամիցը գալիս տեղն ընդարիլ է») հավանաբար աղճատվել է «բոյ» բառը (թերևս բոյով եղած լինի, նամանավանդ որ այս տողն էլ է պատկանում այն տողերի շարքին, որոնց մեջ պակասում է մեկական վանկ):

9) Այդ բոլորից բացի՝ աղավաղման ակնբախ հանգամանք է նաև այն, որ այս բանաստեղծության մեջ, հաճախ, հենց միևնույն տողում, այնպես է ստացվում, որ իբր թե Սայաթ-Նովան (երգի այդ մեծագույն վարպետը) սիրուհու հետ խոսում է

* Սրտանց ցավում ենք, որ 1939 թվին լույս տեսած Սայաթ-Նովայի բանաստեղծութիւնների (սուսերեն թարգմանութիւն) ժողովածվում այդպիսի նորահայտ երգերը (խոսքը Գ. Թարվերդյանի հրատարակության մասին է) ոչ միայն տեղ չեն գրտել, այլ և հիշատակման չեն արժանացել:

* Այս և հաջորդ ընդգծումները մերն են:

մերթ երկրորդ մերթ երրորդ դեմքով («Հա-
քիլ ես սաղրի քոչերը, կրունգն էրծըթէ
նալ է գցի...» և այլն): Պետք է կարծել, որ
այդ բանաստեղծութեան մեջ անդ գտած
բոլոր «ս» և «դ» դիմորոշ հոգերը ներմու-
ծութեանն են:

Վերոհիշյալ և մի քանի այլ համանա-
կան ազավազումները հետևանք կարող են
համարվել նախ՝ ընդօրինակողի մոտ իշխող
մեկ ուրիշ բարբառի ազդեցութեան և երկ-
րորդ՝ նույն ընդօրինակողի անուշադիր վե-
րաբերմունքի: Առաջին հանգամանքն ան-
վիճելի կարելի է համարել վերոհիշյալ
«Չուղի», «Չիտ», «առանգ» և այլ բառերի
վերաբերմամբ, իսկ երկրորդ հանգամանքն
ապացուցելու համար՝ պետք է ուշադրու-
թյուն դարձնել այն մի շարք ջնջումների
(թանաքով) և ուղղումների առկայութեան
վրա, որոնք գոյութեան ունեն այդ երգի
նշված վարիանտում:

Չնայելով այդ բոլոր փաստարկումների
համանական լինելուն, մենք գերադասեցինք
դարձյալ տպագրութեան հանձնել այդ բա-
նաստեղծութեանն այնպես, ինչպես որ նա
կա ձեռագրում, միաժամանակ կարևոր հա-
մարելով տալ անհրաժեշտ ծանոթութեան-
ներ և անել որոշ դիտողութեաններ:

Բ.

Այն հանգամանքը, որ այդ երգը գտնվում
է մի այնպիսի ակնավոր բանասերի ար-
խիվում, ինչպիսին Գ. Հախվերդյանն է,
մեր ուշադրութեանը հրավիրեց մեկ ուրիշ
հարցի վրա: Միթե իսկապես այդ երգը
ծանոթ է եղել Գ. Հախվերդյանին և ինչ-
ինչ պատճառներով դուրս մնացել նրա հրա-
տարակամ ժողովածվից, թե՛ մի շարք այլ
բանաստեղծութեանների հետ այդ բանա-
ստեղծութեանը ևս կցվել է նրա արխիվին
հետագայում: Որոշումները ցույց տվին, որ
իրոք Գ. Հախվերդյանը ծանոթ է եղել այդ
ոտանավորին: Ահա փաստը:

Սայաթ-Նովայի բանաստեղծութեաննե-
րի ժողովածվի առաջին հրատարակութեան
91-րդ էջում Գ. Հախվերդյանը բացատրե-
լով ԺԷ (17-րդ) բանաստեղծութեան մեջ
գտնվող «նալով» բառը, գրում է.

«Նալ արբ. նշ. բայտ. Թիֆլիզու երի-
տասարդներն ու աղջկունք՝ մանաւանդ հին
ժամանակին, հաղնում են եղել՝ դարդի հա-
մար, կանաչ սաղրի ֆոօեր * (կօշիկներ),
որոյ կրքնկան սակէ կամ արծթէ նալ անելն
իմանում ենք մեր աշուղներու խաղերիցն՝

«Հաքիլ է սաղրի քոչերըն, կրունգն
էրծըթէ նալ է գըցի.
(Սայեաթ-Նովայ)...».

(Համապատասխան օրինակ է բերում նաև
Շամշի Մելքոյի մեկ երգից): Վերոհիշյալ
տողն ամբողջովին վերցված է մեր նշած
անտիպ բանաստեղծութեանից և բոլորովին
բացակայում է Սայաթ-Նովայի տպագրու-
թեան հայանի բանաստեղծութեանների մեջ:
(Չարմանալի է, որ այս հանգամանքի վրա
Սայաթ-Նովայի գրական ժառանգութեամբ
զբաղվողներից և ոչ մեկը ուշադրութեան
չի դարձրել):

Պարզ է, որ Գ. Հախվերդյանն իր արա-
մադրութեան տակ ունեցել է այդ երգի
կամ մեկ հասած օրինակը (որովհետև այն
գտնվում է հենց իրեն՝ Գ. Հախվերդյանի
արխիվում), կամ մի ուրիշ օրինակը (որով-
հետև Գ. Հախվերդյանի հրատարակած տողի
և մեկ հասած օրինակի համապատասխան
տողի միջև կա հինգ տառի տարբերու-
թյուն.

տպագիր.— «Հաքիլ է** սաղրի քՕշերըն,
կրունգն էրծըթէ նալ է գըցի»:
անխիպ.— «Հաքիլ էՍ սաղրի քՈշերը,
կրունգն էրծըթէ նալ է գցի»:

Թերևս հնարավոր լինի այդ տարբերու-
թյունը բացատրել նաև հրատարակողի կա-
տարած խմբագրութեամբ:

Իսկ թե ինչու այդ երգը, ինչպես նաև
այդ ժողովածվում գտնվող Սայաթ-Նովայի
երգերից մեկ ուրիշը,*** դուրս է մնացել Գ.
Հախվերդյանի կատարած հրատարակու-
թյունից կամ տեղ չի գտել հետագայում
նրա գրտեր՝ Մանե Հախվերդյանի հրատա-
րակած «Հայ Աշուղներ»-ում, առ այժմ
մեկ համար մնում է անբացատրելի:

* Ընդգծումը Գ. Հախվերդյանինն է:
** «ս» հոգի բացակայութեանը հաստատում է
այդ առթիվ վերևում արտահայտած մեր կարծիքը:
*** որը տպագրված է հետագայում:

Գ.

Ինչպէս Սալթ-Նովայի մյուս բանաստեղծութիւնների իշխող մեծամասնութիւն, նույնպէս և այս բանաստեղծութիւն թեման սերն է: Գեղարվեստական պատկերների և համեմատութիւնների տեսակետից այնքան ակնառու նորութիւններ չկան այստեղ, ուշագրավ են այս երգում ազգագրական կենցաղային տեղեկութիւնները:

Այստեղ երգիչը ոչ միայն յուրահատուկ գրչով նկարագրում է իր սիրուհու «սալի բոյր», «քաղցր իխտիլաթ»-ն ու «ավազ»-ը, այլ և նրա հագուստն ու զարդարանքը, սկսած «զարու չարգաթ»-ից և վերջացրած «սաղրի քոշեր»-ի «էրծըթէ նալ»-երով:

1. Եթե նրա մյուս բոյր երգերում սիրուհու գլխի զարդարանքի մասին իմանում էինք, որ «Զարով, արբեշումով հուսած մազեր» ունի և «զաստամազի թելի մէջըն մե շաղա մարջան է քաշած...», ապա չէինք իմանում, թե նա էլ ինչ էր գործածում գլխի համար: Մի այլ տեղ երգիչն ասում է՝ «Աւալ քու տեսողըն մեռնի՝ քեզ գլխաբաց չտեսնէ»: Ուրեմն ծածկոց էր հարկավոր և ահա այս երգում նա նկարագրում է արդեն նաև այդ ծածկոցը.

«Ծածկիլ է զարու չարգաթը, գլխին
քիրման շալ է գցի»:

2. Եթե Սալթ-Նովայի մյուս երգերում սիրուհու պարանոցի համար ոչ մի զարդարանք նշված չէ, ապա այս երգը գալիս է լրացնելու նաև այդ բացը.

«Զիտումն ոսկէ ամբարչա»...
Ճիշտ է, երգերից մեկում ասում է.
«Գոշիդ պիտի լալ ու ալմաս
Շարերճի,
Շարերճի»...

Բայց չպիտի մոռանալ, որ այդ օձիքի համար է ասում: Այդ առթիվ ևս նորահայտ երգում չի մոռացել հիշատակել

«Ետխեն մարգարիտ շարիլ է»:

3. Եթե սիրուհու իրանի համար երգիչը հիշատակում է.

«Մեչկիդ ունիս ոսկէ քամար»...

կամ՝

«Բարակ մեչկիդ թիրման շալըն նրման է ոսկէ քամարին»...

կամ՝

«Հալա չեն գործի թիրմանումըն շալ քիզի լայիդ»...

Ապա այստեղ նկարագրում է «քամար»-ն իր մանրամասնութիւններով.

«Զեռն գիւլխա գոտկին մեկնած, միւս քամար սաղ է անում»

ապա՝

«Գոսկի տուր մինչև եակեն (?) ետդդ, եաման, լալ է գցի»...

4. Եթե մյուս երգերում սիրուհու հագուստի մասին աշուղը գործածել է ալ, աալաս, դար, զարբար, խաս ալ, դումաշ, դուշու, զարբար, զարգարբար, դուքս, ալ դումաշ, բեհեզ ծիրանի և զալամքար բաները* — ապա այստեղ կոնկրետ կերպով նշում է հագուստի անունը՝ ավիւացնելով երկու նոր բաներ, որոնցով ցույց է տալիս կտորի և հագուստի տեսակը

«Հաքիլ է գալի մինքանեն»...

... Եթե Սալթ-Նովայի մյուս բոյր երգերում կանացի ունամանների մասին տեղեկանում ենք միայն

«Գեղինըն զարթարվեցաւ իմ եարի ոսկէ նայով»... տողից և այն էլ միայն ոսկե նալից, ապա այս բանաստեղծութիւն մեջ մենք տեսնում ենք այդ «նալ»-ը կրող ունամանն իր որոշ նկարագրութեամբ և անունով.

«Հաքիլ էս սաղրի քոշերը, կրունգն
էրծըթէ նալ է գցի,
Ոսկեթելով բաւթեն կարած առանդ-
առանդ խալ է գցի»...
Ա. ՄՆԱՅԱՆՑԱՆ

* Որոնք ցույց են տալիս, ինչպէս արդեն նշել է պրոֆ. Մ. Արեղյանը, կտորեղենի տեսակը և անունը, բայց «գուքս»-ից, որն էլ միայն ընդհանուր անուն լինելով՝ ոչինչ չի ավելացնում մյուսների վրա:

Ս Ա Յ Ե Ա Թ Ն Ո Վ

- 1) Բլբուլի պէս ձայն է տալի, ինչ քաղցր աւաղ է անում,
Մօղ է արի դուշ-դարաւաշ, կշտոււմը պարվաղ է անում,
Բոնիլ է վարդի ջուղկը, գիւլին փիանդաղ է անում,
Վաղտ-վաղտ միան է գցի, իրօն-իրան հաղ է անում,
Ես ինչ անեմ, իմ սիրելին ինձ իդ գիւլ գաւաղ է անում:
- 2) Սալվի բոյ համամիցը գալիս տեղն բեղարիլ է,
Ունքերն դալամով քաշած, աչկերն խելքս տարիլ է,
Ջիտուճն ոսկէ ամբարչա, եախեն մարգարիտ շարիլ է,
Միւրւար գուլարաթիւնով զար դալամքարն կարիլ է,
Չեան գիմխա գոտկին մեկնած, մինա քեամար սաղ է անում:
- 3) Հաքիլ ես սաղրի քոշերը, կրունգն էրծըթէ նալ է գցի,
Ոսկէթելով բավթէն կարած, առանդ-առանդ խալ է գցի,
Գոտկի տուտը մինչև եակեն եաղոդ, եաման, լալ է գցի,
Ծածկիլ է զարու շարղաթը, գլխին քիրման շալ է գցի,
Խնդրում իմ գնանք օթախը, ինձ հիդ դալմաղալ է գցի,
Կոսէ հալ ջէր վախար չէ, ուշացնում է, նաղ է անում:
- 4) Թշերէդ գիւլգաղ լալի պէս, պրոօշդ լուլա-փարա է,
Խօսեցնում իմ ջուղար չիս տալ, էն կողմէն սիրտս եարա է,
Հաքիլ է զարլի մինթանեն, հանիլ է՝ եաշիլ խարա է,
Կրները շիմշաղ է քաշած, բոյին մէ քոշք ու սարայ է,
Ես ինչ անեմ, որ սպանում է, ջալլաղի պէս ջաղ է անում:
- 5) Քաղցր իխտիլաթ ունիս, Մսըրու դանդ ու շաքար է,
Շողկդ (շողվդ) ինձի նորոգիլ է, նոր բացուած գիւլլու բոհար է,
Ծոցիդ միջում մի ջուխտ շամամ անգին ջալալիբ, ալմազտ քար է,
Ով չէ առի անուշ հուտդ, աշխարքումս ինչ կու ճառէ,
Հարցրին Սայաթ-Նովին, էսպէս եարեն բանդիւար է,
Բանդ ու փարւան իմ էլի, նըստած է, Շիրաղ է անում:

Ծանոթութիւն.— Կից ներկայացվող բա-
ռարանը կազմելու համար գիմել ենք մի
շարք բառարանների օգնութեան, նամա-
նավանդ, որ այս բանաստեղծութեան մեջ
Սայաթ-Նովան գործածել է մի շարք այն-
պիսի բառեր, որոնք բացակայում են նրա

տպագրված մյուս երգերի մեջ (եակա, գիւլ-
գաւաղ, ամբարչա, գիմխա, միւրվար, եա-
շիլ-խարա և այլն): Այս տեսակետից ես
պետք է նշել տպագրութեան հանձնվող այս
նոր բանաստեղծութեան առանձին նշանա-
կութիւնը:

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Աւագ—ալաչ, ձայն, երգ, հնչյուն (նաև հոչակ, համբավ, փոխարեն), միալար ձայն:

Մօղ է արի—շուրջն է հավաքել, խմբել է շուրջը:

Ղուե—թռչուն:

Ղարաւաշ—սպասավոր, ծառա, սղախին:

Կեսոււմբ—մտաք, շուրջը, կողքին:

Պարվագ (փարվագ)—փարվել, շուրջը պըտույա դալ (փերվեգ—ժապավեն՝ կանացի հագուստի եղբրքին կարվող) նաև՝ սփոփել, ուրախացնել:

Ջուղկը—ճյուղը:

Գիւլ—վարդ (նաև ծաղիկ):

Փիտնդագ—սպասավոր հյուրերի և իշխանավորների ոտքի տակ փոփող ուղեգորգ:

Վաղտ-վաղտ—երբեմն-երբեմն:

Հագ է անում—հաճում է, փափագում է, սիրով է կամենում:

Գիւլ գաւագ—կատակ, ծաղրի առնել (նաև խայտառակել):

Սալվի—նոճի:

Բոյ—հասակ:

Համամ—բաղնիս:

Բեգարիլ—հոգնել:

Ջիտոււմն — պարանոցին (նիտ — պարանոց, ջիտ—ուղիղ, իսկական, ճշմարիտ):

Եախա—օձիք:

Ամբարչա—պարանոցի դարդ:

Միւրեք—«Թանթրավենի» sureaû, mûrver, վարդենու տեսակ մի տունկ. տալիս է սպիտակ ծաղիկներ (օգտագ. դեղի համար):

Միւրարիդ—մարգարիտ:

Գուլաբարին—ոսկեթել:

Ջար—ոսկի (գարգար—ոսկեբրիչ):

Ղալամբար—գույնզգույն ծաղկանկարներ ունեցող կտորեղեն:

Գիւլիա?—շորից կամ թանկագին մետաղից պատրաստված լայն գոտի:

Մինա—սեւդ, կիտվածք, արծնապակի (նաև՝ բարձր, կապույտ երկինք):

Քամար—գոտի:

Սաղրի բոշեր—կանաչ սեկից կարված ոտնամաններ:

Նալ—պայտ:

Բավթա—ժապավեն:

Առանգ-առանգ—գույնզգույն, երկնեւրանգ:

Տուտը—ծայրը:

Եակեն?—գոտի կախված ծայրի ազնիվ մետաղյա մասը?

Եաղուք—հակինթ [եախօք, եաղօք, եախօտ—նշանակում է քե, կամ քե շաղկապը]:

Եաման—ճառագայթ, փայլ:

Լալ—գոհար:

Ջարլու—ոսկեղեն:

Ջարդաք—մետաքսյա կարմիր ծածկոց:

Օքախ—սենյակ:

Ղալմաղալ—սկանդալ, աղաղակ, աղմուկ: [Հալ—գրություն]:

Հալա—դեռ ես:

Ջեր—դեռ (նաև՝ անգամ):

Գիւլգագ—ծիրանագույն, խոսա ալ:

Լալա-փարա—շաքարեղենի, քաղցրեղենի տեսակներ (նաև՝ լուլա—ծորակ, փարա—մաս, լույս, ճառագայթ):

Ջուղաք—պատասխան:

Եարա—վերք:

Մինքանա—կանացի երկար հագուստի մի տեսակը:

Եաշիլ խարա—կանաչ կերպասի մի տեսակը. [նաև՝ կանաչ-սե]:

Կրները—ձեռները:

Շիւշատ—տոսախ, մշտադալար ծառ, որ տալիս է խիտ և ծանր (ջրում սուղվող) փայտ:

Քոբբ—բուրդ, դղեակ, աշտարակ:

Սարալ—պալատ, ապարանք:

Ջալլատ—դահիճ:

Ջագ (ջագա)—պատիժ, տանջանք, տուգանք:

Իխտիլաք գրույց:

Մարր—Եղիպտոս:

Ղանդ—շաքար:

Շողկդ (շողվդ)—փայլե, լույսդ, շողքդ:

Բոհար (բահար)—գարուն:

Բանդիար—կապված, սիրահարված:

Բանդիւան—անտեր, անճար:

Բանդ—կապ:

Փարվան (ա)—թիթեռ (նաև առաջնորդ, գուշակ):

Ա Ռ Ա Կ: Ա Ռ Ի Ի Մ Ե Ի Է Շ

Առիւծն աքլարից խիստ շատ կու վախի,
Նորա ձէնէմէն չուշտ կու սլքվի:
Էշն էլ, խօմ գիտէք, ինչ խաստաթ ունի
Ու ինչպէս ախմախ աղքատ է խելքի:
Դէ ահանջ դրեք էս կարճ առակի:
Ոչ ով խեղճ էշին մասխարայ չանի:

Մեկ օր առիւծը խիստ շատ սովեցաւ,
Շատ դէս-դէն ընկաւ, շատ չալիշ էկաւ,
Անօթ[ի] փորով մէկ մեծ գեղ մտաւ,
Մէկ չաղ շուն ձանկեց, սրբել սկսաւ:
Բառաստ աքլորը կարին վեր էլաւ,
Կիզիլիօ կանչեց, ճաշն հարամ արաւ:

Առիւծն աքլարի երբ ձենը լսեց,
Պոչը հաւաքեց, գեղէն դու[րս] փախեց,
Գիծ էշը տեսաւ, ահանջնին սրեց,
Անուշ իր ձենով ազաթին գաեց,
Առիւծի հաքէն երիշով վազեց,
Ղօջաղ աղի պէս վախցնել ուզեց:

Առիւծն որ աքլարն հեռացած տեսեց,
Զիզականջ իշին իր թաթով գարկեց,
Վեր կոխեց, ջարդեց, պատանը ձևեց,
—Այանխելք հայրան,—ակաջին ասեց.—
Զալում առիւծը քեզմէն չի վախեց,
Աքլարի ձէնէն զգուեց ու փախեց:—

Եթէ խելք ունիս՝ դէ շուտ իմացիր,
Ո՞վ է առիւծը, ով իշի ընկերը:

Ծանօթութիւն.—Այս առակը, չնչին տարբերութիւններով, առաջին անգամ տպագրւած է Միանաւայանի «Քնար Հայկական»-ում (տես էջ 433—434), ուր ծանոթութեան մեջ ասված է. «Նիկողոս (Նիկողայոս) Տէր Շմաւոնեանցի՝ Յարութիւն Ալամգարեանի աշակերտի հեղինակութիւն կը համարուի: Ոմանք էլ Յարութիւն Վ. կը կարծէն»:

Վերջերս Մատենադարանի № 6588 ձեռագրում («Պատճէնք ոմանց թղթոց արտագրեալ ձեռամբ արացու Յովհ. Տէր Յովհաննեսեանց, հրամանաւ Աղայ Գալուստ Շիրմազանեանց 1850 ամի ի 15-ն գեկտեմբերի») տեղավորված Ազր. Ազամի, Շամչի Մելքոյի, Նաղաշ Հովնաթանի. Գ. Նովայի, Գրիգոր Օշականցու, Հարութիւն Ալամգարյանցի և այլոց մի շարք տաղերի թվում մենք հանդիպեցինք վերոհիշյալ առակին և նպատակահարմար գտանք վերահրատարակել այն, որովհետև.

1) Այդ առակը գտնվելով Հարութիւն Ալամգարյանին պատկանող տաղաշարքի մեջ, հիմք է տալիս այլևս չկասկածելու, որ դա Հ. Ալամգարյանի գրչին է պատկանում, մանավանդ, որ այդ «տաղարան»-ում ոչինչ չկա արտագրված Ն. Շմաւոնեանին պատկանող գործերից:

2) Այդ տաղի անմիջական շարունակութիւն են կազմում պատասխանի երեք ջընջված, սակայն ընթեանելի հետևյալ տողերը.

«Առիւծը Ներսէս եպիսկոպոսն է,
Էշն Յովհաննէս կաթողիկոսն է,
Աքլօրն գրած պատմիչն*»:

Յյս տողերը հնարավորութիւն են ընդհուում մեզ գիտենալու՝ թէ ում դեմ էր ուղղված այդ առակը և ինչ հարաբերութեան մեջ էին միմյանց հետ վերոհիշյալ անձնավորութիւնները:

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

* «Գրած պատմիչն» գործվածքը թերևս «Գրաֆ Պատկելիչը» լինի, որը ազգավարված է կամ բնագրից ընդօրինակելի՝ գրչի կողմից, կամ ջնջված լինելու հետևանքով:

Ա. Մ.

ՀԱՐ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ստորև ապագրվող նյութերը (երկու ամբողջական գործ և մի քանի պաշտոնական գրություններ) հայտնաբերված են Հայկ. ՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Զեռագրատան (Մատենադարան) արխիվային բաժնից:

Գրություններից առաջինը, որ Հովհաննես կաթողիկոսի կողմից ուղղված է Մտեփաննոս եպիսկոպոս Արղությանին (բերում ենք քաղվածաբար) վերաբերում է Արղությանին Թբիլիսիից էջմիածին փոխադրելու գործին, հետաքրքիր է, որ այդ գործը կաթողիկոսի կողմից հանձնարարվել է Սինոգի պրոկուրորին:

Մնացած գրություններից երկուսը՝ Ներսես կաթողիկոսից ուղղված են Սինոգի ատենապետի պաշտոնակատար Բարսեղ արքեպիսկոպոսին, իսկ երկուսը, վերջինի պատասխաններն են և վերաբերում են գերմանացի դիմապահ Արիսի էջմիածին ուղևորվելուն և նրան ցույց տալիք օժանդակությանը: Ներսեսն առաջարկում է այդ գործին մասնակից դարձնել Արղությանին, «որ դիտակ է որպէս բաղում հանգամանաց դաշտաց և լերանց Արարատայ, մանավանդ լերինն Մասեաց՝ այնպէս և լիզուի նոցա», միաժամանակ հայտնելով թե այդ մասին առանձին գրել է նաև Արղությանին:

Բարսեղ արքեպիսկոպոսի նամակները վերաբերում են Արղությանի ուղեկցությամբ Արիսի էջմիածին ժամանելուն և նրանց հետագա ճանապարհորդությանը:

Մյուս գործը կաղմված է էջմիածնի Սինոգի պրոկուրորի գրասենյակում, պրոկուրորի պաշտոնակատար Մատինովից՝

Անդրկովկասի կառավարչապետին ուղղված դանոսի հիման վրա: Բանն այն է, որ Պարրոտի հետ Մասիսի գազաթը բարձրանալուց հետո, Արղությանին սկսեցին հալածել ոչ միայն էջմիածնի սեպուխները, այլ նաև ամեն տեսակի ու գույնի խավարամիտ, անվեղար կրոնավորները. դրանցից ոմանք խուլ մթմթում էին, ոմանք բացարձակ զայրույթ հայտնում և «անաստված» Արղությանին գեթ Հայաստանից հեռացնելու միջոցներ որոնում:

Այսպիսի վերաբերմունքն ընդգեմ Արղությանի ուներ իր հիմնավոր պատճառը: Արղությանը առաջին հայ մարդն էր, որ գործնականորեն քամուն տվեց Մասիսի գազաթի անհասանելիության և Նոյի տապանի կրոնական առասպելը. նա խարխիւց այդ առասպելի հիմքը, առասպել, որը դարեր շարունակ ճարպկորեն օգտագործվում էր թե հոգևոր և թե աշխարհիկ տիրապետողների կողմից, աշխատավոր մասսաներին հիմարացնելու, անարգել շահագործելու համար: Այդ էր պատճառը, որ երկար ժամանակ թե Հայաստանում, թե Ռուսաստանում և թե Եվրոպայում տիրապետող կարծիքն աշխատում էր ժխտել Մասիսի գազաթը բարձրանալու փաստը: Զարմանալի չէ, որ Մատինովը իր դանոսում գրում է.

«Покорнейше прошу Ваше Высочайшее превосходительство, обратить внимание на поступок Титулярного советника Абоянова¹, переведенного в Эривань из смотрителей Тифлисского Училища, приказав, кому следует, объявить ему,

¹ Բնադրում ամենուրեք այդպես

чтоб он если не остыла еще в нем страсть встречать всех вояжоров и быть им указатель, с коим он, как уверял, не оставил в покое и Ноев Ковчег, то по крайней мере, заводя их в Эчмиадзинский монастырь, не помрачал бы славы гостепримного нашего духовенства, толиком упрямством и неосторожными своими поступками*.

Դանոսի համար առիթ է ծառայել հետևյալ դեպքը. 1843 թ. օգոստոսի 27-ի երեկոյան, ճանապարհորդ Բարոն Հակոբյանը և Արովյանը ժամանելով Էջմիածին, հյուրընկալութիւն են խնդրում Մատինովից և նրա արհամարհական, մերժողական վերաբերմունքը նկատելով, հեռանում են վանքից և հյուրընկալվում գյուղում, չմոռանալով այդ մասին գրավոր հայանել Անդրբլուզի կառավարչապետին, որն այդ առիթով հետագայում բացատրութիւն է պահանջում Մատինովից: Վերջինս նախօրոք զգալով նրանց մտադրութիւնը, նույն կառավարչապետին է ուղարկում առաջին դանոսը:

Ստանալով կառավարչապետի բացատրութիւն պահանջող գրութիւնը, Մատինովը ներկայացնում է երկրորդ ամբաստանագիրը, ուր Արովյանին մեղադրում է Եվրոպայի ճանապարհորդներին մոլորեցնելու և Էջմիածնի պատիվը արատավորելու մեջ. միաժամանակ պահանջում է Արովյանին հեռացնել Երևանից, հայանելով, որ այդ ոչ միայն իր, այլ և Մինոզի ատենակալի պաշտոնակատար Բարսեղ արքեպիսկոպոսի ցանկութիւնն է, որը սակայն՝ չի համարձակվել այդ մասին գրել:

Սրանով ավարտվում է մեր ձեռքի տակ եղած գործը: Հետաքրքիր է թե ինչով վերջացավ Անդրբլուզի կառավարչապետի գրասենյակում այս հարցը. արդյո՞ք այն հետագայում չի ստացել նոր ընթացք. այս դեպքում հարց է և լուծման կարո՞ւմ:

Վ. ՌՐ 181-366

*) Մասնագրանի արխիվի. № 223 տակ գտնվում է նաև կաթողիկոսի զիջանում 1856 թվին կազմված մի գործ, որը վերաբերում է Արովյանի որդուն՝ Վարդան Արովյանին Լազարյան ճեմարանում ձբխարար կրթութիւնն ստալու խնդրին: Այս

Հովհանես Կարբեցու նամակից. ուղղված Վրաստանի Հայոց հոգևոր կառավարչությանը և Սեփանցու եպիսկոպոս Արղուրյանին, «1837 Յունվարի 25 ՚ի Ս. Էջմիածին»

«Մենք ի վերադառնալ մերում այդքէն ալէն ունէաք թէ տիրացու թաշատուրն Ապովեանց զկնի դոյզն ինչ միջոցի ունի դալ՝ Աթոսս ըստ իւրեան խոստման՝ այլ զկնի այնորիկ ոչ ի նմանէ և ոչ ի ձենջ վասն նորա չընկալաք տեղեկութիւն ինչ, այլ այժմ բարեհաճութեամբ մերով զրեաց նմա Թոմայ Յովսէփիչն Դօրդանեանց, պրօկուրօրն Արքայան Միւնհոդոսի զի նա եկեսցէ այսր յաղագս պիտանաւորութեան աթոսոյս. ըստ գրութեան նորա, եթէ ունիցի յօժարութիւն, եկեսցէ դէպ առ մեզ իսկ թէ ոչ, ծանուցիք մեզ վաղվաղակի՞ն: Երիցյանի արխիվ.
Թղթագ. 2. № 178
Բնագիրը.

№ 40

4-го сентября 1843 г.

ДЕЛО

По доносу от г. Прокурора Главноуправляющему в Грузии, о неприличных поступках титулярного советника Абовяна, при сопровождении в Эчмиадзинский монастырь путешественника Барона Гакстгаузена.

Кончено 11 сентября.

* * *

Г. Главноуправ. Зак. Краем

Исправ. д. прок. Эч. Синода

РАПОРТ

Список с рапорта на имя Главноуправляющего Закавказским Краем, Ис-

գործում կան՝ Էմիլիա Արովյանի (Ս. Արովյանի կնոջ) երկու խնդրագրերը ուղղված կաթողիկոսին, Թբիլիսիից, Լազարյան ճեմարանի գիրեկատրի պաշտոնակատարի գրութիւնը կաթողիկոսին և վերջինիս գրութիւնը Ներսիսյան գղրոցի հոգաբարձութիւնը:

Բացի այդ՝ Արխիվում է պահվում նաև Ներսիսյան գղրոցի հոգաբարձու Դավիթ Թերոզինյանի գրութիւնը ուղղված կաթողիկոսին դարձյալ նույն խնդրի և ապա Ռաֆայել ու Միքայել Պատկանյանների միջև նույն գղրոցում տեղի ունեցած ընդհարման պատճառների մասին:

правляющего должность Прокурора Эчмиадзинского синода, от 4 сентября 1843 года № 95.

Минувшего 27 августа, в ночное время, когда Эчмиадзинское духовенство после вечерней трапезы, предалось покою, прибыл на монастырский двор Королевско-Прусской тайной коллегии Советник Барон Гакстгаузен, вместе с Смотрителем Эриванского Уездного училища титулярным Советником Абояновым¹. Последний этот, тотчас по прибытии в монастырь прислал ко мне старшину деревни Вагаршапат с требованием скорейшего отвода квартиры для одного прибывшего с ним почетного лица и для него самого.—Я велел старшине обратиться об этом к управляющему монастырским имением чиновнику Маленцову и к Управляющему гостеприимным двором Архимандриту Хачатуру, с тем, чтоб этих прибывших господ поместили они в Газарапат или в квартире бывшего прокурора эчмиадзинского Синода Статского Советника Корганова. Приказав Старшине объявить об этом Абоянову, сопутствующему Барона Гакстгаузена, я велел присовокупить, что мебель для них доставится немедленно и что прочие комнаты патриаршего двора переделываются.—Абоянов обратив вежливость мою в обязанность эчмиадзинского прокурора, позволил себе показать свое неудовольствие, и вероятно внушив и Барону Гакстгаузену тоже, даже другия обязанности здешнего прокурора, прислал вновь ко мне старшину сказать, что они в отводимых квартирах не согласны остановиться и что им желательно знать, что они будут есть?. Тут уж я вынужден был ответить, что они могут есть что им угодно. После этого, Абоянов выставял вновь свое неудовольствие, что прокурор Синода, не показывается сам,

отправился в дом родственника своего здешняго маркитанта, и в сакле его расположил прибывшего с ним Барона. На утро, пользуясь свободным от присутствия днем, отправился я в Эривань для осмотра разных приготовляемых для Патриаршего дома принадлежностей, и для удостоверения особенного беспорядка в церквах, о которых доведено было до сведения моего, а помощника секретаря Патканова послал я к Абоянову с упреком, что он принимаясь сопутствовать подобным людям как Барон, зная положение нашего монастыря, должен был хоть часом прежде предупредить нас, и что мне очень прискорбно, что он по упрямству своему поместил Барона в столь невыгодном месте. Не успел чиновник Патканов обратиться с извинением и к Барону как он, полагая, что Патканов не знает немецкого языка, ответил Абоянову, что теперь нечего об этом говорить, а что он сварит суп прокурору.

В Газарапате находятся весьма порядочныя комнаты, а дом бывшего прокурора столь также порядочен, что член Совета Статский Советник Безак, в бытность свою в Эчмиадзине, помещался там с полковником Литвиновым, с Председателем Палаты Имуществ Орловским и со всем своим штатом.

Как Эчмиадзинский прокурор сравнен по обязанности своей с правами Губернского Прокурора, и следовательно отвод квартир и хозяйственная часть не относятся до него, и как за всем этим с моей стороны все было сделано к приему Барона Гакстгаузена, то я покорнейше прошу Ваше Высокопревосходительство, обратить внимание на поступок Титулярного советника Абоянова, переведенного в Эривань из смотрителей Тифлисского Училища, приказав, кому следует, объявить ему, чтоб он, если не остыла еще в нем страсть встречать всех вояжоров и быть им

¹ Քննարկում անհնարեք արդյո՞ք:

указателем, с коими он, как уверял, не оставил в покое и Ноев ковчег, то по крайней мере, завозя их в Эчмиадзинский Монастырь, не помрачал бы славы гостеприимного нашего духовенства, толиком упрямством и неосто-

рожными своими поступками, а тем менее не позволял бы себе, сравнивать, людям незнакомым права прокурора с правами эконома.

№ 95—103

4 сентября 1843 г.

* * *

Исправляющему должность Прокурора Эчмиадзинского Армяно Григорянского Синода Господину Коллежскому Ассесору Матинову.

ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ
ЗАКАВКАЗСКИМ КРАЕМ

Канцелярия

4-го сентября 1843 года

№ 9905

В Тифлисе

Дошло до моего сведения, что по приезде в Эчмиадзин путешествующего по Закавказскому краю Барона Гакстгаузена, он не застал там никого из членов Синода по случаю выезда их в летнее местопребывание и не только не был никем принят приветливо, но вы даже отказали ему в ночлеге, на вопросы его делали ему ответ с неохотой, что вынудило его тогда же уехать из Эчмиадзина.

По поручению Г. Главноуправляющего прошу Вас уведомить меня действительно ли Барону Гакстгаузену было отказано в ночлеге и вообще он так негостеприимно был принят в Эчмиадзине?

Начальник Гражданского управления Генерал Лейтенант ГУРКО

* * *

Его Превосх.

Начальнику Гражданской части в Закавказском крае, Госп. Генералу лейтенанту и кавалеру Гурко

Исправляющего Должность Прокурора Эчмиадзинского Синода.

Письмо 11 сентября 1843

№ 97—109

РАПОРТ

На предписание ко мне Вашего Превосходительства от 4 сего сентября за № 9905 честь имею донести, что сведения, доставленные Вам на счет приема Барона Гакстгаузена, совершенно

неправильны, и опровергаются теми самыми обстоятельствами, кои до получения означенного предписания изложил я со всею откровенностью в рапорте моем к Господину Главноуправляющему Закавказским краем 4 же сего сентября за № 95. Равно неправильно и то, что будто бы духовенство наше в бытность Барона Гакстгаузена в Эчмиадзине, находилось на летнем жилище: духовенство и весь штат переехали сюда из Пираган еще 17 августа, а Барон прибыл в Эчмиадзин 27 числа. В вящее доказательство, что в Эчмиадзине любят гостеприимство, ссылаюсь на приемы оказанные в недавнем времени: прибывшему из Алек-

сандрополя полковнику Челищеву, Казачьему полковнику Ягодину, подполковнику Корпуса жандармов Филатьеву и Казачьему сотнику Воробьеву. Люди эти приехали обратиться с должною вежливостью к старшему в духовенстве и ко мне, и им было все оказано.—Барон же Гакстгаузен и Абоянов, коим, надо полагать руководим был первый, поступили и для себя и в отношении к духовенству, крайне неосторожно, как я имел честь о том донести: прибыть в ночное время в монастырь, не довольствоваться порядочными квартирами, заботами об этом самого прокурора Эчмиадзинского Синода, требовать не от управляющего двором, но от прокурора лучшей квартиры, объявлять претензии почему не показывается им тот прокурор, наконец присылать к нему с настойчивым требованием пищи, и угрожать канцелярским чиновникам, что он сварит Прокурору суп, суть поступки ни с чем не сообразные.

Но, в дополнение к первому рапорту моему № 95 я долгом поставляю Вашему превосходительству присовокупить, что описанная в оном страсть чиновника Абоянова всем известная, и незнание им приличий, вновь подтвердились: он и после Барона Гакстгаузена, успел еще уловить одного путешественника, именно Ливина, завез его на днях в Эчмиадзинский Монастырь, не объявив никому ни о себе, ни о нем, провел его по ограде монастырской, не просил ризничаго показать древностей и достопомытностей монастыря и закусив с ним в одном из крайне неприличных лавок здешнего жалкого базара, отправился по свояси. Невежеству этому дивились самые простолюдины.—Словом, если этот упрямый человек, не будет переведен из Эривани в другое учебное заведение, то живя тут на перепутье, может часто повле-

кать духовенссу нашему подобныя неудовольствия о чем и исправляющий должность председателя Эчмиадзинского Синода Архиепископ Барсег, не решаясь особо утруждать Господина Главноуправляющего, просил меня, повергнуть обстоятельство это милостивому вниманию Его Высокопревосходительства.

В сем деле нумерованных и скрепленных шесть листов. С.

Ստացա ի 9 մայիսի 1844 թ.

(Քննագիր)

1844. յունվարի 25.

ի Ս. Պ. Բուրդ

Թղթապանակ 1844 թ.

Վավերագիր № 138:

Ներսես կաթողիկոսի նամակից, ուղղված Սինոդի ատենապետ Բարսեղ արքեպիսկոպոսին 1844 թ. Հունվարի 29

(Պետերբուրգից)

№ 25

(Քննագիր)

«Ի 25 ամսոյս յազազս Արիխ անուն ուսումնականի ուրումն, որ առաքեցաւ կայսերական հրամանաւ այդր յԱրարատ և ի սահմանակից դաւառան ընդ պօրուճիկն լեւնական ինժններ Սոկուլովի, գրեալ դյանձնարարութիւն առ ձեզ վան ամենայն կարողութեամբ ձեր օժանդակելոյ նոցա, հարկաւոր համարեալ գրեցի և առ վարժապետ Սաչատուր Ապովեան հարազատն մեր, որ գիտակ է որպէս բազում հանգամանաց դաշտաց և լերանց Արարատայ, մանաւանդ լերինն Մասեաց՝ օյնպէս և լիզուի նոցա, և երկոցուն գրեալ իմ զժրարն եզի ի վերա սեղանոյ զի ի ժամանակի եզեալ ի ծրարի առ ձեզ գրութեան իմոյ զժրարն գրեցելումն առ Ապովեանն յանձնեցուք խընդրողացն դայնաւ Այլ առանց մեզ կնքեալ դայնա ջոկ ջոկ առեալ են նոցա. յազազս որոյ յանձն առնեմ ձեզ զի յստանալն ձեր զգրեալն իմ առ ձեզ, հարցջիք և վան գրեցելումն առ Ապովեանն և եթէ չիցեն պատահարար հանդիպեալ նմա և առեալ

դպիր իմ առ նա, դուք ընկալեալ զայն հասուածիք նմա եթէ իցէ այդր յԵրևան և կոչեալ զնա պարտաւորեալիք լինիլ օժանդակ նոցա ըստ ամենից կարևորացն ինքեան, որպէս պարտաւոր մարդկային մարդասիրութեանց»:

Կաթուղ. Գիտն. թղթապանակ 1844 թ., № 141:

Սինսդի տաննապետ Բարսեղ արքեպիսկոպոսի
գրությունը ներսես կաթուղիկոսին

(սեվագրութիւն)

№ 50

Ի 20 փետրվարի 1844 ամի.

**Վեհափառ Հայրապետ
ամենողորմ եպիսկոպոսապետ.**

Մեծաւ յարգանօք ընկալայ զկոնդակ Վեհափառութեան Ձերոյ, արձակեալն առ իս ի 29 Յունվարի անցելոյ համար 25. և իսկոյն թղթակցեալ ընդ պարոն Արտվաշին ի մասին գիտնական առն Արիս անուանելոյ, որ ունի գալ յայտոսիկ կողմանս, ստացա ի նմանէ զպատասխանի թէ՛ նատակաւին չէ եկեալ յԵրևան: Ի գալ նորա այսր ի սուրբ աթոռս ըստ պատուիրանի Վեհափառութեան Ձերոյ ցուցից նմա զվայելչականն հիւրասիրութիւն, որով յուսամ գոհուանակ մնասցէ նա միշտ զԱստուածընտիր Հայրապետութենէ Ձերմէ:

Թղթապանակ 1844 թ. № 20:

Սինսդի տաննապետ Բարսեղ արքեպիսկոպոսի
գրությունը

(սեվագիր)

**Սրբազնակատար Հայրապետ՝
Վեհափառ Տէր.**

Կայսերական հրամանաւ առաքեալն յայսկոյս Կովկասու գիտնական Գերմանացին պարոն Արիս մականուամբ ընդ լիու-

նական ինժիներ պորուտչիկ Սօկուլովի ըստ արարեալն նոցա յանձնարարութեան, զգալլատենէ որոց կանխաւ ծանօթ էի կոնդակաւ Ձերդ վեհափառութեան, յՊ ընթացիկ ամսոյս մայիսի մուտ գործեցին յաթոռս սուրբ, ի միասին ընդ բարեշուք Յաչատրոյ Արտվան հայազնուոյ, բնակելոյ այժմ յԵրևան քաղաքի, վարժապետութեամբ յարջունի ուսումնարանի տեղւոյն, զորս և ընկալեալ ըստ վայելչականին պատուեցաք հիւրընկալութեամբ և ըստ պատուիրանի վեհափառութեան Ձերոյ՝ զծագրելոյ գրութեան ի 25 յունվարի սոյն ամի ընդ ձեռն յիշեալ գիտնականին ինձ ժամանելոյ, թարգմանութեամբ Արտվանի հարցմանցն նորա ի ծանօթութիւն նորին պատասխանեցաւ ըստ պաշտօնի և ըստ ցանկութեան նորա ցուցան նմա հնութիւնք վանիցս և այսպէս ամենայն գոհանակութեամբ ելեալ ի 11 ամսոյս ընդ Արտվանի ղիմեցին զեպի հանքն աղային Կողբայ, ի մերձակայ նորին. բայց նախքան յուղի անկանելն հստաշարկեցի նմա, եթէ պետք իցեն նմանձինք երկրացիք՝ ծանօթք լերանց և վայրաց Արարատայ և արագածունեաց, պատրաստեցից զնոսա վասն ուղևորելոյ ընդ նմա ի շրջագայիլն նորա, զորս ևս ունիմ ի պատրաստի. առ այս նովին եղանակաւ շնորհակալութիւն իւր ցուցեալ յայտնեաց թէ, զկնի վերադառնալոյ իւրոյ այսր յաթոռս ի Կողբայ, ունի ինդրել զայսմանէ յինէն, վասնզի բարձունք, զոպք և միջին մասունք լերանց այդոցիկ տակաւին չեն մաքրեալ լիովին ի ձեանց:

Ի 13 մայիսի 1844 ի Սուրբ Էջմիածին.

Թղթապանակ 1844 թ. № 27.

ՀԱՐ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Հայկական ՍՍՌ ժողովրդավարական կրթության և գիտության նախարարության (Մատենադարան) արխիվային բաժնում հայտնաբերված են մի քանի ամբողջական գործեր՝ կազմված Նալբանդյանին հոգևոր կոչում տալու, նրա կողմից գրված «անվայել» նամակների քննության և էջմիածին կանչվելու հարցերի հետ:

Գործերից առաջինը՝ կազմված է էջմիածնի Սինոդում և կրում է հետևյալ վերնագիրը— «Дело Эчмиадзинского Армяно-Григорянского Синода: по отделению Распорядительному № 89. По рапорту Бессарабской консистории о принятии в число духовных Михаила Налбандянца (Нач. 2 июля 1848 г. кончен. в 1855 году)». Բաղկացած է 28 թերթից:

Գործում այլ և այլ գրադրությունների հետ տեղավորված են Նալբանդյանի երկու անտիպ և մեկ տպված (Տես «Դիվան» էջ 42) խնդրագրերի բնագիրը, Նախիջևանի առաջնորդ Մատթևոս արքեպիսկոպոսի միջնորդագրերը և Սինոդի օրագրական բոլոր եզրակացությունները, որոնք վերաբերվում են Նալբանդյանին հոգևոր կոչում տալու խնդրին:

Հաջորդ երկու գործերից մեկը կազմված է կաթողիկոսի դիվանում, հետևյալ վերնագրով «գործ № 310 դիվանատան ծայրագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց, ըստ հայտարարության հոգևոր կառավարության Ն. Նախիջևանայ, յաղագս զանազան աստուծոյն ներգործութեանց ատենագրքի նոյն կառավարութեան տիրացու Եղիայի Շապուշնիկեան և տիրացու Միքայելի Նալբանդեանց, սկսեալ ի 1846 ամի. աւարտ, 185... ամի». Բաղկացած է 105 էջից: Մյուսը՝ որը կազմված է սինոդում վերնադրված է —

«Дело Эчмиадзинского Армяно-Григорянского Синода: по Распорядительному отделению № 12. По кондаку святейшого патриарха всех армян о вытребовании в присутствии Синода священника Шапошникова и дьячка Устаева для личного объяснения по касающемся до них делу. (Нач. 14 Генв. 1852 г. кончен. 30 сент. 1864 г.)», Բաղկացած է 79 թերթից:

Վերոհիշյալ գործերում տեղավորված են քննության առարկա խնդրի կապակցությամբ տեղի ունեցած ողջ գրադրությունը, ի թիվս որոց Նալբանդյանին վերադրվող «անվայել» նամակների բնագրերը*), Լազարյանների միջնորդագրերը՝ Նալբանդյանին էջմիածին կանչելուց ազատելու համար, կառավարական սենատի ուկազը՝ Նալբանդյանին Լազարյան ճեմարանի ուսուցիչ նշանակելու վերաբերյալ և այլն:

Վերջին գործը՝ կազմված է Նալբանդյանի կողմից հետևյալ վերնագրով «Գործ № 1. ըստ խնդրոյ իմոյ առ Նախիջևանայ Հայոց հոգևոր կառավարութիւնն, յաղագս զբարամատուցանելոյ Բարսեղ քահանային Գոպովեանց նորին վեհափառութեան զօրինակս գրութեանց, որպէս թէ յինէն գրեցեալս, սկսեալ ի 8 յարաի 1850 ամի ի Նախիջևան»:

Այս գործում գետեղված են Նալբանդյանի երկու խնդրագրերը**) ուղղված հոգևոր կառավարությանը, որով խնդրում է

*) Պատճենները ե. Շահադիյի կողմից հրատարակված են «Դիվանում», էջ 22—23:

**) Այս խնդրագրերի աշխարհարար թարգմանությունը՝ տես «Սովետ. գրականություն» ամսագրի 1941 թ. № 4-ում:

բացառութիւնս պահանջել Բարսեղ քահանայից, վերջինիս բացառութիւնը և հոգևոր կառավարութեան մի քանի գրութիւնները Թե ի՞նչ ճանապարհով այս գործը էջմիածին է հասել, հայանի չէ:

Վերոհիշյալ գործերը և հատկապէս ստորև հրատարակուող վավերագրերը պարզաբանում և լրացնում են մեր գիտելիքները Նալբանդյանի կյանքի առանձին շրջանների վերաբերյալ. ավելին, նրանց հիման վրա ուղղվում են մի քանի անճշտութիւններ:

Հատկանշական է, որ Նալբանդյանը միայն մեկ անգամ (1848 թ.) կամովին գիմել է հոգևոր կոչում ստանալու համար. երկրորդ անգամ նա ստիպված, գիշեր է իր համար հարկելի մի քանի անձանց հորդորանքին, «հրավիրեալ եղէ յամանց աղպարաց յանձին աւնուլ վերստին դպաշտոն հոգևոր և կալ մեալ ի սպասու աաճարին սասուժոյ» գրում է Նալբանդյանը. հետագայում Սինոզին ուղղված երկու խնդրագրերը ավելի շուտ հետապնդում են հարկերից ազատման, արձակագիրը հետ ստանալու, քան թէ հոգևոր կոչում ձեռք բերելու նպատակը:

Սինոզի օրագրութիւններից, ինչպէս նաև կաթողիկոսին ուղարկված պատասխանից (տես սուորև) պարզվում է, որ ա) սինոզը Նալբանդյանին հոգևոր կոչում չի տվել և ոչ էլ այդ կոչումից արձակել. բ) ոչ Նալբանդյանն է գիմել կաթողիկոսին և ոչ էլ վերջինս «չգիտութեամբ ստորագրել է Բարսեղ եպիսկոպոսի կողմից իրեն ներկայացված Նալբանդյանի վիմուժը» հոգևոր կոչումից արձակվելու մասին. այդ բոլորը մտադրածին և սչնչով չհիմնավորված գրույցներ են:

Անխուսափելիորեն առաջանում է այն հարցը, թե ի՞նչ միջոցներով Նալբանդյանն ազատից ներսև Աշտարակեցու հետևողական հետապնդումներից. այդ հարցի կոնկրետ պատասխանը մենք գտնում ենք Հովհաննես Լազարյանի կաթողիկոսին ուղղած նամակի հետևյալ տողերում «յիշեալ Նալբանդեանցն ըստ վկայութեանց չափաբերական թղթոյն, զոր ունէր առ ինքն, ըստ որում էր աշխարհական կոչումն, մեր

դախտիկ վկայականս նորա և դառեալն ինքեան ի կառավարութենէն աւնիվերստևտին վկայականս ներկայացուցեալ ի տեսութիւն գլխավոր. կառավարչին ճեմարանի մերում ... զոր և նա մատոյց առ կառավարութիւնն Սենաթին» և ապա՝ թէ «Միքայել Նալբանդեանց թէպէտ յառաջին կոչումն իւր էր քաղաքացի, այլ այժմ, ըստ կառավարութեան արքունի Սենաթին, որ ի միջոցիս արձակեալ է դնա յայնմ կոչմանէ և հաստատեալ է յուսումնական տարեկայս ի ծառայութեան, ուրևնն արձակեալ դասնի նա այժմ ի քաղաքացի ասացեալ կոչմանէ և ոչ կնթարի ի հոգևորական դատողութեան»: Պարզ է, որ Նալբանդյանը կաթողիկոսի հետապնդումներից խուսափել է իր մտա եղած «չափաբերական» թղթերի և կառավարական սենատի ուկազի գորութեամբ:


Ստորև աղագրվում են Նալբանդյանի անտիպ խնդրագրերը և մի քանի այլ վավերագրեր քննութեան առնված հարցերի կապակցութեամբ:

Ստացա ի 9 օգոս. հմբ 63.

Նորին բարձու սրբազնութեան Տեսան Մատթէի թեմակալ արքեպիսկոպոսի և ասպետի

Խոնարհագոյն խնդիր

Թէպէտ ես ի 10-էն մայիսի խնդրամատոյց լեալ էի ի հոգևոր կառավարութիւնն տեղւոյս և հանդիման կացուցեալ զարձակման վկայագիրս զոր տուեալ էր ինձ Նախիջևանայ հայոց հասարակութիւնն յաղագս մասնելոյ ի հոգևոր կոչումն, օրպէս և յիշեալ կառավարութիւնն առաջարկեալ էր զախմանէ Չերդ բարձու սրբազնութեան զոր նոյն օրինակ Չերդ բարձու սրբազնութիւն յայտնեալ էր լուսաւորչական հայոց սինոզոսին էջմիածնի, բայց այժմ ըստ բերման բաղգիս մահահրաւէր խոլերայն ըմբոնեաց զիս ի ճանկս իւր զոր թէպէտ և ողորմութեամբ սատուժոյ ազատեցայ ի մահուանէ՛ բայց հետք ճիւրանաց անազորոյն ախտիս



Նաղբանդանին վերաբերից V նամակը՝ ուղղված Խերացու Սարգսին

Թաղութեան և մինչ անգամ նուազումս
 սրաի մնաց ի վերայ իմ, զոր զկնի ամսօ-
 րեայ ժամանակի յետ ծախելոյ զբազում
 ինչս բժշկաց և զեղորելից վերջապէս հաւ-
 տասեցաւ ի վերայ իմ մնալով անբոյժ,
 աւաի և չկարիմ ամենեին մնալ ի հոգե-
 րական կոչման, վաճառոյ և կամիմ վերըս-
 տին մտանել ի թիւս հարկատու անձանց

կայսեր, ըստ դորութեան 110 յօդուածոյն
 բարձրագոյն կարգադրութեան:
 Աւաի դիմեալ յուսով առ Չերդ բարձր
 սրբադնութիւն ամենախնամարհարար խնդ-
 րեմ առաջարկել զայսմանէ յուսուորչական
 Հայոց սինհոդոսին Էջմիածնի, զի արձա-
 կեացէ զիս ի հոգեւորական կոչմանէ, եթէ
 մուծեալ է, իսկ եթէ չէ կարգադրեալ, ոչըն-

չացուցանել զառաջին գործն իմ և յետ
առաքել զարձակման վկայագիրս, զի ևս
լինելով ըստ առաջնոյն հարկատու անձն
Ամենողորմած Կայսեր և արձակեալ ի հո-
գևորական կոչմանէ գաից զայլ եղանակ
կենաց ըստ հասարակեալ օրինաց:

Խոնարհ ծառա Միքայէլ Ղազարեան
Նալբանդեանց

1848 յ9 օգոստոսի

Ի Նախիջևան

Նախկին Սինոդի արխիթ, կարգադրիչ ժառ. 1848 թ.
գործ № 89 էջ 5.

Ի 3 յուլիսի 1853 ստացա

Խնդրէ Միքայէլ ջանքնկալ Ղազարեան
Նալբանդեանց, համաթուեալ առ զղերս Նա-
խիջևանս սուրբ լուսաւորչայ աւագ եկե-
ղեցւոյ. այլ թէ զինչ այնմ զհետ գան յօ-
ղուածք.

1.

Յամի 1845 ի լինել ծայրագոյն պատ-
րիարգ կաթողիկոսի ի նոր Նախիջևան,
ըստ առաջարկութեան տեղւոյն հոգևոր կա-
ռավարութեան ընկալաւ զիս ի թիւս հոգե-
ւորականաց այնր քաղաքի և զասաւորեաց
ի կարգի զղերաց Ս. լուսաւորչի աւագ եկե-
ղեցւոյ տեղւոյն. իսկ յամի 1848 ի գալ նո-
րին բարձր սրբազնութեան Տեառն Մատթէի
արքեպիսկոպոսի նորոգ վիճակաւորի ի Նա-
խիջևան յիշեալ հոգևոր կառավարութիւնն
տաճարկեաց նորին բարձր սրբազնութեան
շնորհել, և ինձ ի թիւս այլոց հոգևորակա-
նաց, զաստիճան ջանքնկալութեան, զոր ըն-
կալայ յ 8 յունիսի նոյն 1848 ամի:

2.

Ի սմին

Ըստ զօրութեան օրինացն որովհետե
ցայդ վայր չունէի ևս զարձակուրդ ի հա-
սարակական տեսչութենէ, պարտաւորեցայ
լինքնին, թէպէտ և հոգևոր իշխանութիւնն
ոչ բանադատէր զիս, յայն ստանալ ի հասա-
րակութենէ Նախիջևանայ զարձակագիր զոր
խնդրաւ մատուցի հոգևոր կառավարութեան

Նախիջևանայ, յաղագս հանդիման կացու-
ցանելոյ զայն ուր հարկն է վասն պատկա-
նաւորն հաստատութեան, որ և մատուցեալ
նորին բարձր սրբազնութեան խնդրեաց
զարժանին տնօրինութիւն. յորմէ և առա-
քեցաւ ի սինոդն սրբոյ էջմիածնի:

3. խնդրոյ

Ի նմին 1848 ամի ի սիւնել մարդախոշոր
խոլերայի ի սահմանս Նախիջևանայ և Նա-
խիջևանն իսկ, ևս երկիցս ըմբռնեալ ի շա-
րաշուք ախտէս եղայ անկողին անդգայ,
յորմէ օգնութեամբ բժշկաց անգանօր զի-
պելոց առողջացեալ, անկայ հեռաբար
յախտ թուլութեան մինչև չիմանալ զառնել
և զգործել իմ, զեզերելով տառապագին ի
զրուես բժշկաց և զեղալաճառաց. յետ ընդ
երկար վարանմանց այն ինչ բարձաւ յի-
նէն յոյս վերակենցաղելոյ ըստ գուշակու-
թեան բժշկացն, հարկադրեալ եղէ հրաժեշտ
տալ հոգևոր կոչմանն ապիկար զանձնս առ
սպասահարկութեան զտեալ Աստուածեան
տաճարին. այսու մտօք մատուցեալ զխնդիր
նոյն վիճակաւոր արքեպիսկոպոսին ազաչե-
ցի միջնորդել ի Սինոդն սրբոյ էջմիածնի
արձակել զիս ի հոգևոր կոչմանէ եթէ հաս-
տատեալ իցէ. իսկ թէ ոչ յետս առ իս զար-
ձակման թուղթն իմ առաքել, զոր և ընկալայ
եղծեալ խաչագծիւ:

4. զոր

Ի 1848 ամն. ց 1852 ամն, նորին բարձր
սրբազնութիւն թեմակալ արքեպիսկոպոսն
Մատթէոս խնամ տարեալ ինձ և առեալ
ընդ իւր էհան ի քաղաքէն Նախիջևանայ և
տարեալ յՕգոստոս և ի Քիշնե, սատարու-
թեամբ երևելի բժշկաց վտարեալ յանձնէս
զախտ թուլութեան, որ ամօք սպառնացեալ
էր ի բժշկաց թագաւորել ի վերայ իմ ցմահ.
յընթացս այսր առողջարար զեղընկալու-
թեան հրաւիրեալ եղէ յոմանց ազգասիրաց
յանձինն առնուլ վերստին զպաշտօն հոգևոր
և կալ մնալ ի սպասու տաճարին Աստուծոյ.
առ այս նպատակ ուղղեալ ևս զիմ մտա-
զրութիւն, ընկալայ վերստին ի հասարա-

կութենէ՛ նախիջևանայ յամի 1851 դարձակման վկայագիր, զոր նորին բարձր սրբազնութիւն յանդիման կացուցեալ Սինօղին սրբոյ էջմիածնի խնդրեաց վերստին հաստատել զիս ի հոգևոր կոչման:

5. շարագրեցի և

Յետ իբր ութն ամսոյ նորին բարձր սրբազնութիւն կոչեալ զիս առ իւր, յայտնեաց ինձ զհրամանագրութենէ՛ Սինօղին սրբոյ էջմիածնի առ ինքն, որով ծանուցանէր նոյն իշխանութեան թէ՛ դառաջարկութիւն նորին բարձր սրբազնութեան ունի թողուլ առանց ընթացից մինչև գործն ծագեալ ըստ անձամբ կարգադրութեան նորին սրբութեան ծայրագոյն պատրիարքին վասն իմ ոչ առցէ զիւր վախճանական լրումն:

6. Պարզագրեցի ևս

Գործս այս լինելով անտեղի ինչ և յարեալ յոմանց անխիղճ անձանց սոսխացելոց ընդ իս շունի բնաւին ընդունել զվճիռ ինչ, վասն զի, յետ գոլոյ այնր անհիմն և բոլորովին անկանոն շունի թերևս և զօրինաւոր թույտութիւն սկզբնաւորութեան և շարունակութեան ի կանոնագրութեանց Ձերոյին Կայսերական մեծաբեան, վասն զի յայնմ ժամանակի՝ այն է յամի 1846, յորում զիս բունադատեն յանձին առնուլ գոլ յանցաւոր, գտանէի ևս 17 ամեաց մանուկ անչափահաս, յօրժամ օրէնք յամենայնի ներողարար վարէր ընդ իս, եթէ իրօք գտանեցեալ էր իմ յիւր ինչ յանցաւոր: Այլ այնու ամենայնիւ ևս ի դեմս պահանջողութեան նորին սրբութեան տուեալ եմ զիմ պատասխանի ընդ ձեռն բարձր սրբազան Մատթէոս արքեպիսկոպոսի ի 21-էն ապրիլի 1852 ամի և ընդ ձեռն սինօղի սրբոյ էջմիածնի ի 10-էն դեկտեմբերի նոյն ամի, առաւել քան զորս շունիմ ասել ինչ, ըստ որում ամենայն հանգամանք գործոյն յայտնի երևին ի վերտողեալ յայտարարութեանց իմոց:

7. խնդրագործ

Ես տեսանելով, զի ողորմելի աղքատութեամբ դեգերեալ ի դրունս այլոց գրադրութեամբ հազիւ թոշակեմ զաւուրն պարէն և Սինօղն էջմիածնի յետագրեաց զիւր վասն իմ տնօրինութիւն, պարտաւորեցայ առանձին խնդրագրաւ ի 10-էն դեկտեմբերի անցեալ 1852 ամի աղերսել զնոյն Ստեան փութացուցանել զիւր տնօրինութիւն ըստ իւրում նկատման, կամ ընդունել զիս ի հոգևոր կոչումն և կամ թէ՛ անարժան ոք դատիմ առ այն, առանց զիս դեգերեցուցանելոյ և ծախելոյ զժամանակն իմ ի նանիր, յետս առ իս զվկայագիր իմ զարձուցանել որպէսզի ընկալեալ դայն, մարթացից օրինաւոր եղանակաւ մտանել յամենահպատակ ծառայութիւն Ձերդ Կայսերական մեծաբեան, խնդրելով ընդ նմին զվկայագիր իմ չեղձանել ըստ առաջնոյն խաչադժիւ ի պատճառս պիտոյ այնր ինձ լինելոյ:

8. Միքայէլ

Յօրէ անտի մինչ ցայսօր չունելով ոչինչ բաւականութիւն ի կողմանէ Սինօղին, կամ մոլորեալ ի վերայ երկուց ճանապարհաց, վասն եղանակի իմոյ ապագայ կենաց և թէ՛ յի՛նչ ունի եղերի վճիռ սինօղին և գտանիմ ի մեծի չքաւորութեան և տառապագին աղքատութեան և յամեցողութիւն գործոյն ակնարէ*) ի շարաշար զբկանս ողորմելի անձին իմոյ,

Վասն որոյ ամենահպատակարար հայցեմ, ջանընկալ

Որպէս զի հրամայեալ լիցի տալ գործոյն իմոյ զպատկանեալ ընթացս, որով հայտնեացի ինձ ապագա վիճակ իմ այս է կամ ընդունել զիս և վերահաստատել ի հ. կոչման և կամ վերադարձուցանել առ իս զվկայագիր իմ ամենայն ամբողջութեամբ, զի առանց կորուսանելոյ զժամանակ իմ յընդվայր կարողացայց դայն ի գործ գնել

*) Բնագրում այդպէս է. երևի «արկանէ» բառն է աղափաղված:

յամենահպատակ ծառայութիւն Չերոյին Մեծութեան: Կայսերական խնդիրս այս պատկանի մատուցանել լուսաւորչական հայոց Սինոդին սրբոյ էջմիածնի, ի 24 մայիսի 1853 ամի ի Բիշնեվ:

Նալբանդեանց ստորագրեցի:

Բնակութիւն ունիմ ի Բիշնեվ քաղաքի երկրորդ բաժնի քաղաքին յանդիման նոր որդոստային:

Սինոդի արխ. կարգադ. մաս. 1948 № 89. էջ 17:

Ծանոթ.—Խնդրագիրը գրված է գրվագովս 60 կողեկանոց թղթի վրա. առաջին էջի ձախ կողմում մակագրված է բժամանակ է կատարում խնդրոյ աղերասրելուն ըստ այսմ դործոյ ծանուցանել նմա ընդ ձեռն վիճ. կոնսիտորիային Բես(արարիւոյ), ի Կ(ատաղաբչական) մասն է. անդամ Սինոդի Մտկար եպիսկոպոս:

Չերոյն վեհափառութիւն

Սրբազնակատար աէր:

Շնորհ ունիմ յայտ առնել սովին, Չերոյին վեհափառութեան, թէ ի վիմագրեալ պատճենէ կըրակացութեան ազգային ժողովին արարելոյ ի Կալկաթա ի 23 դեկտեմբերի 1860 ամի, ի մեաասաներորդ յօդուածոյ նորին տեսանի, թէ ի վաղ ժամանակաց հեռէ մնացեալ կայ ի ձեռս եկեղեցւանի սուրբ Նազարեթ եկեղեցւոյն Հայոց ի Կալկաթա, պատրաստի դուժար դրամոց, պատկանեալ Սրբոյ աթոռոյն էջմիածնի, որ շահուք հանդերձ ցվերջ 1860 ամի հասեալ է մինչև ցերիս հազար եօթն հարիւր ութսուն և չորս հնդկական կումպանու ասացեալ ուսփիս, ցերեք տասն անայս և ցիմն պղինձ, որ հաշուելով ըստ ուսական դրամոց, ըստ արդի գնոյն առնէ մերձ իրը հազար ութն հարիւր հիսուն և երկու մանեքս արծաթոյ և որ ի հարկէ մինչև ցարդ աճեալ է դարձեալ ընդ ձեռն տօկոսեաց:

Չայսմանէ ի խօսիլ իմ ընդ մեծարու ձերունւոյն Պ. Յարութիւնի Արգարեանց և ընդ Սաշիկեան Տէր Յովհաննէս աւագ քահանային, լուայ, զի թէ Վեհափառութիւնդ շնորհարաշխն կոնդակաւ ձերով հաճեալիք

յանձն առնել, որպէս երեսօթեանի ի ձերմէ կողմանէ Պ. Յարութիւնի Արգարեանց, սասնալ զայս դուժար և հասուցանել առ Չեղ, յիշեալ անձն վերարժան պատրաստ է կատարել հրաման Չեր:

Միայն զայս իմ պարտ համարիմ զեկուցանել Վիճիդ, զի թէ հաճեալիք զայդմանէ կոնդակ տալ Պ. Յարութիւնի Արգարեանց, հարկ է զի ստուգութենէ ստորագրութեան Չերոյ ի վերտողեալ կոնդակին, ի ներքոյ նոյն իսկ Չերոյին ստորագրութեան, սիւնհողոսն սրբոյ էջմիածնի ստորագրութեամբ անդամոց և գրութեամբ կնքոյ վկայեցէ այսպէս «Նորին վեհափառութեան իսկական ձեռամբ ստորագրեալ է կոնդակս, զորմէ Սիւնհողոսն Սրբոյ էջմիածնի ստորագրութեամբ անդամոց և գրութեամբ կնքոյ վկայէ ևն»:

զայս պահանջին տեղական օրէնք անգլիականք:

Գուժարդ այդ որ մնացեալ է անդր և որ մնացէ եթէ ոչ պահանջեցէք, կարէ սատար լինել Չեղ, թերևս ի շինութիւն դպրոցին, զոր հիմնէիք տակաւին ամօք իրը երկուք յառաջ:

Եթէ հաճութիւն լիցի վեհափառութեանդ, որպէս ասացեալ եմ ի միւսում թղթիս*), կարէք զկոնդակն կնքեալ մակագրել այսպես «առ Մ. Նալբանդեանց, յաղագս հասուցանելոյ ի Հնդկաստան առ պ. Յարութիւն Արգարեանց» և յետոյ զայդ կնքեալ ծրար դնել յայլ պահարան և վերստին կընքեալ ի վերայ արտաքին պահարանին մակագրեալ զանուն իմ և զլիակատար հասցէ, զոր ունիք գտանել ի վերջ միւսոյ նամակիս և առաքել ի Պետերբուրգ, եթէ գտայց ես անդր, այն է զի ընկալեալ զայն իսկոյն առաքեցից ի Կալկաթայ, որպէս արժանն է. իսկ թէ կոնդակ Չեր հասցէ անդր յիմում բացակայութեան, յայնժամ հաւատարիմ թղթակից իմ բնակեալ ի տան, յորում և ես բնակիմ, հասուցէ առ իս անկորուստ, ուր իցեմ ես և ես ըստ կարգին հասուցից նոյնպէս:

Իսկ թէ կամիցիք այլով ճանապարհաւ զրել, կամ խաղառ զանց առնել, կամք Վե-

*) Տես «Երկան» էջ 191:

համառութեանդ են, ես զիմ կատարեցի զպարտականութիւնս:

Ազաշելով զօրհնություն վեհափառ Հայրապետիդ ի գլուխ իմ, մնամ միշտ որպէս էի և եմ:

Չերոյին Սրբազնականաւոր Տերութեան ամենախոնարհ ծառայ և որդի:

Միքայէլ Նալբանդեանց

20 հուլիսի

1862 ամի

Էտնդոն

Նախկին Սինոզի արխ. Տնտես մաս.

1862 Գործ № 22, էջ 1:

Ի պատասխան Նալբանդյանի 1848 թ. օգոստոսի 9-ի դիմումին, Սինոզի 1848 թ. սեպտեմբերի 15-ի օրագրական որոշումը:

«... Որովհետև յիշեալ Նալբանդեանն անկեալ յախա թուլութեան՝ չկարէ այսուհետև շարունակել զսրբազան պաշտօն հոգև-վորականութեան, վասնորոյ համաձայն ներկա առաջարկութեան Մատթէոս արքեպիսկոպոսին վերադարձուցանել զարձակագիրն նորա, զտանեցեալն ի գործս Սինոզիս և այսու զգրագրութիւնն ըստ այսմ առարկայի կարճել բոլորովին և զգործն Սինոզիին աւարտեալ համարել. վասն աւելոյ ի սահմանեալ ժամանակի յարխիւն ի պահեստ»:

Կաթուղիկոս Ամենայն Հայոց՝ Ներսէս Անդամք Սինոզի (ստորագրություններ)

Սինոզի 1852 թ. մայիսի 26-ի օրագրական վճիռը ի պատասխան Մատթէոս արքեպիսկոպոսի երկրորդ միջնորդությանը՝ Նալբանդյանին հոգևոր կոչում սալու համար:

«... Որովհետև վասն առաջարկեալ Միքայէլին Նալբանդեանց շարունակի ի Սինոզիս առանձին գործ ի վերայ Հայրապետականն կոնդակի, յազազս զանազան անվայել նամակագրութեանց նորա, որոց վասրն կոչի նա յԱտեան Սինոզիս վասն անձամք մատուցանելոյ սմին զհարկաւորն պատասխանիս, ուստի զանօրէնութիւնն վասն ընդունելութեան նորա ի հոգևոր կոչումն

զազարեցուցանել մինչ զվախճանական վըճառահատութիւն Սինոզիս ըստ այնմ գործոց, զորմէ տալ զխտել վիճակաւորին Բեսարաբիոյ, յազազս ծանօթութեանս:

Տեղապահ ամենապետի (ստորագրութիւն)

Անդամք սինոզի (ստորագրութիւններ)

Սինոզի 1853 թ. փետրվարի 18-ի օրագրական վճիռը ի պատասխան Նալբանդյանի 1852 թ. դեկտեմբերի 10-ի դիմումի*):

«... Որովհետև Սինոզս չհամարի ինքեան իրաւունս առնելոյ զանօրէնութիւն յազազս ընկալնելոյ ի հոգևոր կոչումն զՄիքայէլն Նալբանդեանց յառաջ քան զվերջաւորութիւն կազմեցեալ ի Աինոզիս գործոյն ի վերայ Հայրապետական առաջագրութեան, վասն անվայել նամակագրութեանց նորա, իսկ յիշատակեալ Նալբանդեանցն որպէս երևի յարզեան ինդրագրոյ նորայ, ոչ յօժարի սպասել ցվախճան վերոյիշեալ գործոյն, ուստի զարձակագիր նորա ի հարկաց առաջի ընդ հրամանագրի ի վիճակային կոնսիստորիայն Հայոց Նոր Նախիջևանու և Բեսարաբիոյ առ ի զարձուցանել նմայ համաձայն նորուն ցանկութեան: Այլ և յանձնել կոնսիստորիային, պահանջել ի նոյն ինդրատուէ զվախճան կոպէկս արծաթոյ վասն երկուց թերթից անդրոշմ թղթոց ... »

Անդամք Սինոզի (ստորագրութիւններ)

Սինոզի գրությունը Բեսարաբիայի հայոց վիճակային կոնսիստորիային, ի պատասխան Նալբանդյանի 1853 թ. մայիսի 24-ի դիմումի:

«Դպիր Միքայէլն Նալբանդեան ինդրագրով, մատուցելով Սինոզին յանուն բարձրագոյն, ի 24 մայիսի սոյն ամի ինդրեալ էր զանօրէնութիւն Սինոզին յազազս հաստատելոյ զինքն ի հոգևոր կոչման կամ վերադարձուցանելոյ զարձակագիր իւր ի հար-

*) Տես «Թիփան» էջ 42:

կաց՝ գտանեցեալ ի գործս սորին. ի հետև-
 վումն որոյ կառավարչական մասնս ըստ
 պատուիրանի Տեարց ատենակալաց Սինոզին
 սրբոյ Էջմիածնի յայանէ կոնսիստորիդ,
 յայանել յիշեալ Նալբանդեանցին, թէ Սի-
 նոզս համաձայն այսմ ցանկութեան նորայ
 արարեալ է արդէն զարժանաւորն անօրէ-
 նութիւն, զորմէ և յայտնեալ է նմա, հրա-
 մանագրութեամբ յանուն կոնսիստորիդ
 Բեսարաբիոյ ի 15 մայիսի սոյն ամի հա-
 մարաւ 688:

Անդամ Սինոզի՝ Մակար եպիսկոպոս

1853 ամի

ի 21 օգոստոսի

ի սուրբ Էջմիածին:

Նորին Արքայնակատար վեհափառու-
 թեան ծայրագոյն պատրիարկ կաթողիկոսի
 ամենայն Հայոց և Ասպետի Տեառն Ներսէսի:

Ի լուսաւորչական Հայոց Սինոզէն
 սրբոյ Էջմիածնի յայտարարութիւն:

Ի կատարումն առաջագրութեան սրբադ-
 նակատար վեհափառութեան Չերոյ ի 18
 դեկտ. անցելոյ համարաւ 436, իսկ աստէն
Նախ Հրովդէս՝ ամս. 1 է: Ա
Արքիդայոս՝ ամս. Թ: Բ...»
«Անմատ ամս (Թիվ չի գրված):
Ապու Արդիալայ ամս (Թիվ չի գրված):
Մահմէտ ամս. 1 լա»:

Սկ.՝ «Ամիր մուսնիք սանկաց:

ա Մահմէտ ամս. Բ:
բ Ապուլպարիբ ամս. Ը...»:
Վջ. «Ի Հարուն ամս. ԺԸ:
ԻԱ Զարբ ամս. 1»:

Սկ. ա «Այս հայոց քաղաքացիական են առաջին որ
է երրորդ մասն:

Նախ մեծն Արգար ամս. 1 Ը.
բ Սանատրուկ ամս. 1...»:
Վջ. «Կոստանդին ամս. ԻԲ:
Գարձյալ Կոստանդին ամս. ԽԸ»:

Սկ. «Այս են կրկիսից հայոց:

Ա Նախ ս՛րն Գրիգոր ամս. 1:
Բ Արիստակէս ամս. 1...»:
Վջ. «... Տէր Պողոս ամս. Բ
տէր Կոստանդին ամս. Ժ»:

Շարունակվում է՝ «Այժմ տեսցուք դե-
պիտերն մայրաքաղաքաց, որ բացայայտէ
դժիւ սոցայ, թէ որքան է և մեզ ուսու-
ցանէ:

Այս Հասնայն է»:

Սկսում է Պետրոս Առաքյալից և վերջացնում՝

«... Միգաթաղէս ամս. ԺԷ:
Միգուհոսս. ամս. Ը»:

Շարունակում է.

«Այս Անիսիսայն է.

Եւսդիոս Ա.
Իգնատիոս Բ.
Կիւրկոս ԺԶ
Տիրան ԺԷ...»

«Այս Երուսաղեմ այն է»:

Սկսում է Յակոբոսից վերջացնում՝

«... 1 Ը Զարգաս
1 Թ Հերմոն»:

«Այս աղեկասանգրացոցն է»

Սկսում է Մարկոս ալեքսանդրացի և վեր-
ջացնում՝

«... ԺԵ Արքիդայոս ամս. 1 է.
ԺԶ Աղէկասանգորոս ամս ԺԷ»:

Վասն ժամանակաց գրոց ամացն յԱղամայ
որքան են քիւբ և բանիք ի նահապետքն. և ի
յամայն նշանաւոր տեղիս մինչև ի գալուստ
Նեոխն:

– «ՅԱղամայ մինչև ի փոխիլն Ենովքայ
ամք Ռ. և ԴՃ. ՉԵ»: (Տալիս է կարևոր
փաստերը, գլխավորապես կրոնական, լի-
զենդար, վերջում՝ կրոնական առանձին ժո-
ղովուհիները):

Ընդօրինակել է Կարապետ գրիչը: Գրչու-
թյունը 16—17-րդ դարի է:

№ 3078 (Գ. 267) ժամանակագրությունը բնի-
հանուր պատմության 1018—1602 թ. թ.)

Անխորագիր: Սկս. Թ. 94 թ՝ «Ի թվին
հայոց Նիէ զարթեաւ աստուածասաստ բար-
կութիւնն. և ելին ազգն թուրքաց ի վերայ
քրիստոնէից ի Վասպուրական...»:

Ժամանակագիրն իր աշխատութեան ա-
ռաջին մասում օգտվել է 14-րդ դարի «Ա-
նանուն ժամանակագրութուն»-ից՝ հասց-
նելով մինչև 28 թվականը, իսկ այնուհետև
շարունակել մինչև 1201—1209 թվական-
ները, «ՌԾ թվին թալանեց և կողոպտեց
Լաւէնան, որ Սաթրըճի կոչիւր, գԱիս քա-
ղաք Կիլիկի(ի)ոյ, ՌԾԱ. թվին զԹուխաթ քա-
ղաքն յայրեցին» (թերթ 95 թ):

Վերջին մասում, հիմնականում, արվում
է թուրքական սուլթանների ժամանակա-
գրութունը՝ մեջ ընդ մեջ չիշելով տարե-
բային առանձին պատահարները (արեղակի
խավարումները, տաավոր աստղերի երև-
վումները, անասունների հիվանդութունը
և այլն):

Չեռագիրն ընդօրինակել է Ալեքսան
գրիչը 1608 թ. Կարկառ քաղաքում:

№ 3072 (Գ. 247) ժամանակագրությունը հա-
յոց պատմության, կազմված Մովսես
Երզնկացու կողմից:

Վերնագրված է «Վասն քաղաքացի
հայոց, զոր կարգեաց Մովսես Խորենացին»:

Սկս. թ. 210 ր՝ «Մովսէս Խորենացին շարս թագաւորացն հայոց այսպէս կարգէ.

- Յարեղ որդի Նոյի՝ Ա.
- Գամեթ՝ Բ.
- Թիրաս՝ Գ.
- Թորգոմ՝ Դ.
- Հայկն՝ Ե...»:

Վերջացնում է թ. 212 ր. «Խ. Խոսրով որդի Վաղարշու, որ է հայր մեծին Տրդատայ. և վրէժ պահանջէ դմահուանէն հօրն»։ Այնուհետև շարունակում է պարթևաց թագավորների կարգը։ Վերջում կանգ է առնում Բագրատունյաց հայ թագավորների վրա։ Վերջացնում է կիլիկյան Կոստանդին թագավորով։ «Կոստանդին յայլմէ ազգէ. որ այժմ ունի զթագաւորութիւնն մինչև ցայս վայրը. և թիւս հայոց ՊԸ. միահամուս թագաւորք հայոց ՀԱ.» (թ. 214 ր)։

№ 3527 (Գ. 704) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Վերնագրոված է. «ԽԸ. Վասն ամացն Աղամայ և նախահարցն և դօաղանք ժողովոցն և սուրբ Լուսատորչին և թոռանցն»։

Սկս. թ. 121 ր՝ «Աղամ եկաց ամս 21. և մեռաւ։ Սէթ՝ 2ԺԲ, Ենովս՝ 2Ե։ Կայինան՝ 2Ժ։ Մաղաղիէլ՝ ՊՂԵ...»։

Վերջ. թ. 125 ր «... Եւ ՉԽ (=1291) թվին Հայոց լրումն յունաց ի դատկէն, զոր սմանք ի Կիլիկիացոց հետեկցան յունաց. և այս մինչև ցայս վայր»։

Ժամանակագրութեան ծավալը 9 էջ է։ «Պատմական առանձին արժեք չի ներկայացնում։

Արժեքավոր է նույն ձեռագրի թերթի առաջին երեսի վրա երկարութեամբ կես էջ շարագրոված ժամանակագրութեանը. «Թվին ՆԾԲ վախճանեցաւ Գրիգոր Նարեկացին...»։

№ 3695 (Խ 83) ժամանակագրութիւն պատմից պատմութեան։

Վերնագրոված է. «Ազգարանութիւն պարսից թագաւորաց» (Արղավիլի Շահ Սաֆուց մինչև 1622 թ.)։

Սկս. թերթ 4 ա՝ «Սկիզբն շիխ Սաֆին է, որ էր իշխան Աբասախու. որոյ որդի է

շիխ Հայտար. սա էառ իւր կին դքոյր Եաղուղ թագաւորին թարւիդու...»։

Վերջանում է 5 ր՝ «... ՌԿԷ. թվին Օսման նստաւ Դ. ամ թագաւորեաց։ ՌՀԱ. թւին դարձեալ նոյն Մուստաֆայն նստաւ թագաւոր»։

Ընդօրինակված է 1667 թ.։

№ 3695 (Խ. 83) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ 6 ր՝ «Ի ՈՀ թուականին հայոց առաջին թաթարն երեկ աշխարհէն Բուլղարա էառ դաշխարհս հայոց, որ Խուրազմ կոչիւր...»

Վերջանում է թերթ 9 ր՝ «... թիւն ՌԿԵ էր։ Խալիլ փաշէն, որ սարտար երեկ թարվեզ. թիւն ՌԿԷ էր։ ՌԿԸ. թւին մօրեխն եկն մինչ ի Գ տարին կերաւ»։

Գլխավորապես պարսկական շահերի ժամանակագրութեանն է։

Ընդօրինակված է 1667 թ.։

№ 4998 (271) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ. 123 ր՝ «Յաղամայ ի կրորդ Ասներորդ (?) աստուածային պատմութիւնք ցուցանէին ի նմանէ եղեալ ազգ պարթևաց...»։

Վերջ. թերթ 126 ր «... Թւին ՈՃԹ յուլիսի ժե, օրն շարաթ, թ սահաթին, բըրնկեցաւ Այազմա խափուն, այրեցաւ մինչև բաղի ճաշք Ըստմբօլ բովանդակ շարսուն և անշարսուն զնդանին գունն...»։

№ 5882 (1277) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ 93 ա՝ «Եւ արդ ըստ ուխտադրութեան յառաջարանին և զՅարեթին արկցուք ձեռն ի գործ՝ գրել զորս ըստ ազգի և զորս փոխադրութեամբ և նոցանէ պարթևացն մինչև այսօրիմբք ժամանեացուք առ որ արար զերկոսին մի տէր մեր. և արդ ի Յարեթէ սկսայց պատմարանել։

Արեթ որդի Նոյի ծնաւ ըզԳամեր. Գամեր ծնաւ զԱօքանազ. Աօքանազ ծնաւ զԹիրաս...»։

Վերջ. 113 ր՝ «ՀԴ. տէր Կոստանդին Լամբ-

բօնեցին՝ ամս Դ, ՀԵ. տէր Յակոբ հոռմայեցոց դաւանությամբ: ՀԶ. տէր Մխիթար ուղղադաւան: ՀԷ. տէր Մեսրոբ սրբութեամբ և ուղղափառութեամբ...»:

Ծափալը 38 էջ է: Զեռագիրը 17—18-րդ դարի ընդօրինակությունն է:

№ 5619 (530) Ժամանակագրութիւնն քնննաճուր պատմութեան: Անխորագիր՝ Անեցու ժամանակագրությունից անմիջապէս հետո (այսինքն՝ 1178-ից հետո): Ընդա նրա «գավազան»-ների ձևով, անանուն մի ժամանակագիր, շարունակում է Անեցուն՝ սկսելով 1178 թ. խաչակրաց արշավանքից «ՈՒԸ. Շարժեցան Հոռմայեցիքն դալ ի փրկել զԵրուսաղէմ յանաւրինաց, և ի ճանապարհին կատօրեցին յիկոնիոն յալուս ի Հաքարացոցն եկեալս Սելևկիա, և թագաւորն նոցա լուղացեալ ի գեան Սելևկիոյ խեղդեցաւ» (թ. 108բ):

Վերջացնում է 1847 թվի սովով «ԶԴԶ. ի սոյն ամ եղև սով յարևելք որ բազումք ի սովոյ մեռան» (թերթ 113 բ):

Ժամանակագրության ծափալը 10 էջ է: Հիշատակված փաստերն ընդհանուր առմամբ վստահելի են և հետաքրքիր: Որոշ փաստերի հիշատակություն մտել է Անեցու հրատարակված ժամանակագրության շարունակության մեջ:

№ 5959 (1346) Ժամանակագրութիւնն Փոքր Ասիայի: Անխորագիր: Սկսվում է Ղարա Եազուց՝ «նախ Ղարայ Եազիչին բազումօք հեծելօք, որ ի հազար քառասուն և եօթն թուին ապստամբեցաւ ի թագաւորէն և եկեալ յՈւրհայ քաղաք եմուտ ի բերդն, և ամբացաւ...» (թերթ 95 ա): Ժամանակագիրը մանրամասն կանգ է առնում շահ Աբրահիմի գաղթի ու նրան հետևող սովի վրա և շատ մուշկ գույներով նկարագրում տարածված մարդակերությունը. «Որպէս պատմէին մեզ՝ թէ յերկիրն Այրարաչու, ի գիւղն՝ որ կոչի Ուշական, այր աւմն արարեալ էր վեհ ինչ տան իւրոյ թաքնաբար, որ զայր դարիպական, խաբեալ բերէր ի տուն իւր և սպանեալ պահէր ի վիհն յայն՝ և օր ըստ օրէ սակաւ ուտէր, զոր յետ իմացան բնակիչքն գեղջն»:

Ժամանակագրությունը վերջանում է Ոկէ (1618 թ.) («Ի սույն ամի (այսինքն՝ 1618 թ.) ընկեցին իշխանքն դսուլտան Մուստաֆայն և թագաւորեցուցին...» (մընում է թերթի):

Ժամանակագրության ծափալը 18 էջ է: Նյութը հետաքրքիր է:

№ 6691 Ժամանակագրութիւնն Հայոց պատմութեան: Հավանական է Մանվել վարդապետի:

Ժամանակագրությունը դասավորված է հիշատակված անձնավորությունների անվան ալֆավիտով: Սկսում է՝

«Արգար հաւատաց ի Բրիտոս ի թուին Բրիտոսի 40:
Աբրահամ կթ՝ զկս նստաւ, այն էր Բաղիշեցի. 1730:
Աբրահամ կրեաացի առաջնորդ թէքիրտաղու նստաւ կաթողիկոս: 1734:
Վջ.՝ «Բիւլհանձը մարտիրոս վարդապետն պատրիարկ եղև 1153 օգոստոսի 6:
Օշին յետին նստի արքայ հայոց 1320 Բրիտոսի թուին»:

Ժամանակագրության սկզբում և վերջում, խառն ձևով, ավելացված է նաև զբնիկողմից իր ժամանակի առանձին պատրիարքների նշանակումները, վարդապետների մահը, ի միջի այլոց, կա հիշատակություն նաև 1793 թվին ուսաց գեսպանի Պոլիս գալու մասին «ՌՄԽԲ. թուոջն հայոց և ի սեպտեմբերի Ա-ին գեսպան Ռուսաց եմուտ ի յՍտամբուլ մեծաւ համարձակութեամբ և բազում գօրօք» (թ 1 բ):

«Ի ՌՄԽԲ թուին սոյն թագաւորս հանդերձ ծիրակուաիւքն հրամայեաց ի Ղումդափու եկեղեցւոյ որմոցն կից շինել մի կողմն ջրի խաղնայ և միւս կողմն հավուղ հանդերձ վեց արշին պատերօք...» (1 բ):

Զեռագիրն ընդօրինակված է 1799 թվին, հավանական է, Կ. Պոլսում:

№ 6354 Ժամանակագրութիւնն պարօից և հայոց պատմութեան:

Վերնագրված է «Կարդ թագաւորաց աղպիս հայոց և պարօից՝ թէ ուստի սերեալ թագաւորեցին»:

Սկսում է Աղեքսանդրի նվաճումից և հասցնում մինչև Օշինը (Աևանի որդի)՝ աալով հայ թագավորների և իշխանների համառոտ ժամանակագրությունը:

«Թվին. Ջը.՝ Թէոդորոս Ռշտունի՝ ամս. Ին: Եւ ալք. 1. ասեն:

Թվին. ՃԺԳ՝ Համազասպ՝ ամս է. Թվին ՃԻ. Գրիգոր Մամկոնէն՝ ամս. Ժ...»:

Վերջացնում է 1672 թվով «Եւ Քրիստոսի է մինչև ցառ մեզ են ամք, ՌՌՀԲ. և հայոց. ՌՃԽԼ:

Ջեռագիրն ընդօրինակված է 1672 թ.:

№ 7040 (Ե 175) Ժամանակագրություն Անգրիկավիասի պատմության:

Վերնագրված է. «Թվակառն անաստորակ մինչև առ մեզ»:

Ժամանակագիրը հայտնի չի: Սկսում է «Չրհեղեղ»-ից (Թերթ 287 ա), հիշում է հնագույն շրջանից ավանդական որոշ թվականներ և երբորդ էջում մանրամասը կանգ առնում պատմական կարևոր փաստերի վրա. «ԵՋԹ Սմբատ Մաքրիստոսն զԲզնային Դուհայ շինեաց: ԾՀԱ. Թվին թագաւորն Դաւիթ էառ Տփխիս: Ծհգ. Թվին թագաւորն Դաւիթ էառ զՅանի ի տաճկէն և մեռաւ. և թագաւորեաց որդի նորա Դեմետրէ...»:

Ժամանակագրությունը վերջանում է 1418 թ. «ՊԾԶ. Թվին էզալին մարա եկն զԱրճէշ շինեաց զգուժքէթն Ըռագին: ՊԿԷ. Թվին Իսկանդ Միրզան թագաւորեաց» (Թերթ 290 ա):

Ժամանակագրության ծախարը 7 էջ է: Վերջին մասում արված փաստերը հետաքրքիր են և վստահելի:

№ 7117 Ժամանակագրություն հայ կաթողիկոսների:

Վերնագրված «Թիւբ աւուրց կաթողիկոսաց»:

Ժամանակագրությունը գտնվում է Թովմա Մեծոփեցու պատվերով Հովհ. Արճիշեցու արտագրված ժողովածույում: Ի միջի այլոց, պիտի ասել, որ նույն ձևագրում է գտնվում և աղվանից այբուբենը, որը հրատարակվեց պրոֆ. Շանիձեյի և գոցենա Աբուլաձեյի կողմից:

Սկ. «Աւուրցն Իրիգուր. 1 ամ: Առխատպեա. է: Վրթանկա ժե...»:

Վջ. «Յակոբ. դեղ մահու արբացին սմա: (այնուհետև երկու և կես տող ջնջված է) Գրիգոր Թանձողասն և հրով (?) սպանին: Տէր Պողոս յԱյրարատյան Գաւառէ՝ դեղ մահու արբացին: Կոստանդին Թ՝ նոյնպէս սմա դեղ ետուն և սպանին: Գրիգոր. Գ՝ ի [ս]որա աւուրքն աջն դարձաւ ի գաւառ իւր»:

№ 7617 (682) Տարեգրություն Վահան վարդ. Բասաւմյանի էջմիածնում տեղի ունեցած քաղաքական անց ու դարձի:

Սկսվում է հեղինակի առաջարանով:

Վերջանում է էջ 621—629 «Մշակ» լրագրի Պետերբուրգի և Մոսկվայի քուրմերի դէմ ուղղած հարուածների առիթով» գլխով:

Մանրամասը արված է իր ժամանակի կարևոր դեպքերը: Սկսում է Գեվորգ 4-րդ կաթողիկոսի անվանակոչությունից, մանրամասը կանգ է առնում իր կենսագրության վրա, այնուհետև տալիս է ծանոթ եպիսկոպոսների և վարդապետների բնութագիրը: Մի ամբողջ գլուխ նվիրում է Նազիր Շահի և մի շարք այլ քաղաքական կարևոր անձնավորությունների էջմիածին դալուն և նրանց էջմիածնի նկատմամբ ունեցած վերաբերմունքին: Երեք գլուխներում մանրամասն խոսում է զպրոցների, հատկապես էջմիածնի ձեռարանի վրա: Մի գլուխ նվիրում է եկեղեցական կարվածների, վերնագրելով «Եկեղեցապատկան կալուածների վերաբերմամբ»: Նա այստեղ հաղորդում է արժեքավոր փաստեր Անդրբլկովիասի անտեսական կյանքի, հատկապես էջմիածնի վանքապատկան կալվածների վերաբերյալ: Առաջին գլխում տալիս է արտասահմանում իր կատարած ճանապարհորդությունը:

Տարեգրությունը մեծ արժեք է ներկայացնում նոր շրջանի պատմության համար:

№ 7841 (1076) Ժամանակագրություն ընդհանուր պատմության:

Անխորադիր փոքրիկ ժամանակագրություն՝ կազմված ոմն Հակոբի կողմից: Սկսում է Սամսոն քաղաքի 1420 թ. հրդեհից. «Յամի տեառն ՌՆԻ ի Սամսոն քաղաք, որ է մերձ ծովին Պոնդոսի, կրակ անկաւ և

դքաղաքն առհասարակ այրեաց ծայրէ ի ծայր...» (Թերթ 316բ, 2-րդ սյունյակ):

Վերջացնում է 1635 թվականի մի քանի գեպքերի մանրամասը նկարագրութեամբ. «Այսմ ամի Սոնդքարն երեկ երևան, էառ, Մուռթուզայ փաշէն եթող բերդումն, ինքն գնաց Թարվէղ. անչի դարձաւ իւր աշխարհն: Այսմ ամի Լէհաց թագաւորն դեօպառ առաքեաց մօտ շահ Սաֆին. շահ Սաֆին պարոն աէր Օգոստիանոս արքեպիսկոպոսն առաքեաց լէհաց աշխարհն մօտ թագաւորն ըՍտանիսլաւ, զիս, Յակոբս, Յիսուսի ընթրեաց վերայ խնամօղ կարգիս միաբանողաց և աջորդ ժողովրդեանն: Այս ամի Մուրթուզա փաշէն գերացուց գաւառս ԳՃԻ գերի, Ապարաներոյ գնաց, և դամենայն սպանածն, տարածն օլքէս դուրս ելաւ Ռեճ ջան. դարձեալ այս ամի շահ Սաֆին էրեկ գնաց բերդին վրայ, Գ ամիս նստաւ, մարտի ժե օրն երիշ ելաւ բերդին վրայ, Սիրհաճին առին, մարտի ԻԲ բերդն առին: Մուրթուզա փաշէն մեռաւ: Շխիջան փաշէն Մէիմուն փաշէն և այլ բազում փաշունիք և գէրմնի բանեց ողորկեց Ղահրան դալէն, Մուրատ բէկն, Թահմազ Ղուլի խանն, որ բերդն աւելին, դօնմիշ ելան, հետ խոնթարին գնացին. շահն երբ յետ դարձաւ, օլքէս գնաց ի գանկատ Մախսուտ սուլթանին, մինչև Արտաւէլ այն տեղն սուլթանութիւնն կտրեցին, սուլթանութիւն ավին իւր տղին Իմամ դուլի բէկին» (Թերթ 318բ, 2-րդ սյունյակ):

Ժամանակագրութեան ծավալը չորս էջ է: Հաղորդած տեղեկութեանները վստահելի են և հետաքրքիր:

№ 7993 (822) Ժամանակագրութեան բյուզանդական կայսրների Արեակունյաց և Բագրատունիների:

Վերնագրված է «Կայսերք Հռոմայեցւոց և գործք նոցա»:

Սկսվում է Գայոսից. «Գայոս, որ կոչեցաւ Յուլիոս՝ ամս. Գ...» (Թերթ 193ա):

Այդ կարգով ժամանակագիրը տալիս է նըրանց կարևոր գործերի մասին համառոտ տեղեկութեաններ, հասցնում է մինչև հիսուն յոթերորդ կայսրը—Հուստինիանոս. «Յուստինիանոս, որդի երրորդ Կոստանդինի՝ ամս Բ. ի սորա առաջին ամին տիրեցին Հիւսիսային ազգն Սաղիրք՝ հայոց, վրաց և ադուանից ի ճԼԳ թուին» (Թերթ 201):

Թերթ 200ա շարունակվում է «Թագաւորք Պարթևաց, որք կոչին Արշակունիք» գլխով: Սկսում է հայոց Հրաչե թագավորից. «Յետ մահուանն Շամիրամայ անցեալ բազում ժամանակաց՝ տիրէր հայոց Հրաչի...» (Թերթ 200ա): Թերթ 202բ սկսվում է «Պատմութիւն Բագրատունեաց («Աշոտ որդի Սմբատայ, որ Ապլարան կոչեցաւ թագաւորէ հայոց...»):

Ժամանակագրութեանը վերջանում է Գագիկի որդի Հովհաննիսով. «Եւ Գագիկ հասեալ ի ժամ ծերութեան, արատաւօք և ողորմութեամբ և անդադար աղօթիւք վախճանեցաւ. և թագաւորեաց Յովհաննէս որդի նորա յԱնի...» (Թերթ 206ա):

Ժամանակագրութեան ծավալը 12 էջ է: Պատմական մեծ արժեք չի ներկայացնում, օգտված է գանազան հայ և թարգմանական պատմագրերից:

№ 8233 (971) Ժամանակագրութեան հայոց պատմութեան: Անխորադիր:

Սկսվում է էջ 119ա-ից. «Թվին ՌՃԳ արեգակն խաւարեցաւ...»:

Վերջանում է էջ 123 «Ի ՌՃԳ թվին ապրիլի Ն Ղափանցի Չաքարիայ վարդապետի աշակերտ Մինաս վարդապետն ի սուրբ էջմիածին եպիսկոպոս օրհնեցաւ նոր կիրակին ի Ղաղարու կաթողիկոսէն Ճահկեցւոյ»:

Մեծ արժեք չի ներկայացնում: Կան միայն մի քանի փաստեր, որոնք հետաքրքիր են: Հեղինակը հավանական է Գավիթ վարդապետն է:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ*)

«Երբ աչ ոսխ էի հեմվում
աչ լեռն էի գեցնիմ հավասարեցնում,
Իսկ երբ ձախ ոսխ վրա էի հեմվում,
ձախ լեռն էի գեցնիմ հավասարեցնում»

Զորորդ դարի երկրորդ կիսում, հայոց Արշակ II թագավորի և Ներսես I Մեծի հետ միասին, հայկական պետականության ամրացման, Հայաստանի անկախության պահպանման, կուլտուր-լուսավորական մի շարք բարենորոգումների, շինարարական ձեռնարկումների և առանձնապես հայկական ուժեղ բանակի կազմակերպման գործում իր պատվավոր տեղն է զբաղում ժամանակի մեծ գործարար, Մամիկոնյանների տան փայլուն ներկայացուցիչ, տաղանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանը:

Մոտ հազար վեց հարյուր տարի է անցել կարճահասակ հսկայի ժամանակներից, բայց դարերի խորքից դեռ մեծ թարմությամբ լավում է Հայկական դնդերին դեպի մարտը կանչող նրա խրոխտ, առնական ձայնը, և երևում են օտար նվաճողների դեմ նրա կատարած սխրագործություններն ու դյուցազնական գործերը:

Վասակ Մամիկոնյանը հեռացել էր Տիրան թագավորի պալատից, կտրվել հայոց աշխարհի քաղաքական կյանքից և փակվել հայրենի Տայոց լեռնաշխարհում, երբ նրան արքունիք է հրավիրում և հայոց զորքերի սպարապետությունը հանձնում Արշակ II թագավորը:

Տաղանդաւոր գործարարը, որ դայակն էր եղել Արշակի և երկար տարիներ սիրել, փայլաբան ու դաստիարակել էր նրան, չի մերժում իր սիրելի պատանու առաջարկը

և մեծ սիրով ընդունում է սպարապետությունը:

Վասակը Մամիկոնյանների տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր և ժամանակի մեծ գործարար. նրա կարճահասակ, բայց ամուր իրանում մարմնացած էին քաջության, անվնեհրության, խիզախության, անձնագործության բոլոր հատկությունները:

«Առյուծասիրտ, քաջ, երկաթաբաղուկ, աներկյուղ, քաջանուն, բարձրահամբավ և հմուտ իր գործին», — այսպես էր հայտնի տաղանդավոր գործարարն իր ժամանակի բոլոր մեծ ու փոքր մարդկանց, հայերին ու հարևան ժողովուրդներին, բարեկամներին ու թշնամիներին:

Նրա համբավը հասել էր շատ ու շատ հեռավոր երկրներ: Նրա գնաքի ուժը տեսել էին օտարների շատ հրոսակախմբեր և նրա սրի տակ ծունկի էին եկել կամ իրենց գլուխը դրել շատ անվանի գործարարներ: Նա պատկանում էր հայ գործարարների այն պլիադային, որոնք իրենց ողջ կյանքը անց էին կացրել հայրենիքի, ժողովրդի անկախության համար մղած հաղթական պատերազմներում, որոնք հաճախ փոքրիկ, բայց միասնական, միաձույլ, հաղթության մեծ հավատով տոգորված գործախմբերով նետվել էին գերազանց ուժերով հարձակվող թշնամու բանակների վրա, ջախջախել և խայտառակ պարտության մատնել նրանց:

Նա արժիմն էր հայոց լեռներին, և այդ

*) Ընդ. Վ. Համազասպյանի այս աշխատությունը դեակոլում է ժողովածույում — որպես Վասակ Մամիկոնյանի կյանքի և գործունեության հանրամատչելի նկարագիր:

համարձակ արծվին Արշակ II առաջարկում է հայոց լեռնաշխարհի ամենից բարձր գագաթը, որպեսզի նա կարողանա այնտեղից հսկել, տիրութիւնն անել հայ աշխարհի սահմաններին և ապահովել հայ ժողովրդի խաղաղ կյանքը:

Վասակ Մամիկոնյանը ծնվել է չորրորդ դարի սկզբներին (309—311 թ. թ.) Տայոց գաւառի էրախանի բերդ-դղձակում: Փոքրիկ, բայց աշխուժ, չարաճճի Վասակը Վաչե սպարապետի կնոջ՝ իր տատիկի, միակ սիրելի թուռնիկն էր:—Նա հաճախ տատիկից լսում էր հեաաքքիւր պատմութիւններ հայ դյուցազնների, թագավորների և դորաւարների սիրագործութիւնների ու նրանց դյուցազնական գործերի մասին:

Հաճախ նա ստիպում էր տատիկին կրկնել Հայկի ու Բելի, «Տորք անգեղի» պատմութիւնները, որոնցից առաջինն՝ իր անկախ ոգով, իսկ եկրորդը՝ իր քաջութեամբ ու ուժով շատ էին դուր եկել նրան:

Վասակը մանուկ հասակից ստանում է զինվորական դաստիարակութիւն: Նրա պապը՝ Վաչե սպարապետը և Արտավազդը, անձամբ դրադվում էին Վասակի դաստիարակութեամբ:

Փոքրիկ Վասակի մեջ նրանք դեռ նրա մանկութեան շրջանում տեսնում էին այն ամենը—ուժ, համարձակութիւն, ճարպկութիւն, ինքնուրույնութիւն,—որոնք հարկավոր էին հայոց ապագա սպարապետին և աշխատում էին նրա դաստիարակութիւնը տանել այն ուղղութեամբ, որպեսզի Վասակը կարող ուժ լինի Մամիկոնյանների տոհմին ժառանգաբար անցնող սպարապետութեան պաշտոնի համար:

Կարճահասակ, բայց ուժի և կորովի տեր Վասակը դեռ պատանի հասակից սկսում է փայլել ընկերական շրջանում խելացի դատողութեամբ, կազմակերպչական շնորհքով, նետաձողութեան, սրամարտութեան, վաղքի, թռիչքի, պարսանդախաղի մեջ: Ընկերների կողմից սովորաբար նա էր զեկավար ընտրվում, երբ խաղեր և մանկական արշավանքներ էին կազմակերպվում Դաստակերտում և նա մեծ շնորհք էր ցուցաբերում ամբողջ խաղի կամ արշավանքի ժամանակ:

Վասակն իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անց է կացնում հայրենի լեռնաշխարհում: Նա անհուն սիրով սիրում էր իր հարազատ երկիրը, նրա բարձր լեռները մերկ ու պիրկ սեպածե գագաթներով, խոր ու ոլորուն ձորերը՝ ահաւի ու սարսափ տարածող մեծ-մեծ ժայտերով, հայրենի երկրի գետերն իրենց վտակներով, թափուտ անտառները մեծ ու փոքր բացատներով, շրջանաձև պար բունած սարերն՝ իրար սեղմված սարահարթերով, աղբյուրներն՝ իրենց պղղ ու զուլալ ջրերով, սարահարթերից վազող առվակները՝ մեղմ խոխոջիւնով, լայնածավալ դաշտերը, արոտներն ու մարգագետինները, տանձի, խնձորի, թզի այգիները, գեղեցիկ սպարտեզները, լեռներում, ձորերում, դաշտերում ու անտառներում աշխատող հայ շինականին, նրա երկրի սահմաններում վեր խոյացող բերդերի պարիսպներում պահապան կանգնած քաջ զինվորներին, լեռներից ու բարձունքներից փունջ կազմած հեքթաթային հայոց աշխարհի ամբողջ ժողովրդին:

Նա սիրում էր լեռնցու պարը, դաշտացու հորովելը, հովվի սրինգը, ազատութիւնն ու ըմբոստութիւնն ներշնչող հայկական ազգմերգերը:

Փոքր հասակից նա շատ էր լսել անավոր ու սարսափելի պատմութիւններ՝ այդ գեղեցիկ աշխարհում դարեր շարունակ առատութեամբ հոսած արշան գետերի մասին: Իրսի թշնամիները՝ թալանչի հռոմեացիների ավազակային լեզեոնների, նրանց կատարած հարձակումների, ավերածութիւնների, դադանութիւնների, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Կրասոսի, Հուսի այդ սյուների արշավանքների, Տիգրան մեծի ու Միհրդատ Պոնտացու կազմակերպած դիմադրութեան, հաջող պարտիզանական կռիւլների, և Հայ Արտավազ թագավորի կազմակերպած թատերահանդեսի մասին, երբ Յասոֆը՝ դեն զնելով Պենթեոսի դիմակը, խլում է ազգադաշտից նոր բերած հռոմեական գոռ դորավար Կրասոսի դլուխը, և արտասանում

Մենք բերում ենք լեռներից
Մեր տունը՝ նոր սպանած
Դադանը, բախտավոր մի որս:

«Կրասոսի նման պետք է գլխատվեր նաև շուն Անտոնիոսը, հաճախ զրույցի ժամանակ սեղմելով բուռնցքը՝ բացականչում էր Վասակը, այն Անտոնիոսը, որը խայտառակված արևելյան արշավանքից, խարեությամբ և ստոր միջոցներով, սրիկայաբար իր մոտ կանչելով Արտավազդին, կալանավորում է նրան և լիտիաբար, որպես հաղթանակի ապացույց՝ ընծայում է իր սիրելի Կլեոպատրային»:

«Հոռմեական և պարսկական բոլոր զորավարներն ու կայսրները խաբեբաներ, թալանչիներ, գաղաններ ու ավազակներ են» ասում էր իր ընկերներին Վասակը:

«Արշավանքներ, ավերածություններ, գաղանություններ ու արյունհեղություններ— սրանք են եղել հոռմեական և պարսկական բարբարոս զորաբանակների դարերի գործը: Այդ գաղաններն ու մարդակերներն էին, որ դարեր շարունակ քանդում ու ավերում էին մեր հեքյաթային աշխարհը, նրա գեղիցիկ քաղաքներն ու տաճարները, դաստակերտները, խաղաղ գյուղերն ու ավանները: Նրանք թալանում, կողոպտում էին հայ շինականին, գերում և առևանգում մեր գեղեցիկ հարսներին ու աղջիկներին, քույրերին ու մայրերին, աքսորում ու գլխատում մեր անվանի զորավարներին ու թագավորներին, կրունկի տակ առնում մեր ամբողջ երկիրը և հոռմեական «հեծյալները» քմահաճույքին թողնում:

Ներկա Դիոկղեաթանոսները, Կոստանդները, Վարազ-Շապուհները և Յովհնոսները նույն ստոր սրիկաներն են, ինչ որ եղել են իրենց նախնիներ՝ Պոմպեոսները, Կրասոսները, Օկտավիանոսներն ու ուրիշները: Նրանք խաբում են և բարեկամ ձևանում, երբ դու ուժեղ ես, հարձակվում և չեն խնայում քեզ, երբ դու քնած ես:

Նրանց ոչ մեկին չպետք է հավատարմ նրանց պետք է վճռել, հենց որ նրանք երևան, իսկ վճռելու համար հարկավոր է ուժեղ զինվորական ուժ և ամուր պետականություն»:

«Զինվորական ուժ» և «ամուր պետականություն» բառերը Վասակը հաճախ լսում էր սպարապետ Վաչե պապից և նույնը կրկնում իր ընկերներին:

Երիտասարդ հասակում Վասակին Արտավազդի հետ միասին, Վաչե սպարապետը հաճախ մասնակից է դարձնում օտարերկրյա հրոսակախմբերի դեմ մղվող կռիվներին, որտեղ երիտասարդ զինվորը մի շարք ճակատամարտերում աչքի է ընկնում իր քաջագործություններով, իր զինվորական տաղանդով և հռչակվում որպես անվանի զորավար:

Տիրան թագավորը սիրում ու հարգում էր տաղանդավոր զորավարին և դրա համար էլ Վասակին է վստահում իր Արշակ որդու դաստիարակության ու կրթության գործը:

Վասակը մեծ սիրով է ընդունում այդ պատվավոր գործը: Նա շարունակ պատանի Արշակի հետ էր: Քաջ զորավարը ոչ միայն պատանու դայակն էր հանդիսանում, այլև նրա լավագույն խաղընկերն էր, մեծ եզրայրը, հայրը և ուսուցիչը: Վասակը, Արշակին հաճախ պատմում էր լսած և կարգացած պատմությունները, հոռմայցիների և պարսիկների ավազակային հարձակումների, նրանց կեղծ ու զզվելի զիվանադիտության, հայ ժողովրդի ազատատենչ ոգու, նրա անկախության համար մղած պատերազմների և առանձին հերոս զորավարների և հայրենիքի գործին նվիրված զինվորների քաջագործությունների մասին. նա պատանու մեջ ատելություն էր սերմանում դեպի բռնակալ հոռմայցիներն ու պարսիկները, և սեր՝ դեպի իր հարազատ հայրենիքը, ժողովուրդը և նրա անկախությունը:

Արշակը կլանված լսում էր իր պատկառելի ուսուցչի բոլոր պատմությունները և երբեմն՝ կրկնելով էժան դնով փառքի ձգտող հոռմեական արքայազակ զորավար Կրասոսի գլխի պատմությունը, աչքերը կկոցած ասում. «Մեր հողը մտնող բոլոր կայսրներին և զորավարներին պետք է հենց այդպես գլխատել»:

Վասակ Մամիկոնյանը, Արտավազդի հետ միասին, հեռանում է արքունիքից, չկարողանալով տանել Տիրանի քմահաճ ներքին քաղաքականությունը, որը Հայր Մարգարեի ցուցումով, հողի համար անխնա կոտորում էր Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերին, չխնայելով նույնիսկ փոքր երեխաներին:

Թե որքան արյուն էր հոսում հայոց բարձր լեռներում, կամ առատ արցունք թափվում խաղաղ քաղաքներում, դաստակերաններում և դյուղերում, այդ մասին նա միայն եկվորներից էր իմանում և ջղած-գորեն սեղծում էր բուռնցքը: Ծմվում էր հայ զորավարի արի սիրտը, լցվում դառնությամբ և ատելությամբ դեպի օտարերկրյա թշնամին, բայց ուժի բացակայությունը ստիպում էր լռել առանց զորքի զորավարին, և դիտել դեպքերի զարգացման հետագա ընթացքը:

Բայց տաղանդավոր զորավարին չի վիճակվում երկար փակված մնալ հայրենի դավառում: Երկրի անկախության շահերը պահանջում էին հետ դնել ամեն մի ներքին տարածայնություն:

Պարսից Շապուհ II (310—379 թ. թ.) արքայից արքան, որին հայ ժողովուրդը կոչում էր Շապուհ-Վարադ, 350 թվին կեղծ բարեկամական հրավերով, խարեությամբ իր մոտ տեսակցության է կանչում Հայոց Տիրան թագավորին, ամարդի ձևով կալանավորում և շիկացրած երկաթով կուրացնում է նրան, որպեսզի զրանով իսկ վերջ դնի հայկական ինքնուրույն թագավորությանը և կատարած լինի Մասանյանների վաղեմի բաղձանքը:

Տիրանի կուրացման լուրը կայծակի արագությամբ տարածվում է հայկական լեռներում. գալիս-հավաքվում են նախարարները, ավագները, կուսակալները, ազատները և առնիկները, բոլորը միաբան, բոլորը վրեժի հատուցման երդումով: «Սպա միաբան ժողովի հավաքվեցին Հայաստան երկրի մարդիկ՝ մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, երկրների կառավարիչները, ազատները, զորահրամանատարները, դատավորները, պետերը, զորավար իշխանները, անգամ շինականներից ուսմիկ մարդկանցից (ոմանք) ¹⁾»:

Հայ անվանի զորավարները՝ հավաքված զորագնդերի գլուխն անցած՝ կտրում են պարսից ներսեհ զորավարի ճանապարհը և

կանգնեցնում նրա զորաբանակների շարժումը դեպի Հայաստան:

Շապուհ արյունարբուն վերագարձնում է հայոց Տիրան թագավորին իր ընտանիքով, բայց կույր Տիրանը այլևս անկարող էր հայոց թագաւոր լինել:

350 թվին Արշակ II-ին է անցնում հայոց թագաւորական գահը:

Իր թագաւորության առաջին օրերին Արշակ երկրորդը պալատ է հրավիրում և հայոց սպարապետության պաշտոնը հանձնում իր սիրելի ուսուցիչ, ականավոր զորավար Վասակ Մամիկոնյանին:

Կատարվում է Վասակի տարիների ցանկությունը. նա իր ձեռքումն էր կենտրոնացնում Հայոց զինվորական ուժը, իսկ պետության գլուխ էր կանգնում իր դասախարակած Արշակը, որն իր կազմակերպչական, զինվորական տաղանդով ոչնչով չէր զիջում ուսուցչին:

Իժվար չէր հիմա վերականգնել հայոց աշխարհի անկախությունը և դուրս քշել հայկական հողից հռոմեական և պարսկական բռնակալ զորաբանակներին, կայսրների ու թագավորների «աչք ու ականջներին»: Դրա համար հարկավոր էր երկրում միասնություն, ամուր պետականություն և մեկ հրամանատարության ներքո զորժող կազմակերպված ուժեղ բանակ:

Երկրում միասնություն և ամուր պետականություն ստեղծելու համար հարկավոր էր նախ սանձել կենտրոնախույս տրամադրություններ ցույց տվող նախարարական տներին, նրանց, ովքեր թագավորական թագի համար հաճախ խաղալիք էին դառնում հռոմեական կայսրների, պարսկական թագավորների ձեռքին և ջլատում երկրի ուժերը, ովքեր թերագնահատելով հայկական զորքի և թագաւորության ուժերը, վախկոտությամբ առաջարկում էին Հռոմի կամ Պարսկաստանի վասսալ դառնալ:

Վասակը՝ Արշակի հետ միասին՝ անողոք դատաստան էր տեսնում նման թուլամորթներին, պետության ուժերը ջլատողներին, վախկոտներին, երկրի դավաճանների հետ: Այդպես են վարվում Արշակի եղբոր որդի Գնեղի հետ,

¹⁾ Փալատոս. «Պատմություն Հայոց» էջ 5 :

որը Բյուզանդիայից վերադառնալուց հետո բնակութեան է հաստատում Կուաշ ալանում իր պապի՝ Տիրանի մոտ, և հունասեր կուսակցութեան օժանդակութեամբ ձգտում Արշակից դահլ խելը՝

Վասակ Մամիկոնյանի ձեռքը չդողաց նույնիսկ իր հարազատ եղբոր՝ Վարդան Մամիկոնյանի նկատմամբ, որի դուխը կարում է գլուխը լվանալու պահին նրա համար, որ պարսիկասեր կուսակցութեան պարագլուխն էր և միջնորդը Շապուհ Վարազի։ Նույն ձևով են վարվում Արշակն ու Վասակը Կամսարականների և մյուս ըմբոստ նախարարական տների նկատմամբ։ Ընկճելով որոշ նախարարական տների դիմադրութունը, ենթարկելով նրանց թագավորական իշխանութեանը, Մամիկոնյան դորավարը, իր թագավորի հետ միասին, ամուր կարգ ու կանոն է հաստատում երկրի ներսում։

Վասակը մեծ եռանդով սկսում է հայկական բանակի վերակառուցումը։ Նա ձրգտում էր ստեղծել միասնական, մեկ հրամանատարութեան ղեկավարութեան ներքո գործող բանակ, այնպիսի բանակ, որը կարողանա հաջող կռիվ մղել իր երկրի վրա հարձակվող ուժերի դեմ, որը կարողանա պաշտպանել իր երկրի սահմանները և ամուր պահել ժողովրդի անկախութունը։ Վերջապես նա ձգտում էր ստեղծել այնպիսի բանակ, որը թե՛ իր զինքի տեսակներով և թե՛ մարտունակութեամբ գերազանցեր բոլոր բանակներից։ Եվ Վասակ Մամիկոնյանին երկարատև աշխատանքի միջոցով հաջողվում է ստեղծել նիզակավորների, սակրավորների, աղիզնավորների, սուսերավորների, սաղավարտավորների, հեծյալ և հետևակային կորովալից, աներկյուղ, հայրենիքի և ժողովրդի գործին նվիրված այնպիսի բանակ, որի համբավը տարածվում է հայկական լեռնաշխարհից շատ հեռուները, և որի հետ արդեն լուրջ հաշվի են նստում հռոմայեցիներն ու պարսիկները։

Նա ամբացնում է հայոց աշխարհի բոլոր սահմանները, դասավորելով նախարարական տների առանձին գորարանակները Հայաստանի տարբեր սահմանագլուխներում և ենթարկում է նրանց ընդհանուր հրամանատարութեան։

Օգտվելով Արշակ Ա-ի թագավորութեան առաջին տարիների խաղաղ պայմաններից, երբ երկու ոսոխ պետութեանները՝ Հռոմը և Պարսկաստանը՝ դադարել էին միմյանց բզկտելուց և առ ժամանակ հանգիստ էին թողել հայկական հողը, Արշակ II և Վասակ սպարապետը կարողանում են իրականացնել իրենց ծրագրերը։ Չորրորդ դարի երկու խոշոր գործիչները, Ներսես մեծի հետ միասին, Հայաստանի մի շարք վայրերում, բաց են անում դպրոցներ, հիվանդանոցներ, կարգի բերում պետութեան ներքին գործերը ձեռնարկում մի շարք կառուցումներ և ստեղծում այնպիսի մի ուժեղ թագավորութուն, որի հետ արդեն հաշվի էին նստում այն երկրները, որոնք ամեն մի պատեն առիթով ոսնակոխ էին անում հայկական հողը, և ժողովրդի իրավունքը։

Հռոմայեցի անվանի պատմիչ Ամիանոս Մարկելլինոսի վկայութեամբ՝ հռոմեական կայսրները մեծ նվերներով ցանկանում էին իրենց կողմը գրավել հայոց Արշակ թագավորին, որպեսզի նրա զինվորական ուժը կարողանային օգտագործել իրենց կայսրութեան ծրագրերի իրականացման համար արևելքում։

«Նախ և առաջ աշխատում էին շքեղ, պերճ հագուստներով և տարբեր նվերներով գնել Արշակին...»¹⁾։

Իսկ պարսկական Շապուհ Վարազ արքունարբուն այնպիսի մոտ շքերհամական կապերով էր ցանկանում կապվել հայերի թագավորի հետ, որ նույնիսկ իր գեղեցիկ աղջկան առաջարկում էր Արշակին կնութեան։

«...Տայցեմ զգուստր իմ ի կնութիւն Արշակայ արքային հայոց...»²⁾։

Հայ հռչակավոր պատմիչ Մովսես Խորենացու վկայութեամբ Հռոմի կայսր Վաղենատիանոս Օգոստոսը, Արշակին ուղղած իր նամակում գրում է «Ինքնակալ Վաղենատիանոս Օգոստոս, մեր աթոռակից և թագակից Վաղես կայսեր հետ, հայոց Արշակ թագավորին ողջունի։

1) Аммиан Марцеллин «История», вып. II, кн. 21, стр. 63, Киев, 1906 г.

2) Փավոստոս Բուզանդացի, «Պատմութիւն Հայոց», էջ 133։

Դու պիտի հիշելիք այն չարիքները, որ ձեզ հասան անաստված պարսիկներից, և այն երախտիքները, որ մեզանից գտել էք հնուց ի վեր մինչև քո ժամանակ, և պետք է հեռանայիք նրանցից և մեզ մոտենայիք, որպեսզի մեր զորքի հետ խառնվելով կուվենք նրանց դեմ»¹⁾։

Հոռմի և Պարսկաստանի «բարեկամական» ցույցերը և դիվանագիտական խաղերը Արշակին չեն դարձնում գաշնակից ոչ առաջնի և ոչ էլ երկրորդի։

Հայոց Արշակ II թագաւորը, օգտագործելով Հոռմի և Պարսկաստանի միջև եղած հակասությունը, հաճախ ճարպկորեն հռոմեական դինվորական ուժն օգտագործում էր Պարսկաստանի դեմ և պարսկական դեմքը՝ Հոռմի դեմ։ Երբ Հայաստանի համար սպառնալից թշնամի էր դառնում Հոռմը, նա դաշինք էր կնքում Պարսկաստանի հետ և միացյալ ուժերով շարժում հռոմեական զորաբանակները, իսկ երբ Պարսկաստանն էր Հայաստանի անկախությանն սպառնում, Հոռմի հետ էր դաշնակցում։

Բայց եթե այդ երկու երկրներից մեկն ու մեկը համարձակվում էին վատալ դարձնել Հայաստանը, Արշակ վստահ իր դեմքի, բանակների հզորության և ուժի վրա, դուրս էր քշում Հայկական երկրից օտար զորավարներին ու ներկայացուցիչներին և նույնիսկ «գոռոզաբար» անպատասխան թողնում կայսրներից եկած բազմաթիվ պաշտոնազրեր։ Այդպիսի մի պաշտոնազրի մասին Մ. Թորենացին գրում է «...Իսկ Արշակը նույնիսկ չպատասխանեց այս թղթին, այլ ատամ բացելով նրանց արհամարհեց»²⁾։

Արշակը ճարպիկ դիվանագետ էր, բայց երբեմն չկարողանալով հասկանալ որոշ նախարարական տների մանյովրները և Պարսկաստանի ու Հոռմի դիվանագիտական խորամանկությունները, ընկնում էր թշնամու ծուղակը և ցուցաբերում կամքի թուլության նշաններ։ Այդպիսի դեպքերում իրեն ամբողջ ուժով և վճարակամությամբ հանդես

էր գալիս տաղանդավոր, հնարագետ Վասակ սպարապետը, որն իր մտածված խորհուրդներով կարողանում էր օգնել Արշակին՝ դուրս գալու ստեղծված դրությունից։ Բնորոշ է այդ տեսակետից երկու հետաքրքիր դեպք։

Շապուհ Վարազը, Մամիկոնյանների տան նահապետ Վարդան Մամիկոնյանի միջոցով կարողանում է համոզել Արշակին, որպեսզի հայոց թագավորը կարևոր պետական գործերով տեսակցության դա Տիգրան։ Արշակը իր սպարապետ Վասակի հետ միասին մեկնում է տեսակցության։ Տիգրանում, մի քանի օրվա բարեկամական ցույցերից հետո, Շապուհը նեղը դցելով Արշակին՝ ստիպում է Պարսկաստանին հավատարմության երդում տալ և կանչելով Տիգրանի քրիստոնեական եկեղեցու երեցյներից մեկին՝ ստիպում է Արշակին երդվել ավետարանի վրա։ Արշակը ոչ մի ուժ չունենալով դիմադրության, երդում է ընդունում։ Վասակը տեսնում է, թե որքան վտանգավոր դրություն է ստեղծվում Հայոց երկրի անկախության համար, և հարմար առիթի է սպասում երդումը խախտելու։

Մեկ օր Արշակը Վասակի և այլ պալատականների հետ միասին գնում է Շապուհ Վարազի ախոռատունը դիտելու։ Պարսիկ ազնվական ախոռապետը ոչ միայն նստած տեղից օտքի չի կանգնում և անհրաժեշտ հարգանք ցույց տալիս հայոց Արշակ թագաւորին, այլ թշնամաբար ծաղրելով նրան՝ ցույց է տալիս ախոռի մեջտեղում ընկած խոտի խուրճը և ասում, «այժ Հայերի արքա, արի նստիր այս խոտի խրճի վրա»։

Հայոց քաջ զորավար Վասակ Մամիկոնյանը չկարողանալով տանել իր թագավորի նկատմամբ ցուցադրվող այս անպատվությունը, հանում է սուրը և մեկ հարվածով կտրում անպատկառ ախոռապետի գլուխը³⁾։

¹⁾ «Այն ժամանակ Պարսից Շապուհ արքան կանչում է իր մոտ Հայոց թագավոր Արշակին և մեծարում շատ պատվով ու մեծ փառքով և շատ ոսկու և արծաթի գանձով (իր թագավորութեան ճոխութեան համեմատ)։ Եվ որպես կղեր, որպես որդու դուր-

²⁾ Մ. Թորենացի «Հայոց պատմություն» էջ 187։

Շապուհ Վարադին բոլորովին դուր չի գալիս հայոց գործարարի նման համարձակ քայլը, այն էլ իր սեփական ախոռատնում իր ազնվականի նկատմամբ, բայց իր գայրույթը թաղցնելու համար նույնիսկ գովում է Վասակ Մամիկոնյանի արարքը և մեծամեծ նվերներ տալիս քաջասիրտ և տիրասեր սպարապետին, որպեսզի առիթ չտա հաստատված «բարեկամության» խափանման¹⁾։

գուրում է, ու տալիս նրան Ատրպատական աշխարհում երկրորդ մեծ իշխանությունը։ Եվ ուրախության ժամին միասին բաղմուն էին միևնույն գահի վրա դարդարված միագույն, միանշան, զգեստով։ Եվ պարսից թագավորը նամանատիպ թագ է պատրաստում իրեն և նրա համար։

Օրերից մեկ օր, պատահեց, որ հայոց թագավոր Արշակը մտավ Պարսից արքայի ախոռներից մեկը շրջելու, իսկ Պարսից արքայի ախոռապետը նստած էր ներսում ախոռատանը, երբ (նա) տեսավ թագավորին, բանի տեղ չդրեց և չպատվեց նրան, այլեանարգանք ու թշնամանք ևս հասցրեց, ասելով պարսկերեն լեզվով, թե «այժ հայերի արքա, արի, նստի այս խոտի խրձի վրա. այս խոտքերը երբ լսեց Մեծ Հայքի սպարապետը Մամիկոնյան տոհմից, որին Վասակ էին կոչում, մեծ ցասմամբ ու սրամտությամբ բարկացավ և բարձրացնելով սուսերը, որը կապած էր մեջքին, խփելով տեղն ու տեղը հենց ախոռատան մեջ գլխատեց պարսից արքայի ախոռապետին, որովհետև չկարողացավ լսել ու տանել իր թագավորին (հասցրած) անարգանքը. իր մահն աչքի առաջ ունենալը շատ անգամ ավելի էր գերադասում քան իր տիրողի մասին հեզնանքն ու անարգանքը»։ (Փավստոս Բուզանդ «Պատմություն Հայոց» էջ 124—125։

¹⁾ «Իսկ Պարսից թագավորն, երբ լսեց այդ մասին մեծ շնորհի արժանացրեց զարավար Վասակին նրա քաջասրտության և մեծ աներկյուղության վրա դարձանալով, ու քաջությունը և տիրասիրությունը գովելով շատ պարգևներ տվեց ու պատվի արժանացրեց նրան»։ (Փ. Բուզանդ, «Պատմություն Հայոց» նույն տեղում)։

Բայց ոչ մի միջոց չի օգնում պարսից թագավորին. «վիճակը արդեն զցված էր»։ Վասակ Մամիկոնյանը կարողացել էր Արշակի առաջ բաց անել Շապուհի կեղծ ու նենգավոր ծրագրերը, և համոզել Հայոց թագավորին թողնել ամեն ինչ և առանց ժամանակ կորցնելու հեռանալ։

Նման «բարեկամական» ցույց և խոսվություն է պատահում նաև Մծբինի տակ հայերի՝ Հոռմայեցիների դեմ տարած հաղթանակից հետո։

358—59 թվականներին մեծ պատերազմ է սկսվում Հոռմեական և պարսկական երկու աշխարհակալ տերությունների միջև։ Պարսից Շապուհ Վարադը, պարսիկների հաղթանակն ապահովելու համար, օգնություն է խնդրում Հայոց Արշակ թագավորից։

Արշակ Ա-ը հոռմայեցիների ուժը թուլացնելու, նրանց թալանչի դորարանակներին ջախջախելու և արևելքից դուրս վաճառելու համար, չի մերժում Պարսից Շապուհ թագավորի խնդիրը և հրամայում է հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանին կազմել պատրաստել ընտիր դորագնդեր, հոռմայեցիներին չձուլացվող դաս տալու համար։

Վասակ Մամիկոնյանը, որ տարիներ շարունակ, իր սրտում մեծ ատելություն էր պահել դեպի հոռմեական ավազակ լեզեոններն ու նրանց ստոր հրամանատարները, և դեռ մանուկ հասակում հաննիրալյան երգում էր տվի՛ մեծանալու դեպքում վրիժառու լինել շուն հոռմեացիների նկատմամբ, անմիջապես կատարում է իր թագավորի հրամանը։ Քաջ սպարապետը Հայոց աշխարհի բոլոր ծայրերից հավաքում է ընտիր նիզակավորներ, քաջ սուսերավորներ, անվրեսխփող աղեղնավորներ, իրենց գործն իմացող սակրավորներ, զրահավորված հեծյալներ, կազմում առանձին դորագնդեր, կատարում դորատես և առաջնորդում նրանց դեպի հաղթական կռիվ։

Երբ Հայոց 400 հազարանոց բանակը մոտենում է Մծբինին, Վասակ Մամիկոնյանը առաջավոր շոկատների միջոցով կարողանում է տեղեկանալ, որ թշնամին իր գերազանց ուժերով, որոնք ծովի ավազից էլ շատ էին, Մծբինի տակ բռնել է արդեն

կարևոր ստրատեգիական գիւրքեր և սպասուած է հակառակորդի բանակներէ երևալուն, իսկ պարսից բանակները Մծբինի մարտադաշտից դեռ շատ հեռու են գտնուում:

Երբ Հայ գինւորները տեղեկանում են պարսկական զորաբանակներէ ուշացման մասին, իրենց քաջ զորավար Վասակ Մամիկոնյանի հետ միասին գիմում են Հայոց Արշակ Թագավորին և պահանջում չսպասել պարսկական բանակներին և միայն հայկական գնդերով հարձակվել հռոմեացիների վրա¹⁾:

¹⁾ «Ապա Արշակ Թագավորը հրաման տվեց իր սպարապետ Վասակին գունդ գումարել, զորք պատրաստել, և նա անհապաղ կատարեց Թագավորի հրամանը՝ հավաքելով չորս հայրուք հազար կուռ գինւթում գինւորներ, որոնք քաջութեան գործում արիութեամբ լի ընախ պատերազմողներ էին: Նիզակագեղնավորներ, վաղրավորներ, սակրավորներ, որոնք ախոյաններից երկյուղ և անչունէին, հեծյալները ամբողջութեամբ զրահավոր ու պատենապենք, սաղավարտավորներ, զրոշակավորներ զարդարված նշաններով—բազմաձայն փողհարների հետ:

Շարժվեց, գնաց Արշակ Թագավորը բազմաթիվ նախարարներով, անցավ Աղձնիքով՝ իր իշխանութեամբ, գնաց հասավ Արուստաման երկիրը, Մծբին քաղաքի դեմ, որ պատերազմի ճակատամարտի վայրն էր. ապա գնացին տեսան երկու կողմերից պատերազմի համար ժամողրված տեղը:

Իսկ Հունաց զորքերը հասնելով, ինչպես ավազը ծովի ափին, իրար վրա բանակիլ էին բազմութեամբ, իսկ Պարսից զորքերը գալիս էին հասնելու պատերազմի համար որոշված վայրը: Սակայն Հայոց արքայի զորքերը պարսկականից շուտ հասել, կռուց էին առել ճակատամարտի վայրում:

Անգործ նստելուց Հայոց զորքն սկսեց անհամբեր դառնալ, չհաճեցին մնալ կամ սպասել պարսից զորքերին, այլ կամեցան հարձակվել, գիմել, հասնել Հունաց Թագավորի վրա՝ միայնակ, առանց Պարսից զորքերի, մենակ ավարտել պատերազմի գործը: Եվ Հայոց զորքերից ամեն ոք, յուրաքանչ-

Արշակ Ա Թագավորի հրամանով հայկական զորքերի քաջարի սպարապետը հայկական հեծյալ և հեռակային գնդերին առաջնորդում է դեպի հաղթական կռիվ:

Հասել էր ժամը, երբ Վասակ Մամիկոնյանը պետք է իր սրի ուժի միջոցով հաշիվ պահանջեր Հռոմայեցիներից Լուկուլոսի և Պոմպեոսի կատարած ավերածությունների, Անտոնիոսի սրիկայութեան և Հռոմեական լեգեոնների դարերի ընթացքում կատարած ավազակությունների համար: Նա Մծբինի մոտ պետք է կատարեր իր տարիների ցանկութեանը՝ կտրել Հռոմեական դուր զորավարների գլուխը կրասոսի գլխի նման, որպեսզի շուն Հռոմայեցիները վերջնականապես համոզվեին, որ իրենց գեմ հայերը դեռ սրած և ամուր ձեռքում են պահում օտարներին ոչնչացնող իրենց սուրը, որը պատյանի մեջ չի մանի մինչև չոչնչացվեն և արևելքից վերջնականապես դուրս չվանդվեն Թալանչի հռոմայեցիները:

Մծբինի ճակատամարտում Վասակ Մամիկոնյանը, պետք է ցույց տար իր ամբողջ գինւորական տաղանդը, Հռոմեացիներին ջախջախելու և հաղթելու հնարավորութեանը, ցրելու հռոմեական լեգեոնների դարերի ընթացքում ձեռք բերած անհաղթելիութեան առասպելը:

չյուրն ինքնակամ, համարձակորեն արշավում էր, ևս առավիլ նրանց զորավար Վասակը արշավում էր ամեն կողմ, կուպակտոր էր լինում, չէր կամենում (սպասել) մինչև Պարսից զորքերի գալուստը, այլ (ցանկանում էր) ինքը վերջացնել պատերազմի գործը:

Ապա Հայոց զորքերն ամբողջութեամբ չոգեցին իրենց Թագավոր Արշակի առաջ և խնդրեցին որ չպահի իրենց մինչև պարսից արքա Շապուհի գալը, այլ ինչի համար որ եկել են, հրաման տա հարձակվել նրանցից շուտ, քան թե սպասել օտար աշխարհում:

Ավիլի ևս վշտանում էին, որովհետև ավիլի լավ էին համարում մեռնելը, քան օտար աշխարհում հապաղելը» (Փավստոս Բուզանդացի, «Պատմութեան Հայոց», էջ 130—131):

Բաջ Վասակ սպարապետը մեծ վարպետութեամբ կարողանում է Հայկական դնդերը հասցնել թշնամու թիկունքը և հանկարծակի հարձակում գործելով թիկունքից, անակնկալի է բերում Հռոմեական բանակին և այսպիսի մի ջարդ տալիս, որ հռոմեացիներից ոչ մեկին չի հաջողվում գլուխն ազատել Մծբինի մարտադաշտից¹⁾։

Հռոմեական ավազակային դորաբանակների գլխավորն ջախջախման, հայկական դորքի, առանձնապես հեծելազորի, կատարած սխրագործութեանների, հայ դորավարների անձնավերութեան ու աչքի ընկնող քաջագործութեանների մասին լսելով պարսից Շապուհ Վարազը անմիջապես «բարեկամութեան» մեծ տոնախմբութեան է կազմակերպում և մեծ պատիվներ տալիս հայոց թագավորին, իշխաններին և Վասակ Մամիկոնյանին։ Ապա մեծարելով Հայկական դորքին, նրա քաջ դորավարներին ու անհաղթ Արշակ թագավորին, իր գեղեցիկ դստերն ի նշան հայ-պարսկական «անխախտ» դաշինքի առաջարկում է Արշակ թագավորին կնութեանս։

«Ապա խոսել սկսեց Պարսից թագավոր Շապուհն իր դորքի հետ, թէ ինչ պատվական պարգևներ, կամ ինչ հատուցում կարող ենք մենք տալ հայոց թագավոր Արշակին, որ այսպիսի դորձ կատարեց, կամ այսպիսի քաջութեան արեց, կամ այսպիսի թշնամիների ջարդեց և այսպիսի պատերազմ մղեց, կամ այսպիսի ճակատամարտի մեջ հաղթեց և այսպիսի անուն ձեռք բերեց մեզ համար, արդ՝ ինչպիսի բարիքներով մենք կարող ենք հատուցել նրան։ Եվ այս-

1) «Ապա Արշակ թագավորը թույլ տվեց նրանց և հանձնեց պատերազմի գործը։ Ապա Մեծ Հայքի սպարապետ դորավար Վասակը կարգեց, կազմեց, պատրաստեց Հայոց ամբողջ դորքը։ Վարեց, ղինեց, ժամադիր եղավ Վասակը. ամբողջ պատերազմող դորքերով Արարատյան գնդով ելավ ընկավ բանակի վրա։ Սրի քաջելով այնպես կոտորեցին, որ կենդանի չթողեցին նրանցից և ոչ մեկին» (Փավստոս Բուզանդացի, «Պատմութեան Հայոց», էջ 131)։

պես մտածմունքների մեջ էր ընկել, թե ինչ պիտի լինի այն, որ ևս տամ նրան։

Ապա Պարսից Շապուհ արքային իր նախարարները պատասխան տվին, և ասեցին, թէ ինչ որ կամենաս, և ինչով ցանկանաս կարող ես հանել նրան, շատ (ունես) դու ոտի, արծաթ, կերպաս և մարդարիտ, հենց ինչ որ ցանկանում ես շնորհել նրան, տուր նրան։ Ապա պարսից թագավոր Շապուհը պատասխանեց իր իշխաններին և ասաց «ինչ որ դուք ասացիք այժմ սեր չէ, եկեք մենք այսպիսի սեր ստեղծենք հայոց արքա Արշակի հետ, որ մինչև հավիտյան նա անբաժան լինի մեզանից։ Կտամ իմ դուստրը կնութեան Հայոց արքա Արշակին և կտամ նրան մեծ իշխանութեան»²⁾։

Շապուհ Վարազի արած առաջարկը թեպետ մեծ ցնծութեամբ է ընդունվում հայ և պարսիկ իշխանների կողմից, սակայն նա բոլորովին չի զարմայնում և չի ուրախացնում Վասակ սպարապետին։

Նրա համար նորութեան չէին արևելյան ղեկավարի կեղծ ցույցերը, բայց հարկավոր էր այդ բանում համոզել նաև Արշակին, որը Շապուհի դստեր գեղեցկութեանից կուրացած՝ կարող էր երկիրը կործանման առաջ կանգնեցնել։

Վասակը, Սյունյաց գաւառի նահապետ Անդովկի հետ միասին, որը Արշակի կնոջ հայրն էր, կարողանում է հասկացնել Արշակին՝ որ այդ շացնող ընդունելութեանը և բարեկամական դաշինքը արևելյան կեղծ դիվանագիտութեան մի նոր, ավելի քողարկված ձև է։ Բարեկամութեան, ազնվութեան և ուխտ հասկացողութեանները Շապուհի համար միայն միջոց են՝ իրեն նպատակների իրականացման համար, որ նույնաման բարեկամական ընդունելութեանից հետո էր, որ նա հանել տվեց քո հարազատ հոր՝ Տիրանի աչքերը, որ Շապուհի ներկա բարեկամական ցույցի նպատակն այն է, որպեսզի մեր կազմակերպած քաջարի Հայկական բանակը թուլացնի Հռոմեական պատերազմում և հարմար մոմենտին ավազա-

2) Փավստոս Բուզանդացի, «Պատմութեան Հայոց», էջ 132։

կային հարձակում գործի մեր հարադատ երկրի վրա և հետ խլի մեր ձեռք բերած անկախութիւնը: «Հումայեցիներին ջարդելը նուէնդիս անհրաժեշտ է, ասում էր Վասակը, բայց մեր տված Մծրինի գասը և ներկա Պարսկա-հռոմեական պատերազմը դեռ տասը տարի ոտքի չի կանգնեցնի հումայեցիներին և այդ ժամանակամիջոցում մենք կկարողանանք պատրաստվել՝ նոր հարձակումների դեպքում անհրաժեշտ հակահարված տալու համար»:

Արշակ երկրորդը՝ ատանց ժամանակ կորցնելու, Վասակի և Անդովկ իշխանի հետ միասին գիշերով թողնում է ամեն ինչ և հեռանում պարսկական բանակից:

«...Սորհուրդ արեց Հայոց թագավոր Արշակը, և գիշերը վեր կացան ինչքան որ մարդիկ կային Հայոց բանակում, հեծան ձիերը և փախան: Եվ տեղում թողեցին խորանները, վրանները, կահն ու կարասին և իրենց ունեցվածքը և իրենց բանակը, և դադանի գնացին, պարսից բանակից ոչ ոք չիմացավ այդ մասին մինչև լուսաբաց»:

Եվ երբ եկավ Պարսից թագավորին բարի լուս մաղթելու ժամը և բոլոր թագավորները, իշխաններն ու մեծամեծները Պարսից արքային բարի լուս մաղթելու եկան, նրանց մեջ ոչ մի տեղ չերևաց հայոց թագավոր Արշակը, իր մեծամեծներով: Ապա պարսից թագավոր Շապուհը հրաման տվեց յուրայիններին՝ գնալ և տեսնել, թե ինչ է պատահել հայոց թագավոր Արշակի բանակում, որ այդքան ժամանակ ուշացավ Պարսից արքային բարի լուս մաղթելու գալ: Ապա գնալով տեսան, որ բանակը թափուր և առանց մարդի է մնացել, որովհետև թողել էին իրենց խորանները, վրանները, հովանոցները, սրահակները, գահույքները, անկողինները և իրենց կահ կարասին, և մինչև անգամ իրենց գանձը: Միայն գեներներն էին վերցրել իրենց հետ և գնացել: Եվ ովքեր գնացին բանակը, եկան ամենը պատմեցին Պարսից արքա Շապուհին: Եվ երբ լսեց Պարսից արքա Շապուհը, որովհետև իմաստուն մարդ էր, հասկացավ իր իմաստութեամբ այն, ինչ որ եղել էր, իսկույն ասաց, թե հայոց թագավորի փախուստը այստեղի

իմ մարդկանց շնորհիվ է եղել, մեղնից, մեքոնցից, այս պայտից են, ասաց, (նրանք), որոնք փախցրին այն մարդին, Արշակին: Ապա իր ավագներից, մեծամեծներից շատերին ձիով դիսպան ուղարկեց հայոց թագավորի հետևից, սիրո և միաբանութեան երդմամբ և հանդիմանութեամբ, որպեսզի հետ դարձնեն և չարախոսութեան խոսքեր մեջ բերելով կշտամբեն:

Եվ չկամեցավ հայոց արքան ունկնդրել Պարսից թագավոր Շապուհի պատգամավորների խոսքերին և այլևս հետ չդարձավ Պարսից երկիրը»¹⁾:



Վասակ սպարապետի բանակում կատարած ձեռնարկումները, Հայոց Արշակ թագավորի վարած ինքնուրույն արտաքին քաղաքականութիւնը, հայկական թագավորութեան ամրացումը չէր կարող չանհանգստացնել պարսկական և հռոմեական բռնակալներին, նամանավանդ, երբ Հայաստանն իրեն ենթարկելու, այն վասալական մի երկիր դարձնելու բոլոր փորձերն անհաջողութեան էին հանդիպել: Շապուհ Վարազը ձգտում էր արագութեամբ ավարտել հումայեցիների դեմ մղվող պատերազմը, որպեսզի հնարավորութեամբ ունենա պատերազմական գործողութիւններ սկսել հայերի դեմ:

Պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ հռոմեական Հուլիանոս կայսրը, ծանր կացութեան մեջ ընկնելով Տիգրիսի և Եփրատի հովտում, չղիմանալով նրա կլիմայական պայմաններին, մահացու հարվածներ կրելով Շապուհի առանձին փոքր զորաբանակների կողմից, որոշում է թողնել Տիգրոսին մտանալու միտքը և վերադառնալ Կորդուաց աշխարհը, որպեսզի կարողանա փրկել իր 65 հազարանոց բանակի մնացած զորագնդերը, բայց ճանապարհին ընկնում է թշնամու արձակած թունավոր նետից:

Հռոմի նորընտիր վախկոտ Հովիանոս կայսրը 363 թվին շտապից ամոթալի և ստորացուցիչ պայմանագիր կնքել Շապուհ Վարազի հետ, որի համաձայն Աղձնիքը, Մոկ-

¹⁾ Փալստոս Բուզանդացի, «Պատմութիւն Հայոց», էջ 134:

քը, Ծավղեքը, Կորդուքը, Ռեհիմենեն 15 բերդերով, ինչպես նաև Մծրին, Սինդարա, Կասարա և Մավրորում քաղաքները անցնում էին պարսիկներին:

Գաշնադուլթյունը միաժամանակ պարտավորեցնում էր Հռոմեական կայսրին չօգնել Հայաստանին, եթե Պարսկաստանը պատերազմ սկսի հայերի դեմ:

«Երբ խաղաղություն եղավ Հունաց թագավորների և Պարսից թագավոր Շապուհի միջև, հունաց թագավորը Պարսից թագավորին տվեց զբաժ ու կնքած դաշինքի նամակ, և գրված էր դաշինքի նամակում այսպես. Տալիս եմ քեզ, ասում է Մծրին քաղաքը, որն Արվաստանումն է, և ասորական Միջագետքը, և Հայոց միջնաշխարհից ձևնաթափ եմ, ասում է, եթե կարողանաս հաղթել նրանց և ծառայության տակ գցել, ևս նրանց օգնության չեմ գա»¹⁾:

Ապահովելով արևմտյան ճակատը և ձևաքերի ազատություն ստանալով արևելքում, արյունարբու Շապուհը 364 թվին ավաղակային հարձակում է սկսում հայոց աշխարհի սահմանների վրա:

«Եվ երբ խաղաղություն եղավ Հունաց թագավորի և Պարսից թագավորի միջև, Պարսից թագավոր Շապուհը պատրաստեց իր զորքերը և շարժվեց մարտով ու պատերազմով Հայոց արքա Արշակի վրա»²⁾:

Արշակ թագավորը սահմանապահ զորամասերից տեղեկություն ստանալով պարսիկների ավաղակային հարձակման մասին, հրամայում է սպարապետ Վասակ Մամիկոնյանին կազմել անհրաժեշտ քանակությամբ զորաբանակներ՝ թշնամուն հայրենի հողից դուրս վճռելու համար:

Պարսիկների դեմ մղվող հաղթական պատերազմներումն է, որ ամբողջությամբ հանդես է գալիս հայ մեծ զորավարի ուժն ու կարողությունը, նրա զինվորական տաղանդն ու ընդունակությունը: Նա մեծ զորավարին հատուկ եռանդով, արագությամբ, հայոց աշխարհի բոլոր ծայրերից, հավաքում

է լավ զինված, վարժված կուռ և կորովալից վեց հարյուր հազարանոց մեծ բանակ, բաժանում զորագնդերի, կատարում զորատես և առաջնորդում նրանց դեպի հաղթական կռիվ³⁾:

Տաղանդավոր զորավորը առաջին անգամ չեք, որ հանդիպում էր պարսկական զորաբանակներին: Նա տարիներ շարունակ փոքրաթիվ, բայց հայրենիքին նվիրված զորաբանակներով, կռվի էր դուրս եկել պարսկա-հռոմեական դերազանց ուժերի դեմ և միշտ պարտության մասնել նրանց: Այդ կռիվների ընթացքում Վասակը կարողացել էր մոտիկից ծանոթանալ պարսկական բանակի խոցելի կողմերին՝ նրանց հրամանատարների ազմական կարողություններին և զինվորների կռվելու ընդունակություններին:

«Բավական է պարսիկ զինվորին նիզակի ծայրը ցույց տալ, և նա սարսափած հեռ կփախչի, իսկ գիշերվա հարձակման դեպքում գլուխը կորցրած ընկերոջը կմորթի»: Այսպես էր բնութագրում հայոց սպարապետը պարսկական զինվորին:

Նա տարիներ շարունակ կարողացել էր լավ ուսումնասիրել մարտի հարձակողական և պաշտպանական տակտիկաները:

Նա բոլորովին ծանոթ չէր Ալիբրիադեսի մարաթոնյան դաշտի հոպլիտական տակտի-

3) «Իսկ Հայոց թագավորի սահմանապահները, որ նստում էին Ատրպատականի Գանձակում, շուտափույթ լուր են տալիս նրան կատարվածի մասին, երբ դեռ նա (Շապուհը) չէր հասել Ատրպատականի սահմաններին: Երբ այդ իմացավ Հայոց թագավոր Արշակը, հրաման տվեց իր սպարապետ Վասակին, պատրաստել ամբողջ զորքերը և հասնել՝ զիմադրություն ցույց տալ Պարսից թագավոր Շապուհին: Ապա արագ հավաքելով մի վայրում՝ հայոց բոլոր զորքերի սպարապետ Վասակը զորահանդես արեց, և հաշվեցին ամբողջը վաթսուն բյուր (600,000) կուռ սպառազինված միասիրտ, միաբան և հավատարիմ, նիզակավոր հեծելազոր» (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց» էջ 138):

1) Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 136:

2) Փավստոս Բուզանդացի, նույն տեղում:

կային և ոչ էլ աշխարհահուշակ Հաննիբալի Ալալյան հանձարեղ անցումին, բայց նրա կազմակերպած հարթավայրային հարձակումներն ու լեռնային անցումները զարմանք էին պատճառում ժամանակի շատ զորավարներին:

Վասակն ուներ հարձակման միանգամայն ինքնուրույն տակտիկա, որը բոլորովին նման չէր սլաքակալան ամբոխավարության: Մարտը սկսվելուց առաջ յուրաքանչյուր զորամաս պետք է գիտենար իր տեղն ու դերը և մարտադաշտում պետք է ժամանակին բռներ իր տեղը համապատասխան դասավորությամբ: Առաջին շարքերում նետ ու աղեղ կրողները, ապա նիզակավորներն ու սուսերավորները և թևերում օժանդակող ու հարվածող հեծելազորը: Հետաքրքիր էր նրա վարած գիշերային հարձակումների տակտիկան, որը կիրառվում էր գլխավորապես թշնամու գերազանց ուժերի առկայության պայմաններում: Վասակ սպարապետը անձամբ զորաբանակից առանձնացնում էր մեկ գունդ և բաժանում փոքր շոկատների, ոչ ավելի 10-ից, ոչ պակաս 4-ից: Բաժանված մանր միավորումները թշնամու խփած ճամբարի տարբեր կողմերից կես գիշերին հարձակվում էին քնած բանակի վրա, իսկ մնացած զորամասերը շրջապատելով ճամբարը սպասում էին ազդանշանին:

Ճամբար մտած զորախմբերը մեծ աղմուկով, գոռում գոչումով արթնացնում էին թշնամուն և սկսում հարվածել: Ահարեկված թշնամին գլուխը կորցրած մութ խավարի մեջ, սկսում էր միմիանց կոտորել: Վասակի շոկատները ամբողջ ճամբարը սուքի կանդնեցնելուց հետո, արագությամբ դուրս էին գալիս թշնամու բանակից և միանում իրենց սպասող զորամասերին: Երբ սկսվում էր միմյանց ջարդող բանակի նահանջը, Վասակի սպասող զորախմբերը փակում էին նահանջող զորքերի ճանապարհը և հիմնովին ոչնչացնում նրանց:

Կովի ժամանակ Վասակի գործադրած ձևերից մեկն էլ գործող բանակի արագաշարժությունն էր: Նա վերջ էր տվել արևելյան բանակներին հատուկ դանդաղացում-թյանը, նրա հեծելազորը, իրեն գործողու-

թյունների արագաշարժությամբ փայլում էր ամբողջ արևելքում: Նա հայտնվում էր թշնամուն անսպասելիորեն, թիկունքում, թևերում, ճակատում, այնտեղ, որտեղ որոշ հաջողություններ էր ունենում հակառակորդը և օգնում իր հետևակ զորամասերին՝ մարտը շահելու համար:

Վասակի կիրառած տակտիկական ձևերը և նրա գլխավորած կովող զորքի նվիրվածությունն ու դեպի հաղթանակն ունեցած մեծ հավատը, ասպնեցնում էին նույնիսկ թշնամիներին:—«(Պարսից Շասուռն Վարադ) ասէր՝ երանի որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն»¹⁾:

Նման դիմված, վարժված և հայրենիքին ու ժողովրդին նվիրված զորք ունենալուց հետո Վասակի համար այլևս դժվար չէր հաղթել թշնամուն, նույնիսկ սլաքակահուսկան դաշնակցության առկայության պայմաններում: Նա արդեն այնքան ուժեղ էր դգում իրեն, որ կկարողանար առանց կողմնակի ուժի օգնության ջարդել և հայրենի հողից դուրս վճռել թշնամուն, եթե նույնիսկ թշնամին դուրս բերեր բացարձակ գերազանց ուժեր: Վասակ սպարապետը որոշել էր թշնամուն թույլ չտալ նույնիսկ հայկական հողը մտնել, և այս որոշումով էլ նա հայ քաջարի զորաբանակներին առաջնորդում է դեպի հաղթական պատերազմ:

Հետախուզությունից մանրամասն տեղեկություններ ստանալով թշնամու ուժերի և շարժման ուղղության վերաբերյալ, սպարապետը որոշում է թշնամուն դիմավորել Պարպատականի սահմանագլխում, և արագությամբ զորաբանակները շարժում է դեպի Պարպատական:

Սահմանագլխում երկու բանակները հանդիպում են միմյանց. տաղանդավոր սպարապետը, առանց ժամանակ կորցնելու, հայկական գնդերը դասավորում է այնպես, որ թշնամին օղակի մեջ ընկնի և միայն մեկ ճանապարհ ունենա նահանջի: Լուսաբացին սկսվում է հայկական բանակի հար-

1) Փ. Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 202:

ձակումը: Հանկարծակիի եկած թշնամին գլուխը կորցրած դիմում է փախուստի, բայց պարսկական ոչ մի զինվոր չի կարողանում գլուխն ազատել ռազմադաշտից, միայն Շապուհ Վարազն է կարողանում գլուխը պըրծացնել Վասակի սրից¹⁾:

Առաջին անհաջող ճակատամարտից հետո Շապուհ Վարազը հավաքում է մեծ թվով զորք, ինչպես Փալստոսն է ասում, «իբրև դաւաղ առ ամին ծովու», բաժանում երեք առանձին բանակների: Առաջին բանակին հրամանատար կարգում Անդիկանին, երկրորդ բանակին՝ Հազարավուխտ անվանի զորավարին, իսկ 3-րդ զորաբանակին գլխավորում է ինքը: Պարսից Շապուհը այս հարձակման համար հավաքել էր անթիվ փղեր, հազարավոր ձիեր, երկրի բոլոր ծայերից հարյուր հազարավոր զինվորներ:

Պարսից Շապուհը կարծում էր, թե իր երեք զորաբանակներին դիմադրելու ուժ չի ունենա Հայոց թագավորը, եթե հարձակումը սկսի մեծ արագությամբ և 3 կողմից: Հայոց Արշակ թագավորը երեք զորաբանակներին համապատասխան ուժերով դիմադրություն կազմակերպելու համար Վասակ սպարապետի հետ Հայոց զորքը համապատասխան ձևով բաժանում է երեք զորագնդերի, որոնցից առաջինի հրամանատարությունը վերցնում ինքը, երկրորդը հանձնում է Վասակին, իսկ 3-րդը Բագասին:

Վասակ սպարապետը պարսից զորավար Հազարավուխտի գերազանց ուժերին հանդիպում է իր գնդերով Վանանդ գավառի Երևոյալ վայրում, որտեղ և տեղի է ունենում արյունալի և դաժան, բայց հայերի համար հաղթական ճակատամարտ:

Երևյալի ճակատամարտում Վասակ զորավարն իր քաջարի բանակին նոր փառքով

է պսակում: Տասնյակ հազարավոր պարսկական զինվորներ իրենց գերեզմանն են գտնում Հայկական հողում—Չախջախված թշնամին ռազմադաշտում թողնում է մեծ քանակությամբ սպանվածներ ու ռազմական ավար²⁾:

²⁾ «Այն ժամանակ Պարսից թագավոր Շապուհը ժողովեց իր անթիվ և անհամար զորքերը, ինչպես ավազը ծովի ափին, և շատ ու շատ փղեր, այնպես որ չկար նրանց թիվ: Երեք մասի բաժանելով զորքերը, երկու գնդերին զորագլուխներ կարգեց Անդիկանին և Հազարավուխտին, և մի գնդին ինքը՝ թագավորն եղավ զորագլուխ: Եվ հրաման տվեց թագավորը զորքերին՝ երեք տեղերից շարժվել մանել, արշավել Հայոց աշխարհը: Այս դեպքերն արագորեն իմաց տվին հայոց թագավոր Արշակին, և նրանց զորավար Վասակին, ապա և նրանք բազմաթիվ զորքեր ժողովեցին աշխարհից, այնպես, որ անհաշիվ էր զորքի բազմությունը:

Եվ թեպետ շատ աճապարեցին, սակայն Պարսից զորքերն արշավում էին Հայոց երկիրը և երեք (կողմերից) ասպատակում:

Ապա Արշակ թագավորը նույնպես իր զորքերը բաժանեց երեքի և տվեց մի գունդը Վասակ սպարապետին, և երկրորդ գունդը՝ նրա (Վասակի) եղբայր Բագասի ձեռքը, որը արևելքյան գործերում անչափ քաջ էր, բայց իմաստության գործերում անմիտ, իսկ մյուս գունդը Արշակ թագավորն ինքը վերցրեց: Եվ տվեց հրաման առաջ խաղալ, պատրաստվել, դեմ առ դեմ մարտ տալ Պարսից զորքերին: Ապա եկավ Վասակ սպարապետը, դատավ Պարսից զորքերի առաջին մասի առաջնորդ Հազարավուխտին, որովհետև հասել էին Վանանդի գավառը Երևյալ անունով կոչվող տեղը, և հարձակվեց Պարսից զորքի դեմ մարտով և սպասեցազմով: Պարտության մատնվեցին Պարսից զորքերը, սկսեցին փախչել, ցրվել: Հասնում էր զորավար Վասակը, բռնում Պարսից բոլոր փաստական զորքերին և կենդանի չէին թողնում ոչ մեկին, և խլեցին մեծ ավար և փղեր» (Փալստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 138):

¹⁾ «Եվ նրանց հետ առաջ ընթացավ հայոց սպարապետ Վասակը, հասավ և պարտության մատնեց պարսից թագավորին: Անխրատիբ բոլոր զորքերին հարվածեցին իրենց սրերով, և Պարսից արքա Շապուհը միաձի ճողոպրեց» (Փալստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 137):

Նման ջարդ կրեցին նաև Շապուհի և Անդիկանի բանակները Արշակ թագավորի և Բաղասի զորաբանակների կողմից:

Այս ճակատամարտից հետո Շապուհ Վարազի համար միանգամայն պարզ դարձավ, որ Հայկական ներկա Վասակյան բանակի հետ զփվար է հաշիվը վերջացնել, բանակ, որը կուվում է մեծ քաջությամբ, աներկյուղ և վարպետությամբ, և որը ունի իր թագավորին, ժողովրդին և հայրենիքին նվիրված տաղանդավոր լավագույն զորավարներ, որը թշնամու նույնիսկ գերազանց ուժերի առկայության զեպքում չզիտե նահանջ, և որը կուվում է անվեհերությամբ մինչև վերջին մարդը, մինչև վերջին շունչը: Եվ Պարսից Շապուհը այդ քաջարի բանակի ուժը փշրելու համար իր գինանոցից հանում է Պարսկական ժանգոտած հին զենքը— պառակտում և դավաճանութուն կազմակերպում Հայոց աշխարհում: Իրա համար նա բավական հող ուներ՝ հանձին պարսկասեր կուսակցության: Շապուհ Վարազն իր մոտ է կանչում և Հայաստանի թագավորության գահը առաջարկում հայ ազնվական Վասակ Մամիկոնյանի քրոջ որդի, պարսկասեր կուսակցության ականավոր պարագլուխ Մերուժան Արծրունուն, որը գահի և փառքի համար ծախելով հայրենիքը, ժողովուրդը, ընտանիքը՝ ուրանում է քրիստոնեությունը և ընդունում պարսկական հավատը:

Իսլամական և ուրացող Մերուժանը Պարսկական մեծ զորաբանակի գլուխն անցած, արշավում է Հայաստանի վրա: Մերուժանին իր ձեռնարկման մեջ մեծ շափով օգնում էր նաև Վասակի կրտսեր եղբայր Վահան Մամիկոնյանը, որին Շապուհը ոչ միայն մեծարել բարձրացրել էր պարսից պալատում, այլև իր Որմզդուխտ քույրն էր ամուսնացրել նրան կնության:

Հայկական բանակները Անգեղտան ստորին գավառներում նստած սպասում էին պարսիկների հարձակման, երբ լուր է ստացվում այն մասին, թե թշնամին Մերուժանի առաջնորդությամբ բոյորովին այլ ուղղությամբ է մտել Հայկական հողը:

Վասակը 10 հազար հեծեալների զլուխն անցած, մեծ արագությամբ հասնում է

թշնամուն, ջարդում, և դուրս քշում Հայկական հողից:

Իսլամական Մերուժանը, Պարսից Շապուհ Վարազը այս պարտությունից հետո առանց դադարի նոր բանակներ են կազմում՝ Հայաստանի վրա մի նոր ամիլի ուժեղ հարձակում գործելու համար:

Պարսից արքան Վասակին հաղթելու համար այս արշավանքի ժամանակ զիմում է մի այլ խորամանկության: Երբ Հայկական զորաբանակները Ատրպատականի սահմաններում նստած սպասում էին Շապուհի բանակին, Շապուհի բանակը Մերուժանի առաջնորդությամբ Աղձնիքի վրայով մտնում է Հայկական հողը, ամերում և ասպատակում Ծոփքը, Անգեղտունը, Անձիտը, Մզուր, Իարանաղի և Եկեղյաց գավառները, անխնա ոչնչացնում բնակչությունը, իսկ կանանց և երեխաներին գցում փղերի ոտքերի տակ գազանաբար տրորում, նստեցնում սայլերի ցցերին, գցում կամերի տակ և շարձարանքներով սպանում¹⁾:

Հայ ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի է կենում պաշտպանելու իր ազատությունը, իր անկախությունը, իր հայրենի հողը: Հայ ազատատենչ ժողովուրդը առյու-

¹⁾ Եվ մինչդեռ Հայոց Արշակ թագավորն իր զորքերով զգուշաբար Ատրպատականի սահմաններում էր, որովհետև այնտեղ սպասում էր Պարսից զորքերին, նրանք՝ առաջնորդ ունենալով Մերուժանին՝ այլ կողմից էին ասպատակում Հայոց աշխարհը:

Որովհետև Պարսից թագավոր Շապուհը անթիվ զորքերի բազմությամբ հորդահոս հեղեղի նման ասպատակելով սփռվում ու ծավալվում էր Աղձնիք, մեծ Ծոփք, Անգեղտան Անձիտ գավառ, Շահունյաց Ծոփք, Մզուր, Իարանաղի և Եկեղյաց գավառների սահմաններով: Այրում էին (նրանք) ամերում և անթիվ մարդիկ սրի քաշում, կանանց և մանուկներին հանում էին սայլերի ցցերի վրա, մի մասին կամերի տակ գցելով կախում էին և բազմաթիվ տղամարդկանց գցում էին փղերի ոտքերի տակ» (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 141—142):

ծի կատաղությամբ, մինչև վերջին մարդը, մինչև վերջին շունչը կռվում է հարձակվող դադանի դեմ դաշտերում, գյուղերում, քաղաքներում:

Երբ Շապուհի բանակները մոտենում են Հայոց նախկին մայրաքաղաք Տիգրանակերտին, Տիգրանակերտի ընակիչները իրենց հայրենի քաղաքի պաշտպանության ժամանակ, Շապուհի հարձակվող գերազանց ուժերի դեմ կռվում են մեծ հերոսությամբ, նրանց պատճառելով շատ մեծ կորուստներ: Տիգրանակերտի վրա կատարած մի քանի անհաջող հարձակումներից հետո, Շապուհ Վարազը ստիպված հետ է քաշվում Տիգրանակերտից Մծբին, ջարդված զորաբանակները կարգի գցելու և նոր ուժեր հավաքելու համար: «Իսկ Շապուհը գալիս է մեր Տիգրանակերտ քաղաքը: Նրա դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ զորքը, որովհետև Սյունյաց Անաիոք (նույն Անդովկ Սյունին Վ., Հ.) նահապետը, որ Արշակի աներն էր և քաղաքի վերակացուն, հրամայեց քաղաքի դռները կողպել Շապուհի առաջ: Եւ ոչ միայն արգելեց մտնել, այլև ոչ պատգամավորներ ուղարկեց նրա մոտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց: Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի ժամանակ շատ պարսիկներ սպանվեցին—Շապուհի գունդը պարտություն կրելով՝ նորից Մծբին դարձավ»¹⁾:

Շապուհը նոր թարմ ուժեր հավաքած երկրորդ մեծ արշավանքն է կաղնակերպում գևալի Տիգրանակերտ: Բայց նրա կրած առաջին պարտությունը վախեցրել էր պարսից զորավարներին և նրանք աշխատում էին համոզել Շապուհին, որպեսզի նա հրաժարվի կռվի ճանապարհով Տիգրանակերտը վերցնելու իր մտքից և գլխի դիվանագիտության միջոցին²⁾:

¹⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն» Ս. Մալխասյանի թարգմանություն, էջ 195:

²⁾ «Երբ զորքը հանգստացավ ու կրած նեղություններից կազդուրվեց Շապուհը կամեցավ Տիգրանակերտն առնել, բայց նրա առաջապահ գնդերը և լրտեսները չթողին այս բանով զբաղվել»:

Շապուհ Վարազը զորահրամանատարներին խորհրդով գրում է այսպիսի մի թուղթ Տիգրանակերտացիներին «Մաղղեղանց քաջ Շապուհ արքայից արքա, Տիգրանակերտացիներին, որ այլևս չէք հիշվելու արյաց և անարյաց մեջ:

Ես կամենում էի ձեզանից սկսելով բոլոր առաջիկա քաղաքները մուտք գործել խաղաղությամբ և քաջին վայել տղնվակապությամբ: Եւ եթե դուք, Տիգրանակերտացիներդ, որ առաջինն էք, ոչ թե քաջությամբ, այլ իմ ուղևորության ճանապարհի վրա, ինձ հակառակ կանգնեցիք, մյուսներն էլ ձեզանից օրինակ կառնեն նույնպես վարվելու: Բայց իմ դարձի ժամանակ իմ բարկությամբ ձեզ այնպես կվնասեմ, որ նորից օրինակ կդառնաք խելացնոր ստահակներին»³⁾:

Շապուհի թուղթը, ինչպես և սպառնալիքները ոչ մի նշանակութուն չունեցան քաջ Տիգրանակերտացիների համար, նրանք նույնիսկ ծաղրեցին Շապուհի թեթևամտությունը:

Տեսնելով Տիգրանակերտացիների համառությունը Շապուհ արշունարբուն հրամայեց պաշարել քաղաքը: Տիգրանակերտացիները, քաղաքը պաշարող պարսկական բանակների դեմ կռվում էին մեծ հերոսությամբ և ցած գցում պարսիկներին մտացող հազարավոր զինվորներին, իսկ երբ կռիվը մի փոքր դադար էր առնում, պարսիկների վրայից քաղաքացիները բղավում էին «հեռացի՛ր մեզանից, Շապուհ, ապա թե ոչ քեզ առաջինից ավելի մեծ չարիքներ կհասցնենք»⁴⁾:

Շապուհը տեսնում է, որ զժվար է միայն պարսից ուժերով գրավել քաղաքը, զի մում է հոսմայեցի գերիներին, խոստանալով ազատ արձակել նրանց, եթե նրանք կարողանան զբաղվել քաղաքը. «Եթե ձեր կռվե-

³⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն», նույն տեղում:

⁴⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն», նույն տեղում, էջ 197:

լով այս քաղաքն առնեմ, ձեզ բոլորիդ կազատեմ ձեր ընտանիքներով հանդերձ¹⁾։

Հստակացիները մեծ ուժով և պարխապներ քանդելու գործիքներով հարձակվում են քաղաքի վրա.— «Իսկ հույները մոտ գալով, մեծ ուժով պարսպին դեմ դրին էջ կոչված գործիքը։ Սա մի անվավոր մեքենա է, որ քշելով տանում են երեք մարդ։ Նրանց ներքևում կան կացի՛ններ, երկբերանի սակրներ և սրածայր մուրճեր՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկազյան Տիգրանը շինել էր հաստ և ամուր, հիմքից քանդելով, տապալկեցին, գոնեում և բոլոր կողմերում կրակներ վառեցին, և նեղում էին քարեր, նեղեց և տեղեր²⁾։

Սկսվում է դաժան և արյունալի մարտը։ Տիգրանակերպացիները նույնիսկ քաղաք ներխուժած թշնամու դեմ կռվում էին մեծ քաջությամբ պարխապների վրա, փողոցներում, բակերում և աներում, զինք էին վերցնում մինչև անգամ կանայք, ծերունիներն ու մանուկները, սպանվածների հարյուրավոր և հազարավոր գիակներով փակվում էին քաղաքի փողոցները։

Տիգրանակերպի փողոցները և շենքերի հիմքերը լցվում են արյունով— «Բոլոր զորքը ներս մտավ, պարսկական ձեռքը չէր հոգնում, բաղմախողխող սուրը արյունով հագեցնելուց, այնպես որ սպանվածների արյունով լցվում էին հիմքերը։ Իսկ հունական ձեռքը կրակի էր մատնում բոլոր փայտակերտ շինությունները³⁾։

Տիգրանակերպի առումը չափազանց ծանր նստեց Շապուհ Վարազի բանակի վրա և դրա համար—արյունարու գազանը հրամայեց քաղաքը հիմնահատակ քանդել՝ չխնայելով նույնիսկ մանուկներին և ծերունիներին։

Տիգրանակերպի առումից հետո, պարսկական բանակները շարժվում են Հայոց մի շարք բերդերի վրա, բայց Շապուհին և Մերուժանին հաջողվում է գրավել միայն Դարանադյաց գավառի Անի բերդը, որտեղ

գանվում էին հայ թագավորների գերեզմանները։

Պարսից Շապուհը և գավաճան Մերուժանը գերեզմաններից հանել են տալիս հայ թագավորների ոսկրները, Պարսկաստան տանելու համար, որպեսզի դրանով վերջ տրվի հայ Արշակունիների հիշատակին Հայաստանում։

« Եվ քաղմաթիվ բերդեր թողնում էին որովհետև չէին կարողանում մարտնչել ամբությունների դեմ, բայց նրանց ձեռքն ընկավ միայն Դարանադյաց գավառի ամբուց Անի բերդը, որովհետև չարագործ Մերուժանը հնարամտությամբ խորամանկեց այն ամուր բերդը։ Բարձրացան վեր և կործանեցին նրա պարխապները և իջեցրին բերդից անթիվ գանձեր և բաց արին հայոց առաջին թագավորների՝ քաջ զինվոր Արշակունիների գերեզմանները և տարան թագավորների ոսկրներն ի գերություն⁴⁾։

Հայոց Արշակ թագավորը և Վասակ սպարապետը, լուր ստանալով ավազակ թշնամու գազանությունների մասին, շարժում են Հայկական բանակները դեպի թշնամու գրաված գավառները։— Վասակ Մամիկոնյանը շարժվում է դեպի Արարատյան գավառը։ Քաջ սպարապետի գլխավորած բանակը կազմված էր հայրենիքին և ժողովրդական գործին նվիրված, «միաբան» և «քաջասիրտ» զինվորներից, որոնք մեծ ատելությամբ էին լցված դեպի օտար նվաճողը և պատրաստ էին մինչև վերջին կաթիլ արյունը կռվել իրենց ընտանիքների, կանանց, երեխաների և հայրենի հողի պաշտպանության համար⁵⁾։

⁴⁾ Փավստոս Բյուզանդացի «Պատմություն Հայոց», էջ. 143։

⁵⁾ «Ապա երբ այս լսեցին հայոց թագավոր Արշակը և նրա զորավար Վասակը, իրենց զորքերին զորահանգես արին և գտան այն ժամանակ այնտեղ, Վասակ զորավորի ձեռքի տակ վաթսուն հազար ընտիր պատերազմողներ, որոնք միաբան և միասիրտ էին պատերազմական գործերի մեջ, և (պատրաստ էին) հասնել, մարտնչել իրենց որդիների ու կանանց համար, իրենց աշխարհի բնակչության համար դոհել իրենց անձերը, մինչև ի մահ հասնել, մարտնչել իրենց սուրբ եկեղեցու պաշտամունքի, իրենց աստուծո անվան, հավատի համար, իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների փոխարեն»։ (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 143)։

¹⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն», էջ 197։

²⁾ Նույն տեղում։

³⁾ Նույն տեղում։

Վասակ Մամիկոնյանը վախճուն հազարանոց բանակով հանդիպում է թշնամու գերազանց ուժերին, որոնք ըստ Փավստոսի՝ ծովի ավազից էլ շատ էին, Արարատյան դաշտում: Տաղանդավոր դորավորն իր քաջարի գնդերով նետվում է պարսկական բանակի վրա, հիմնովին ջախջախում և հետ խլում հայոց թաղավորների ոսկերչները: Միայն Շապուհ Վարազին և դավաճան Մերուժանին է հաջողվում մի կերպ փախչել պատերազմի դաշտից¹⁾:

Հայ ժողովուրդը օտարների դեմ մղվող ազատագրական պատերազմներում մենակ չէր, նրան օգնում և օժանդակում էին Կովկասյան մյուս ժողովուրդները, որոնք զինք վերցրած Հայկական բանակներին հետ միասին դուրս էին քշում Կովկասի սահմաններից օտարերկրյա հրոսակախմբերին:

Արարատյան դավառի հաղթական ճակատամարտից հետո, երբ Արշակը և Վասակը հաղթական արշավանք են կազմակերպում դեպի Ատրպատական, Պարսկական մնացած բանակները վերջնականապես ջախջախելու համար, Վասակի կոչով Հայկական

բանակին միանում են ալանները, հոները և կովկասյան մյուս ճնշված ժողովուրդները՝ որոնք թավրեշի ճակատամարտում, հայերի հետ կողք կողքի, կովում են մեծ քաջությամբ և պարտության մասնում Շապուհի բանակներին²⁾:

Շապուհ արյունարբուն իր գլխավորած մեծ արշավանքների ճախողումից և թավրեշի ճակատամարտից հետո պարսկական անվանի դորավարների հրամանատարությամբ կազմակերպում է հատուկ բանակներ և մեկը մյուսի հետևից ուղարկում Հայաստան: Մկսվում է Հայպարսկական երկարամյա արյունալից և դաժան պատերազմների նոր շրջանը: Մի շարք տարիների ընթացքում Պարսկաստանի կողմից գերազանց ուժերով ավելի քան քսան երեք մեծ արշավանքներ են կազմակերպվում դեպի Հայաստան, բայց բոլոր արշավանքներն էլ թշնամու համար մեծ կորուստներով հետ են շարվում: Չորրորդ դարի անվանի պատմիչ Փավստոս Բուզանդը, իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ մանրամասն նկարագրել է պարսիկների բոլոր արշավանքները և հայոց քաջ սպարապետ

1) «Ապա զորք ժողովեց Հայոց թագավոր Արշակը, և կուտակեց իր մաս բազմաթիվ զորքեր, ավազի պես բազմաթիվ, և արշավեց Պարսից աշխարհի վրա. ապա Վասակը Հայոց գունդը վերցնելով և հոններին ալաններին հետ միասին օգնականության կանչելով, հասավ օգնության Հայոց թաղավորությանը, ընդդեմ պարսից... Բայց որովհետև Պարսից թագավորն իր ամբողջ զորքերով հենց նույն ժամանակ արշավում էր Հայաստան աշխարհը սրանց վրա, ուստի սրանք շտապելով հասան Ատրպատական և թավրեշում գտան Պարսից թագավորի զորքերին բանակ դրած:

Հասավ սպարապետ Վասակը երկու հարյուր հազարով հարձակվեց պարսից բանակի վրա: Թագավորը ճողոպրելով միաձի փախավ նվ ավարի առան Պարսից ամբողջ բանակը և պարսից ամբողջ զորքի բազմությունը կոտորեցին և անթիվ ավար վերցրին բանակից (Փավստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 145):

1) «Ապա Վասակ սպարապետը վախճուն հազարով առաջ խաղաց, Մարաց երկրի մի ամուր տեղում, թիկունքում թողեց Արշակ թագավորին, սպասավորներին հետ միասին: Եվ ինքը եկավ հասավ հայոց միջնաշխարհը Այրարատ գավառը: Եվ հասավ գտավ պարսից զորքերին, որովհետև հասել էին խոնավել բազմությամբ ինչպես ավազը ծովի ավին՝ բանակելով Այրարատ գավառի շուրջը:

Ապա հասավ Վասակը իր հետ եղած գնդերով գիշերվա անսպասելի ժամին ընկավ Պարսից թագավորի բանակի վրա: Եվ այստեղ անխտիր սրի քաշեցին պարսից բոլոր զորքերին... (Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 144):

Վասակ Մամիկոնյանի կազմակերպած հե-
րոսական զինադրությունը:

Թեպետ պատմիչը որոշ զեպքերում,
ինչպես պարսկական աշխարհ էլ Հայկական
զորքերի քանակը տալիս է մեծ չափազան-
ցություններով, հասցնելով այն նույնիսկ
միլիոնների, բայց շարադրանքից մեզ համար
հիմնականում մեկ բան է պարզվում, որ բոլոր
ճակատամարտերում էլ պարսկական զորքերի
քանակը գերազանցում է հայկականից, որ
հայերը փոքր, բայց կազմակերպված բա-
նակներով անհրաժեշտ հակահարված էին
տալիս օտարերկրյա թշնամուն:

Պարսկա-հայկական երկարամյա պա-
տերազմի առաջին մեծ արշավանքի համար
Պարսից Շապուհ Վարազը կազմում է 600
հազարանոց բանակ, և Պարսկական անվա-
նի Վին զորավարի առաջնորդությամբ ու-
ղարկում Հայաստան: Հայկական զորաբանակ-
ները շախշախում են պարսկական հրոսա-
կախմբերին և հետապնդում նրանց մինչև
պարսկական սահմանը:

Վին զորավարի զորաբանակի շախշա-
խումից հետո գալիս է Պարսկաստանում
հռչակ ստացած Անդեկան զորավարը 400
հազար զորքով, որը հարձակվում և ասպա-
տակում է Հայաստանի մի շարք գավառները:
Վասակ սպարապետը 12 հազարանոց փոք-
րաթիվ, բայց հայրենիքի գործին նվիրված
բանակով, նետվում է թշնամու բանակի
վրա, հանկարծակի բերում նրանց և ամ-
բողջովին ոչնչացնում Անդեկանի բանակը:
Հայկական փոքրաթիվ բանակի մեծ հաղ-
թանակի լուրը կայծակի արագությամբ
հասնում է Պարսկաստան: Անդեկանի բազմա-
հազար բանակի խայտառակ սպարապետու-
նից կատաղած Շապուհ Վարազը կազմում
է մի նոր ավելի մեծ զորաբանակ Պարսիկ
անվանի Հազարավախտ զորավարի գլխա-
վորությամբ և ուղարկում Հայաստան:

Հազարավախտ զորավարը, որը Ադա-
նյաց երկրից ցանկանում է պատերազմա-
կան գործողությունները ծավալել ամբողջ
Հայաստանում, առաջին իսկ ճակատամար-
տում կորցնում է իր գլուխը, իսկ նրա զո-
րաբանակները բռնում են անկարգ նահան-
ջի ճանապարհը:

Հայաստանի վրա արշավող 900 հազա-
րանոց պարսկական նոր բանակը գլխավո-
րում է կավոսական անվանի տոհմից Իմա-
վանդ Վսեմականը, որի հրոսակախմբերի
գեմ նորից իր անվեհեր զինվորներով կովի
է դուրս գալիս Վասակ Մամիկոնյանը: Այս
կովում Իմավանդ Վսեմականը կորցնում
է իր զորաբանակի մեծ մասը և ինքը
գլուխը խոնարհում Վասակի սրի առաջ:

Վահրիճ զորավարը իր նախորդների
անփառունակ մահը տեսնելով և Վասակ
սպարապետին չձուռացվող դաս տալու հա-
մար կազմում է միլիոնանոց բանակ և ար-
շավում դեպի Հայաստան: Վասակը Վահ-
րիճին ծաղրելու համար միայն 40 հազա-
րանոց բանակով է դուրս գալիս նրա գեմ:
Ճակատամարտը տեղի է ունենում Մախա-
ցեան կոչված վայրում: Արյունալի և դա-
ժան կովում Պարսիկները թողնում են հար-
յուր հազարավոր սպանվածներ ու վիրա-
վորներ և գլուխները կորցրած նահանջում
Պարսկաստան:

Պարձենկոտ Գուժանդ Շապուհը Պար-
սից Շապուհ Վարազից խնդրում է 900.000
զորք հայոց աշխարհը հիմնովին քանդելու
համար: Վասակ սպարապետը մոտիկից ծա-
նոթ լինելով Գուժանդ Շապուհին և նրա
զինվորական ունակություններին, թողնում
է, որ այդ պարձենկոտ զորավարն առանց
զինադրության մասի հայկական սահմա-
նային գավառները Գուժանդ Շապուհը
միամտաբար խորանում է Հայոց երկրի ներ-
սը, մտածելով, թե բավական է եղել իր քաջ
անունը, որպեսզի հայկական զորքը գլուխը
կորցրած նահանջի: Բայց ի զարմանս
Գուժանդ պարձենկոտի, երթաշարքով անց-
նող պարսկական բանակի թևերից և թի-
կունքից հանկարծակի հարձակվում են Վա-
սակ Մամիկոնյանի զինքը և անխնա հար-
վածում հարձակուձից խուճապի մատնված
պարսից զորքին: Գուժանդ Շապուհը ընկ-
նում է ճակատամարտում, իսկ գավառան
Մերուժանը, որ առաջնորդում էր պարս-
կական բանակին, այս անգամ ևս կարողա-
նում է գլուխն ազատել Վասակի սրից:

Պարսից արքան կազմում է նոր զորա-
բանակներ, որոնք «անչափ և անթիվ» էին

«իրրե գուազ առ ամին ծովում» և Դեհկան Նահապետի գլխավորությամբ ուղարկում Հայաստան: Դեհկանը նույնպես պարտության է մատնվում և գլուխը խոնարհում քաջ սպարապետի սրի տուաջ:

Չեն դադարում պարսկական բանակների արշավանքները դեպի Հայաստան: Կաղմում և պատրաստում են նորանոր ընտիր զորագնդեր, որոնք անթիվ փղերով և մեծ պատրաստությամբ հարձակվում են հայոց երկրի վրա: Ընտիր զորաբանակների հրամանատար Սուրեն Պահլավը մեծ հույս է ունենում, որ նոր արշավանքների ժամանակ կկարողանա բռնել Վասակին և նրա գլուխը նվեր ուղարկել իր Շապուհ արաքային: Սակայն կռվի դաշտում իր գլուխն է հանձնում Վասակին: Անվանի զորավար Վասակ Մամիկոնյանի 30 հազարանոց քաջարի բանակի մահացու հարվածներից հողմացրել են լինում պարսից ընտիր զորաբանակները և կռվի դաշտում ընկնում է նրանց հրամանատար Սուրեն Պահլավը:

Պարսից Վսեմական զորավարի արշավանքը նույն տխուր վախճանն է ունենում ինչ որ Սուրեն Պահլավինը:

Պարսիկ Ջիկ Նվիրակապետը նախաձեռնում է մեծ արշավանք դեպի Հայաստան բազմաթիվ վարժված գուժարտակներով, բայց սա նույնպես իր գերեզմանն է դառնում Հայաստանում:

Դեպի Հայաստան է արշավում Սուրեն Պարսիկը վեց հարյուր հազարանոց բանակով: Վասակը նրանց դեմ դուրս է բերում միայն 10 հազար զինվոր: Տաղանդավոր սպարապետը լավ տիրապետում էր թշնամու գերազանց ուժերի դեմ կռվելու զինվորական արվեստին: Այս անգամ թշնամու վրա հարձակումը նա սկսում է խորը գիշերին: 10 հազարանոց հայկական բանակը գիշերով մեծ զգուշությամբ մտնում է քնած թշնամու ճամբարը, մեծ աղմուկով, գոռում-գոչումով արթնացնում պարսից զորքին և սկսում անխնա ջարդ տալ շիրթված, քունը գլխների պարսիկներին: Թշնամին խուճապահար զիմում է փախուստի, բայց նրանցից ոչ մեկին չի հաջողվում ազատվել մարտի դաշտից: Սուրեն Պարսիկ բանակը գլխովին ջախջախվում է, իսկ գե-

րի ընկած զորավարը շրթայակապ ուղարկվում է Արշակ թագավորին:

Մեծ ուժերով հարձակվող պարսկական անվանի զորավար Հրեվշողումի ինն հարյուր հազարանոց բանակը չդիմանալով Վասակի հասցրած մահացու հարվածներին գլուխը կորցրած փախչում է Պարսկաստան:

Հրեվշողումից հետո դալիս է Շապուհ Վարադի տուաջ մշտապես պարծեցող Ադանայոզան զորավարը, բայց նա նույնպես խայտառակ պարտության է մատնվում Վասակի կողմից:

Պարսից մեծ նախարար Բոյեկանը հարձակվում է Վասակի բանակի վրա՝ մեծ հույս ունենալով իր գերազանց ուժերի վրա: Վասակը Բոյեկան նախարարին ճակատամարտ է տալիս Ատրպատականի Թավրիզում, որտեղ ընկնում է Պարսից մեծ նախարարը, իսկ նրա զորքի մնացորդները անկարգ նահանջում են Պարսկաստան:

Վասակը Թավրիզում այրում է Պարսից թագավորի ապարանքը, որտեղ և գտնվում է Շապուհ թագավորի նետահար եղած պատկերը: Լուր ստանալով Պարսից Վաչագան զորավարի հարձակման մասին՝ Վասակ սպարապետը Արշակ թագավորին թողնում է Դարբունաց ամուր բերդում և արշավում Վաչագան զորավարի 180 հազարանոց բանակի կողմը, հիմնովին ոչնչացնում նրանց և սպանում Վաչագան զորավարին:

Մշկան պարսից զորավարի դեմ մղած համառ կռիվներում Վասակին հաջողվում է հաղթել Պարսկական զորքին և դուրս քշել նրանց Հայկական երկրի սահմաններից:

Դավաճան Մերուժանի առաջնորդությամբ Մարիճ մեծ նախարարի վեց հարյուր հազարանոց զորաբանակները մտնում են Հայաստան, բայց սրանք նորից հաջողութուններ չեն ունենում, Վասակի տված ջարդից միայն Մերուժանն է կարողանում գլուխն ազատել: Հարձակվում է Ջինգիսպետը: Վասակ Մամիկոնյանը Հայաստանի բոլոր կողմերից նոր ուժեր է հավաքում թշնամու գերազանց ուժերին հակահարված տալու համար: Նա տեսնում է թշնամու ուժերի բացարձակ գերազանցությունը, հայկական զորքի փոքրաթիվ զնդերի նկատ-

մամբ և մշակում թշնամուն ոչնչացնելու իր գիշերային հարձակման պլանը: Ձինդկապետ զորավարը իր ինն հարյուր հազարանոց բանակով երևում է Ատրպառականի սահմանագլխում: Վասակի մշակած գինվորական խաղի համաձայն՝ հայերը հեռանում են սահմանագլխից մի փոքր հեռ և թույլ աալիս, որպեսզի թշնամին իր խփած ճամբարում հանդատանա: Գիշերը, երբ թշնամին խորը քնի մեջ է լինում, Վասակ սպարապետի կարիչներն իրենց քաջ զորավարի առաջնորդությամբ մտնում են ճամբարը և անխնա հարվածում թշնամուն բոլոր կողմերից: Խեղճ Ձինդկապետը բախա չի ունենում նույնիսկ արթնանալու:

Պարսիկ Սահստան հանդերձապետի զորաբանակը նույնպես ոչնչացվում է Վասակ Մամիկոնյանի գլխավորած հայ նախարարական բանակների կողմից:

Հանդերձապետի բախտին է արժանանում նաև տակառապետ Շապուտանի բանակը:

Իսթան ու արյունալի Մաղխաղյան մեծ ճակատամարտում Վասակը հաղթում է պարսկական մի նոր ութ հայրուր հազարանոց բանակի, սպանում նրա զորավար Մուսայի հանդերձապետին:

Վասակ զորավարը Հայկական 10 հազար ընտիր զորքով գիշերային հարձակման ժամանակ ոչնչացնում է Պարսից արքայի մի նոր 900 հազարանոց բանակ, որը եկել էր արքայի համբարապետի գլխավորությամբ:

Իսլիս են պարսկական նոր զորազնդեր հռչակավոր մեծ զորավար Մոսիկանի գլխավորությամբ: Հայկական բանակներն ընդունում են պարսից զորավարի մարտահրավերը և ոչնչացնում նրա գնդերը: Շապուհ Վարազը տեսնում է, թե ինչպես Հայկական քաջարի բանակներն իրենց թագավորի և ժողովրդի համար կսվում են մինչև վերջին շունչը, գիմազրում են Պարսկական դերազանց ուժերին առյուծի կատաղությամբ, և պաշտպանում են իրենց հայրենի հողը մեծ անվեհերությամբ, որ հայկական կազմակերպված բանակը իր տաղանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանի

չնորհիվ շատ ու շատ փայլուն հաղթանակներ է տանում պատերազմի երկար տարիների տանյակ ճակատամարտերի ընթացքում, որ իր կազմակերպած բոլոր արշավանքները իդուր են և շին կարող հայկական քաջարի բանակների գիմազրությամբ կտարել ու հայոց աշխարհին ծունկի բերել, որ գենքի ուժով այլևս ավելորդ է Արշակի կամ Վասակի հետ խոսել: Պետք է նորից գիմել գիվանագիտական խորամանկությամբ: Եվ նա դիմում է գիվանագիտության նոր կեղծ միջոցներին: Շապուհը աղերսող հրովարտակներ է ուղարկում Հայոց Արշակ թագաւորին, խնդրելով վերջ աալ սկսված պատերազմին և վերականգնել խաղաղությունն ու բարեկամությունը երկու պետությունների միջև¹⁾:

Արշակը և Վասակը լավ գիտակցում էին Շապուհ Վարազի մտադրությունը և ձգտում էին պատերազմը շարունակել մինչև թշնամու վերջնական ջախջախումը, բայց հայ միջնաշխարհում ստեղծված ներքին դրությունը թույլ չէր տալիս իրականացնել այդ միտքը:

Պարսիկների դեմ երկար տարիներ մղվող կռիվներում Հայաստանը զարձել էր պարսկական և հայկական զորաբանակների ուղղադաշտ: Երկար տարիների պատերազմների ծանր հետևանքները արդեն զգացնել էին տալիս իրենց երկրի ներսում: Ավերված գյուղեր և քաղաքներ, ամայացած դաշտեր, հարյուրավոր և հազարավոր գաղթականներ, ընդհանուր հոգնածություն և դժվարություններ ու սով այս բոլորը թերևս հնարավոր լիներ տանել, եթե երկրի ներսում նորից ծայր առած չլինեյին մի շարք նախարարական տնրի դավաճանական ապստամբություններ, ու

¹⁾ «Ապա Պարսից արքա Շապուհը մեծ ազաչանքով, նվիրենքով և հրովարտակներով և սիրով իր մոտ կանչեց Արշակին, որպեսզի սրանից հետո իրենց մեջ սեր, խաղաղություն և մեծ բարեկամություն ստեղծեն» (Փալտոսս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 158):

րոնք երկրի ծանր օրերին դավաճանելով ժողովրդին և ժողովրդական դործին, խմբերով անցնում էին թշնամու կողմը և կազմում Արշակի, Վասակի բանակների դեմ, թիկունքից հարվածում ժողովրդական բանակներին: Հայ երկիրը նման էր ալեկոծված ծովի, որի ահեղ ալիքների դեմ այլևս չէր կարող կռվել Արշակի և Վասակի մասոված նավը—հարկավոր էր մտածել այդ նավը մոտիկ նավահանգիստ հասցնելու մասին:

«Երեսուն և չորս տարի պատերազմեց Հայոց երկիրը Պարսից թագավորի դեմ, որից հետո երկու կողմերն էլ հողնեցին, լքվեցին, պարավեցին և սկսեցին ցրվել հայոց թագավորի բանակից, թողին իրենց արքա Արշակին: Այս դավաճանության սկիզբը դրին մեծամեծ ավագանիները, նախ բղիշխն Աղճնեաց և Նոշիրական բղիշխը և Մահկերտան և Նիհորականի և Դասընտրէի և Աղճնյաց ողջ նախարարութունը և ազստամբեցին հայոց արքայից Աղճնյաց տոհմն ու զորքը և գնացին Պարսից արքա Շապուհի մոտ, և Հայաստանի կողմից պարխոյ կառուցեցին, որը Չորս են կոչում, դռներ դրին և անշատեցին իրենց աշխարհը Հայաստանից:

Եվ սրանից հետո Գուգարաց բղիշխը, սրանից հետո Չոր գավառի տերը և Կողբ գավառի տերը, և նրանից հետո Գարգմանաձորի տերը, և նրանք, ովքեր մոտ էին և սահմանակից նրանց, առանց բացառության ազստամբեցին Հայոց թագավոր Արշակից և անցան, գնացին միացան Պարսից թագավոր Շապուհին: Ազստամբեցին Հայոց թագավոր Արշակից (նաև) Արցախ և Տմորիք անառիկ գավառները և Կորդվաց անմատչելի աշխարհը, ապա գնաց ու միացավ Պարսից թագավորին նաև Կորդվաց գավառի տերը ¹⁾:

Ազստամբած և դավաճանարար Պարսկական թագավորին ծառայության գնացած նախարարական տների հետ Արշակի դեմ էին կանգնել նաև այն նախարարական տները, կուսակալներն ու գավառատեաները, ու

¹⁾ Փալստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց» էջ 159:

րոնք այս կամ այն պատճառով դեռ շարունակում էին մնալ Արշակի բանակում:

Ներսես մեծի մոտ գումարված հայ մեծամեծների ժողովում, Արշակի բանակում դեռևս մնացած նախարարները, կուսակալները և գավառատեաները Պարսկաստանի դեմ մղվող պատերազմը համարելով Հայոց թագավորի և սպարապետի մասնավոր մի գործ, վերջնականապես հրաժարվում են Արշակին և Վասակին օգնել և օրինակ վերցնելով դավաճան նախարարներից, որոշում են ենթարկվել պարսից Շապուհին և ոչ թե շարունակել պատերազմը:

«Ապա հավաքվեցին Հայոց ամբողջ աշխարհի թագավորության մարդիկ և եկան Հայոց մեծ կախկոպոսապետ Ներսեսի մոտ: Մեծամեծ նախարարները, կուսակալները, կողմնակալները, գավառատեաները, զործակալներն ու շինականների տանտեպետները հավաքվեցին մի տեղ և սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին. «Դու, տէր, ինքդ էլ գիտես, որ այս մեր թագավոր Արշակի երեսուներորդ տարին է, որ ոչ մի տարի չենք հանգստացել պատերազմից, և միայն սրով, սուսերով, նետով ու նիզակների տեղերով ենք սրբել մեր երեսների քրտինքը: Բայց այլևս անկարող ենք դիմանալ և մարտ տալ, ովովհետև ավելի լավ է՝ մենք ծառայենք պարսից թագավորին, ինչպես արեցին մեր ընկերները, որ թողեցին նրան (Արշակին) և գնացին Պարսից թագավորի մոտ և մենք էլ նույն ձևով կվարվենք որովհետև այլևս անկարող ենք կռվել:

Եթե Արշակ թագավորը կարիք ունի կռվելու Շապուհի դեմ, թող կռվի Վասակի և իր աներ Անդավիկի միջոցով: Հայոց այս աշխարհից այլևս ոչ մի տղամարդ չի գնալու նրան օգնության ու պաշտպանության: Եթե պետք է նրան, թող պատերազմի, եթե ոչ մեր փույթը չէ, մենք թողել ենք նրան» ²⁾:

Արշակի համար դժվար էր այլևս կռվել երկու ուժերի՝ մի կողմից ներսի նախարարական տների, իսկ մյուս կողմից զբոսի

²⁾ Փալստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 161:

թշնամու՝ պարսիկների դեմ: Նրան հարկա-
վոր էր մի փոքր դադար՝ ներսի ուժերը
սանձելու և նոր բանակներ կազմակերպելու
համար. մանավանդ երբ Շապուհ Վարազը
խաղաղություն էր խնդրում, հարկավոր էր
օգտագործել մոմենտը, ուստի անկախ իր և
Վասակի ցանկությունից, Արշակը համա-
ձայնություն է տալիս խաղաղության դաշ-
նադիր կնքելու:

Խորամանկ Շապուհը բարեկամական նոր
հրավերներ է սարքում և Արշակ թագա-
վորին տեսակցության կանչում՝ հավիտե-
նական դաշինքի համար:

Արշակը հավատարիվ Շապուհ Վարազի
տված մեծ երդմանը, որը ուղարկել էր Ար-
շակին (ադ՝ կնքված Վարազի նկար ունե-
ցող մատանիով), Վասակ սպարապետի հետ
միտասին գնում է Շապուհ Վարազի մոտ:
«Այա սրանից հետո կրկին (պատգամավոր-
ներ) ուղարկեց Պարսից արքա Շապուհը
Հայոց արքա Արշակին և ասաց. եթե մենք
համաձայն ենք միմյանց հետ, արի տես-
նենք իրար և այսուհետև հայր ու որդու
նման լինենք միմյանց հանդեպ: Իսկ եթե
զու չտեսնես ինձ (ուրեմն) պատերազմ ես
փնտառում իմ և քո մեջ: Իսկ Արշակը հա-
վատարիմ ուխտի երդում էր պահանջում
նրանից, որպեսզի զրանից հետո առանց
կասկածի գնա նրա մոտ: Եվ նա բերել
տվեց համաձայն Պարսից թագավորության
հավատարիմ երդման կարգերի՝ վարազա-
դրոշմ մատանիով կնքված ադ և ուղարկեց
(Արշակին): Որպեսզի եթե այն երդումից
հետո դարձյալ չգա, պատրաստ լինի ճակատ
ու պատերազմ տալու իրար դեմ: Իսկ երբ
այն էլ տեսան և լսեցին Հայոց երկրի բո-
լոր մարդիկ, ստիպեցին՝ բռնաջան իրենց
թագավոր Արշակի վրա և շտապեցրին,
որպեսզի վեր կենա, գնա ներկայանա Պար-
սից թագավոր Շապուհին: Իրանից հետո
կամա թե ակամա վեր կացավ Հայոց թա-
գավոր Արշակը, վերցրեց իր հետ իր դայակ՝
Հայոց զորավար սպարապետին և շարժվեց
գնաց Հայոց երկրից Պարսից երկիրը սպար-
սից արքա Շապուհի մոտ»¹⁾:

¹⁾ Փավստոս Բուզանդացի «Պատմու-
թյուն Հայոց», էջ 164:

Հայոց Արշակ թագավորին և սպարա-
պետ Վասակ Մամիկոնյանին նախկին ըն-
դունելությունների նման ընդունելություն
ցույց չի տրվում Պարսից արքունիքում:
Թարված Հայոց թագավորի և սպարապետի
հետ ուխտագրութ Շապուհը՝ ուրանալով իր
տված մեծ երդումը, վարվում է որպես
հպատակների հետ: Եւ նույնիսկ պարսից
արքայի անամոթությունն այնտեղ է հաս-
նում, որ մեկ օր չդիմանալով Արշակի հան-
դիմանություններին հրամայում է շղթա-
յել նրան և փակել Անգամըղում կամ Անհուշ
բերդում մինչև նրա մահը: Իսկ Հայոց քաջ
սպարապետ Վասակ Մամիկոնյանին, որը
տարիներ շարունակ ջարդել, ոչնչացրել էր
պարսկական հրոսակախմբերին, ծունկի էր
բերել Պարսից բոլոր անվանի զորավարնե-
րին և մի քանի անգամ խայտառակ սպար-
տության մատնել Շապուհ Վարազի իր
գլխավորած բանակներին, իր մոտ կան-
չելով ցանկանում է ցույց տալ իր ամենա-
զորությունը նրա հանդեպ, կարծելով թե
խաբերալությամբ իր մոտ կանչած և զի-
նաթափած Հայոց քաջ սպարապետին կկա-
րողանա կյանքում գոնե մեկ անգամ տես-
նել խեղճացած և իրենից կյանք խնդրելու
վիճակում: Բայց ի զարմանս Շապուհի,
Վասակ Մամիկոնյանը մինչև անգամ ամե-
նագոր դատավորի առաջ մնում է կանգնած
նույն խրոխտությամբ, քաջությամբ և հա-
մարձակությամբ, ինչպես սովորաբար լի-
նում էր բոլոր հաղթական ճակատամար-
տերից հետո. Շապուհ Վարազի սպառնալից
այն խոսքերին, թե «քեզ աղուեսի մաճով
կսպանեմ» Վասակ Մամիկոնյանը մեծ զո-
րավարին հատուկ սառնությամբ և արհա-
մարհելով մահը պատասխանում է «մի ժա-
մանակ առյուծ էի քեզ համար, իսկ այժմ
իմ մարմնի փոքրությանը նայելով ազվես
ես ասում, մինչև ի վասակն էի, հսկա էի
մի ոտքով քեզ՝ Պարսից ամենազոր արքա
Շապուհիդ էի ճգնում, իսկ մյուս ոտքով Հոս-
մեական աշխարհակալ կայսրին»:

Քաջ սպարապետի համարձակ և անըս-
պասելի պատասխանը շժմեցնում է Շապուհ
Վարազին, որը մեծ հույս էր դրել իր վեր-
ջին ճակատամարտի վրա, որտեղ պետք է

ծածկեր իր տասնյակ տարիների խայտառակ պարտութունները քաջ զորավարի միայն մեկ «ներիր» խոսքով, բայց ինչպես և մյուս բոլոր ճակատամարտերում, Շապուհը խայտառակ պարտութուն է կրում այստեղէլ։ Նա կատաղած հրամայում է մորթազերծ անել քաջ սպարապետին. մորթու մեջ խոտ լցնել և ուղարկել Անհուշ բերդը Արշակ թագավորին։

«Մյուս օրն ևեթ հրաման տվեց Շապուհն արքան իր առաջ բերել մեծ Հայքի սպարապետ զորավար Վասակ Մամիկոնյանին. սկսեց տանջել նրան, և որովհետև Վասակը մարմնով փոքր էր, Պարսից Շապուհն արքան ասում է նրան. աղվես, դձև էիր այն խանգարիչը, որ այսքան չարչարեցիր մեզ. դձև էիր, որ այսքան տարիներ կոտորեցիր արիներին. էլ ի՞նչ պիտի անես. աղվեսի մահով կսպանեմ քեզ։

Իսկ Վասակը պատասխան տվեց և ասաց. այժմ դու տեսնելով ինձ մարմնով փոքրիկ, իմ մեծության չափը չհասկացար, մինչև այժմ քեզ համար ես առյուծ էի, իսկ այժմ աղվես։ Բայց երբ ես Վասակն էի, ես հսկա էի. իմ մի ոտս մի լեռան վրա էր և մյուս ոտս մի (այլ) լեռան վրա, երբ հենվում էի աջ ոտիս վրա, աջ լեռն էի գետնին հավասարեցնում, երբ ձախ ոտիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետնին հավասարեցնում։ Ապա հարցրեց պարսից թագավոր Շապուհը և ասաց, դե հասկացրու ինձ ովքեր են այն լեռները, որոնց դու հողին էիր հավասարեցնում. եվ ասաց Վասակը «երկու լեռներից մեկը դու էիր, և մյուսը Հունաց թագավորը»։

Ապա Պարսից թագավորը հրաման տվեց մորթել Հայոց զորավար Վասակին և մորթը հանել ու խոտով լցնել և տանել

նույն բերդը Անգմըշ, որ Անհուշ են կոչում, ուր բանտարկեցին նաև Արշակ թագավորին¹⁾։

Վասակ Մամիկոնյանը իրեն ամբողջ կյանքում կուլել է հայ ժողովրդի ազատության, նրա անկախության, ինչպես և Հայկական ամուր պետականութուն ստեղծելու համար, նրա ղեկավարութեամբ տասնյակ տարիներ հայ զորաբանակները կուլել և ջախջախել են օտարերկրյա ավազակախմբերին։ Նրա շնորհիվ ինչպես արևելքում նույնպես էլ արևմուտքում օտար նվաճողները զգացել են և տեսել են հայկական դեմքի ուժը հայկական զինվորների չտեսնելիք քաջութունները և ամբողջ հայ ժողովրդի ազատատենչ ուրին, օտար նվաճողների նկատմամբ ունեցած մեծ ատելութունն ու անկախության ձգտումը։

Վասակը չէր խնայում թշնամուն և նա ներումն չէր խնդրում թշնամուց։ Նա նույնիսկ արյունարբու Շապուհի առաջ չխոնարհեց գլուխը, այլ պահեց իրեն ինչպես հպարտ բաղեն հայկական բարձր լեռներում։ Շապուհն Վարազը Վասակի սպանութեամբ չկարողացավ Հայաստանը ենթարկել իրեն և զինաթափ անել հայ զորաբանակներին։ Հայ ժողովուրդը ավելի մեծ ատելութեամբ է լցվում դեպի նենգավոր օտարերկրյա թշնամին և Վասակի արժանավոր զավակ քաջ Մուշեղ Մամիկոնյանին Հայոց զորքերի սպարապետ կարգելով՝ նոր ուժեր է կազմակերպում Հայոց աշխարհի պաշտպանության համար։

¹⁾ Փավստոս Բուզանդացի, «Պատմութուն Հայոց», էջ 168—169։



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Զեկուցումներ՝ կարդացված Հայկ. ՍՍՌ ԺԿՍ-ին կից Պետական
Զեռագրասան (Մասենադարանի) 1940 թ. Հոկտեմբերին գումարված
գիտական սեսիայում

1. Ս. Հայրապետյան.—Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը	1—17
2. Լ. Սեմյոնով.—Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին	19—30
3. Ի. Աբուլաձե.—Քարթլիս Յխովրեբայի կամ Վրաց Պատմության հին հայերեն թարգմանությունը	31—40
4. Ա. Աբրահամյան.—Նախամետոդյան Հայկական գրականության հարցը (Թեզեր)	41—52

Մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ

1. Туманян Т. Г.—О таблице полигональных чисел А. Ширакаци	53—59
2. Հ. Աբրահամյան.—Թղթի գործարան Հայաստանում	61—72
3. Լ. Սեմյոնով.—Զեռագրական հին տեղեկություններ Արկաթի կայի մասին	73—74
4. Վ. Համազասպյան.—Մոնոլիթների կողմից Անիի գրավման տարեթվի ճշտումը	75—76
5. Վ. Ստեփանյան.—Հայաստանի և նրա մերձակայքի երկրաշարժների վերաբերյալ պատմական նյութերը Մատենադարանում	81—85

S e f u s e r

1. Հարությունյան Աշխեն.—Դեղագրեր	89—91
2. Աշ. Աբրահամյան.—Մարտիրոս Դի Առաքելի ժամանակագրությունը	93—100
3. Բյուչուք Հարություն.—Պատմություն թահմազ Ղուլու	101—128
4. Լ. Սեմյոնով.—Աստղաբաշխական բնույթի քաղվածքներ հայ պատմագիրներից	129—128
5. Լ. Խաչիկյան.—«Յաղագս տարեմտին ի վանական վարդապետէ ասացեալ»	151—169
6. Ա. Մնացականյան.—Դիտողություններ հին տաղարաններում կատարված աղավաղումների մասին	171—177
7. Ա. Մնացականյան.—Անտիպ բանաստեղծություններ և վարիանտներ	178—188

- Յ. Հ. Արրահամյան.—Նյութեր Արտվյանի մասին 189—194
 Թ. Հ. Արրահամյան.—Նալբանդյանին վերաբերվող արխիվային
 վավերագրեր 195—205

Բ Ի Բ Լ Ի Ո Ղ Ր Ա Ք Ի Ա

- Ա2. Արրահամյան.—Համառոտ բերրոգրաֆիա՝ Հայկական ՍՍՌ Մա-
 տենագարանի գրչադիր մանր ժամանակագրությունների 207—225
 Ձ2. Համազասպյան.—Հայ ահանավոր զորավար Վասակ Մամիկոն-
 յան 227—24

ՎՖ. 1892 Պատվեր № 656, տիրած 1000 օր.

Հանձնված է արտադրության 1941 թ.: Մտորագրված է տպագր. 1942 թ. ապրիլի 20-ին:
 Գիտա-մանկավարժական հրատ. տպարան, Երևան, Արտվյան փ. № 104

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ
 ЗАМЕЧЕННЫЕ ОПЕЧАТКИ

Էջ Стр.	Սյուն Столб.	Տող Строка	Տպագած է Напечат.	Պետք է կարդալ След. читать
3	1	10 ներքևից (ծանոթ. 2)	1912 Գ.	1918 Գ.
5	1	12 վերևից	Ազգերյան	Ազգերյան
11	2	5 ներքևից	ուղարկվում է	ուղեկորվում է
15	2	11 վերևից	XVII	VII
17	1	2 ներքևից	1.99.000.000	90.000.000
54	1	8 սнизу	древних рукописей	Гос. Хран. древних рукописей
54	2	20 սверху	Յնակ,	Յնակ ,
55	1	7 »	$\overline{U}r\eta$	$\overline{u}r\eta$
55	1	8 »	$\cdot \overline{r} \overline{q} \overline{c} \overline{m} \cdot$	$\cdot \overline{r} \overline{q} \overline{c} \overline{m} \cdot$
55	1	8 »	$\cdot \overline{r} \overline{q} \overline{c} \overline{m} \cdot$	$\cdot \overline{r} \overline{q} \overline{c} \overline{m} \cdot$
55	1	8 »	46701	467601
55	1	8 սнизу	$\overline{q} \overline{h} \overline{l}$	$\overline{q} \overline{h} \overline{l}$
55	1	8 »	$\overline{q} \overline{h} \overline{l}$	$\overline{q} \overline{h} \overline{l}$
55	1	7 »	45	46
56	9	10 սверху	153	162
56	15	18 »	727	729
56	16	7 »	предствлений	представлений
57	1	21 »	$a_k = \frac{[2+(n-2)(k-1)]}{2} \dots (2)$	$a_k = \frac{[2+(n-2)(k-1)]}{2} k \dots (2)$
57	2	24 »	arithmetik	Arithmetik
57	2	3 ն		